ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1918 Թ. ՓԵՏՐՎԱՐ)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
64

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
64

ԵՐԵՎԱՆ 2010

ՀՏԴ 94/99:941(479.25)
ԳՄԴ 63.3+63.3 (2Հ)
Մ490

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ. գ. դ. պրոֆեսոր Հ. Հարությունյան

Մելիքյան Վահան

Մ490 Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը / Վահան Մելիքյան; Խմբագիր՝ Հ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2010,- 264 էջ:

Մենագրության մեջ աղբյուրագիտական լայն և հարուստ հիմքի վրա առաջին անգամ փորձ է արվել հայ պատմագիտության ասպարեզում ներկայացնել 1917թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի քաղաքական կյանքի կարևորագույն հիմնախնդիրը՝ իշխանության հարցը:

Լուսաբանվել են Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեության բոլոր բնագավառները՝ 1917թ. նոյեմբեր – 1918 թ. մարտ ժամանակաշրջանում, վեր է հանվել հայկական քաղաքական դիրքորոշումը այդ բազմաշերտ հարաբերություններում:

Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 94/99:941(479.25)
ԳՄԴ 63.3+63.3 (2Հ)

ISBN 978-99941-73-50-1

© Մելիքյան Վ., 2010 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Խորհրդային Միության փլուզումը և հանրապետությունների անկախացման գործընթացը հայ պատմագիտությանը առաջադրեցին վերահմաստավորել, վերանայել և սկզբնաղբյուրային պատմական նյութն անկաշկանդ օգտագործելու ճանապարհով՝ լուսաբանել Հայաստանի առաջին հանրապետության առաջացման խնդիրները:

Կարևորագույն պատմագիտական և քաղաքացիական հնչեղություն ստացած հիմնահարցի առաջին հիմնադիր փուլը ձևավորվել է 1917 թ. ռուսաստանյան Փետրվարյան հեղափոխությամբ, երբ ժամանակավոր կառավարության հռչակած որոշումներն ու ձեռնարկումները սկիզբ դրեցին համառուսաստանյան դաշնային ժողովրդավարական հանրապետության կազմում՝ ազգային ինքնուրույն քաղաքացիական և հասարակական – քաղաքական կյանքի հեռանկարին:

Ընթերցողի դատին ներկայացվող աշխատասիրությունը հեղինակի թեկնածուական ատենախոսության (1989 թ.) և մենագրության (Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (մարտ-հոկտեմբեր 1917 թ., Երևան, 1997) թե՛ ժամանակագրական և թե՛ թեմատիկ ուսումնասիրության շարունակության փորձն է:

Հոկտեմբերյան հեղաշրջումն արմատապես շրջեց համառուսաստանյան պետության զարգացման հեռանկարը: Չհնված ապստամբության միջոցով իրականացնելով պետական հեղաշրջում, ապա և 1918 թ. հունվարին ցրելով Սահմանադիր ժողովը՝ մեկ անգամ ևս դիմելով պետական հեղաշրջման քայլին, բոլշևիկները վերջ դրեցին ռուսաստանյան պետության ժողովրդավարական զարգացման հեռանկարին, հիմք դրեցին միակուսակցական մենատիրության դարաշրջանին:

Անդրկովկասում սկսվեց տևական պայքար իշխանության համար: Այդ պայքարի կենտրոնները դարձան Թիֆլիսն ու Բաքուն: Երկրամասի քաղաքական կենտրոնում՝ Թիֆլիսում, վրացական մենշևիկների նախաձեռնությամբ և ակտիվ դերակատարմամբ, հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների խմբավորումը ձևավորեց նոր կառավարություն, փաստորեն, ազգային իշխանության մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ:

Ինչպես խորհրդահայ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ու սփյուռքահայ պատմագրությունը ուսումնասիրության հատուկ առարկա չի դարձել Կոմիսարիատի ստեղծման և բազմաբնույթ գործունեության խնդիրը: Մինչդեռ, վերջինիս քաղաքականության հետազոտումը լուսաբանում է ոչ միայն բոլշևիկյան իշխանությունը չճանաչող երկրամասային կառավարության ուշագրավ, բարդ և հակասական վարքագիծը, այլև բացահայտում է Ռուսաստանից անջատման առաջին, թերևս գործնական փուլի ողջ գործընթացը:

1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. փետրվար ընկած ժամանակահատվածում է նաև դրվում Անդրկովկասի հետագա ռազմա-քաղաքական, հասարակական զարգացումների, ազգամիջյան հարաբերությունների, նոր կողմնորոշումների հիմքը, որը հանգեցնում է անկախ Անդրկովկասի, ապա և ազգային պետությունների առաջացմանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

1.1. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՀԱՆԴԵՊ

1917 թ. հոկտեմբերի 25-ին (ն.տ. նոյեմբերի 7-ին) Պետրոգրադում բոլշևիկյան կուսակցությունը զինված հեղաշրջման ճանապարհով գրավեց իշխանությունը: Ստանալով պատերազմում Ռուսաստանի հակառակորդ Գերմանիայի աջակցությունը, բոլշևիկները, նախ՝ հեռատեսորեն համագործակցեցին ժամանակավոր կառավարության հետ՝ ձախողելով գեներալ Լ. Կոռնիլովի միապետական, տվյալ դեպքում պետականամետ ապստամբության հաղթանակը, ապա և առանց լուրջ դիմադրության տապալեցին ժամանակավոր կառավարությունը:

Վերջինս Փետրվարյան հեղափոխության ութ ամիսների ընթացքում այդպես էլ չկարողացավ կայուն և կենսունակ վարչակարգ հաստատել: Հեղափոխության առաջին օրերից ի վեր Ռուսաստանը սուր կերպով զգաց ուժեղ իշխանության հրամայական կարիքը՝ դեմոկրատական հեղափոխության նվաճումներն ապահովելու, նոր վարչակարգը կայունացնելու, պատերազմը հաղթական ավարտին հասցնելու, քաղաքական և տնտեսական ճգնաժամը հաղթահարելու և երկիրը խաղաղ ճանապարհով գլխավոր քաղաքական նպատակին՝ Սահմանադիր ժողովին հասցնելու համար: Պատճառները բազմաթիվ են, որոնց շարքում կարելի է առանձնացնել. ա) դրսևորվեց բուրժուազիայի «պրոգրեսիվ բլոկի» և ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի ու բնակչության միջև եղած էական հակասությունը, նախ՝ իշխանության, ապա և հաղթական պատերազմի հարցերում: Կադետական բուրժուազիայի խմբավորումը, որն իշխանությունը նվաճեց հաղթական պատերազմի կարգախոսի ալիքի, և ցարական վարչակարգի ու Նիկոլայ II-ի անկարողության մեղադրանքի հիմքի վրա, այժմ էլ ինքը՝ ի դեմս ժամանակավոր կառավարության հայտնվեց այդ կարգավիճակում: Այլ խոսքով, ինքնին կարևորագույն պատճառ է երկիշխանության գործոնը, որը մի կողմից՝ ռուսաստանյան Փետրվարյան հեղափոխության առանձնահատկությունն է, մյուս կողմից՝ վերջինիս թուլության ու վախճանի պատճառը: բ) Այն դեպքում, երբ

երկիշխանության աջակողմյան դաշտը՝ ժամանակավոր կառավարությունը պահանջում էր դաշնակիցների հետ միասին շարունակել պատերազմը, դրանում ակնկալելով նախ և առաջ իշխանությունը պահելու հիմնական երաշխիքը, ձախակողմը՝ էսէռա-մենշևիկյան խորհուրդները, ձգտում էին հաշտություն կնքել, հույսը կապելով ոչ այնքան բանակի հզորության, որքան միջազգային սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական քայլերի վրա: գ) Ժամանակավոր կառավարության աջակողմյան տարրերի՝ կադետների ոչ ճիշտ հաշվարկը նրանում էր, որ իրենց ամբողջ քաղաքական զգաստությամբ հանդերձ, պատերազմի խնդրում միանգամայն սխալ գնահատեցին Ռուսաստանի պոտենցիալ ուժերը՝ հենվեցին առավելապես իրենց ցանկությունների և ենթադրությունների, քան իրական կացության և հնարավորությունների վրա: Նույն հարթության վրա դնելով հեղափոխական և ցարական Ռուսաստանի ուժերը, կադետներն ընկան ճակատագրական մոլորության մեջ, կարծելով թե հեղափոխությունից հետո կարելի էր ոչ միայն շարունակել պատերազմը, այլև հասցնել հաղթական ավարտին: Նրանք համոզված էին, թե ցարիզմից նոր «ազատագրված» և երեք տարվա սոսկալի պատերազմից ուժասպառ Ռուսաստանը կարող էր իր մեջ գտնել այնքան հայրենասիրական կորով և զոհաբերության ոգի, որ ընդունակ լիներ շարունակելու պատերազմը: դ) Նրանք անտեսեցին, որ ռուսական ցարիզմը իր տիրապետության ընթացքում ոչ միայն բնակչության մեջ օբյեկտիվորեն չէր զարգացրել պետականամետ հայրենասիրություն, այլ բոլոր միջոցներով խեղդել էր այն, չնկատեցին, որ պետականամետ հայրենասիրությունից զուրկ բազմազգ Ռուսաստանի ազգերն ու ժողովուրդները նոր զոհաբերությունների գնալու համար պետք է ունենային շոշափելի շահագրգռվածություն: ե) Ռուսաստանյան բուրժուազիան չարաչար սխալվեց ռուսական պետության գլխավոր հիմքը կազմող վելիկոռուս ազգի նկատմամբ, մեծապես գերագնահատելով նրա կառուցողական ուժը, պետական և ազգային կենսունակությունը: զ) Եվ վերջապես, որքան էլ որ բուրժուազիան բանակի և բանվորության միջոցով կարողացավ վճռորոշ հաջողության հասնել, միևնույն է այդպես էլ չկարողացավ համապետական շահի համար վեր կանգնել դասային-կուսակցական դիրքից, ավելին՝ փոխանակ համագործակցելու, իրենից և իշխանությունից վանեց, հետո էլ թշնամացրեց այդ նույն բանակը և հասարակության խավերին: Դրանում է կայանում նաև Ռուսաստանում բոլշևիզմի հաղթանակի գլխավոր նախադրյալը, այլ խոսքով մեծ նպատակի ճանապարհին ճիշտ և ժամանակին քաղաքական փոխզիջումների բացակայությունը:

է) Ինչ վերաբերում է ձախ սոցիալիստական դաշտին, ապա վրիպումը կայանում էր նրանում, որ պատերազմի հարցում համերաշխ լինելով

բոլշևիկների հետ, նրանք հեղափոխության ընթացքում հետզհետե ենթարկվեցին բնաջրջման դեպի աջ: Սկսելով ապազգային-ապահայրենիք ցիմերվալդյան սոցիալիզմից, էսեռներն ու մենշևիկները հակառակ բոլշևիկյան պարտվողականության, ի վերջո կանգնեցին պաշտպանողական հայրենասիրության տեսակետի վրա: Թեև լինելով ազնիվ քաղաքացիներ, սակայն չունենալով պատերազմի հարցի մասին հաստատուն հայեցակետ՝ նրանք անկարող եղան վարել հետևողական և որոշակի քաղաքականություն, ընկան հակասությունների մեջ և իրենց գործելակերպով ո՛չ նպաստեցին հաշտության կնքմանը, ո՛չ էլ ստեղծեցին պատերազմը հաջողությամբ շարունակելու հնարավորություններ: Սոցիալիստական տարրերի տատանումն ու անվճռականությունը արդյունք էր ոչ միայն նրանց ծրագրային կամ անձնական թերությունների, այլ այն գլխավոր հակասության, որ ձևավորվել էր երկրի պաշտպանության և հեղափոխության պահպանման հրամայական պահանջների միջև: Երկիրն արտաքին թշնամուց պաշտպանելու համար պետք էր վերականգնել նախկին «դիսցիպլինը» բանակի մեջ, իսկ դրա համար անհրաժեշտ էր նախ և առաջ ցրել զինվորական ընտրովի խորհուրդներն ու կոմիտեները. մինչդեռ դեմոկրատական հեղափոխության պաշտպանությունը ցարիզմի վերականգնումից պահանջում էր պահպանել զինվորական նոր կազմակերպությունները, որոնք իրենց հերթին անկարելի էին դարձնում նախկին բաղձալի կարգ ու կանոնը: Այդ երկու նպատակներից մեկը պետք էր ստորադասել մյուսին: Էսեռներն ու մենշևիկներն իրապես հայրենասեր չէին, որ ընդունակ լինեին հեղափոխության երերուն նվաճումները ստորադասել հայրենիքի պաշտպանության գերագույն նպատակին, ինչը փորձում էին անել բուրժուազիայի ներկայացուցիչները, բայց նրանք՝ նաև բավարար հետևողական հեղափոխականներ չէին, բառիս ռուսաստանյան իմաստով, որ ընդունակ լինեին զոհաբերելու երկրի պաշտպանությունը հեղափոխության առաջադրած խնդիրներին, ինչը, ցավոք, հետևողականորեն անում էին բոլշևիկները:

Հայրենիքի պաշտպանության, արտաքին նվաճումների և սոցիալական հեղափոխության նպատակները կյանքում մեկտեղ դնելու ժամանակավոր կառավարության և խորհուրդների փորձը, վարկաբեկեց, թուլացրեց այդ իշխանությունը:

1917 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին համընդհանուր քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում անգամ, այդ միակ թվացյալ համախմբող ազդակը՝ «պատերազմ մինչև հաղթական ավարտը» կարգախոսը չարդարացրեց իրեն, իսկ պարտությունները ռազմաճակատներում բոլշևիկյան հակապետական քայքայիչ գործունեության արդյունքում նաև՝ վերջակետ դրեցին ժողովրդավարական,

դաշնային, հանրապետական, սահմանադրական Ռուսաստան ստեղծելու երազին:

Բոլշևիկյան հեղաշրջումն արմատապես խարխլեց Ռուսաստանի ազգային, պետական և քաղաքական դարավոր կառույցը, խափանեց պատմական զարգացման և քաղաքական ու քաղաքակրթական համակարգի շարունակականության օրինաչափ ընթացքը: Աշխարհաքաղաքական առաջնարկարգ դերակատար Ռուսաստանն ընկղմվեց տևական քաոսի և անկման դարաշրջանը: «Տաս օր, որ ցնցեց աշխարհը» Ու. Չերչիլը գնահատեց հետևյալ կերպ. «Հին դաշնակցի փոխարեն մեր առջև ուրվական է կանգնած, որը՝ նման չէ աշխարհում մինչև այժմ գոյություն ունեցած որևէ բանի: Մենք տեսնում ենք պետություն առանց ազգի, բանակ առանց հայրենիքի, կրոն առանց Աստծո»[1]:

Բոլշևիկյան հեղաշրջումն Անդրկովկասում ընկալվեց որպես դավաճանություն Փետրվարյան հեղափոխության և ժամանակավոր կառավարության հռչակած ժողովրդավարության զարգացման հեռանկարին: Երկրամասի բոլոր կուսակցությունները, բացի բոլշևիկներից, իհարկե, դատապարտեցին իշխանության զավթումը, համերաշխ էին իրենց գնահատականներում: 1917 թ. փետրվարից հետո երկրորդ պատմական բացառիկ պահն էր, երբ Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդների շահերն արտահայտող կուսակցությունները կանխազգալով ընդհանուր վտանգը, ցարիզմից հետո նոր թշնամու՝ բոլշևիզմի դեմ ակամայից ինքնապաշտպանական ճակատ էին ձևավորում:

Ժամանակավոր կառավարության և Օզակոմի «անիշխանությունը» թեև գործնական լուծումներ էր ակնկալում և առաջադրում, այնուամենայինիվ, նման կտրուկ շրջադարձ ոչ ոք չէր սպասում: Անդրկովկասի բոլշևիկյան մամուլը միայն հոկտեմբերի 28-ին, առանց մեկնաբանությունների հրապարակեց ժամանակավոր կառավարության տապալման մասին հեռագիրը:

Երևանի նահանգի կոմիսարն Անդրկովկասում թերևս առաջիններից մեկն էր, որ հոկտեմբերի 24-ին (նոյեմբերի 6) ստացավ Ռուսաստանի ներքին գործերի նախարարության հեռագիրն ուղղված ժամանակավոր կառավարության նախագահին, որտեղ մասնավորապես ասվում էր. «Նկատի ունենալով Պետրոգրադում որոշ անձանց կողմից պետական իշխանությունը զավթելուն ուղղված կոչերը, բացատրեք բնակչությանը, որ Սահմանադիր ժողովի ընտրությունների փուլում հատկապես, որևիցէ ելույթ անթույլատրելի է: Երեք շաբաթից երկիրը կճանաչի իր ընտրյալներին և ժամանակավոր կառավարությունն իր իշխանությունը կհանձնի

[1] Տե՛ս Ու. Черчиль, Мировой кризис, Москва-Ленинград, 1932, с. 39.

ամբողջ ժողովրդի կողմից ընտրված իրավասու մարմնին: Անկարգությունների ի հայտ գալուն պես, դուք, որպես ժամանակավոր կառավարության նախագահ, պետք է ձեռնարկեք ամենավճռական միջոցները՝ դրանք կանխելու համար»[2]:

Անորոշության մեջ է հայտնվում նաև տապալված կառավարության անդրկովկասյան մարմինը՝ Օզակոմը: Հեղաշրջումն ընկալելով որպես ժամանակավոր երևույթ, արկածախնդրություն, հոկտեմբերի 26-ին նրա երեք անդամները՝ Ա. Չխենկելին, Մ. Պապաջանյանը և Մ. Ջաֆարովը նահանգային, շրջանային, գավառային կոմիսարներին և Բաքվի քաղաքագլխին հրահանգեցին վճռական հակահարված հասցնել և կանխել իշխանությունը զավթելուն ուղղված բոլոր ելույթները: Հետաքրքիր է, որ Օզակոմի նախագահ Վ. Խառլամովի փոխարեն փաստաթուղթը ստորագրել էր Ա. Չխենկելին[3]: «Նրանք լիովին մեկուսացված են,– ասվում էր շրջաբերականում,– երկիրը նրանց չի պաշտպանում, ռազմաճակատը թշնամաբար է տրամադրված և բողոքում է, Ռուսաստանի բոլոր հեղափոխական կազմակերպությունները, բացի բոլշևիկներից, դեմ են ապստամբությանը: Կան ճշգրիտ տեղեկություններ, որ բոլշևիկները ստիպված վայր կդնեն զենքը: Ուրախալի է, որ Անդրկովկասի տարբեր ծայրերից լուրեր են ստացվում լիակատար կարգ ու կանոնի վերաբերյալ: Անարխիայի և հակահեղափոխության դեմ պայքարի նպատակով արդեն ձևավորվել է Հասարակական անվտանգության երկրամասային կոմիտե»[4]: Հոկտեմբերի 28-ի շրջաբերականում Օզակոմը հենվելով Կովկասի փոխարքայի 1912 թվից գործող «արտադատարանային բռնաճնշումների» իրավունքի վրա, պահանջում էր վերոհիշյալ կոմիսարներին տրամադրել վարչական ձերբակալությունների իրավունք[5]: Երևանի նահանգի կոմիսարը այդ շրջաբերականը ստացավ հոկտեմբերի 29-ին[6]: «Ռուսական հեղափոխության» տարբեր դրսևորումների, այժմ էլ բոլշևիզմի նկատմամբ ռուսաստանյան վարչակարգերի ոչ հետևողական, հաճախ արհամարհական-քամահրական վերաբերմունքն ու քաղաքականությունը տալիս էր իր ողբերգական արդյունքը: Մի կողմից Ֆ. Դոստոևսկու հայտնի «սատանա – հեղափոխականներին» ճանաչելու և մեղադրելու իշխանություններից բխող հիմնավորված գործոնը, մյուս կողմից՝ ժողովրդավարական բարեփոխումների չարչրկված ու ոչ խորքային գործընթացը՝ ֆեոդալական Ռուսաստանին կանգնեցրին կործանման եզրին:

[2] Հայաստանի Ազգային Արխիվ ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 77, թ. 268:
[3] ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 87, թ. 280-282:
[4] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 236, թ. 1, նաև՝ Республика, Тифлис, 1917, 29 октября, N 93:
[5] Տե՛ս Центральный Государственный Исторический Архив Грузии ЦГИА Грузии, ф. 28, д. 75, л. 120
[6] Տե՛ս ՀԱԱ, նույն տեղում:

Հոկտեմբերի 26-ը նշանավորվեց նաև նրանով, որ համանդրկովկասյան երեք հեղափոխական-ժողովրդավարական մարմինները հանդես եկան իրենց գնահատականներով և որոշումներով: Բանաձևեր ընդունեցին Կովկասյան բանակի բանակային կոմիտեն, բանվորական, զինվորական ու գյուղացիական պատգամավորների (այսուհետև տես Բ.Զ.Գ. – Վ.Մ.) խորհրդի երկրային կենտրոնը ու բ. և գ. պատգամավորների խորհրդի Թիֆլիսի գործադիր կոմիտեն[7]:

Բանակային կոմիտեն գտնում էր, որ բոլշևիկների հեղաշրջումը հակասում է ժողովրդի պետականամետ կամքին, ժողովրդի անունից երկիրը ղեկավարելու իրավասություն ունի միայն հեղափոխական դեմոկրատիայի վերահսկողությամբ գործող Ա. Կերենսկիի կառավարությունը, ուստի և մեկ այլ ինքնակոչ կառավարություն կարող է ճակատագրական կերպով հանգեցնել հեղափոխության բոլոր նվաճումների կործանմանը, երկիրը ներքաշել քաղաքացիական պատերազմի բոլոր արհավիրքների մեջ և վերջապես հանձնել հայրենիքը «գրահապատ գերմանական իմպերիալիզմի իշխանությանը»[8]: Ելնելով ասվածից բանակային կոմիտեն որոշում է. 1) Ռուսաստանի Հանրապետության կառավարություն ճանաչել Ա. Կերենսկիի կառավարությունը, 2) բանակային բոլոր կազմակերպություններին կոչել հանգստության, 3) Առանց ընդհատման շարունակել Սահմանադիր ժողովի ընտրությունների հետ կապված բոլոր աշխատանքները: Դեռևս լիովին չգիտակցելով բոլշևիզմի իրական դեմքը հույս էր հայտնվում, որ «ժողովրդի ձայնի ու կամքի միակ արտահայտիչ Սահմանադիր ժողովը կարող է իր ձեռքը վերցնել հայրենիքի ճակատագիրը»[9]:

Փետրվարյան հեղափոխության փուլում դեմոկրատական հեղափոխության առաջադրած հիմնահարցերի թելադրանքով և դրանց համատեքստում նախկին կայսրության տարածքում ձևավորվեցին հեղափոխական – ժողովրդավարական ու վարչական նոր մարմիններ, որոնք, ինչպես զարգացող իրադարձությունները ցույց տվեցին, չկարողացան դիմագրավել բոլշևիկյան հարձակմանը նաև Անդրկովկասում: Նմանատիպ իրավիճակում հայտնվեցին միաժամանակ թե՛ Օզակոմը, թե՛ ժամանակավոր կառավարության տեղական գործադիր կոմիտեները և թե՛

[7] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 1-2. (այսուհետև տե՛ս Документы и материалы...):
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 1.
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 2:

բ. զ. գ. խորհուրդներն ու դրանց երկրամասային կենտրոնական մարմինները Թիֆլիսում և Բաքվում: Գլխավոր պատճառը դարձյալ շարունակվող պատերազմն էր, որն ընդգծեց կարևորագույն առանձնահատկությունը, այն է՝ բազմազգ ռուսաստանյան պետությունը պատմական վայրիվերումների պահին ի վիճակի չեղավ հեղափոխությամբ ծնված ժողովրդավարական մարմինների միջոցով կայուն վարչակարգ ձևավորել: «Խաղաղության» և «հողի», մասին բոլշևիկյան կործանարար դեկրետները և այդ ուղղությամբ տարվող ակտիվ ագիտացիան բավական եղան, որպեսզի կուսակցությունը Գերմանիայի քաղաքական վերնախավի աջակցությամբ վերցնի իշխանությունը: Էական հանգամանք է նաև խորհուրդներում էսեռա-մենշևիկյան մեծամասնության ոչ հետևողական պայքարը դեռևս քաղաքական ուժ չներկայացնող բոլշևիկների դեմ:

Պատմականորեն Անդրկովկասի քաղաքական կենտրոն դարձած Թիֆլիսը, բոլշևիկյան հեղաշրջումից հետո էլ՝ թերևս մինչև Բաքվի խորհրդի ձևավորումը, շարունակում էր գլխավորել երկրամասի քաղաքական անցուդարձը: Հայերի, Կովկասի թաթարների (ադրբեջանցիների) և նրանց կուսակցությունների համեմատ, վրացիներն, ի դեմս վրացական մենշևիզմի իրենց համեմատաբար կազմակերպված և նպատակասլաց դրսևորեցին:

Փետրվարյան հեղափոխության դասերը լավագույնս ընկալած, վրաց մենշևիկներն այդ փորձությունը Անդրկովկասում հաջողությամբ անցան: Ռուսաստանյան հեղափոխությունների քաղաքական պայքարի դպրոցն անցած սոցիալ-դեմոկրատիայի մենշևիկյան վրացի գործիչները ձեռք բերեցին այն որոշիչ առավելությունը, ինչից հիմնականում զուրկ էին հայկական և թաթարական միջավայրերը: Այդ ընթացքում նրանց մոտ ձևավորվեցին համառուսաստանյան մասշտաբի գործիչներ: Նրանք կարողացան համադրել ազգային գաղափարները միջազգային դիվանագիտության և Անդրկովկասի ազգամիջյան հակասությունների բարդ հանգույցին, մինչև անկախությունների փուլը մեծ օգուտներ քաղեցին: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո Ն. Չխեիձեի, Ի. Ծերեթելիի և այլոց Թիֆլիս ժամանումը անկասկած ուժեղացրեց թե վրացական և թե անդրկովկասյան մենշևիզմը: Տեղի գործիչների՝ Ն. Ժորդանիայի, Ե. Գեգեչկորիի, Ի. Ռամիշվիլիի, Ա. Չխենկելիի հետ համատեղ ձևավորվեց հզոր և առաջատար քաղաքական ուժ, որը ինչ-որ չափով կանխորոշեց անդրկովկասյան զարգացումների ընթացքն ու տրամաբանությունը: Վրացական մենշևիզմի վերաբերմունքն ու գործելակերպը հեղաշրջումից հետո առավել ամփոփ և լիարժեք կերպով արտացոլվում է Ն. Ժորդանիայի տեսակետներում, որը նոր որակ էր կուսակցության մեջ՝ իր պրակտիկ գործունեության իմաստով:

Առաջին քայլը, որին դիմեցին վրացական մենշևիկները, դա բոլշևիկյան ապստամբության վարկաբեկումն էր և բոլշևիկ առաջնորդներ Վ. Լենինի, Գ. Զինովևի ու Լ. Կամենևի միջև հակամարտության սրումը: Օգտվելով մենշևիկյան «Новая жизнь» լրագրում հոկտեմբերի 14-ին, վերջիններիս կողմից պատրաստվող հեղաշրջումն արկածախնդրություն որակելու հանգամանքից, մենշևիկներն ընդգծում էին, որ բոլշևիկների մեջ կան լուրջ տարաձայնություններ և որ մի թևը ի դեմս Զինովևի ու Կամենևի չի ընդունում զինված ապստամբության գաղափարը[10]: Ընդունելով բոլշևիկների ազդեցության աճը, նրանք նույնիսկ առերես իրենց համերաշխությունն էին հայտնում «հարազատ կուսակցությանը», միաժամանակ շեշտելով, որ իրենք դեմ են Լենինի զինված ապստամբությանը: Այստեղ, իհարկե, դրսևորվում է հեղաշրջման անմիջական տպավորությամբ առաջացած անորոշությունը, դիրքորոշման հստակեցման գործոնը:

Դեռ հոկտեմբերի 17-ին բ. և զ. պատգամավորների խորհրդի Թիֆլիսի Գործադիր կոմիտեի և բ. և գ. պատգամավորների խորհրդի երկրամասային կենտրոնի միացյալ նիստում Ն. Ժորդանիան քննադատելով Օզակոմի քաղաքականությունը, արդեն ավելի անթաքույց, քան Փետրվարյան հեղափոխության առաջին շրջանում, առաջարկում էր Անդրկովկասում ստեղծել հեղափոխական կենտրոն, ասվածը հիմնավորելով նրանով, որ Օզակոմը ոչ թե հեղափոխական, այլ վարչական իշխանություն է[11]: Առաջին հայացքից հրատապ և հիմնավորված հարցադրման ենթատեքստում Ն. Ժորդանիան փաստորեն առաջ էր քաշում մի մարմնի ձևավորման անհրաժեշտությունը, որտեղ ենթադրվում էր, որ կիշխեն մենշևիկները, այլ խոսքով Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում կապահովվի վրացական գերիշխանությունը:

Ավելի վաղ, հոկտեմբերի 15-ին (28), բ. զ. գ. պատգամավորների Բաքվի խորհրդի նիստում գործադիր կոմիտեի նախագահ Ստ. Շահումյանի առաջարկով նոր, ընդլայնված խորհուրդն իրեն, ժամանակավորապես, մինչև խորհրդի նոր ընտրությունները, ճանաչում էր իրավասու մարմին: Այս նիստում հնչում են նաև իշխանությունը խորհուրդներին հանձնելու վերաբերյալ բազմաթիվ կոչեր[12]:

---

[10] Տե՛ս М. В. Церцвадзе, Революционное движение в Грузии в 1914-1917 гг., часть II (1917 г.), Тбилиси, 1960, с. 257.

[11] Տե՛ս Н. Н. Жордания, За два года, Доклады и речи, Тифлис 1919, с. 46-47. (այսուհետև տե՛ս Н. Н. Жордания, За два года).

[12] Տե՛ս С. Беленький и А. Манвелов, Революция 1917 г. в Азербайджане (хроника событий), Баку, 1927, էջ 167:

Հոկտեմբերի 25-ին, Թիֆլիսի վերոհիշյալ գործադիր կոմիտեի նիստում, Ն. Ժորդանիան մենշևիկյան մեկնակետից փորձում էր վերլուծել հեղաշրջման պատճառները: Բոլշևիկների ելույթը նրա կարծիքով բխում էր Պետրոգրադի դեմոկրատական օգոստոսյան հայտնի խորհրդակցության ժամանակ պրոլետարիատի ներկայացուցիչների մեկուսացումից և առանց նրանց, այսինքն՝ առանց սոցիալ-դեմոկրատիայի իշխանության ձևավորման փաստից:

Պետրոգրադի դեմոկրատական խորհրդակցության ընթացքում՝ բոլշևիզմի դեմ արդյունավետ պայքար չստացվեց, մենշևիկներն ու էսեռները ընդհանուր հայտարարի չեկան համատեղ գործունեության հարցում, ուստի և դեմոկրատիան պառակտվեց: Խորհրդակցությունը չգտավ լուծումներ, որոնք կբավարարեին արդեն ոչ թե երկու, այլ երեք պայքարող կողմերին՝ բուրժուազիայի հետ կոալիցիայի և միատարր կառավարության կողմնակիցներին, ձախ էսեռներին ու բոլշևիկներին: Վերջիններս պնդում էին իշխանությունը խորհուրդներին հանձնելու մասին: Արդյունքում առաջ են գալիս ոչ մի կողմին չբավարարող նախապառլամենտ և վերակազմավորված ժամանակավոր կառավարություն, որն իր «հետևողական» ժողովրդավարությամբ չկարողացավ ժամանակի գլխավոր խնդիրը լուծել՝ թեկուզ փոքրաթիվ, բայց մարտունակ բանակ ստեղծել[13]: Անհանգստանալով մենշևիկների ազդեցության թուլացումից, Ն. Ժորդանիան փարիսեցիորեն աջակցություն էր հայտնում պրոլետարիատի շահերի մյուս պաշտպան բոլշևիկներին: Նա գտնում էր, որ ռուսական հեղափոխության մեջ յուրաքանչյուր իշխանություն, որը ձևավորվել է պրոլետարիատի կամքին հակառակ՝ հակահեղափոխական է: Նա նույնիսկ պաշտպանում էր այդ խորհրդակցության ժամանակ բոլշևիկների արտահայտած կարծիքը՝ առանց ցենզային բուրժուազիայի մասնակցության միատարր դեմոկրատական իշխանության ստեղծման մասին: Ն. Ժորդանիան եզրակացնում էր, որ ինչպես բոլշևիկների հաղթանակը, այնպես էլ պարտությունը կհանգեցնեն հակահեղափոխության հաղթանակին[14]:

Նիստը 26 ձայներով ընդդեմ էսեռների ու բոլշևիկների 27 ձեռնպահ ձայների ընդունեց զեկուցող Ն. Ժորդանիայի բանաձևը, այն է. «Պետրոգրադում բոլշևիկների ելույթը ժամանակավոր հաջողության կամ զենքի ուժով անհապաղ ճնշման դեպքում անխուսափելիորեն կհանգեցնի հակահեղափոխության և ազատության ձեռքբերումների վախճանին: Հեղափոխության շահերը թելադրում են ապստամբության խաղաղ վերացման

[13] Տե՛ս Кавказское слово, Тифлис, 1918, 3 января, N 1.
[14] Տե՛ս Н. Н. Жордания, За два года, էջ 47:

անհրաժեշտությունը՝ ամբողջ հեղափոխական դեմոկրատիայի համաձայնության և առանց ցենզային տարրերի ժողովրդավարական իշխանության ստեղծման հիմքի և ոգու վրա, պայմանով, որ նշված ժամկետներում հրավիրվի Սահմանադիր ժողովը»[15]:

Անդրկովկասի քաղաքական զարգացումների համար վճռորոշ նշնակություն ունեցավ հոկտեմբերի 28-ին Թիֆլիսի Քաղաքային Դումայում Ն. Ժորդանիայի արտասանած ելույթը: Այստեղ բարձրաձայնվեց սպասվող, բայց միաժամանակ վտանգավոր թեզը՝ «իշխանությունը զավթելու անհաջողությունը կանխորոշված է» բովանդակությամբ: Չգիտակցելով բոլշևիկյան հեղաշրջման ողջ էությունն ու նպատակները, անգամ մենշևիկ Ն. Ժորդանիան և իր կուսակիցները կարծում էին, թե բոլշևիկների պարտությունը համապատասխանում է սոսկ բացահայտ հակահեղափոխականների շահերին և հիմա էլ Դումային կոչ էին անում խաղաղ ճանապարհով վերջ տալ «գաղտնի խռովությանը», որը հակասում էր հեղափոխության բնականոն զարգացմանը, երբ իշխանությունը նվաճվում է միայն դասակարգային պայքարի ճանապարհով»[16]:

Նոյեմբերի 2-ին բ. և զ. պատգամավորների խորհրդի Թիֆլիսի բանվորական սեկցիայի և արհմիությունների միացյալ նիստում Ն. Ժորդանիան անհանգստանալով բանակի և բանվորների տարակարծությունների հարցում, հեռատեսորեն նկատեց, որ քաղաքացիական պատերազմն Անդրկովկասում անպայման կվերածվի ազգամիջյան պատերազմի, միտումնավոր նկատելով, որ կարվեն ռուսական, վրացական ու հայկական զորամասերի հակասությունները: Ներքին տագնապով նա ընդգծում էր, որ Անդրկովկասում բոլշևիկները չեն կարող զավթել իշխանությունը, քանի որ այն արդեն «մեր ձեռքերում է» և «Կովկասի վերաբերմունքը Պետրոգրադի անցքերին պարզ ու որոշակի է»[17]: «Մենք պահանջում ենք Պետրոգրադի ապստամբության լիկվիդացիա,– նշում էր Ն. Ժորդանիան,– դեմոկրատիայի ներսում համաձայնության և միատարր իշխանության ձևավորման ճանապարհով հակահեղափոխության դեմ համընդհանուր պայքարի համար: Պետրոգրադի բոլշևիկները համաձայն են մեզ հետ, ընդունում են միատարր դեմոկրատական իշխանության մեր պլատֆորմը, իսկ տեղի բոլշևիկները մեզ կոչ են անում պայքար սկսել դեմոկրատիայի ներսում»[18]:

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 48:
[16] Տե՛ս նույն տեղում:
[17] Տե՛ս նույն տեղում, էջ 50-51.
[18] Протоколы Закавказских революционных Советских организаций. Том I, Тифлис, 1920, с. 206.

Նիստում ընդունված բանաձևն այն մասին, թե Թիֆլիսի փողոցներում յուրաքանչյուր զինված ելույթ պետք է համարել անկազմակերպ զանգվածի ելույթ ընդդեմ կազմակերպվածի, որը կարող է ջարդերի և ազգամիջյան պատերազմների հրդեհ բռնկել, միևնույն է, որոշվում է հետաձգել: Վիճելի է ժորդանիայի մեկնաբանությունն այն մասին, թե հեղաշրջման նկատմամբ Ռուսաստանը բաժանվել է երեք քաղաքական ճամբարների՝ բուրժուազիայի, բոլշևիկների և մնացած բուրժուազիայի: Ըստ նրա՝ մենշևիկները հարել էին երրորդ ճամբարին: Դա արհեստական սխեմա էր. իրականում չկար երեք ճամբար: Տագնապն ու բոլշևիզմի հանդեպ արդարացված ատելությունն այս հարցում մենշևիզմի առաջնորդներին հեռացնում էր իրականությունից: Իսկ իրականությունը կայանում էր նրանում, որ շատ արագ ձևավորվեցին երկու ճամբար՝ բոլշևիկյան և հակաբոլշևիկյան և այս մոտեցումն ընդգրկեց ողջ Անդրկովկասը: Կովկասյան մենշևիկների մարտավարությունը գլխավորապես հետապնդում էր բոլշևիզմը մեկուսացնելու նպատակ: Նրանք ձգտում էին դրան հասնել Սահմանադիր ժողովի հրավիրման ճանապարհով, որտեղ հույս ունեին էսեռների հետ միասին մեծամասնություն նվաճել, այսինքն՝ դրանով մեկուսացնել նաև Դաշնակցություն կուսակցությանը և օրինական պետականության համատեքստում ոչնչի հավասարեցնել բոլշևիկների ծրագրի իրագործման հնարավորությունները: Այդ նպատակն էին հետապնդում անդրկովկասյան մենշևիկները, երբ առաջ էին քաշում բոլշևիկներին խաղաղ ճանապարհով ճնշելու իրենց ծրագիրը, ինչը լիովին համապատասխանում էր նրանց ռազմավարությանը:

Հայկական հասարակական-քաղաքական դաշտը՝ Փետրվարյան հեղափոխության ընձեռած աննախադեպ քաղաքական ակտիվության փորձով հանդերձ, հայտնվեց բարդ իրավիճակում, որի ողջ ստեղծարար ու միաժամանակ կործանարար էությունն առայժմ ոչ կուսակցությունները և ոչ էլ հասարակությունը լիովին չէին գիտակցել: Լեոն հայկական քաղաքական իրականությունը համեմատելով վրացականի հետ նշում էր, թե «ճիշտ է հայերի մեջ հասարակական բաժանումները և խմբավորումները վաղուց էին սկսվել, բայց այդ բաժանումները սաղմնային վիճակի մեջ էին և չէին կարող անկախ և գործուն դեր կատարել»[19]:

Հայ կադետների *Հայ ժողովրդական կուսակցությունը* հեղաշրջումն անվանեց «Քաղաքացիական եղբայրասպան կռիվ», փաստեց վերջինիս ոչ օրինավոր, անհիմն բովանդակությունն ու նպատակը, մեղադրեց Ա. Կերենսկիի կառավարությանը՝ ժամանակավրեպ գործողությունների, Վ. Լենինին չձերբակալելու, անվճռականության և դեպքերի

[19] Լեո, Անցյալից, Երևան, 2009, էջ 325:

հետևից գնալու արատավոր հիմնահարցերում[20]: «Մշակի» հաջորդող գրեթե բոլոր արձագանքներում գերիշխում էր հայությանը մտահոգող կենտրոնական հիմնահարցը՝ ռազմաճակատի պաշտպանությունը, Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության հետագա ճակատագիրը:

«Վերջին հեռագիրները Պետրոգրադից չափազանց մտահոգիչ են»,– հոկտեմբերի 26-ին արձանագրում էր *Հայ հեղափոխական դաշնակցություն* կուսակցության «Հորիզոն» թերթը*: Կուսակցությունը հասարակությանը կոչ էր անում պահպանել հանգստություն և աչալրջություն, աջակցել ժամանակավոր կառավարությանը և թույլ չտալ անկարգություններ: Սպասվող անդրոշության մեջ թերթը ընդգծում էր առայժմ միակ դրական նորությունը հայ իրականության համար, այն, որ Պետրոգրադի զորքերի գլխավոր հրամանատար և պարետ է նշանակվել գեներալ Հակոբ Բագրատունին[21]: Անորոշությունը Դաշնակցության համար տևեց մեկ օր: Եթե հոկտեմբերի 26-ին կուսակցությունը Պետրոգրադի դեպքերը գնահատում էր որպես «հեղափոխություն», ապա հաջորդ օրը խմբագրականը վերնագրվեց «Հակահեղափոխական շարժումը», ինչը նոր լրատվության և դեպքերը սթափ գնահատելու արդյունք էր: Սոցիալական հեղափոխությունը «Հորիզոնի» կարծիքով ենթադրում էր կուլտուրական որոշ նախապայմաններ, հասարակական մտքի որոշակի հասունություն, առանց որի հեղափոխությունը կվերածվեր խուժանապետության և ավազակության: Ելնելով կուսակցական անզիջում հակամարտությունից, Դաշնակցությունն ինչ-որ տեղ միամտաբար Վ. Լենինին անվանում էր «երազող-ուտոպիստ, իսկ Լ. Տրոցկիին դեմագոգ, միաժամանակ ողբերգական հեռատեսությամբ կռահում, որ «բոլշևիկները խաղում են քաղցած ու տգետ ժողովրդի բնազդների հետ, նրանք քամի են ցանում և փոթորիկ կհնձեն: Փոթորիկ կհնձեն դժբախտաբար ոչ թե բոլշևիկները, այլ Ռուսաստանը, ռուսական բովանդակ դեմոկրատիան»[22]: Դաշնակցությունը հանդես եկավ բոլշևիկյան կուսակցության հռչակած պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական հեղափոխության դեմ: Նա դեռ հույս ուներ, որ Պետրոգրադում խնդիրը կվերջանա փոխադարձ համաձայնությամբ և կկազմակերպվի նոր իշխանություն[23]: Թեև հոկտեմբերի 28-ի խմբագրականը վերնագրված էր

[20] Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1917, 29 հոկտեմբերի, թ. 231:

*«Հորիզոնը», ՀՀԴ իրավասությանն անցավ նոյեմբերի 2-ին, որպես «Լույս» ընկերության հիմնադիր և կարգադրիչ Բաքվի ձեռնարկատեր Համբարձում Մելիքյանի սեփականություն:

[21] Տե՛ս Հորիզոն, Թիֆլիս, 1917, 26 հոկտեմբերի, թ. 229:

[22] Տե՛ս Նույն տեղում, 27 հոկտեմբերի, թ. 229:

[23] Տե՛ս նույն տեղում:

«Վճռական լինենք», սակայն «արյունով և երկաթով» ապստամբությունը ճնշելու հարցում Դաշնակցությունը ևս լիովին գտնվում էր ժամանակավոր կառավարության, հատկապես վրացական մենշևիկների հետփետրվարյան շարունակվող անվճռականության ազդեցության ներքո, երբ գնահատելով Լենինի և Տրոցկիի ազդեցությունը մայրաքաղաքի բանվորության և կայազորի վրա, խորհուրդ էր տալիս խաղաղ ճանապարհով գալ համաձայնության և «չխորացնել վիճակը»: Հեղաշրջման երրորդ օրը «Հորիզոնի» անթաքույց ատելությունը հասավ գագաթնակետին. «Հեղափոխական Ռուսաստանի մարմնի վրա ցավոտ ուռուցքը վերջապես պատռվեց և աղտոտ թարախը հանձին բոլշևիկների դուրս ժայթքեց. բոլշևիկների քայլը երկու կերպ չի կարելի որակել՝ դա դավաճանություն է հեղափոխության հանդեպ»[24]: Սկզբում զգուշավոր, ապա և անսքող անհանդուրժողականության նման արագ կերպափոխումը և հեղաշրջման անմիջական ազդեցությամբ գնահատականների և որակումների հետևողականությունն անհրաժեշտ է ընդգծել այն նկատառումներից ելնելով, որ առայժմ լրագրային հակամարտությունը շուտով կարտահայտվի բացահայտ պայքարով և կկանխորոշի մեզ հետաքրքրող հիմնահարցի ու ժամանակահատվածի շրջանակներում այս երկու կուսակցությունների վարքագիծը:

Դաշնակցության մեկ այլ՝ «Молот» (Մուրճ) թերթը փաստում էր, որ Փետրվարյան հեղափոխության սկզբում հասարակությանը նետված բոլշևիկյան կարգախոսները և հատկապես «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին»՝ իրականացան: Թերթն անշուշտ չէր նկատում, որ նշված խորհուրդներն իրենց մեծամասնությամբ էսէռա-մենշևիկյան էին և հազվագյուտ դեպքերում էր, որ բոլշևիկները դրանցում մեծամասնություն էին կազմում, ուստի և իրավասու չէին կառավարություն կազմել: Ինչևէ, Դաշնակցությունը հույսը կապում էր հեղափոխական մարմինների կենտրոնածիգ մտածողությամբ օժտված դեմոկրատիայի, հատկապես, քաղաքային ինքնավարությունների գործունեության հետ[25]: Լիովին հասկանալի է դիտարկումը, քանի որ Երևանի նահանգի և Անդրկովկասի հայաշատ կենտրոնների դումաներում ՀՅԴ կուսակցությունը նկատելի ազդեցություն էր պահպանում:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո տեսական, վերլուծական հոդվածաշարով Բաքվի «Գործ» պարբերականում աչքի ընկավ վերջինիս խմբագիր, (Հայոց ազգային խորհրդի) քարտուղար Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան):

[24] Տե՛ս նույն տեղում, 28 հոկտեմբերի, թ. 230:
[25] Տե՛ս Молот, Тифлис, 1917, 28 октября, N 22.

Նա էլ էր փաստում, թե «ով կարող էր կանխատեսել, որ Սահմանադիր ժողովի նախօրեին, իրեն մարքսիստական անուանող մի կուսակցություն (բոլշևիկները) հրապարակ կը նետուի՝ բռնի ոյժով ու աղաղակող կեղծիքի միջոցով տապալելու ժամանակաւոր Յեղափոխական կառավարութիւնը և իր այդ եղբայրասպան, ոճրագործ փորձի մէջ հաջողութիւն կունենա: Ո՞վ կարող էր հաւատալ, թե մի զինուորական դաւադրութեան միջոցով այդքան շուտ և այդքան հեշտութեամբ կարելի պիտի լինի հսկայածաւալ պետութիւնը ձգել անդունդի մէջ և քաղաքացիական արիւնոտ կռուի կրկէս դարձնել համայն երկիրը»[26]:

Կուսակցությունն իր համար կարևորում էր բոլշևիկների գործունեության օբյեկտիվ կողմը, այսինքն՝ ոչ այնքան այն, թե ինչ ներքին շարժառիթներից դրդված էին բոլշևիկներն առաջ մղում իրենց ներկա քաղաքականությունը, այլ առավելապես այն, թե ինչ հետևանքներ է ունենում այդ քաղաքականությունը, և ինչ միջոցներով են ձգտում նրանք հասնել իրենց պաշտոնապես առաջադրած նպատակներին: Նրանք վստահ էին, որ եթե անտեսեն բոլշևիկների գործունեության ներքին շարժառիթների վիճելի հարցը և քննության ենթարկեն միայն այն միջոցները, որոնցով պայքարում են բոլշևիկները, և այն հետևանքները, որ անխուսափելիորեն առաջ է բերում նրանց կուսակցական ու քաղաքական գործունեությունը, ապա հասարակությունը կհամոզվի, որ թե՛ այդ միջոցները և թե՛ հետևանքները ընդունակ են կասկածելի դարձնելու բոլշևիկյան ղեկավարների գաղափարական մաքրությունն ու մտավոր առողջությունը[27]: Կպարզվեր նաև, որ անկախ այն բարձր ու գեղեցիկ պատճառաբանություններից, որոնցով բոլշևիկները աշխատում են հիմնավորել իրենց քայլերը, նրանց գործունեության մեջ կար մի ամբողջական համակարգ, որ ապշեցուցիչ կերպով համապատասխանում է Ռուսաստանի թշնամիների ձգտումներին:

Պետք է նշել, որ ՀՅԴ աչքի ընկնող տեսաբաններից Արտ. Չիլինգարյանը սոցիալ-դեմոկրատական մեկ այլ կուսակցության, տվյալ դեպքում դրա ծայրահեղ ձախ թևի՝ բոլշևիզմի հանդեպ քաղաքական ազնվություն էր ցուցաբերում և եզրակացնում, որ երբ ծայրահեղ գրգռված են հասարակական կրքերը, երբ հասարակական գիտակցությունը պղտորված է մոլեգին կուսակցական պայքարի մեջ, մթագնվում է կուրության աստիճանի, երբ քաղաքական, ազգային ուժերից յուրաքանչյուրը շահագրգռված է իրերի այս կամ այն ընթացքով և մեծապես ենթա-

[26] Գործ, Բաքու, 1917, թիվ 9-10, էջ 165:
[27] Տե՛ս նույն տեղում, թիվ 11-12, էջ 192:

կա է դեպքերի հեղհեղուկ ազդեցությանը, դժվար է և անհնար անաչառ դատավոր լինել բոլշևիկների նկատմամբ[28]:

Ի դեպ, Արտ. Չիլինգարյանը հայ իրականության մեջ այն բացառիկ քաղաքական գործիչներից էր, որ հեղաշրջման առաջին շրջանում արդեն, կարողացավ ընդունել բոլշևիզմի օտարածին բնույթը, ուստի և դժվարանում էր բոլշևիկյան ղեկավարների գործունեության սուբյեկտիվ կողմի գնահատման հարցում:

Հենվելով հիմնականում "Русские Ведомости" թերթի հաղորդագրությունների վրա, որը բոլշևիկներին որակում էր որպես դավաճաններ և գերմանական գործակալներ, Լենինն ու Տրոցկին և այլ բոլշևիկյան «շեֆեր» ժամանակավոր կառավարության ամբաստանության տակ էին, հուլիսին արդեն հրապարակվել էր դատախազի կազմած մեղադրական ակտը, սակայն այդ ամենի հետ մեկտեղ գործը չէր ստացել դատարանի անաչառ քննությունը, ուստի և նա անվերապահորեն չէր պնդում այդ մեղադրանքների վրա[29]:

Ցավոք մինչև վերջ չգիտակցելով առավելապես բոլշևիզմի և ոչ այնքան առանձին ղեկավար գործիչների ռուսական պետության դեմ ուղղված գլխավոր քաղաքական գիծը, ՀՅԴ այս պարագայում Արտ. Չիլինգարյանը, գերապատվությունը տալիս էին բոլշևիկների գործունեության օբյեկտիվ կողմին, գտնելով, որ սուբյեկտիվն առավելապես բարոյական, քան թե քաղաքական հետաքրքրություն ունի[30]: Հասկանալի է, որ այս գնահատականը առավելապես պատմաբանի և ոչ ժամանակակից, անգամ քաղաքական գործչի եզրահանգում է:

Ազգային շեշտադրմամբ իրեն սոցիալիստական համարող կուսակցությունը անդրադառնում էր նաև բոլշևիկյան սոցիալիզմի մոդելի խնդրին: Ավելի ուշ, 1917 թ. դեկտեմբերի վերջին իրապես ըմբռնելով բոլշևիկների քաղաքականության գլխավոր մեկնակետը, Արտ. Չիլինգարյանը «Անդունդի մեջ» ծրագրային հոդվածում եզրակացնում էր, որ իրողություն է արդեն այն, որ «բոլշևիկները բռնության և կեղծիքի միջոցով հնարավոր են համարում սոցիալիզմի իրականացումը և սոցիալիզմի բարիքների պարգևումը ոչ միայն Ռուսաստանին, այլև ամբողջ աշխարհին»[31]: Եթե Ֆրանսիան բուրժուական հեղափոխության առաջապահն էր, իսկ Ռուսաստանն էլ իբր պետք է լինի սոցիալիստական հեղափոխության առաջամարտիկը, դա նշանակում էր, որ բոլշևիզմն անտեսում է պատմական իրականությունը և պատմական հեռանկարը:

[28] Տե՛ս նույն տեղում:
[29] Տե՛ս նույն տեղում:
[30] Տե՛ս նույն տեղում:
[31] Տե՛ս նույն տեղում, էջ 198:

Արտ. Չիլինգարյանը նկատի ուներ Ռուսաստանի ընդհանուր հետամնացության և, մասնավորապես, կապիտալիզմի ոչ պատշաճ մակարդակի հիմնահարցը: «Սոցիալիստական հեղափոխության գաղափարը,– ասում էր նա,– ժամանակակից Ռուսաստանում բացարձակապես մի ցնորք է»[32]: Հետևելով Մ. Գորկու տեսակետներին, նա ինչ-որ տեղ գերագնահատում էր արդյունաբերության ու այդպիսով նաև բանվորության դերը մշակույթի, քաղաքականության զարգացման գործում, բանվորին դիտարկում էր որպես կուլտուրայի հիմք, եվրոպականացման հասնելու ճանապարհ: Միաժամանակ ապշեցուցիչ էին հեղինակի կանխատեսումները բոլշևիկների «սոցիալիստական փորձերի»* անխուսափելի հետևանքների վերաբերյալ: Դրանք են ըստ Արտ. Չիլինգարյանի՝ արդյունաբերության կատարյալ քայքայումը, կուլտուրայի բացարձակ անկումը, բանվորական դասի ոչ միայն քաղաքական ջախջախումը, այլև տնտեսական կործանումը, ամբողջ երկրի ստրկացումն օտար կապիտալի կողմից և ներքին քաղաքական սանձարձակ ռեակցիան[33]:

Խորապես գիտակցելով իրողությունը Արտ. Չիլինգարյանը թերևս լավագույն կերպով հայկական հասարակական-քաղաքական մտքի մեջ հանգում էր բոլշևիկյան հեղաշրջման լիարժեք կործանարար ու ողբերգական դերի գնահատմանը: «Եթե բոլշևիկեան խելայեղ ապստամբութեան նախօրէին կարող էր տակաւին մի աղօտ յոյս լինել, որ Ռուսաստանը գերմարդկային ճիգով թերևս կարողանայ վերջ ի վերջոյ վերականգնել իր պետական զօրութիւնը և փրկել մեծ հեղափոխութեան ամենակենսական նուաճումները, այժմ, երբ բոլշևիկների հայրենասպան քաղաքականութիւնը դիւային հետևողականութեամբ և մոլեգնութեամբ օր-օրի վրայ քանդում է Ռուսաստանի պետական գոյութեան վերջին հիմքերը, երբ համայն երկրի հիւանդ օրգանիզմը կատարելապէս անզօր, անընդունակ է կռուելու իրեն ներքնապէս հիւծող մահացու ոյժերի դեմ և երբ իմպերիալիստական մեծ պետութիւնները – բարեկամ թէ թշնամի – շնչահեղձ անհամբերութեամբ գիշատիչ թռչունների պէս Ռուսաստանի հոգեվարքի վախճանին են սպասում, կարելի է ասել, որ միայն հրաշքը կարող է փրկել Ռուսաստանը»[34]:

1918 թ. փետրվարին «Հորիզոնի» հինգ համարներում Ավետիք Շահխաթունյանը հանդես է գալիս «Հոկտեմբերեան յեղաշրջումը» հոդվածաշարով: Հեղաշրջումից երեք ամիս հետո արձագանքը բացատրը-

[32] Նույն տեղում:
* 20-րդ դարի 60-ական թվականների ձևակերպումը Արտ. Չիլինգարյանն արել է 1917 թվականին:
[33] Տե՛ս նույն տեղում, էջ 199:
[34] Նույն տեղում:

վում է նրանով, որ Դաշնակցության մի հատվածը գոնե, դեռ հույսեր ուներ («Թուրքահայաստանի մասին» հրովարտակը - Վ. Մ.), որ Խորհրդային կառավարությունը հայանպաստ դիրքորոշում կորդեգրի, հատկապես Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության հարցում: Սակայն, նախ՝ զինադադարի կնքումը և անջատ բանակցությունները, ապա և՝ Սահմանադիր ժողովի ցրումը, վերջակետ դրեցին ՀՅԴ գաղափարական և մարտավարական տատանումներին և կուսակցությանն արմատական ընդդիմադիր կեցվածքը փոխարինեց մարտնչող թշնամական դիրքորոշմամբ: Այդ բեկման արտահայտություններից և պետք է համարել Ավ. Շահխաթունյանի մտորումները և բոլշևիկյան հեղաշրջման սնանկության ու կործանարար բնույթի մասին արված հիմնավոր դատողությունները:

Կանգ առնենք առավել բնորոշ հարցադրումների և վերլուծական մի շարք եզրակացությունների վրա: «Արդեօք բոլշևիկական պայքարն ու հոկտեմբերեան յեղաշրջումը սոցիալական հիմք ունին: Հիմնուած են արդեօք դրանք մի սոցիալական դասակարգի միւսի դէմ մղած կռի վրայ»[35],- հարցնում էր հեղինակը և հիմնավորում, որ հենց սոցիալ-դասակարգային առումով բոլշևիկները, գրեթե չեն տարբերվում էսեռներից ու ս.-դ. մենշևիկներից, որ ռուսական դեմոկրատիայի երկու հակառակորդ թևերի մեջ էական տարբերություն չկա: «Քոսոտ» ռամկավար, պառլամենտական հասարակապետութեան դէմ արտահայտեցին, նշում էր հեղինակը,- բայց դժբախտաբար նրանք չասացին այն մասին, թէ ինչո՞վ են մտադիր փոխարինել ռամկաւար հասարակապետութիւնը»[36]:

Ավ. Շահխաթունյանը համոզված էր, որ սոցիալիստական ճամբարի հակասություններն այնքան մեծ ու խորը չէին, որ «ներքին ընտանեկան վէճի սահմանից անցնեին և դառնային արիւնահեղ կռի նշանաբան», ուստի և եզրակացնում էր, որ բոլշևիկների և մյուս սոցիալիստների միջև եղած տարաձայնությունները կրում են միայն քաղաքական հիմք:

«Հողը ժողովրդին» նշանաբանը ևս ըստ հեղինակի չէր առաջացել ոչ մարքսիստական և ոչ էլ առավելապես բոլշևիկյան միջավայրում: Դաշնակցական Ավ. Շահխաթունյանն այս հարցում լիովին պաշտպանում էր սոցիալիստ-հեղափոխականների, տվյալ դեպքում Վ. Չեռնովի «հողային կոմիտեների» սրտամոտ գաղափարը: Առավել ևս զավեշտական էր այն, թե հաշտության հարցում բոլշևիկյան տեսակետը ո՞ր դասակարգի շահերին էր համապատասխանում և ո՞րն էր բոլշևիկյան տեսակետը, բացի պարտվողականությունից[37]: Ելք գտնելու համար Ավ. Շահխաթունյանն առաջարկում էր հրաժարվել նյութը մատերիալիստական եղանակով բացատրելուց: Հեղափոխական դեմոկրատիայի դեմ բոլշևիկների մղած կռիվը նա հիմնավորում էր երեք պայմաններով. 1) ռուս հեղափոխականների հոգեբանությամբ, 2) քաղաքական թյուրիմացությամբ lupsus lingua և 3) ռուսական իրականության մի շարք պայմաններով, տվյալ դեպքում՝ դեմոկրատիայի զինված և անզեն մասերի անբնական հարաբերություններով[38]:

Առաջին դեպքում նա մեծ տեղ էր հատկացնում «ռուս յեղափոխական ինտելեգենտին» և խոշոր անհատների դերին ու գտնում էր, որ «նրանց հոգեբանութիւնն ու դաստիարակութիւնը նախապատճառ են այս չտեսնուած ապադասակարգային, բայց և մասսայական կռի»[39]: «Դիմադրելու և կռելու պահանջը յաղթեց,- գտնում էր, Ավ. Շահխաթունյանը,- որովհետև յեղափոխականները՝ յեղափոխական մարտնչողից չկարողացան դառնալ քաղաքական կամ գոնէ յեղափոխական գործիչներ: Ռուսական յեղափոխական ինտելեգենցիայի բարձր շերտերի մէջ եղած կապը կտրուեց»[40]:

Սոցիալիստ-հեղափոխականների (էսեռների) կուսակցության անդրկովկասյան հայկական կազմակերպությունները, ելնելով ծրագրային այն դրույթից, որ Ռուսաստանը սոցիալիստական հեղափոխությանը կմոտենա աստիճանաբար, հեղաշրջումը որակեցին որպես «հակահեղափոխական ակտ»: Բանվորական և Զինվորական Համառուսաստանյան 2-րդ համագումարի սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունը և կուսակցության կենտրոնական կոմիտեն հոկտեմբերի 26-ին հայտարարում էին, որ «բոլշևիկյան կուսակցության և Պետրոգրադի բ. և զ. պատգամավորների խորհրդի կատարած իշխանության խլումը Սահմանադիր ժողովի գումարման նախօրեին և համագումարի բացման նախընթաց օրը՝ ոճրագործություն է հայրենիքի և հեղափոխության առաջ, սկիզբն է քաղաքացիական կռվի, Սահմանադիր ժողովի խորտակումն է և սպառնում է ոչնչացնել հեղափոխությունը»[41]: «Աշխատանքի դրոշակ» թերթը գրում էր, որ «ռուսական հեղափոխական դեմոկրատիայի համար մի հանգամանք պարզ է, որ այժմյան հեղափոխությունը սոցիալիստական

---

[35] Հորիզոն, 1918, 1 փետրվարի, թիվ 23:
[36] Նույն տեղում, 4 փետրվարի, թիվ 26:

[37] Տե՛ս Հորիզոն, 1918, 1 փետրվարի, թիվ 26:
[38] Տե՛ս նույն տեղում, 8 փետրվարի, թիվ 29:
[39] Տե՛ս նույն տեղում:
[40] Տե՛ս նույն տեղում, 13 փետրվարի, թիվ 32:
[41] Աշխատանքի դրոշակ, Բաքու, 1917, 5 նոյեմբերի, թիվ 18:

չէ, դրա մասին խոսք չի կարող լինել մի երկրում, ուր 80%-ը անգրագետ են և քաղաքացիորեն անպատրաստ»[42]:

Ի տարբերություն Անդրկովկասի սոցիալիստական մյուս կուսակցությունների, էսեռները համեմատաբար ծանրակշիռ և խորքային մոտեցում ցուցաբերեցին կատարված իրողությանը: Նրանք կշտամբեցին բոլշևիկներին չհարող սոցիալիստական մամուլը՝ հեղաշրջումը որպես սոսկ արկածախնդրություն բնորոշելու հարցում: Համաձայնվելով, որ Պետրոգրադի ապստամբությունը զինվորական դավադրություն է, էսեռները միաժամանակ ընդգծում էին վերջինիս նախօրոք կազմակերպված լինելու հանգամանքը: Նախ՝ դեռ հոկտեմբերի 15-ին (28) Բաքվի խորհրդի նիստում, էսեռ Սաքո Սահակյանը գիտակցելով, որ բոլշևիկները նախապատրաստվում են զինված հեղաշրջման հայտարարեց, որ «իշխանությունն անխուսափելիորեն կանցնի բոլշևիկների ձեռքը, բայց դրանից չեն շահի ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ իրենք բոլշևիկները»[43]: Որպես հիմնավորում նրանք անշուշտ նկատի ունեին հեղաշրջման տարածումը, Մոսկվայի և այլ կենտրոնների ապստամբությունները: Ցավոք, էսեռները լուրջ քաղաքական սխալ էին համարում բոլշևիկյան շարժման «ժողովրդական» բնույթը չնդունելու հիմնահարցը, ինչը հիմնականում կապում էին շարունակվող պատերազմի հետ[44]:

Այս թեզն, իհարկե սոցիալ-դեմոկրատիայի դիրքերից փորձում էր հիմնավորել նաև կուսակցության անվանի տեսաբաններից Լևոն Աթաբեկյանը, նկատելով, որ ներքին ու արտաքին ճակատների վրա պարտված ժողովուրդը մեղավորներ, պատասխանատուներ է փնտրում և գտնում է նրանց ըստ «ավանդության» հանձին հրեաների, մտավորականների և սոցիալիստների: Ծայրահեղ հուսահատության հասած բնակչությունը հանգում էր համապատասխան եզրակացությունների. «Զարդեցեք ջհուդներին, նրանք են առաջ բերել պատերազմը», «ջարդեցեք ինտելիգենտներին, կուսակցական առաջնորդներին, նրանք են մեր երկպառակությունների պատճառը», «պետք է կախել թե Կերենսկուն, թե Լենինին»[45]:

Հեղաշրջմանը յուրովի արձագանքեց նաև Կովկասում արևմտահայության շահերի պաշտպան հանդիսացող «Հայաստան» անկուսակցական թերթը: Այն առաջին հերթին գնահատեց և ընդգծեց այն հանգամանքը, որ Կովկասը կենտրոնի համեմատ ավելի հանգիստ ու կշռադատված դիրք բռնեց հեղաշրջման նկատմամբ և նկատեց, որ կենտրոնին բնորոշ և սպասվող քաղաքացիական պատերազմը Անդրկովկասում շատ հեշտ կարող է վերածվի ազգամիջյան կռվի[46]:

Այսպիսով, բոլշևիկյան հոկտեմբերյան հեղաշրջումն Անդրկովկասի և հայ իրականության ազդեցիկ քաղաքական ուժերն ընկալեցին և ընդունեցին առանձնահատուկ ընդգծված տագնապով:

Բոլշևիկյան հեղաշրջման նկատմամբ հատուկ վերաբերմունք դրսևորեցին Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում տեղակայված բանակի հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, մարմինները, հրամանատարական կազմը:

Կովկասյան բանակի արձագանքների և գնահատականների առանձնահատկությունն այն էր, որ այդ հարցում չկար միատարրություն, անգամ առանձին զորամասերում: Այս հանգամանքը թե՛ ռազմաճակատի պաշտպանության և թե՛ Անդրկովկասի հասարակական-քաղաքական հիմնահարցերի համատեքստում բանակի դերին հաղորդում է առանցքային քաղաքական և, իհարկե, գիտական նշանակություն:

Հոկտեմբերի 24-ին (նոյեմբերի 6) Ռուսաստանի հանրապետության նախարարների խորհրդի նախարար-նախագահ Ա. Կերենսկին խորհրդից խնդրում էր աջակցել ժամանակավոր կառավարությանը՝ բոլշևիկների դեմ վճռական գործողություններ կազմակերպելու նպատակով: Հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Ե. Լեբեդինսկին ստացավ Ռուսաստանի զորքերի գերագույն գլխավոր հրամանատար գեներալ Ն. Դուխոնինի հրամանը[47]: Ըստ այդմ էլ, հեղաշրջման փաստին Անդրկովկասում առաջինն արձագանքեց Կովկասյան բանակի զինվորական պատգամավորների երկրամասային խորհուրդը: Վերջինիս նախագահ, աջ էսեռ Դ. Դոնսկոյը հոկտեմբերի 25-ին դատապարտելով բոլշևիկների ելույթը բանակին կոչ էր անում պահպանել հանգստություն[48]:

Կովկասյան բանակի հրամանատարությունը բոլշևիզմն արմատապես և արագ ճնշելու գործում ոչ մի տատանում չդրսևորեց: Հոկտեմբերի 27-ին ինչ-որ տեղ հաշվի չառնելով Կովկասյան ռազմաճակատի զորամասերի իրական տրամադրությունները, գեներալ Ե. Պրժևալսկին Դ. Դոնսկոյի համաձայնությամբ գերագույն գլխավոր հրամանատարության շտաբին հեռագրում էր. «ամբողջ ռազմաճակատը միայն հրամանի է սպասում, որպեսզի աջակցի ժամանակավոր կառավարությանն ու հան-

---

[42] Տե՛ս նույն տեղում:
[43] С. Беленький и А. Манвелов, նշված աշխատությունը, էջ 167:
[44] Տե՛ս Աշխատանքի դրոշակ, 19 նոյեմբերի, թիվ 19:
[45] Տե՛ս նույն տեղում:

[46] Տե՛ս Հայաստան, Թիֆլիս, 1918, 12 հունվարի, թ. 1:
[47] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 232, թ. 1-2:
[48] Տե՛ս Документы и материалы..., с. 1.

ռապետության խորհուրդներին և Սահմանադիր ժողովի նախօրեին երկիրը պաշտպանի ցնցումներից»[49]: Նույն օրը բոլոր կոմիսարներին ռադիոհեռագիր ուղարկվեց, որով պահանջվում էր կասեցնել Պետրոգրադից ստացվող քաղաքական հեռագրերի մուտքը: Ուշագրավ է, որ Ն. Դուխոնինը հրաժարվեց կատարել ժողկոմխորհի կամքը և իր հավատարմությունը հայտնեց Ա. Կերենսկիին (որի համար հեռացվեց պաշտոնից), իսկ երբ Գերագույն գլխավոր հրամանատար նշանակվեց Կռիլենկոն, Պրժևալսկին իր հավատարմությունը հայտնեց Դուխոնինին[50]: Հրամանատարներից և զինվորական պատգամավորական խորհուրդներից ժամանակավոր կառավարության հանդեպ աջակցություն էր պահանջում նաև գեներալ Օդիշելիձեն:

Հոկտեմբերի 27-ին (նոյեմբերի 9) նմանատիպ բովանդակությամբ հեռագրեր ստացվեցին՝ Բայազետի կայազորի զինվորական պատգամավորների խորհրդի նախագահ Նոզդրովսկիից, Խնուսում տեղակայված Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի շտաբից և այլն[51]: Հոկտեմբերի 28-ին (նոյեմբերի 10) Ալեքսանդրապոլի գավառային կոմիսար Պիճիկյանը Թիֆլիսի երկրամասային կենտրոնին հայտնում էր, որ իր կողմից հրավիրված դեմոկրատական կուսակցությունների տեղական կազմակերպությունների և զ. բ. պ. Խորհրդի միացյալ նիստը, հեղաշրջման հանդեպ իր զայրույթն արտահայտելով գտնում էր, որ անհրաժեշտ է անհապաղ հրավիրել տեղական խորհուրդների ներկայացուցիչների համագումար[52]: Ավելի ուշ, նոյեմբերի 11-ին (24), Երևանի կայազորի զինվորական պատգամավորների խորհրդի նիստը ընդունեց բանաձև, ըստ որի առաջադրվում էին. 1. սկսված քաղաքացիական պատերազմի միմիայն խաղաղ վերացում, 2. հեղափոխական-դեմոկրատիայի ներսում կոալիցիայի ձևավորում՝ սոցիալիստական բոլոր կուսակցությունների ներգրավմամբ, 3. իր ժամկետներում Սահմանադիր ժողովի հրավիրում և 4. դեմոկրատական հաշտության կնքում[53]:

Հոկտեմբերի վերջին բանակի հրամանատարությունը տարածեց ռազմա-դատական վարչության հոկտեմբերի 24-ի կարգադրությունը, որը բոլշևիկների դեմ հեղափոխական ելույթներին մասնակցելու համար կոնկրետ միջոցառումներ էր նախատեսում[54]:

Բանակի հրամանատարության աջակցելու լիակատար պատրաստակամություն դրսևորեց Կովկասյան բանակի երկրամասային խորհուրդը իր էսեռական մեծամասնությամբ: Ժամանակավոր կառավարության Կովկասյան ռազմական օկրուգի կոմիսար Էսեռ Վլ. Գոբեչիան զինվորական պատգամավորական խորհուրդներին կոչ հղեց, որտեղ հեղաշրջումը որակվում էր որպես «դավաճանություն Ռուսաստանին ու հեղափոխությանը և հույս էր հայտնում, որ կովկասյան ռազմական օկրուգի զորքերը հավատարիմ կմնան ժամանակավոր կառավարությանը և կդատապարտեն «նրանց, ովքեր իրենց խռովությամբ իրագործում են գերմանական կայսեր պլանները»[55]:

Միաժամանակ, հաշտության ու հողի վերաբերյալ բոլշևիկյան քայքայիչ, հակապետական հռչակագրերի ազդեցությունը բավարար էր, որ դրանց վերաբերյալ լուրերը թափանցեին նաև Կովկասյան ռազմաճակատ:

1917 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ռազմաճակատի թուրքական հատվածում, որը ձգվում էր Տրապիզոնից մինչև Վանա լճի հարավարևելյան շրջանները, թուրքական 2-րդ և 3-րդ բանակների դեմ գործում էին Կովկասյան բանակի 5 կորպուսներ: Հյուսիսից հարավ այդ կորպուսները դասավորված էին Տրապիզոն – Բաբերդ, Էրզրում – Մամախաթուն (Դերջան) – Երզնկա, Մուշ – Խնուս և Օգնոտից (Օղնութ) մինչև Բիթլիսի հարավն ընկած շրջաններում: Ռազմաճակատի արևելյան՝ պարսկական հատվածում տեղակայված էր Կովկասյան 7-րդ կորպուսը, ինչպես նաև Կովկասյան առանձին 1-ին և 2-րդ հեծելազորային կորպուսները: Հեղաշրջման օրերին Կովկասյան բանակն իր պահեստային զորամասերի հետ մեկտեղ ուներ ոչ պակաս, քան 600 հազար զինվոր[56]:

Կովկասյան գործող բանակը ոչ միանշանակ արձագանք և վերաբերմունք դրսևորեց հեղաշրջման նկատմամբ: Բարձր հրամանատարությունը, որի վրա էր դրված ռազմաճակատի պաշտպանության պատասխանատվությունը զսպված, միաժամանակ, հետևողական հակաբոլշևիկյան դիրքորոշում որդեգրեց: Հոկտեմբերի 27-ին Կովկասյան բանակի կոմիսար Դ. Դոնսկոյի անունով ստացվում է Ռուսաստանի ժամանակավոր կառավարության մինիստր-նախագահ Ա. Կերենսկիի հեռագիրը Գատչինոյում տեղակայված գերագույն գլխավոր հրամանատարության շտաբից: Բոլոր զորամասերին հրամայվում էր վերադառնալ իրենց պարտականություններին և հատուկ շեշտվում էր այն հանգամանքը, որ Ա. Կերենսկին որպես ռուսաստանյան հանրապետության զինված ուժերի գե-

---

[49] Российский государственный военно-исторiеский архив РФ, ф. 2100, оп. 1, д. 2, л. 6:
[50] Տե՛ս նույն տեղում, 2100, оп. 1, д. 2, л. 366:
[51] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 233, թ. 1:
[52] Տե՛ս նույն տեղում, գ. 233, թ. 1:
[53] Տե՛ս նույն տեղում, գ. 239, թ. 1:
[54] Տե՛ս РГВИА, ф. 1300, оп. 1, д. 60, л. 226:

[55] Տե՛ս С. Е. Сеф, Революция 1917 года в Закавказье (Документы и материалы), Тифлис,1927, с. 295-296.
[56] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970, էջ 379-380:

ռագույն գլխավոր հրամանատար ժամանել է Պետրոգրադ[57], այսինքն՝ պատրաստ էր վճռական գործողությունների: Գեներալ Ա. Կուլեբյակինը վստահ էր, որ «բոլշևիզմը Անդրկովկասի ժողովուրդների շրջանում ոչ մի արմատներ չուներ և որ «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» կարգախոսը ևս հանրամատչելի չէր, քանի որ իշխանությունն առանց այդ էլ այդ խորհուրդների ձեռքում էր»[58]: Դրա հետ մեկտեղ հոկտեմբերի վերջին շաբաթվա ռազմա-քաղաքական ամփոփագրերը լի էին առավելապես ոչ թե բանակի հանգստությունն, այլ հրամանատարության արդարացված տագնապն արտացոլող լուրերով:

Առանձնահատուկ և հասկանալի տագնապ էին դրսևորում հատկապես հայկական ազգային զորամասերը, որոնց համար ռազմաճակատը նույնանում էր Հայրենիքի պաշտպանությանը: Տասնյակ հաղորդագրություններից հիշատակենք հոկտեմբերի 29-ին գործող բանակից ստացված հայկական հրացանաձիգ-մահապարտների 2-րդ գնդի որոշումն այն մասին, որ վերջինս «վճռականորեն կանգնած է թանկագին ազատության, ժամանակավոր կառավարության և Սահմանադիր ժողովի պաշտպանության դիրքերում»: Այս փաստը հիշարժան է նաև նրանով, որ գնդի հրամանատար գնդապետ Սամարցյանը 1918 թ. աշնանը ընկավ թուրքական արշավանքի դեմ պայքարում և, հատկապես Մայիսյան հերոսամարտերում[59]: Դատապարտումներից զատ, ընդունվում էին նաև բոլշևիկներին պաշտպանող բանաձևեր: Բանակի շտաբի հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 4-ն ընդգրկող ռազմա-քաղաքական ամփոփագրերից երևում է, որ ոչ միայն պահեստային զորամասերում, այլև ռազմաճակատում ընդհանուր անհանգիստ, սպասողական վիճակ էր տիրում, որոշ զորամասերում տիրապետող էր դառնում բոլշևիկների ազդեցությունը[60]:

Միաժամանակ հարկ է նշել բոլշևիկ և հիմնահարցի պատմաբան Ս. Սեֆի կարծիքը, որը հենվելով բոլշևիկյան կոմիտեների պահպանված ներքին գրությունների վրա, պնդում էր, որ բոլշևիկները 1917 թ. նոյեմբերին Անդրկովկասում ապստամբություն չէին նախապատրաստում[61]:

Այսպիսով, 1917 թ. հոկտեմբերի 25-ին բոլշևիկյան կուսակցությունը Պետրոգրադում զինված հեղաշրջման ճանապարհով գրավեց իշխանությունը, ինչն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ ու նախադրյալներ:

[57] Տե՛ս Հորիզոն, 1917, 27 հոկտեմբերի:
[58] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 20:
[59] Տե՛ս Հորիզոն, 1917, 31 հոկտեմբերի, թիվ 232::
[60] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, նշված աշխատությունը, էջ 378-392:
[61] Տե՛ս История классовой борьбы в Закавказье, Сборник статей, книга первая, Тифлис, 1930, Введение С. Сефа.

Հեղաշրջումն Անդրկովկասում ընկալվեց որպես դավաճանություն Փետրվարյան հեղափոխության և ժամանակավոր կառավարության ժողովրդավարության զարգացման հեռանկարին: Երկրամասի բոլոր կուսակցությունները և հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, բացի բոլշևիկներից, դատապարտեցին իշխանության ոչ օրինական զավթումը, համերաշխ էին իրենց գնահատականներում: Քաղաքական կայունության հաստատման միակ ուղի և երաշխիք համարվեց Սահմանադիր ժողովի հրավիրումը: Փետրվարյան հեղափոխության դասերը լավագույնս ընկալեցին վրացական մենշևիկները, որոնք Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքում, շատ արագ գերիշխող դիրք գրավեցին: Կովկասյան մենշևիկների մարտավարությունը գլխավորապես հետապնդում էր բոլշևիզմը մեկուսացնելու նպատակ: Նրանք ձգտում էին դրան հասնել Սահմանադիր ժողովի հրավիրման ճանապարհով, որտեղ հույս ունեին էսեռների հետ միասին մեծամասնություն նվաճել, այդպիսով քաղաքական պայքարից հեռացնել նաև ՀՅԴ-ին և օրինական պետականության համատեքստում ոչնչի հավասարեցնել բոլշևիկների ծրագրի իրագործման հնարավորությունները:

Հայկական հասարակական-քաղաքական դաշտը Փետրվարյան հեղափոխության ընձեռած աննախադեպ քաղաքական ակտիվության փորձով հանդերձ հայտնվեց բարդ իրավիճակում: Հաղթահարելով առաջին օրերի համընդհանուր անորոշությունը, հայկական կուսակցությունները՝ Հայ ժողովրդական կուսակցությունը, Հայ հեղափոխական դաշնակցությունը, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական կազմակերպությունները, ս.-դ. հայկական բանվորական կազմակերպությունը (սպեցիֆիկներ), արևմտահայության շահերի արտահայտիչ «Հայաստան» թերթը և մյուսները դատապարտեցին բոլշևիկյան հեղաշրջումը:

Հոկտեմբերյան հեղաշրջման նկատմամբ հատուկ վերաբերմունք դրսևորեցին Անդրկովկասում և կովկասյան ռազմաճակատում տեղակայված բանակային հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, մարմինները, հրամանատարական կազմը: Այդ արձագանքների և գնահատականների առանձնահատկությունն այն էր, որ այդ հարցում չկար միատարրություն: Այս հանգամանքը թե՛ ռազմաճակատի պաշտպանության և թե՛ Անդրկովկասի հասարակական-քաղաքական հիմնահարցերի և, հատկապես իշխանության խնդրի համատեքստում բանակի դերին հաղորդում էր առանցքային քաղաքական նշանակություն:

1.2. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Անդրկովկասում բոլշևիկյան հեղաշրջման արձագանքները և տարաբնույթ քաղաքական ատյաններում վերջինիս նկատմամբ համապատասխան դիրքորոշման կայացումը՝ վերջին հաշվով ենթատեքստում պարունակում էր իշխանության համար պայքարի բովանդակություն:

1917 թ. հոկտեմբերին Անդրկովկասում վերջնականապես ձևավորվեցին իշխանություն կազմակերպելու երկու կենտրոններ՝ Բաքուն և Թիֆլիսը:

Իրադարձությունների զարգացումն արդյունաբերական-բանվորական Բաքվում արմատական բնույթ կրեց: Հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7) Բաքվում կայացավ բոլոր դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ ժամանակավոր կառավարության հետ հարաբերությունների ընդհատման և «հակահեղափոխական բնույթի հնարավոր ելույթի» հետ կապված, քննարկվեց տեղում գերագույն հեղափոխական մարմնի ստեղծման հարցը[62]:

Հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8), ստանալով բոլշևիկյան հեղաշրջման լուրը գումարվեց Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին քաղաքական կուսակցությունները, կայազորի ներկայացուցիչները, արհմիությունները: Էսեռա-մենշևիկյան-դաշնակցական խմբավորման մեծամասնությամբ մերժվում է Ստ. Շահումյանի առաջարկած բանաձևը՝ իշխանությունը Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեին հանձնելու վերաբերյալ և առաջարկվում է նոր մարմնի ստեղծման հարցը:

Վերոհիշյալ երեք ազդեցիկ կուսակցությունների առաջարկով, հեղափոխական կարգը պաշտպանելու նպատակով ստեղծվում է «Հասարակական անվտանգության Բաքվի հեղափոխական կոմիտե»[63]: Հոկտեմբերի 27-ին (նոյեմբերի 9) բոլշևիկների նախաձեռնությամբ և Ստ. Շահումյանի նախագահությամբ հրավիրվում է Բաքվի խորհրդի ընդլայնված նիստ (544 հոգի ներկաներ), ելույթներով հանդես են գալիս բոլշևիկներից՝ Ա. Ջափարիձեն, էսեռներից՝ Ս. Սահակյանը, մենշևիկներից՝ Ն. Աթաբեկովը: Ա. Ջափարիձեն Պետրոգրադի իրադարձությունները գնահատելով որպես «համաշխարհային հեղափոխության սկիզբ» պահանջում էր ամբողջ իշխանությունը Բաքվում հանձնել բանվորների և զինվորների պատգամավորների խորհրդին: Արտահայտելով խորհրդի

[62] Տե՛ս С. Беленький и А. Манвелов, էջ 177:
[63] Տե՛ս նույն տեղում, էջ 179:

ազգային-սոցիալիստական խմբավորման տրամադրությունները, էսեռ Ս. Սահակյանը վերլուծելով երկրի կենտրոնում ստեղծված իրավիճակը, նշում էր, որ «բոլշևիզմը ժամանակավոր երևույթ է և մեր խնդիրն է, ելնելով հեղափոխության խնդիրներից պայքարել նրա կոպիտ դրսևորումների դեմ»[64]:

Այս անգամ նույնպես հաղթում է հեղափոխական-դեմոկրատական կուսակցությունների միացյալ խմբավորումը (258-ը՝ 149 ձայնի դեմ), ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ խորհրդի պատգամավորների մի մասը, հատկապես ձախ էսեռները՝ թվով 84 մարդ, քվեարկում են նրանց բանաձևի օգտին և հաստատվում է նախորդ օրը՝ Հասարակական անվտանգության կոմիտեի ստեղծման մասին որոշումը[65]:

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը Բաքվի քաղաքային Դումայի վերընտրություններում երկրորդ տեղն էր զբաղեցրել՝ (12.404 ձայն) սոցիալիստական (էսեռ, մենշևիկ, Բունդ, Հայկական ս.-դ. բանվորական կուսակցության (սպեցիֆիկներ)) խմբավորումից հետո: Վերջինս «Ապահովության կոմիտեի» ստեղծումը գնահատեց որպես «սոցիալիստական կուսակցությունների, հեղափոխական կազմակերպությունների և բանակի ներկայացուցիչներից կազմված՝ հակահեղափոխության և անարխիայի դեմ կռիվ մղող կենտրոնական մարմին, որի կամքը պետք է լինի նաև կամքը բովանդակ ժողովրդի»[66]:

Բաքվի բոլշևիկյան կոմիտեն կարողանում է այս պարտությունը վերածել հակապրոպագանդայի, բոլշևիկյան կոչերը հոկտեմբերի 29-ին (նոյեմբերի 11) քաղաքում ցույցի են դուրս բերում կասպիական ռազմական նավատորմի նավաստիներին և հանրահավաքում ընդունվում է բոլշևիկներին պաշտպանող բանաձև: Չայն տալով բոլշևիկյան բանաձևի օգտին, զինվորներն ու նավաստիները քվեարկում են Բաքվում իշխանությունը խորհրդին հանձնելու օգտին[67]: Նոյեմբերի 1-ին (14) «Ընկեր զինվորներ» կոչով հանդես եկավ Ստ. Շահումյանը, որտեղ հոկտեմբերի 29-ի ընտրությունները գնահատեց որպես բոլշևիզմի հանդեպ կայազորի մեծ մասի համակրանքի դրսևորում[68]: Վերլուծելով բանակի տրամադրությունները և զորամասերում բոլշևիկների հեղինակության աճը, Ստ. Շահումյանը, իհարկե, բոլշևիզմի դիրքերից փաստում է բոլորի

[64] Տե՛ս С. Беленький и А. Манвелов, նշվ. աշխ., էջ 179:
[65] Տե՛ս Ս.Հ. Մելիքյան, Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920 թվականներին, Երևան, 1997, էջ 96:
[66] Տե՛ս Հորիզոն, 1917, 29 հոկտեմբերի, թիվ 231:
[67] Տե՛ս Бакинский Рабочий, Баку, 1917, 1 ноября, N 73.
[68] Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հ. 4, Երևան, 1978, էջ 20:

կողմից արձանագրված քաղաքական իրողությունը, այն, որ զինվորները վստահում էին դեմոկրատական խորհուրդներին, սակայն Փետրվարյան հեղափոխության ութ ամիսների նրանց վարած քաղաքականությունը, բանակի օբյեկտիվ հոգնածությունը հասցրեց իր գագաթնակետին, «բացեց նրանց աչքերը»[69]: Արդյունքը եղավ այն, որ հոկտեմբերի 31-ի (նոյեմբերի 13) խորհրդի ընդլայնված նիստում բոլշևիկներն անցկացրին իշխանությունը խորհրդին հանձնելու և հասարակական անվտանգության կոմիտեն վերացնելու մասին որոշումներ[70]:

Նոյեմբերի 2-ին (15), Բաքվի խորհրդի ընդլայնված հերթական խորհրդաժողովը, ուր բոլշևիկները ունեին մեծամասնություն (488-ից 344 ձայն), քննարկեց իշխանությունը խորհրդի ձեռքն անցնելու հիմնահարցը: Դեմոկրատական խմբավորման կուսակցությունները՝ էսեռներ, մենշևիկներ, դաշնակցականներ, թվով 124 մարդ հեռանում են նիստերի դահլիճից: Նիստի մյուս մասնակիցները շարունակում են աշխատանքը՝ քննարկելով իշխանությունը Բաքվում խորհրդին անցնելու գործնական միջոցառումները: Զեկուցմամբ հանդես է գալիս Ստ. Շահումյանը, որը բարձրացնում է նաև քաղաքի զինված ուժերի նկատմամբ վերահսկողություն կիրառելու հարցը: Մասնավորապես Բաքվի էսեռական կազմակերպության մարտավարությունը կրկնում էր նույն օրերին հրավիրված Համառուսաստանյան բ. և զ. պատգամավորների խորհուրդների 2-րդ համագումարում սոցիալիստ-հեղափոխականների կենտրոնական կոմիտեի և համագումարի խմբակցության ընդունած հռչակագիրը: Դատապարտելով հեղաշրջումը, սոցիալիստ-հեղափոխականների խմբավորումը բոլշևիկների վրա «թողնելով այդ խելացնոր և ոճրագործ քայլի հետևանքների ամբողջ պատասխանատվությունը և անհնարին համարելով նրանց հետ միասին որևէ աշխատանք, բացի այս համագումարը, Պետրոգրադի զորքերի և շատ խորհուրդների անբավարար ներկայացուցչությունը համարելով անիրավասու, թողնում է համագումարը և հեռանում»[71]: Ի վերջո ընտրվում է Բաքվի խորհրդի նոր գործադիր կոմիտե, որը և ճանաչվում է քաղաքի և Բաքվի նավթարդյունաբերական շրջանի բարձրագույն իշխանություն: Բացի բոլշևիկներից գործադիր կոմիտեի կազմում ընտրվում են նաև 6 ձախ էսեռ[72]: Նոյեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում Բաքվի կայազորի անցումը բոլշևիկյան խորհրդի կողմը Արևելյան Անդրկովկասի կենտրոնում ավելի ամրապնդեց բոլշևիկների

[69] Տե՛ս նույն տեղում:
[70] Տե՛ս Известия Бакинского Совета, Баку, 1917, 2 ноября, N 175.
[71] Աշխատանքի դրոշակ, 1917, 5 նոյեմբերի, թիվ 18:
[72] Տե՛ս С. Беленькийи А. Манвелов, նշվ. աշխ., էջ 186-187:

դիրքը. այդ փաստն ընդունվում էր նաև ռազմական օկրուգի շտաբում: Դրան զուգահեռ, նոյեմբերի 3-ին (16) Բաքվի էսեռական, մենշևիկյան և դաշնակցական կոմիտեների արտակարգ նիստը որոշեց Բաքվում և նրա շրջաններում ձևավորել Հասարակական անվտանգության կոմիտե[73]:

Նոյեմբերի 5-ին (18) «Известия Комитета Безопасности» լրագրի առաջին համարը հրապարակեց կոմիտեի կոչն ուղղված քաղաքացիներին[74]: Այն մեկ անգամ ևս վկայում էր Անդրկովկասում ծավալվող քաղաքական անգիջում պայքարի մասին և պարզում, որ այդ օրերին սկսված գոտեմարտը որոշիչ էր դառնալու երկրամասի քաղաքական զարգացումների ասպարեզում:

Նոյեմբերի 7-ին (20) «Մուսավաթ» կուսակցության Բաքվի կոմիտեն բանաձև ընդունեց քաղաքական դրության մասին, որով կարելի է ասել, գործնականորեն մուտք գործեց Անդրկովկասի մեծ քաղաքականություն: Կուսակցությունը գտնում էր, որ «Բաքվի քաղաքական հակամարտության հաղթահարումը բոլշևիզմի ճնշման ճանապարհով հանդիսանում է ծայրահեղ վնասակար քայլ՝ համադեմոկրատական նպատակների և խնդիրների լուծման ճանապարհին», ուստի և առաջարկում էր ոչ նպատակահարմար համարել բոլշևիկների մեկուսացմանն ուղղված դեմոկրատիայի մի մասի մարտավարությունը[75]: Ազգային շահի և քաղաքական հեռատեսության համատեքստում Մուսավաթի որդեգրած քաղաքականության ամենաուշագրավ դրվագն այն է թերևս, որ մահմեդական ֆեդերալիստների ազգային կուսակցությունը հեղաշրջման առաջին օրերին պաշտպանում էր բոլշևիկներին, փաստորեն, հայ Ստ. Շահումյանին և ավելին, գտնում էր, որ Հասարակական անվտանգության կոմիտեի մարտավարությունը վնասակար է հաշտության և համաձայնության քաղաքականության համար: Այսպես, թաթարական ազգային-դեմոկրատական կուսակցությունը մարտահրավեր էր նետում նաև Անդրկովկասի մյուս ազգային ուժերին և իրեն առավել ապահով էր զգում բոլշևիկների հետ, հատկապես, Բաքվում՝ անվիճելի հզոր Դաշնակցության հետ դժվարին մրցակցության պայմաններում:

Այսպիսով, Բաքվում գրեթե նույնությամբ ինչպես և Պետրոգրադում՝ բանակի վճռական դերակատարման շնորհիվ և, իհարկե, խաղաղ ճանապարհով մինչև նոյեմբերի 5-ը (18) իշխանությունն անցավ բոլշևիկներին: Իշխանության համեմատաբար հեշտ գրավումը պայմանավորված էր երկրի կենտրոնից բխող քաղաքականությամբ, երբ բոլշևիկների

[73] Տե՛ս նույն տեղում, էջ 188:
[74] Տե՛ս նույն տեղում, էջ 194-195:
[75] Տե՛ս նույն տեղում, էջ 195-196:

հաջողությունը դարձյալ համարվում էր ժամանակավոր երևույթ, անօրինականություն, որի վերջը ենթադրվում էր, որ կտա հեղափոխության և ժողովրդի կամքն արտահայտող Սահմանադիր ժողովը:

Կատարված իրողությունից ելնելով սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Բաքվի կոմիտեի նոյեմբերի 4-ի (17) կոչում նշվում էր, որ վերջինս իր վրայից հանում է Բաքվի ընդլայնված խորհրդի գործողությունների ողջ պատասխանատվությունը: Միաժամանակ հայտնվում էր, որ էսեռների և մյուս սոցիալիստական կուսակցությունների կոմիտեների միջև ձեռք է բերվել համաձայնություն՝ համատեղ գործողությունների դիմելու վերաբերյալ: Դրանով փորձ էր արվում միավորվել և տապալել Բաքվի խորհրդի իշխանությունը և ստեղծել բոլոր դեմոկրատական ուժերից կազմված «ժամանակավոր իշխանություն»[76]:

Ինչ վերաբերում է ձախ էսեռներին, ապա Բաքվում ազդեցիկ դիրքեր զբաղեցնող այդ խմբակցությունը փաստորեն բոլշևիկների հետ կիսելով իշխանությունը, նոյեմբերի 14-ին պաշտոնապես հայտնում է աջերից իրենց բաժանման և բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդների առաջիկա ընտրություններում ինքնուրույն ցուցակով հանդես գալու մասին[77]: Դրանով իսկ Բաքվում ավարտվում է էսեռական կազմակերության պառակտումը աջ և ձախ թևերի միջև, ինչն անշուշտ բոլշևիկյան հեղաշրջման անմիջական պառակտիչ ազդեցությունն էր սոցիալիստական այդ կուսակցության վրա:

Թիֆլիսում իշխանության հիմնահարցի լուծմանն ուղղված և բոլշևիկյան վտանգին դիմագրավելու առաջին գործնական քայլ կարելի է համարել բ. զ. և գ. պ. խորհրդի երկրամասային կենտրոնի կողմից հոկտեմբերի 20-ին (նոյեմբերի 2) «Կովկասում իշխանության կազմակերպման մասին» նախագծի ընդունումը: Փաստաթուղթն ամփոփում էր հետևյալ հիմնական դրույթները. 1. Անդրկովկասում անթույլատրելի է ժամանակավոր կառավարության կողմից գեներալ կոմիսարի նշանակումը, 2. կոմիտեում (նկատի ունի, Օզակոմը) ընդունվում է ազգերի ներկայացուցչության սկզբունքը, 3. կոմիտեի անդամների թիվը պետք է հասցվի 8-ի, 3 ս.-դ., 2 էսեռ, 3 ազգային կազմակերպությունների՝ վրացի, հայ, մահմեդական ներկայացուցիչներ, 4. հայերի ներկայացուցիչը պետք է լինի դաշնակցական, վրացիներինը՝ սոցիալիստ-ֆեդերալիստ, մահմեդականներինը՝ ցանկալի է, որ լինի սոցիալիստական կուսակցություններից, բայց պարտադիր չէ, 5. բոլոր ներկայացուցիչներն ընտրվում են երկրամասային կենտրոնի կողմից, որը մերժման իրավունք ունի, 6.էսեռների կամ ս.-դ. մի ներկայացուցիչը նշանակվում է ժամանակավոր կառավարության կողմից և հանդիսանում է կոմիտեի նախագահը[78]:

[76] Տե՛ս С. Беленькийи А. Манвелов, նշվ. աշխ., էջ 190 և 199:
[77] Տե՛ս նույն տեղում, էջ 216:

Հասկանալի է, որ բոլշևիկյան հեղաշրջումը կանխեց այս և նման այլ ծրագրերի իրականացումը, որոնք ժամանակավոր կառավարության ապրիլյան ճգնաժամից հետո մերթընդմերթ բարձրացվում էին և փորձում էին մեղմել խորացող անիշխանությունը:

Հոկտեմբերի 20-ի նախագիծը լիարժեք հասկանալու նպատակով հարկ ենք համարում կարճ անդրադարձ կատարել դեպի 1917 ապրիլ-օգոստոս ամիսներն ընդգրկող ժամանակահատվածը, երբ Պետական խորհրդի քարտուղարի օգնական հայազգի Լ. Եվանգուլովը ապրիլին կառավարությանն է ներկայացնում Օզակոմի ստեղծմանն ու գործունեությանը նվիրված հաշվետվությունը: Վերջինս Ա. Կերենսկիի կողմից հաստատվում է միայն հուլիսի 12-ին՝ Պետրոգրադում բոլշևիկյան ցույցից հետո*: Այն նպատակ ուներ կրճատել Օզակոմին տրամադրված արտոնությունները և անցնել տեղական իշխանության ապակենտրոնացված համակարգի ձևավորմանը: Ըստ այդ նախագծի, Օզակոմի նախագահն այսուհետև կոչվելու էր «Կովկասում ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիսար», որին տրվում էին նախկին փոխարքաների իրավունքները, իսկ Օզակոմի անդամները դառնալու էին Գերագույն կոմիսարին կից վարչական խորհրդի անդամներ: Ստեղծվելու էր նաև մի լրացուցիչ պաշտոն՝ «Պետրոգրադում Կովկասի գործերի կոմիսար», որը պետք է կարգավորեր «Կովկասում ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիտեի» և ժամանակավոր կառավարության հարաբերությունները[79]: Իրոք, 1917 թ. սեպտեմբերի 3-ին ժամանակավոր կառավարության մինիստր-նախագահ Ա. Կերենսկին և Պետրոգրադում Կովկասի գործերի նորանշանակ կոմիսար Վ. Նաբոկովը մի գրություն հղեցին Օզակոմի իրավասության մասին, որի նպատակը Կովկասի ենթարկում էր Կենտրոնին, այս անգամ մշակված վարչական համակարգի միջոցով[80]: Միանգամայն պարզ է, որ ժամանակավոր կառավարությունը նպատակ ուներ նախ՝ իշխանության ճգնաժամն ու ակտիվացող բոլշևիզմը հաղթահարելու համար քաղաքականապես համեմատաբար ակտիվ Կովկասն իրեն անմիջականորեն ենթարկեցնելը, ապա և անջատողական տրամադրությունների կանխումը, որոնք ի դեմս վրացական

[78] Տե՛ս նույն տեղում, էջ 173:
*Տե՛ս հանգամանորեն՝ Վ. Հ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997, էջ 127-129:
[79] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 88, թ. 23:
[80] Տե՛ս Վ.Հ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 129:

մենշևիզմի հանդես էին եկել Փետրվարյան հեղափոխության առաջին ամիսներին: Ավելացնենք նաև, որ նույն ռազմավարական նպատակն էր հետապնդում նաև գրավված Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության ստեղծումն ու դրա ուղղակի ենթարկումը Պետրոգրադին:

1917 թ. հոկտեմբերի 20-ին, երկրամասային կենտրոնը մերժում էր ժամանակավոր կառավարության Գերագույն կոմիսարի նշանակումը Կովկասում, անուղղակի կերպով հիմնավորելով Անդրկովկասի քաղաքական ուժերի գործնական անջատողական տրամադրությունները: Հստակ երևում է, որ Թիֆլիսի կենտրոնը նաև ջանք չէր խնայում, որպեսզի Օզակոմը ուժեղացվի հատկապես սոցիալիստական կուսակցություններով, իսկ ազգային ներկայացուցչությունը՝ առավել արմատական ազգային-դեմոկրատական կուսակցություններով, տվյալ դեպքում ի դեմս Հայ հեղափոխական դաշնակցության և վրաց սոցիալիստ-ֆեդերալիստների: Ստացվում է հետևյալը, որ երկրամասային կենտրոնը, Օզակոմը լրացնելով սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչներով, այդ քայլով արդեն իսկ մեկուսացնելով կադետներին՝ ի դեմս նախագահ Վ. Խառլամովի և Մ. Պապաջանյանի, մինչև բոլշևիկյան հեղա-շրջումը, փորձում էր երկրամասը հեռացնել Ռուսաստանից՝ առերես դա հիմնավորելով երկրում խորացող քաղաքական ճգնաժամով և բոլշևիզմի վտանգով: Լավագույն ապացույցներից մեկն էլ այն է, որ նորացված կոմիտեի նախագահի պաշտոնում Թիֆլիսն ակնկալում էր տեսնել կամ մենշևիկ կամ սոցիալիստ-հեղափոխական: Առաջանում էր նաև յուրօրինակ հակասություն, երբ մի կողմից երկրամասային կենտրոնն ընդունում էր, որ Օզակոմի նոր սոցիալիստ նախագահը նշանակվելու էր Ժամանակավոր կառավարության կողմից, մյուս կողմից էլ՝ պնդում էր վերջինիս սոցիալիստական լինելու հարցում: Առաջին հայացքից ամեն ինչ նորմալ է թվում, մանավանդ սոցիալիստ Ա. Կերենսկիի պարագայում: Սակայն պատերազմող ռուսաստանյան պետության նախանշած նպատակը հաջողությամբ ավարտելու համար պահանջվում էր միահամուռ, պետականամետ քաղաքականություն, ինչը, կադետներին մեկուսացնելով, ճեղքեր էր տալիս, իսկ Անդրկովկասի հարցում, հասկանալի է, որ հանգեցնելու էր կենտրոնից անջատման: Որքան էլ որ Անդրկովկասի սոցիալիստական-հեղափոխական և ազգային-դեմոկրատական կուսակցությունները ծրագրային փաստաթղթերով ու ելույթներով կոչ անեին միացյալ դաշնային Ռուսաստանի օգտին, միևնույն է՝ քաղաքական կյանքի զարգացումը գործնականորեն տանում էր հակառակ՝ տարանջատման ճանապարհով: Մինչև բոլշևիկյան հեղաշրջումը դրա արտահայտություններից մեկն էլ՝ երկրամասային խորհրդի հոկտեմբերի 20-ի նախագիծն էր՝ Կովկասում իշխանության կազմակերպման մասին:

Այդուհանդերձ, Թիֆլիսում իշխանության հիմնահարցի ելակետային, անցումային դրսևորումն այն եղավ, որ հոկտեմբերի 28-ին (նոյեմբերի 10) ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրամասային և Թիֆլիսի կոմիտեների նախաձեռնությամբ ստեղծվեց զինվորների պատգամավորների առաջին բոլշևիկյան կենտրոնական երկրամասային խորհուրդը՝ «Պատգամավորական ժողովը»: Վերջինիս պաշտպանում էին Թիֆլիսի կայազորի 36 զորամասերի շուրջ 29 հազար զինվորներ[81]: Ըստ էության՝ գործող երկրամասային խորհրդին զուգահեռ, դա բոլշևիկյան զորամասերը ներկայացնող խորհուրդ էր: Պատգամավորական ժողովն իր առջև երկու խնդիր էր դնում, նախ՝ համոզված լինելով, որ Թիֆլիսի բ. և զ. խորհուրդը, նրա զինվորական սեկցիան իրենց էսեռա-մենշևիկյան մեծամասնությամբ չեն արտահայտի հեղափոխական կայազորի կամքը, պատգամավորական ժողովը հետապնդում էր խորհրդի զինվորական սեկցիայի, ինչպես նաև զորամասերի բոլոր կոմիտեների վերընտրության նպատակը:

Պատգամավորական ժողովի երկրորդ խնդիրն անզեն զորամասերի զինումն էր: Ինչ վերաբերում էր առաջին խնդրի գործադրմանը, ապա պատգամավորական ժողովն իր որոշման մեջ բոլոր զորամասերին ցուցում էր տալիս Թիֆլիսի խորհրդից անհապաղ ետ կանչել իրենց ներկայացուցիչներին և խորհրդի զինվորական սեկցիայի նոր ընտրություններն անցկացնել, առանց սպասելու խորհրդի վերընտրությանը վերևից[82]:

Թիֆլիսի խորհրդի մեծամասնության՝ սոցիալիստական կուսակցությունների խմբավորման համար պարզ էր, որ բանակային բոլշևիկների կողմից ղեկավարվող ժողովը Կովկասի կենտրոնում իշխանությունը զավթելու գիծ էր վարում: Հանդուրժել վերջինիս գոյությունը նշանակում էր իշխանությունը կամովին հանձնել բոլշևիկներին, ինչը սպասվում էր Բաքվում: Երբ պատգամավորական ժողովի ներկայացուցիչը ցանկացավ Թիֆլիսի խորհրդի քննարկմանը ներկայացնել վերոհիշյալ որոշումը, խորհրդի նախագահությունը մերժեց այն, պատգամավորական ժողովը չճանաչելով որպես իրավասու մարմին[83]: Ստացվում էր, որ 1917 թվականի հոկտեմբերի վերջերին, նոյեմբերի սկզբներին պատգամավորական ժողովը Թիֆլիսում փաստորեն դարձել էր իշխանական պայքարի հանգուցակետ: Նոյեմբերի 2-ին (15), Թիֆլիսի խորհրդի բանվորական սեկցիայի ընդլայնված նիստում Պետրոգրադի դեպքերի մասին զեկուցմամբ հանդես եկած մենշևիկ Ն. Ժորդանիան, նկատի ունենալով կայազորի ելույթները և, մասնավորապես, պատգամավորական ժողովի գործունեությունը, փաստեց, որ պետրոգրադյան իրադարձությունները հուզումներ առաջացրին Թիֆլիսի կայազորի մի մասի մոտ: Նա ընդգծում էր, որ ելույթի կողմնակիցներ են բանակային բոլշևիկներից ոմանք

---

[81] Տե՛ս Кавказский Рабочий, Тифлис, 1917, 1 ноября, N 188.
[82] Տե՛ս Հ.Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 305:
[83] Տե՛ս С. Е. Сеф, նշվ. աշխ., էջ 322:

և որ տեղական «քաղաքացիական» բոլշևիկները դեմ են, ուստի և նման ելույթը կստանա զինվորական խռովության բնույթ[84]: Այստեղ է դրսևորվում Բաքվի բոլշևիկների առավել գործնական վարքագիծը, երբ Ստ. Շահումյանը և մյուսները նկատելով խորհուրդների հարցում Կովկասի առանձնահատկությունը՝ այնտեղ սոցիալիստական-ազգային կուսակցությունների գերակշռությունը, սկզբից ևեթ նախընտրեցին իշխանության համար պայքար մղել այդ խորհուրդներից դուրս՝ Պետրոգրադի նման իշխանությունը զավթելու և նոր խորհուրդ ձևավորելու ճանապարհով:

Պատգամավորական ժողովի շուրջ ծավալված պայքարն իր կիզակետին հասավ նոյեմբերի 4-ին (17), երբ տեղի ունեցավ Թիֆլիսի խորհրդի գործադիր կոմիտեի արտակարգ նիստը կայազորի զորամասերի՝ բոլշևիկներին հարող «կազմակրպչական կոմիտեների» ներկայացուցիչների մասնակցությամբ (շուրջ 200 մարդ): Մինչև նոյեմբերի 4-ի, իր վերջին նիստը, պատգամավորական ժողովը ներկայացնում էր արդեն ավելի քան 70 զորամասեր: Բոլշևիկները հասան նրան, որ հսկողություն սահմանվեց Թիֆլիսի Արսենալի (զինապահեստ) և հրետանային պահեստի նկատմամբ: Ստեղծվեց կապ Կովկասյան բանակի բոլշևիկամետ տրամադրված զորամասերի հետ, մասնավորապես Բաքվի, Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Սարիղամիշի, Ելիզավետպոլի (Գանձակի), Քութաիսիի և այլ քաղաքների կայազորների զինվորները կողմնորոշվեցին հօգուտ բոլշևիկյան իշխանության: Պատգամավորական ժողովը պահանջում էր վերընտրել Թիֆլիսի բ. և զ. պատգամավորների խորհուրդը, շտապ հրավիրել բանակային երկրորդ համագումարը: Թիֆլիսի զինվորական պատգամավորների խորհրդի նախագահ էսեռ Ս. Վերեշչակը և էսեռները բոլշևիկյան պատգամավորական ժողովի ստեղծումը համարում էին նոր երկիշխանության հաստատում և պահանջում էին անմիջապես վերացնել այն[85]: Մենշևիկ Պետրոսյանը, էսեռ Ի. Կարցիվաձեն պատգամավորական ժողովի գոյությունն անկարելի էին համարում այն պատճառով, որ խորհրդի կազմի վերընտրություններն առանց նախնական հայտարարությունների, սկսվել էին: Ի. Կարցիվաձեն կռահելով պատգամավորական ժողովի նպատակները, գտնում էր, որ ընտրություններից հետո անգամ չի ենթադրվում այն ցրել և որ «բոլշևիկները ցանկացել են ստեղծել նոր մարմին, որն իր վրա կվերցնի խորհրդի ֆունկցիաները»[86]:

Իրոք, պատգամավորական ժողովի անունից հանդես եկող բոլշևիկները համոզված էին, որ կայազորը բավականաչափ ուժեղ է, որպեսզի դիրքերը զիջի էսեռա-մենշևիկյան խմբավորմանը[87]: Որպես բախման տրամաբանական արդյունք, բոլշևիկները լքում են նիստը և վերջնականապես խզում կապերը էսեռա-մենշևիկյան խմբավորման հետ: Բոլշևիկների հեռանալուց հետո ընդունվում է բանաձև, որը պահանջում էր ցրել պատգամավորական ժողովը, վերականգնել գործադիր կոմիտեի իրավունքները զինապահեստի նկատմամբ: Նոյեմբերի 5-ին (18), բոլշևիկների նախատեսած հանրահավաքի առթիվ մենշևիկ Արշ. Զուրաբյանի առաջարկով բանաձև է ընդունվում, որով արգելվում է հանրահավաքը, իսկ Թիֆլիսի խորհրդի զինվորական սեկցիան ընդունում է քաղաքի կայազորին ուղղված կոչ: Դրանում զինվորներից պահանջվում էր չենթարկվել պատգամավորական ժողովին, համախմբվել էսեռա-մենշևիկյան գործադիր կոմիտեի շուրջը[88]: Միաժամանակ, գործադիր կոմիտեն չխնայեց ոչ մի ջանք, որպեսզի Թիֆլիսից հեռացվեն բոլշևիկյան զորամասերը:

Եվ, վերջապես, նոյեմբերի 10-ին (23) Թիֆլիսի խորհուրդը մեկ անգամ ևս քննարկեց պատգամավորական ժողովի հարցը[89]: Չնայած նոյեմբերի 4-ի (17) ժողովը ցրելու մասին որոշմանը, էսեռներն ու մենշևիկները խուսափում էին իրագործել այն և փորձում էին ուժեղացնել Թիֆլիսի «քաղաքացիական» և «զինվորական» բոլշևիկների միջև եղած ճեղքվածքը, այսինքն՝ որդեգրելով Ն. Ժորդանիայի մարտավարությունը, փորձում էին վարկաբեկել, հեղինակազրկել բոլշևիկներին, և խաղաղ ճանապարհով թույլ չտալ, նրանց կողմից՝ գոնե Թիֆլիսում իշխանության զավթումը: Ուշագրավ է, որ նույն նիստում նմանատիպ մարտավարություն որդեգրեցին նաև պատգամավորական ժողովի բոլշևիկ ղեկավարները, այսինքն՝ մնացին խորհրդի գործադիր կոմիտեի կազմում: Փաստերի համադրումը վկայում է, որ կովկասյան ռազմական օկրուգի զինվորների մեծամասնությունը նոյեմբերին պատրաստ էր պաշտպանելու Անդրկովկասում իշխանությունը գրավելու վերաբերյալ բոլշևիկյան կոչը: Այսպես օրինակ, ՀՀԴ Երևանի «Զանգ» թերթը, որի խմբագրական կազմում էին Ս. Վրացյանը, Ս. Թորոսյանը, Ար. Ղազարյանը տեղեկացնում էր, որ նոյեմբերի 14-ին (27) տեղի բոլշևիկները 5-րդ և 6-րդ գնդերում ինչպես նաև Անգլիական այգում պրոպագանդա են մղում, որպեսզի այդ զորամասերը շարժվեն Թիֆլիս և նպաստեն երկրամասի կենտրոնում իշխանությունը բոլշևիկներին հանձնելու գործին[90]: Դրան հակառակ Բաքվի ՀՀԴ օրգան «Արև»-ը դեմոկրատիայի համընդհանուր համերաշխության ալիքի վրա, փաստում էր, որ «քաղաքի մէջ կտիրէ կատարեալ հանգստութիւն: Քաղաքային Դումայի մէջ հայ և թուրք դեմոկրատիայի ներկայացուցիչների միահամուռ գործունեությունը հանձինս

---

[84] Տե՛ս Н. Н. Жордания, За два года, с. 49-50:
[85] Տե՛ս С. Е. Сеф, նշվ. աշխ., էջ 325:
[86] Տե՛ս նույն տեղում, էջ 327:
[87] Տե՛ս նույն տեղում, էջ 328:

[88] Տե՛ս նույն տեղում, էջ 331:
[89] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 322:
[90] Տե՛ս Զանգ, Երևան, 1917, 16 նոյեմբերի, թիվ 3:

դաշնակցութեան և թուրք սոցիալիստական, դեմոկրատական տարրերու հարաբերութիւնների, որոնք վերջերս աւելի սրտագին դարձած են, քանի որ այլևս հասկանալի դարձած է, թէ միմիայն հարևան ազգերի համերաշխութեամբ կարելի է ապահովել խաղաղ կենաքը Երևանի և առհասարակ Կովկասի մէջ»[91]: Սակայն ՌՍԴԲ(բ)Կ երկրային կոմիտեի էսեռա-մենշևիկյան մեծամասնության և անգամ մի շարք ղեկավար բոլշևիկների մարտավարությունը, որն արտահայտվում էր ոչ բոլշևիկ՝ սոցիալիստական ուժերի նկատմամբ խաղաղ ճնշում գործադրելու մեջ, կանխեց զինվորական զանգվածների վճռական գործողությունները, ձախողեց բոլշևիկների կողմից իշխանությունը Թիֆլիսում և Անդրկովկասում գրավելու առաջին փորձը:

Կարելի է եզրակացնել, որ բոլշևիկների մի մասը Թիֆլիսում չհամարձակվեց և չիրականացրեց այն, ինչին միանգամից գնացին Բաքվի բոլշևիկները: Ստացվում է նաև, որ Թիֆլիսում հակաբոլշևիկյան ուժերը, ի դեմս վրացական մենշևիկների, ավելի «դեմոկրատ» և զորեղ գտնվեցին, քան էսեռները Բաքվում:

Այս հանգամանքն անկասկած ուժեղացրեց մենշևիկների դիրքերը Կովկասի քաղաքական կենտրոնում: Նրանք ավելի համարձակ և արմատական գործողությունների հնարավորություն ձեռք բերեցին իրենց հակառակորդ գլխավոր ուժի՝ բոլշևիզմի դեմ:

Քաղաքական այս նախնական տեղաշարժերը բեկումնային նշանակություն ունեցան նաև հայկական քաղաքական ուժերի, մասնավորապես, Դաշնակցության աստիճանական թուլացման ու մեկուսացման համատեքստում:

Քաղաքական անկայուն, սպասողական վիճակը և, հատկապես, Թիֆլիսում բոլշևիկների կողմից իշխանության գրավման անհաջող փորձը, ստեղծեց նախադրյալներ և լայն հնարավորություններ, որպեսզի վրացական մենշևիզմը ստանձնի Անդրկովկասի քաղաքական ղեկավարությունը և բոլշևիզմի դեմ ձևավորի իշխանության նոր մարմին, մանավանդ, որ Անդրկովկասյան հատուկ կոմիտե՝ Օզակոմը լիովին վարկաբեկվել ու սպառել էր իրեն: Նոյեմբերի 7-ին (20) Թիֆլիսի խորհրդի բ. և զ. պատգամավորների, արհմիությունների վարչությունների և բանվորական կոմիտեների սեկցիայի համատեղ նիստում Ն. Ժորդանիան առաջարկում էր լրջորեն մտածել Անդրկովկասում իշխանության կազմակերպման մասին և շեշտում էր պատրաստվող իրադարձություններին հասարակությանը նախապատրաստելու հանգամանքը[92]:

«Молот»-ը նոյեմբերի 10-ին (23) քննադատելով ժամանակավոր կառավարությանը, ընդգծում էր իշխանության սուր անհրաժեշտության

[91] Արև, Բաքու, 1917, 1 դեկտեմբերի, թիվ 246:
[92] Տե՛ս Протоколы Закавказских революционных советских организаций, էջ 206:

խնդիրը, ինչը ՀՅԴ տեսնում էր ոչ թե կոալիցիոն կամ միատարր կառավարությունների, այլ հեղափոխական դեմոկրատիայի մեծամասնության համար նպատակահարմար իշխանության տեսքով[93]: Կոմիսարիատի ձևավորումից ընդամենը հինգ օր առաջ, Դաշնակցությունը դեռևս հույս ուներ, որ բազմազգ Ռուսաստանում նոր իշխանությունը կարտահայտվի Ազգային խորհուրդների տեսքով, կամ այլ կերպ իշխանության ազգայնացմամբ, որոնց թերթն անգամ «հանրապետություն» էր անվանում և նրանց անմշակ սահմանադրություններում նշմարում նոր քաղաքական օրգանիզմների բոլոր բաղադրիչները: Դրանց նպատակահարմարությունն ավելի էր ընդգծվում Ռուսաստանի հսկայական տարածքի համատեքստում, երբ անհրաժեշտ էր դառնում հեղափոխության շահերի պաշտպանությունը: Քանի դեռ երկրի կենտրոնում այս կամ այն իշխանության հաստատումը իր բնույթով և կազմով անցանկալի և անընդունելի էր տեղերում, ընդհուպ մինչև չենթարկվելու աստիճան, ռատի և կառավարության կամ ղեկավարման այլ ձևերի կազմակերպումը կարող էր լիովին համապատասխանել տվյալ ազգային շրջանի դեմոկրատիայի շահերին, և հակառակը՝ հակադրվել կենտրոնի տրամադրություններին[94]:

Պարզ է, որ Դաշնակցության լրագրողի գլխավոր հարվածը տվյալ դեպքում ուղղվում էր բոլշևիզմի և ժողկոմխորհի դեմ: Առաջին հայացքից ապագա միասնական Ռուսաստանի ազգային-վարչական կառուցվածքի առաջարկների ենթատեքստում, հրամցվում էր բոլշևիկյան կառավարության իշխանությունը չընդունող Անդրկովկասի նոր իշխանության ստեղծման հրամայականը, որի առանցքը, ՀՅԴ, չգիտես ինչ երաշխիքների վրա հենվելով, համարում էր ազգային խորհուրդները: «Կոռնիլովշչինայի և բոլշևիզմի արանքում,- գրում է թերթը,- լավագույն տարբերակը առանձին, անջատ, ավտորիտար իշխանությամբ օժտված միավորների մեջ է»[95]: Միաժամանակ, մտավախություն էր հայտնվում, որ «սնկի նման աճող այդ հանրապետությունները» չեն դիմանա միջազգային լարված իրավիճակին և մրցակցությանը, քանի որ չունեն անկախության պահպանման, կայունության և հարատևության համար անհրաժեշտ պայմաններ: Նկատի էր առնվում, որ դրանք ժամանակավոր, ավելին՝ օրվա պահանջ են և «անպայման կվերանան իրավական հասարակարգի ու պետական կարգի ձևերի ի հայտ գալուն պես»: Հոդվածի հեղինակը խորհուրդ էր տալիս նաև, որ միայն պետականամետ մտածողությունը և պետական քաղաքականությունը կարող են կանխորոշել թաքնված ապագան»[96]:

[93] Տե՛ս Молот, 1917, 10 ноября, N 32.
[94] Տե՛ս նույն տեղում:
[95] Տե՛ս նույն տեղում:
[96] Տե՛ս նույն տեղում:

Ոչ միայն այս, այլև Անդրկովկասի մամուլի մյուս օրգաններում նոյեմբերի սկզբից սկսված հասարակական կարծիքի նախապատրաստման փուլն ավարտելով, Անդրկովկասի ազգային, սոցիալիստական կուսակցությունների ազդեցիկ խմբավորումը ձեռնամուխ է լինում Օզակոմի փոխարեն երկրամասի կառավարման նոր մարմնի ստեղծմանը: Դրա հիմքում վրացական մենշևիկների թելադրանքով և Դաշնակցության աջակցությամբ դրվում է ազգային ուժերի համեմատական ներկայացուցչական սկզբունքը, որն ակնառու կերպով դրսևորվել էր 1917 թ. հոկտեմբերին Անդրկովկասում անցկացված քաղաքային դումաների ընտրությունների ժամանակ: Վրացաբնակ գավառներում ընտրվածների մեծամասնությունը կազմում էին մենշևիկները, հայաբնակ գավառներում՝ դաշնակցականները, թաթարաբնակ գավառներում՝ մուսավաթականները[97]:

Նոյեմբերի 15-ին Թիֆլիսում Հայոց ազգային խորհուրդ են այցելում Ն. Ժորդանիան և Գ. Վեշապելին*, հայկական կենտրոնական ազգային մարմնի մոտակա մարտավարությունը պարզելու և համատեղ գործելու մտադրությամբ: «Գիտենք, որ համարյա անկախ իշխանություն ենք սկսել,- հայտնում էր Ն. Ժորդանիան,- մինչև այժմ չէինք գալիս, որովհետև վստահ չէինք, թե կան խնդիրներ, որ կարող ենք միասին լուծել: Հայերն ու վրացիներն անցյալում ոչ միայն չեն կռվել, այլև օգնել են միմյանց: Ռուսաստանի տիրապետությունից ի վեր ավելի ծանր վիճակ չի ստեղծվել մեզ համար, քան այժմ, ուստի պետք է նեցուկ որոնենք իրար մեջ: Մենք կուզենայինք իմանալ, թե դուք ինչ մտածումներ ունեք Կովկասի հեռանկարի մասին»[98]:

Հայոց ազգային խորհրդի անդամները, հայ և վրաց ժողովուրդների քաղաքական ուղին համարելով միասնական, համագործակցության երկու հիմնական հանգամանք էին ընդգծում «ընդհանուր թշնամու», այսինքն՝ Թուրքիային և «հյուսիսից եկող անարխիան», այսինքն՝ բոլշևիզմը: Բոլշևիզմի հարցում տարակարծություններ չկային, բայց դաշնակցի և ռազմաճակատի պաշտպանության հարցում սկզբից ևեթ անհամաձայնություն է դրսևորվում: Որպես հնարավոր դաշնակցի՝ Գերմանիայի ընտրության հարցում նույնիսկ հայ գործիչների տեսակետները իրարամերժ

[97] Տե՛ս C. E. Сеф, նշվ. աշխ., էջ 283-285:

*Պատմաբան Ա-ԴՈ-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) նրանց ներկայացնում է որպես Վրացական ազգային խորհրդի նախագահ և անդամ, մինչդեռ հայտնի է, որ վրացական ազգային մարմինը ստեղծվել է 1917 թ. դեկտեմբերին՝ Վրացական ազգային համագումարում:

[98] Ա-ԴՈ, Հայության երկունքը, ՀՀ Պատմության թանգարան, նոր պատմության բաժին, 839/195դ, էջ 118-126:

էին. մի մասը, և ոչ առանց վրացիների հուշումի, հանձին Գերմանիայի, տեսնում էր Թուրքիայից պաշտպանվելու երաշխիք, իսկ մյուսներն անընդունելի էին համարում Գերմանիայի հետ բանակցելը՝ մատնանշելով, որ «հայ ժողովրդի ջնջումը նրա ծրագրով է եղած»[99]:

1917 թ. նոյեմբերի 11-ին (24) Թիֆլիսի ժողովրդական տանը կայացավ խորհրդակցություն, որը քննարկեց Անդրկովկասում նոր իշխանության կազմակերպման հարցը: Մասնակցում էին բ. և գ. պատգամավորների խորհուրդների երկրամասային կենտրոնների, Կովկասյան բանակի երկրամասային խորհրդի, բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդի Թիֆլիսի գործադիր կոմիտեի, ի դեմս վարչության՝ քաղաքային դումայի, Հասարակական անվտանգության կովկասյան կոմիտեի, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի, քաղաքական կուսակցությունների (սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ-հեղափոխականներ, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստներ, աշխատավորական սոցիալիստներ, ս.-դ. հայկական բանվորական կազմակերպության (սպեցիֆիկներ), բունդ), մահմեդական կազմակերպությունների, փոստ հեռագրական ծառայողների կենտրոնական կոմիտեի, Անդրկովկասի երկաթուղու ծառայողների կենտրոնական կոմիտեի, երկրամասի պարենային վարչության և Թիֆլիսի արհմիութենական կազմակերպությունների խորհրդի ներկայացուցիչները: Ներկա էին նաև Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Մ. Պրժևալսկին, բանակի շտաբի պետ գեներալ Ե. Լեբեդինսկին, ռազմաճակատի շտաբի կվարտիրմեյստեր գեներալ Վ. Լևանդովսկին, բանակի շտաբին կից անգլիական, ֆրանսիական ռազմական գործակալներ, ԱՄՆ-ի հյուպատոս Ֆ. Սմիթը և ուրիշներ: Ընդհանուր առմամբ խորհրդակցությանը ներկա էր 400 մարդ[100]:

Բացման խոսքով և խորհրդակցության խնդիրների լուսաբանմամբ հանդես եկավ պետական Դումայի նախկին անդամ, երկրամասային կենտրոնի նախագահ մենշևիկ Ե. Գեգեչկորին: Ընդգծելով խորհրդակցության ելակետային՝ բոլշևիկյան հեղաշրջման դրույթը, նա նշեց, որ բոլշևիկների ելույթի արդյունքում երկու շաբաթից ավելի է, որ Անդրկովկասը կտրվել է կենտրոնից և այդ կտրվածությունը հարկադրում է կանխորոշել մոտակա գործունեության ուղին[101]: Ավելի որոշակի էին Ն. Ժորդանիայի հարցադրումները. «100 տարի է, ինչ Անդրկովկասն աշխատում է Ռուսաստանի հետ ձեռք-ձեռքի տված. համարելով իրեն անխախտ կապված նրա հետ: Այժմ դժբախտություն պատահեց՝ Ռուսաստանի հետ

[99] Տե՛ս նույն տեղում:

[100] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии,Тифлис, 1919, с. 3-4:

[101] Տե՛ս նույն տեղում, էջ 4:

կապը կտրվեց և Անդրկովկասը մնաց մենակ: Մենք պետք է մեր սեփական ոտքերի վրա կանգնենք և ինքնուրույն մեզ օգնենք, կամ կործանվենք անարխիայի մեջ»[102]:

Նիստում պարզվեցին երկու, որոշակի քաղաքական հոսանքներ: Մենշևիկներն ու էսեռները պաշտպանում էին, իսկ բոլշևիկները դեմ էին իշխանություն ստեղծելու նախագծին:

Խորհրդակցությունում Անդրկովկասի ժամանակավոր իշխանության ստեղծման մասին զեկուցմամբ հանդես եկավ բանակային երկրամասային խորհրդի նախագահ, Կովկասյան ռազմաճակատի կոմիսար, աջ էսեռ Դ. Դոնսկոյը: Նա գտնում էր, որ Անդրկովկասի դեմոկրատիան իր կազմակերպությունների և քաղաքական դաստիրակության սկզբունքներից ելնելով չի կարող կանգնել այն ուղու վրա, որով առայժմ շարժվում է Պետրոգրադի պրոլետարիատի մեծ մասը: Բոլշևիկների հետ պայմանավորվածության կամ էլ Անդրկովկասի դեմոկրատիայի կազմի արմատական փոփոխության ձեռք չբերելը, նրա կարծիքով, կրում է քաղաքացիական պատերազմի վտանգը, որը երկրամասում կվերածվեր ազգամիջյան հրդեհի, հնարավոր է իր մեջ ներառներ ռազմաճակատը և հանգեցներ ոչ միայն Անդրկովկասի այլև երկրի կործանմանը: Ռազմական գործիչն, արտահայտելով ընդհանուր տրամադրությունը, անհանգստանում էր անորոշ իրավիճակից և, մասնավորապես, նրանից, թե դեռ որքան դա կշարունակվի և երբ կձևավորվի իսկական ժողովրդական իշխանություն:

Անդրկովկասում հանրության կողմից ճանաչում ունեցող իշխանության բացակայությունն էլ ավելի էր սրում անորոշությունը: Գործող իշխանությունը միայն ներցիայով էր աշխատում և այլևս չէր ստանում երկրամասի դեմոկրատիայի աջակցությունը: Վաղուց արդեն Օզակոմը գիտակցում էր իր վիճակը, փաստորեն հրաժարական էր տվել, սակայն անհրաժեշտության բերումով շարունակում էր իրականացնել ընթացիկ, զուտ գրասենյակային աշխատանք: Դ. Դոնսկոյը գտնում էր նաև, որ տեղական հեղափոխական կազմակերպությունները, խորհուրդները, որոնք չեն հենվում ողջ դեմոկրատիայի վստահության վրա, կարող են հայտնվել Օզակոմի վիճակում, այսինքն՝ ինքնալուծարվել[103]:

Եթե ֆինանսական հարցերում Անդրկովկասը լիովին կախված էր Պետրոգրադից, ուստի և լիակատար կործանման էր ենթարկվու, ապա պարենավորման խնդրում էլ, որտեղ երկրամասը կախում ուներ իր հերթին Հյուսիսային Կովկասից, Դ. Դոնսկոյը հուսադրող և հիմնավորված

[102] Н. Н. Жордания, За два года, с. 51.
[103] Տե՛ս Документы и материалы..., էջ 4-5:

եզրահանգումներ էր անում: Քանի որ Հյուսիսային Կովկասը և այնտեղ ձևավորված Դոնի, Կուբանի պետականամետ, հակաբոլշևիկյան ռազմաքաղաքական միավորումները մեծապես շահագրգռված էին Կովկասյան ռազմաճակատի կայունության և մարտունակության հարցում՝ այդպես նպաստելով միմյանց միջև խաղաղ համակեցությանը, ուստի և այդ փոխադարձ և փոխշահավետ կախվածությունը կարող էր դառնալ այն կապող օղակը, որը հեղինակավոր իշխանության առկայության պայմաններում կաջակցեր արդեն իսկ տեղական իշխանություն ձևավորած հարևանների հետ սերտ կապերի հաստատմանը[104]:

Այնուհետև զեկուցողը կանգ է առնում իշխանության կազմակերպման միջոցներին: Դ. Դոնսկոյն առաջարկում էր դրա համար օգտվել Սահմանադիր ժողովի ընթացող ընտրություններից: Ըստ նրա, Անդրկովկասից և Կովկասյան բանակից ընտրված 15 պատգամավորները կձևավորեն կենտրոնական իշխանություն, որի կազմը կարող է ավելանալ Սահմանադիր ժողովում ներկայացվող կուսակցական ցուցակներով՝ համամասնական լրացման սկզբունքով: Այդ ճանապարհով ստեղծված կազմակերպությունն իր միջից կընտրեր մարմին և կձևավորեր իշխանություն, որը կվայելեր երկրամասի բնակչության վստահությունը[105]:

Զեկուցման ավարտին Դ. Դոնսկոյը մեկ անգամ ևս ընդգծում էր, որ կազմակերպվող իշխանությունը պետք է կրի ժամանակավոր բնույթ և որ տվյալ պարագայում բացակայում են անջատողական ձգտումները[106]: Այս հարցում, իհարկե, դրսևորվում են «միասնական, անբաժան Ռուսաստան» կարգախոսը կրող պետականամետ ռուս գործչի մոտեցումները, որոնք, ինչպես դեպքերի հետագա զարգացումները կվկայեն, ամենևին չէին համապատասխանում Անդրկովկասի ազգային ուժերի, մասնավորապես վրացական կուսակցությունների ռազմավարությանը:

«Անպայման պետք է իշխանություն ստեղծվի»,– հայտարարում էր Ն. Ժորդանիան[107]: Ընդգծելով կենտրոնական իշխանության և Անդրկովկասի ֆինանսա-տնտեսական կործանումը, նա միանգամից և հմտորեն շոշափում էր նաև երկրամասի ու Կովկասյան ռազմաճակատի համար ամենասուր հիմնահարցը, այն է՝ բանակի ներկայությունը Անդրկովկասում: Հարցադրումը հիմնավորելով նրանով, որ բանակը կերակրելու համար ոչինչ չկա, վրացական մենշևիկների առաջնորդը եզրակացնում

[104] Տե՛ս նույն տեղում, էջ 5:
[105] Տե՛ս նույն տեղում, էջ 5-6:
[106] Տե՛ս նույն տեղում:
[107] Н.Н. Жордания, За два года, с. 52.

էր, որ բանակային զորամասերի ներկայությունը ավելի է բարդացնում իրավիճակը Անդրկովկասում:

Ն. Ժորդանիայի կարծիքով, քանի որ կենտրոնական իշխանության կազմակերպումը ձգձվում է, ուրեմն ստիպված տեղերում պետք է ձևավորել երկրամասային իշխանություն, որն էլ կհասցնի կամ Սահմանադիր ժողովին կամ էլ հեղինակավոր կենտրոնական իշխանության ստեղծմանը: Միակ ելքը, ըստ նրա, Սահմանադիր ժողովի պատգամավորների օգտագործումն է[108]: «Ցավոք Արևելյան Անդրկովկասում ընտրությունները հետաձգվել են և նոր մարմին ձևավորել կհաջողվի դեկտեմբերի 15–ից ոչ շուտ,– նշում էր Ն. Ժորդանիան,– մինչ այդ պետք է ձևավորվի իշխանության պես (cypporat) մի բան, մի մարմնի տեսքով, որը կազմված կլինի ազգերի, կազմակերպությունների, տեղական ինքնավարությունների և կուսակցությունների ներկայացուցիչներից: Չի բացառվում, որ նպատակահարմար կլինի ձևավորել ոչ մեծ, ժամանակավոր խորհրդարան»[109]: Այսպիսով, մենշևիկների շրջանային կոմիտեի անունից Ն. Ժորդանիան և Վ. Ջուղելին առաջարկում էին ամուր իշխանության ստեղծման անհրաժեշտությունը[110]:

Ակնհայտ է, որ ի դեմս Ն. Ժորդանիայի վրացական մենշևիզմը որդեգրել էր ժամանակի համար խիստ արմատական մարտավարություն: Այն բոլշևիզմի դեմ պայքարից առավել գերադասում էր Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից: Այս հարցում առկա էր լուրջ հակասություն՝ ինչպես գաղափարական այնպես էլ մարտավարական: Մի կողմից, անդրկովկասյան իշխանության անհապաղ ձևավորումը հիմնավորվում էր Պետրոգրադում կենտրոնական իշխանության բացակայությամբ, այսինքն՝ անտեսվում էր հեղաշրջման իրողությունը, մյուս կողմից՝ զարմանալիորեն բացառվում էր բոլշևիզմի դեմ պայքարն ու առճակատումը: Ստացվում է, որ վրացական մենշևիկների, որպես ազգային դիմագիծ ունեցող կուսակցության, գլխավոր խնդիրն էր, օգտագործել հարմար պահը և վերջնականապես հեռանալ Ռուսաստանից՝ բացահայտ պայքար չմղելով բոլշևիզմի դեմ, ինչը սոցիալ-դեմոկրատական կուսակցության աջ թևի ավանդական ուղղվածությունն ու պարտականությունն էր: Վրացական դեմոկրատիայի առաջնահերթ խնդիր էր ձևավորվում ոչ թե բոլշևիկյան նոր վարչակարգից, այլ առավելապես ռուսական պետությունից կտրվելու հիմնահարցը:

Խորհրդակցությունում նոր իշխանության ստեղծման նկատմամբ իրենց վերաբերմունքն արտահայտեցին նաև սոցիալիստ-հեղափոխականները, Դաշնակցությունը, բոլշևիկները:

[108] Տե՛ս նույն տեղում:
[109] Տե՛ս նույն տեղում, էջ 52:
[110] Տե՛ս Молот, 1917, 14 ноября, N 34.

Էսեռ Վ. Լունկևիչը իր ելույթում նախ հիմնավորեց բոլշևիկների երկրեսանի քաղաքականությունը էսեռների և մենշևիկների հանդեպ, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության շրջանային կոմիտեի անունից հայտարարեց, որ կուսակցությունը լիովին ընդունում է զեկուցող Դ. Դոնսկոյի թեզիսները, ապա առաջարկեց մինչև Սահմանադիր ժողովի ընտրությունները իշխանությունը հանձնել հասարակական անվտանգության կոմիտեին[111]:

Խորհրդակցության պլենար նիստում հանդես եկած Մ. Ցխակայան բոլշևիկների երկրամասային կոմիտեի հանձնարարությամբ հրապարակեց «այդ խառնաժողովը» վճռական և կտրուկ կերպով դատապարտող հռչակագիր: Նրանում պահանջվում էր կենտրոնի օրինակով իշխանությունը երկրամասում հանձնել խորհուրդներին, որոնք պետք է իրագործեին խորհուրդների 2-րդ համագումարում ընդունած հռչակագրերը և լիովին ենթարկվեին Վ. Լենինի գլխավորած խորհրդային կառավարությանը: Նրանք դատապարտում էին Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստանից անջատելու ծրագրերը[112]: Երկրային կոմիտեն հնարավոր չէր համարում բոլշևիկների մասնակցությունը թե՛ ենթարկվող կառավարությանը, թե՛ տվյալ խորհրդակցությանը: Հրապարակելով հռչակագիրը, Մ. Ցխակայան, Ֆ. Մախարաձեն և մյուս բոլշևիկները հեռացան նիստից: Ֆ. Մախարաձեն նշում էր, որ «Անդրկովկասում տեղական իշխանության ստեղծումն ինքնախաբեություն է և երկու աթոռի նստել է նշանակում: Քանի դեռ տեղական իշխանությունը չի հաստատված նոր կառավարության կողմից, այն չի կարող համարվել օրինական և իրավասու»[113]: Բոլշևիկ Ֆ. Մախարաձեի ելույթը փաստում էր իշխանության համար մղվող անզիջում պայքարը թե՛ Ռուսաստանում և թե՛ Անդրկովկասում: Պարզապես կեղծվում էր գլխավորը՝ բոլշևիկյան կառավարությունը օժտված չէր ո՛չ իրավասությամբ, ո՛չ էլ օրինականությամբ:

Հայ հեղափոխական Դաշնակցության անունից հանդես եկավ Հ. Օհանջանյանը: Նա հայտարարում է, որ իշխանության կազմակերպման վերաբերյալ ներկայացված նախագիծը կարող է ընդունվել հետևյալ նախապայմաններով. 1) տեղական իշխանությունը մինչև Սահմանադիր ժողովի ընտրությունները պետք է հենվի կովկասյան դեմոկրատիայի իրական ուժերի վրա, 2) Անդրկովկասի իշխանությունն իրավասու չէ զբաղվել Սահմանադիր ժողովի քննարկմանն առաջարկվող հարցերով, 3) երկրամասի բոլոր ազգությունները նոր կառավարության մեջ պետք է

[111] Տե՛ս նույն տեղում:
[112] Տե՛ս Кавказский Рабочий, 1917, 15 ноября, N 200.
[113] Молот, 1917, 14 ноября.

ունենան իրենց ներկայացուցիչները[114]: «Հորիզոնի» խմբագրականը, հավանություն տալով Հ. Օհանջանյանի տեսակետներին, կուսակցության համար բավարար էր համարում այն հանգամանքը, որ ապագա անդրկովկասյան կառավարությունը լրջորեն հաշվի էր առնելու ազգային գործոնը, միաժամանակ հանդիմանելով, որ երբ, «նույն սկզբունքով, բայց ավելի արդար բաշխումով, կառավարական կազմ են առաջարկում ուրիշները (այսինքն՝ Դաշնակցությունը – Վ.Մ.), այդ համարվում է ազգայնական ու ոչ դեմոկրատիկ»[115]: Նկատի ունենալով, որ Անդրկովկասի չորս խոշոր ազգերից ռուսների, վրացիների ու հայերի ճնշող մեծամասնությունն արտահայտվում էր իրենց սոցիալիստական կազմակերպությունների միջոցով, Դաշնակցությունն առաջարկում էր նոր կառավարության կազմում ընդգրկել մենշևիկների, սոցիալիստ-հեղափոխականների, դաշնակցականների և մահմեդական ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներին[116]:

Խորհրդակցության և նոր ձևավորվող անդրկովկասյան իշխանության նպատակներն ու քաղաքական միտումը բնութագրող նշանակալից գործոն էր նաև պատերազմում դաշնակից պետությունների՝ Անտանտի ներկայացուցիչների մասնակցությունը: Անդրկովկասում նոր, հակախորհրդային կառավարության ստեղծման նախօրեին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի զինվորական, դիվանագիտական առաքելությունները փորձեցին ֆինանսական, քաղաքական ու բարոյական պատվար հանդիսանալ Անդրկովկասի ազգային դեմոկրատական ուժերի համար՝ բոլշևիզմի դեմ մղվող պայքարում: Այլ խնդիր է, թե երկրամասում ազգային հարցի սուր դրսևորումները և մեծ տերությունների շահերի բախումը ինչպես արտահայտվեցին Անդրկովկասի ժողովուրդների ու նրանց ղեկավարող քաղաքական ուժերի ռազմավարության ընտրության, բեկումնային պատմական փուլում կողմնորոշման հիմնահարցերում:

Դեռ նոյեմբերի 10-ին (23), խորհրդակցության նախորդ օրը, ԱՄՆ-ի հյուպատոս Ֆ. Սմիթը պետքարտուղար Լանսինգին տեղեկացնում էր այն մասին, որ Անդրկովկասում ստեղծվում է մի կառավարություն, որը պատրաստ է միավորվելու «Հարավ-արևելյան ֆեդերացիային»՝ Կուբանի, Թերեքի և Դոնի պետական հակախորհրդային կազմավորումներին և հրաժարվում է հաշտություն կնքելուց: Անտանտի երկրներին մտահոգում էր երկու կենսական խնդիր, նախ՝ անմիջապես վերջ տալ խորհրդային կառավարությանը, կանխել «բոլշևիզմի վարակը» և, երկրորդ՝ շարունակել Ռուսաստանը շղթայված պահել իրենց հետ ընդդեմ գերմանական

[114] Տե՛ս նույն տեղում:
[115] Հորիզոն, 1917, 14 նոյեմբերի, թիվ 243:
[116] Տե՛ս նույն տեղում:

խմբավորման, ամեն գնով ձախողել սպասվող անջատ հաշտության կնքումը[117]:

Թիֆլիսի խորհրդակցության քննարկումներից հետո զեկուցող Դ. Դոնսկոյի առաջարկով միաձայն ընդունվեց հետևյալ բանաձևը.

1) այսուհետև, մինչև Անդրկովկասից ու Կովկասյան ռազմաճակատից Սահմանադիր ժողովի պատգամավորների ընտրությունը, երկրամասի ղեկավարությունը հանձնել հասարակական անվտանգության կոմիտեին՝ (Հանրային Ապահովության կոմիտե) կազմված Անդրկովկասի պաշտոնական և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից:

2) երկրամասում և ռազմաճակատում Սահմանադիր ժողովի ընտրությունների ավարտին, ժամանակավոր իշխանության կազմի, բնույթի և լիազորությունների կազմակերպումը հանձնարարել ողջ քաղաքական և զինվորական բնակչության ընտրյալներին՝ հետևյալ պայմաններով.

ա) համառուսաստանյան դեմոկրատիայի հետ համատեղ տեղական քաղաքականության վարումը՝ համապատասխան խնդիրների լուծման ուղղությամբ,

բ) միմիայն տեղական, ընթացիկ հարցերի ինքնուրույն լուծում,

գ) երկրամասը հասցնել մինչ կենտրոնական, ճանաչված հեղափոխական-դեմոկրատական իշխանության ձևավորման պահը կամ համառուսաստանյան լիիրավ Սահմանադիր ժողովի բացմանը,

դ) գործունեության մեջ հենվել երկրամասային կամ տեղական բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների և տեղական ինքնակառավարման մարմինների վրա»[118]:

Նոյեմբերի 12-ին (25) Ե. Գեգեչկորիի նախագահությամբ Թիֆլիսում կայացավ Հասարակական անվտանգության կոմիտեի նիստը[119], որն անդրկովկասյան կառավարության ստեղծման երկրորդ փուլն է հանդիսանում: Ներկա էին նաև Բաքվի մահմեդական պատվիրակությունը և Թերեք-Դաղստանի կառավարության ներկայացուցիչը: Վերջինիս զեկույցից հետո քննարկվեց Անդրկովկասի իշխանության կազմակերպման խնդիրը՝ նոյեմբերի 11-ի խորհրդակցության ընդունված բանաձևի շրջանակներում: Սոցիալ-դեմոկրատների կողմից Ն. Ժորդանիան, ՀՅԴ կողմից՝ Խ. Կարճիկյանը, մահմեդական ազգային կազմակերպությունների անունից՝ Մ. Ջաֆարովը և սոցիալիստ-հեղափոխականների կողմից՝ աջ էսեռ Վլ. Գոբեչիան հայտարարեցին, որ իրենց կուսակցությունները սկզբունքորեն կողմնակից են Անդրկովկասի նոր կառավարություն ձևավորելու գաղափարին: Կովկասյան ռազմաճակատի կոմիսար Դ. Դոնսկո-

[117] Տե՛ս Մ. Церцвадзе, նշված աշխատությունը, էջ 302:
[118] Документы и материалы..., с. 6-7.
[119] Տե՛ս Հորիզոն, 1917, 14 նոյեմբերի, թիվ 243:

յը հայտարարեց, որ իր պաշտոնը հանձնում է նոր իշխանությանը[120], մինչդեռ գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի կոմիսար Ստանկևիչից Դ. Դոնսկոյը ստացել էր հրահանգ՝ հնարավորության դեպքում մնալ իրենց պաշտոններում և հաղորդագրություններ ուղարկել բանակի տրամադրությունների վերաբերյալ[121]:

Դրան հաջորդում է կառավարության ստեղծման երրորդ՝ թերևս վճռական փուլը, երբ լուծվելու էր նոր իշխանության մեջ կուսակցությունների ներկայացուցչության, դրա թվաքանակի խնդիրը: Առաջին հայացքից պարզ, թվաբանական հարցը ենթատեքստում ամփոփում էր ամենալուրջ քաղաքական առճակատման դրսևորումը, որը մինչև 1918 թ. անկախացման փուլը թելադրելու էր գրեթե ողջ ռազմա-քաղաքական զարգացումների համակարգն Անդրկովկասում և կովկասյան ռազմաճակատում: Նախ՝ առաջարկն արվեց վրացական մենշևիկների նախաձեռնությամբ: Ն. Ժորդանիան ս.-դ. կողմից առաջարկեց իշխանության հետևյալ կազմը. 3 ս.-դ. մենշևիկ, 2 էսեռ, 3 դաշնակցական, 1 սոցիալիստ-ֆեդերալիստ, 4 մահմեդական, որոնցից 1-ը՝ ս.-դ., 1-ը՝ էսեռ և 1-ը՝ բոլշևիկ: Հենվելով խորհրդակցության ժամանակ Հ. Օհանջանյանի հայտնած նախապայմանների վրա, դաշնակցական Ս. Վրացյանը կրկին շեշտելով երկրամասի իրական քաղաքական ուժերի համեմատական ներկայացուցչական սկզբունքը՝ առաջարկում էր հետևյալ համակարգը. կառավարություն կազմել 9 հոգուց – 3 ս.-դ. , 2 էսեռ, 2 դաշնակցական, 2 մահմեդական, երեք սոցիալ-դեմոկրատներից մեկը պետք է թաթար լիներ:

Նա գտնում էր, որ այդպես՝ ելնելով կուսակցական սկզբունքից, լուծված կլինի նաև ազգային ներկայացուցչության հիմնահարցը: Վիճաբանություններից հետո, որին մասնակցեցին Ն. Ժորդանիան, Ե. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Շ. Ալեքսեև-Մեսխիևը, Խ. Կարճիկյանը և ուրիշներ, ձայների մեծամասնությամբ հաղթեցին վրացական մենշևիկները և նրանց առաջարկը[122]: Ելնելով իրենց իսկ՝ դաշնակցականների առավել համեստ, տվյալ դեպքում ոչ եսակենտրոն սկզբունքից և ազգային գործոնի հավասարակշռության մեկնակետից, կարելի է եզրակացնել, որ պակասեցնելով ՀՀԴ մեկ տեղը, Դաշնակցությունը փաստորեն կրճատում էր մահմեդականների երկու տեղ՝ առավելությունն օբյեկտիվորեն զիջելով վրացական մենշևիզմին:

Այս նիստում որոշվեց նաև կառավարության բաժանմունքների կազմը, ինչպես և նոր իշխանության անվանումը, այն է՝ Անդրկովկասյան

[120] Տե՛ս Ազատամարտ, Թիֆլիս, 1917, 15 նոյեմբերի, թիվ 35:
[121] Տե՛ս Молот, 1917, 16 ноября, N 36:
[122] Տե՛ս Հորիզոն, 1917, 14 նոյեմբերի, թիվ 243:

կոմիսարիատ[123]: Պաշտոնական «Республика» թերթը նշում էր «Անդրկովկասյան ժամանակավոր Կոմիսարիատ» անվանումը[124]:

Հասարակական անվտանգության կոմիտեի ևս մի նիստ կայացավ նոյեմբերի 13-ին (26), արդեն առանց բոլշևիկների մասնակցության: Որոշվեց կազմակերպել Անդրկովկասյան կոմիսարիատ՝ սոցիալիստական կուսակցությունները ներկայացնող 12 անդամներից: Նոր իշխանության ազգային ներկայացուցչությունը այսպիսին էր՝ 3-ական հայ և վրացի, 2 ռուս, 4 մահմեդական[125]:

Այսպիսով, 1917 թ. նոյեմբերի 10-14-ի ընթացքում, Թիֆլիսում կայացավ Անդրկովկասյան նոր կառավարության ձևավորման գործընթացը, որը Բաքվի զարգացումներից հետո, հատկապես, արագացվեց երկրամասի քաղաքական կենտրոնում:

Ակնհայտ է, որ վրացական մենշևիկների նկատելի ազդեցության և ճնշման պայմաններում բոլշևիկյան հեղաշրջումն օգտագործվեց որպես հարմար առիթ՝ Ռուսաստանից անկախ կառավարություն ունենալու հարցում: Թեև շեշտվում էր վերջինիս ժամանակավոր, երկրորդական բնույթը, սակայն, Թիֆլիսի խորհրդակցության ընթացքը, ելույթների տրամաբանությունը հուշում էին բոլորովին այլ բան: Փաստորեն այն՝ ինչ չէր ստեղծվել և իրականացվել Փետրվարյան հեղափոխությամբ, երբ Օզակոմը հանդես էր եկել որպես կենտրոնական իշխանության կցորդ և որոշումներ կատարող, իրագործվում էր այժմ: Անկախ Անդրկովկաս ունենալու գայթակղիչ հեռանկարը թեև ոչ բացահայտ, հաճախ տագնապով ու վախվորած, և ոչ միայն բոլշևիզմի դեմ փայփայում էին նաև այս գործընթացում երկրորդ պլանի վրա հանդես եկող Դաշնակցությունը, մահմեդական կազմակերպությունները:

Այնուհետև ընթացավ կառավարության ձևավորման բուն գործընթացը:

Նոյեմբերի 15-ին (28) Անդրկովկասի հատուկ կոմիտեի՝ Օզակոմի նիստը, լսելով երկրամասային բարձրագույն իշխանության կազմակերպման հարցը՝ Պետրոգրադի և ժամանակավոր կառավարության հետ հաղորդակցության ընդմիջման հետևանքով, որոշեց. «Նկատի ունենալով քաղաքական մոմենտի արտակարգ հանգամանքները, Ռուսաստանում կենտրոնական իշխանության բացակայությունը, որը Օզակոմի ներկա կազմի լիազորողն է և նկատի առնելով Անդրկովկասում նոր երկրամասային իշխանության ձևավորումը, մենք Անդրկովկասի հատուկ կո-

[123] Տե՛ս նույն տեղում:
[124] Республика, Тифлис, 1917, 15 ноября, N 107.
[125] Տե՛ս Молот, 1917, 16 ноября, N 36.

միտեի անդամներս որոշեցինք վայր դնել մեր լիազորությունները. Օզակոմի անդամներ Ա. Չխենկելի, Մ. Պապաջանյան, Մ. Զաֆարով»[126]:

Նույն օրը, նոյեմբերի 15-ին, արդեն իրենց պաշտոններում նորանշանակ նախագահն ու կոմիսարները, լսելով Օզակոմի անդամների հրաժարականը՝ որոշեցին.

1) «Օզակոմի անդամների որոշումը՝ լիազորությունները վայր դնելու կապակցությամբ՝ ընդունել ի գիտություն,

2) հրապարակել հրաման՝ Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորման և նրա վրա կառավարական իշխանության ողջ պատասխանատվությունը դնելու մասին,

3) երկրամասային բարձրագույն իշխանության վերակազմության վերաբերյալ Անդրկովկասի բնակչությանն ուղղված հռչակագրի մասին,

4) ընդունել առաջարկ ս.-դ. բոլշևիկյան կուսակցության տեղական բաժանմունքին՝ նոր երկրամասային բարձրագույն իշխանության ձևավորման մասին տեղեկացնելու վերաբերյալ, նախագահը հայտարարեց, որ Հասարակական անվտանգության երկրամասային կոմիտեն նախօրոք տեղեկացրել է կուսակցությանն այդ մասին, բայց պատասխան չի ստացել:

5) Անդրկովկասյան կոմիսարիատի աշխատանքի տեխնիկական պայմանների մասին»[127]:

Նույն նիստում հաստատվեց նաև Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից իշխանությունը ստանձնելու վերաբերյալ հրամանը. «Նկատի ունենալով քաղաքական պահի արտակարգ հանգամանքները և կենտրոնական համապետական իշխանության բացակայությունը, սույն օրը, մենք ներքոստորագրյալ՝ Անդրկովկասյան կոմիսարիատի անդամներս ստանձնեցինք մեր պարտականություններն Անդրկովկասյան կոմիսարիատի վրա, ընդունելով Անդրկովկասյան երկրամասի սահմաններում կառավարական ողջ իշխանությունը, բոլոր կառավարական հաստատությունների և Անդրկովկասի պաշտոնատար անձանց անմիջական ենթակայությամբ:

Ստորագրել են.

Կոմիսարիատի նախագահ, Աշխատանքի գծով և Արտաքին հարաբերությունների նախարարության կոմիսար - Ե. Գեգեչկորի

Ներքին գործերի նախարարության գծով կոմիսար - Ա. Չխենկելի

Ռազմա-ծովային նախարարության գծով կոմիսար - Դ. Դոնսկոյ

Ֆինանսների նախարարության գծով կոմիսար – Խ. Կարճիկյան

[126] ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 15, л. 3.
[127] Տե՛ս նույն տեղում, գ. 116, թ. 11:

Ժողովրդական լուսավորության նախարարության գծով կոմիսար – Ֆ. Խան-Խոյսկի

Արդարադատության նախարարության գծով կոմիսար – Շ. Ալեքսեև-Մեսխիև

Առևտրի և արդյունաբերության նախարարության գծով կոմիսար – Մ. Զաֆարով

Հաղորդակցության ուղիների նախարարության գծով կոմիսար– Խ.-բ. Մելիք- Ասլանով

Հողագործության նախարարության գծով կոմիսար - Ա. Ներուչև

Պարենավորման նախարարության գծով կոմիսար - Գ. Տեր-Ղազարյան

Խնամատարության նախարարության գծով կոմիսար – Հ. Օհանջանյան

Պետական վերահսկողության գծով կոմիսար – Խ.-բ. Խաս-Մամեդով»[128]:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող Անդրկովկասյան կոմիսարիատի նիստերի մատյանում պարունակվող արխիվային նյութը որոշակի և ուշագրավ պարզաբանումներ է մտցնում մինչ այսօր անհայտ մանրամասների վերաբերյալ:

Այսպես, Շ. Ալեքսեև-Մեսխիևի կողմից բարձրացված հարցադրումից հետո միայն, արտաքին գործերի և սահմանային հարաբերությունների գծով հատուկ կոմիսարի պաշտոնը ևս տրվում է մենշևիկ Ե. Գեգեչկորիին: Կոմիսարիատի անդամների միջև բաժանվում է նաև կրոնական ուղղությունների հոգևոր գործերի տնօրինումը, ուղղափառ (ռուսական) - Ա. Ներուչևին, ուղղափառ (վրացական) – Շ. Ալեքսեև-Մեսխիևին, հայ - Գրիգորյան և հայ կաթոլիկ – Հ. Օհանջանյանին, մահմեդական – Խ.-բ. Խաս-Մամեդովին: Ըստ հայեցողության նշանակվելու էր նաև Կոմիսարիատի նախագահի տեղակալի պաշտոն[129]:

Նախարարական պորտֆելների բաժանման ժամանակ տարաձայնություններ առաջացան հողագործության (երկրագործության) կոմիսարի շուրջ. պայքարն ընթանում էր մենշևիկների և էսեռների միջև: Դաշնակցությունը և թաթարական խմբակցությունն իրենց քվեն տվեցին էսեռ Ա. Ներուչևին, իսկ էսեռներն ու մենշևիկները ձեռնպահ մնացին: Դաշնակցության համար տարօրինակ էր թվում, որ հողի սոցիալիզացիայի ծրագրի կողմնակից վրացական սոցիալիստ-ֆեդերալիստները պաշտպանում էին մենշևիկների թեկնածությունը: Սկզբում մենշևիկների թեկնածուն Գ.

[128] Նույն տեղում, ф. 1, оп. 2, д. 116, л. 12 (նաև Документы и материалы, с. 7-8).
[129] Տե՛ս նույն տեղում, л. 13.

Տեր-Ղազարյանն էր. այնուհետև, վերջինիս հրաժարականից հետո՝ Ե. Գեգեչկորին, և վերջապես, ընտրվեց Ս. Ներուչևը[130]: Ավելացնենք, որ դեկտեմբերի 4-ին (16) Հողագործության նախարարության գծով կոմիսարի տեղակալներից մեկը նշանակվում է Ավ. Շահխաթունյանը, իսկ ներքին գործերի՝ Ա. Երզնկյանը[131]:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Օզակոմի անդամներից միայն կադետ Միքայել Պապաջանյանն էր, որ նորաստեղծ կառավարության մեջ չստացավ պաշտոն, չնայած Ռուսաստանում և Անդրկովկասում լայն հեղինակություն էր վայելում: Փետրվարյան հեղափոխության բովով անցած Մ. Պապաջանյանն իր կենսագրությանն ավելացրել էր ակտիվ և բազմաբնույթ քաղաքական փորձ, իսկ այժմ դուրս էր մղվում մեծ քաղաքականությունից:

Անկուսակցական «Վան-Տոսպ» շաբաթաթերթը, որն իր զուսպ ու կշռադատված հրապարակումներով աչքի էր ընկել հատկապես ցարիզմի անկումից հետո, այժմ Մ. Պապաջանյանի քաղաքական մեկուսացման խնդիրը, դարձյալ առանց ընդգծված քաղաքական ենթատեքստի, հրամցնում էր հայ հասարակությանը, միաժամանակ արդիական դասեր տալիս:

«Պապաջանեանը ունի լայնամտութիւն և հանդարտ ջիղեր,– գրում էր «Վան-Տոսպը»,– նա այն դիւրագրգիռ անհատներից չէ, որ ամեն բանի յարմար են, բացի հասարակական պաշտոններից և մանաւանդ կովկասեան իրականութեան նման միջցեղային ատելութիւններով և դաւադրութիւններով կնճռոտուած յարաբերութիւնների մէջ: Պապաջանեանը վայելել է և վայելում է իր օտարացեղ պաշտօնակիցների յարգանքը, կարողացել է նրանց հետ պաշտօնավարել ամիսներով և վարել ամենաջղայնացնող բանակցութիւններ, առանց իր սառնարիւնութիւնը կորցնելու և վիատուելու: *Այդ տիպը հազուագիւտ է մեր մէջ. մենք ունենք յեղափոխականներ և հրապարակախօսներ, բայց չունինք պետական գործիչներ, դա՝ իհարկէ հետեւանք է մեր երկարատեւ քաղաքական իրաւազրկութեան, բայց դա մի պակաս է, որի ծանրութիւնը զգացել ենք անցեալում և պիտի զգանք ներկայում և մօտ ապագայում* (ընդգծումը մերն է - Վ. Մ.): Եթե մեզ վիճակուեց մի աւելի կամ նուազ ընդարձակ ձև Կովկասում կամ թիւրքական Հայաստանում, մենք ամեն բանից առաջ պիտի զգանք բարձր և միջին պաշտօնեաների յուսահատեցնող սով»[132]: Բարձր էին գնահատվում Մ. Պապաջանյանի վերկուսակցական, սոսկ ազգային

[130] Տե՛ս Հորիզոն, 1917, 16 նոյեմբերի, թիվ 245:
[131] Տե՛ս նույն տեղում, 8 դեկտեմբերի, թիվ 258:
[132] Վան-Տոսպ, Թիֆլիս, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 43:

պաշտոնյայի դիրքից վեր կանգնած համազգային գործչի առավելությունը, այն կարևոր հանգամանքը, որ վերջինս լինելով կադետական տիպի ազգային Հայ ժողովրդական կուսակցության անդամ, սերտորեն համագործակցում էր այլ կուսակցությունների հետ, իր օգնական էր նշանակել, օրինակ դաշնակցական Տ. Բեկզադյանին:

Մ. Պապաջանյանի ընդգրկումը նոր կառավարության մեջ անձնական, եզակի խնդիր չէր: Հարցն առավել քան խորքային է, հեռուն գնացող և ունի, ինչպես տեսանք նախապատմություն:

Անդրկովկասյան կոմիսարիատում չընդգրկվեցին ինչպես հայկական, այնպես էլ վրացական բուրժուազիայի և մտավորականության շերտերի շահերն արտահայտող ազգային-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները: Հայ իրականության պարագայում դա վերածվեց լուրջ և ճակատագրական նշանակություն ունեցող ՀՅԴ-ՀԺԿ կուսակցությունների առճակատմանը, ինչը 1918-1920 թթ. ընթացքում, ոչ միայն Անդրկովկասում, այլև Հայկական հարցի միջազգային ատյաններում խաղաց իր որոշակի բացասական դերը:

Թիֆլիսի հայտնի խորհրդակցության նոյեմբերի 13-ի նիստում ՀԺԿ կենտրոնական կոմիտեի լիազոր ներկայացուցիչը առաջարկում էր իրենց կուսակցության թեկնածուներից մեկին ներառել նոր կառավարության կազմում: Նման դիմումով հանդես եկավ և վրացական Ազգային-դեմոկրատական կուսակցությունը: Երկուսի դիմումներն էլ մերժվում են[133]:

Հայ ժողովրդական կուսակցությունը «Մշակում» զետեղված «Երկրային կառավարութիւնը» խմբագրականում քննադատության էր ենթարկում նոր իշխանության կազմը, ոչ ուղիղ, բայց դիպուկ ու հեռահար հարված էր հասցնում Անդրկովկասում սոցիալիստական կուսակցությունների բլոկ ստեղծելու վրացական մենշևիզմի և նրան առայժմ չընդդիմացող Դաշնակցության համաձայնությանն՝ այն իմաստով, որ սոցիալ-դեմոկրատիայի մոդայիկ քողի տակ Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքում գերիշխող երկու փաստորեն ազգային կուսակցությունները լուռ համաձայնության էին եկել՝ այլ ազգային ուժերին իշխանությունից հեռացնելու, ապագա անկախությունը միանձնյա ղեկավարելու հարցում: Հայ ժողովրդական կուսակցությունը հանդես եկավ հայտարարությամբ, ուղղված նախագահ Ե. Գեգեչկորիին. «Անդրկովկասի երկրամասի ժամանակավոր կառավարման համար ենթադրվում էր ձևավորել իշխանություն՝ հեղինակավոր, որը կարող է հենվել բնակչության համակրանքի և աջակցության վրա: Մինչդեռ հասարակական անվտանգության կոմիտեն կազմակերպելով այդ իշխանությունը հարմար գտավ այն տրամադրել սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչ-

[133] Տե՛ս Республика, 1917, 15 ноября.

ներին և չորս տեղ հատկացրեց մահմեդականներին, որոնցից երկուսը պետք է լինեն էսեռ, երկուսը՝ մենշևիկ: ՀԺԿ կենտրոնական կոմիտեն գտնում է, որ այդ իշխանությունը չի կարող լիարժեք կերպով հույս դնել ամբողջ բնակչության աջակցության վրա»[134]: ՀԺԿ դա հիմնավորում էր նախ՝ Անդրկովկասի բնակչության սոցիալական, ազգային կազմով, այն դեպքում, երբ սոցիալիստական կուսակցությունները տարբեր ազգերի միջավայրում չէին արտացոլում սոցիալական բոլոր շերտերը: Յուրաքանչյուր ազգում կան ազդեցիկ ոչ սոցիալիստական, այլ ժողովրդական քաղաքական կուսակցություններ, որոնք էական համակրանք են վայելում հասարակություններում: Այս իրավիճակը, մասնավորապես, հայ հասարակությանն էր վերաբերում: Իրավացիորեն շեշտվում էր նաև քաղաքականության անհետևողականությունը, երբ թեև որոշվել էր կառավարությունը ձևավորել սոցիալիստական կուսակցությունների պատկանելիության սկզբունքով, սակայն մահմեդական չորս անդամներից միայն երկուսի նկատմամբ էր այն պարտադիր համարվում[135]:

«Մշակի» խմբագիր, ՀԺԿ ղեկավար գործիչներից Համբարձում Առաքելյանը որոշումը համարում էր քաղաքական անհեռատեսություն, տհասություն: Երկրամասի կառավարումից դուրս թողնել առևտրա-արդյունաբերական խավը և թույլ տալ բոլշևիկներին, որոնք ներկայումս ամենահակահեղափոխական գործն են կատարում և դեպի կործանում են տանում երկիրը, մասնակցելու երկրի կառավարմանը միայն նրա համար, որ նրանք «սոցիալիստներ» են, նշանակում է չընբռնել հայրենիքի շահն ու օգուտը[136]: Միաժամանակ իշխանությունից մեկուսացնել ժողովրդավար կադետներին, որոնք ներկայացնում էին մտավոր, քաղաքական և բարոյական մեծ ուժ, նշանակում էր, որ խորհրդակցության մասնակիցները կամ շատ շուտ մոռացել էին, որ Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխության իրականացնողները գլխավորապես կադետներն էին, ի դեմս «պրոգրեսիվ բլոկի» կամ էլ պարզապես հարմար քաղաքական իրավիճակից օգտվելով, վերջապես հեռացնում էին մեծ քաղաքականությունից մրցակից ազդեցիկ քաղաքական ուժին: Տվյալ դեպքում, Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատիան, սոցիալիստական աջ կուսակցությունները, վրացական մենշևիկների հետևողական թելադրանքով, ոչ պակաս կարճամիտ և բոլշևիկամետ քաղաքական մարտավարություն էին ընտրում, դրանով ավելի ուժեղացնելով բոլշևիզմի դիրքերը և մոտ ապագայում հնարավորություն տալով նրանց ցրելու Սահմանադիր ժողովը: Անկախ այն հանգամանքից, թե տվյալ քաղաքական իրավիճակում բուրժուազիայի կշիռը թե՛ կենտրոնում, թե՛ Անդրկովկասում ինչ բեկում

[134] Տե՛ս նույն տեղում:
[135] Տե՛ս Մշակ, 1917, 15 նոյեմբերի, թիվ 243:
[136] Տե՛ս նույն տեղում:

կարող էր առաջացնել իշխանության հիմնահարցի նոր զարգացումներում, միևնույն է, հենց սկզբից, Կոմիսարիատը անհեռատես ուղի ընտրեց համակովկասյան հասարակական-քաղաքական կյանքի ղեկավարման հիմնահարցում: «Այդպիսի անարդար և անտակտ քայլերը չեն կարող մեծ վստահություն առաջ բերել դեպի այն մարմինները,– եզրակացնում էր Հ. Առաքելյանը,– որոնք իրենց հայտարարում են ժողովրդական շահերի պաշտպան»[137]:

Անմիջական արձագանքը եղավ այն, որ նոյեմբերի 16-ին (29), երբ Ե. Գեգեչկորիի կողմից առաջարկ արվեց ողջունել Անդրկովկասի նոր կառավարությանը, կադետները, Հայ ժողովրդական կուսակցությունը և բոլշևիկները կանգնեցին քաղաքական նույն հարթության վրա ու իրենց դիրքերից նկատեցին, որ «ողջունելու ոչինչ չկայ, որովհետև այդ կառավարությունը կազմված է միակողմանի, ոչ արդարացի սկզբունքով»[138]: Նույն օրը Անդրկովկասի կոմիսարիատին ողջունելու առաջարկով է հանդես գալիս Թիֆլիսի քաղաքային Դուման՝ էսեռ Դ. Մերխելովի նախագահությամբ: Վերջինիս առաջարկությանը դեմ են արտահայտվում երկրամասի քաղաքական ասպարեզի հակադիր բևեռներում կանգնած կուսակցությունների ներկայացուցիչները՝ բոլշևիկ Ֆ. Մախարաձեն մի կողմից և կադետ Սեմյոնովն ու ՀԺԿ անդամ Ս. Հարությունյանը՝ մյուս կողմից: Նրանք բողոքում էին, որ նոր անդրկովկասյան իշխանությունը ձևավորվել է դեմոկրատիայի ոչ բոլոր անդամներից, տվյալ դեպքում առանց ռուսական կադետական, Հայ ժողովրդական և վրացական Ազգային դեմոկրատական կուսակցությունների մասնակցության:

Մենշևիկ Ն. Ռամիշվիլին Կոմիսարիատի «սոցիալիստական» կազմի ընտրությունը հիմնավորում էր նրանով, որ ներկայացուցչությունն ընտրվել է «կենդանի մնացած» կուսակցությունների կողմից, ետևից գնում է Կովկասի դեմոկրատիայի մեծ մասը, որն իր գործողություններով պատասխանատու էր երկրամասային կենտրոնի առջև: Թիֆլիսի Քաղաքային Դուման, ձայների մեծամասնությամբ որոշում է ողջունել Անդրկովկասյան կոմիսարիատին, դիմելով երկրամասի բոլոր քաղաքացիներին՝ միանալու իրենց նախաձեռնությանը[139]:

Ժողովրդականների կարծիքով Կոմիսարիատին ողջունելը վաղաժամ էր, քանի որ այն չէր բխում կենտրոնական կառավարությունից, ինչպես Օզակոմն էր, որի անդամները նշանակվել էին Պետական Դումայի

[137] Տե՛ս նույն տեղում:
[138] Տե՛ս նույն տեղում, 18 նոյեմբերի, թիվ 247:
[139] Տե՛ս Молот, 1917, 18 ноября, N 38:

գործադիր մարմնի՝ այդպիսով և ամբողջ Ռուսաստանի կողմից ճանաչված օրինական իշխանության կողմից: Նրանք ընդունում էին, որ Ռուսաստանը չունի օրինական կենտրոնական կառավարություն, բայց միևնույն ժամանակ Կոմիսարիատի իրավական և բարոյական հիմքն անկայուն էին համարում, քանի որ վերջինս կազմավորվել էր միայն տեղական քաղաքական կազմակերպություններից նշանակված անձանց միջոցով: Կոմիսարիատի ղեկին կանգնած գործիչները մեղադրվում էին անսկզբունքայնության մեջ նաև այն հարցում, որ եթե կառավարության կորիզը պետք է կազմեն հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունները, ապա ինչո՞ւ այդ դեպքում խոշոր կալվածատիրության և բուրժուազիայի ներկայացուցիչ Ֆ. Խան-Խոյսկին նշանակվում է լուսավորության կոմիսարի պաշտոնում: Հիմնավորված տագնապ և ապագայի նկատմամբ անորոշությունն է արտացոլված Հ. Առաքելյանի այն գլխավոր մտավախության մեջ, երբ անհիրական էր համարվում կոմիսարներին «Республика» թերթի կողմից նախարար կոչել Անդրկովկասում, որն իրեն անջատ չէր հռչակել համառուսաստանյան պետությունից[140]: Նույն օրերին իրեն կարծես կրկին անգամ համոզում և հանգստացնում էր ՀՅԴ-ը, որ Կոմիսարիատի նպատակը սեպարատիզմը չէ, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելը չէ[141]:

Կուսակցությունը Թիֆլիսի իր մամուլի օրգաններում հանդես էր գալիս բազմաթիվ վերլուծական հոդվածներով, որտեղ դրսևորվում էր ՀՅԴ սկզբնական վերաբերմունքը Կոմիսարիատի հանդեպ: Դաշնակցության համար հատկապես կարևորվում էր հին և նոր երկրամասային կառավարությունների համեմատական գնահատականը:

ՀՅԴ թեև իրավամբ նշում էր, որ Կոմիսարիատի ստեղծումը զուգադիպել է Օզակոմի վերակազմության պահանջին, սակայն միտումնավոր անտեսվում էր գլխավորը, այն է՝ եթե ժամանակավոր կառավարության կողմից Հատուկ կոմիտեի վերակազմությունը հանգեցնելու էր Անդրկովկասի ուղղակի ենթարկմանը Պետրոգրադին՝ նախկին փոխարքաների կարգավիճակի մակարդակով, ապա բոլշևիկյան հեղաշրջումից հետո ձևավորված Կոմիսարիատը, երկրամասը Ռուսաստանից անջատելու ռազմավարություն էր որդեգրել: Դաշնակցությունն առավելություն էր համարում Կոմիսարիատի կազմը, հատկապես այն, որ վերջինս ձևավորվել է անդրկովկասյան ազգերի և կուսակցությունների համաձայնությամբ, այսինքն՝ բխում էր ոչ թե կենտրոնից, այլ Կովկասից. դրանով ավելի է ամրապնդվում Ռուսաստանից անջատման թեզը:

[140] Տե՛ս Հորիզոն, 1917, 21 նոյեմբերի, թիվ 249:
[141] Տե՛ս Գէորգ Ղարաջեան (Ս. Տ. Արկոմէդ) Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թւին, Թիֆլիս, 1919, էջ 18, նաև Մշակ, 1917, 29 դեկտեմբերի, թիվ 274:

Հասկանալի է, որ ՀՅԴ հպարտությամբ արձանագրում էր իր երկու կոմիսարների մոտքը կառավարություն, նշելով վերջինիս ընկերվարական գերակշռությունը՝ նախորդ չափավոր տարրերի համեմատ: Եթե հին կառավարության մեջ ազգերը հավասարաչափ էին ներկայացված, ապա նոր կազմում գերակշռում էին մահմեդականները՝ ի հաշիվ ռուսների. նպատակ հիմնավորում Ռուսաստանից հեռանալու ճանապարհին: Նոր կառավարությունն ըստ ՀՅԴ հենվում էր անդրկովկասյան ազգերի և ազդեցիկ կուսակցությունների վրա, մինչդեռ հինը ղեկավարվում էր կենտրոնական իշխանության կողմից, «նոր կառավարութեան հայ անդամներից երկուսը յենտում են հայ ժողովրդի մեծամասնութեան վրայ, մինչ դեռ հին կառավարութեան հայ անդամը նեցուկ ունէր մի փոքրաթիւ խաւ մեր ժողովրդի մէջ»[142]:

Կուսակցությունը նոր կառավարության կազմը համարում էր «արդիւնք շատ բազմատեսակ ու նրբին հաշառումների. ամբողջ կազմը մի մարմնացած լարում է և ուժերի ձիգ համադրութիւն, որ պայթելու է առաջին իսկ զօրեղ ցնցումից: Մի յախուռն քայլ, մի անզգոյշ խօսք, մի թաքուն ակնարկ բաւական է, որ ուժերն իրար բաղխին և կառավարական շենքի տեղ ունենանք մի աւերակ»[143]:

Իսկ այդպիսի տագնապն, իրական անհանգստությունն էր առաջացնում, այլապես չէր լինի և դաշնակցական Գ. Խատիսյանի (Ալ. Խատիսյանի եղբայրը – Վ. Մ.) հարցումը ՌՍԴԲ(բ)Կ Անդրկովկասի երկրամասային կոմիտեի վարչությանը, թե արդյո՞ք ճշմարտությանը համապատասխանում է իբր, վերջինիս կողմից Թիֆլիսում տարածված թռուցիկը այն մասին, որ Դաշնակցությունը, վրաց ֆեդերալիստները, հայ կադետները, մուսավաթը պատրաստում են մեկը մյուսի դեմ ուղղված հարձակումներ[144]:

Մի խոսքով, քաջ գիտակցելով և՛ Անդրկովկասի ազգերի և՛ նրանց կուսակցությունների միջև եղած սուր հակասությունները, հայկական ազգային-դեմոկրատական ազդեցիկ և հեղինակավոր կուսակցությունը նոր իրադրության մեջ, առայժմ դեռ առանց Օսմանյան Թուրքիայի ակտիվ միջամտության, հույսեր ուներ, թե բոլշևիզմի դեմ հեշտությամբ ձևավորվող անդրկովկասյան քաղաքական ուժերի «դաշինքը» հարատևելու է, երկրամասը հասցնելու է Սահմանադիր ժողովի բաղձալի հանգրվանին, ուստի և որպես Անդրկովկասի դեմոկրատիայի մեծամասնության շահերի արտահայտիչ՝ ողջունում էր Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը: Հիմնականում վրացական մենշևիկների քաղաքա-

[142] Տե՛ս Ազատամարտ, 1917, 19 նոյեմբերի, թիվ 38:
[143] Տե՛ս նույն տեղում:
[144] Տե՛ս Молот, 1917, 14 ноября, N 34.

կանությանը հետևելով, ՀՅԴ գործնականում աջակցում էր Ռուսաստանից երկրամասի անջատմանը:

Ինչ վերաբերում էր Կոմիսարիատի անվանը, ապա այն անմիջապես հեգնանքի ու ծաղրի արժանացավ թե՛ հայ մենշևիկների և թե՛ Հայ ժողովրդական կուսակցության կողմից, թե «Օզակոմի փոխարեն հանդես եկաւ Զակօմը»[145], այսինքն՝ նույնացվում էին անդրկովկասյան երկու բոլորովին տարբեր կառավարությունների նպատակներն ու գործելաոճը:

Հետևեց, իհարկե, Կովկասի թիվ մեկ բոլշևիկ Ստ. Շահումյանի արձագանքը՝ «Նոր իշխանության կազմակերպումը Կովկասում» հոդվածով: Ստ. Շահումյանը նոր իշխանության համար բնորոշ էր համարում այն, որ վերջինս խուսափում է հեղափոխության դրած արմատական հարցին պատասխանելուց՝ ճանաչո՞ւմ է արդյոք Կովկասը Լենինի նոր կառավարությունը, թե՞ պատերազմ է հայտարարում նրան: Այդ հարցին պատասխանելու փոխարեն,– գրում էր Ստ. Շահումյանը,– կովկասյան նոր կառավարությունը որոշում է փաստորեն անջատվել Ռուսաստանից և ավտոնոմ Անդրկովկաս ստեղծել: Դեռ բոլորովին վերջերս Պետրոգրադի դեմոկրատական խորհրդակցությունում կովկասյան մենշևիկների ներկայացուցիչները հանդիսավոր կերպով և ինքնաբավական հայտարարում էին, թե իրենք ոչ մի ավտոնոմիական ձգտում չունեն և իրենց ամբողջ ուժերը դնում են Ռուսաստանի դեմոկրատիայի տրամադրության տակ: Խորհրդակցությունը օվացիա է սարքում մենշևիկ հռետորներին և նրանց որպես օրինակ է ցույց տալիս «դավաճան» ուկրաինացիներին ու ֆինլանդացիներին: Քանի դեռ Չխեիձեն ու Ծերեթելին իշխանության տեր էին Ռուսաստանում, կովկասյան մենշևիկները ավտոնոմիստներ չէին: Այժմ, երբ նրանք արդեն վռնդված են Պետրոգրադից, կովկասյան մենշևիկները միանգամից մոռացան «ընդհանուր հայրենիքի» հանդեպ իրենց հավատարմության մասին և փաստորեն Անդրկովկասի ավտոնոմիա հայտարարեցին»[146]: Մի կողմ թողնելով կուսակցական բնական անհանդուրժողականությունը, հարկ ենք համարում Ստ. Շահումյանի միջոցով մեկ անգամ ևս ընդգծել վրացական մենշևիկների որդեգրած քաղաքականությունը, որն ի տարբերություն ՀՅԴ և մահմեդական կուսակցությունների, հետևողական էր, ծրագրված և ոչ դեպքերով ու իրադարձություններով թելադրված: Այդ մասին են վկայում վրացական մենշևիկների նախահոկտեմբերյան քայլերը:

Նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 2) Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, ինֆանտերիայի գեներալ Ս. Պրժևալսկին

[145] Տես՝ Մշակ, 1917, 29 դեկտեմբերի, թիվ 274:
[146] Ստ. Շահումյան, ԵԼժ, հ. 4, Երևան, 1978, էջ 41:

Թիֆլիսից հանդես եկավ հրամանով, որտեղ նա «ամբողջությամբ պաշտպանում և ողջունում էր այդ իշխանությունը, քանի որ այն չի հետապնդում Անդրկովկասի անջատումը Ռուսաստանյան հանրապետությունից, այլ ստեղծվել է ոչ միայն Ռուսաստանի, այլև ի բարօրություն Անդրկովկասի բոլոր ազգերի ու դավանանքների, Կովկասյան ռազմաճակատի»[147]:

Արևմտահայության շահերի պաշտպան «Հայաստան» թերթը ողջունում էր «Կովկասեան տէմոքրաթիք իշխանութիւնը», գտնելով, որ «պատմական ապացուցուած ճշմարտութիւն է, որ տեղական հեղինակութիւններ աւելի իմաստուն կերպով կրնան առաջնորդել տեղական քաղաքական նաւ ղեկը քան արտաքոյ հեղինակութիւններ: Այս որոշմամբ Կովկասը, առժամապէս կը ձգուի իր բաղդին, իր իմաստութեան, իր խոր հասկացողութեան: Կովկասեան իշխանութեան ստեղծումով թոմբ կը կանգնեցուի մայրաքաղաքի Կովկասի քաղաքականութեան համար ոչ համապատասխան հասարակական ալիքի առջև և Կովկասեան ազգերը աւելի մօտիկ իրենց հայրենիքի իրականութեան՝ աւելի բարերար քաղաքականութիւն կը մշակեն»[148]: Որպես կենտրոնական հիմնահարց բարձրացվում էր, իհարկե, Կովկասյան ռազմաճակատի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի և Պարսկահայաստանի պաշտպանության խնդիրը, որպես Անդրկովկասի ժողովուրդների ֆիզիկական գոյության և ներքին բազմաբնույթ հարցերի գլխավոր և առաջնահերթ երաշխիքը[149]:

Այսպիսով, բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի հեղափոխական-դեմոկրատական կենտրոնների, հեղափոխական-սոցիալիստական և ազգային-դեմոկրատական կուսակցությունների, Կովկասյան բանակի հրամանատարության մոտ բարձրացավ տեղական նոր՝ Պետրոգրադի բոլշևիկյան կառավարությունը ջնջնաչող իշխանության կազմակերպման հիմնահարցը, որը գերնպատակ ուներ՝ Անդրկովկասը զերծ պահել բոլշևիզմից:

Պայքարը միատարր չէր, երկրամասի երկու քաղաքական կենտրոնները՝ Թիֆլիսն ու Բաքուն դարձան իշխանությունը գրավելու այլընտրանքային բևեռներն Անդրկովկասում:

Իշխանության համար անզիջում առճակատման սկզբնական փուլում պայքարն ընթացավ Թիֆլիսում՝ վրացական մենշևիկների գլխավորությամբ Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի ներուժը փոշիացնելու, բոլշևիկներին պառակտելու և հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների հակաբոլշևիկյան ճակատ ստեղծելու ճանապարհով, իսկ Բաքվում՝ ընդհակառակը, ազդեցիկ բոլշևիկ գործիչնե-

[147] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1838, оп. 1, д. 33, л. 2.
[148] Տե՛ս Հայաստան, 1917, 19 նոյեմբերի, թիվ 159:
[149] Տե՛ս նույն տեղում:

րի ու ձախ էսեռների միջև կայացած դաշինքի ձևավորման, Ստ. Շահումյանի հեղինակության շնորհիվ նաև՝ այդ նույն զորամասերը Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում պահելու միջոցով՝ իշխանությունը գրավելու եղանակով:

Բաքվում իշխանությունն անցավ պատգամավորական խորհրդին, Թիֆլիսում՝ Անդրկովկասյան կոմիսարիատին, ինչը հիմնականում մենշևիկների և բոլշևիկների պայքարի արդյունք էր: Ինչպես հայկական, այնպես էլ մահմեդական ազգային-դեմոկրատական կուսակցություններն ու կազմակերպությունները ընթանում էին դեպքերի զարգացման ետևից, առայժմ վճռորոշ դեր չունեին իշխանությունն Անդրկովկասում գրավելու համար մղվող պայքարում:

Անդրկովկասի կոմիսարիատի կազմում, Հայ ժողովրդական կուսակցության և վրացական ազգային-դեմոկրատական կուսակցության չընդգրկելը, բուրժուազիայի քաղաքական ուժի մեկուսացումը՝ նոր երկրամասային իշխանության հանդեպ բոլշևիկներից հետո թերևս երկրորդ լուրջ ընդդիմադիր ուժը ձևավորվեց, որը մեծ առճակատման սկիզբն էր միայն Անդրկովկասում, հատկապես հայ իրականության մեջ:

1.3. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի իշխանության ձևավորման գործընթացին զուգահեռ նոր բովանդակությամբ բարձրացավ ազգային ինքնակազմակերպման խնդիրը: Այն դիտվում էր որպես Փետրվարյան հեղափոխության և ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականության շարունակություն՝ նոր քաղաքական պայմաններում: Ազգային գործոնի դերի բարձրացման, Անդրկովկասում ազգային համերաշխություն հաստատելու ճանապարհով սկզբից ևեթ կուսակցությունների կողմից փորձ էր արվում ազգային տեսակետից «կազմակերպված» երկրամասը հակադրել խորհրդայնացված Ռուսաստանին: Ազգային տարանջատումը, բոլշևիզմից հեռանալը Կովկասում գնահատվում էր որպես Սահմանադիր ժողովին ձգտող Ռուսաստանի ժողովրդավարությանն աջակցող առաջնային գործոն: Ամփ, կայուն, ազգային համերաշխության հենքի վրա միավորվող Անդրկովկասը, տեղի ազգային ազդեցիկ կուսակցությունների կարծիքով, պետք է միմիայն ավելի ամրապնդեր ու հաստատեր դեպի մեծ նպատակն ընթացող բազմազգ Ռուսաստանի որդեգրած ուղին, ի դեմս Անդրկովկասի, զերծ պահեր նրան բոլշևիկյան վտանգից: Զանգվածային հնչեղության մակարդակով

հանրությանը հրամցվում էր միասնական Ռուսաստանի կազմում ազգային լայն ինքնավարության պահանջը, սակայն ներքին խոհանոցում, հատկապես վրացական շրջանակներում, հետևողականորեն հունցվում էր ազգային անկախ պետականության գաղափարը: Այլ խնդիր էր, թե Անդրկովկասի երեք գլխավոր ազգերից յուրաքանչյուրը, սեփական ժողովուրդների շահերից ելնելով, ինչպիսի զիջումների, դիվանագիտության և ազգամիջյան հակամարտությունների կիրառման ճանապարհով էին փորձում իրականացնել քաղաքական իրավիճակի ընձեռած հնարավորությունը:

Այս գործընթացն իր նախապատրաստական փուլն անցավ Փետրվարյան հեղափոխության ութ ամիսների ընթացքում, երբ Անդրկովկասում սկիզբ դրվեց ազգային ներկայացուցչական մարմինների՝ Ազգային խորհուրդների ու նաև ազգային զորամասերի կազմակերպմանը, որոնք ապագա դաշնային ռուսաստանյան հանրապետության կազմի մեջ պետք է գլխավորեին և կազմակերպեին իրենց ժողովուրդների ինքնուրույն ազգային հասարակական-քաղաքական կյանքը: Հոկտեմբերյան հեղաշրջումը և Անդրկովկասյան կոմիսարիատի ընտրած հակաբոլշևիկյան քաղաքական գիծն իր ենթատեքստում աստիճանաբար վերածվելու էր հակառուսական դիրքորոշման, որն էլ դարձյալ վրացական մենշևիկների գլխավորությամբ Անդրկովկասը տանելու էր դեպի անկախացումների:

Մեր խնդիրն է, մնալով պատմական կոնկրետ ժամանակի մեջ, տվյալ դեպքում՝ 1917 թ. նոյեմբերի շրջանակներում վերաստեղծել հասարակական-քաղաքական այն համապատկերը, որն իշխում էր երկրամասում, ազգային հարցի և ազգային իշխանության հնարավոր զուգակցման հիմնահարցի բնագավառում:

Անդրկովկասի կոմիսարիատի պաշտոնական, կուսակցական տեսակետն ընդհանուր առմամբ հանգում էր նրան, որ Սահմանադիր ժողովին պետք էր ներկայանալ պատրաստի, համաձայնեցված նախագծով, որը կքննարկվեր համառուսաստանյան դաշնային հանրապետական միության շահերի տեսանկյունից: Այդ իմաստով բարձր էր գնահատվում երկրամասի ժողովուրդների ազգային համագումարների դերը, որոնք ի վիճակի էին և կարող էին լուծել առկա ազգային և ազգամիջյան տարաձայնությունները:

«Республика» թերթը գտնում էր, որ անհրաժեշտ է անհապաղ հրավիրել գլխավոր ժողովուրդների ազգային համագումարներ՝ ելնելով այն կարևորագույն դրույթից, որ Կովկասում անհնար է կարգավորել մի ազգի գործերը՝ մյուսին անտեսելու եղանակով: «Այդպիսի կարծիքը (նկատի ունի անտեսելը – Վ.Մ.) կործանարար է հենց այն ժողովրդի համար, որի

առաջադեմ ուժերը դա են պնդում»[150]: Հասկանալի է, որ հարվածն ուղղվում էր Դաշնակցության և նրա վարչական սահմանաբաժանումների նախագծի դեմ, միաժամանակ, իրավացիորեն ընդունվում էր, որ ժամանակին «հարևանային հարցը չկարգավորելու» պատճառով Վրաստանը կորցրեց իր քաղաքական անկախությունը: Կովկասը, մասնավորապես, Անդրկովկասը ներկայացվում էր որպես աշխարհագրական միատարր տարածք, որի Ռուսաստանի կողմից գրավումը հանգեցրել էր նաև մյուսների նվաճմանը: Մի պետական իշխանությանը հարյուրամյա ենթարկումը բերել էր նաև սոցիալ-տնտեսական, մշակութային, կենցաղային թելերի ձևավորմանը, որոնց կտրատումը ոչ միայն առայժմ խիստ վտանգավոր էր համարվում, այլև՝ անհնարին: Թիֆլիսի ազգային պաշտոնական մոտեցումը հրճվում էր այդ իրողությամբ, որ Կովկասի երկու մեծ ազգերն ու իրենց կուսակցությունները՝ Դաշնակցությունն ու Մուսավաթը համաձայնվել են ոչ միայն ազգային-տարածքային ինքնավարության, այլև համադաշնության հարցերում: Վրացական կողմը ենթադրում էր, որ երկու ազգերը կանգնել են վերջապես փոխադարձ համաձայնեցման «ճշմարիտ ուղու» վրա, որն էլ իր հերթին հնարավոր էր իրականացնել պայմանագրային եղանակով: Այստեղից եզրակացվում էր, որ եթե հայերն ու մահմեդականներն են համաձայնության եկել, ուրեմն Կովկասի ժողովուրդների ապագան ապահովված է[151]:

Պետք է առանձնացնել այն կարևոր հանգամանքը, որ վրացական կողմը հենց սկզբից իրեն էր վերապահում Կովկասի գլխավոր ազգի, ազգային հարցի լուծման առաջնորդի պատասխանատու դերը և այդպիսով շատ նրբորեն Կովկասում ազգային հարցի լուծման նշանակությունը բարձրացվում էր համառուսաստանյան մասշտաբի, ավելին, հետևություն է արվում, որ Համառուսաստանյան ժողովրդավարական դաշնային հանրապետության կազմավորումը սկսվում է հարավից՝ Անդրկովկասից: Տրվում էր նաև գլխավոր հարցը, թե անդրկովկասյան միության ստեղծումը չի՞ կտրի արդյոք երկրամասը մնացած Ռուսաստանից[152]:

Դաշնակցություն կուսակցությունը ներկայացնող Արտ. Չիլինգարյանը համոզված էր, որ ընդհանուր կազմալուծման, քայքայման խորացող գործընթացների մեջ, բազմացեղ և բազմալեզու Ռուսաստանում միակ ամուր վստահելի կապերը, որ կարող են դիմակայել դեպքերի խորտակիչ ազդեցությանը, ազգային կապերն են, միակ «անխորտակելի հասարակական միաւորը՝ ազգութիւնը»: Արվում էր և ժամանակի թելադրանք եզրակացությունը, թե ընդհանուր փլուզումը կարող է կանգնեցնել

[150] Республика, 1917, 2 ноября, N 96.
[151] Տե՛ս նույն տեղում:
[152] Տե՛ս նույն տեղում

միայն «ազգային իշխանութիւնը» կամ «իշխանութեան ազգայնացումը»[153]: «Հայ ժողովուրդը պարտաւոր է այսօր եթէ կազմակերպել մի ազգային իշխանութիւն, մի ազգային կառավարութիւն, որի գոյութիւնը ներկայ համատարած անարխիայի մէջ և գալիք անխուսափելի փոթորիկների հանդէպ հրամայական անհրաժեշտութիւն է մեզ համար»[154]:

Ավելացնենք, որ այս մոտեցումը ծնվել էր Թիֆլիսի հայոց ազգային համախորհրդակցության միջավայրում, մինչև բոլշևիկյան հեղաշրջումը, բայց քանի որ Արտ. Չիլինգարյանի «Քաղաքական վերածնության ճանապարհին» խորագիրը կրող հոդվածը հրապարակվել էր 1917 թ. նոյեմբերի 1-ին, ուստի լիարժեք կերպով արտացոլում էր Անդրկովկասի բոլշևիկյան հեղաշրջմանը հաջորդած քաղաքական փուլի գլխավոր հարցադրումների տրամադրությունը: Փաստվում էր երեք կարևոր հանգրվան. 1) հայկական ազգային իշխանության ձևավորման հրամայականը, 2) այն, որ վտանգված է հայ ժողովրդի ֆիզիկական և քաղաքական ազատությունը և 3) այդ ֆիզիկական, քաղաքական ազատությունը կարելի էր ապահովել ռազմական և քաղաքական միջոցներով: Ռազմական միջոց էր դիտվում ազգային կանոնավոր բանակի ստեղծումը, իսկ որպես քաղաքական միջոցների հիմնական նպատակ առաջադրվում էր հարևան ազգերի հետ համերաշխ համագործակցությունը: Վերջինս, ըստ դաշնակցություն կուսակցության տեսաբանի, պետք է հիմնված լիներ ոչ թե առանձին կուսակցությունների, այլ ժողովուրդների կամքը և ձայնը արտահատող ներկայացուցչական մարմինների համաձայնության վրա[155]: Ազգային-քաղաքական փոխադարձ համաձայնության գաղափարը, որը բոլշևիզմի դեմ համերաշխորեն և արագ միավորում էր Անդրկովկասի ազգային ուժերին ևս, իրավամբ կենսական անհրաժեշտություն էր դառնում*: Սակայն, Դաշնակցության տեսաբաններից մեկի եզրահանգումն այս պարագայում հակասություն էր պարունակում՝ բոլշևիկյան կուսակցության և Խորհրդային իշխանության ապազգային բնույթը չընդունելու և այդ նույն խորհրդայնացված Ռուսաստանի հետ համատեղ՝ «ռուսական պետականության» հիմքի վրա համաձայնություն կնքելու հիմնահարցի շուրջ: Մեկ անգամ ևս բացառվում էին անջատողական

[153] Տե՛ս Գործ, 1917, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիվ 9-10, էջ 165-166:
[154] Նույն տեղում, էջ 166:
[155] Տե՛ս նույն տեղում, էջ 168:
* 1917 թ. հուլիսին Պետրոգրադում կազմակերպվում է 19 «Ազգային սոցիալիստական կուսակցությունների խորհուրդ», որին մասնակցում էր նաև ՀՅԴ: Դա համառուսաստանյան ազգային-դեմոկրատական ուժերի համախմբման առաջին փորձերից էր ընդդեմ բոլշևիզմի: Խորհուրդը հետհուլիսյան քաղաքական փուլը համարում էր ռուսական ժողովրդավարական հանրապետության ժամանակաշրջան:

տրամադրությունները, և հույս էր հայտնվում, որ ազգային իշխանությունների ձևավորման ճանապարհով կարելի է հաղթահարել ստեղծված քաղաքական ճգնաժամը, վերջ տալ բոլշևիզմին և ազգային կառույցների հենքի վրա հասնել Սահմանադիր ժողովին: Տեսական առումով նոր և հիմնավորված կարելի է համարել այս մոտեցումը, եթե, իհարկե, դեպքերը գնահատվում են ժամանակի համատեքստում, երբ դեռ հույս կար կարճ ժամանակմիջոցում վերջ տալ բոլշևիզմին և վերականգնել օրինական իշխանությունը Ռուսաստանում:

Միևնույն է, անհնար էր թաքցնել տողերի արանքում հստակ կարդացվող նվիրական երազանքը՝ այն, որ անգամ Ռուսաստանյան ժողովրդավարական դաշնային հանրապետության կազմում վերջապես հնարավոր կլինի ինքնուրույն կերտել ազգային կյանքը: Դրան ավելանում էր բոլշևիկյան իշխանության կարճատևությունն ընդունելու գործոնը:

Ուշագրավ է, որ Արտ. Չիլինգարյանի կողմից քննադատվում էր ազգերի ինքնորոշման իրավունքի հռչակումը, որպես իր բացարձակ իմաստի դրսևորում, այսինքն՝ որպես ազգերի անջատման, մեկուսացման բարձրագույն իրավունք: Տեսականորեն ընդունելով «վեհապետական իրավունքի», ազգերի ինքնիշխանության սկզբունքը որպես պետության միակ սուբյեկտի՝ նա ազգերի ինքնորոշման իրավունքի բացարձակ կիրառումը ժամանակակից հետամնաց Ռուսաստանում համարում էր հետընթաց շարժում, որը այնտեղ ապրող և անջատվող ժողովուրդներին մղելու էր ետ, դեպի միջնադար: Մարդկության տնտեսական և մշակութային զարգացման տեսանկյունից վնասակար և կործանարար էր համարվում այն գործընթացը, երբ քանդվում էր հզոր և հսկայածավալ պետությունը և, նրա ավերակների վրա առաջանում են բազմաթիվ անկախ, փոքրիկ պետություններ: Նա խոշոր պետությունները համարում էր պատմական մեծ և արյունոտ պայքարի արդյունք, որոնք հակառակ իրենց ծագումն ու կազմավորումը պայմանավորող զարհուրելի փաստերին, դաժան գործոններին, համամարդկային առաջադիմության տեսակետից դրական իրողություններ են և որ միանգամայն համապատասխանում են տնտեսական զարգացման երկաթե օրենքներին: Ուստի և Ռուսաստանի անդամահատումը դիտարկվում էր որպես հետադիմություն, որից կտուժեին առավել կամ պակաս չափով Ռուսաստանի բոլոր ժողովուրդները: Գերագնահատվում էր մեծ ու միասնական պետության պահպանման անհրաժեշտությունը և խորհուրդ էր տրվում յուրաքանչյուր ազգին զգուշորեն կիրառել ազգերի ինքնորոշման իրավունքը: «Այս պետք է լինի ընդհանուր անդրդուելի նախապայման Ռուսաստանի բոլոր

ժողովուրդների ազգային քաղաքական վերածնութեան գործում»[156],– եզրակացնում էր Արտ. Չիլինգարյանը:

Այսպիսով՝ նաև հստակ տարանջատվում էին «ժողովուրդների բանտ», ցարական Ռուսաստանի և ժողովրդավարական ժամանակավոր կառավարության հռչակած ազգային քաղաքականությունները: Հակասական և տարօրինակ էր այն, որ Դաշնակցությունն առայժմ նույնացնում էր ժողովրդավարական Ռուսաստանի և նորաստեղծ ժողովրդական կոմիսարների խորհրդի ու Վ. Լենինի որդեգրած ազգային քաղաքականությունները, փաստորեն նույնությամբ կրկնվում էր Վ. Լենինի հայտնի դրույթը՝ ազգերի ինքնորոշման նպատակահարմարության վերաբերյալ:

Իրականություն էր նաև այն, որ երկու մեծ արկածախնդրությունների՝ կոռնիլովշչինայի և բոլշևիզմի արդյունքում ավելի աճեց ինքնուրույն, անկախ իրավական ազգային միավորների ստեղծման գործընթացը, որոնց կրողները նույնիսկ փոխադարձ համաձայնագիր ու պայմանագրեր էին կնքում:

Դաշնակցությունը ևս նմանատիպ առանձին, անջատ և հեղինակավոր իշխանությամբ օժտված միավորները համարում էր ստեղծված իրավիճակից դուրս գալու լավագույն, բայց և ժամանակավոր միջոց: Քանի որ դրանք անցումային քաղաքական փուլի դրսևորումներ էին դիտվում, ուստի և կուսակցության կողմից ներկայացվում էին որպես ինքնապաշտպանական յուրահատուկ օղակներ, որոնց արժեքը և նշանակությունը չարժեր գերագնահատել: Հետևություն էր արվում, որ իրավական կյանքի ու պետականության կառույցի ձևերի առաջին իսկ դրսևորումների պահին, դրանք որպես ձևափոխված բաղկացուցիչ մասնիկներ անմիջապես համառուսաստանյան դաշնային հանրապետության մաս կկազմեին[157]:

1917 թ. հոկտեմբերին կայացած ՀՅԴ անդրկովկասյան շրջանային ժողովը ծրագրային որոշում է կայացնում ապագա համադաշնության կառուցվածքի մասին: Նպատակահարմար էր դիտվում եռաստիճան համակարգը՝ կանտոն – Անդրկովկասյան միություն – Համառուսաստանյան ժողովրդավարական դաշնային հանրապետություն: Քաղաքական այդպիսի կազմակերպման համար հիմք էր ընդունվում հետևյալ հիմնավորումը. Ռուսաստանը բարդ ամբողջություն է՝ կազմված խիստ տարբեր, այդ թվում՝ կուլտուր-ազգային միավորներից: Այդ դեպքում ռուսաստանյան պետության մաս կազմող երեք համեմատաբար ոչ մեծ երկրները, ոչ միայն իրար մեջ, այլև մնացած Ռուսաստանի նկատմամբ հակադրություն էին ստեղծում: Դրանք են՝ Վրաստանը, Հայկական սարահարթը և

---

[156] Տե՛ս Գործ, նույն տեղում, էջ 168-169:
[157] Տե՛ս Молот, 1917, 10 ноября, N 32.

Արևելյան Անդրկովկասը կամ թաթարական շրջանը: Ժողովրդավարության տեսակետից կուսակցությունն անթույլատրելի էր համարում, որ այդ երկրները ղեկավարվեն կենտրոնացման սկզբունքով, առաջարկում էր, որ դրանք համարվեն Համառուսաստանյան ժողովրդավարական-դաշնային հանրապետության կանտոններ: Այդպես էր միայն հնարավոր ապահովել այն բնական կապը, որը պետք է գոյություն ունենար դաշնային ամբողջության և նրա մաս-կանտոնների միջև[158]:

Այսպիսով՝ պետք է եզրակացնել, որ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, բոլշևիկյան հեղաշրջումից հետո անմիջապես, շարունակում էր կանգնած մնալ միասնական, Համառուսաստանյան դաշնային ժողովրդավարական հանրապետության կազմում ազգային ինքնուրույն վարչական կառույցի ձևավորման տեսակետի վրա:

Համառոտ անդրադարձ կատարենք խնդրի անմիջական նախապատմությանը, երբ ցարիզմի տապալումից հետո առաջին անգամ փորձ էր արվում ազգային տարածքներ ուրվագծել:

Անդրկովկասի բնակչության քանակը և տեղաբաշխումը 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ հետևյալ պատկերն էր ներկայացնում[159]: Երկրամասի ընդհանուր բնակչությունը կազմում էր 7.008.348 մարդ, որից հայեր՝ 1.786.794 (25,49%), քրիստոնյա վրացիներ՝ 1.645.292 (23,47%), մահմեդական վրացիներ՝ 139.281 (1,98%), մահմեդականներ (թուրքեր, թաթարներ, ղարափափախներ, թուրքմեններ)՝ 2.070.829 (29,54%), այլ մահմեդականներ (քրդեր, թաթեր, թալիշներ, պարսիկներ, լեզգիներ)՝ 451.190 (6,45%), այլ ժողովուրդներ (ռուսներ՝ 452.352 (6,17%), ասորիներ՝ 106-180 (1,5%), հույներ՝ 95.884 (1,37%), հրեաներ՝ 65.794 (0,94%), քուրդ եզդիներ՝ 56.977 (0,8%), եվրոպական ժողովուրդներ՝ գերմանացիներ, ֆրանսիացիներ, ռումիններ, լեհեր, լիտվացիներ և այլն, 50.218 (0,71%), Հյուսիսային կովկասցիներ (քրիստոնյաներ)՝ 46.922 (0,69%), գնչուներ՝ 40.535 (0,57%), ընդամենը՝ 914.962 (13.07%)[160]: Նշենք, որ այստեղ արտացոլված չեն վրացախոս ու կաթոլիկ հայերը, ուստի և հայերի թիվն Անդրկովկասում քիչ է ներկայացված: Այդ միտումը շարունակվում էր նաև խորհրդային տարիներին:

---

[158] Տե՛ս Молот, 1917, 27 октября, N 21.

[159] Որպես գլխավոր աղբյուր է ծառայել «Кавказский календарь»-ի 1917 թ. հունվարի 1-ի վիճակագրությունը, որը հիմնվում էր 1886 թ. կամերալ ցուցակների և 1897 թ. համառուսաստանյան ընդհանուր մարդահամարի տվյալների վրա:

[160] Տե՛ս Ս. Արարատյան, Ճշմարտություններ Կովկասի մասին, Բուխարեստ, 1941, էջ 8-9:

Հայոց ազգային համախորհրդակցության 1917 թ. հոկտեմբերի 6-ի (19) նիստին Անդրկովկասի ազգային-վարչական բաժանումների խնդիրը ներկայացվել էր երեք ծրագրով: Առաջին ծրագրի հեղինակ Ստեփան Կամսարականը առաջարկում էր երկրամասի հայաբնակ վայրերից ստեղծել մի վարչական միավոր, ՀՅԴ ծրագիրը առաջարկում էր երեք նահանգների պահանջը, իսկ երրորդը՝ ս.-դ. ծրագիրը՝ կանտոնների սկզբունքը: Համագումարն ընդունում է փոխզիջումային բանաձև, ըստ որի նահանգային զեմստվային միությունները պետք է կազմված լինեին գավառական միավորներից, որոնք համաձայն համառուսաստանյան պետական պահանջների և ազգերի տնտեսական շահերի, փոփոխություններ պետք է կրեին: Բանաձևը ենթադրում էր հայկական և թաթարական գավառների տարանջատում:

Ա. Շեյխ-Ուլ-Իսլամովը, որպես Օզակոմին կից ստեղծված վարչական սահմանաբաժանումների հանձնաժողովի անդամ, ներկայացնում էր մահմեդականների տեսակետը, ըստ որի առաջարկվում էր Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը տրոհել 12 գավառների-կանտոնների, այնպես, որ երեք գավառներ՝ Քարվանսարայի (Իջևան), Գանձակի և Շուշիի, ունենան հայկական մեծամասնություն, Զանգեզուրի գավառը մնա անփոփոխ, իսկ 8 գավառներ՝ Կարեագինի, Ղազախի, Ելիզավետպոլի, Աղդամի, Արեշի, Նուխիի, Վերին Ղազախի և Ջևանշիրի, ունենան թուրք-թաթարական մեծամասնություն: Ժամանակավոր կառավարության հետ 1917 թ. ընթացքում համաձայնեցված նախագծի համեմատ այն բացահայտ հակահայկական բնույթ էր ստացել: Երևանի նահանգը ևս, նախարարական ծրագրի համեմատ ոչ հայանպաստ բաժանումների էր ենթարկվելու: Մահմեդական ծրագրով այն բաժանվել էր 7 գավառների, այնինչ ռուսաստանյանն այդ նահանգից առանձնացնում էր Ալեքսանդրապոլի գավառը, իսկ նահանգի մնացած մեծագույն մասը բաժանում 6 գավառի, որոնցից երեքը՝ հայկական, իսկ երեքը՝ թաթարական գերակշիռ բնակչությամբ[161]:

Սարահարթը ևս զատվում էր տափաստանից, այն առավելապես հատկացվում էր հայերին, Երևան քաղաքը մնում էր հայկական բնակչության գերակշռությամբ համանուն գավառում: Մահմեդական ծրագիրը Երևանի 7 գավառներից երեքը՝ Էջմիածնի, Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի, հատկացնում էր հայերին, իսկ չորսը՝ Երևանի, Սուրմալուի, Նախիջևանի և Շարուրի՝ թուրքերին: Այսպիսով, մահմեդական նախագիծը Երևան քաղաքը փորձում էր շրջապատել թաթարական գյուղերով, որով

---

[161] Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, 1901-1918, Վենետիկ, 1926, էջ 639-643:

և հակակշիռ էր ստեղծում քաղաքի բնակչության հայկական մեծամասնության դեմ՝ դրանով հակադրվելով նաև Երևանի նահանգն ու Արևելյան Այսրկովկասի սարահարթը նախարարական նախագծով հայացնելու միտումներին:

Ավելացնենք, որ կանտոն-գավառը պետք է ընդգրկեր 50-200 հազ. բնակչություն, ազգային մեծամասնությունը պետք է կազմեր ոչ պակաս քան 80%-ը[162]:

Մահմեդական-թաթարական առաջարկները դեմ էին հայկական կենտրոնաձիգ նպատակներին: Գլխավոր խնդիրը հայ բնակչությանը մասնատված վիճակի մեջ պահելն էր. ստացվում էր, որ միակ միատարր օղակը գավառն էր: Այդ դրության հետ կարելի էր հաշտվել, եթե հայկական և թաթարական շրջանները մնային իբրև Ռուսաստանյան դաշնային հանրապետության մասեր, եթե կողմերը հրաժարվեին ինքնավարության ձգտումներից: Այս պարագայում երկու ազգերն էլ պետական ընդհանուր տանիքի տակ կշարունակեին իրենց տարանջատված համագոյակցությունը:

Հեռատես, լայն մտահորիզոնի տեր քաղաքական գործիչ, սպեցիֆիկ Դ. Անանունը գտնում էր, որ բարի կամքի դրսևորման դեպքում հնարավոր էր այդ փուլում համաձայնեցնել նախարարական և մահմեդական նախագծերը, և դա կապում էր ինչպես Ռուսաստանի ներքին, այնպես էլ միջազգային զարգացումների հետ: Բոլոր դեպքերում, նա համոզված էր, որ *«առանց դրսի ոյժերի միջամտութեան լուծեն մեզ ու թուրքերին շահագրգռող խնդիրները: Սա կնշանակէ մշտական բարի դրացիութիւն և փոխադարձ վստահութիւն»* (ընդգծումը մերն է - Վ.Մ.):

Ուշադրության արժանի են Դ. Անանունի գնահատականները ազգային խնդրում բոլշևիկյան իշխանության հնարավոր դերակատարության հարցի շուրջ: Նրա կարծիքով, եթե մեծամասնականներն ուժեղ լինեին Անդրկովկասում, ապա տեղական քաղաքական զարգացումները կընթանային կենտրոնի հետ համաձայնեցված ու համընթաց: «Գուցէ պարադոքսալ թայ շատերին,- նշում էր Դ. Անանունը,- բայց մեր խորին համոզմունքով, եթե Անդրկովկասում գերակշռէր Դաշնակցութեան (հայկական) ազդեցութիւնը, ապա մեր երկիրը չէր ծառանալ ռուսական կենտրոնի դեմ, կը համակերպուէր մեծամասնական իշխանութեան: Այսպէս ենք ասում այն պատճառով, որ արտաքին վտանգի և դրացիական գժտութեան երեսից հայերը կենտրոնաձիգ էին և չէին կամենալ բաց թողնել ռուսական փէշը, եթե այն ինքը ջխուսափէր հայերի ձեռքից»[163]: Իրա-

[162] Տե՛ս նույն տեղում, էջ 644-645:
[163] Տե՛ս նույն տեղում, էջ 660-661:

կանում, Անդրկովկասում գերակշռում էր ոչ թե Դաշնակցության, այլ վրացական մենշևիզմի ազդեցությունը: Ա. Չխենկելին Պետրոգրադի օգոստոսյան խորհրդակցության ժամանակ հայտարարել էր, որ եթե Ռուսաստանում հաղթանակի ռեակցիան, Կովկասը կդառնա հեղափոխության Թավրիզը, այսինքն՝ տեղի կունենա այն, ինչ կատարվել էր Իրանական հեղափոխության ժամանակ, երբ հեղափոխական Թավրիզը հակադրվել էր միապետական Թեհրանին և հասել սահմանադրության ընդունմանը: Սակայն, Ռուսաստանում՝ հոկտեմբերին, Պետրոգրադը Թեհրանի դրոշակը չէր պարզել, այլ ընդհակառակը՝ բոլշևիկյան ծայրահեղական դրոշը: Թվում էր թե այս պայմաններում Անդրկովկասը չէր կարող Թավրիզը դառնալ, բայց դա տեղի ունեցավ: Վրաց մենշևիկները Անդրկովկասը դարձրին Թավրիզ, այսինքն՝ կտրեցին Ռուսաստանի կենտրոնական իշխանությունից և փորձեցին իրենց ձեռքով հաշտեցնել երկրամասի ազգերին: Այս ծրագրին էին փորձում հակադրվել Ստ. Շահումյանն ու Բաքվի իշխանությունը:

Մինչև բոլշևիկյան հեղաշրջումը, վրացական մենշևիկների առաջնորդները կարծես հաշտվել էին այն մտքի հետ, որ Վրաստանի հայկական տարրի գերակշռությամբ որոշ տարածքներ պետք է մտնեն հայկական մասի մեջ:

1917 թվականին «Վրաստան» կոչվող տարածքի վրա վրացական կողմը հաշվում էր 2.402.230 մարդ բնակչություն, որից վրացի – 1.615. 216 (67,2%), հայեր – 279.975 (11,6%), ռուսներ – 116.775 (4,8%), օսեր – 95.587 (3,9%), թուրքեր – 85.149 (3,6%), աբխազներ – 40.393 (1,8%), այլ ազգեր (գերմանացիներ, հույներ և այլն) – 169.145 (7,1%): Արևելյան Վրաստանի առանձին ազգերի տոկոսային հարաբերությունն այլ էր: Վրացիներն այստեղ կազմում էին 44,6, հայերը՝ 21,5, ռուսները՝ 8,5, օսերը՝ 7,9, թուրքերը՝ 10,5, այլ ազգերը՝ 7,0 տոկոս: Ազգային տեսակետից խայտաբղետ Վրաստանում ազգային փոքրամասնությունները կազմում էին բնակչության 30 %-ը: Այս տվյալները հրապարակվել են 1936 թ. հրատարակված Գ. Խաչապուրիձեի աշխատության մեջ, ստալինյան վարչակարգի և գաղափարախոսության վերելքի շրջանում, և եթե անգամ որոշ թվեր ավելացվել ու պակասեցվել են, միևնույն է, պատկերն ավելի օբյեկտիվ է, քան վերջին տասնամյակներին է ներկայացվում[164]: «Кавказский календарь»-ի 1916 թ. հունվարի 1-ի վիճակագրական տվյալների համաձայն միայն Թիֆլիսում հայ բնակչության թիվը կազ-

[164] Տե՛ս Г.В. Хачапуридзе, Борьба за пролетарскую революцию в Грузии, очерки, 1917-1921, Тбилиси, 1936, с. 288.

մում էր 411.700 մարդ՝ 581.000 վրացիների, 106.500 մահմեդականների դիմաց[165]:

Հայկական տարածքների իրացումը առերես նպաստավոր, բայց և ներքին պայթունավտանգ որոշում էր հայության համար այն իմաստով, թե հայ հասարակությունն ինչպես էր պատկերացնում և գիտակցում ազգային շահը: Դիպուկ է արտահայտվել Դ. Անանունը, թե վրացիները զիջում են, երբ ավելի մեծ զիջում են ակնկալում հայերի կողմից: Այդ մեծ զիջումն այն էր, որ «հայերը հաւաքելով իրանց փէշերը, կամենում են առանձնանալ հայկական սարահարթում և այսպիսով Թիֆլիսի նկատմամբ դառնում են երկրորդական քաղաքացիներ: Հայերը, կտրուելով Թիֆլիսից եւ կենտրոն փնտրելով, օրինակ՝ Երեւանում, այլևս կոտրում են Վրաստանի հայութեան զգացումը, մեկուսացնում են նրան և ստիպում, որ հայութեան այդ հատվածը համապատասխան ընթացք բռնէ իրան հիւրընկալող երկրում: Սա մի անպիսի հանգամանք է, որի համար կարելի է զոհել Ջաւախքն ու Լոռին: Այն հայերը, որոնք անպատճառ կամենում են ամրանալ ազգային տերրիտորիայի վրա, հասկանալի է, որ պիտի հաշտին Թիֆլիսից հրաժարուելու մտքի հետ: Նման հայերը գիւղացիական մտայնութեան տէր մարդիկ են և առավելապէս դուրս են գալիս Հ.Յ. Դաշնակցութեան շարքերից: Սրանց աւելանում են իրանց դասակարգային շահին ու դերին անգիտակից հայ բուրժուաները: Միմիայն հայ սոցիալ-դեմոկրատիան է, որ ունենալով իր ուրույն ազգային քաղաքականութիւնը և գերակշիռ տեղ յատկացնելով այդ քաղաքականութեան մէջ տնտեսական խնդրին, չի ուզում հրաժարուել Թիֆլիսից և այդ մասին բարձրաբառ յայտարարեց Ազգային համախորհրդում»[166]: Հայ սպեցիֆիկների առաջնորդը Անդրկովկասի նման վարչական բաժանումն անբավարար էր գնահատում հայության համախմբման իմաստով և գտնում էր, որ դրա հետ կարելի է համակերպվել միայն անճարության շնորհիվ[167]:

Հայ ժողովրդական կուսակցությունը ևս, իրադարձությունների անսպասելի և սրընթաց զարգացումների ազդեցությամբ, համապատասխան հապճեպ եզրահանգումների էր գալիս: Անիրական էր հատկապես երկրամասի ազգերին միանգամից մեկտեղելու, համերաշխելու և ընդհանուր գիծ ու համաձայնություն մշակելու վերաբերյալ առաջարկը: Հայ հասարակության պարագայում կուսակցությունը կողմնակից էր Թիֆլիսում հոկտեմբերին ստեղծված Հայոց ազգային խորհրդի կողմից համազգային օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի անհապաղ հրավիրմանը: Հ. Առաքելյանն իրավացի պահանջ էր ներկայացնում Ազգային խորհրդին՝ որպես գործադիր մարմնի, այն հարցում, որպեսզի վերջինս չկրկնի կուսակցական մարմնի վերածված Ազգային բյուրոյի արատավոր նախադեպը և Արևելահայոց ազգային համագումարի կողմից ընտրված բազմակուսակցական Ազգային խորհուրդը ևս չվերածի Դաշնակցության կուսակցական կառույցի և ենթարկվի օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի որոշումներին[168]:

35 անդամներից բաղկացած Ազգային ժողովի անհապաղ հրավիրման մասին Հ. Առաքելյանի առաջարկը արվել էր նոյեմբերի 8-ին (21), այսինքն՝ Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորումից առաջ՝ երկրամասային իշխանության կազմավորման փուլում, երբ մի կարճ ժամանակահատվածի համար՝ մինչև համառուսաստանյան Սահմանադիր ժողովի հրավիրումը, հնարավոր էր համարվում ազգային ներկայացուցչական մարմինների ստեղծումը: Եվ այդ գործում մեծ տեղ էր հատկացվում Անդրկովկասի ազգային խորհուրդներին, մասնավորապես՝ հայկական և մահմեդական ազգային մարմիններին (վրացական ազգային խորհուրդը ստեղծվեց ավելի ուշ – Վ. Մ.):

Ուշագրավ է, որ Անդրկովկասյան կոմիսարիատը մինչև վերջ՝ մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումն ու Սեյմի բացումը, ինքնակամ իր վրա էր վերցրել երկրամասի օրենսդրական նախաձեռնությունը և չնայած իր իսկ կողմից հռչակված ժամանակավոր բնույթին, այնուամենայնիվ, հանդես եկավ մի շարք հռչակագրերի և օրենքների ընդունմամբ: Սահմանադիր ժողովի անդրկովկասյան պատգամավորների ընտրություններից հետո, 1917 թ. նոյեմբերի վերջին փաստորեն, Կոմիսարիատը պետք է դադարեցներ իր գործունեությունը՝ ձևավորելով օրենսդրական մարմին: Բայց դա տեղի չունեցավ, Կոմիսարիատն իր օրենսդրական ֆունկցիաները Սեյմին փոխանցեց միայն 1918 թ. փետրվարի 10-ին՝ այդ հանգամանքը բացատրելով Սահմանադիր ժողովի նկատմամբ ժողկոմխորհի վարած անորոշ մարտավարությամբ:

Վրացամետ «Республика»-ն դեկտեմբերի կեսերին դեռ լիահույս էր, որ մոտ ապագայում Անդրկովկասը պետք է ունենա լիարժեք ժողովրդական ներկայացուցչություն: Այստեղից եզրակացվում էր, որ տեղերում իշխանության կազմակերպման միջոցների և բնույթի վերջնական մշակումը պետք է պատկաներ ազգային սահմանադիր ժողովներին: Դրանք հրավիրվելու էին ազգային-տարածքային սկզբունքի հիման վրա: Առաջնորդվելով տեղական ազգային շահերով, միայն այդ մարմիններին էր իրավունք վերապահվում մանրամասնել և իրագործել ռուսաստան-

---

[165] Ա-Դո, Հայության երկունքը, էջ 82-83:
[166] Դ. Անանուն, նույն տեղում, էջ 635-636:
[167] Տե՛ս նույն տեղում, էջ 630:

[168] Տե՛ս Մշակ, 1917, 8 նոյեմբերի, թիվ 238:

յան մեծ հեղափոխության հռչակած կարգախոսները[169]: «Республика»-ն, փաստորեն, ՀԺԿ առաջարկից մեկ ամիս հետո, առավել խիստ, պաշտոնական դիրքերից պահանջում էր, որպեսզի մինչև համառուսաստանյան և տեղական-ազգային լիիրավ ներկայացուցչական մարմինների ձևավորումը, թույլ չտալ, որ իշխանության սուռոգատային, շինծու մարմինները՝ թե՛ Կոմիսարիատը և թե՛ ազգային խորհուրդներն, հակասությունների տեղիք տային բազմազգ Անդրկովկասում: Ազգային խորհուրդներին, որոնց գործունեությունը դրական էր գնահատվում, իրավունք էր վերապահվում առայժմ համագործակցել և ենթարկվել Կոմիսարիատի որոշումներին, նպաստել նրա գործունեությանը[170]:

Ինչպես տեսնում ենք, բոլշևիկյան հեղաշրջումից հետո, Անդրկովկասում ազգային հարցի զարգացումները, այդ թվում և վարչական սահմանաբաժանումների, զեմստվոների խնդիրները սերտորեն շաղկապվում էին երկրամասում ազգային իշխանության ստեղծման հիմնահարցի հետ: Որքան էլ Անդրկովկասյան կոմիսարիատն արտաքինից՝ իր ազգային կուսակցական ներկայացուցչական կազմով փորձեր երկրամասի գլխավոր ժողովուրդների համամասնության, հավասարության պատրանք ձևավորել, միևնույն է, այն լեգիտիմ, ընտրված մարմին չէր: Այդ իսկ պատճառով առաջնահերթ և կենսական հիմնախնդիր էր առաջադրվում ազգային սահմանադիր ժողովների, լայն ներկայացուցչական մարմինների շուտափույթ հրավիրումը:

Միանգամայն հասկանալի է նաև այն հանգամանքը, թե ինչու ՀՅԴ-ից հետո հայ իրականության մյուս ազդեցիկ քաղաքական ուժը՝ ՀԺԿ էր առաջինը բարձրացնում Ազգային ժողովի հրավիրման անհրաժեշտությունը: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդում գերակշիռ մեծամասնություն էր ձեռք բերել Դաշնակցությունը, որը Փետրվարյան հեղափոխությունից հետո հատկապես, չէր թաքցնում հայ հասարակաքաղաքական, ազգային կյանքում միանձնյա իշխելու իր մտադրությունը: Այդ ճանապարհին վերջինս լուրջ հակակշիռ էր տեսնում ի դեմս Հայ ժողովրդական կուսակցության գործունեության:

Ի դեպ, ուշագրավ զուգադիպությամբ, ՀԺԿ-ը ռուսաստանյան պետության ժողովրդավարացման ճանապարհին հայ իրականության մեջ ստեղծված միակ ազգային-քաղաքական նոր կուսակցությունն էր, որն այժմ էլ՝ 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ձեռնամուխ էր լինում Թիֆլիսի և Բաքվի երկու ազգային քույր կուսակցությունների միավորմանը և այդ նպատակով հրավիրում է կուսակցության համագումար:

[169] Տե՛ս նույն տեղում:
[170] Տե՛ս նույն տեղում:

Ավելին, դա հետհոկտեմբերյան փուլի միակ կուսակցական համագումարն է հայ իրականության մեջ: Պատճառները թերևս երկուսն են. 1. կուսակցական կազմակերպական և գաղափարական ձևավորումն ավարտին հասցնելը և 2. հայ իրականության մեջ Դաշնակցությանն ընդդիմադիր ուժի ստեղծումը:

Համառոտ անդրադառնանք հայ հասարակական-քաղաքական կյանքի այդ նշանակալից տեղաշարժին, մանավանդ, որ պատմական այս փուլում է վերջնականապես ձևավորվում ՀՅԴ և ՀԺԿ հակասությունների ամբողջությունը, որը լիարժեք բացահայտվում է 1918-1920 թթ. ընթացքում՝ արդեն պետականության մակարդակով:

1917 թ. հոկտեմբերի 27-ին (նոյեմբերի 10) Բաքվի Մարդասիրական ընկերության դահլիճում, Մ. Պապաջանյանը և Ի. Ամիրյանը զեկուցում են ՀԺԿ և Բաքվի Ազգային հայկական դեմոկրատական կուսակցության միավորման վերաբերյալ, ինչը ժողովի կողմից ընդունվում է մեծ ոգևորությամբ[171]:

Բաքվի ազգային-դեմոկրատական կուսակցությունը ձևավորվել էր մոտ երկու ամիս առաջ, օգոստոսի վերջին և իր ծրագրային դրույթներով գրեթե չէր տարբերվում կադետական, մշակական ՀԺԿ-ից: Սահմանադիր ժողովի թեկնածուների ցուցակից պարզվում է, որ Ազգային դեմոկրատական կուսակցության վարիչների համաձայնությամբ, վերոհիշյալ կուսակցությունը հանդես չէր եկել առանձին ցուցակով և իրենց երկու անդամներին ներկայացրել էր որպես ՀԺԿ անդամներ:

Հոկտեմբերի 28-ին (նոյեմբերի 11) «Մշակ»-ը փաստում էր, որ երկու կուսակցությունների միացումը կայացել է: Բաքվի գործընկերների կողմից Մ. Պապաջանյանի հետ տարվող բանակցությունների ժամանակ ներկայացվել էր ընդամենը մեկ պահանջ-պայման, այն, որ ՀԺԿ-ը այլևս չկոչվի կադետական, այլ ներկայանա որպես ազգային կուսակցություն[172]: Կարևորում ենք այն հանգամանքը, որ երկու կուսակցությունների միավորման գաղափարը ՀԺԿ կենտրոնական կոմիտեի հոկտեմբերի 27-ի նիստում արել էր արևմտահայ Սահմանադիր-Ռամկավար կուսակցության կողմից լիազորված պրոֆեսոր Հ. Հակոբյանը: Քանի որ ՀԺԿ-ը որոշել էր մասնաճյուղեր հիմնել նաև Ռուսաստանից դուրս, ուստի ռամկավարների կենտրոնական խորհուրդը նպատակահարմար էր համարում համագործակցություն հաստատել նաև այդ երկու կուսակցությունների միջև: Այդ դեպքում Սահմանադիր-Ռամկավար կուսակցությունն իր

[171] Տե՛ս Մշակ, 1917, 27 հոկտեմբերի, թիվ 229:
[172] Տե՛ս նույն տեղում, 28 հոկտեմբերի, թիվ 230:

խորհրդով կդառնար Հայ ժողովրդական կուսակցության արևմտահայ ճյուղը:

Նույն նիստում որոշվեց նոյեմբերի 25 (դեկտեմբերի 8)-ին Թիֆլիսում հրավիրել ՀԺԿ երկրորդ համագումարը[173]:

Հոկտեմբերի 27-ի Բաքվի նիստը կարևորվում է նաև նրանով, որ Ս. Պապաջանյանի ելույթում բարձրացվում էր Կովկասի ազգերի դաշինքի խնդիրը, որպես հայրենիքի պաշտպանության գլխավոր միջոց: Նա ևս գտնում էր, որ ցարական վարչակարգը խոչընդոտել էր ժողովուրդների համերաշխությանը, «բայց այժմ մենք կատարեալ հնարաւորութիւն ունինք,– ընդգծում էր Ս. Պապաջանյանը,- համերաշխութիւն և համաձայնութիւն ստեղծելու կովկասեան ազգութիւնների մէջ, թեեւ ճիշդ է, դիւրին բան չէ շուտով փարատել հին թիւրիմացութիւններն ու անվստահութիւնը: Մեր նշանաբանը պէտք է լինի – պաշտպանել Կովկասը կովկասեան ազգերի միջոցով»[174]: Միաժամանակ ընդգծվում էր գլխավոր հարցադրումը, որ Կովկասը չի անջատվում Ռուսաստանից, ավելին՝ Կովկասի միջոցով ապահովվում է նաև Ռուսաստանի պաշտպանությունը, պարզ է՝ արտաքին թշնամիներից և, իհարկե, բոլշևիզմից: Ինչ վերաբերում էր հողային խնդրին և Ռուսաստանի ապագա պետական, վարչական կառուցվածքին, ապա ՀԺԿ այդ հարցերը թողնում էր Սահմանադիր ժողովի իրավասությանը, դրանց մեջ ակնհայտորեն տեսնելով Անդրկովկասի ազգային ուժերի անզիջում և վտանգավոր հակասությունները:

ՀԺԿ 2-րդ Համագումարը, չնայած պայմանավորվածությանը, բացվեց ուշացումով, դեկտեմբերի 20-ին, Թիֆլիսի երրորդ իգական գիմնազիայի շենքում: Համագումարի 32 պատգամավորները նախագահ ընտրեցին Ս. Պապաջանյանին, քարտուղար՝ Ստ. Մալխասյանին: Կուսակցության պատգամավորների զգալի պակասի պատճառով, համագումարն իրեն հայտարարեց է խորհրդակցություն և զբաղվում է, հիմնականում, ստեղծված ռազմա-քաղաքական իրավիճակի քննարկումներով: Դեկտեմբերի 26-ի նիստում զեկուցողներ Ս. Պապաջանյանի և Ս. Հարությունյանի մտորումները վերաբերում էին ռազմաքաղաքական պաշտպանության, հայկական, ինքնապաշտպանության կազմակերպման, ՀԺԿ կողմից Ազգային խորհրդին աջակցության հարցերին[175]:

Նույն օրն ընդունվեցին նաև երկու կարևորագույն բանաձևեր՝ Հայոց ազգային խորհրդի և Բաքվի Ազգային-դեմոկրատական կուսակցության մասին:

[173] Տե՛ս նույն տեղում, 29 հոկտեմբերի, թիվ 231:
[174] Նույն տեղում:
[175] Նույն տեղում, 22 դեկտեմբերի, թիվ 268:

ՀԺԿ խորհրդակցությունը որոշեց. 1) ճանաչել Ազգային ժողովի և Ազգային խորհրդի գերագույն իշխանությունը և բարձր հեղինակությունը հայ ժողովրդի ազգային գործերում. 2) աջակցել Ազգային խորհրդին իր գործունեության մեջ և 3) հորդորել Ազգային խորհրդին Ազգային ժողով գումարելու հարցում:

Ազգային-դեմոկրատական կուսակցության ծուլման վերաբերյալ բանաձևը պաշտոնապես հայտարարում էր երկու կուսակցությունների միավորումը[176]:

1917 թ. նոյեմբերին Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքի, ազգային ու ազգամիջյան հարաբերությունների կենտրոնական և ելակետային իրադրություններից մեկը *վրացական ազգային առաջին համագումարն էր:* Վերջինիս քաղաքական որոշումները, հիմնականում, դարձան երկրամասի ազգային դեմոկրատական կուսակցությունների ու նաև անդրկովկասյան Կոմիսարիատի մոտակա մարտավարության, քաղաքական կողմնորոշման, ռազմաճակատի պաշտպանության և այլ կենսական ներքին ու արտաքին հիմնահարցերի գործելակերպի ուղենիշն ու հիմքը:

1917 թ. նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 1) Թիֆլիսի պետական մեծ թատրոնում (հայազգի Զուբալովների շենքը) բացվեց վրացական ազգային համաժողովը: Անդրկովկասի տարբեր շրջաններից առաջին նիստին մասնակցում էին շուրջ 300 ներկայացուցիչներ՝ հեղափոխական-դեմոկրատական, ազգային-մշակութային կազմակերպություններից, քաղաքական կուսակցություններից: Չորսօրյա աշխատանքներից հետո, նոյեմբերի 23-ին (դեկտեմբերի 6) համագումարը փակվեց:

Համագումարի նախաձեռնությունը և կազմակերպումը ստանձնել էր վրացական միջկուսակցական ազգային խորհուրդը, որի նախագահ Ա. Չխենկելին էլ բացեց համաժողովը: Պետք է նշել, որ վրացական ազգային խորհուրդը, Վրաստանի քաղաքական ինքնավարությանը հասնելու նպատակով ակտիվ աշխատանքներ էր իրականացնում դեռ 1917 թ. հուլիսից սկսած: Օգոստոսի 3-25 ընկած ժամանակահատվածում սոցիալ-դեմակրատ մենշևիկների ջանքերով հրավիրված միջկուսակցական երրորդ ժողովը վերջնականապես ձևավորում է «Միջկուսակցական ազգային խորհուրդը» և Գործադիր կոմիտեն[177]:

Համագումարի նախագահ ընտրվեց Ն. Ժորդանիան: Ներկա էին Անդրկովկասյան կոմիսարիատի անդամները, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Մ. Պրժեվալսկին՝ իր շտաբով, հյու-

[176] Տե՛ս նույն տեղում, 28 դեկտեմբերի, թիվ 272:
[177] Տե՛ս Հորիզոն, 1917, 25 հոկտեմբերի, թիվ 227:

պատոսներ և դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, ԱՄՆ-ից և Պարսկաստանից, Ամենայն վրաց կաթողիկոս-պատրիարք Կիրիոն 2-րդը և այլոք[178]:

Ելույթներով հանդես եկան Կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորին, գեներալ Մ. Պրժեվալսկին, Ուկրաինայի ժողովրդական հանրապետության ներկայացուցիչ Կուցյակը, մահմեդականների կենտրոնական կոմիտեի անունից՝ Խ.-բ. Սուլթանովը, ռուսական մշակույթի և դպրոցի Անդրկովկասյան գործիչների ընկերության ներկայացուցիչ Գ. Բարաչը, Հայոց ազգային խորհրդի կողմից՝ Տ. Բեկզադյանը, աբխազական ժողովրդի անունից՝ Շերիպովը, հրեա բնակչության անունից՝ Օ. Գրուզենբերգը, աջարների անունից՝ Մամեդ բեկ Աբաշիձեն, ՀՅԴ ներկայացուցիչ Յաղջյանը, Մուսավաթի անունից՝ Ալի Կասիմովը, լեհական մամուլի ներկայացուցիչ, գրող Լ. Ցեկարսկին, Արևմտյան Անդրկովկասի մահմեդականների միության ներկայացուցիչ Ա.-բ. Պիպինովը, լիտվացիների անունից՝ Դայլիդան, ս.-դ. Հումմեթ (Հյումմաթ) կուսակցության կողմից Ա. Շեյխ-Ուլ-Իսլամովը, սոցիալ-ֆեդերալիստներից՝ Գ. Ոցխիլաձեն, ս.-դ. մենշևիկներից՝ Գ. Նատաձեն, Ն. Կարցիվաձեն, բոլշևիկ Ֆ. Մախարաձեն: Մեկ ուշագրավ փաստ ևս, կարդացվում է Թիֆլիսում Իսպանիայի փոխհյուպատոս Մ. Բերբերյանի ողջույնի հեռագիրը[179]: Համագումարը օրակարգի ընդունման հարցեր է ընդունում. 1) Ն. Ժորդանիայի զեկուցումը՝ քաղաքական դրության և վրացական ժողովրդի անելիքների վերաբերյալ, 2) Կ. Աբխազիի զեկույցը՝ ազնվականության ունեցվածքը ժողովրդին փոխանցելու մասին և 3) ընթացիկ հարցեր՝ զեմստվո, բանակի, դպրոցի, ղեկավարման և վարչակարգի ազգայնացում, պարենային խնդիր[180]:

Անդրկովկասյան և արտասահմանյան հյուրերի ելույթների բովանդակությունը հանգում էր վրաց ազգի հանդեպ սիրո, համերաշխության, զորակցության ցուցաբերման, վրացական դեմոկրատիայի նկատմամբ հիացական արտահայտություններին: Մի շարք ողջույնի խոսքերում, ինչպես օրինակ Ուկրաինայի ներկայացուցչի, վստահություն էր հայտնվում, որ վրաց ազգի պատմության մեջ կտրուկ շրջադարձ է տեղի ունեցել՝ «ժողովրդի լավագույն զավակները հավաքվել են որպեսզի արագացնեն սեփական պետական կյանքի ինքնուրույն կազմակերպման պահը»[181]: Ինչ վերաբերում է Ա. Չխենկելիի, Ն. Ժորդանիայի և Ե. Գեգեչկորիի ելույթներին, ապա համագումարի բացման նիստում արդեն, երբեք

[178] Տե՛ս Республика, 1917, 21 ноября, N 112.
[179] Տե՛ս նույն տեղում:
[180] Տե՛ս նույն տեղում:
[181] Տե՛ս նույն տեղում:

սոցիալիստ-մենշևիկներն էլ տարբեր երանգավորմամբ վստահաբար բարձրացնում էին Վրաստանի անկախության հարցը:

Ի դեպ, ավելացնենք, որ նիստերի դալիճում ծածանվում էր Վրաստանի ազգային դրոշը: Ե. Գեգեչկորին իր հավատարմությունը հայտնելով ռուսաստանյան մեծ՝ Փետրվարյան հեղափոխությանը, դեմոկրատիայի ուժերին, ընդգծում էր այդ հեղափոխության գլխավոր կարգախոսը՝ ռուսաստանյան բոլոր ազգերի լիակատար ազատությունը: Ն. Ժորդանիան վրաց ազգի հետագա գոյությունը կապում էր ազատ մշակույթի զարգացման հետ: Առավել արմատական էր Ա. Չխենկելիի հարցադրումը, որ «վրաց ազգը վերջապես պետք է հայտարարի իրեն քաղաքականապես ազատ»[182]: Վերոհիշյալ բոլոր վրացի մենշևիկ գործիչները, այդ թվում և Վլ. Գոբեչիան, որը գտնում էր, որ «այսուհետև Վրաստանը Ռուսաստանի սովորական պրովինցիա չէ, այլ ազատ նահանգ ռուսաստանյան դաշնային հանրապետության կազմում», միևնույն է այս համաժողովը նախորդ՝ հետփետրվարյան ազգային հարցի զարգացումների ամփոփումն ու գագաթնակետը դարձավ: Լիակատար անկախության և Ռուսաստանի հետ մնալու (ոչ բոլշևիկյան, իհարկե, - Վ. Մ.) հիմնահարցի գլխավոր հակասությունը դրսևորվեց հատկապես ուկրաինացու ելույթից հետո, որտեղ Փետրվարյան դեմոկրատական հեղափոխության նվաճումների փրկության միջոց էր առաջարկվում ոչ թե հակաբոլշևիկյան, այլ հակառուսական պայքարը: Այս գլխավոր հարցում, պատմական գործընթացների զավեշտն է իշխում, սակայն փաստ է, որ դեռ 1917 թ. նոյեմբերին կայացավ վրաց-ուկրաինական հակառուսական դաշինքը, ինչը անկախության պայքարի համատեքստում լիովին արդարացվում է: Այս և Ն. Ժորդանիայի ծրագրային ելույթներում շեշտվում էր հենց այն հանգամանքը, որ դարեր ի վեր թե՛ ուկրաինական և թե՛ վրաց ժողովուրդները հավատարիմ և երախտապարտ կերպով համագործակցել ու ապրել են ռուս ժողովրդի հետ, նրա հովանու ներքո և բոլշևիկյան հեղաշրջումն է, որ ստիպում է հեռանալ այդ Ռուսաստանից և ազգային նոր տարածքները կազմակերպելով ու ամրապնդելով պայքարել ժողովրդավարության, ազատության արժեքների համար: Ամեն ինչ ճիշտ է. սակայն 1917 թ. նոյեմբերին, եթե իրոք բարձրացվում էր միասնական ընտանիքում հարատևելու հիմնահարցը, առաջնայինը հենց ազատ, քաղաքական ապագայի առումով ոչ թե տարանջատումն էր, այլ միասնական ջանքերով բոլշևիզմին և անկայուն խորհրդային իշխանության տապալումը, ինչը միանգամայն հնարավոր էր իրականացնել: Առաջ անցնելով կարելի է եզրակացնել, որ հետհոկտեմբերյան անջատողական շարժումը

[182] Республика, 1917, 21 ноября, N 112.

խարխլվող Ռուսաստանում գործնականորեն ոչ թե ամրապնդեց, այլ փաստորեն վերջ տվեց Ռուսաստանի՝ որպես միացյալ պետության ժողովրդավարական զարգացմանը: Այդ է վկայում նաև Սահմանադիր ժողովի ցրումից հետո ոչ թե ռուսաստանյան պետականամետ ու հակաբոլշևիկյան ուժերի հետ համագործակցության, այլ տարանջատվելուն, ամեն գնով անկախանալուն «նպաստող» Թուրքիայի և Գերմանիայի հետ նույն վրաց սոցիալիստների անսքող հարաբերությունների հաստատումը: Եվ վերջապես, երկու տարի անց, խորհրդային պետությունը կարմիր դրոշով և քեմալականների հետ վերադարձավ Անդրկովկաս, երբ երկրամասում ամեն ինչ կտրուկ փոխվում էր և, հատկապես, ի վնաս հայության:

Ցավալին այն է, որ վրաց ազգային գործիչները վստահ և հետևողական քայլերով ընթացան մինչև 1918 թ. մայիսը, ռազմա-քաղաքական զարգացումները հնարավորինս օգտագործելով միմիայն վրաց ազգի շահերի համար՝ մոռանալով, օրինակ, այս համագումարում տված իրենց խոստումներն ազգերի բարեկամության և փոխօգնության մասին: Իսկ հայ ազգային գործիչները, Դաշնակցության ստվար մասը Անդրկովկասում դեռևս պահպանելով հզոր քաղաքական և տնտեսական ներուժը, նախաձեռնությունը կամովին հանձնեցին վրացիներին, ավելին՝ վրաց-թաթարական համաձայնությանը և անկախությունների հռչակմանը հասան անդառնալի կորուստներով:

Հայությանը բնորոշ հավատ և վստահություն էր արտահայտում, հատկապես դաշնակցական Յաղջյանի ելույթը: Նա համոզմունք էր հայտնում, որ «հայկական դեմոկրատիան ելնելով անգամ զուտ էգոիստական մղումներից, միշտ կլինի վրացական դեմոկրատիայի կողքին»[183]: Լավատեսությամբ էր ներշնչված նաև Հովհաննես Թումանյանը: Համագումարին ուղղված նրա ողջույնի խոսքը հատուկ հրապարակվում է «Республика» թերթում: Հ. Թումանյանը ևս վստահություն էր հայտնում, որ «հայկական և վրացական առանձին շրջանակներում եղած տարաձայնությունները ազատ կյանքի պայմաններում պետք է անհետանան...»: Կեցցե՛ ազատ Վրաստանը,- ազատ Ռուսաստանի ազատ ժողովուրդների միության մեջ»[184]:

Որոշ հայ գործիչների այսպիսի վերաբերմունքն արտահայտվում էր այն դեպքում, երբ Անդրկովկասի վարչական սահմանաբաժանումների և զեմստվոների հարցում վրացական գործիչները բացահայտ հակահայկական գիծ էին որդեգրել: Վերջին, թարմ հարձակումը հայության

[183] Տե՛ս նույն տեղում:
[184] Նույն տեղում, 24 ноября, N 114.

դեմ, որքան էլ զավեշտական է, բայց տեղի էր ունեցել Հայոց ազգային համագումարի առթիվ: Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատ քաղաքագլուխը հարկ չէր համարել անձամբ ողջունել հայ ժողովուրդը ներկայացնող համագումարը, հեռագիր էր ուղարկել: Վրացական թերթերը 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գրում էին, թե «հայերի այս համաժողովը վերջինը պիտի լինի Թիֆլիսում, եվ թող այսուհետև նրանք գտնեն իրենց հայրենիքը»[185]:

Ինչ վերաբերում է մահմեդական գործիչների ելույթներին, ապա այս համաժողովում ևս վերընթաց ապրող վրաց-թաթարական դաշինքն էր գովերգվում՝ համագումարի դահլիճում ձևավորվելով նոր դաշինքներ, նոր մարտավարություն:

Այսպես, առաջին հայացքից մանրուք թվացող փաստ է, բայց վրացի և մահմեդական գործիչների ելույթներում «Վրաստան», «Արևմտյան Անդրկովկաս» անվանումների շարքում բացակայում էր «Հայաստանը». Երևանի նահանգը հորջորջվում էր «Արևմտյան Անդրկովկաս» այն պայմաններում, երբ երեք գլխավոր ազգային ուժերը պարբերաբար իրար հավատարմության երդումներ էին տալիս և վստահեցնում, որ միայն միասնական ջանքերով կարելի է հասնել ազգերի երջանկությանը: Ըստ «Կասպի» թերթի՝ օրինակ՝ Ելիզավետպոլում 1917 թ. հոկտեմբերի վերջին կազմակերպվել էր հայ-մահմեդական ազգային կոմիտե, որը նպատակ էր դրել իրականացնել երկու ազգերի մերձեցումը և համատեղ գործունեությունն այդ ուղղությամբ[186]:

Նմանօրինակ հիացական, բարեկամական «մերձեցման» փաստերը բազմաթիվ են հետհոկտեմբերյան փուլում, երբ իներցիայի ուժով շարունակվում էր Փետրվարյան հեղափոխության հռչակած ազգերի իրավահավասարության ու եղբայրության մասին կարգախոսի ժամանակավրեպ ոգևորությունը:

Անթաքույց հակահայկական շեշտադրում էր ամփոփում «Արևմտյան Անդրկովկասի մահմեդականների միության ներկայացուցիչ Ահ.-բ. Պիպինովի հայտարարությունն այն մասին, թե «Արևմտյան Անդրկովկասի մահմեդականները միշտ էլ սերտորեն կապված են եղել վրացիների հետ,– ասում էր նա,– ցանկանում են ձեզ հետ համընթաց քայլել և ձեզ հետ ապրել»[187]:

Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են. մահմեդականներն ուզում էին համագործակցել և ապրել վրացիների հետ, բայց ոչ հայերի: Ա. Շեյխ-Ուլ-Իսլամովը նշում էր, օրինակ, որ ցարիզմի քաղաքա-

[185] Լեո, Անցյալից, էջ 333:
[186] Տե՛ս С. Беленький и А. Манвелов, էջ 170-171:
[187] Республика, 1917, 21 ноября.

կան և տնտեսական իմպերիալիզմից ազատագրվելուց հետո, մահմեդականները աջակցություն են ստացել վրացական դեմոկրատիայի կողմից: Նա վստահություն էր հայտնում անգամ, որ վրացական դեմոկրատիայի ուսերին է ծանրանում սոցիալական գաղափարների տարածման համաշխարհային դերն արևելքում՝ արևելյան ժողովուրդների շրջանում:

Քանի որ ազգային հարցի նկատմամբ անդրկովկասյան կառավարությունը ներկայացնող ազգային կուսակցությունների մարտավարությունը ձևավորվում էր նաև այս համագումարում, անհրաժեշտ ենք համարում համառոտ կանգ առնել երեք գլխավոր ելույթների օրագրային դրույթների վրա:

Ա. Չխենկելին գտնում էր, որ Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի քաղաքական ինքնուրույն միավորումների նախադեպը պետք է տարածել Անդրկովկասի վրա և այդ ուղղությամբ իրականացված առաջին գործնական քայլը Կոմիսարիատի ստեղծումն էր: Կոմիսարիատի հռչակագրում բարձրացված ազգային հարցի լուծման խնդիրը հնարավոր էր իրագործել առանձին ազգերի կողմից մշակված ծրագրերի համադրման ճանապարհով, ինչը Ա. Չխենկելիի կարծիքով հատկապես հրատապ էր դառնում Սահմանադիր ժողովի հրավիրման անորոշության պայմաններում: Մեր կարծիքով՝ Ա. Չխենկելին արդեն համոզվել էր, որ բարձրագույն համառուսաստանյան մարմնի և միացյալ պետության գաղափարն անվերադարձ անցյալում է, ուստի և վրացական ազգային համագումարի ամբիոնից վստահաբար հայտարարում էր. «հուսով ենք, որ համագումարը առաջինը չէ, նրան պետք է հետևի Վրաստանի սահմանադիր ժողովը»[188]: Նա հույս էր հայտնում նաև, որ ազգային հարցի լուծումը կիրականանա հեղափոխական դեմոկրատիայի առաջադրած ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքով, ըստ որի Վրաստանը կասի իր խոսքը: Պահանջը նույնն էր, որ Վրաստանը ստանա ինքնավարություն՝ օրենսդրական և վարչական ղեկավարման իրավունքով: Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ անկախության պահանջ, որին էլ նվիրվեց Ն. Ժորդանիայի ելույթը:

Նա նշում էր, որ զեկույցը՝ «ընթացիկ մոմենտը և վրաց ժողովուրդը» թեմայով, արտահայտում է Միջկուսակցական ազգային խորհրդի կազմում ընդգրկված վրացական բոլոր քաղաքական կուսակցությունների մոտեցումների հանրագումարը: Ելակետային հիմք ընդունելով Ռուսաստանի հետ միասնության հեռանկարը, և Ռուսաստանի միացման հարյուր տարին գնահատելով որպես պատմական անհրաժեշտություն, Ն. Ժորդանիան միաժամանակ, ընդգծում էր այն հանգամանքը, որ Վրաստանը կանգնած է երկընտրանքի առջև՝ արևե՞լք, թե՞ արևմուտք: Եվ քանի որ վրացիների նախնիներն ընտրել էին արևմտյան կողմնորոշում,

[188] Տե՛ս նույն տեղում, 23 ноября, N 113:

ուստի և ստիպված, դեպի Արևմուտք ճանապարհին՝ միացան Ռուսաստանին: Պայմանն այն էր, որ մնալով Ռուսաստանի կազմում Վրաստանին տրվեր ինքնավարության իրավունք, ինչը չիրականացավ: Զուգահեռներ անցկացնելով ստեղծված պատմական պահի հետ, նա գտնում էր, որ դարձյալ առկա է երկընտրանքը՝ նորի՞ց դիմել արևմուտքին, այսինքն՝ Ռուսաստանին: Եզրակացությունը միանշանակ էր՝ քանի որ Ռուսաստանը չի կարողացել լուծել և ելքեր գտնել երկու կարևորագույն հիմնահարցերում՝ պատերազմի և հեղափոխության, իսկ երկրորդ՝ բոլշևիկյան հեղաշրջումն էլ պառակտել էր երկիրը և հասարակությունը, ու չկա համընդհանուր ճանաչում ստացած կառավարություն, ուստի մյուսների նման Անդրկովկասն ու, մասնավորապես, Վրաստանը պետք է նախաձեռնեն սեփական ազգային կյանքի ղեկավարման գործընթացը[189]: Ն. Ժորդանիան համոզված էր, որ Վրաստանի նման փոքր երկիրը չի կարող առանց Ռուսաստանի պատերազմ վարել, ուստի ցանկություն էր հայտնում, որ Ռուսաստանում վերականգնվի կենտրոնական իշխանությունը, որը ի վիճակի կլինի շարունակելու հաղթական պատերազմը: Նա եզրակացնում էր, որ Վրաստանի կողմնորոշումը մնում է նույնը՝ Ռուսաստանի հետ դաշինքը, որտեղ վրացիները միայնակ չեն, քանի որ նույն ուղու վրա ստիպված կանգնած են նաև հայերը: Ինչ վերաբերում էր թաթարներին, ապա Ն. Ժորդանիան նրանց անունից արդեն որոշել էր, որ Ռուսաստանի կազմում նրանք ավելի բարձր դիրքերում հանդես կգան, քան որպես Թուրքիայի պրովինցիա: Դրանք լոկ խոսքեր չէին, որ մեկ անգամ ևս հիմնավորելու էին Անդրկովկասի անջատման գաղափարը, որն արտահայտվել էր որպես ժողովրդավարական, միասնական Ռուսաստանի փրկության միջոց՝ Կոմիսարիատի ստեղծմամբ: «Երբ մենք այսպես ենք փորձում կարգավորել տեղական գործերը և ամրապնդում ենք մեզ քաղաքականապես,– փորձում էր հիմնավորում տալ Ն. Ժորդանիան,- այդպես մենք ձգտում ենք ազդել Ռուսաստանի վրա, որպեսզի այնտեղ ձևավորվի բոլորի կողմից ճանաչված հեղափոխական իշխանություն: Եթե այդ իշխանությունը հակահեղափոխական լինի, ապա կմոռացվեն ոչ միայն մեր քաղաքական և սոցիալական, այլև՝ ազգային շահերը: Ուստի մեր գլխավոր նպատակն է, որպեսզի չհաղթի հակահեղափոխությունը և որպեսզի Ռուսաստանում հաղթանակի հեղափոխությունը»[190]: Որքան էլ որ բոլշևիկյան հեղաշրջումից մեկ ամիս անց, այսպիսի եզրահանգումը հրատապ հնչեղություն ունենար, միևնույն է, բոլշևիկներին ու խորհրդային իշխանությունը չճանաչելու ճանապարհով՝

[189] Տե՛ս Н. Н. Жордания, За два года, с. 52-55.
[190] Там же, с. 56.

Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու հեռանկարը չէ, որ պետք է նպաստեր դեմոկրատական հեղափոխության և իշխանության վերականգնմանը Ռուսաստանում:

Ն. Ժորդանիան և մյուս վրացական մենշևիկների մարտավարության հեռատեսությունը կայանում էր նրանում, որ թաքցնելով իրական մտադրությունները, միանգամից չբացահայտելով անկախանալու ծրագրերը, նրանք չէին այրում կամուրջները, ետդարձի հնարավորություն էին թողնում: Միաժամանակ, երկրամասի ազգային ուժերին հրահանգ էր տրվում, որ եթե «անարխիան շարունակվի և Ռուսաստանում մոտակա ժամանակներում հնարավոր չլինի հրավիրել Սահմանադիր ժողով, մենք ստիպված կհրավիրենք սեփական Սահմանադիր ժողով և կստեղծենք մեր սահմանադրությունը: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի կովկասյան բոլոր ժողովուրդները կանգնած լինեն նույն մոտեցման վրա և ընդհանուր համաձայնությամբ իրականացվի Անդրկովկասի տարածքների բաժանումը»[191]: Չգիտես ինչու, Ն. Ժորդանիան համոզված էր, որ առանց Ռուսաստանի հնարավոր էր ստեղծել մեծ Վրաստան, իսկ մահմեդականների հետ աննախադեպ մերձեցումն էլ վկայում էր, որ դա հիմնականում հայ ժողովրդի ու նրա տարածքների հաշվին էր իրականացվելու: Ի դեպ, 1918 թ. դեկտեմբերի կեսերին վրացական սոցիալ-դեմոկրատիայի անունից նամակ-գրություն է հղվում Միջազգային սոցիալիստական բյուրոյին՝ Հայաստանի և Վրաստանի միջև ծագած պատերազմի վերաբերյալ, որի նախաբանում նույն ոգով հիմնավորվում էր Ռուսաստանից հեռացման անհրաժեշտությունը: Մասնավորապես նշվում էր, որ մինչև համառուսաստանյան Սահմանադիր ժողովի հրավիրումը, Ռուսաստանի հետ պահպանվում էր ձևական կապը[192]:

Համագումարում առանձնանում էր նաև աբխազական ազգային խորհրդի ներկայացուցիչ Ա. Շերիպովի ելույթը: Միավորված լեռնեցիների միության կազմում, աբխազ ժողովուրդը ողջունում էր ազգային ինքնորոշման առաջին քայլերն անող Վրաստանին: Եթե վրացիները հաճախ զսպում էին իրենց, ապա աբխազ հյուրն ավելի համարձակ և արմատական հայտարարություններ էր իրեն թույլ տալիս: «Կովկասի ազատությունը ճզմվել է ռուսական իմպերիալիզմի կողմից,- ասում էր նա,- որովհետև Կովկասը միաբան չէր»[193]: Նա մեջբերում էր անում իմամ Շամիլից, թե «հիշեք, եթե իրար կոկորդ պիտի կրծեք իշխանատենչության ոսկորի համար, ապա շունը կխլի այդ ոսկորը, հետո էլ ձեզ կհոշոտի»[194]: Ա. Շերիպովն առաջարկում էր ժամանակի շունչն արտահայտող բանաձև՝ «բոլոր ցեղերի կովկասցիներ, միավորվեք»: Գնահատելով վրացական մենշևիզմի՝ որպես ազգային գործոնի դերը, նա հույս էր հայտնում, թե «ժամանակին ինչ արեց Շամիլի պողպատե սուրը, այժմ շարունակում է հզոր պողպատե խոսքը և Ծերեթելու, Չխեիձեի և ողջ վրացական դեմոկրատիայի ինքնահրաժարումը»[195]: Ըստ Ա. Շերիպովի, Կովկասին սպառնում էր ևս մեկ արտաքին վտանգ, այն, որ Ռուսաստանը Եվրոպային պարտք էր 60 մլրդ. ռուբլի և չմիավորման դեպքում երկրամասը կարող է վերածվել եվրոպական կապիտալի գաղութի[196]:

Նոյեմբերի 23-ին, ավարտելով աշխատանքները, վրացական առաջին ազգային համագումարն ընդունեց 8 բանաձևեր՝ քաղաքական, զինվորական, վարչական, իրավաբանական, առողջապահական, ունեցվածքային տնօրինման, դպրոցական և գեղարվեստական բնագավառների գծով:

Համագումարի քաղաքական խմբի ընդունած բանաձևը, որը խարսխված էր Ն. Ժորդանիայի և Ա. Չխենկելիի ելույթների դրույթների վրա, 4-րդ կետով հարկ էր համարում կազմավորել 67 անդամներից բաղկացած ժամանակավոր ազգային խորհուրդ, որոնք ապագայում իրենց տեղերը կզիջեն Անդրկովկասի սեյմի վրացի պատգամավորներին: 6-րդ կետը Ռուսաստանի Սահմանադիր ժողովից պահանջում էր Վրաստանի լիակատար տարածքային ինքնավարություն, ինչպես նաև տեղական հարցերի լուծման համար՝ սեփական սահմանադիր ժողով: Տարածքային սահմանները պետք է որոշվեին դրացի շահագրգռված ազգերի հետ համաձայնության ճանապարհով: Վրաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունները կստանային մշակութային զարգացման լիակատար երաշխիքներ: Մահմեդական Վրաստանը կստանար լայն ինքնավարություն: Այդպիսի լայն ինքնավարություն կտրամադրվեր բոլոր այն ծայրագավառներին, որոնց բնակիչները կցանկանային մտնել ինքնավար վրացական միության կազմի մեջ: 7-րդ կետը հայտարարում էր, որ եթե քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում երկարաձգվի և Սահմանադիր ժողովի հրավիրումը մոտակա ժամանակներում անհնար դառնա, ապա պետք է գումարվեն ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ առանձին ազգերի տեղական Սահմանադիր ժողովներ, որոնք փոխադարձ համաձայնությամբ կհաստատեին համապատասխան ժողովրդավարական և ազգային կարգ[197]:

---

[191] Там же, с. 57.
[192] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1831, оп. 1, д. 6, л. 1:
[193] Республика 1917, 23 ноября.
[194] Նույն տեղում:

[195] Նույն տեղում:
[196] Տե՛ս նույն տեղում:
[197] Տե՛ս Молот, 1917, 26, 28 ноября, NN 44, 46:

Զինվորական սեկցիայի բանաձևն ընդունում է վրացական բանակի կազմավորման և ազգայնացման մասին որոշումը, ազգայնացվում էր նաև դպրոցը: Վերջում ընթերցվում է Հովի. Թումանյանի և այլ ազգերի ներկայացուցիչների ողջույնի խոսքերը[198]: Հայկական, վրացական և մահմեդական ազգային խորհուրդների գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվում է ազգամիջյան խորհուրդ՝ Ն. Ռամիշվիլիի նախագահությամբ:

Իրոք, բոլշևիկյան հեղաշրջումը նպաստեց, հայության քաղաքական մեկուսացման գործընթացն արագանա Անդրկովկասում: Պետրոգրադում բոլշևիկներից պարտություն կրելով, վրացի մենշևիկների առաջնորդները քաղաքական հետագա գործունեության պարարտ հող գտան «հարազատ» երկրամասում, մանավանդ, որ հայության ու Դաշնակցության ազգային ծրագրերի դեմ պայքարում հմտորեն ձեռք բերեցին նաև մահմեդականության աջակցությունը: Այդ երկուսի դաշինքը կայացավ հակառուսական կեցվածքի համատեքստում: Հայկական հարցի առկայությունը, Արևմտյան Հայաստանը գրաված-ազատագրած ռուսական Կովկասյան բանակը, որպես ռուսական տարրի ներկայության վերջին գրավական՝ հայության վերջնական մեկուսացումն ու պարտությունը կանխող ուժն էր, որի համար էլ ծավալվեց հետագա անզիջում պայքարը Բաքվի խորհրդային իշխանության և վրաց-մահմեդական դաշինքի միջև: Հայությունն անգամ մեղադրվում էր ռուսներին Կովկաս ներքաշելու հիմնահարցի մեջ: Դաշնակցության՝ ինչ-որ տեղ անմնացորդ նվիրվածությունը հեղափոխականությանը, ռուսական հեղափոխական դեմոկրատական շարժմանը, պնվերապահորեն և օբյեկտիվորեն նրան մղում էր խորհրդային իշխանության դեմ և անխուսափելիորեն կապում վրացթաթարական դաշինքին, որի հետ ՀՅԴ հույս ուներ լուծել գոնե վարչական սահմանաբաժանումների հարցը:

Ուշագրավ է նաև Լենոյի հարցադրումը, թե «Ինչո՞ւ հայ ժողովուրդը (նկատի ունի Դաշնակցությունը – Վ.Մ.) պիտի գերադասեր մենշևիկյան սոցիալիզմը բոլշևիկյան սոցիալիզմից»[199], մանավանդ, 1917 թ. նոյեմբերին դեռևս լիովին պարզ չէին բոլշևիկյան ղեկավարների հեռահար նպատակները: «Երեք ազգությունները իբր թե միացան,- գրում էր նա,- կարծում էին թե միացում է նշանակում երեքով մի սենյակի մեջ նստելը: Հարցը սենյակի մեջ չէր, այլ նրա մեջ, որ երեք ազգությունների ղեկավարող կուսակցությունները ազգայնական էին մինչև ոսկորների ծուծը և ոչինչ մոռանալ, ոչինչ իրենց զիջել չէին կարող... Ռուսաստան ասելով հասկացվում էր ամեն տեսակ Ռուսաստան, բայց ոչ երբեք բոլշևիկյան: Եվ որովհետև հոկտեմբերից հետո միմիայն բոլշևիզմն էր Ռուսաստանի իրական տերը, ուստի դուրս է գալիս, որ Անդրկովկասը 1917 թ. նոյեմբերին արդեն իրապես անջատված էր Ռուսաստանից»[200]:

Անդրկովկասյան կոմիսարիատի կազմակերպման նախաշեմին, նոյեմբերի 14-ին, Ս. Վրացյանը «Հորիզոն»-ում հրապարակում է «Հայ-վրացական հարաբերությունները» հոդվածը, որի հարցադրումներն ամենևին չէին ներդաշնակում միացյալ, ազգային կառավարության մեջ նրանց հետագա համակեցության հեռանկարին: Նա ընդգծում էր վրաց ազգային գործիչների անհանդուրժողականությունը Հայկական հարցի և նրանում կովկասահայության և դաշնակցության մասնակցության նկատմամբ: Հեղինակի հետ կարելի է կիսել այն արդարացված մտահոգությունը, որ արևմտահայ տառապանքներն ու կոտորածները «նրանց մեջ քիչ կարեկցանքի հանդիպեց: Ամբողջ աշխարհից նպաստներ տեղացին հոգուտ տաճկահայ աղետեալների, իսկ հայերի կողքին ապրող վրացի ինտելիգենտը մատը մատին ցխփեց, գոնե մի ձևական օգնութիւն, ցաւակցութեան մի տաք խոսք ասելու համար: Ընդհակառակը, մի շարք շովինիստներ չարանեցին ամենագռեհիկ մեղադրանքները նետել բնաւէր տաճկահայերի հասցէին, որոնք իբր թե դիտմամբ թողնում էին իրենց հայրենիքը և գալիս Վրաստանի հողը բռնում»[201]: Հայկական հարցի մեջ էր Ս. Վրացյանը տեսնում նաև վրացի մենշևիկների համեմատ Դաշնակցության երկփեղկվածության, ինչ-որ թուլության գլխավոր պատճառը, ինչը կուսակցությանն առավելապես ստիպել էր զբաղվել արևմտահայության խնդրով և այդպիսով Անդրկովկասի քաղաքական դաշտը թողել էր, փաստորեն, վրաց ազգային գործիչների տնօրինմանը:

Մեր կարծիքով՝ Հայկական հարցի շուրջ բանավեճում վրացական ազգային գործիչների կշտամբանքները կարելի է արդարացնել այն առումով, որ հայկական ազգային-դեմոկրատական բոլոր կուսակցությունները, այդ թվում և Դաշնակցությունը, հետփետրվարյան փուլում Հայկական հարցը ծրագրային մակարդակով հստակ տարանջատել էին որպես «արևմտահայ» և «արևելահայ» հարցեր: Դա վրացական գործիչների մոտեցմամբ նշանակում էր, որ Դաշնակցությունն Անդրկովկասում չպետք է գործեր Արևմտահայության խնդրի ու դրանով նաև Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության համատեքստում՝ ռուսական զորքերի հետ համագործակցության շրջանակներում, այլ լիովին պետք է ներգրավվեր երկրամասի սոցիալ-քաղաքական և ազգային խնդիրների համատեղ լուծմանը:

---

[198] Տե՛ս Արև, 1917, 30 նոյեմբերի, թվ 245:
[199] Տե՛ս Լեն, Անցյալից, էջ 336:

[200] Տե՛ս նույն տեղում, էջ 337:
[201] Հորիզոն, 1917, 14 նոյեմբերի, թիվ 243:

Մերօրյա դիրքերից հարցադրումը միգուցե և տեղին է, սակայն 1917 թ. աշնանը, սրընթաց, հաճախ անկանխատեսելի զարգացող իրադարձությունները թույլ չէին տալիս լիովին տարանջատել Հայկական հարցի երկու հատվածների նկատմամբ շահագրգռվածության և գործելակերպի զուգակցման հիմնահարցը: Հայության խնդիրը դիտվում էր մեկ ամբողջության մեջ, չնայած Դաշնակցության համար ևս լիովին պարզ և գիտակցված չէին այդ լուծումների ուղիներն ու հանգրվանները:

Դաշնակցությանը զարմանք ու դժգոհություն էր պատճառում նաև վրաց ազգայնականների՝ սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցության այն դիրքորոշումը, որ «Անդրկովկասում ապրող ազգերը չեն կամենում օգտվել բոլշևիկների կառավարութեան կողմից Ռուսաստանի ազգերին «շնորհված» նոր արտոնություններից»[202]:

Ի տարբերություն Անդրկովկասի հայկական և վրացական հասարակություններում ազգային-դեմոկրատական կուսակցությունների և հոսանքների նկատելի ակտիվությանը, մահմեդական-թաթարական միջավայրում դա դրսևորվեց բոլշևիկյան տիպի սոցիալիստական կուսակցությունների ասպարեզ գալով:

1917 թ. դեկտեմբերի 17-ին (30) Բաքվում բացվեց «Հումմեթ» կազմակերպության համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էին ոչ միայն «Հումմեթի» և «Ադալաթի» Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունների, այլև երկրամասի ու Թիֆլիսի կազմակերպությունների ներկայացուցիչները: Համագումարի նախագահությունը ինչպես և «Հումմեթ» կուսակցության կենտրոնական կոմիտեն գլխավորում էր Ն. Նարիմանովը[203]:

Այսպիսով, 1917 թ. նոյեմբերի 11-ին Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորմամբ, ապա և նոյեմբերի 19-23-ը կայացած վրացական ազգային համագումարի ընդունած որոշումներով և վրացական ս.-դ. մենշևիկների ծանրակշիռ գաղափարական և կազմակերպական ճնշմամբ կայացվեց հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած քաղաքական փուլի գլխավոր որոշումը, այն է՝ Անդրկովկասի անջատումը խորհրդայնացված Ռուսաստանից և ազգային հասարակական-քաղաքական, ինչպես նաև զինվորական կյանքի ինքնուրույն տնօրինումը:

Կառավարական, կուսակցական, հանրային մակարդակներում թեև առաջադրվում էր ապագա Ռուսաստանյան ժողովրդավարական դաշնային հանրապետության կազմում ազգային լայն ինքնավարության պահանջը, սակայն վրացական մենշևիզմի շրջանակներում, հետևողականորեն հունցվում էին անկախ ազգային պետականության գաղափարը:

---

[202] Նույն տեղում, 18 նոյեմբերի, թիվ 247:

[203] Տե՛ս М. Искендеров, Из истории борьбы коммунистической партии Азербайджана за победу советской власти, Баку, 1958, с. 174-175.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1917 թ. նոյեմբերի 18-ին (դեկտեմբերի 1) Անդրկովկասյան կոմիսարիատը հրապարակեց Անդրկովկասի ժողովուրդներին ուղղված հռչակագիրը[204]: Այն ամփոփում էր երկրամասային նոր իշխանության գործունեության ծրագիրը, սոցիալ-տնտեսական ու հասարակական քաղաքական կյանքի հնարավոր վերափոխման ու զարգացումների իր նախանշած ուղղությունները: Չնայած ստորագրությունների բացակայությանը, ինչը հատուկ է նմանատիպ փաստաթղթերին, հարցադրումների և ոճական համեմատությունների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջինիս հեղինակները կարող են լինել Ե. Գեգեչկորին և Ն. Ժորդանիան:

Հռչակագրի կարևորագույն դրույթները, քանի որ դրանք, նախ՝ կանխորոշում էին Կոմիսարիատի գործունեության առանցքային ուղենիշները, ապա և հնարավորություն են տալիս Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում՝ իրադարձությունների զարգացման համատեքստում, վերլուծել երկրամասի կառավարության հռչակած սկզբունքների ծրագրերի և իրական քայլերի միջև առաջացող հակասությունները:

Հռչակագրում հիմնականում ասված է. «...Անդրկովկասի ժողովուրդների ճակատագիրը և նրանց նորմալ զարգացումը կախված է այն բանից, թե անդրկովկասյան հեղափոխական դեմոկրատիան կկարողանա արդյոք տարաբնույթ ոտնձգություններից պաշտպանել հեղափոխության նվաճումները, երկրամասում երաշխավորել հեղափոխական կարգապահության ամենաանհրաժեշտ հիմունքները և միևնույն ժամանակ ազդել կենտրոնական Ռուսաստանի վրա՝ դեմոկրատիայի շարքերում քաղաքացիական պատերազմին վերջ տալու և ռուսաստանյան հանրապետությունում միատարր հեղափոխական, բոլորի կողմից ճանաչված կառավարության ստեղծման համար:

Երկրամասի կյանքն այդ ուղու վրա դնելու նպատակով, բոլոր սոցիալիստական և հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունների համաձայնության արդյունքում, ստեղծվեց երկրամասային իշխա-

---

[204] Տե՛ս Республика, 1917, 19 ноября, N 111.

նություն: Այդ իշխանությունը ձևավորվել է ժամանակավորապես՝ մինչև միմիայն Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի հրավիրումը: Իսկ եթե ռուսական իրականության պայմաններից ելնելով, վերջինիս ժամանակին գումարումն անհնար դառնա, ապա Կոմիսարիատը պահպանելու է իր լիազորությունները մինչև Անդրկովկասից և Կովկասյան ռազմաճակատից ընտրած Սահմանադիր ժողովի անդամների համագումարի հրավիրումը:

Իբրև ժամանակավոր իշխանություն, Կոմիսարիատը նպատակ է դնում բնակչության ամենաանհետաձգելի կարիքների լուծումը. «կարգավորել մինչև վերջ կազմալուծված ֆինանսական գործը, փրկել բանակն ու բնակչությունը անխուսափելի սովից, ապահովել պարենավորումը, բարելավել հաղորդակցության ուղիներն ու տրանսպորտը, հաշտության կնքման պահին իրականացնել ճիշտ և ոչ հիվանդագին զորացրում, հասարակական կարգի պաշտպանություն, արտադրության և բաշխման վրա՝ վերահսկողություն աշխատանքի և բանվոր դասակարգի համակողմանի պաշտպանության, դեմոկրատական զեմստվոների անհապաղ ներդրում, դատարանի և կառավարման մարմինների վերակազմություն, դեմոկրատական հողային կոմիտեների անհապաղ կազմակերպում՝ այնտեղ, որտեղ դրանք չկան և նրանց իրավասությանը ուղելային (բաժնեկալվածք), պետական և եկեղեցական, ինչպես և խոշոր մասնավոր սեփականատիրական հողերի հանձնում, որոնց բռնագրավման ակտը կհետևի մոտ ապագայում, հավասարապես և բոլոր տեսակի հողային հարաբերությունների կարգավորման և՝ Սահմանադիր ժողովի նախօրեին Հողային օրենքի նախապատրաստման համար, բոլոր դասային արտոնությունների անհապաղ վերացում և արտոնյալ դասակարգերի շահերը պաշտպանելու նպատակով ստեղծված բոլոր հաստատությունների ցրում, հեղափոխության նվաճումների ճանաչման հիմքի վրա հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում:

Պաշտպանելով ռուսաստանյան հեղափոխության հռչակած ազգերի լիակատար ինքնորոշման սկզբունքը, Անդրկովկասյան կոմիսարիատը կձեռնարկի քայլեր Անդրկովկասում ազգային հարցի շուտափույթ և արագ լուծման համար:

Ընդունելով համառուսաստանյան ռազմաճակատի միասնության պաշտպանությունը, Անդրկովկասյան կոմիսարիատը կձեռնարկի բոլոր ակտիվ միջոցները հաշտության անհապաղ կնքման և այդ ուղղությամբ կիրառվող քայլերը համապատասխանեցնելով արևմտյան ռազմաճակատի ընդհանուր դրության տեղական կացության և Կովկասը բնակեցնող ժողովուրդների համաձայնության հետ:

Բոլոր թվարկված հարցերի լուծումը կդառնա նորաստեղծ երկրամասային իշխանության ապագա գործունեության հիմք և բովանդակություն:

Անդրկովկասյան կոմիսարիատի բոլոր կարգադրություններն ու հրամանները պետք է առանց տատանումների իրականացվեն տեղերում: Այդ իշխանության դեմ ամեն տիպի հակագդեցությունները կդիտվեն որպես Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ բացահայտ ոտնձգություն, որպես նրան ամենամութ քաղաքացիական ու ազգամիջյան պատերազմի ոլորտը ներգրավելու ձգտում և արմատից կճնշվեն այդ իշխանությունը ստեղծած ուժերի կուսակցությունների և կազմակերպությունների կողմից»[205]:

Հանձն առնելով այս ծանր բեռը, Անդրկովկասյան կոմիսարիատը դիմում է բոլոր նրանց, ում համար թանկ են հեղափոխության և ազատության շահերը՝ համախմբվել երկրամասային իշխանության շուրջ և նրա հետ ուս-ուսի տված գնալ դեպի ստեղծագործ հեղափոխական աշխատանք:

Անդրկովկասի ժողովուրդներ!

Ձեր ճակատագիրը Ձեր ձեռքերում է»[206]:

Այսպիսով, Հռչակագրում առանձնացվում էին երեք խումբ կարևորագույն հարցեր. Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքների ճանաչում, ազգային, հողային հարցի լուծում և անհապաղ հաշտության կնքում Թուրքիայի հետ:

Մենք կանդրադառնանք Կոմիսարիատի ձեռնարկած սոցիալ-տնտեսական, ֆինանսական, կրթական-լուսավորական վերափոխումների բնագավառին, ընդունած որոշումներին և ձեռնարկած քայլերին:

Կոմիսարիատի ստեղծման պահին նրա բարձրացրած առաջին երկու հարցերը և կայացրած որոշումները վերաբերում էին Անդրկովկասի ֆինանսներին և հաղորդակցության ուղիների խնդիրներին: Նոյեմբերի 15-ին (28) լսելով երկրամասի տնտեսական և ֆինանսական կացության հարցը, որոշվում է ֆինանսների նախարարության գծով կոմիսար Խ. Կարճիկյանին հանձնարարել՝ նախապատրաստելու և հրավիրելու այդ հարցին նվիրված հատուկ խորհրդակցություն: Լսելով հաղորդակցության ուղիների նախարարության գծով կոմիսար Խ.-բ. Մելիք-Ասլանովի դիմումը՝ կոմիսարության և ռազմական իշխանությունների միջև հարաբերությունների և աշխատանքի բաժանման ճշգրտման մասին, որոշվում է, որ Ռազմական Հաղորդակցության պետը հաղորդակցության ուղիների

---

[205] ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 116, л. 1-2.

[206] Նույն տեղում, նաև Документы и материалы..., с. 8-10.

հետ կապված բոլոր հարցերում անմիջականորեն պետք է ենթարկվի համապատասխան կոմիսարին, իսկ ռազմավարական ու ռազմական բնույթի հարցերում՝ ռազմա-ծավային նախարարության գծով կոմիսար Դ. Դոնսկոյին[207]:

Նոյեմբերի 18-ին Անդրկովկասի կոմիսարիատի գործավարությունը դրվում է նախկին Օզակոմի գրասենյակի վրա, փոխվում է սոսկ վերջինիս անվանումը[208]: Նույն օրը, ֆինանսական հարցի աշխատանքների մասին զեկուցմամբ հանդես է գալիս կոմիսար Խ. Կարճիկյանը: Նա հայտնում է, որ ձևավորվել են երեք հանձնաժողովներ. 1. արտահանման և զինվորական փոխառության կազմակերպման գծով, 2. ներքին փոխառության կազմակերպման, դրամական շրջանառության կրճատման և կարգավորման, ապա և կտրոնային շրջանառության ներդրման կարգավորման գծով և 3. տուրքերի գծով: Քննարկվում է պարենավորման գործերով նախարարության կոմիսար Գ. Տեր-Ղազարյանի զեկուցումը՝ կոմիսարության և երկրամասային պարենային վարչության միջև ճշգրիտ փոխհարաբերությունների հաստատման անհրաժեշտության վերաբերյալ, քանի որ այդ վարչության գործողությունների ոլորտը տարածվում էր նաև Հյուսիսային Կովկասի վրա: Նույն օրը Կոմիսարիատը լսում է նաև Խ.-Բ. Մելիք-Ասլանովի զեկուցումը՝ Անդրկովկասի երկաթուղու գլխավոր արհեստանոցի սևագործ բանվորների գործադուլի և տնտեսական պահանջների մասին և որոշում նրանց վճարել իրենց հայցած հոկտեմբեր ամսվա աշխատավարձի 300%-ը[209]:

Առաջին հայացքից, Կոմիսարիատի կողմից բարձրացվող լուրջ հետաքրքրություն չներկայացնող, երբեմն ժամանակի սրընթաց ռիթմը բացարձակ չարտահայտող, հաճախ ծիծաղաշարժ հարցերի քննարկումներն ու որոշումներն, այնուամենայնիվ, երկրամասի քաղաքականապես և ռազմական տեսակետից հագեցած մի քանի ամիսների համապատկերին զուգահեռ՝ քաղաքացիական, առօրեական պատմության որոշակի տպավորություն են ստեղծում: Դրանք հնարավորություն են տալիս լուսաբանել քաղաքական աննախադեպ պայքարին զուգահեռ բարձրացվող մի շարք կենսականորեն անհրաժեշտ սոցիալական, տնտեսական ու հասարակական խնդիրների նկատմամբ Անդրկովկասի նոր իշխանության հետամուտ լինելու չափը, խորությունը, հետևողականությունը, ինչը, հիմնականում, տեղավորվում է Խորհրդային Ռուսաստանից անջատման, սպասվող Սահմանադիր ժողովի բացման ու նրա ժողովրդավարական ու բազմակուսակցական բնույթի և սպասելիքների համատեքստում:

[207] Տե՛ս նույն տեղում, թ.13:
[208] Տե՛ս նույն տեղում, թ. 27:
[209] Տե՛ս նույն տեղում, թ. 23:

Նոյեմբերի 24-ի (դեկտեմբերի 6) նիստում Կոմիսարիատը լսում է նախարարի տեղակալի կարգավիճակով կոմիսարների տեղակալների պաշտոն, կոմիսարներին կից քարտուղարների և գործակալների հաստիք հաստատելու, Կոմիսարիատի անդամներին պարգևատրելու, Սուրմալուի գավառական կոմիսարին, Իգդիրից՝ Մալանլու գյուղ ժամանակավորապես տեղափոխելու, Բաթումում ժանտախտի համաճարակի մասին և այլ հարցեր: Առանձնակի հետաքրքրություն են առաջացնում արդարադատության նախարարության գծով կոմիսար Շ. Ալեքսեև-Մեսխիևի և ներքին գործերի նախարարության գծով կոմիսար Ա. Չխենկելիի զեկույցները: Առաջինը միջնորդում էր Թիֆլիսի քաղաքային դումային, որպեսզի քաղաքին իրավունք տրվի բռնագրավելու մասնավոր բնակարաններ ու տարածքներ, երկրորդը քննարկման է դնում Կոմիսարիատի կողմից բարձրացված առաջարկը՝ ք. Թիֆլիսի պաշտպանության պետի հատուկ պաշտոն հաստատելու մասին[210]: Առաջին դեպքում, առաջարկվող տարածքները տրամադրելու էին արդեն զուտ վրացական ազգային, ռազմա-քաղաքական մարմինների տնօրինությանը, ինչն անմիջականորեն ուղղվում էր հայկական ազգային հաստատությունների դեմ:

Պետի ձեռքում պետք է կենտրոնանար քաղաքի պաշտպանության գծով ամբողջ իշխանությունը. նա պատասխանատու էր լինելու Անդրկովկասյան կոմիսարիատին: Այս պաշտոնը նպաստելու էր երկրամասի իշխանության լծակները Թիֆլիսում կենտրոնացնելու, Բաքվից հետո բոլշևիզմի դեմ ավելի արդյունավետ պայքարելու համար: Որոշվում է առայժմ չիմնել այդպիսի պաշտոն և Անդրկովկասի կենտրոնի պաշտպանությունը վստահել հեղափոխական շտաբին[211]: Հաջորդ օրը, սակայն, խնդիրը վերաբացվում է և որոշում է ընդունվում այն մասին, որպեսզի Ազգային խորհուրդներին առաջարկվի շտապ քննարկել՝ քաղաքացիական բնակչությանը զինելու և ժողովրդական միլիցիա ձևավորելու հարցը: Օրակարգային հարցը ձևակերպված էր որպես «Թիֆլիսի բնակչությանը բոլշևիկների հնարավոր զինված ելույթներից պաշտպանելու միջոցառումներ»[212]: Հասկանալի է, որ ազգային զորամասերի արագ ձևավորման հրամայականի համատեքստում, Ազգային խորհուրդներին էին տրվելու առավել կենսական և պատասխանատու առաջադրանքները, սակայն Կոմիսարիատի վրացական ղեկավարությունը այս առաջին քայլերով արդեն հող էր նախապատրաստում Թիֆլիսի և վրացիների շահերի շուրջը կենտրոնացնել, հետո էլ ենթարկեցնել հայերի և մահմեդականների ոչ պակաս կենսական ազգային շահերը:

[210] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 34, 36.
[211] Տե՛ս նույն տեղում, թ. 36.
[212] Տե՛ս նույն տեղում, թ. 37:

Նոյեմբերի 25-ին (դեկտեմբերի 7) Կոմիսարիատը լսում է ֆինանսների կոմիսար Խ. Կարճիկյանի զեկուցումը՝ Անդրկովկասում շաքարավազի մենաշնորհային վաճառքի մասին օրենքը տարածելու հարցը: Քանի որ Ռուսաստանում այդ օրենքի գործարկումը դադարեցվել էր, Կոմիսարիատն էլ՝ հարցը տեխնիկական բնույթի դրդապատճառներով հիմնավորելով, հետաձգում է մինչև 1918 թ. հունվարի 1-ը[213]:

Շ. Ալեքսեև-Մեսխիևի զեկույցի հիման վրա հաստատվում է «բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարեցման և քաղաքացիական աստիճանների ու տարբերանշանների վերացման մասին» հռչակագիրը[214]: Մասնավորապես վերացվում էին բոլոր նախկին կոչումները (ազնվական, վաճառական, քաղքենի, իշխան տիտղոսները և այլն) և հաստատվում էր Ռուսաստանյան հանրապետության համար ընդհանուր՝ քաղաքացի անվանումը:

Նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 9) ընդունվում է 8-ժամյա բանվորական օրվա մասին հռչակագրի նախագիծը[215]: Աշխատանքի նախարարության գծով կոմիսար Ե. Գեգեչկորիի հունվարի 14-ի (27) հրամանագրով օրենք է ընդունվում այն մասին, որ Անդրկովկասի սահմաններում, ձեռնարկատերերը՝ բանվորների և ծառայողների ընդունման և հեռացման հարցերը լուծեն արհմիությունների կամ ֆաբրիկա-գործարանային կոմիտեների համաձայնությամբ[216]:

Աշխատանքի նախարարության գծով կոմիսարությունը 1918 թ. ապրիլի 4-ին (17) այդ թվում Երևանի աշխատանքի կոմիսարին ուղարկում է «կոչ բանվորներին», որը երկրամասում տարածվել էր մարտի վերջին: «Անդրկովկասի դեմոկրատիան ձեր ձեռքերում է, ընկեր բանվորներ...»[217],– ասվում էր Կոմիսարիատի կոչում: Պատասխան գրության մեջ Երևանի նահանգի Աշխատանքի կոմիսարը հայտնում էր, որ համընդհանուր զորակոչն ու անարխիան թուլացրել են Երևանի բանվորական կազմակերպությունները, նույն վիճակում են հայտնվել նաև արհեստակցական միությունները: Երեկոյան ժամը 9-ից կյանքը քաղաքում մեռնում է, ժողովների հրավիրումն անհնար է դարձել,– նշում էր նա,– վերանում են մասնավոր և հանրային ձեռնարկությունները, բանվորները չեն վարձատրվում»[218]: Կոմիսարն անհրաժեշտ էր համարում այդ նպատակով հաշտարար ատյանի ստեղծումը, բայց քանի որ քաղաքում բա-

[213] Տե՛ս նույն տեղում:
[214] Տե՛ս նույն տեղում, թ. 38:
[215] Տե՛ս նույն տեղում, թ. 43:
[216] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 220, ց. 1, գ. 1, թ. 2:
[217] Տե՛ս նույն տեղում, թ. 10,11:
[218] Նույն տեղում, թ. 14:

ցակայում էին Արհեստակցական միությունների կենտրոնական բյուրոն, Արդյունաբերողների միությունը, որոնք պետք է կազմեին Ատյանի միջուկը, նա ստեղծված վիճակի ելք էր ընդունում իր կողմից ընտրված ներկայացուցիչների ներգրավումը՝ արդյունաբերողների և բանվորական միությունների կազմերից: Երևանի Հաշտարար ատյանի կազմի մեջ են մտնում ձեռնարկատերերից Գևորգ Ամիրյանը, Հայրապետ Գաբրիելյանը, Երվանդ Տեր-Ավետիսյանը, Միխայիլ Ֆիլատիևը և Մաշադի Ա. Սալախովը, բանվորներից ու ծառայողներից՝ տեղական մի շարք աշխատավորական կազմակերպությունների ներկայացուցիչներ[219]: Դեկտեմբերի 11-ին (24)-ին Աշխատանքի նախարարության գծով կոմիսարությունից Երևանի բ. զ. պ. խորհրդի բանվորական սեկցիային և արհմիությունների բյուրոյին ուղղված գրությունը Երևանի բանվորական կազմակերպություններին առաջարկում էր թեկնածու ներկայացնել՝ Երևանի նահանգի Աշխատանքի գծով լիազոր կոմիսարի պաշտոնի համար: Դեկտեմբերի 29-ին (հունվարի 10) Երևանի բ. զ. պ. խորհրդի գործադիր կոմիտեն այդ պաշտոնում հաստատում է Ա. Սարգսյանին (տեղակալներ՝ Ա. Աչին, Գ. Արարատյան) և այդ որոշման մասին հաջորդ օրը տեղեկացնում Անդրկովկասյան կոմիսարիատին[220]:

1918 թ. փետրվարի 1-ին (13) Աշխատանքի կոմիսարությանը կից Աշխատանքի շրջանային բիրժան և նրա ղեկավար Ա. Կախիանին շրջաբերական են հղում Անդրկովկասի խոշոր քաղաքների ինքնավարության մարմիններին, տվյալ դեպքում Ալեքսանդրապոլ՝ երկրամասում ծայր առած աննախադեպ գործազրկության մասին: Նշվում էր, որ «այն բարենպաստ հող կարող է ստեղծել ամեն կարգի անարխիկ ելույթների համար, առաջացնելով բնակչության լայն զանգվածների դժգոհությունը»: Որպես լուծում առաջարկվում էր «մի տեղում գործազուրկների հավաքվելու արգելքը և որքան հնարավոր է այդպիսիներին ցրելը»[221]:

Խնամատարության նախարարության գծով կոմիսար Հ. Օհանջանյանը 1918 թ. հունվարի 2-ին (15) առաջարկում էր առողջապահության գծով տեղակալ նշանակել դոկտոր Ա. Մյասնիկովին[222], իսկ հաջորդ օրը հանդես է գալիս երկու զեկուցումներով:

Նա նահրաժեշտ էր համարում Անդրկովկասի միացյալ բժշկա-սանիտարական խորհրդի և նրա կանոնադրության ու հաստիքների ցուցակի հաստատումը, ինչպես նաև զինվորների օրապահիկների համար վարկ էր պահանջում. երկու առաջարկներն էլ հավանություն են ստա-

[219] Տե՛ս նույն տեղում:
[220] Տե՛ս նույն տեղում, ֆ. 119, ց. 1, գ. 6, թթ. 1, 4, 7:
[221] Տե՛ս նույն տեղում, ֆ. 105, ց. 1, գ. 2588, թ. 33:
[222] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 3:

նում[223]: Հունվարի 4-ին (17) Ա. Չխենկելին առաջարկում էր սահմանել Անդրկովկասից Պետրոգրադ՝ Սահմանադիր ժողով մեկնող պատգամավորների ուղեվարձի չափը և, որպես այդպիսին, հաստատվում էր 5000 ռուբլի[224]: Նույն նիստում կրկին քննարկվում է Պարենային նախարարության գծով կոմիսար Գ. Տեր-Ղազարյանի զեկուցումը՝ «Հարավ-Արևելյան միության պարենային կազմակերպման կանոնադրության» նախագծի մասին: Զեկուցողն այն մտահոգությունն էր հայտնում, որ խնդիրը քննարկել զուտ պարենային հարաբերությունների հարթության վրա՝ անկարելի է, քանի որ պարենային իշխանության միավորումը, ինչ որ նախանշվում էր վերոհիշյալ փաստաթղթում, սերտորեն կապված էր Հարավ-Արևելյան Միության քաղաքական իշխանության հարցի հետ: Պարզվում է, որ այդ նախագիծը, որը կազմվել էր Եկատերինոդարում 1917 թ. դեկտեմբերին հրավիրված բոլոր պարենային կազմակերպությունները ներկայացնող համագումարում, հիմք էր տալիս ենթադրելու, որ Անդրկովկասյան կոմիսարիատի որոշումը խորը քաղաքական ակտ է հանդիսանում, ուստի թե՛ նախագիծը և թե՛ Գ. Տեր-Ղազարյանի զեկույցը կարիք ունեին նոր քննարկման: Անդրկովկասյան կոմիսարիատի այդ նպատակով ծրագրվող հատուկ նիստի հրավիրման անհրաժեշտությունը հիմնավորվում էր նրանով, որպեսզի 1918 թ. հունվարի 12-ին Եկատերինոդարում հրավիրվող համագումար մեկնող պատվիրակները տեղեկացված լինեին համապատասխան հրահանգներով: Որոշվում է այդ նիստը նշանակել հունվարի 7-ին և հրավիրել այնտեղ երկրամասային միացյալ կենտրոնի նախագահությանը, Ազգամիջյան խորհրդի ներկայացուցիչներին, վրացական, մահմեդական, ռուսական և հայկական Ազգային խորհուրդներին[225]:

Նախատեսված օրը՝ հունվարի 7-ին (20) կայանում է հատուկ նիստ: Կոմիսարիատը լսում է պարենավորման կազմակերպման մասին կանոնադրության նախագծի հարցը:

Կրկին քննարկելով Գ. Տեր-Ղազարյանի զեկույցը՝ Հարավ-Արևելյան Միության Պարենավորման կազմակերպման կանոնադրության մասին, Խ. Կարճիկյանն, օրինակ, գտնում էր, որ «այդ նախագիծը անընդունելի կդառնա Ռուսաստանի բոլոր դաշնային պետությունների և տվյալ դեպքում Հարավ-Արևելյան միության համար, քանի որ այդպիսով պետության մեջ պետություն է ստեղծվում»: Նա աննպատակահարմար էր համարում պարենային գործը մենաշնորհի վերածող մարմնի ստեղծումը, քանի որ ա) պատերազմն ավարտվում է, մենք պատերազմ փաստորեն չենք մղում և չենք էլ վարի: Պատերազմի ժամանակ էր անհրաժեշտ

[223] Տե՛ս նույն տեղում, թ. 5:
[224] Տե՛ս նույն տեղում, թ. 7:
[225] Տե՛ս նույն տեղում:

բանակի մատակարարման համար մթերքի մենաշնորհ հաստատելը, բ) Այժմ Հյուսիսային Կովկասում այնքան հաց և մթերք է կուտակվել, որ մենք ապրանքափոխանակման բարելավման դեպքում չենք զգա դրանց պակասը»[226]: Ա. Չխենկելին միանշանակ գտնում էր, որ նախագիծն անընդունելի է Անդրկովկասյան կոմիսարիատի համար, շեշտելով վերջինիս քաղաքականացման միտումը:

Ի վերջո, նոր առաջարկով հանդես է գալիս կոմիսար Գ. Տեր-Ղազարյանը և որոշվում է ընդունել կանոնադրության հիմնական դրույթները, մասնավորապես, այն, որ Անդրկովկասը պետք է ունենա առաջին անհրաժեշտության մթերքների մատակարարման ինքնուրույն կազմակերպություն և կառույց[227]: Թե ինչու էր Ա. Չխենկելին հատուկ շեշտում պարենավորման հարցի քաղաքականացման վտանգը, դա կարելի է բացատրել նրանով, որ Հարավ-Արևելյան միության ազգային ռազմավարչական սուբյեկտները հստակ պետականամետ, «Միացյալ անբաժան Ռուսաստանի» կողմնակիցներ էին: Այս տագնապն ավելի սրվեց և իրական դարձավ 1919 թ. ի դեմս գեներալ Ս. Դենիկինի հակավրացական և հակաադրբեջանական քաղաքականության:

Վերադառնալով Խ. Կարճիկյանի մտքին՝ Հյուսիսային Կովկասում մթերքների առատության մասին, նշենք, որ հաջորդ՝ հունվարի 8-ի (21) նիստում արդեն լսվում է Գ. Տեր-Ղազարյանի զեկուցումը՝ Բաթումում և Փոթիում 300 վագոն ապրանքի կուտակումների մասին և որոշվում է խնդրել Հաղորդակցության ուղիների նախարարության գծով կոմիսար Խ. Բ. Մելիք-Ասլանովին, ձեռնարկելու բոլոր միջոցները՝ բեռների փոխադրման նպատակով[228]: Ավելացնենք միայն, որ այս և նախորդ որոշումները ընդունվում էին այն օրերին, երբ Անդրկովկասյան երկաթուղու Շամխոր, Աղստաֆա և այլ կայարաններում վրացական մենշևիկների նախաձեռնությամբ և մուսավաթականների գործակցությամբ իրականացվում էր նահանջող ռուսական զորամասերի սպանդը:

1918 թ. հունվարի 18-ին (31) Կոմիսարիատի հրամանով ստեղծվում է «Անդրկովկասի տնտեսական խորհուրդ»: Նրա նպատակն էր երկրամասի տնտեսական կյանքի կարգավորման համար ձևավորված բոլոր կազմակերպությունների (խորհուրդներ, կոմիտեներ, խորհրդակցություններ) միավորումը և գործունեության համաձայնեցումը: Խորհուրդը գլխավորելու էր առևտրի և արդյունաբերության նախարարության գծով կոմիսարը[229]:

[226] Տե՛ս նույն տեղում, թթ. 13:
[227] Տե՛ս նույն տեղում:
[228] Տե՛ս նույն տեղում, թ. 17:
[229] Տե՛ս Кавказское Слово, Тифлис, 1918, 19 января, N 14:

1918 թ. փետրվարի 28–ին Գ. Տեր-Ղազարյանի զեկույցի հիման վրա, Անդրկովկասյան կառավարությանը կից ստեղծվում է Մատակարարման կոմիտե և հրապարակվում է վերջինիս կանոնադրությանը: Նույն նիստում, կոմիսարը, պետական եկամուտների ֆոնդից հատկացնում է 10 մլն. ռուբլի՝ վառելիքի կուտակման համար[230]:

Կոմիսարիատի կազմում, հայկական կուսակցությունների միջոցով Անդրկովկասի հայ ազգաբնակչության մեկուսացման քաղաքականություն էր տարվում՝ վարկային ներդրումների անտեսման, շրջանցման ճանապարհով: Համադրելով 1918 թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում անդրկովկասյան իշխանության հաստատած վարկերի և ֆինանսական այլ միջոցների ուղղվածությունն ու ազգային-տարածքային պատկանելիության գործոնը, գալիս ենք համոզման, որ նախ՝ այդ փաստերը պատահականության արդյունք չէին, ապա և բացահայտորեն կրում էին վրաց-թաթարական դաշինքի ճնշման կնիքը:

Նման տասնյակ օրինակներից թվարկենք մի քանիսը: Միայն հունվարի 15-29–ի ընթացքում Կոմիսարիատը վարկեր էր բացել Փոթիում՝ Ռիոն գետի վրայով լաստանավային անցուղու վերանորոգման (4800 ռուբ.), Թիֆլիսի վրացական հոգևոր սեմինարիայի և արական հոգևոր գիմնազիայի ֆինանսավորման (178.400) Անդրկովկասի սունիական հոգևոր վարչության՝ 1917 թվականի հավելյալ ծախսերի ծածկման (81.000 ռուբ.), Բաքվի նահանգական հարկատան վարչության տնօրինմանը գումար հանձնելու (66.368 ռուբ.), Բաքվի 1-ին և Թիֆլիսի 4-րդ արական գիմնազիաների և Դերբենդի ռեալական ուսումնարանի կարիքների (46.630 ռուբ.), Սև ծովի հարավ-արևելյան ափի ռազմական կոմիսարի վարչության համար հաստիքների հաստատման (կոմիսար է նշանակվում Բալթիական նավատորիմի ավագ լեյտենանտ Ճավճավաձեն), Բաթումի շրջանի բանտերի վերանորոգման ծախսերը փակելու նպատակով (1.392 ռուբ.) և այլն: Այս ժամանակահատվածում միակ վարկը, որ տրամադրվել է հայությանը՝ դա հունվարի 29-ին Երևանի նահանգի վարչության գրասենյակային և տնտեսական միջոցները բերալավելու ուղղությամբ բաց թողնված չնչին վարկն էր՝ 5000 ռուբ. չափով[231]: Կոմիսարիատի նախագահությունն ահռելի գումարներ էր փոշիացնում իր վարչական ապարատի պահպանման և կենսագործունեության նպատակով: Աշխատանքի նախարարության գծով կոմիսարությունն իր հիմնարկների համար բացել էր 81.000 ռուբլու, Կոմիսարիատի միայն հունվար ամսվա մի տասնօրյակի ծախսերի համար՝ 322.814 ռուբլու չափ վարկեր[232]:

Բացառություն կարելի է համարել Անդրկովկասում գործող ուսումնական, կրթական հաստատությունների հանդեպ Կոմիսարիատի վերաբերմունքը, ինչը կյանքի մյուս ոլորտների, հատկապես՝ ռազմա-քաղաքական բնագավառի հիմնահարցերի հետ համեմատության մեջ, համեմատաբար հավասար և արդար է իրականացվել: Այսպես, հունվարի 13-ին լսելով Կովկասի Ուսումնական շրջանի վարչության գծով կոմիսարության զեկույցը, ֆինանսների կոմիսար Խ. Կարճիկյանին առաջարկվում է վարկային հաշիվ բացել Անդրկովկասի արական գիմնազիայի, ենթագիմնազիաների և ռեալական ուսումնարանների ապահովման համար (1.444. 375 ռուբ. 97 կոպ.), 1917 թ. սեպտեմբերի 1-դեկտեմբերի 31-ը ընկած հատվածում երկրամասի ուսումնարաններին հատկացվում է 2.184.000 ռուբլու, իգական գիմնազիաների ծառայողներին՝ 313.019. չափով վարկեր և այլն[233]: 1918 թ. փետրվարի 7-ին Ալեքսանդրապոլում բացվում է իգական բարձրագույն ուսումնարան և նրան հատկացվում է 11.345 ռուբլի[234]: Հունվարի 12-ին Կոմիսարիատը հատուկ լսում է Արդարադատության նախարարության գծով կոմիսար Շ. Ալեքսեև-Մեսխիևի զեկույցը՝ վրացական հոգևոր սեմինարիայի և հոգևոր ուսումնարանի վերաբերյալ:

Ինչպես նկատում ենք, Կոմիսարիատի հոգածությունից անթաքույց դուրս էին մնում նաև երկրամասի հայկական հոգևոր հաստատությունները ու դրանց կից կրթական օջախները[235]:

Անդրկովկասյան կոմիսարիատը իր կառավարման ընթացքում հասցնում է մասնակի բարեփոխումներ իրականացնել նաև երկրամասի կրթական-լուսավորական բնագավառում: Առաջին հերթին խոսքը վերաբերում է կրթական ծրագրերում ազգային լեզուների, ազգային առարկաների ներմուծմանը:

Հունվարի 29-ին Կոմիսարիատը լսում և հաստատում է ժողովրդական լուսավորության նախարարության գծով կոմիսար Ֆ. Խան-Խոյսկիի զեկույցի նախագիծը՝ Անդրկովկասի միջնակարգ ուսումնական հաստատություններում և բարձրագույն ուսումնարաններում ազգային առարկաների դասավանդման վերաբերյալ: Այս սպասված և արդարացված որոշումը, մյուս կողմից, երկրամասը Ռուսաստանից հեռացնելու հերթական հետևողական քայլերից մեկն էր: Այդ նպատակին էր ուղղված նաև Ֆ. Խան-Խոյսկիի փետրվարի 9-ի՝ Թիֆլիսի ոսուցչական ինստիտուտում ազգային բաժանմունքների բացման մասին առաջարկը[236]: Ֆ. Խան-Խոյսկին հանդես է գալիս նաև Նուխիի մասնավոր գիմնազիան լիարժեք արական գիմնազիայի վերակազմավորվելու, Նախիջևանում 8 արական գիմնազիայի բացման և նրանց 36.000 ռուբլի տրամադրելու առաջարկ-

---

[230] Տե՛ս նույն տեղում, թ. 99:
[231] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, лл. 16, 17, 19, 22, 23, 26, 27, 32, 38:
[232] Տե՛ս նույն տեղում, թթ. 27, 29:

[233] Տե՛ս նույն տեղում, թթ. 12, 18, 25
[234] Տե՛ս նույն տեղում, գ. 13, թթ. 143:
[235] Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 27:
[236] Տե՛ս նույն տեղում թ. 86:

ներով[237]: Պարզ է, որ այդ ուսումնական հաստատությունները նախատեսված էին մահմեդական բնակչության համար, ինչը Կովկասի թաթար-մահմեդական գործիչների ազգային քաղաքականության գործնական, առերես անվնաս և «արդարացված» քայլերից պետք է համարել: Հունվարի 12-ի նիստում, Ա. Չխենկելիի առաջարկով որոշվում է Անդրկովկասի բոլոր ազգերին պատկանող ուսումնարանները տրամադրել լուսավորության կոմիսարությանը[238]: Փետրվարի 14–ին քննարկվում է Թիֆլիսի միջնակարգ ուսումնական հաստատությունների և երկաթուղային ճանապարհային ուսումնարանի աշակերտների ժամկետից շուտ ուսումնական գործընթացն ավարտելու հարցը, ինչը կապված էր Անդրկովկասի վրա թուրքական արշավանքի հետ[239]:

Երկրամասի տնտեսությունը բարեկարգելու, նոր հիմքերի վրա կառուցողական գործունեություն ծավալելու ասպարեզում, կարևորվում էր նաև Անդրկովկասի նոր դրամական միավորի ստեղծման հարցը:

1918 թ. հունվարի 29–ին ընդունվում է Անդրկովկասյան կոմիսարիատի՝ Բոների մասին կանոնադրությունը, որը հիմնականում նախատեսում էր. 1. Անդրկովկասյան կոմիսարիատի բոները թողարկվում են 100 մլն. ռուբլու արժեքով, 2. Բոները թողարկվում են ժամանակավորապես, մինչև կվերանան այն պատճառները, որոնք վարկային տոմսերի խրոնիկ պակաս են առաջացրել, որից հետո դուրս կբերվեն շրջանառությունից, 3. Բոները արժեք ունեն Անդրկովկասի սահմաններում՝ պետական վարկային տոմսերի հետ համատեղ, 4. թողարկվում են մեկ, երեք, հինգ, տասը, հիսուն և հարյուր ռուբլու արժողությամբ, 5. Բոները թողարկվում են ֆինանսների կոմիսարի հանձնարարականով և պատրաստ վիճակում հանձնվում Թիֆլիսի պետական բանկի գրասենյակ՝ շրջանառության մեջ դնելու նպատակով[240]: Կոմիսարիատի որոշման համաձայն, նոր թղթադրամները պետք է մակագրվեն «Боны Закавказского комиссариата» և հավասար ուժ են ունենալու մյուս վարկային թղթադրամների հետ զուգահեռ[241]: 1918 թ. մարտի 3–ին Կոմիսարիատը Խ. Կարճիկյանի ստորագրությամբ որոշում է ընդունում՝ հունվարի 1-ից պետական ծառայողների և Անդրկովկասի քաղաքական վարչության նյութական դրության բարելավման մասին[242]: Իհարկե, լուրջ տնտեսական հիմքեր չկային նման համարձակ որոշումներ ընդունելու համար, սակայն փաստ է, որ

[237] Տե՛ս նույն տեղում թ. 61:
[238] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, օп. 2, д. 7, л. 27:
[239] Տե՛ս նույն տեղում, թ. 98:
[240] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 84, թ. 4:
[241] Տե՛ս Հորիզոն, 1918, 3 հունվարի, թիվ 1:
[242] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, g. 1, գ. 24, թ. 3:

անկախության դժվարին ուղին բռնած Անդրկովկասի կառավարությունն իր վերջին միջոցների հաշվին, այն էլ թուրքական արշավանքի պայմաններում, մի երևացող, ժողովրդային ակցիա էր ծեռնարկում:

Նշենք, որ 1917 թ. Խ. Կարճիկյանի իրականացրած դրամական ռեֆորմը նույնությամբ ընկավ 1918 թ. Անկախ հանրապետություններից հետո էլ՝ 1922 թ. Անդրֆեդերացիայի ֆինանսական բարեփոխումների հիմքում: Կոմիսարիատը ֆինանսական հարցերի կապակցությամբ առնչություններ ուներ նաև Կովկասյան ռազմաճակատի տարբեր կառույցների հետ:

Այսպես, 1917 թ. դեկտեմբերի 28–ին (1918 թ. հունվարի 10) ռազմաճակատի լիկվիդացիոն հանձնաժողովի նախագահը շրջաբերական է տարածում՝ բնակչության կողմից պատերազմի վնասների հատուցման համատեքստում, գնահատման հանձնաժողովներ ձևավորելու մասին[243]: Նույն բովանդակությամբ գրությունը Կոմիսարիատի ներքին գործերի գծով նախարարության կոմիսար Ա. Չխենկելին, 1918 թ. հունվարի 12-ին (25) տարածում է բոլոր նահանգային, շրջանային, գավառային կոմիսարներին, այդ թվում և Երևանի նահանգի կոմիսարին[244]:

Անդրկովկասյան կոմիսարիատի պատմության և գործունեության առանձին, չուսումնասիրված բնագավառ է հանդիսանում Կոմիսարիատին կից Փոքր խորհրդի ստեղծումն ու իրականացրած քաղաքականությունը:

1917 թ. դեկտեմբերի 22–ի որոշման համաձայն, Անդրկովկասյան կոմիսարիատին կից, 1918 թ. հունվարի 3–ին ստեղծվում է Փոքր խորհուրդ, որի նախագահ նշանակվում Գ. Ոցխիլաձեն[245]: Փոքր խորհրդի ձևավորումը մի կողմից պայմանավորված էր Անդրկովկասյան կոմիսարիատը մեծ քանակությամբ գործերից բեռնաթափելու անհրաժեշտությամբ՝ նրան օրենսդրական գործունեության լայն ասպարեզ տրամադրելու, երկրամասը խաղաղեցնելու նպատակով, մյուս կողմից՝ Փոքր խորհուրդը իր որոշակի իրավասությունների շրջանակներում պետք է արագացներ այն ընթացիկ հարցերի լուծումը, որոնք չէին պահանջում առաջնակարգ օրենսդրական բնույթի որոշումների հրապարակում: 1918 թ. հունվարի 3–ին, Խորհրդի նախնական խորհրդակցությանը քննարկելով Գ. Ոցխիլաձեի կազմած կանոնադրությունը գտավ, որ վերջինս ընդգծված կերպով նեղ շրջանակների մեջ է դնում խորհրդի գործունեությունը, ուստի և Կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորիի կողմից լրամշակված

[243] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 126, թ. 2:
[244] Տե՛ս նույն տեղում, թ. 5:
[245] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 274, л. 2:

տարբերակն ընդունվեց 1918 թ. հունվարի 17-ին[246]: Վերջինիս 12 կետերից գլխավորները նախատեսում էին. 1. Անդրկովկասյան երկրամասի կառավարման ոչ սկզբունքային ընթացիկ հարցերի քննարկում և լուծում, 2. Փոքր խորհուրդը ձևավորվում է 12 տեղական-կոմիսարների կազմով, ըստ Կոմիսարիատի վարչությունների քանակի, 3. Փոքր խորհրդի նախագահ ու տեղակալ նշանակվում են Կոմիսարիատի որոշմամբ, 4. Փոքր խորհուրդն իրավունք չունի լուծել ընդհանուր քաղաքական նշանակություն ունեցող հիմնահարցեր, հրապարակել օրենսդրական բնույթի ակտեր, պաշտոնների նշանակել երկրամասը ղեկավարելու նպատակով և մեծ նախահաշվային ծախսեր առաջարկել 5. Փոքր խորհրդի քննարկած հարցերը ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, 6. Փոքր խորհրդի որոշումների գործարկումը կարող է կանգնեցվել Կոմիսարիատի նախագահի կարգադրությամբ[247]:

1918 թ. հունվարի 1 – մարտի 15-ի ընթացքում Փոքր խորհուրդը հրավիրել է 24 պլենար նիստ, որտեղ ընդունվել են 146 որոշումներ: Թերևս խախտելով իր իսկ կանոնադրության գլխավոր սկզբունքներից մեկը, այնուամենայնիվ, արխիվային նյութը վկայակոչում է, որ խորհուրդը հրապարակել է օրենսդրական բնույթի 15 որոշումներ[248]:

Անդրկովկասյան կոմիսարիատի տաս գերատեսչությունների շրջանակներում, Փոքր Խորհրդի իրականացրած գործունեության համապատկերն ընդհանուր, համառոտ գծերով այսպիսին է.

Ներքին գործերի նախարարության գծով Փոքր խորհուրդը որոշել էր Բաթումի շրջանում և Ախալցխայի գավառում ձևավորել միլիցիայի պահեստազոր, ֆինանսավորել է Թիֆլիսում Կարմիր Գվարդիայի կազմակերպումը: *Ֆինանսական* կարևորագույն միջոցառումներից էին. ա) 1918 թ. փետրվարի 12–ի որոշումը Անդրկովկասում հողագնման օպերացիաների վերացման մասին, բ) Բաքվի քաղաքային ինքնավարության կողմից ժամանակավոր դրամանիշների (20 մլն. ռուբ. չափով) թողարկումը, գ) Թիֆլիսի պալատի խնամքի նպատակով հանձնաժողովի ձևավորումը (Գ. Տեր-Հարությունյան, Պ. Գելեյշվիլի, Ի. Փարցխալաշվիլի) և այլն: *Հողագործության նախարարության գծով կոմիսարության* բնագավառում Փոքր խորհրդի ձեռնարկած առաջնահերթ հարցը հունվարի 31-ի որոշումն էր՝ Անդրկովկասի անտառների պահպանման և օգտագործման ժամանակավոր կանոնների գործարկման մասին: Այն հատկապես կարևորվում էր ագրարային հարցի առաջնահերթության համատեքստում: *Ռազմածովային կոմիսարության գծով* Փոքր խորհուրդը հաստատել և հավանություն էր տվել կոմիսարի ներկայացրած նպաստների վերաբերյալ նշանակումներին: Փոքր խորհուրդը, հատկապես, տևական ժամանակ էր տրամադրել *Հաղորդակցության ուղիների կոմիսարության* գործերին: Պետրոգրադի հետ Անդրկովկասի կապի բացակայության պայմաններում, այս կոմիսարության իրավասության տասնյակ գործեր, որոնք կոմիսարի իշխանության սահմաններում չէին կարող լուծում ստանալ, տրվում են Փոքր խորհրդի քննարկմանը: Մարտի 9–ի որոշման համաձայն, օրինակ, հավասարվում էին անդրկովկասյան երկաթուղու բոլոր տեսակի ծառայողների իրավունքները և այլն: *Ժողովրդական լուսավորության բնագավառում* ձեռք բերած նշանակալի որոշումներից կարելի է հիշատակել պատմա-հնագիտական ինստիտուտի խնամքի, Ալեքսանդրապոլում վերոհիշյալ իգական գիմնազիայի բացման, Ախալցխայի հասարակական գիմնազիայի ֆինանսավորման մասին ակտերը: *Արդարադատության գծով* Փոքր խորհուրդը հաստատեց նախ՝ նահանգական կոմիսարների, նրանց տեղակալների և գավառական կոմիսարների ենթադատության սկզբունքը, ապա և կանգնեցվեցին աջարների, լազերի և այլ մահմեդական ազգերի գործերը, որոնք մեղադրվել էին պետական դավաճանության մեջ, ոչ ռազմագերի և ոչ զինապարտ թուրքերի ազատումը բանտերից, որոնց նկատմամբ քրեական մեղադրանք չէր ներկայացվել: *Արդյունաբերության բնագավառում* խորհրդի ջանքերով բացվում են վարկեր՝ մաքսային հաստատությունների վերանորոգման նպատակով, հատկացվում են նպաստներ: *Առողջապահության ասպարեզում* միջոցներ են տրամադրվում կույրերի դպրոցի և հիվանդանոցային խնամքի համար, գյուղական բժիշկներին և միջին բժշկական անձնակազմին, որոնց կենսապայմանները համեմատաբար ծանր էին, տրվում են նպաստներ: *Աշխատանքի կոմիսարության գծով* որոշակի միջոցներ ձեռնարկվեցին, որոնք նպատակ ունեին հարթել ձեռնարկատերերի և բանվորների միջև հասունացող կոնֆլիկտները, մասնավորապես «ֆինանսական տեխնիկների» գործում և Մակուի ռազմական ճանապարհը կառուցող բանվորների կարիքների բավարարման հարցում[249]:

1918 թ. սկզբին Կոմիսարիատը քննարկում է նաև մի շարք կոմիսարությունների 1917 թ. նոյեմբերի 15-1918 թ. հունվարի 15-ը ընկած ժամանակահատվածի հաշվետվություններ. այդ թվում էին Պետական վերահսկողության Առևտրի և արդյունաբերության, Խնամատարության, Արդարադատության և դավանանքի, Արդարադատության, Արտաքին գործերի, Ներքին գործերի նախարարությունների գծով կոմիսարների

[246] Տե՛ս նույն տեղում, էջ. 4-14:
[247] Տե՛ս նույն տեղում, էջ. 1:
[248] Տե՛ս նույն տեղում, էջ. 12:

[249] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 274, л. 12:

հաշվետվությունները[250]: Արտաքին գործերի կոմիսար Ե. Գեգեչկորիի հաշվետվությանը կանդրադառնանք համապատասխան բաժնում, իսկ ինչ վերաբերում է մյուսներին, ապա մեր կողմից հայտնաբերվել է միայն ներքին գործերի կոմիսարի 1918 թ. հունվարի 30-ին ներկայացրած հաշվետվության տեքստը[251]:

Ներքին գործերի նախարարության գծով կոմիսար Ա. Չխենկելին ոստիկանական նախկին կարգի մնացուկների վերացման, ժողովրդավարական սկզբունքների ամրապնդման, ինչպես նաև երկրամասի միատեսակ կառավարման նպատակով, մշակել և Անդրկովկասյան կոմիսարիատի հաստատմանն էր ներկայացրել «ռազմա-ժողովրդական վարչության» վերացման մասին նախագիծը, որով բոլոր համապատասխան հաստատություններն անցնում էին ՆԳՆ իրավասությանը. բացառություն էին կազմում միայն դատական կազմակերպությունները: Այդ մասին դեկրետը հրապարակվեց 1917 թ. դեկտեմբերի 1–ին: Միաժամանակ, քանի որ առանց հարկադիր ապարատի երկրամասը կառավարել հնարավոր չէր, ուստի և հանցագործ տարրերի դեմ պայքարելու, անձնական և գույքային անվտանգությունը պաշտպանելու, պետական և տեղական հարկերի և տուրքերի հավաքման նպատակով ստեղծվեց Միլիցիա: Երկրամասի պաշտպանության համար, ինչն անհրաժեշտ էր ավազակային հարձակումների, թալանի, սպանությունների քանակի ավելացման հետ կապված, ձևավորվեց գյուղական միլիցիա, որի զինումն իրականացվում էր Կոմիսարիատի ՆԳՆ կողմից և երկրամասի ռազմական գերատեսչության ու հեղափոխական կազմակերպությունների համաձայնությամբ: Ելիզավետպոլի նահանգում ահագնացող անարխիայի դեմ պայքարելու նպատակով, շտապ կարգով կազմակերպվեց «Հատուկ ժողովրդական միլիցիան», մի ջոկատ, որը պետք է պաշտպաներ քաղաքից մինչև երկաթուղային կայարան ընկած մայրուղին, դրա հետ միասին Ելիզավետպոլի, Բաքվի, Երևանի, Թիֆլիսի նահանգներում, ռազմական իշխանությունների հետ համաձայնեցված, բնակավորվում էին առավել վստահելի բանակային զորամասերը:

Հաշվետվության վերջում, ՆԳՆ գծով կոմիսար Ա. Չխենկելին խոստովանում էր, որ տեղերում հնարավոր չէ ամուր հեղափոխական կարգ հաստատել[252]:

[250] Տե՛ս նույն տեղում, գ. 12, թթ. 37, 39, 40, 50, 52, 61;
[251] Տե՛ս նույն տեղում, թ. 62-70:
[252] Տե՛ս նույն տեղում:

***

Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից 1917 թ. նոյեմբերից – 1918 թ. ապրիլ ամիսների ընթացքում բարձրացրած և համեմատաբար լայն համակողմանի քննարկումների առարկա դարձած հարցերի շարքում առանձնանում է Հողային օրենքի ընդունման հիմնախնդիրը:

Անդրկովկասյան կոմիսարիատը, որն ի սկզբանե երկրամասի հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների դաշինք էր, որպեսզի բոլշևիզմի և խորհրդային իշխանության դեմ ընդգծի իր սոցիալիստական «էությունը» և սոցիալիստների երկու թևերի պայքարում առաջնություն ձեռք բերի, փորձեց լուծում տալ ռուսաստանյան պետության ամենացավոտ հիմնահարցին՝ հողային խնդրին: Սահմանադիր ժողովի նախաշեմին, Անդրկովկասի կառավարությունն օր առաջ և ամեն գնով ցանկացավ, բազմաշերտ հողային սեփականության և հարաբերությունների տեր երկրամասը՝ այն էլ ժողկոմխորհի հռչակագրից հետո, հակադրել խորհրդային Ռուսաստանի համապատասխան հռչակագրին և իր կարծիքով ճիշտ լուծում առաջադրեց հողային հարցի համար: Կոմիսարիատին կից երկրամասային հողային կոմիտեում, հարցի նախնական քննարկման ժամանակ, հողագործության նախարարության գծով կոմիսար Ա. Ներուչևը նախագծի նախապատրաստումն այդպես էլ հիմնավորում էր. «*խոշոր սեփականատիրական հողերի բռնագրավման մասին* կանոնադրության իրականացումը չի կարելի ձգձգել,- գրում էր նա,- քանի որ բոլշևիկներն իրենց ագրարային դեկրետով կներթափանցեն անդրկովկասյան գյուղ, ինչը անցանկալի հետևանքներ կառաջացնի»[253]:

Առաջին քայլը Կոմիսարիատն իրականացրեց 1917 թ. նոյեմբերի 24-ին, երբ ձևավորվեց անդրկովկասյան Հողային կոմիտեն: Այն ստեղծվեց Փետրվարյան հեղափոխության համատեքստում՝ Օզակոմին կից, 1917 թ. մարտի 17-ին կազմված Հողային գործերի ժամանակավոր հանձնաժողովի հիմքի վրա և վերակազմավորվեց որպես Անդրկովկասյան Հողային կոմիտե[254]: Վերջինիս կառուցվածքը, աշխատակարգը և իրավասությունը ևս ժամանակավոր էին, քանի որ Համառուսաստանյան Սահմանադիր ժողովն էր դիտվում առայժմ այն միակ և իրավասու մարմինը, որը պետք է վերջնական լուծեր ագրարային հարցը:

1917 թ. դեկտեմբերի 16-ին Անդրկովկասյան կոմիսարիատը Հողագործության և Արդարադատության կոմիսարությունների հեղինակությամբ հրապարակեց օրենք՝ «Պետական, նախկին ուղելային եկեղեցա-

[253] Г. Хачапуридзе, Большевики Грузии в боях за победу советской власти, Москва, 1951, с. 137
[254] Տե՛ս Հորիզոն, 1917, 24 նոյեմբերի, թիվ 251:

կան, վանքապատկան, իրավաբանական անձանց և մասնավոր սեփականատիրական հողերը Հողային կոմիտեներին հանձնելու մասին»[255]:

Որոշակի չափաբաժնից ավելին լինելու դեպքում հիշյալ կատեգորիայի հողերը բռնագրավվում էին նրանց տերերից և հանձնվում հողային կոմիտեներին, ձևավորելով երկրամասային հողային ֆոնդ: Այդ ֆոնդից հող էին ստանալու կարիքավոր գյուղացիները[256]: Ինչ-որ առումով, օրենքը կրկնում էր հողի մունիցիպալիզացիայի մենշևիկյան ծրագիրը, որը ընդունվել էր Անդրկովկասյան գյուղացիական համագումարներում՝ 1917 թ. Փետրվարյան հեղափոխության փուլում: Անդրկովկասի գյուղացիությանը հղված Կոմիսարիատի հատուկ դիմումի մեջ, հողային կոմիտեն կոչ էր անում ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի տեղի չունենան հողերը զավթելու ինքնագլուխ գործողություններ[257]:

Իրականում Անդրկովկասում իրականացվում էր հողերի բռնագրավում, լիովին անհասկանալի բոլշևիկյան «ազգայնացում»: Առաջին հայացքից թվում է, թե երկրամասային հողերը տրվում էին բնակչությանը՝ գյուղացիությանը, իսկ օրենքն էլ Կոմիսարիատում ջերմ աջակցություն էր ստանում վրացական մենշևիկների և թաթար հոմմեթականների կողմից, այն դեպքում, երբ նույն օրենքը լիովին համապատասխանում էր երկրամասի մահմեդական բեկերի և վրացական կալվածատիրական բուրժուազիայի շահերին:

Այս օրենքով՝ հողերը, որոնք գյուղացիությունը հույս ուներ թղթի վրա ստանալ, փոխանցվում էին իրականում ոչ թե նրանց, այլ հողային կոմիտեների իրավասությանը, որոնք հիմնականում տնօրինվում էին կալվածատերերի կողմից: Բացի այդ, Անդրկովկասի առանձին վայրերում, մասնավորապես, Հայաստանում և Արևելյան Անդրկովկասում, հողային կոմիտեներ այդպես էլ չստեղծվեցին: Գյուղացին պետք է վարձակալեր այն հողերը, որոնք ոչ շահավետ պայմաններով անցնում էին հողային կոմիտեների տնօրինությանը: Ինչ վերաբերում է կալվածատիրական հողերից օգտվող գյուղացիներին, ապա նրանք էլ հարկադրված պետք է վճարեին վարձակալման և այլ մուծումներ՝ պարտավորագրերի դրույքի չափով (աշխատավարձի չափ):

[255] Տե՛ս Сборник законов, инструкций и разяснений по Министерству земледелия, Тифлис, 1918, с. 42.
[256] Տե՛ս Земельные законы Закавказского правительства, Тифлис, 1918, с. 14-17:
[257] Տե՛ս Վ. Ղազախեցյան, Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար 1917-1920 թթ., ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1987, թիվ 11, էջ 41:

Անդրկովկասյան Կոմիսարիատի Հողային օրենքը առավելապես կրում էր ձևական, դեկլարատիվ բնույթ և փաստորեն պահպանում էր հողը որպես խոշոր կալվածատերերի սեփականություն: Այնտեղ, օրինակ, նշվում էր, որ, այսպես կոչված, «երկրամասային հողային ֆոնդին» կդիմեն և մասնավոր սեփականատիրական հողերը, որոնք գերազանցում են հայտնի չափերը», սակայն այդ նույն չափերն այդպես էլ չսահմանվեցին[258]: Միաժամանակ, հարկ է նշել, որ վրացական շրջանների գյուղացիությանը հեղափոխական ճանապարհով հաջողվեց ստիպել Կոմիսարիատին, որպեսզի վերջինս ճանաչի որպես միջնադարից պահպանված մնացուկ՝ այսպես կոչված խիզանության ինստիտուտի վերացումը և 1918 թ. հունվարի 1–ից նախկին ժամանակավոր պարտավորյալ գյուղացիներին ազատի հետագա փրկագնային մուծումներից[259]: Պետք է նշել, որ այս պարագայում անգամ ամրապնդվում էր այն, ինչն իրականացվել էր գյուղացիության կողմից, քանի որ ցարիզմի անկումից հետո գյուղացիները դադարեցին մուծումներ կատարել կալվածատերերին:

1917 թ. դեկտեմբերի 27–ին կայացավ բ. զ. և գ. պ. երկրամասային կենտրոնի նիստը, որտեղ՝ Անդրկովկասյան Կոմիսարիատը 40–օրյա իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն էր ներկայացնում: Հողային հռչակագրի շուրջ ծավալվեց բանավեճ: Մենշևիկ Վ. Ջուղելին քննադատելով օրենքը, գտավ, որ այն լիովին պահպանում է բեկերի ազդեցությունը Կոմիսարիատի վրա, հատկապես նրանով, երբ մինչև վերջնական բաժանումը՝ հողը գյուղացիությանը տրամադրելու գործընթացը անորոշ ժամանակներով հետաձգվում էր: Հողագործության նախարարության գծով կոմիսար, աջ էսեռ Ա. Ներուչևի ելույթից էլ պարզվում է, որ նախ՝ Կոմիսարիատում հողի վերաբաժանման հարցը բարձրացվել էր ոչ թե մահմեդականների, այլ Դաշնակցություն կուսակցության կողմից, ապա և վերոհիշյալ բաժանումը ավարտվելու էր նույն օրը: Էսեռ կոմիսարի կարծիքով, հողային կոմիտեների կազմակերպումն ընթանում էր արագացված տեմպերով, ինչում և նա տեսնում էր հողային հարցի շուտափույթ լուծման հիմնական գաղափարը[260]:

Հայ իրականության համար Հողային օրենքը, բացի զուտ գյուղացիական-սոցիալական բովանդակությունից, նաև ազգային վտանգ էր պարունակում: Բացառվում էր, որ մահմեդականներն իրենց հսկայական կալվածքները կամավոր կերպով համայնացնեին: Հայ բնակչությունը ևս, չնայած Կոմիսարիատի դաշնակցական անդամների ոգևորված հավանությանը, չէր ենթարկվելու այդ օրենքին ուստի և նոր առճակատում էր

[258] Տե՛ս Сборник законов..., с. 42:
[259] Տե՛ս նույն տեղում:
[260] Տե՛ս Молот, 1917, 31 декабря, N 64:

կան, վանքապատկան, իրավաբանական անձանց և մասնավոր սեփականատիրական հողերը Հողային կոմիտեներին հանձնելու մասին»[255]:

Որոշակի չափաբաժնից ավելին լինելու դեպքում հիշյալ կատեգորիայի հողերը բռնագրավվում էին նրանց տերերից և հանձնվում հողային կոմիտեներին, ձևավորելով երկրամասային հողային ֆոնդ: Այդ ֆոնդից հող էին ստանալու կարիքավոր գյուղացիները[256]: Ինչ-որ առումով, օրենքը կրկնում էր հողի մունիցիպալիզացիայի մենշևիկյան ծրագիրը, որը ընդունվել էր Անդրկովկասյան գյուղացիական համագումարներում՝ 1917 թ. Փետրվարյան հեղափոխության փուլում: Անդրկովկասի գյուղացիությանը հղված Կոմիսարիատի հատուկ դիմումի մեջ, հողային կոմիտեն կոչ էր անում ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի տեղի չունենան հողերը զավթելու ինքնագլուխ գործողություններ[257]:

Իրականում Անդրկովկասում իրականացվում էր հողերի բռնագրավում, լիովին անհասկանալի բոլշևիկյան «ազգայնացում»: Առաջին հայացքից թվում է, թե երկրամասային հողերը տրվում էին բնակչությանը՝ գյուղացիությանը, իսկ օրենքն էլ Կոմիսարիատում ջերմ աջակցություն էր ստանում վրացական մենշևիկների և թաթար հոմմեթականների կողմից, այն դեպքում, երբ նույն օրենքը լիովին համապատասխանում էր երկրամասի մահմեդական բեկերի և վրացական կալվածատիրական բուրժուազիայի շահերին:

Այս օրենքով՝ հողերը, որոնք գյուղացիությունը հույս ուներ թղթի վրա ստանալ, փոխանցվում էին իրականում ոչ թե նրանց, այլ հողային կոմիտեների իրավասությանը, որոնք հիմնականում տնօրինվում էին կալվածատերերի կողմից: Բացի այդ, Անդրկովկասի առանձին վայրերում, մասնավորապես, Հայաստանում և Արևելյան Անդրկովկասում, հողային կոմիտեներ այդպես էլ չստեղծվեցին: Գյուղացին պետք է վարձակալեր այն հողերը, որոնք ոչ շահավետ պայմաններով անցնում էին հողային կոմիտեների տնօրինությանը: Ինչ վերաբերում է կալվածատիրական հողերից օգտվող գյուղացիներին, ապա նրանք էլ հարկադրված պետք է վճարեին վարձակալման և այլ մուծումներ՝ պարտավորագրերի դրույքի չափով (աշխատավարձի չափ):

[255] Տե՛ս Сборник законов, инструкций и разяснений по Министерству земледелия, Тифлис, 1918, с. 42.
[256] Տե՛ս Земельные законы Закавказского правительства, Тифлис, 1918, с. 14-17:
[257] Տե՛ս Վ. Ղազախեցյան, Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար 1917-1920 թթ., ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1987, թիվ 11, էջ 41:

Անդրկովկասյան կոմիսարիատի Հողային օրենքը առավելապես կրում էր ձևական, դեկլարատիվ բնույթ և փաստորեն պահպանում էր հողը որպես խոշոր կալվածատերերի սեփականություն: Այնտեղ, օրինակ, նշվում էր, որ, այսպես կոչված, «երկրամասային հողային ֆոնդին» կդիմեն և մասնավոր սեփականատիրական հողերը, որոնք գերազանցում են հայտնի չափերը», սակայն այդ նույն չափերն այդպես էլ չսահմանվեցին[258]: Միաժամանակ, հարկ է նշել, որ վրացական շրջանների գյուղացիությանը հեղափոխական ճանապարհով հաջողվեց ստիպել Կոմիսարիատին, որպեսզի վերջինս ճանաչի որպես միջնադարից պահպանված մնացուկ՝ այսպես կոչված խիզանության ինստիտուտի վերացումը և 1918 թ. հունվարի 1–ից նախկին ժամանակավոր պարտավորյալ գյուղացիներին ազատի հետագա փրկագնային մուծումներից[259]: Պետք է նշել, որ այս պարագայում անգամ ամրապնդվում էր այն, ինչն իրականացվել էր գյուղացիության կողմից, քանի որ ցարիզմի անկումից հետո գյուղացիները դադարեցին մուծումներ կատարել կալվածատերերին:

1917 թ. դեկտեմբերի 27–ին կայացավ բ. զ. և գ. պ. երկրամասային կենտրոնի նիստը, որտեղ՝ Անդրկովկասյան կոմիսարիատը 40–օրյա իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն էր ներկայացնում: Հողային հռչակագրի շուրջ ծավալվեց բանավեճ: Մենշևիկ Վ. Ջուղելին քննադատելով օրենքը, գտավ, որ այն լիովին պահպանում է բեկերի ազդեցությունը Կոմիսարիատի վրա, հատկապես նրանով, երբ մինչև վերջնական բաժանումը՝ հողը գյուղացիությանը տրամադրելու գործընթացը անորոշ ժամանակներով հետաձգվում էր: Հողագործության նախարարության գծով կոմիսար, աջ էսեռ Ա. Ներուչևի ելույթից էլ պարզվում է, որ նախ՝ Կոմիսարիատում հողի վերաբաժանման հարցը բարձրացվել էր ոչ թե մահմեդականների, այլ Դաշնակցություն կուսակցության կողմից, ապա և վերոհիշյալ բաժանումը ավարտվելու էր նույն օրը: Էսեռ կոմիսարի կարծիքով, հողային կոմիտեների կազմակերպումն ընթանում էր արագացված տեմպերով, ինչում և նա տեսնում էր հողային հարցի շուտափույթ լուծման հիմնական գաղափարը[260]:

Հայ իրականության համար Հողային օրենքը, բացի զուտ գյուղացիական-սոցիալական բովանդակությունից, նաև ազգային վտանգ էր պարունակում: Բացառվում էր, որ մահմեդականներն իրենց հսկայական կալվածքները կամավոր կերպով համայնացնեին: Հայ բնակչությունը ևս, չնայած Կոմիսարիատի դաշնակցական անդամների ոգևորված հավանությանը, չէր ենթարկվելու այդ օրենքին ուստի և նոր առճակատում էր

[258] Տե՛ս Сборник законов..., с. 42:
[259] Տե՛ս նույն տեղում:
[260] Տե՛ս Молот, 1917, 31 декабря, N 64:

առաջացնելու հայ հասարակության մեջ: Դեռ նոյեմբերի 2–ին, մինչև օրենքի հրապարակումը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Տփղիսեցին հանդես եկավ Հողային կոմիտեի կողմից վանքապատկան և եկեղեցական բոլոր հողերի բռնագրավման (աշխարհականացման) դեմ բողոքով[261]: Կաթողիկոսն առաջարկում էր հարցը հանել Կոմիսարիատի կողմից քննարկվող հարցերի ցուցակից, ասվածը հիմնավորելով, նախ՝ նրանով, որ հնարավոր է, որ կրկնվի 1903 թ. հունիսի 12–ի ցարական հրամանագրի պատճառով առաջացած համաժողովրդական զայրույթը, ապա և նրանով, որ Սահմանադիր Ժողովում ինքն ունի այդ առիթով որոշակի առաջարկներ:

Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի «իբրև ընտրյալ հայ ազգի և պահապան ազգային ժառանգության» բողոքն առավել քան հիմնավոր է. «Էջմիածնի և այլ վանքերի, ինչպես և եկեղեցիների հողերը դարերով ծառայել են և ծառայում են ժողովրդի և հոգևորականութեան կուլտուրական նպատակներին: Այդ հողերը նուիրել են ոչ թէ միայն Անդրկովկասի, այլ ամբողջ աշխարհի հայերը և նրանց տնօրինութիւնը պատկանում է միայն ամբողջ հայ ժողովրդի ներկայացուցչութեան, այլ ոչ զանազան քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչներին»[262]: Դրա հետ մեկտեղ, Հայկական եկեղեցական կառույցի և կաթողիկոսի զայրույթը միայն Կոմիսարիատի կողմից հողային օրենքի, այսինքն՝ վանքապատկան ու եկեղեցական բոլոր հողերի պետականացման դեմ չէր ուղղված: Բողոքի պատճառներն ավելի խորն էին ու հիմնավոր: Խնդիրը նրանում է, որ Փետրվարյան հեղափոխության շնորհիվ և վերջինիս համատեքստում Հայ Առաքելական եկեղեցին ևս որոշակի ազատություններ ձեռք բերեց: 1917 թ. հունիսին Էջմիածնում հրավիրեց իր պատմության մեջ միակ հայկական եկեղեցական համագումարը և ավելին, եկեղեցին ժամանակավոր կառավարության միջոցով նոր արտոնությունների հույսեր էր փայփայում*:

Այս կապակցությամբ, դեռ 1917 թ. սեպտեմբերի վերջին, Արևելահայոց ազգային համագումարին զուգահեռ, Հայ Առաքելական եկեղեցին առանձին, ինքնուրույն կառույցի ստեղծման հրամայականն էր հետապնդում: Հայրապետական Դիվանի դիվանապետ Տիրայր եպիսկոպոսը,

[261] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի արխիվ, ֆ. 1, ց. 20, թղթ. 239, վավերագիր թիվ 102/1:
[262] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 16, նաև՝ Մշակ, 1917, 9 դեկտեմբերի, թիվ 258: Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի արխիվ, ֆ. 1, ց. 20, թղթ. 239, վավերագիր թիվ 108:
* Հանգամանորեն տե՛ս Վ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997 և նույնի՝ Էջմիածնի եկեղեցական համագումարը, Բազմավէպ, թիւ 1-4, 2003, Վենետիկ, էջ 262-281:

սեպտեմբերի 23-ին և 28-ին, դիմելով գերապատիվ Գարեգին եպիսկոպոսին, գրում էր այն մասին, որ Նորին սրբության հրամանով անհրաժեշտ է մի ժողով հրավիրել և համապատասխան հռչակագրով դիմել ժամանակավոր կառավարությանը: Եվ քանի որ նախատեսվող Ազգային Սահմանադիր ժողովը (որի ջատագովը Հայ Առաքելական եկեղեցին էր – Վ. Մ.) առայժմ հնարավոր չէր իրականություն դարձնել, ուստի որպես մոտակա խնդիր բարձրացվում էր այդ Սահմանադրության Կանոնադրության (Положение) և բուն Ազգային Սահմանադրության գլխավոր դրույթների ստեղծման հիմնահարցը: Առաջիկա խորհրդակցությանը հրավիրվում էին նաև, հիմնականում, ՀԺԿ և ՀՅԴ ներկայացուցիչներ՝ Պ. Քալանթարյանը, Ստ. Մամիկոնյանը, Ս. Հարությունյանը, Հ. Սպենդիարյանը, Ս. Տիգրանյանը[263], մի հանգամանք, ինչը վկայում է այն մասին, որ համազգային խնդրի քննարկմանը հրավիրվում էին հայ իրականության մեջ առավել ազդեցիկ և հեղինակավոր կուսակցությունների ու մտավորականության ներկայացուցիչները՝ հայ հասարակությունը միավորելու, համատեղ գործելու հեռանկարով: Բոլշևիկյան հեղաշրջումը կասեցրեց նաև այս գործընթացը:

Կաթողիկոսական դիվանի մեկ այլ ուշագրավ փաստաթուղթ, որն ի դեպ միակն է այս խնդիրը վեր հանելու համար, վկայում է, որ Անդրկովկասի կոմիսարիատը առաջարկ է ներկայացրել նաև կրթական հաստատություններում կրոնի պարտադիր չլինելու մասին: Հայոց Գանձակի վիճակի փոխանորդը 1917 թ. դեկտեմբերի 6–ին Հայրապետական դիվանին տեղեկացնում էր, որ տեղի ս. Նունեի օրիորդաց ուսումնարանի տեսուչը այդ մասին անգամ չի հայտնել մանկավարժական խորհրդին, մինչև հարցի լիարժեք պարզաբանումը[264]:

Հողային օրենքը և նրա ոչ հայամետ ուղղվածությունը հերթական պառակտումը հրամցրեց հայկական ազգային ուժերին, կուսակցություններին: Փաստելով հայ իրականության հոգևոր-եկեղեցական և ազգային-մշակութային հաստատությունների բողոքը Հողային հռչակագրի նկատմամբ, դաշնակցական Ավ. Շահխաթունյանը «Հորիզոնում» հրապարակված հոդվածում փորձում էր ցրել կասկածները և հիմնավորել անդրկովկասյան իշխանության քայլը: Դա նախ և առաջ վերաբերում էր ապագա Սահմանադիր ժողովի իրավասությանն այս հարցում: Նա գտնում էր, որ Կոմիսարիատի մտքովն անգամ չի անցել յուրացնել և ի չարս գործադրել

[263] Տե՛ս Մատենադարան, նույն տեղում ֆ. 1, ց. 20, թղթ. 239, վավերագիր 68 և Գարեգին Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 95 վավերագիր 678:
[264] Տե՛ս նույն տեղում, Կաթողիկոսական դիվանի արխիվ, ֆ. 1, ց. 20, թղթ. 239, վավերագիր թիվ 61:

Սահմանադիր ժողովի իշխանությունը, որ այդ հրովարտակի հրապարակման գլխավոր դրդապատճառը հենց այն է, որ Սահմանադիր ժողովի գումարման կամ նրա բնականոն գործունեության վերաբերյալ ինքնին վստահություն չի եղել երկրամասում, ուստի եզրակացնում էր, որ այդ պատճառով էլ «աշխատավոր ժողովրդին հանձնելի հողերը փոխանցվում են հողային կոմիսարների տեսչությանը»[265]: Այստեղ առկա է հակասություն Սահմանադիր ժողովի, որպես գերակա մարմնի հանդեպ վստահության և նրա քննադատության միջև: Ավ. Շահխթունյանը կարծում էր, որ այդ պատճառով իսկ հրովարտակը չի շոշափում հողի շահագործման ձևերի հարցը: Հարվածի գլխավոր ուղղությունը դարձյալ հասցեագրելով հայկական բուժուազիային, այդ թվում և ՀԺԿ-ը, Ավ. Շահխթունյանը սոցիալիզմի տեսանկյունից հայտարարում էր, որ Բաքվի հայ կապիտալիստները չեն, որ պետք է բողոքեն հողը ժողովրդին հանձնելու դեմ: «Մեր դարում անթույլատրելի է, որ հայկական կուլտուրական հիմնարկութիւնները պահեն չքաւոր գյուղացիութեան միջոցներով: Պարոնայք կապիտալիստները թող բարեհաճեն իրենց մասնակցութիւնը բերել ազգային կուտուրական հիմնարկութիւնների պահպանութեան տուրքին: Իսկ վանք ու եկեղեցու պահպանման ծախսերը բացառապես նրանց վրա պէտք է ընկնեն,- գրում էր նա»[266]: «Հորիզոնի» մեկ այլ խմբագրականում, Ս. Վրացյանի հեղինակությամբ, Դաշնակցության գաղափարական ղեկավարությունը, որն արդեն անդրկովկասյան իշխանության կրողն էր ու ձեռք էր բերել «մինիստրական» պորտֆելներ, անվերապահորեն պաշտպանում էր այդ իշխանությունը, որի դեմ ընդամենը մեկ ամիս *չանցած ինքն էր անօգուտ պայքարելու և հիասթափվելու: Կուսակցության* համար բացատրությունը պարզ էր - «բուրժուական խաւերը չեն կարողանում հանդուրժել այն սոցիալական ռեֆորմները, որոնց ձեռնարկել է Անդրկովկասեան կոմիսարիատը»[267]: Իրականում, ինչպես և կարծում ենք, դրանք ամենևին բարենորոգումներ չէին և չէին կարող այդպիսին ծառայել ի սկզբանե, այն էլ բոլշևիկյան հեղաշրջումից հետո, երբ ողջ երկրի, այդ թվում և Անդրկովկասի ո՛չ քաղաքական, ո՛չ առավել ևս տարածքային հեռանկարը պարզ չէր: Այս, հետո էլ զեմստվոների մասին հապճեպ ընդունված հռչակագրերը, երկրամասում բնակչության առջև վստահություն ձեռք բերելու քայլեր էին, որոնք բոլշևիզմին հակադրվող «իսկական» սոցիալիզմի անվան տակ բռնագրավումներ իրականացնելով կապիտալիստներից, կալվածատերերից, հոգևորականութ-

[265] Տե՛ս Հորիզոն, 1917, 24 նոյեմբերի, թիվ 271:
[266] Տե՛ս նույն տեղում:
[267] Տե՛ս Հորիզոն, 1917, 25 նոյեմբերի, թիվ 252:

յունից, իրականում իշխանությունը պահելու, զորքը կերակրելու միջոցներ էին: Այդ ամենը վերջին հաշվով մի գերնպատակ էր հետապնդում՝ Անդրկովկասի անջատում բոլշևիկյան Ռուսաստանից:

Կաթողիկոսի բողոքից հետո հողային օրենքի դեմ ավելի համարձակ արտահայտվեցին Հայ ժողովրդական կուսակցությունը, արևմտահայերի օրգան «Հայաստան» թերթը[268], «Վան-Տոսպը»[269], պարսկահայությունը՝ ի դեմս Ատրպատականի պատգամավորական ժողովի, Ալեքսանդրապոլի «անկուսակցական սոցիալիստները», Բաքվի Միջկուսակցական մարմինը՝ այդպիսով նաև դաշնակցականները և հատկապես հայկական գավառի ՀՅԴ ներկայացուցիչները:

Դաշնակցությունը հայտնվեց հակասության առջև, ինչը բխում էր կուսակցության ազգային բնույթի, նկարագրի և սոցիալիստական կեցվածքի անհամամասնության ելեկետից: Կուսակցության պաշտոնական օրգան «Հորիզոնը» գտնում էր, որ «Հայ ժողովրդական կուսակցութիւնը, բողոքելով անդրկովկասեան հողային կոմիտէի որոշման դէմ՝ պաշտպանում է հայ բուրժուազիայի շահերը»[270]: Երևանի հողային կոմիտեն, որի անդամները բացառապես դաշնակցականներ էին, երդվյալ հավատարմատար Լ. Մուշեղյանի նախագահությամբ դեկտեմբերի 7-ին ընդունում են մի բանաձև՝ եկեղեցապատկան հողերի մասին, որն ամբողջությամբ հակադրվում էր Կոմիսարիատի դաշնակցական կոմիսարների՝ մոտեցումներին և որոշմանը: Նկատի ունենալով Երևանի նահանգի այն էական առանձնահատկությունը, որ հայոց վանքապատկան, եկեղեցական հողերը, նաև վակուֆները նվիրվել են թե *ռուսահպատակ և օտարահպատակ* հայերի և մահմեդականների կողմից, որ այս հողերի եկամուտները գտնվում և գործադրվում են ոչ միայն Կովկասի սահմաններում, այլև *նրանից դուրս և որ այդ հողերի գրավումն առաջ կբերի խորը ազգամիջյան* ցնցումներ, հողային կոմիտեն միաձայն որոշում է, որ «վերոհիշեալ հողերը չեն ենթարկվում հողային ֆոնդին փոխանցվելուն՝ վերաբաժանութեան *համար և որ այս հարցի* վերջնական լուծումը պատկանում է Հիմնադիր ժողովին»[271]: Անկասկած, Երևանի «գավառական» դաշնակցականները կենտրոնի՝ Թիֆլիսի համեմատ ավելի կշռադատված, կյանքից բխող և զգույշ մոտեցում էին ցուցաբերել հարցին, քան Թիֆլիսի «ապահով» սոցիալիստները և փաստորեն դեմ էին գնում հողային հարցում Կոմիսարիատի քաղաքականությանը, որը տվյալ դեպքում՝ որպես ազգային քաղաքականության բաղկացուցիչ էր հանդես գալիս Անդրկովկասում: Ուշագրավ է նաև «Մշակի» դիտարկումն այդ հարցի դրդապատճառների վերաբերյալ: Անդրկովկասում իրականացված քաղաքային դումաների և Սահմանադիր ժողովի պատգամավորների ընտրություննե-

[268] Տե՛ս Հայաստան, 1917, 14 դեկտեմբերի, թիվ 174:
[269] Տե՛ս Վան-Տոսպ, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 43:
[270] Մշակ, 1917, 23 դեկտեմբերի, թիվ 269:
[271] Տե՛ս Հորիզոն, 1917, թիվ 268՝ ըստ Մշակ, 1917, 23 դեկտեմբերի:

ը ևս վկայում էին, որ «հայ ժողովուրդը ձայն է տալիս Դաշնակցութեան, որպէս մի ռազմիկ ոյժի, որը պիտի պաշտպանի հայ ժողովուրդը, բայց երբ դրվում են քաղաքական-սօցիալական հարցեր՝ այն ժամանակ հենց այդ նոյն կուսակցութեան շարքերում առաջ են գալիս խիստ տարաձայնութիւններ: Եւ երբ անցնի հայ ժողովրդի համար այս կրիտիկական մոմենտը, Դաշնակցութեան 9/10 կը բաժանվի Թիֆլիսում նստած իր պարագլուխներից, որոնք ղեկավարում են այն մտքով, թէ նրանց սօցիալիստ կը համարեն այս կամ այն քայլի համար, թե ոչ: Եւ որքան շուտ այս քաղաքական կուսակցութիւնը ենթարկվի դիֆերենցիացիայի, որքան շուտ նա ազատվի հայ ժողովրդի համար ողբերգական հետևանքներ ունեցող դուալիզմից, այնքան աւելի կշահի բազմատանջ հայ ազգը»[272]: Առավել արմատական էր հնչում «Հայաստան»-ի համեմատությունը, թե «Կովկասեան կոմիսարները պոլշեվիկներու պէս իրական կեանքի պահանջքները արհամարելով այնպիսի ձեռնարկներու և գործունեութեանց կը մղուին, որ ուղղակի կը յիշեցնէ պոլշեվիկեան տեսակէտը»[273]: Այս հարցի առնչությամբ դիպուկ գնահատականներ է տալիս նաև «Վան-Տոսպ» պարբերականը: Վերջինիս մոտեցումը, եթե անգամ լիովին ընկալելի չլիներ իր ժամանակի մեջ, ապա գիտական անաչառ լուսաբանման համատեքստում առավել քան ընդունելի էր հետհոկտեմբերյան Անդրկովկասում, երբ հիմա էլ՝ նոր իշխանության մեջ, վրացական և մահմեդական գործիչների հեռատես, համաձայնեցված վարքագիծը, որքան էլ ցավալի է փաստել, բայց նույն Կոմիսարիատի դաշնակցական հայ գործիչների քաղաքականության արդյունքում էր նաև ձևավորվում: Վրացական ազգային համագումարում, վրաց ազնվականների հողերը բռնագրավումից փրկելու համար՝ սոցիալիստ-մենշևիկ Ն. Ժորդանիայի և իր գործընկերների աշխատանքի շնորհիվ դրանք դառնալու էին ազգային սեփականություն: Մահմեդականներն էլ իրենց վակուֆային հողերը նույն բռնագրավումից զերծ պահելու նպատակով դիմել էին այլ միջոցի՝ հողային հանձնաժողովին մասնակցող մահմեդական-թուրք ներկայացուցչի միջոցով հայտարարել էին, թե «մահմեդական տգէտ, կրօնամոլ ժողովուրդը չի կարող հաշտուել վակուֆային հողերի գրաւման գաղափարի հետ»[274] և առաջարկել էին, որ հարցը լուծելիս հենց այդ պարագան նկատի ունենան ու այդպիսով հետաձգեն այդ կալվածքների բռնագրավման հարցը: Հայ գործիչների դիրքի մասին «Վան-Տոսպը» արդարացված տարակուսանք էր հայտնում: Ընդունելով այն իրողությունը, որ Կոմիսարիատի հայազգի անդամները, տվյալ դեպքում, որպես ազգային գործիչներ չէին հանդես գալիս, այնուամենայնիվ այն հարցադրումն էր արվում, թե «հայ անդամները մէր վանքապատկան և եկեղեցապատկան կալուածների խնդրին մօտենալիս փորձե՞լ են այն չափով արդարացնել հայ ազգի տեսակէտը այդ խնդրի վերաբերմամբ, ինչ չափով այդ արել է «տգէտ իսլամ ժողովրդի» ներկայացուցիչը»[275]:

Նոյեմբերի 27-ին մահմեդական գործիչների նախաձեռնությամբ քննարկվում են Անդրկովկասյան կոմիսարիատի և Անդրկովկասյան կենտրոնական մահմեդական կոմիտեի միջև հարաբերությունների հաստատման և Կոմիսարիատի հայտնի հռչակագրի նկատմամբ վերաբերմունքի հարցերը[276] ինչը ինքնին բացառիկ երևույթ էր և վկայում էր երկրամասում ակտիվացող մահմեդական տարրի հավակնությունների մասին: Ա. - բ. Թոփչիբաշևը նշում էր, որ նախ՝ անհրաժեշտ է տարբերակել Արևելյան Անդրկովկասի և երկրամասի այլ տարածքների կյանքի պայմանները և այդ հիմքի վրա իրականացնել Կոմիսարիատի նախանշած բարենորոգումները, հեռանալ կուսակցական մեկնակետից և ղեկավարվել բացառապես բնակչության ազգային շահերով: Մահմեդական կոմիտեն գտնում էր, որ Կոմիսարիատի հռչակագրի ծրագիրը դժվար լիովին իրականացվի. զարգացող իրադարձությունները ժամանակավրեպ են դարձնում այն միջոցների բարձրացումն ու արմատական լուծումը, որոնք անմիջականորեն դիպչում են բնակչության առանձին էթնիկ խմբերի հարաբերությունների բուն էությանը և կոտրում են կեցության կարծրատիպերը: Այստեղից էլ հետևություն էր արվում, որ հողային բարեփոխումը ոչ մի դրական արդյունք չի տա Արևելյան Անդրկովկասում և առկա տնտեսական անկման ու տեղական ուժեղ իշխանության բացակայության պայմաններում, վտանգավոր է, նույնիսկ, հողերի բռնագրավման մասին հայտարարությունը, ուր մնաց թե իրագործումը: Դա կհանգեցնի խոշոր կալվածատերերի սնանկացմանը, իսկ սնանկացնել որևէ մեկին այս խառնակ ժամանակներում՝ խիստ վտանգավոր է և հղի հետևանքներով[277]: Ավելացնենք, որ կալվածատեր, մահմեդական մյուս հռետորները ևս, ինչպես օրինակ, Հաջինսկին, Հայդարովը, Ֆ. Խանխոյսկին իրենց հատուկ շանտաժի լեզվով վտանգավոր էին համարում նաև զեմստվոյի, ազգային հարցի լուծման մեջ շտապողականությունը:

Այսպիսով, հիմնվելով Անդրկովկասի ժողովուրդներին ուղղված հռչակագրի դրույթների վրա, Կոմիսարիատը ձեռնամուխ եղավ անկախ երկրամասի սոցիալ-տնտեսական վերափոխումներին:

Հաշվետու ժամանակահատվածում՝ 1917 թ. նոյեմբերի 15-1918 թ. հունվարի 15-ը, անդրկովկասյան կառավարությունն իրականացրեց մի շարք ծրագրեր, ընդունեց հրատապ որոշումներ բոլոր կոմիսարությունները

[272] Մշակ, 1917, 23 դեկտեմբերի:
[273] Հայաստան, 1917, 14 դեկտեմբերի:
[274] Տե՛ս Վան-Տոսպ, 1917, 3 դեկտեմբերի:

[275] Տե՛ս նույն տեղում:
[276] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 44
[277] Տե՛ս նույն տեղում:

ների ուղղություններով: Որոշակի նպատակային աշխատանք իրականացրեց նաև Կոմիսարիատին կից ստեղծված Փոքր խորհուրդը, որը լիազորված էր զբաղվել զուտ տնտեսական, կենցաղային առօրյա խնդիրներով:

Թեև ժամանակի քաղաքական զարգացումներին զուգահեռ, Անդրկովկասյան կառավարության գործունեությունը սոցիալ-տնտեսական, ֆինանսական, կրթական-լուսավորական և մյուս բնագավառներում նկատելիորեն զիջում էր, սակայն երկրամասի քաղաքականապես աննախադեպ ակտիվ ու հագեցած երկու ամիսների համապատկերի հետ՝ այն քաղաքացիական, առօրեական պատմության որոշակի տպավորություն է ձևավորում:

Որպես Անդրկովկասի հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների դաշինք, Կոմիսարիատը փորձեց լուծում տալ ռուսաստանյան պետության ամենաբարդ հիմնահարցին՝ հողային խնդրին: Սահմանադիր ժողովի նախաշեմին և ժողկոմխորհի հռչակագրից հետո, երկրամասի կառավարությունը ցանկացավ ճիշտ լուծում տալ հողային հարցին և այն հակադրել խորհրդային իշխանության մոտեցմանը:

Անդրկովկասյան կոմիսարիատն ընդունելով Հողային օրենքը՝ հողի աշխարհականացման, պետականացման, բռնագրավման եղանակները՝ փաստորեն կանգնեց փակուղու առջև: Դա սպասվում էր, քանի որ կառավարություն ձևավորելիս, ընտրելով ազգային, բայց միաժամանակ հեղափոխական-սոցիալիստական գերակշռություն ունեցող կուսակցական մոտեցումը, այդպիսով և հողային հարցում ձևավորվեց ընդգծված տարանջատում՝ բեկական – մահմեդական ղեկավարների և սոցիալիստ հայ և վրացի գործիչների միջև: Հողի սեփականության ցավոտ և վտանգավոր խնդրում ազգային, կրոնական տարբերություններին ավելացավ նաև առկա և սրացող սոցիալ-դասակարգային հակամարտությունը, որը եթե ազնվական ծագում ունեցող կալվածատերեր Ն. Ժորդանիայի, Ն. Ռամիշվիլիի և այլոց հետ հնարավոր էր լուծել, ապա սոցիալիստական և բացահայտ ազգային դիմագիծ ու գործելակերպ ունեցող Դաշնակցության պարագայում ոչ միայն չհանգեցրեց փոխզիջումների, այլ, ընդհակառակը, կանգնեցրեց ազգամիջյան մեծ հակամարտության առաջ:

2.2. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ

Ռուսաստանյան պետության մեջ, այդ թվում և Անդրկովկասում, բոլշևիկյան հեղաշրջումից հետո իշխանության համար պայքարի առանձնահատուկ դրսևորումներից պետք է համարել զուգահեռ ընթացող *քաղաքային դումաների և Սահմանադիր ժողովի ընտրությունները:* Այդ գործընթացը դարավոր մետրոպոլիա Ռուսաստանի հետ կապող միակ պորտալարն էր, որ երբեմն ձևական, երբեմն ճակատագրական նշանակություն ունեցող բախտորոշ շրջադարձ էր դիտվում խորհրդային իշխանությունը չճանաչող Անդրկովկասյան կոմիսարիատի համար:

Մինչև բոլշևիկյան հեղաշրջումը, այդ ընտրությունները ժողովրդավարության ուղին բռնած Ռուսաստանյան ազգերի և հասարակության ընտրած քաղաքակրթական զարգացման միակ նախանշված ելքն էին, իսկ հոկտեմբերյան զինված ապստամբությունից հետո՝ իշխանությունը զավթած, բոլշևիկների դեմ պայքարի միակ միջոցը: Սահմանադիր ժողովի հրավիրման գաղափարի շուրջ միավորվում էին բոլշևիզմը չընդունող Ռուսաստանյան նախկին պետության բոլոր հասարակական–քաղաքական ուժերը՝ բանակի պետականամետ հրամանատարությունը, հակաբոլշևիկյան պետական կազմավորումները, հոգևորականությունը, մտավորականությունը, ժողովրդավարության և բազմակուսակցական համակարգի կողմնակիցները:

Սահմանադիր ժողովը և նրա պատգամավորների ընտրությունը ողջ երկրում դիտվում էին որպես միակ իրավասու, իրավազոր, օրինական հաստատությունները, որոնք հեղաշրջումից առաջ, ընթացքում և հետո պետք է ապահովեին Փետրվարյան հեղափոխության նախանշած ժողովրդավարացման ուղին, հասարակության ազատությունն ու բազմակարծությունը:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, ընտրություններն ընթացան երկու փուլով:

Առաջին փուլն ընդգրկում էր երկրամասի խոշոր քաղաքների դումաների ընտրությունները: Բաքվում և Թիֆլիսում միաժամանակ ընթանում էին նաև բանվորական պատգամավորական խորհուրդների ընտրություններ:

Այսպես, Բաքվի բանվորական պատգամավորների խորհրդի ընտրությունները կայացան 1917 թ. հոկտեմբերի 22-ին (նոյեմբերի 4), իսկ Քաղաքային դումայինը՝ հոկտեմբերի 29-ին (նոյեմբերի 10)[278]: Երկու

[278] Տե՛ս Արև, 1917, 3 նոյեմբերի, թիվ 233:

ընտրությունների ընթացքն ու արդյունքները լիովին արտացոլում էին արդյունաբերական, բանվորական քաղաքում տիրող տրամադրությունները, միաժամանակ, նաև ազգային գործոնի դերը: Բանվորական խորհրդում ամենից շատ ձայներ ստացել էր Դաշնակցություն կուսակցությունը՝ 6886, սոցիալիստ – հեղափոխականները, համապատասխանաբար՝ 4992, բոլշևիկները՝ 4082, մենշևիկները՝ 1005 ձայն: Քաղաքային դումայում, սոցիալիստական բլոկը ձեռք էր բերել 17.523 քվե, Դաշնակցությունը՝ 12532, իսկ բոլշևիկները՝ 11.202 ձայն:

Իրավամբ կարելի է փաստել և հաստատել Դաշնակցության համոզմունքը, որ Բաքվում հայ աշխատավորական զանգվածների գերակշիռ հատվածը նախընտրում էր հայ ազգային-դեմոկրատական կուսակցությանը: Հոկտեմբերի 29-ին Դաշնակցության կազմակերպած հանրահավաքի ամբիոն է բարձրանում մենշևիկների Բաքվի առաջնորդ Ն. Ռամիշվիլին և հայտարարում, որ «Դաշնակցութեան հաղթութիւնը իմ և դեմոկրատիայի հաղթութիւնն է»: Բաքվի մոտ 22.000 հայ բանվորությունից 20.000-ը ձայնը տվել էր Դաշնակցությանը և այդ հանգամանքն առիթ էր տվել կուսակցության ղեկավարներին անվերապահորեն եզրակացնելու, թե մենշևիկ Ն. Ռամիշվիլին խաբվել է հայ էսեռներին՝ «Աթաբեկյաններին» և դաշնակցականներին համարել է ոչ թե սոցիալիստ, ուստի այդ պատճառով, իբրև թե, Դաշնակցության հետ խմբավորման մեջ չէին մտել[279]: Խնդիրը նրանում էր, որ իրոք, վրացական մենշևիզմը չէր կարող հայ ազգային ազդեցիկ կուսակցությանը, իր ախոյանին սոցիալիստական համարել, դրանով բացահայտելով նաև իր թաքնված ազգային էությունն ու ուղղվածությունը: Յուրահատուկ խոստովանություն է անում Դաշնակցությունը, հանձին Հ. Գյուլխանդանյանի. «առանձնահատուկ է մեր աշխարհագրական դիրքը, պատմութիւնը, կրոնը, ճարտարապետութիւնը, լեզուն, գրականութիւնը... եւ զարմանալի չէ, որ մեր սոցիալիստական շարժումն էլ առանձնահատուկ լինի»[280]:

Ամփոփելով, նշենք, որ Բաքվի Քաղաքային Դումայի ընտրություններին մասնակցել էր 48.169 մարդ, որի արդյունքում կուսակցություններին տրված ձայների մեծամասնությունը նախնական տվյալներով բաշխվել էր հետևյալ կերպ՝ սոցիալիստական խմբավորում՝ 17.530 (25 տեղ), ՀՅԴ՝ 12.530 (17 տեղ), Մուսավաթ՝ 10.234 (14 տեղ), բոլշևիկներ՝ 11.195 (16 տեղ), Ռուսաստանի մահմեդականների միություն՝ 8.063 (11 տեղ), կադետներ՝ 4.173 (6 տեղ), հրեական հասարակական հիմնարկությունների միություն՝ 2. 208 (2 տեղ) ռուս դեմոկրատների միություն՝ 1.647

[279] Տե՛ս նույն տեղում:
[280] Տե՛ս նույն տեղում:

(2 տեղ), պետական հիմնարկությունների ծառայողներ՝ 227, հրեական սոցիալիստական խմբավորում՝ 217: Ըստ ազգային պատկանելիության, արդյունքը հետևյալ պատկերն էր արտացոլում. հայեր՝ 38, մահմեդական-թաթարներ՝ 31, ռուսներ՝ 19, հրեաներ՝ 12, լեհեր՝ 3, վրացիներ՝ 2 հոգի[281]: Կարսում ևս, Քաղաքային դումայի ընտրությունների արդյունքում ստացվեց մոտավորապես նույն պատկերը, ուժերի դասավորությունը: ՀՅԴ-ը ստացավ 8538, էսեռները՝ 5505, բոլշևիկները՝ 3024, մենշևիկները՝ 754, ՀԺԿ-ը 225 ձայն[282]: Աղյուսակների համադրման դեպքում ստացվում է հետևյալ համապատկերը, այն է՝ Բաքվում և շրջաններում մենշևիկներին ու էսեռներին համակրում էր 23518, դաշնակցականներին՝ 19.418, իսկ բոլշևիկներին՝ 15.284 մարդ[283]: Եթե մենշևիկներին ու էսեռներին տարանջատենք, ապա ակնհայտ է դառնում, որ Դաշնակցությունն ամենից շատ ձայներն էր ստացել և Բաքվում իշխանության համար սպասվող պայքարում, որպես գլխավոր քաղաքական-հակառակորդ ձեռք էր բերում բոլշևիկներին: Թիֆլիսում, Բաքվում, Կարսում, Բաթումում, Ալեքսանդրապոլում, Գանձակում, Շուշիում, Թելավում, Գորիում, Ախալքալաքում, Ախալցխայում, Երևանում, Նոր Բայազետում, Արդվինում, Գորիսում, Իգդիրում ընտրվել էր 251 դաշնակցական իրավասու՝ 780 ընդհանուր թվից, իսկ ՀԺԿ-ից՝ 32 իրավասու:

Քաղաքային դումաներում ընտրվել էին նաև ս.-դ. Հնչակյան, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների, վրացական Ազգային-դեմոկրատական կուսակցության, Մուսավաթի և այլ կուսակցությունների ներկայացուցիչներ[284]: Դաշնակցությունը գերակշիռ հաղթանակ է տանում Երևանում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Նոր Բայազետում, Գորիսում, Արդվինում (սոցիալիստական խմբակցության հետ համատեղ), Իգդիրում: Կուսակցությունը դիրքերը զիջում է Կարսում՝ էսեռներին, Ախալքալաքում՝ սոցիալիստական խմբակցությանը, Շուշիում՝ հայ-թաթարական խմբակցությանը, Գանձակում՝ մահմեդականներին և սոցիալիստական խմբակցությանը, Գորիսում՝ մենշևիկներին, Թիֆլիսում և Բաքվում զբաղեցնում է երկրորդ տեղը՝ մենշևիկներից և սոցիալիստական խմբակցության ստացած ձայներից հետո: Հատկանշական է, որ Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Նոր Բայազետի քաղաքագլուխներ, Գանձակի քաղաքագլխի օգնական, Երևանի, Ալեքսանդրապոլի քաղաքային դումաների նախագահներ են ընտրվում դաշնակցականները: Մենշևիկ-

[281] Տե՛ս նույն տեղում, 1 նոյեմբերի, թիվ 231:
[282] Տե՛ս նույն տեղում, 21 նոյեմբերի, թիվ 240:
[283] Տե՛ս նույն տեղում, 3 նոյեմբերի, թիվ 233:
[284] Տե՛ս С. Сеф, Революция 1917 г. в Закавказье, էջ 283-285:

ների հետևողական հակազդեցության պատճառով, կուսակցությունը մեկուսացվում է քաղաքային վարչության համակարգից[285]:

Սահմանադիր ժողովի հրավիրման մասին ժամանակավոր կառավարությունը հայտարարել էր 1917 թ. մարտի 2-ին (15): Ընտրությունների մասին օրենքի մշակման նախապատրաստման համար ստեղծված Հատուկ խորհրդակցությունն իր աշխատանքները սկսեց մայիս 25-ին (հունիսի 7) և ավարտվեց սեպտեմբերի սկզբին: Այդ խորհրդակցությունը, որը նախագահում էր կադետ (ժողովրդական ազատության) կուսակցություն Ֆ. Կոկոշկինը, ներառնում էր բազմաթիվ կուսակցություններ, ռուսաստանյան գրեթե ամբողջ քաղաքական դաշտը: Հունիսյան ճգնաժամի ազդեցությամբ, ժամանակավոր կառավարությունն առաջին անգամ հայտարարեց ընտրությունների (սեպտեմբերի 17 (30) և Սահմանադիր ժողովի հրավիրման (սեպտեմբերի 30 (հոկտեմբերի 13) ժամկետները: Այնուհետև հաստատվեց նոր ժամանակացույց՝ ընտրությունները՝ նոյեմբերի 12-ին (25), Սահմանադիր ժողովի հրավիրումը՝ նոյեմբերի 28-ին (դեկտեմբերի 11)[286]: Այս հետաձգումները բացատրվում են նրանով, որ առաջին դեպքում՝ ժամանակավոր կառավարությունը փորձում էր հաղթանակած դուրս գալ քաղաքական ճգնաժամից և նոր միայն ձեռնամուխ լինել ժողովրդավարական ընտրություններին, իսկ բոլշևիկյան կառավարությունն, իր հերթին, զավթելով իշխանությունը, ձգտում էր ամրապնդել իր անկայուն դիրքերը, առայժմ ջլատել համառուսաստանյան դեմոկրատիայի դեռևս ազդեցիկ ճամբարը: Օգոստոսի 7–ին (20) սկսվեցին Սահմանադիր ժողովի ընտրությունների գործերով Համառուսաստանյան հանձնաժողովների՝ Համընտրությունների նիստերը, որոնց խնդիրը ընտրությունների նախապատրաստումն էր: Սեպտեմբերին քաղաքային դումաների և զեմստվոների վարչությունները ձեռնամուխ եղան ընտրողների ցուցակների կազմման աշխատանքներին: Հոկտեմբերին ձևավորվեցին քաղաքական կուսակցությունների թեկնածուների ցուցակները: Նոյեմբերի 17–ին (30), հակադրվելով ԺԿԽ-ին, նախկին ժամանակավոր կառավարության անդամների նիստը թերթերում կոչ հրապարակեց՝ նոյեմբերի 28–ին (դեկտեմբերի 11) Սահմանադիր ժողովի հրավիրման մասին: Դրան հետևեց Համընտրությունների անդամների՝ կադետների և աջ էսեռների ձերբակալումը և բոլշևիկ Մ. Ուրիցկիի նշանակումը որպես այդ մարմնի նախագահ: Սա առաջին քայլն էր Սահմանադիր ժողովը ցրելու ճանապարհին: Իր հերթին, ժողկոմխորհը հոկտեմբերի 27–ին (նոյեմբերի 3) ընտրությունների օր էր հաստատել նոյեմ-

[285] Տե՛ս Հորիզոն, 1917, 7 նոյեմբերի, թիվ 237:

[286] Տե՛ս Великая Октябрская социалистическая революция, Энциклопедия, Москва, 1987, с. 549.

բերի 12-ը (25): Հակախորհրդային պայքարի շնորհիվ ընտրությունները կայացան միայն 39 ընտրական օկրուգներում[287]:

Անդրկովկասի ազդեցիկ կուսակցությունները Սահմանադիր ժողովի ընտրարշավին նախապատրաստվում էին համապատասխան ծրագրային դրույթներով և մարտավարությամբ:

Սահմանադրական - դեմոկրատները Սահմանադիր ժողովը, որը հրավիրվելու էր համընդհանուր, ուղիղ հավասար գաղտնի, առանց սեռական խտրականության սկզբունքների հիմքի վրա, համարում էին ժողովրդի գերագույն կամքի կազմակերպված արտահայտման միակ ճշմարիտ ձևը: Այդ ժողովի հրավիրումը նրանք ընկալում էին որպես «Մեծ հեղաշրջմամբ թելադրված» ժամանակավոր կառավարության պարտականություն: Սահմանադիր ժողովի հրավիրումով այդ կառավարությունը դադարելու էր գործել:

Սոցիալիստ – հեղափոխականները գտնում էին, որ Սահմանադիր ժողովը պետք է հրավիրվի կարճ ժամկետում, չկապելով այն պատերազմի ավարտի հետ: Ընտրություններին պետք է մասնակցեր ամբողջ բանակը: Ընտրությունները պետք է կայանան հատուկ ընտրական տեղամասերում, որոնք Անդրկովկասում ձևավորվելու են ազգերի ազգագրական տեղաբաշխման սկզբունքով: Եվ վերջապես, էսեռների կարծիքով ընտրությունները պետք է իրականացվեն համամասնական սկզբունքով, ցուցակներով:

Հայ հեղափոխական դաշնակցության մոտեցումն այս հարցում կրկնում էր զեմստվոների նկատմամբ մարտավարությունը: Կուսակցությունը համոզված էր, որ մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումն անրաժեշտ է իրականացնել այն կենսական պահանջները, որոնք ավելի չեն սրի ժողովուրդների և հասարակության տարբեր շերտերի հարաբերությունները: Դաշնակցությունն այդպիսի պահանջներ էր տեսնում 1) Անդրկովկասի վարչական բաժանումների փոփոխումը, 2) բանվորների վիճակը բարելավելու նպատակով հաշտարար ատյանների ստեղծումը, 3) գյուղացիության վիճակի բարելավումը՝ նմանատիպ միջնորդական մարմինների աջակցությամբ, կալվածատիրական հողերի տուրքերի նվազեցումը, 4) պետական կարգավիճակում գործող դպրոցների ազգայնացումը, ինչպես ղեկավարման, այնպես էլ դասավանդման իմաստով, 5) բոլոր վարչական և դատական հիմնարկներում տեղական լեզուների ներդրումը:

Դաշնակցությունը լրջորեն մտահոգվում էր նաև այն հարցով, որ քանի դեռ հայտնի չէ, թե ժամանակավոր կառավարությունը ինչ տեսքով

[287] Տե՛ս Великая Октябрская..., Энциклопедия, էջ 550:

է Անդրկովկասում կիրառելու ընդհանուր ընտրական օրենքը, ուստի անհրաժեշտ էր համարում միջոցներ կիրառել, որպեսզի հայ ժողովուրդը վարչական բաժանումների, պատերազմի ծնած պայմանների պատճառով չզրկվի բնակչության քանակին համապատասխան ներկայացուցչությունից:

Սոցիալ-դեմոկրատ մենշևիկների կարծիքով երկրում հասունացած ագրարային, բանվորական, ազգային և այլ հիմնահարցերի շուտափույթ լուծումը և այնպես, որ այդ ամենը արժանանա հասարակության բոլոր շերտերի հավանությանը, հնարավոր է իրականացնել միայն Սահմանադիր ժողովի ճանապարհով: Նրանք մեծ հույսեր էին կապում այդ հեղինակավոր մարմնի հետ նաև այն առումով, որ նա կկարողանա վերջ տալ պատերազմին:

Սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները Սահմանադիր ժողովի նկատմամբ վերաբերմունքը կապում էին ժամանակավոր կառավարության և զ. բ. պատգամավորների խորհուրդների հանդեպ կուսակցական դիրքորոշման հետ և ինչպես վերևում տեսանք, մեկ գլխավոր խնդիր ունեին, այն է՝ գիտակցելով ուժերի անհավասարությունը, (իհարկե ոչ բոլշևիկների օգտին – Վ.Մ.), ձախողել վերջինիս հրավիրումը[288]: Դեռ 1917 թ. հուլիսի 2-ին, Ա. Չխենկելիի ստորագրությամբ շրջաբերական է տարածվում այն մասին, որ Օզակոմին կից կազմակերպվել է Սահմանադիր ժողովի ընտրությունների անցկացման անդրկովկասյան կենտրոնական հանձնաժողով՝ Ե. Գեգեչկորիի նախագահությամբ: Հանձնաժողովի նախագահության կազմում ընտրվել էին աջ էսեռ Լոմտատիձեն, դաշնակցական Ալ. Խատիսյանը, մուսավաթական Թոփչիբաշևը: Սահմանվել էին նաև ընտրությունների անցկացման սկզբունքներն ու մեխանիզմները[289]:

1917 թ. նոյեմբերի 6-ին (19) Ա. Չխենկելին Թիֆլիսի նահանգային կոմիսարին առաջարկում էր վճռականորեն պահպանել կարգը և բոլոր միջոցներով պայքարել Սահմանադիր ժողովը ձախողելուն ուղղված փորձերի դեմ[290]:

Երկրամասում Սահմանադիր ժողովի ընտրությունները սկսվում են նոյեմբերի 12-ին՝ Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորման գործընթացին զուգահեռ: Նոյեմբերի 9-ին, Օզակոմի անդամներ Մ. Պապաջանյանի, Մ. Զաֆարովի մասնակցությամբ խորհրդակցությունը, քննելով Արևելյան Անդրկովկասի մի շարք վայրերից Սահմանադիր ժողովի ընտ-

[288] Տե՛ս А. Ставровский, Программы партий и их отношение к важнейшим вопросам, Тифлис, 1917, с. 171-177:
[289] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 88, թ. 1-3:
[290] Տե՛ս Революция 1917 г. в исторических документах, Тбилиси, 1930, с. 175-176.

րությունների հետաձգման մասին արված հայտարարությունները, որոշեց, որ ընտրությունները պետք է սկսվեն նշանակված օրը՝ նոյեմբերի 12-ին և պետք է ընթանան քաղաքներում՝ 3 օրվա ընթացքում, մյուս վայրերում՝ 7 օրվա ընթացքում[291]: Քաղաքներում ընտրությունները տեղի ունեցան նոյեմբերի 24-26-ը: Նոյեմբերի 14-ին, Օզակոմն իր վերջին հրահանգներից մեկով մասնավոր բանկերից փոխառնված գումարները Պետական բանկի միջոցով տրամադրում է Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպմանը[292]:

Այսպիսով, 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Անդրկովկասի խոշոր կենտրոններում, ապա և բուն հայկական գավառներում իրականացվեցին երկար սպասված Սահմանադիր ժողովի ընտրությունները: «Իրագործում է ռուսական հեղափոխության երազներից ամենանուիրականը,- գրում էր «Հորիզոնը»,- դեկաբրիստներից սկսած մինչև այսօր՝ մի դար շարունակ ռուս հեղափոխության կարմիր դրոշակի վրա գրված է եղել «Սահմանադիր ժողով»[293]: Դեկտեմբերի 2-ին Բաքվի ՀՅԴ «Արև» թերթն ամփոփելով քաղաքի և գործարանային շրջանի ընտրությունների վերջնական արդյունքները, ըստ ընտրացուցակների համարների, ներկայացնում է հետևյալ պատկերը. 1) Ս.-դ. մենշևիկներ – 5660 ձայն, 2) կադետներ - 9054, 3) Սոցիալիստ-հեղափոխականներ – 18.769 4) ՀՅԴ - 20.314, 5) բոլշևիկներ - 22.258, 6) վրաց սոցիալիստ-ֆեդերալիստներ – 456, 7) Հայ ազգային դեմոկրատներ – 1507, 8) վրաց ազգային դեմոկրատներ – 145, 9) ժողովրդական սոցիալիստներ – 116, Մուսավաթ – 21.762, 11) Հումմեթ – 128, 12) Մահմեդական սոցիալիստական բլոկ – 903, 13) Արևմտյան Անդրկովկասի մահմեդականներ - 3, 14) Ռուսաստանի մահմեդականներ – 7850, 15) Հրեական սիոնիստներ - 2081: Այսպիսով, թե Բաքու քաղաքի և թե բանվորական շրջանների 178.038 թվից քվեարկության մասնակցել էին 108.208 հոգի, որից ձայների մեծամասնություն ստացել էին՝ առաջին տեղում, բոլշևիկները, երկրորդ՝ Մուսավաթը, երրորդ՝ Դաշնակցությունը, չորրորդ՝ էսեռները, հինգերորդ՝ կադետները, ապա և մյուսները: Ընտրական պայքարին մասնակցում էին 15 խմբակցություններ և կուսակցություններ: Ավելացնենք, որ քաղաքում ՀՅԴ գբաղեցնում էր բոլշևիկներից (16.868) հետո երկրորդ տեղը՝ 12.712 ձայնով, իսկ գործարանային շրջաններում՝ երրորդ տեղը (7.602), Մուսավաթից (12.074) և էսեռներից (8.896) հետո[294]:

[291] Հորիզոն, 1917, 12 նոյեմբերի, թիվ 241
[292] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 116, л. 4.
[293] Հորիզոն, 1917, 12 նոյեմբերի, թիվ 242:
[294] Տե՛ս Արև, 1917, 2 դեկտեմբերի, թիվ 247:

Թիֆլիսի պատկերը բոլորովին այլ էր:

Նոյեմբերի 18–ի տվյալներով առաջին հինգ տեղերը համապատասխանաբար զբաղեցրին. 1) մենշևիկները՝ 31. 290, 2) ՀՅԴ-ը՝ 19.595, 3) բոլշևիկները 19.172, 4) էսեռները՝ 11.504 և կադետները՝ 9.565 ձայնով[295]:

Դաշնակցության կարծիքով այստեղ հաղթանակ էին տարել երկու ծայրահեղ թևերը՝ կադետները և բոլշևիկները: Այդ երևույթը կարելի է բացատրել հետևյալ կերպ: Բոլշևիկների հաղթանակը կենտրոնում և իշխանությունը Թիֆլիսում զավթելու վտանգը, քաղաքացիների մեծ մասին և զինվորներին շրջեց դեպի բոլշևիզմը, այսպիսով թուլացնելով դեմոկրատիայի ուժերը: Մենշևիկները, որոնք այս ընտրություններում 8.000 ձայն պակաս էին ստացել, քան հուլիսին կայացած քաղաքային դումայի ընտրություններում, թեքվեցին դեպի կադետները՝ որպես «Կարգի և սեփականության» միակ հենարանի, ինչպես նաև դեպի Դաշնակցությունը[296]: Հայաստանի գավառում իր լրագրային հաղորդումներով Սահմանադիր ժողովի ընտրությունների ընթացքի իրական պատկեր է ստեղծել Ջորագյուղի (Լոռի) պետական ազգայնացված դպրոցի ավագ ուսուցիչ, դաշնակցական Գևորգ Դեմիրճյանը՝ մեծանուն գրող Դերենիկ Դեմիրճյանի եղբայրը*: Նրա տեղեկությունների համաձայն Դսեղի շրջանի 15-18 գյուղերը ՀՅԴ-ին տվել էին իրենց ձայները, որը կազմում էր շուրջ 4000 ձայն: Ջորագյուղից Գ. Դեմիրճյանը հաղորդում էր, որ «ընտրութիւններից մի երկու օր առաջ մէր գիւղն էին եկել երկաթուղու վրա ծառայող երէք հոգի, որոնք հետները բերել էին մի մեծ կապոց N1 բյուլետեններով (ս.-դ մենշևիկների ցուցակը – Վ. Մ.): Երբ բացատրէցինք մէր եւ սոցիալ-դեմոկրատների հողային ծրագրէրը, իրէնք էլ փոշմանեցին: Բաժանելիս ասացին.- վարժապետ ջան, ի՞նչ անէնք, կայարանում ռոճիկներս բաժանելուց հետո պարտաւորվեցինք այս թղթերը ցրել մոտակա գյուղերում»[297]: Ընտրարշավին մասնակցում էին բազմաթիվ անվանի գործիչներ, Ալեքսանդրապոլից «Հորիզոնին» հաղորդագրություններ էր հղում, օրինակ, Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյան), Մեծ Ղարաքիլիսայից՝ Նժդեհը և՝ շատ ուրիշներ:

[295] Տե՛ս Հորիզոն, 1917, 18 նոյեմբերի, թիվ 247:
[296] Տե՛ս Молот, 1917, 21 ноября, N 40:
* 1920 դեկտեմբեր - 1921 փետրվար ամիսներին նա իր կյանքի վերջին օրերն է անցկացրել Երևանի բանտում հայ ազգային-ազատագրական շարժման այլ անվանի գործիչների հետ, մահացել է անհայտ պայմաններում, թաղվել անհայտ վայրում: Այս մասին պահպանվել են Արշալույս Աստվածատրյանի հուշերը: Գ. Դեմիրճյանը՝ տողերիս հեղինակի մոր պապն է:
[297] Հորիզոն, 1917, 26 նոյեմբերի, թիվ 253:

Դաշնակցությունը Անդրկովկասի ընտրական շրջանից Սահմանադիր ժողովին ներկայացնում էր 18 գործիչներից բաղկացած թիվ 4 ցուցակը: Կուսակցությունը ժամանակի գլխավոր ընտրությանը գործուղում էր Ստեփան Ջորյանին (Ռոստոմ), Միքայել Հովհաննիսյանին (Վարանդյան «Դրոշակի» խմբագիր), Համազասպ Օհանջանյանին, Հակոբ Ջավրիյանին, Ավետիք Շահխաթունյանին («Молот»-ի խմբագիր), Կոստանդին Համբարձումյանին, Հովհաննես Տեր-Հովհաննիսյանին (Քաջազնունի), Սիրական Տիգրանյանին, Կորյուն Ղազարյանին, Սարգիս Արարատյանին, Արտաշես Չիլինգարյանին, (Ռուբեն Դարբինյան), Սիմեոն Գրուզինյանին (Վրացյան) («Հորիզոնի» խմբագիր), Աբրահամ Գյուլխանդանյանին, Վահան Նավասարդյանին, Լիպարիտ Նազարյանին, Գևորգ Խատիսյանին, Արամ Նալչաջյանին, Համբարձում Սարգսյանին (Յապոն)[298]:

Ինչպես երկրամասի մյուս ազդեցիկ կուսակցությունները, Դաշնակցությունը ևս Սահմանադիր ժողովի ընտրություններն օգտագործեց իր քաղաքական պլատֆորմը հանրությանը ներկայացնելու, կուսակցության որդեգրած ուղու ճշմարտացիությունն ու կենսունակությունը հիմնավորելու նպատակով: Իրավիճակը կտրուկ փոխվել էր այն առումով, որ անդրկովկասյան անջատ կառավարության ստեղծումը և վրացական մենշևիզմի բացահայտ անկախական տրամադրությունները Դաշնակցությանը ևս հարկադրում էին ենթարկվել դեպքերի թելադրվող զարգացումներին և լիարժեք կերպով ստանձնել Անդրկովկասի հայության և, մասնավորապես, Երևանի նահանգի ինքնակազմակերպման գործը: Կուսակցության ղեկավարները, անվանի գործիչները լիովին չէին գիտակցում այն դարակազմիկ շրջադարձը, որը պատուհասել էր Անդրկովկասին և հայության երկու հատվածներին: Իներցիայի ուժով շարունակվում էր այն մտայնությունը, թե հիմա էլ բոլշևիկյան դարձած Ռուսաստանն է զորավիգ լինելու հայության խնդիրներին, հատկապես Հայկական հարցին: Կուսակցության մի հատվածը գոնե դեկտեմբերի սկզբին ափսոսանք էր հայտնում գեներալներ Կալեդինի և Կոռնիլովի նոր հարձակման կապակցությամբ, որը նպատակ ուներ վերջ տալ բոլշևիզմին: Դաշնակցությունն առայժմ բոլշևիզմը համարում էր դեմոկրատիայի մաս և Թուրքիայի հետ ռազմաճակատում զինադադարի ստորագրման համատեքստում զարհուրելի թյուրիմացության մեջ էր հայտնվում: Դաշնակցության «Молот» թերթի, թղթակից Ա. Ստեփանյանն իր զարմանքն էր արտահայտում, որ կուսակցությանը կարող են հակաճառել այն հարցում, թե հնարավոր չէ բոլշևիկների հետ համաձայնության գալ, որ նրանց ծրագիրն անիրականանալի ու կործանարար է Ռուսաստանի հա-

[298] Տե՛ս նույն տեղում, 10 նոյեմբերի, թիվ 240:

մար: Որպես ասվածի հիմնավորում վկայակոչվում էր այն հանգամանքը, որ Անդրկովկասյան կոմիսարիատն ու Ուկրաինական Ռադան, որոնց անհնար էր մեղադրել բոլշևիզմի հանդեպ համակրանքի մեջ, ռազմաճակատներում զինադադար են կնքել և հրապարակել են դեկրետներ, որոնք «ոչնչով չեն տարբերվում Լենինի և Տրոցկու կազմած չափավոր ակտերից»[299]: Ավելացվում էր, որ ոչ ոք չի կարող ժխտել այն, որ իշխանությունն Անդրկովկասում, փաստորեն, գտնվում է երկրամասային կենտրոնների ձեռքին, ինչը և պահանջում են բոլշևիկները: Ցանկալին հնարավորի տեղ ներկայացնելով, հեղինակը եզրակացնում էր, որ «Անդրկովկասյան կոմիսարիատի վարքագիծն անուղղակիորեն մերձենում է չափավոր բոլշևիկյան հոսանքի քաղաքականությանը և լավագույն գրավականն է, որ մենք ի վիճակի ենք հաշտեցնել ռուսական դեմոկրատիայի երկու թևերը և դիմագրավել պետության դեմ կանգնած բոլոր հակահեղափոխական ուժերին»[300]: Այստեղ, նախ՝ արտահայտված է Սահմանադիր ժողովի հանդեպ ունեցած դեռևս լավատեսական միտումը, ապա և անհասկանալի և տարօրինակ կերպով բոլշևիզմի նկատմամբ ունեցած հարգանքը: Եվ դա այն պայմաններում, որ Բաքվի խորհուրդն, ի դեմս Ստ. Շահումյանի, պայքար էր հայտարարել Կոմիսարիատի դեմ: Բոլորովին այլ խնդիր է, որպեսզի Դաշնակցությունը երկրամասի գլխավոր ռազմա-քաղաքական խնդիրների շուրջ փորձեր հետևողական համագործակցել բոլշևիկների հետ, ինչը չկար պարզապես: Դաշնակցությունը մաս կազմելով Խորհրդային կառավարությանը չճանաչող Անդրկովկասյան կոմիսարիատին, իր ծրագրային դրույթները չգիտես ինչու կառուցում էր միասնական Համառուսաստանյան դաշնային ժողովրդավարական հանրապետության շրջանակներում, դեռևս հույսեր կապելով Սահմանադիր ժողովի հետ: «Հայրենիքի և հեղափոխութեան փրկութեան միակ ճանապարհը կայանում է Ռուսաստանի բնակչութեան բոլոր շերտերի վրա հենվող իշխանութիւն ստեղծելու մէջ,- գտնում էր դաշնակցությունը,- այդպիսի մի իշխանութիւն կարող է լինել Սահմանադիր ժողովը»[301]:

1917 թ. նոյեմբերի 4–ին (17) Ավ. Շահխաթունյանը Ախալցխայի գիմնազիայի սրահում ներկայացնում էր Դաշնակցության գլխավոր նպատակները: Դրանք էին ռուսական դեմոկրատիայի աջակցությամբ Հայկական հարցի լուծումը, ռուսաստանյան ժողովրդական դաշնային պետության և հողային հարցի նկատմամբ կուսակցության դիրքորոշումը[302]: Հայ հասարակությանը մեկ անգամ ևս ներկայացնում էին Դաշնակցության գաղափարախոսության առանցքը և նպատակները: «Молот» թերթը գտնում էր, որ կուսակցության գաղափարախոսությունը զարգացել է երկու ուղղությամբ, մի կողմից՝ ռուսական նարոդնիկության սուբյեկտիվ դպրոցի, մյուս կողմից՝ Մարքսի, Էնգելսի գիտական սոցիալ-քաղաքական շարժման ազդեցությամբ: Այդ երկու հարազատ սկզբնաղբյուրները ծուլվել են հայկական հասարակության գլխավոր տեսական արժեքների հետ, որոնք բնորոշ են հայ հասարակության բազմադարյան զարգացմանը, ձևավորվելով մեկ ամուր տեսական միասնություն: Այստեղից, Դաշնակցությունը եզրակացնում էր, որ վստահաբար կարելի է խոսել հայկական սոցիալիզմի մասին, որ կուսակցությանը հաջողվել է ստեղծել «սոցիալիզմի երկմիասնական ճշմարտություն», այն է՝ տեսական երկնքի արևմտյան և պրակտիկ հողի արևելյան ճշմարտությունը: Որպես Անդրկովկասի համար ազգային հարցի լուծման հեռահար նպատակ, Դաշնակցությունն առաջ էր քաշում «Կովկասյան սոցիալիստական ինտերնացիոնալի» գաղափարը, հողային հարցի լուծումը կապում էր էսեռական սոցիալիզացիայի ծրագրի հետ, բանվորական հարցի լուծումը տեսնում էր կապիտալի դեմ պրոլետարիատի անգիջում պայքարի մեջ: Քաղաքացիական ազատության ընդունված նորմերը կուսակցությունը դարձյալ կապում էր հայկական բնավորության՝ անձնական կյանքում հայ մարդու ինքնուրույն, ազատ և անհատական պահանջների հետ[303]:

Խնդիրն այն էր, որ Ռուսաստան ասված ամբողջությունը, պետականամետ ուժերը և պատերազմում Ռուսաստանի դաշնակիցները սկզբից ևեթ ընդունել էին բոլշևիկյան հեղաշրջման բնույթը, ուստի և անհաշտ պայքար էին սկսել խորհրդային իշխանության դեմ: Անդրկովկասյան կառավարության, սակայն, այդ իշխանափոխությունն օգտագործում էր Ռուսաստանից անջատվելու և ազգային պետականությունների վերականգնման նպատակով (խոսքը չի վերաբերում Արևելյան Անդրկովկասի մահմեդական բնակչությանն ու կազմակերպություններին – Վ. Մ.), ուստի և հայտնվել էր բոլորովին նոր, վտանգներով առլեցուն և անորոշ իրավիճակում: Այդ անորոշությունն առավելապես բնորոշ էր հայ իրականությանը, որն ուներ արևմտահայության հարց, գաղթականության խնդիր, ռազմաճակատի պաշտպանության հրամայական: Այս ամբողջությունն էլ թելադրում էր իշխանության ընտրության հարց:

---

[299] Տե՛ս Молот, 1917, 3 декабря, N 49:
[300] Տե՛ս նույն տեղում:
[301] Տե՛ս Հորիզոն, 1917, 9 նոյեմբերի, թիվ 239:

[302] Տե՛ս Շարժում, Ախալցխա, 1917, 12 նոյեմբերի, թիվ 26:
[303] Տե՛ս Молот, 1917, 14 ноября, N 34:

Սահմանադիր ժողովի ընտրությունները Կովկասյան ռազմաճակատում և օկրուգի թիկունքային զորամասերում նույնպես կայացան 1917 թ. նոյեմբերին: Քվեարկությանը մասնակցած զինվորների թիվը կազմում էր 420 հազար:

Արդյունքը եղավ այն, որ տարբեր կուսակցություններից ներկայացված թեկնածուներից սահմանադիր ժողովի անդամներ ընտրվեցին էսէռներից 4, մենշևիկներից՝ 1 և բոլշևիկներից՝ 1 թեկնածուներ: Միաժամանակ, պետք է նկատի առնել այն ուշագրավ հանգամանքը, որ Սահմանադիր ժողովի ընտրություններից 10-15 օր հետո Կովկասյան բանակի զինվորները, որոնք մեծամասամբ քվեարկել էին աջ էսեռների օգտին, բանակային 2–րդ համագումար ուղարկեցին գերազանցապես բոլշևիկ պատվիրակներ, որոնք էլ համագումարում անցկացրին բոլշևիկյան բանաձևեր և մեծամասնություն գրավեցին երկրամասային խորհրդում[304]:

Այսպիսով, 1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ սկսված Ռուսաստանի ժողովրդավարության ու բազմակուսակցական զարգացման հեռանկարը ընդհատվեց բոլշևիկյան հեղաշրջմամբ: Սահմանադիր ժողովի գաղափարը, նոր՝ խորհրդային կառավարությանը հակադրելու միակ հույսը, թե՛ Ռուսաստանում և թե՛ Անդրկովկասում ապրեց ընդամենը մեկ ամիս:

1918 թ. հունվարի 5–ին (18) Պետրոգրադի Տավրիկյան պալատում բացված Սահմանադիր ժողովը փակվեց հունվարի 6–ի (19) առավոտյան: Հունվարի 6–ի լույս 7–ի (20) գիշերը Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն դեկրետ ընդունեց Սահմանադիր ժողովը ցրելու մասին[305]: Թիֆլիսում հիմնվում է կովկասյան ազգամիջյան սոցիալիստական բյուրո՝ Սահմանադիր ժողովը պաշտպանելու նպատակով: Հուվարի 8-ի (20) նիստում ընտրվում է նախագահություն, որի կազմի մեջ մտնում են Լ. Մուշեղյանը (նախագահ), Ս. Չեկալինը (անդամ) և Ա. Գյուլումյանը (քարտուղար)[306]: Հունվարի 15-ին (27) Երևանի հայոց ազգային խորհուրդը հանդես եկավ բողոքով՝ «բոլշևիկների հանդուգն և ուզուրպատորական գործողութիւնների դեմ», Սահմանադիր ժողովը կրկին անգամ համարելով «համառուսական հասարակապետութեան միակ լիազոր տերը»[307]:

Եթե վրացական մենշևիկների համար սոցիալիստների երազանք Սահմանադիր ժողովի բռնի դադարեցումը սպասված և հերթական առիթ

[304] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, նշված աշխատությունը, էջ 392-398:
[305] Տե՛ս Великая Октябрская..., Энциклопедия, с. 550:
[306] Տե՛ս Հորիզոն, 1918:
[307] Տե՛ս նույն տեղում, 17 հունվարի, թիվ 10:

էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու, անկախանալու նախատեսված ճանապարհի վրա ամուր կանգնելու համար, ապա հայությանը և Դաշնակցությանը սպասվում էր փորձությունների հինգ ամիս, որն ի հայտ բերեց հայկական քաղաքական, հասարակական ուժերի ամբողջության իրական պատկերը, վճռորոշ և անսպասելի զարգացումների հանդեպ պատրաստվածության աստիճանը:

2.3. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԶԵՄՍՏՎՈՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

Անդրկովկասի նոր իշխանության գործողությունների ծրագրում առանցքային տեղ է զբաղեցնում զեմստվոների՝ տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման խնդիրը: Այն ուղղակիորեն առնչվում է Անդրկովկասի նոր վարչա-տարածքային բաժանման, էթնիկ-ազգային սահմանների տարանջատման հետ, ուստի այդ երկու զուգահեռ ընթացող խնդիրների համատեքստում կփորձենք լուսաբանել հիմնահարցը:

Բազմազգ Ռուսաստանի և Անդրկովկասի համար այս ցավոտ խնդիրը երկրամասի նոր իշխանությունը ժառանգել էր ցարական վարչակարգից և ժամանակավոր կառավարությունից: Ցարական վարչակարգն անհրաժեշտ էր համարել համառուսաստանյան զեմստվոյական և քաղաքային կազմակերպություններին տրամադրել մի շարք տեղական-տնտեսական հաստատություններ (օրինակ, պարենային, վիրավորների օգնության և այլն): Փետրվարյան հեղափոխության նախօրեին փոխարքա Ի. Վորոնցով – Դաշկովը և Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը Նախարարների խորհուրդ ներկայացրեցին Անդրկովկասում զեմստվային ինքնակառավարության հաստատման մասին նախագիծը[308]: Դրա հետ մեկտեղ Անդրկովկասի վարչական բաժանումը ցարիզմի ազգային քաղաքականության արդյունքն էր և մեծապես կրում էր ռուսացման կնիք: Համառոտ պատմական անդրադարձը հնարավորություն կտա առավել համակողմանի ներկայացնել Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքի առաջնակարգ հիմնահարցերից մեկը, մանավանդ որ այն կարևորվում է երկրամասը Խորհրդային Ռուսաստանից անջատելու և անկախության գործընթացի առաջին քայլերի տեսանկյունից*:

[308] Տե՛ս Г.М. Туманов, Организация земства в Закавказье, Тифлис, 1918, с. 3.
* Տես՝ Հանգամանորեն, Վ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, էջ 114-120:

Անդրկովկասի ազգային վարչա-տարածքային բաժանման հարցը բարձրացվել էր 1909 և 1916 թթ. զեմստվոյական խորհրդակցություններում: Այդ խորհրդակցություններում հայազգի ներկայացուցիչները սահմանների փոփոխման հարցը հիմնավորում էին տնտեսական բնույթի փաստարկներով: 1916 թ. մարտի 1-ին Պետական Դումային կից գործող հանձնաժողովը միաձայն որոշեց Անդրկովկասում օրենսդրական կարգով զեմստվոներ մտցնելու առաջարկություն ներկայացնել: Հանձնաժողովի նիստում ելույթով հանդես եկավ Մ. Պապաջանյանը, որը հիմնավորեց Անդրկովկասում զեմստվո ներդնելու անհրաժեշտությունը[309]:

Մարտի 17-ի Դումայի նիստում քննարկվեց խնդիրը, որոշում չկայացվեց:

Մ. Պապաջանյանի նախաձեռնությամբ ձևավորվեց միջկուսակցական մարմին, որի կազմում էին Հ. Փափազյանը, Ս. Կամսարականը, Ավ. Շահխաթունյանը, Գ. Խատիսյանը, որոնք մշակեցին Անդրկովկասի վարչական սահմանաբաժանման ծրագիր: Այն Ավ. Շահխաթունյանի միջոցով ուղարկվեց Պետրոգրադ՝ ՆԳ նախարարությանը կից գործող տեղական ինքնավարությունների հանձնախմբին[310]: Այս խորհրդակցություններում արդեն հայկական կողմն անփոփոխ հայտնվում էր փոքրամասնության վիճակում, քանի որ քաղաքական իրադրությունը, որտեղ վրացիներն ու մահմեդականները գրեթե ամենուրեք գերիշխում էին, լիովին բավարարում էր այդ մեծամասնությանը: Այդ դիմադրությանը հայկական կողմը և մասնավորապես ՀՅԴ կուսակցությունը հանդիպում էր նաև այն պատճառով, որ երկրամասի ազգային-տարածքային վերաբաժանման նախաձեռնությունը միշտ բխում էր հայերից: «Զեմստվոյի կազմակերպումն Անդրկովկասում» հոդվածի հեղինակ Գ. Թումանովը* երկրամասում զեմստվոյի ներդրման խոչընդոտների շարքում առաջնությունը տալիս էր հայկական գործոնին: Ըստ նրա խորհրդակցության հայ անդամները մինչև զեմստվոների ներդրման գործին անցնելը միանգամից բարձրացնում էին երկրամասի նոր վարչական վերաբաժանման հարցը[311]:

Պարզվում էր, որ բացի պատմական բուն շրջաններից հայերը երկրամասում գրեթե ամենուրեք գերակշռում էին, ունեին ավելի համախումբ տեղաբաշխում, քան վրացիները և այսպես կոչված վիճելի տարածքները ևս ճնշող մեծամասնությամբ բնակեցված էին հայերով: Ըստ հայկական նախագծի՝ վրացական նահանգներում վրացիները կազմում էին 54%, հայերը հայկական նահանգներում՝ 65%, իսկ մահմեդականները Արևելյան Անդրկովկասում՝ 77%: Առավելությունը հօգուտ Արևելյան Անդրկովկասի բացատրվում էր նրանով, այդ բնակչության նկատմամբ կիրառվում էր ոչ թե էթնիկ-ազգային, այլ կրոնադավանության սկզբունքը:

Սակայն տարածքային առումով Հայաստանը կունենար 10 հազ. քառակուսի կիլոմետր տարածք՝ 230 հազ. բնակչությամբ, այսինքն՝ բնակչության 30%-ը կազմող հայերը կստանային հողային տարածքի 5%-ը, վրացիները հայերի հետ հավասար թիվ կազմելով ձեռք կբերեին հողի 42%-ը, այսինքն՝ 8 անգամ ավելի, իսկ մահմեդականները՝ 53%-ը[312]: Հայկական դեմոկրատիան հույս ուներ, որ Փետրվարյան հեղափոխությունն արդարություն կհաստատի այս հարցում:

Ընդհանուր գծերով ներկայացնենք ս.-դ. մենշևիկների, սոցիալիստ հեղափոխականների, սոցիալիստ-ֆեդերալիստների, Դաշնակցության և սահմանադրական-դեմոկրատների (կադետ) ծրագրային մոտեցումները տեղական ինքնակառավարման խնդրին:

Մենշևիկները դեմոկրատական հեղափոխության մեծագույն նվաճում էին համարում տեղական ինքնակառավարման մարմիններում ժողովրդավարական իրավունքի ձեռքբերումը, որը դիտարկվում էր նախ և առաջ որպես պրոլետարիատի ազատագրման նոր զենք և վերջինիս քաղաքական ազդեցության տարածման միջոց:

Կուսակցությունը մունիցիպալիզացիայի ընդհանուր հիմքի վրա գտնում էր, որ 1. անհրաժեշտ է բոլոր քաղաքատիպ ավաններում անհապաղ կիրառել քաղաքային ինքնակառավարում, 2. հասնել զեմստվային ինքնակառավարման և նրա արագ իրականացման համար ժամանակավորապես առաջնորդվել Անդրկովկասի ներկա վարչական բաժանումով՝ նահանգներից և գավառներից: Փոքր զեմստվոյական միավորների ստեղծման ժամանակ, ցանկալի է ղեկավարվել ազգային սկզբունքով:

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը հանդես էր գալիս կենտրոնական պետական կառավարման հաշվին՝ տեղական ինքնակառավարության մարմինների իրավասության շրջանակների հնարավոր ընդլայնման օգտին: Կենտրոնական կառավարությանը պետք է պատկաներ տեղական ինքնակառավարման վրա վերահսկողության իրավունքը՝ նրա գործողությունների օրինականության իմաստով: Քաղաքների հողային օրենսդրության բնագավառում կուսակցությունը հե-

---

[309] Տե՛ս Մշակ, 1916, 1 մարտի:

[310] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 20:

*Գ. Մ. Թումանովը 1917 թ. մայիսի 9-12-ը կայացած ժողովրդական կուսակցության ազատության (կադետներ) 8-րդ համագումարում ընտրվել էր այդ կուսակցության կկ-ի անդամ:

[311] Տե՛ս Г.М. Туманов, նշվ. աշխ., էջ 3:

*Այդ վիճակագրությունն իրականություն դարձավ 1918 թ. Բաքումի պայմանագրով:

[312] Տե՛ս Армяно-грузинский вооруженный конфликт, Баку, 1919, с. 3.

տամուտ էր հողի սոցիալիզացիային, այսինքն՝ հողի դուրս բերմանը ապրանքաշրջանառությունից և այն որպես ամբողջ ժողովրդի սեփականության վերածմանը: Հողի առքն ու վաճառքը մեկընդմիշտ դադարեցվում էր: Քաղաքի սահմաններում եղած ամբողջ հողն անցնում է քաղաքային ինքնակառավարությանը: Միաժամանակ, քաղաքներում հողի սոցիալիզացիան բուրժուական հասարակարգի պայմաններում չէր նախատեսում ապրանքա - արդյունաբերական հարաբերությունների խախտում, հողը մնում է նախկին սեփականատերերի ձեռքին: Էսեռները կարծում էին, որ Անդրկովկասում քաղաքային ինքնակառավարման մարմինների վերընտրությունները պետք է անցկացվեն կարճ ժամանակամիջոցում, չսպասելով դրանց նոր կանոնադրության հրապարակմանը:

Վրացական սոցիալիստ – ֆեդերալիստների կուսակցությունը Փետրվարյան հեղափոխության փուլում, իր ծրագրային փաստաթուղթը գրեթե ամբողջությամբ ձևակերպել էր վրացական ազգի և վրացերեն լեզվի առաջնության հարցերի շուրջը:

Կուսակցությունը 1917 թ. ամռանը տեղական ինքնակառավարման մարմինների և դատարանների լեզվի ընտրության իրավունքի մենաշնորհը թողնում էր Գերագույն վրացական կառավարությանը: Ավելին, տեղացի համարվում էին այն անձինք, որոնք ունեին Վրաստանի քաղաքացիություն և իրենց բնակության վայրերում ապրել էին հինգ տարուց ոչ պակաս: Շրջանի ամբողջ բնակչության 1/5 մաս կազմող ազգային փոքրամասնություններին իրավունք էր տրվում բացատրվել ու իրենց ազգային լեզուներով՝ թարգմանչի օգնությամբ: Վրաստանի ազգային ժողովի անդամներին ևս տրվում էր այդ իրավունքը:

Սահմանադիր դեմոկրատները (կադետ) տեղական ինքնակառավարման մարմիններին՝ քաղաքներին և զեմստվոներին տալիս էին տեղական օրենքներ հրապարակելու իրավունք: Այլ խոսքով, այդ հաստատություններին տրվում էին ոչ միայն տնտեսական ու վարչական, այլ տեղական շրջանակների սահմաններում քաղաքական գործառույթներ, որոնք չէին հակասի ընդհանուր օրենսդրությանը: Խոշոր ինքնակառավարության մարմիններին հնարավորություն էր տրվում փոխադարձ համաձայնությամբ փոփոխել իրենց շրջանների սահմանները: Այդ ճանապարհով կադետները հույս ունեին թեթևացնել տարբեր վարչական միավորներում ապրող բնակչության միատարր հատվածների միավորման գործընթացը, մասնավորապես Կովկասում, որն իր բնակչության խայտաբղետ կազմով և բազմաթիվ նահանգների ու գավառների մեջ՝ այդ բնակչության բաշխման տեսակետից, խիստ անհրաժեշտ էր համարվում:

Հայ հեղափոխական Դաշնակցությունը հայտարարում էր, որ կուսակցությունը զեմստվային ընտրություններին կմասնակցի միմիայն այն

դեպքում, երբ նախապես և արմատապես կփոխվեն Անդրկովկասի ներկա վարչական սահմանաբաժանումները: Հակառակ դեպքում Դաշնակցության շրջանային ժողովը կլիազորեր Արևելյան բյուրոյին բոյկոտել զեմստվային ընտրությունները[313]:

Հիմնականում, այս ծրագրային դիրքորոշումներով զինված, վերոհիշյալ կուսակցությունները մուտք գործեցին հետբոլշևիկյան քաղաքական ասպարեզ և տեղական ինքնակառավարության մարմինների՝ որպես ժողովրդավարության ընդլայնման միջոցի օգտագործման ու կիրառման հիմնահարցը, թերևս բացի էսեռներից, փորձեցին ներդնել, հիմնականում, Անդրկովկասի ազգային վարչական սահմանաբաժանումների հիմքում:

Այս շարքում որպես բացառիկ երևույթ պետք է առանձնացնել վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կեցվածքն այն առումով, որ ցարիզմի անկումից անմիջապես հետո այս ազգային կուսակցությունը, փաստորեն լիովին հակադրվելով ժամանակավոր կառավարության որդեգրած միասնական Ռուսաստանի սկզբունքին, բարձրացնում էր անկախ Վրաստանի գաղափարը:

1917 թ. հունիսին վրացական մենշևիկները և սոցիալիստ-ֆեդերալիստները գտնում էին, որ տարածքային ինքնավարության սահմանները հաստատվում են ըստ այս կամ այն ժողովրդի իրական տեղաբաշխման՝ հաշվի առնելով նաև տնտեսական, կենցաղային պայմանները և պահպանելով տարածքային ամբողջականությունը: Ազգային սահմանների փոփոխման դեպքում, սահմանային վիճելի տարածքներում պետք է կիրառվեր հանրաքվե[314]:

Դաշնակցության հետ կարճատև համերաշխությունը տևեց մինչ այն պահը, երբ երկու վրացական հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունները հրաժարվեցին իրենց «վտանգավոր» հայամետ հայացքներից և հարեցին վրացական Ազգային - դեմոկրատական կուսակցությանը:

Հետփետրվարյան Ռուսաստանում ազգային և վարչատարածքային բաժանումների հարցի լուծումը անմիջականորեն կապվում էր տեղական ինքնակառավարման մարմինների՝ զեմստվոների ստեղծման գործընթացի հետ:

Անվանի մտավորական, սպեցիֆիկ Դ. Անանունի (Դավիթ Տեր-Դանիելյան) արտահայտությամբ «ազգային տերիտորիայի որոնումը

[313] Տե՛ս А. Ставровский, նշվ. աշխ., сс. 178-191.
[314] Տե՛ս Պայքար, Թիֆլիս, 1917, 21 հունիսի:

1917 թ. կազմում էր Այսրկովկասի ժողովուրդների կենտրոնական մտահոգությունը»[315]:

Հեղափոխության սկզբում զեմստվոներով զբաղվելը դիտվում էր վաղաժամ երևույթ: Հարցը կրկին ակտիվացավ 1917 թ. ամռանը և աշնանը: Անդրկովկասում զեմստվո ունենալու նպատակով Օզակոմի կողմից հրավիրվեց խորհրդակցություն, որտեղ բարձրացվեց նաև վարչական վերաբաժանման հարցը: Այն վերաբերում էր ոչ միայն Ելիզավետպոլի ու Երևանի, այլև Թիֆլիսի նահանգներին ու Կարսի մարզին: Հայկական գծին հակադրվելը այս անգամ ևս խորհրդակցությանը փակուղի տարավ[316]:

Անդրկովկասում զեմստվոներ հիմնելու և երկրամասի վարչա-տարածքային վերաբաժանման նպատակահարմարության խնդիրները հերթական անգամ քննարկվեցին Պետրոգրադում՝ Սահմանադիր ժողովի ընտրությունների դրույթների մշակմանը նվիրված և դրան զուգահեռ ընթացող ներքին գործերի նախարարության նախաձեռնությամբ հրավիրված խորհրդակցություններում: Այստեղ ընդունվեց չափավոր փոխզիջումային տարբերակը, այն է՝ օգտվելով Պետրոգրադում Անդրկովկասի պատվիրակների ներկայությունից, մշակել նախագիծ և այն ուղարկել Օզակոմի և Կովկասի դեմոկրատիան ներկայացնող կազմակերպությունների վերջնական եզրահանգմանը: Ավ. Շահխաթունյանի և Ալ. Խատիսյանի կողմից հեղինակած նախագիծն առաջարկում էր Լոռին անջատել Բորչալուի գավառից, Ախալքալաքի շրջանը հանել Թիֆլիսի նահանգի կազմից: Ալեքսանդրապոլի նահանգը դաշնակցական գործիչները պատկերացնում էին Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Լոռու, Կարսի, Կաղզվանի գավառների միավորման տեսքով (ապագա Հայաստանը նրանց կարծիքով ստեղծվելու էր Ալեքսանդրապոլի շուրջը, Արևմտյան Հայաստանի հարցն առանձին էր լուծվելու, որպես արևմտահայության միջազգային դիվանագիտական հարց – Վ.Մ.): Դրականորեն գնահատելով նախագիծը, խորհրդակցությունը վարչա-տարածքային վերաբաժանման հիմքում դրեց էթնիկական սկզբունքը և լուծումը հանձնեց Օզակոմին[317]: Օզակոմի հրավիրած խորհրդակցության ժամանակ առարկեցին վրացական ազգային-դեմոկրատները, որոնք հենվելով 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրի վրա, արտահայտվեցին Վրաստանից Բորչալուի և Ախալքալաքի շրջանների անջատման դեմ:

[315] Տե՛ս Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, (1901-1918), էջ 613:
[316] Տե՛ս А. Шахатунян, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 119-120.
[317] Տե՛ս Армяно-грузинский вооруженный конфликт, с. 6-7.

Հայոց ազգային համախորհրդակցության հոկտեմբերի 6-ի (19) նիստը ամբողջությամբ նվիրվեց սահմանաբաժանումների խնդրին: Այն գլխավորապես ամփոփում էր ժամանակավոր կառավարության նախարարական ծրագրի և Պետրոգրադի խորհրդակցության քննարկումների ու նախնական համաձայնությունների արդյունքները: Զեկուցումներով հանդես են գալիս Ստ. Կամսարականը և Գ. Խատիսյանը, ելույթներով՝ Գ. Տեր-Ղազարյանը, Արշ. Խոնդկարյանը, Բ. Վերմիշյանը, Ա. Շահխաթունյանը, Ար. Երզնկյանը, Ստ. Մամիկոնյանը:

Ստ. Կամսարականի հայտնի նախագիծը, որն ի դեպ առաջարկվել էր Մ. Պապաջանյանի նախաձեռնությամբ, շրջանցում էր հիմնահարցի քաղաքական կողմը և նպատակ ուներ տնտեսական ու էթնիկական հիմքի վրա համախմբել միևնույն ազգի և նույն տնտեսությունն ունեցող տարածքները, որի վերջնական նպատակը՝ զեմստվոյական գործունեության բնագավառը պարզեցնելն ու հեշտացնելն էր լինելու: Նրա առաջարկությամբ ձևավորվում էր մի հայկական նահանգ, որն ընդգրկելու էր ամբողջ Երևանի նահագը, Կարսի շրջանից երկու գավառներ, Թիֆլիսի նահանգից երկու գավառ և Գանձակի նահագի լեռնային մասը, կազմելով մոտ 60 հազ. քառակուսի վերստ տարածություն՝ երկու միլիոն բնակչությամբ: Հայերը կազմելու էին ազգային միավորի 60%-ը, այսինքն՝ մեկ միլիոն երկու հարյուր հազար մարդ: Նա առաջնությունը տալիս էր խիտ հայկական բնակչություն ունեցող շրջանների միավորման մեկնակետին՝ հակադրվելով նախարարական ծրագրին, ըստ որի մեկ նահանգի մեջ միավորվելու էին Գանձակի, Երևանի և Ալեքսանդրապոլի շրջանները, ինչը Ստ. Կամսարականի կարծիքով անբնական էր և անիմաստ՝ ֆինանսական ծանրաբեռնվածության պատճառով[318]:

Գ. Խատիսյանը պաշտպանում էր երկրամասի ազգային բաժանման սկզբունքը: Ս.-դ. Գ. Տեր-Ղազարյանն առավելությունը տալիս էր կանտոնային համակարգին, որը կապահովեր ավելի միատարր ազգային համախմբումներ: Ենթադրվում էր, որ Թիֆլիսը կդառնա կանտոնների կենտրոնավայր, ինչին հակադրվում էր Դաշնակցությունը: Հարազատ մնալով էսեռական կուսակցության մոտեցմանը Արշ. Խոնդկարյանը ևս ընդունում էր կանտոնների սկզբունքը, միաժամանակ ընդգծելով, որ Անդրկովկասի սահմանաբաժանումների խնդիրը միայն հայերի հարցը չէ, այն լուծում կստանա երեք ազգերի համաձայնության ճանապարհով, մանավանդ որ թաթարները դեմ էին նահանգային սահմանաբաժանմանը: Այդ կարևորագույն հիմնահարցի մեջ նա առաջնությունը թողնում էր

[318] Տե՛ս Հայոց ազգային համախորհրդակցությունը, Փաստաթղթեր ու նյութեր, ԲՀԱ, թիվ 1-2, Երևան, 1992, էջ 59-60:

տնտեսական գործոնին ու դրանից հետո միայն դնում էթնիկական և վերջում՝ վարչական նպատակահարմարությունների հարցը: Ավելին, նա գտնում էր, որ եթե երեք պայմանները հնարավոր չէ հաշտեցնել, ապա «վարչական հարմարությունները պետք է զոհել տնտեսականին և էթնիկականին»[319]:

Համախորհրդակցության Սահմանաբաժանման սեկցիայի նախագահ Ք. Վերմիշյանը գտնում էր, որ հարցն անհապաղ լուծում է պահանջում, ուստի և դեմ էր այն Սահմանադիր ժողովի ապավինությանը թողնելուն: Նախագծի հեղինակներից դաշնակցական Ավ. Շահխաթունյանը դեմ արտահայտվելով կանտոնալ համակարգին, գտնում էր, որ միևնույն հարաբերություններն ավելի հեշտ է լուծել մեծ վարչական միությունների մեջ, քան մանր: Սոցիալ-դեմոկրատ մենշևիկ Ար. Երզնկյանը, քննադատելով ՀՀԴ «թիկունքային» քաղաքականությունը, ըստ որի «հայերն իրենց համար ստեղծելով ազգային մեծամասնություն, նույն սահմաններում ազգային փոքրամասնություն էին ստեղծում հարևանների համար», համոզված էր, որ մեկ կամ երեք նահանգ առաջարկելով, հայկական կողմը փորձում էր գծել քաղաքական և ոչ վարչական սահմաններ, ինչի համար էլ հանդիպում էր վրաց-թաթարական հակազդեցությանը: Ար. Երզնկյանի ելույթում հիշարժան է հատկապես Բաքվի և Թիֆլիսի խնդրի արծարծումը, ինչը նա ուղղակիորեն կապում էր սահմանաբաժանման կանտոնալ համակարգի հետ: Քանի որ առաջարկված նախագիծը պատկանում էր Դաշնակցությունն կուսակցությանը, ուստի և նրա հարցումն ուղղվում է վերջինիս խմբակցությանը. «Ձեր լռությամբ ասում եք, թե Բաքուն թողնում ենք թուրքերին, իսկ Թիֆլիսը՝ Վրաստանին,– նշում էր Ար. Երզնկյանը,– ո՞ւմ անունից եք այդ պահանջը դուք դնում, ո՞ր հայ ժողովուրդն է Ձեզ այդ իրավունքը տվել: Դեմոկրատիան չի կարող հանդուրժել, որ Բաքուն և Թիֆլիսը լինեն այս կամ այն ազգի, նրանք պիտի լինեն միջազգային, իսկ այդ անել կարող եք, եթե կանգնեք կանտոնալ տեսակետի վրա»[320]:

Ի վերջո, Հայոց ազգային համախորհրդակցության նիստը բանաձև չի ընդունում, բավարարվում է «հաշտեցնող բանաձև» կայացնելու վերաբերյալ հանձնաժողով ձևավորելու որոշմամբ[321]:

Վերջապես, 1917 թ. հոկտեմբերի 14-15-ը Ա. Չխենկելիի նախագահությամբ և Ն. Ժորդանիայի ու Ե. Գեգեչկորիի մասնակցությամբ կայացավ Օզակոմի ևս մեկ ընդլայնված խորհրդակցություն, որտեղ հայերի կողմից առաջարկված սահմանային փոփոխությունները մերժվեցին՝

[319] Տե՛ս նույն տեղում, էջ 60-61:
[320] Տե՛ս նույն տեղում, էջ 63-64:
[321] Տե՛ս Արև, Բաքու, 1917, 2 նոյեմբերի, թիվ 232:

հիմք ընդունելով հայերի և մահմեդականների միջև եղած անհանդուրժողականության պատճառաբանությունը: Ավ. Շահխաթունյանի արտահայտությամբ՝ վերաբաժանման հարցում «հայկական», «կուսակցական» նախագծի դեմ սկսվեց վրաց-մահմեդական կոմպանիան, այս անգամ որպես վարչական վերաբաժանման դեմ արհեստականորեն ստեղծված երկարաժամկետ զենք[322]:

Օզակոմը որոշել էր առաջարկել կենտրոնական կառավարությանը հրատարակել հռչակագիր ողջ Անդրկովկասում զեմստվո մտցնելու մասին. պայմանով, որ զեմստվո ներդրվի անմիջապես այն նահանգներում և շրջաններում, որոնք սահմանաբաժանումների հարցում վեճ չունեն, իսկ որտեղ առկա են տարաձայնություններ, անհրաժեշտ էր սահմանաբաժանում անցկացնել և նոր միայն զեմստվո հաստատել:

Այս առաջարկը չիրականացավ բոլշևիկյան հեղաշրջման պատճառով, ուստի և Անդրկովկասյան կոմիսարիատը ներքին գործերի նախարարության գծով կոմիսար Ա. Չխենկելիին հանձնարարեց հրավիրել հատուկ խորհրդակցություն և տալ վերջնական կարծիք: Խորհրդակցությունը տեղի ունեցավ նոյեմբերի 24-ին, հիվանդացած Ա. Չխենկելիին փոխարինում էր պարենավորման կոմիսար ս.-դ. մենշևիկ Գ. Տեր-Դաշարյանը: Մասնակցում էին 17 հոգի. յուրաքանչյուր ազգից՝ հինգական ներկայացուցիչ և երկուական՝ ռուսներից: Երկարատև վիճաբանություններից հետո խորհրդակցությանը ներկայացվեցին չորս բանաձևեր՝ 1. Գ. Խատիսյանի, 2. Վեշապելիի, 3. Ֆ. Խան – Խոյսկիի և 4. Հ. Առաքելյանի: Գ. Խատիսյանը հայտարարեց, որ միանում է Հ. Առաքելյանի նախագծին, ուստի մնաց երեք բանաձև[323]:

Վրացական բանաձևն առաջարկում էր իրագործել նախկին Օզակոմի որոշումը, այսինքն՝ ըստ ազգային խորհուրդների կարծիքների մեկ ամիս հատկացնել սահմանաբաժանումների համար: Մահմեդական նախագիծը կրկնում էր նույնը՝ բացառելով մեկ ամսվա ժամկետը և առաջարկում էր անմիջապես զեմստվո հաստատել անվիճելի տարածքներում, որտեղ սահմանաբաժանումը կկատարվեր տեղացի թաթար, հայ և վրացի բնակչության համաձայնությամբ: Պարզ է, որ «անվիճելի» տարածքներ ասելով՝ նկատի էին առնվում Արևելյան Անդրկովկասի այն շրջանները, որտեղ գերակշռում էր մահմեդական բնակչությունը, մասնավորապես Ելիզավետպոլի նահանգը: Հ. Առաքելյանի (ՀԺԿ) հեղինակած բանաձևը Կոմիսարիատին առաջարկում էր անմիջապես լուծել սահմանաբաժանման մասին վիճելի հարցը և ապա զեմստվո մտցնել

[322] Տե՛ս Ավ. Շահխաթունյան, նշված աշխատությունը, էջ 124:
[323] Տե՛ս Սշակ, 1917, 26 նոյեմբերի, թիվ 253:

Անդրկովկասի բոլոր շրջաններում՝ հենվելով 1917 թ. հոկտեմբերի 15-ի Օզակոմի խորհրդակցության որոշումների վրա: Սկզբում քվեարկության դրվեց Հ. Առաքելյանի բանաձևը, որը ստացավ 12 քվեարկողների 6 կողմ և 6 դեմ ձայները: Վեշապելիի բանաձևը ստացավ 5 ձայն՝ ընդդեմ 7-ի, Ֆ. Խան-Խոյսկիի բանաձևը՝ 3 ձայն՝ ընդդեմ 9-ի, հետևաբար ներկայացված ոչ մի բանաձև մեծամասնություն չստացավ (համեմատական մեծամասնություն ստացավ Հ. Առաքելյանի բանաձևը): Փաստորեն, վրացական և թաթարական նախագծերը ձախողվեցին, ուստի և գործի դրվեց պարզունակ, բայց վերջին մեկ տարվա ընթացքում քաղաքական – կուսակցական պայքարի մեջ փորձված ու թրծված մեթոդը, այսինքն՝ կիրառվեց վրաց-թաթարական հակահայկական դաշինքը. մահմեդական ներկայացուցիչները հետ վերցրին իրենց բանաձևը և խնդրեցին նորից քվեարկել վրաց ներկայացուցչի՝ իրենց համար ձեռնտու բանաձևը: Այն քվեարկվեց և այժմ ստացավ 7 ձայն՝ ընդդեմ 4-ի և 1 ձեռնպահի:

Այդպես որոշվեց դիմել Անդրկովկասյան կոմիսարիատին՝ զեմստվո մտցնել Անդրկովկասի էթնիկ-տարածքային «անվիճելի» շրջաններում, իսկ վիճելի տարածքներում մեկ ամիս հատկացնել սահմանաբաժանման համար[324]: Վարչական վերաբաժանումների շուրջ ծավալվեց նոր վիճաբանություն, որի արդյունքում Ֆինանսների և Խնամատարության կոմիսարներ Խ. Կարճիկյանը և Հ. Օհանջանյանը հայտարարեցին, որ իրենք որպես ՀՅԴ ներկայացուցիչներ ձեռնպահ են մնում Զեմստվոյի հռչակագրի քվեարկությունից[325]:

Այսպիսով, 1917 թ. նոյեմբերի 24-ի խորհրդակցությունը որոշում է. 1. հատուկ դեկրետով ողջ Անդրկովկասի վրա անմիջապես տարածել զեմստվոյական ինքնակառավարում, 2. հոկտեմբերի 15-ի զեմստվային խորհրդակցության ճանաչած Անդրկովկասի անվիճելի շրջաններում անմիջապես մտցնել զեմստվային հաստատություններ (դեմ քվեարկեց միայն Դ. Դոնսկոյը), 3. դեկրետի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Անդրկովկասյան կոմիսարիատն իրականացնելու է վիճելի նահանգների, գավառների (օկրուգ), վարչական սահմանների վերաբաժանում՝ այս խնդրի շուրջ նախապես պահանջելով հայկական, վրացական, մահմեդական ազգային խորհուրդների կարծիքը (այս կետին դեմ քվեարկեցին Մ. Զաֆարովը, Դ. Դոնսկոյը, Խ.-բ. Խաս-Մամեդովը, ձեռընպահ մնացին՝ Խ. Կարճիկյանը, Հ. Օհանջանյանը և Խ.-բ. Մելիք-Ասլանովը), 4. առաջարկել ազգային խորհուրդներին՝ հանձնաժողով ձևավորել (3-ական յուրաքանչյուրից)՝ ճանաչված, վիճելի նահանգներում և գավառներում վարչական սահմանաբաժանումների մասին նախագիծ մշակելու նպատակով[326]:

1916-1917 թթ. ընթացքում ռուսաստանյան երկու վարչակարգերի նախաձեռնությամբ քննարկվող և աջակցություն ստացող Անդրկովկասի վարչական սահմանաբանման և տեղական սահմանափակ ինքնակառավարման մարմինների հիմնահարցերի վերաբերյալ հայկական նախագիծը, որը ներկայացվում էր ՀՅԴ կուսակցության կողմից պարտություն կրեց բոլշևիկյան հեղաշրջումից հետո, Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարության ազգային քաղաքականության հետևանքով: Օզակոմը, որը ղեկավարվում էր Պետրոգրադից, զեմստվոյական խորհրդակցություններում փորձում էր ազգային հավասարակշռություն պահպանել երկրամասում՝ առավելություն չտալով ազգային այս կամ այն ուժին, կուսակցություններին: Անգամ մեծապետական կենտրոնական իշխանության բացակայությունը և Ռուսաստանի ռազմա-քաղաքական լծակների ժամանակավոր բացակայությունն Անդրկովկասի նոր կառավարության մեջ օբյեկտիվորեն ջրի երես հանեցին վրացական հեգեմոնիզմի և երկրամասի մահմեդականների հետ հակահայկական դաշինքի գործոնը, որն էլ նոր իրադրության մեջ, առանց կենտրոնի վերահսկողության, տապալեց հայկական նախագիծը: Դա առայժմ դեկլարատիվ հաղթանակ էր, որը նոր թափ ու զարգացում ստացավ 1918 թ. թուրքական արշավանքով՝ ներառելով իր մեջ թե Անդրկովկասի ազգային-տարածքային խնդիրները և թե Հայկական հարցը:

Այս առումով պատմական քննություն չի բռնում Դ. Անանունի եզրակացությունը ՀՅԴ սահմանաբաժանման ծրագրի պարտության վերաբերյալ: Նախ նշենք, որ հայկական քաղաքական դաշտի հակառակ բևեռում կանգնած ս.-դ. հայկական բանվորական կազմակերպության՝ սպեցիֆիկների տեսաբան և կուսակցության առաջնորդներից Դ. Անանունը, որը բազմիցս էր անխնա քննադատել ՀՅԴ գործունեության բոլոր ոլորտները, սահմանաբաժանման ծրագիրը համարում էր համահայկական «շոշափելիորեն մշակված նյութ»: Նա շեշտում էր հատկապես այն հանգամանքը, որ այդ ծրագիրը հրապարակ էր հանվել հայկական բոլոր կուսակցությունների համաձայնությամբ և ընդունվել Պետրոգրադի ժամանակավոր կառավարության կողմից[327]: Դ. Անանունը միաժամանակ համամիտ էր հայկական սոցիալ-դեմոկրատիայի և հարևան ազգերի գլխավոր առարկությանը, թե ՀՅԴ սահմանաբաժանման ծրագիրը նախորոք պետք է քննարկեին Անդրկովկասի բոլոր շահագրգիռ կողմերը և նոր

[324] Տե՛ս Մշակ, 1917, 26 նոյեմբերի:
[325] Տե՛ս ЦГИА Грузии ф. 1, оп. 2, д. 12, л. 37.

[326] Տե՛ս նույն տեղում:
[327] Տե՛ս Դ. Անանուն, նշված աշխատությունը, էջ 616:

միայն առաջարկվեր Պետրոգրադին[328]: Ժամանակավոր կառավարության, Օզակոմի բոլոր վերոհիշյալ զեմստվոյական խորհրդակցությունների մթնոլորտն ու ուղղվածությունը հակառակն էր հիմնավորում: Եթե անգամ ընդունենք, որ ՀՅԴ մարտավարական և քաղաքական էթիկայի սխալ էր թույլ տվել, միևնույն է, այդ ծրագիրը չէր ընդունվելու, առավել ևս անդրկովկասյան քննարկումներում: Դրա լավագույն ապացույցը Կոմիսարիատի կողմից զեմստվոյի հռչակագրի ընդունումն էր: Որպեսզի լիովին պարզ դառնա հայկական նախագծի հանդեպ վրացա-մահմեդական դիմադրության պատճառը, ներկայացնենք Դաշնակցության շրջանային ժողովում 1917 թ. հոկտեմբերին առաջարկվող վարչական սահմանաբաժանումների փոփոխման և զեմստվո մտցնելու մասին լրամշակված, տարբերակը: Կուսակցության շրջանային ժողովը, լսելով այդ հարցի առնչությամբ Արևելյան բյուրոյի կատարած աշխատանքների մասին, որոշում է՝ 1. մինչև Սահմանադիր ժողովը անհապաղ պահանջել եռաստիճան զեմստվոյի ինքնավարություն, 2. զեմստվո մտցնելու նախնական պայման է վարչական սահմանների փոփոխությունը, որով պետք է ստեղծվեին թաքարական և վրացական մեծամասնությամբ զեմստվային տարածքներ, 3. նախագծի համաձայն՝ հայկական մեծամասնության վայրը կազմում է մեկ նահանգ, որն ընդգրկում էր՝ ա. Երևանի նահանգը, բ. Գանձակի նահանգի հարավ-արևմտյան մասը (Ղազախ և Գանձակ գավառների հարավային մասերը, Ջևանշիր և Շուշի գավառների արևմտյան մասերը, Կարեագինոյի (Ջեբրայիլ) գավառի հյուսիսային մասը և Զանգեզուրի գավառը՝ առանց մի քանի թաքարական գյուղական համայնքների, որոնք միացվում էին նախկին նահանգի՝ Ելիզավետպոլի թաքարական մասին), գ. Ախալքալաքի գավառը, որին միանում են Ծալկայի հայկական մասը և Գորի գավառի երկու դրկից գյուղերը՝ Ղզլ-Քիլիսա և Մոլիթ, դ. Բորչալուի գավառի Լոռի, Ալավերդի գավառները և Բորչալուի գավառակի հայկական մասը, ե. Կարսի շրջանի երկու՝ Կարսի և Կաղզվանի գավառները: Կարսի շրջանի մյուս երկու գավառները՝ Օլթիի և Արդահանի, ինչպես և Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառի և նրա մասերի, այլև Ծալկայի հունական բաժնի ապագան որոշելու է միմիայն այդ շրջանների բնակչությունը: Շրջանային ժողովը Արևելյան Բյուրոյին իրավունք էր տալիս տեխնիկական բարդությունների դեպքում ժամանակավորապես համաձայնվել մեկի փոխարեն երեք նահանգ կազմելու գաղափարին՝ Գանձակի, Երևանի և Ալեքսանդրապոլի: Հավանություն էր տրվում նաև հայկական զեմստվային նահանգի ներքին գավառական

[328] Տե՛ս նույն տեղում:

բաժանումներին[329]: Թեև նախագիծն ակնհայտորեն ուներ թերություններ և հակասություններ, մասնավորապես, այդ մեկ հայկական նահանգի մեջ Անդրկովկասի ողջ հայ բնակչության ընդգրկման առումով, այնուամենայնիվ, այս տեսքով անգամ չէր կարող գոհացնել վրացական և մահմեդական ազգային կազմակերպություններին:

Վերադառնանք Անդրկովկասյան կոմիսարիատի զեմստվոյի վերաբերյալ հռչակագրին, որտեղ հստակ անջրպետ էր դրվում «վիճելի» և «անվիճելի» տարածքների միջև: Դեկրետի ծանոթագրությունը պարզաբանում էր, որ վարչական սահմանների առումով անվիճելի են ճանաչվում Բաքվի, Քութաիսի և Սկծովյան նահանգները, Բաթումի, Դաղստանի շրջանները, Սուխումի, Զաքաթալայի օկրուգները, Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի, Սղնախի, Թելավիի, Թիոնեթի, Դուշեթի, Գորիի, Ախալցխայի գավառները, Ելիզավետպոլի նահանգի Արեշի և Նուխիի գավառները և Կարսի շրջանի Արդահանի և Օլթիի օկրուգները: Վիճելի էին համարվում Երևանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի Կարսի, Շուշիի, Զանգեզուրի և Կարյագինոյի գավառները, Կարսի շրջանի Կարսի և Կաղզվանի գավառները և Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները[330]: Ավելացնենք, որ դեկրետի հեղինակը ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելին էր, իսկ ապագա Վրաստանն էլ համարվում էր «համատարած վրացական բնակչությամբ շրջան»[331]: Փաստորեն անվիճելի տարածքներ էին ամրագրվում այսպես կոչված «վրացական» և մահմեդական գերակշիռ բնակչություն ունեցող շրջանները, իսկ բուն հայկական և մահմեդականների հետ համատեղ բնակչություն ունեցող գավառները դիտվում էին որպես վիճելի: Դաշնակցություն կուսակցությունը նույնպես անորոշության փուլ էր ապրում: Եթե կուսակցության Երևանի օրգան «Զանգ» թերթը «ի սրտէ ողջունում» էր Անդրկովկասի կոմիսարիատի քայլը՝ վաղուց սպասված զեմստվոն, մի վերապահումով, որ «սահմանների տեսակետից «վիճելի» ճանաչված նահանգները դեռ մի ամիս ևս պետք է սպասեն զեմստուոյական հիմնարկութիւններին»[332], ապա Բաքվի ՀՅԴ մարմին «Արևը» հռչակագիրը որակում էր որպես հանցավոր քայլ: «Ո՞րն է կարևոր: Դեկրետը մի ամսով շուտ յայտարարելը, թէ կովկասեան աշխատաւորութեան եւ ժողովուրդների համերաշխութիւնը» - ահազանգում էր թերթը[333]:

[329] Տե՛ս Շարժում, 1917, 29 հոկտեմբերի, թիվ 22:
[330] Տե՛ս Молот, 1917, 28 ноября.
[331] Տե՛ս Г.М. Туманов, նշված աշխատությունը, էջ 4:
[332] Տե՛ս Զանգ, 1917, 1 դեկտեմբերի, թիվ 8:
[333] Տե՛ս Արև, 1917, 12 դեկտեմբերի, թիվ 253:

Հռչակագրի ընդունումից հետո Կոմիսարիատը ձեռնամուխ է լինում Անդրկովկասում զեմստվոյական ինքնակառավարման ներդրման գործընթացի երկրորդ փուլի կազմակերպմանը:

Այդ նպատակով նոյեմբերի 30-ին ՆԳ գծով Կոմիսարիատի կողմից ձևավորվում է հատուկ գերատեսչական հանձնաժողով՝ Ն. Կելարևի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում էին Գ. Մենդելեևը, Վ. Սոկոլովը, իշխան Ապակիձեն, Կ. Ջափարիձեն, Շրամչենկոն և Խոշտարիան: Հանձնաժողովի հիմնական նպատակն էր զեմստվային հաստատությունները համակարգող կանոնադրության մշակումը: 1917 թ. դեկտեմբերի 2-ից սկսված խորհրդակցությունն իր թվով 13 նիստերն ավարտեց 1918 թ. հունվարի 14-ին[334], որի արդյունքում համառուսաստանյան զեմստվոյական շարժման և ժամանակավոր կառավարության գաղափարական և կազմակերպական հենքի վրա ստեղծվեց «Անդրկովկասի զեմստվային հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը»[335]:

Զեմստվոյական շարժման հենք ասելով՝ նկատի ունենք զեմստվոյական գործի նշանավոր մասնագետներ, պրոֆեսոր Ավինովին, ռուսական զեմստվոյի պատմաբան Բ. Վեսելովսկիին, առաջին դումայական Դ. Պրոտոպոպովին և այլոց: Ժամանակավոր կառավարության համապատասխան հանձնաժողովի աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև այնպիսի փորձառու զեմստվոյական, ինչպիսին էր ժամանակավոր կառավարության առաջին նախագահ, իշխան Գ. Լվովը: Ա. Կերենսկիի կառավարության կանոնադրությունը 1864 և 1890 թթ. օրենքներից տարբերվում էր նախ և առաջ իր ժողովրդավարական բնույթով, այն ցենզային չէր և հիմքում դրվում էր ձայնատուների ընտրությունների մասնակցությունը՝ առանց սեռի, դավանանքի, ազգության, 20 տարին լրացած քաղաքացիների համար[336]:

Այն ընդունվեց 1918 թ. հունվարի 25-ին՝ Ն. Կելարևի կողմից ներկայացված կանոնադրության նախագծի քննարկումից հետո[337]: Նշենք, որ ժամանակավոր կառավարությունը մինչև զեմստվոների վերաբերյալ նոր կանոնադրության հրատարակումը, ընդունել էր մի շարք օրենքներ՝ 1917 թ. մայիսի 21-ին, հունիսի 9-ին, 17-ին, հուլիսի 26-ին, սեպտեմբերի 21-ին[338]:

---

[334] Տե՛ս Временное положение о земских учреждениях в Закавкае, Тифлис, 1918.
[335] Տե՛ս ՀՊԱԱ Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 59,
[336] Տե՛ս Г.М. Туманов, նշված աշխատությունը, էջ 6:
[337] Տե՛ս ՀՊԱԱ Грузии, նույն տեղում, թ. 89:
[338] Տե՛ս նույն տեղում, թ. 93:

Ն. Կելարևի նախագծի քննարկման ժամանակ՝ 1918 թ. հունվարի 6-ին, տարաձայնություններ առաջացան 9-րդ կետի շուրջ, որը վերաբերում էր Բաքվի քաղաքագլխին ենթարկվող շրջանի (նավթահանքեր) տարածքային տարանջատմանը՝ գավառի և քաղաքի սահմանի միջև: Խ. Կարճիկյանը և այլոք (այդ տեսակետն էր պաշտպանում նաև Ստ. Շահումյանը) կողմ էին նավթահանքերի միացմանը քաղաքին և այդ հարցում հենվում էին Օզակոմի որոշման վրա: Իսկ ըստ Ա. Չխենկելիի, Մ. Ջաֆարովի, Մամեդովի՝ նավթահանքերի շրջանն անհրաժեշտ է միացնել Բաքվի գավառին[339]: Նրանք փաստորեն պաշտպանում էին մահմեդականների շահերը՝ դրանով իսկ փորձելով հերքական, առայժմ մեկուսացնող հարվածը հասցնել Բաքվի հայ նավթարդյունաբերողներին, քաղաքի և գավառի հայությանը:

Վրաց-թաթարական համագործակցության մի հաղթանակ էլ գրանցվում է նույն օրն «Անդրկովկասում հաշտարար դատավորների համագումարների ժամանակացույցի» վերաբերյալ նախագծի քննարկման ժամանակ: Արևելյան Անդրկովկասի նահանգներում այդ հարցի բարձրացման շրջանակներում, Գ. Խատիսյանը հայտարարում էր, որ հաշտարար հաստատությունների բաշխումն այդ նահանգների հայ բնակչության թվի համաչափության տեսանկյունից արդարացի չի լուծված, ուստի միջնորդում էր գավառները բաշխել ըստ որ կազմած վարչական բաժանման նախագծի: Գ. Խատիսյանին անմիջապես առարկում է արդարադատության կոմիսար Շ. Ալեքսեև-Մեսխիևը՝ պնդելով, որ այդպիսով կօրինականացվի ապագա սահմանաբաժանման հայկական տարբերակը: Քվեարկությամբ մերժվում է նաև Խ. Կարճիկյանի առաջարկը՝ վիճելի նահանգներում մինչև սահմանաբաժանումը պահպանել գավառների գոյություն ունեցող բաշխումը: Այս առումով զարմանալի չէր, որ ընդունվում է Ա. Չխենկելիի ուղղումը, որը, որպես փոխզիջում, առաջարկում էր, որպեսզի հաշտարար շրջանները վերաբաժանվեն վարչական սահմանաբաժանումներից հետո[340]: Ա. Չխենկելիի հաշվետվության մեջ ավելի հստակ էր մեկնաբանվում վրացական մենշևիկների մարտավարությունը, որը հանգում էր երկրամասի վարչական սահմանաբաժանման հետաձգմանը[341]:

Դաշնակցության առաջին մեծ հիասթափությունը Կոմիսարիատից երկար սպասեցնել չտվեց: ՀՅԴ-ն, չգիտես ինչից զարմացած, կարծես չէր եղել 1916-1917 թթ. զեմստվոյական խորհրդակցություններում իշխող և հաղթող վրաց-մահմեդական քաղաքականությունը, հիմա էլ ահազանգում էր հայ դեմոկրատիայի անունից թե «ուր ամիս շարունակ ձգձգելուց

---

[339] Տե՛ս նույն տեղում, թ. 89:
[340] Տե՛ս նույն տեղում:
[341] Տե՛ս նույն տեղում, գ. 12, թ. 62-70:

հետո (նկատի ունեն փետրվարյան հեղափոխության փուլը – Վ. Մ.), զեմստւո է տրւում վրացական ու թաթարական նահանգներին, իսկ հայկական վայրերին մեծահոգաբար խորհուրդ են տալիս սպասել: Կոմիսարիատի այս քայլը հայ դեմոկրատիան չի կարող չնկատել իբրեւ մի ծանր անպատվութիւն ուղղուած իր հասցեին»[342]:

Հարկ ենք համարում հիմնական գծերով ներկայացնել ժամանակավոր կանոնադրությունը, քանի որ, չնայած գիտական գրականության մեջ բազմաթիվ հիշատակումներին, այնուամենայնիվ հայ պատմագրությունն այն պատշաճ չի ներկայացրել: Կանոնադրությունը հնարավորություն էր ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու տեղական ինքնակառավարման մարմինների մասին, մանավանդ որ դրանք, ինչպես տեսանք, անմիջական առնչություն ունեն վարչական սահմանաբաժանումների կարևորագույն և հակասական խնդիրների հետ: «Անդրկովկասում զեմստվոյական հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը» բաղկացած էր երկու գլուխներից: Առաջին գլխի «ընդհանուր դրույթներ» բաժնում ասվում էր՝ 1. Նահանգային (շրջանային), գավառային (օկրուգային) և վոլոստային (գյուղական համայնական) զեմստվային հաստատությունները համապատասխանաբար տնօրինում են տեղական կառավարման և տնտեսության, ինչպես և հատուկ օրենքներով նրանց հանձնարարված գործերը: Զեմստվոյական կառավարման վարչության իրավասությունը տարածվում է նահանգի սահմաններում գտնվող և առանձին շրջանների (Զաքաթալա և Սուխում) հողերի և տիրույթների և այդ սահմաններում ապրող բոլոր անձանց վրա. 2. զեմստվային հաստատությունների իրավասությանն են վերաբերվում՝ ա) տեղական, զեմստվային դրամական և բնամթերային պարհակների տնօրինում, բ) զեմստվոների կապիտալների և այլ միջոցների տնօրինում, գ) պարենի և առաջին անհրաժեշտության մթերքների պակասի և թանկության վերացում, կարիքավոր բնակչությանը նպաստների հատկացում, հացի պաշարների, խանութների, տնօրինում, աջակցություն սպառողական ընկերությունների ստեղծմանը, դ) զեմստվոների կազմում եղած ճանապարհների և ճանապարհային կառույցների սարքին վիճակում պահելը, ե) զեմստվոյական փոստի և հեռախոսակապի կազմակերպում և ֆինանսավորում, զ) ջրային ուղիների վրա շոգենավերի և հաղորդակցության այլ միջոցների կազմակերպում և ֆինանսավորում, է) զեմստվոների ունեցվածքի փոխադարձ ապահովագրման գործի վարում, ը) զեմստվոյական առողջապահական և բարեգործական հաստատությունների վարում, թ) ժողովրդական առողջապահության միջոցների կիրառում, ժ) հրդեհները կանխող միջոցառումների կիրառում, ի) ժողովրդական կրթության զարգացում, տարրական դպրոցների կազմակերպում և ֆինանսավորում, լ) բնակչության տնտեսական բարեկեցության ավելացման ուղղությամբ միջոցառումների իրականացում, խ) ջրային ռեսուրսների և գործերի ղեկավարում, ծ) անասնաբուժական և անասնաբուժա-ոստիկանական միջոցառումներ, կ) փոքր վարկերի, վարկային և խնայողական դրամարկղային ընկերությունների, փոքր վարկերի դրամարկղերի, գյուղական բանկերի և այլ կոոպերացիաների ձևավորում, հ) բնակչությանը իրավաբանական օգնության իրականացում, ձ) աշխատանքի պաշտպանություն, բանվորական-հասարակական արհեստանոցների, աշխատանքի բիրժաների, օբևանատների, միջնորդական գրասենյակների կազմակերպում, ղ) վիճակագրական հետազոտությունների անցկացում, ճ) գաղթականների տեղավորման հոգածություն, մ) անձնական, հասարակական անվտանգության կարգի, միլիցիայի ղեկավարման վերաբերյալ օրենքով հաստատված միջոցների ընդունում, յ) զեմստվոների վրա դրված զինվորական և քաղաքացիական կառավարման կարիքների բավարարում, 3. Թիֆլիսում, Բաքվում զեմստվոյական գործերի կառավարումը դրվում է հասարակական վարչությունների վրա, քաղաքային դումաներն օգտվում են հատուկ իրավունքներից, կրում են գավառային զեմստվոյական ժողովների, իսկ քաղաքային վարչությունները՝ գավառային զեմստվոյական վարչությունների պարտականությունները: Թիֆլիսի և Բաքվի գավառները Բաքվի քաղաքագլխի շրջանի հետ մեկտեղ, որոնք չեն մտնում Բաքու քաղաքի սահմանների մեջ, ունեն, ի տարբերություն Թիֆլիսի ու Բաքվի, հատուկ գավառային զեմստվոյական ժողովներ և վարչություններ: Երկրորդ գլուխը վերաբերում էր զեմստվոյական հաստատությունների կազմին, վարչությունների շրջանակին իշխանության սահմաններին, գործունեության կարգին: Զեմստվային ժողովները ձևավորվում էին զեմստվոյական ձայնատուներից, երեք տարի ժամկետով՝ մինչև 1920 թ. հունվարի 1-ը[343]:

Այսպիսով, նոր կանոնադրությամբ նկատելիորեն ընդլայնվում էր զեմստվոյական հաստատությունների իրավասությունը: Հատուկ կանոնների հիման վրա նրանց տրվում էր իրար միջև պայմանագրեր կնքելու, միություններ ձևավորելու, համագումարներ հրավիրելու իրավունք: Ժամանակավոր կանոնադրությանը կից տրվում էր «Նահանգային, գավառային զեմստվոյական ժողովների ձայնավորների թվի ցուցակը, որի մեջ ընդգրկվեցին Վրաստանի մեջ մտնող գավառները, բացի Բորչալուից:

[342] Տե՛ս Հորիզոն, 1917, 29 նոյեմբերի, թիվ 255:

[343] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7. лл. 101-110:

Վերջնականապես չներգրավվեցին վիճելի համարվող Երևանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգից՝ Նուխին և Արեշը: Ինչ վերաբերում էր Թիֆլիսին, ապա նա գավառային զեմստվոյի կարգավիճակից անցավ հատուկ վարչական միավորի կարգավիճակին:

Ի լրացումն զեմստվոյական կանոնադրության՝ հրապարակվում են նաև «Անդրկովկասում զեմստվոյական հաստատությունների ժամանակավոր կանոնադրության գործարկման կանոնները» և «Ձայնատուների ընտրության իրականացման մասին հրահանգը», որոնցով պետք է ղեկավարվեին նահանգային և գավառային գործադիր կոմիտեները: Ձայնատուների ընտրությունների համակարգը համամասնական էր, իսկ նրանց համար մշակված կանոնները կրկնում էին Անդրկովկասում քաղաքային դումաների և Սահմանադիր ժողովի ընտրությունների համար նախատեսված կանոնները[344]: Գ. Թումանովի կարծիքով՝ ցուցակներով ընտրություններն ավելի նպատակահարմար էին, երբ դրանք կիրառվում էին քաղաքական հաստատությունների համար, ինչպիսիք էին Սահմանադիր ժողովը, Պետական Դուման և այլն: Դրանք տարբեր քաղաքական կուսակցություններին հնարավորություն էին տալիս այդ հաստատություններում իրենց ներկայացուցիչներն ունենալ և այդպես ազդել հասարակական-քաղաքական գործընթացների վրա: Բայց այնտեղ, որտեղ արժեքավոր էր ոչ թե թեկնածուի պատկանելիությունն այս կամ այն կուսակցությանը, այլ նրա քաջատեղյակությունը տեղական կյանքին, անցուդարձին, աշխատունակությունը, նախապատվությունը տրվում է ոչ թե քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, այլ անհատ թեկնածուներին: Այս պարագայում արդեն ցուցակներով ընտրությունները կորցնում էին իրենց նշանակությունը և վնասում էին գործին[345]: Այդ հանգամանքն առավել արդիական էր Անդրկովկասի քաղաքական իրականության մեջ, որը հագեցած էր սուր կուսակցական պայքարով: Դա առավելապես վերաբերում էր վոլոստային (գավառակ) ընտրություններին, որը ամենից նվազ քաղաքականացված և բացառապես վարչատնտեսական օղակ էր, ուստի և նրա շուրջ տարվող քաղաքական ագիտացիան կարող էր բացասական դեր խաղալ: Դուրս է գալիս, որ զեմստվոների խնդրում կարևորագույն հիմնահարցը այդ ժողովրդավարական մարմինները քաղաքականացումից զերծ պահելն էր, ինչը երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի բազմաբնույթ հակասությունների, ազգային, կրոնական հարցերի սրության պայմաններում չէր հաջողվում: Անդրկովկասյան երեք պետությունների առաջացումից հետո անգամ այդ արատավոր միտումը չհաղթահարեցին ազգային, անկախ հանրապետությունների վարչակարգերը: Քիչ թե շատ աչքի ընկնող քաղաքական գործիչները չէին գնում զեմստվո՝ գերադասելով աշխատել խորհրդարաններում, նախարարություններում, ամենաքիչը՝ նահանգային զեմստվոյում և այլ կենտրոնական հաստատություններում: Վոլոստային զեմստվո էին մտնում «երկրորդ կարգի» կուսակցական գործիչները և այդպես դուրս էին մղում պրակտիկ, աշխատող մարդկանց, որոնք խիստ անհրաժեշտ էին զեմստվոյական գործի համար: Սա թե ինչու գերադասելի էր ընտրությունների համամասնական ձևը, որը հնարավորություն կտար փոքրամասնության ներկայացուցիչներին մտնելու զեմստվո, ուստի և կընտրվեին ոչ թե կուսակցական ցուցակներից, այլ անհատական հատկանիշներ ունեցող աչքի ընկած մարդիկ: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության զեմստվոյական քաղաքականությանը, ապա 1918 թ. ամռան-աշնան ամիսներին Հայաստանում և տարածաշրջանում դարձյալ բարդ իրավիճակ էր. զեմստվոները չէին հասարակության ուշադրության կենտրոնում, ուստի և որոշվեց հենվել ժամանակավոր կառավարությունից ընդօրինակված Կոմիսարիատի կանոնադրության վրա և զեմստվային հաստատություններ բացել Էջմիածնի, Սուրմալուի, Նոր-Բայազետի, Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Դիլիջանի և Երևանի գավառներում: Երևանն ու Ալեքսանդրապոլը համարվեցին առաջին և ինքնուրույն միավորներ[346]: Որպես ուշագրավ փաստ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալը: 1918 թ. հունվարի 21-ին (փետրվարի 2) Ախալքալաքի Գործադիր կոմիտեն որոշում է. «աչքի առաջ ունենալով հայ ազգաբնակչությեան 76% կազմը, նրա աշխարհագրական, ազգագրական և տնտեսական պայմանները, վարչական հարաբերությեամբ միացնել գաւառը Ալեքսանդրապոլի գաւառին (ապագա նահանգին) և մտցնել զեմստուо, Անդրկովկասի մյուս վայրերի հետ միասին»[347]:

Ամփոփելով կարելի է եզրակացնել հետևյալը.

1. Անդրկովկասյան կոմիսարիատի ընդունած հռչակագիրն ու «Անդրկովկասյան զեմստվոյական հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը» առաջընթաց էր երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառների դեմոկրատացման գործընթացում: Այն էական ձեռքբերում կարելի է համարել նաև այն առումով, որ եվրոպական Ռուսաստանի ներքին նահանգների համեմատ, որտեղ զեմստվային հաստատությունները ոչ լիարժեք, բայց գործել են վերջին հիսուն տարիների ընթացքում, այդպիսիք վերջապես մուտք գործեցին նաև Անդրկովկաս:

2. Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ Ռուսաստանում 19-րդ դարի կեսերից սկիզբ առած զեմստվային շարժումը, փաստորեն, Անդրկովկասում լուծում էր ստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո: Այլ խոսքով՝ կայսրության փլուզման և դաշնային ժողովրդավարական

[344] Տե՛ս Г.М. Туманов, նշված աշխատությունը, էջ 6:
[345] Տե՛ս նույն տեղում, էջ 6-7:

[346] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 44, թ. 5-6:
[347] Տե՛ս Հորիզոն, 1918, 24 հունվարի, թիվ 16:

հանրապետության կայացման միջև ընկած անցումային ժամանակահատվածում, երբ նախկին կայսրության ազգային շրջաններն, օբյեկտիվորեն անջրպետվելով բոլշևիզմից, մի կողմից արագացնում էին անջատողական, ազգային անկախությունների ձեռք բերման գործընթացը, մյուս կողմից, իհարկե զեմստվոյական շարժումը՝ որպես ժողովրդավարական գործընթաց, (ինչպես օրինակ, համապատասխան հռչակագրի ընդունում Անդրկովկասում), համարում էին խորհրդային իշխանության դեմ պայքարի պասիվ ձև, հակադրվում էին ժողկոմխորհի կառավարությանը:

3. Եթե զեմստվոյական հաստատությունների ներդրումը Ռուսաստանի նահանգներում զուտ սոցիալ-տնտեսական, հասարակական խնդիրներ էր հետապնդում, ապա Անդրկովկասի ազգային բազմաշերտ միջավայրում, զեմստվոյական քաղաքականությունն ի դեմս Կոմիսարիատի դիրքորոշման, առավելապես վերածվում էր երկրամասի վարչական սահմանաբաժանումների, այլ խոսքով՝ ազգային տարանջատման հիմնահարցի և երկրամասի իշխանության վրաց-մահմեդական ղեկավարության բացահայտ հակահայկական քաղաքականության պատճառով սկիզբ էր դնում ազգամիջյան գործնական հակամարտությանը:

4. Հայկական քաղաքական կուսակցությունները, մասնավորապես վարչական սահմանաբաժանումների նախաձեռնող ՀՅԴ-ը, ցավոք հավատացած էին, որ խնդիրը վերջապես լուծում կստանա Անդրկովկասի հայության համար, բայց բոլշևիկյան հեղաշրջումից հետո, փաստորեն, առաջին անգամ հայկական հասարակական-քաղաքական ուժերը, տվյալ դեպքում Կոմիսարիատի հայ պաշտոնյաները գործնականում ականատես եղան վրաց-մահմեդական հարձակողական մարտավարությանը: Անկախ իրադարձությունների զարգացումից, երկրամասի վրացական և թաթարական շրջաններում մտցվեց զեմստվո, իսկ հայկական տարածքները համարվեցին վիճելի. զեմստվո չմտցվեց: Հայկական և հայաբնակ շրջանները «վիճելի» հորջորջելն ավելի սրեց Անդրկովկասի ազգամիջյան հակամարտությունները, միջազգային դիվանագիտության ասպարեզում և Հայկական հարցի քննարկումներում շրջանառության մեջ դրեց արատավոր «վիճելի տարածքներ» հասկացությունը՝ հայ ժողովրդի համար ծանր և ճակատագրական հետևանքներ ունենալով 1918-1921 թվականներին և ի դեմս Արցախյան հիմնահարցի շարունակվում է առ այսօր:

2.4. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԵՑԻԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Անդրկովկասյան կառավարության գործունեության առանձին ոլորտ է ընդգրկում ռազմա-քաղաքական և դիվանագիտական բնագավառը:

Այն իր առաջնային նշանակությամբ և հրատապությամբ գերակայում էր սոցիալ-տնտեսական, հասարակական կյանքի հիմնահարցերի նկատմամբ և չնայած այս ոլորտներում Կոմիսարիատի ընդունած որոշումների և օրենքների բազմազանությանն ու առատությանը, միևնույն է, երկրամասի համար կարևորագույն հիմնախնդիրները շարունակում էին մնալ ռազմաճակատի պաշտպանության, քաղաքական կողմնորոշման, ռազմա-քաղաքական նոր դաշնակիցներ ձեռք բերելու և այլ հարցեր:

Մինչ բարձրացվող հիմնահարցերին անդրադառնալը, հարկ ենք համարում կանգ առնել Կոմիսարիատի նախագահ և միաժամանակ արտաքին հարաբերությունների նախարարության գծով կոմիսար Ե. Գեգեչկորիի գործունեությանը նվիրված տեղեկանք-հաշվետվությանը: Այնտեղ, մյուս գերատեսչությունների գործունեությանը զուգահեռ, արտացոլվում էր աշխատանքային երկու ամիսների՝ 1917 թ. նոյեմբերի 15–1918 թ. հունվարի 15-ը ընկած ժամանակահատվածի ընթացքում կատարած աշխատանքների գլխավոր բանագավառների հիմնական համապատկերը:

Նախ, Կոմիսարիատի կազմավորման սկզբում նպատակահարմար համարվեց արտաքին հարաբերությունների բնագավառի ղեկավարումը հանձնարարել Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահին՝ չառանձնացնելով այն որպես հատուկ կոմիսարություն[348]: Դա պատահական և ինքնաբուխ որոշում չէր. հաշվի առնելով տվյալ գերատեսչությանը պատկանող եղած և զարգացում ակնկալող գործընթացների հույժ կարևորությունը, վրացական մենշևիկները արագ, առանց հապաղման այդ հարցը լուծեցին իրենց օգտին: Ուշագրավ է, որ Ե. Գեգեչկորիի թեկնածության հարցը քննարկման անգամ չարժանացավ, հատկապես ՀՅԴ կողմից, կարծես այդպես էլ պետք է լիներ: Պատճառը՝ միասնական համերաշխ ընտանիքում՝ Կովկասում համատեղ գործելու «լուսավոր տեսլականն էր»:

Ըստ փաստաթղթի հեղինակ և արտաքին հարաբերությունների կոմիսարության քարտուղար Մ. Թումանովի կարծիքի՝ դա բացատրվում էր

[348] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 55:

Կոմիսարիատի ժամանակավոր բնույթով՝ ելնելով նրանից, որ Անդրկովկասը որպես Ռուսաստանյան պետության բաղկացուցիչ մաս չունի ինքնուրույն արտաքին քաղաքականություն[349]: Անցնելով առաջ, նշենք, որ այս հարցում Կոմիսարիատի խոսքն ու գործը բացարձակապես չէին համապատասխանում, ինչը դրսևորվեց զինադադարի և Թուրքիայի հետ անջատ հաշտություն կնքելու գործընթացում:

Հավատարիմ մնալով հաշվետվության մեջ բարձրացվող հարցերի հաջորդականությանը, համառոտ անդրադառնանք յուրաքանչյուրին:

Կոմիսարիատի գործունեության առաջին իսկ օրերից բարձրացավ Պարսկաստանում ռուսաստանյան դիվանագիտական առաքելության հետ կապերի հաստատման խնդիրը, որը ժողովրդական կոմիսարների իշխանությունը չճանաչելու հետևանքով հայտնվել էր լիակատար մեկուսացման մեջ: Առաքելության հետ նոր համաձայնության կնքումը դիտվում էր անհրաժեշտ նախապայման՝ հաշվի առնելով հրատապ բազմաթիվ հարցերի անհետաձգելիությունը: Պարսկաստանում գործող դեսպանորդ էտտերը, գիտակցելով առաքելության և Անդրկովկասյան կոմիսարիատի միջև մշտական կապի անհրաժեշտությունը, իր նախաձեռնությամբ Թիֆլիս է գործուղում առաքելության առաջին քարտուղար Դ. Մինորսկիին: Նրան հանձնարարվում է տեղեկություններ փոխանցել պարսկական գործերի մասին և հասնել համաձայնության՝ Անդրկովկասյան ժամանակավոր կառավարական մարմնի և Պարսկաստանում ռուսաստանյան ներկայացուցչության միջև[350]: Ե. Գեգեչկորիի և Դ. Մինորսկիի միջև կայանում է հետևյալ համաձայնությունը. 1) Անդրկովկասյան կոմիսարիատը Թեհրանի ռուսական դիվանագիտական առաքելությանը ցույց կտա համակողմանի աջակցություն՝ պայմանով, որ վերջինս չճանաչի «ժողովրդական կոմիսարների» իշխանությունը, 2) բոլոր հյուպատոսական ներկայացուցիչները, ովքեր չեն ճանաչի այդ իշխանությունը, կարող են վստահ լինել Կոմիսարիատի լիարժեք աջակցության վրա, 3) դիվանագիտական առաքելությունը պետք է տեղյակ պահի Կոմիսարիատին իր դիվանագիտական բոլոր քայլերի մասին, 4) այս ժամանակավոր համաձայնության մասին պետք է իրազեկվի պարսկական կառավարությունը: Միաժամանակ Կոմիսարիատը, ելնելով Թիֆլիսում պարսկական գլխավոր հյուպատոսի ներկայության անհրաժեշտությունից, նպատակահարմար չէր համարում այդ հյուպատոսի նշանակման հետագա ձգձգումը և հայտնում էր Պարսկական կառավարությանը, որ որպես գլխավոր հյուպատոս ճանաչում է Շերիֆ էդ-Դոուլեին, որի հաստատումը Ռուսաստանյան հանրապետության կողմից հետաձգվել էր «ժողովրդական կոմիսարների» կողմից իշխանությունը զավթելու պատճառով: Այդ նույն ժամանակ, կովկասյան հյուպատոս Վիլդենբրանդտը, որի գործունեությունը բազմաթիվ դժգոհություններ էր առաջացրել, Կոմիսարիատի կողմից հետ կանչվեց: Տվյալ պահին Կոմիսարիատը հաստատել էր գործնական գրագրություն: Բացի ընթացիկ հարցերից, անդրկովկասյան իշխանությանը մեծապես մտահոգում էր իրանական Ատրպատականից ռուսական զորքերի դուրսբերման հետ կապված հարցերի խումբը և ինչպես նշվում էր «նահանգի գոտում պարսկական բնակչության շահերի ապահովումը»[351]: Ակնհայտ է, որ հետ քաշվող ռուսական զորամասերի և գրավված տարածքներում բնակվող մասնավորապես, հայ ազգաբնակչության ճակատագիրը ամենևին չէր հետաքրքրում հաշվետվության հեղինակ Մ. Թումանովին ու այդպիսով նաև Ե. Գեգեչկորիին ու Կոմիսարիատի վրաց-թաթարական ղեկավարությանը:

Վերջում նշվում էր, որ Կոմիսարիատի նախագահի միջոցով ստացվում են նաև Ռուսաստանում ձևավորված ինքնիշխան պետական միավորումների մասին տեղեկությունները[352]: Կոմիսարիատի բացահայտ հակախորհրդային քաղաքականության մասին է վկայում նաև այն փաստը, որ երկրամասային իշխանությունը չէր ճանաչում Ժողկոմխորհի նշանակած Ռուսաստանի հյուպատոս Բրավինին: Նրան չէր ճանաչում նաև Պարսկաստանի ռուսական գաղութը, որից ելնելով Կոմիսարիատը միջոցներ էր ձեռնարկել՝ արգելելու վերջինիս մուտքը Թեհրան[353]:

Այսպիսով, կարելի է հետևություն անել, որ հաշվետու ժամանակահատվածում, Կոմիսարիատի արտաքին հարաբերությունների գծով կոմիսարության գործունեությունը սևեռվել էր երկու գերակա ուղղությունների՝ Իրանի և հակախորհրդային պետական կազմավորումների վրա, որոնց հետ ձևավորվող հարաբերությունները մեկ գլխավոր նպատակ էին հետապնդում՝ դրանց աջակցությամբ ամրապնդել հակաբոլշևիկյան ճամբարը ու այդպիսով նաև ամրացնել Կոմիսարիատի իշխանությունը:

Այն, որ հաշվետվության մեջ խոսք անգամ չկար Անտանտի պետությունների մասին, վկայում է Թուրքիային՝ որպես գլխավոր դաշնակից ընտրելու Կոմիսարիատի քաղաքականության մասին:

1917 թ. նոյեմբերից, թե՛ ժամանակագրական առումով և թե՛ համառուսաստանյան հիմնահարցերի թելադրանքով, Կոմիսարիատը ներգրավվեց Հարավ-արևելյան միության հետ բանակցությունների ասպարեզ:

Փոխհարաբերությունների հաստատման նախաձեռնությունը պատկանում էր արդեն կազմավորված հակախորհրդային պետական միավորմանը, որը հակաբոլշևիկյան պայքարի միասնական ճամբարում՝ որպես միավորված ռազմա-քաղաքական նոր դաշնակից, տեսնում էր իր անմիջական հարևանին՝ Խորհրդային իշխանությունը չճանաչած Անդր-

[349] Տե՛ս նույն տեղում:
[350] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 55:

[351] Տե՛ս նույն տեղում:
[352] Տե՛ս նույն տեղում:
[353] Տե՛ս Հորիզոն, 1918, 3 հունվարի, թիվ 1:

կովկասյան կոմիսարիատին: Կարևորում ենք գեներալ Ա.Դենիկինի գնահատականն այս հարցում «Իր մտահղացմամբ և քաղաքական նշանակությամբ առավել ծանրակշիռ էր ներկայանում 1917 թ. սեպտեմբերի վերջին ձևավորված Հարավ-Արևելյան միությունը: Ստեղծվելով Կուբանի նախաձեռնությամբ, այդ միավորումը պետք է երեք կազակական շրջաններ - Դոնը, Կուբանը և Թերեքը, «լեռնցի ու տափաստանային ազատ ժողովուրդներին», որոնց մեջ հասկանում ենք Հյուսիսային Կովկասի լեռնականներին: Հետագայում նախատեսվում էր միության կազմի մեջ ընդգրկել Ուրալի (Յաիկի), Աստրախանի, բանակները և, հնարավոր է Անդրկովկասը...:

Միության գաղափարը, սակայն, պրակտիկ իրագործում չգտավ: Սեպտեմբերի վերջին ստեղծվեց Հարավ-Արևելյան միության Միացյալ կառավարությունը՝ Վ. Խառլամովի գլխավորությամբ, ձևական մի կառավարություն՝ ոչ միայն այդ դժվարին ժամանակ (1917 թ. վերջ – 1918 թ. սկիզբ) իրադարձությունների վրա որևիցե ազդեցություն չունենալով, այլև Հարավի բնակչության համար պարզապես աննկատ անցնելով: Անիշխանությունը, մարզային կառավարությունների անզորությունը, դրամական միջոցների, զինուժի բացակայությունը և գլխավորը՝ ժողովրդական զանգվածների աջակցության բացակայությունը, զրկեցին կազակական մտավորականության այս նախաձեռնությունն ամեն տեսակ իրական նշանակությունից»[354]:

«Известия мусульманского комитета» թերթը քննելով Եկատերինոդարի խորհրդակցության որոշումը՝ Հյուսիսային Կովկասում Հարավ-արևելյան դաշնակցության կազմակերպման մասին, գրում էր, որ այն օգտակար է երկու տեսանկյունից՝ «1. այդ ինքնուրույն միավորները, ինչպես բարձր լեռները, կպաշտպանեն մեզ անարխիայի փոթորիկներից, որոնք փչում են հիմա Ռուսաստանում, 2. կպաշտպանեն հակահեղափոխությունից, որը կարող է ավարտվել պրոլետարիատի դիկտատուրայով: Այժմ, Անդրկովկասի ազգություններին այդ ահարկու ուրվականից կպաշտպանի հզոր կենդանի պատը՝ կազմված ազատասեր լեռնցի արծիվներից»[355]:

Նոյեմբերի 20–ին (դեկտեմբերի 3) Կոմիսարիատի հերթական նիստը քննարկում է ռազմա-ծովային նախարարության գծով կոմիսար Դ. Դոնսկոյի զեկուցումը՝ Կուբանի միացյալ կառավարության նախագահի տեղակալի հեռագրի կապակցությամբ: Հակախորհրդային կառավարությունը ցանկություն էր հայտնում, Անդրկովկասի ներկայացուցիչների հետ համատեղ, քննարկել տնտեսական, ֆինանսական, քաղաքական և

[354] А.И. Деникин, Очерки русской смуты, М., 1991, с. 96.
[355] Տե՛ս С. Беленький и А. Манвелов, նշված աշխատություն, էջ 175-176:

ազգային հիմնահարցերը: Որոշվում է նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 10) Թիֆլիսում հրավիրել խորհրդակցություն, որտեղ ներկայացված կլինեն Կուբանի, Թերեքի կազակային զորքի, Հյուսիսային Կովկասի լեռնցիների միացյալ կառավարությունները[356]: Խորհրդակցությունն ըստ երևույթին չի կայանում, բայց դրա փոխարեն՝ նոյեմբերի 29-ին (դեկտեմբերի 12) Կոմիսարիատի նիստը քննարկման է ներկայացնում Հյուսիսային Կովկասի կառավարությունների հետ Անդրկովկասի կոմիսարիատի փոխհարաբերության հաստատման հարցը: Նախկին Օզակոմի նախագահ, կադետ Վ. Խառլամովի* զեկույցից պարզվում է, որ Հարավ-արևելյան միության կազմի մեջ մտնում են Դոնի, Կուբանի, Թերեքի, Աստրախանի, Օրենբուրգի և Ուրալի կազակային զորքերը, Աստրախանի կալմիկական ազգությունը, Դաղստանի բոլոր ազգությունները, Թերեքի և Կուբանի բոլոր լեռնցիները, Թերեքի տափաստանային ցեղերը: Սպասվում էր նաև, որ միությանը կմիանան Ստավրոպոլի նահանգի տափաստանային ազգությունները: Համագործակցության հիմքում դրվում էր 1917 թ. հոկտեմբերի 20-ին (նոյեմբերի 2) կնքված միութենական պայմանագիրը[357], որը ինչպես գեներալ Լ. Կոռնիլովի միապետական խռովության, այնպես էլ՝ ակտիվացող բոլշևիզմի դեմ ստորագրված ռազմա-քաղաքական դաշինք էր և, հիմնականում, ուղղված էր երկրի տարածքային ամբողջականության պահպանմանը:

Այսպես, Դոնի Բանակային կառավարության նոյեմբերի 11-ի (24) նիստում Վ. Խառլամովը առաջարկում էր վերահսկողություն սահմանել քարածխի պաշարների բաշխման և վաճառքի վրա: Դա փաստացի նշանակում էր Դոնից քարածխի արտահանման արգելք, այլ խոսքով՝ տնտեսական պատժամիջոցներ Խորհրդային կառավարության դեմ: Այս կապակցությամբ Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Ֆ. Սմիթի պետդեպարտամենտին հղված նոյեմբերի 28-ի (դեկտեմբերի 11) հաղորդագրությունը հայտնում էր, որ Հարավ-արևելյան միությունը՝ բոլշևիկների դեմ ուժերի միավորման նպատակով, բանակցություններ է վարում նաև Ուրալի կազակների, ուկրաինական կենտրոնական Ռադայի, 1-ին լեհական լեգիո-

[356] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 116, л. 28:
* Վ. Խառլամովը կազակ սպայի ընտանիքից էր, նոյեմբերի սկզբից Դոնի բանակային կառավարության կողմից ստեղծված տնտեսական խորհրդի նախագահն էր, 1918 թվից՝ Դոնի շրջանի նախագահ: Իր գործունեության մեջ կողմնորոշվում էր դեպի Ա. Դենիկինը:
[357] Տե՛ս ЦГИА Грузии, նույն տեղում, թ. 53:

ներների կորպուսի հրամանատար, գեներալ Յու. Դովբոր-Մուսնիցկիի, «Սիբիրի հետ»[358]:

Հարավ-արևելյան միության նպատակներն էին՝ 1. Ռուսաստանյան դեմոկրատական դաշնային հանրապետության շտապ հիմնումը. ճանաչվում են նրա առանձին նահանգների կողմից միության բոլոր անդամները, 2. այլ ժողովուրդների և շրջանների աջակցությունը, որոնց նպատակը ևս դաշնային հիմքի վրա Ռուսաստանյան պետության կառուցումն է. 3. դեմոկրատական ամուր իշխանության հաստատումը: Ռուսաստանյան պետության ամբողջականության պահպանման, տրոհված մասերի հավաքման ճանապարհով՝ նրա հզորությունը վերականգնելու նպատակով, Միությունն անհրաժեշտ է համարում առանձին պետական միավորների ստեղծումը, որոնք ամրացնելով ծայրագավառները, կամրապնդեն և կենտրոնը: Հարավ-արևելյան միությունը չի հետապնդում անջատողականության գաղափարներ, միութենական կառավարությունների անջատում պետական ամբողջից, հավասարապես չունենալով նաև միապետության վերականգնման նպատակներ:

Միությունը նպատակ է դնում՝ պայքարել արտաքին թշնամու դեմ և պատվավոր դաշինք կնքել, պաշտպանել ներքին կարգը, խաղաղությունը, որպես ինքնապահպանման հիմքեր:

Միության առանձին անդամներին տրամադրվում է ներքին կառավարման լիակատար անկախություն: Միությունը նպատակ ունի համաձայնություն հաստատել Ուկրաինայի, Անդրկովկասի, Սիբիրի հետ, բայց որպես մոտակա հարևան առաջնությունը տալիս է Անդրկովկասին:

Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդները շարունակելու են գործել, բայց ոչ որպես իշխանության կամ էլ հեղափոխական վերահսկողության մարմիններ, այլ որպես հասարակական կազմակերպություններ:

Հարավ-արևելյան միության կազմի մեջ մտնող առանձին կառավարությունների փոխադարձ համաձայնագիրը հավերժ չէ, նրա հատուկ նպատակն է՝ պայքար մղել ավերածության, անարխիայի դեմ և Ռուսաստանյան պետության հզորության վերականգնման համար:

Համառուսաստանյան հանրապետական կառավարման կարգի հաստատման հետ մեկտեղ, Հարավ-արևելյան միությունը մտնում է Ռուսաստանյան հանրապետության կազմի մեջ, բայց ոչ իր այժմյան կառույցի տեսքով, այլ որպես՝ առանձին կանտոն[359]:

[358] Տե՛ս Политические деятели России, 1917, Биографический словарь, Москва 1993, с. 333.
[359] Տե՛ս նույն տեղում, թ. 53:

Կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորին գտնում էր, որ թեև երկու կառավարությունների միջև առկա են համաձայնության գալու բոլոր օբյեկտիվ պայմանները, սակայն դեռևս վաղ էր համարում քննարկել հնարավոր համաձայնության ձևերի հարցը, մանավանդ որ օրակարգում Թերեքի և Կուբանի կառավարությունների հետ մի քանի կարևոր հարցերի շուրջ համաձայնության գալու խնդիր է շոշափվել: Կարծիք հայտնվեց նաև, որ իրենց մեծամասնության մեջ կազակները չունեն սոցիալիստական տրամադրություններ և, միաժամանակ, մոնարխիստներ չեն: Մասնավորապես, Ա. Կալեդինը կասկածից դուրս էր հակահեղափոխությանը պատկանելու հարցում: «Դոնից նա չի հեռացել,- ասվում էր նիստում,- չի ճնշել ոչ մի շարժում, Կոռնիլովի օգտին ագիտացիա չի վարել»[360]:

Կոմիսարիատի նոյեմբերի 30-ի (դեկտեմբերի 13) նիստում, լսելով Հարավ-արևելյան միության հետ միավորվելու հարցը, Ե. Գեգեչկորին հայտարարեց է, որ ելնելով ներկա քաղաքական իրավիճակից, Հարավ-արևելյան միությանն Անդրկովկասի անդամակցության խնդիրն առայժմ լուծվում է բացասաբար: Նա միաժամանակ նշում էր, որ Անդրկովկասի նպատակներն ընդհանուր առմամբ համընկնում են Հարավ-արևելյան միության հարցադրումների հետ: Գլխավոր նպատակը՝ նորաստեղծ ինքնուրույն պետական կազմավորումների հետ միավորման ճանապարհով Ռուսաստանյան պետության հզորության վերականգնումը, ընդունելի էր: Արդարացված էր նաև Միության առանձին միավորների ներքին ղեկավարման հարցերում լիակատար ինքնավարության պայմանը: Սակայն, ըստ Ե. Գեգեչկորիի, ընդհանուր քաղաքական պայմանները, թեև ժամանակավորապես, բայց միևնույն է, իշխում են և Անդրկովկասում, ուստի առանձին հարցերի շուրջ համաձայնությունը համարվում էր անհետաձգելի և անհրաժեշտ, սակայն առանց Միության կազմում Անդրկովկասի փաստացի ներգրավման[361]:

Այս տեսանկյունից սակայն բոլորովին ուրիշ նախապայմանների առկայության շեշտադրմամբ է հանդես գալիս Ա. Չխենկելին: Նա բարձրացնում էր վրացական ազգային շրջանակների գլխավոր մտահոգությունը՝ երկրամասում Կովկասյան բանակի զորամասերի ոչ ցանկալի ներկայության խնդիրը: «Անդրկովկասի թիկունքում կանգնած է հսկայական, կեսմիլիոնանոց բանակը,- նշում էր նա,- որը բոլշևիզմի գաղափարներով վարակված, ոչ այնքան բարեկամաբար է տրամադրված Անդրկովկասին»[362]: Երկրամասի Մյուս ժողովուրդների ազգային շահերի իրավունքն ու պատասխանատվությունն իր և վրացական մենշևիզմի լիազորությունը դարձնելով՝ Ա. Չխենկելին այդ ուժի մեջ էր տեսնում երկրամա-

[360] Տե՛ս նույն տեղում:
[361] Տե՛ս նույն տեղում:
[362] Տե՛ս նույն տեղում, թ. 59:

սում իշխանության այլընտրանքի, Կոմիսարիատի գոյության հարցը: Նա գտնում էր, որ ազգային զորամասերը կազմակերպված չեն, իրական ուժ չեն ներկայացնում, որի վրա կարող է հենվել երկրամասի իշխանությունը[363]: Այս հարցում ևս արհեստական հավասարության նշան էր դրվում այն դեպքում, երբ վրացական գործիչներին հայտնի էր, որ հայկական ազգային զորամասերը բավարար կազմակերպված են և որ օրակարգի հարցը Հայկական կորպուսի ստեղծման ավարտական փուլն էր: Ավելին, ազգային զորամասերի կազմավորման գործընթացի նկատմամբ Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավարների բացասական վերաբերմունքը Ա. Չխենկելին հմտորեն վերածևում էր երկրամասի ժողովուրդների նկատմամբ ռուս ազգի, ռուսական տարրի թշնամական պահվածքի որակավորմանը, մեկ անգամ ևս հիմնավորելով Ռուսաստանից անջատման արդարացիությունը:

Ասվածի լավագույն ապացույցներից է այն հանգամանքը, որ մենշևիզմի առաջնորդներից մեկն այդ հարցում մեղադրանք էր ներկայացնում Կովկասյան բանակի սպաներին, գիտակից զինվորներին, որոնք ներկայացնում էին ս.-դ. և էսեռական կուսակցությունները և ածանցյալ ձևով խոչընդոտում էին ազգային զորամասերի ձևավորումը:

Ա. Չխենկելին պարզապես չէր ուզում ընդունել, որ բացի բոլշևիզմի վտանգից և Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատելու վախից, ռուսական այդ զորամասերի ներկայությունը նաև ռուսաստանյան միասնական պետության ամբողջության պահպանման գրավականն էր՝ լիներ դա ժողովրդավարության կամ բոլշևիզմի դրոշի ներքո: Այդ նկատի ուներ գեներալ Ա. Դենիկինը, նշելով, որ «Արտաքինից ամեն ինչ բարեհաջող էր թվում Կիևը, Նովոչերկասկը, Եկատերինոդարը, Թիֆլիսը խոսում էին համադաշնության և կենտրոնական կառավարության կոալիցիոն կազմի մասին: Բայց գործնականում այլ պատկեր էր ստացվում... Թիֆլիսը պահանջ էր ներկայացնում Կովկասյան ռազմաճակատի համապետական ահռելի միջոցների վրա»[364]: Հարավ-արևելյան միության հետ դաշինքի հիմքում նա դնում էր Անդրկովկասի տարբեր ազգերի միջև նախնական համաձայնության սկզբունքը, կանխավ հասկացնելով, որ վրացական կողմը դեմ էր այդ միությանը, քանի որ այն դարձյալ վերադարձ էր կանխորոշում՝ դեպի միասնական համառուսական ընտանիք:

Հ. Օհանջանյանը միանալով է Ա. Չխենկելիի գնահատականներին նշում էր, որ Հարավ-արևելյան միության հետ համաձայնությունը լայն արձագանք է գտել հայկական դեմոկրատիայի շրջանում: Նա առանձնացնում էր պարենային և բանակի զորացրման հարցերի շուրջ համաձայնության, նույնիսկ միության ստեղծման խնդիրը[365]:

Երկրամասի մի փոքր անկյունում՝ Սուխումի օկրուգում աբխազները ցանկություն էին հայտնում վրացի բնակչության հետ միասին անդամագրվել Հարավ-արևելյան միությանը[366]: 1918 թ. հունվարի 4-ին (17) Անդրկովկասյան կոմիսարիատը Եկատերինոդարից հրավեր է ստանում՝ Ռոստովում հունվարի 25-ին (փետրվարի 7) հրավիրվող համագումարին մասնակցելու կապակցությամբ: Համագումարում պետք է քննարկվեին Հարավ-արևելյան միության և Անդրկովկասի քաղաքական, տնտեսական և ֆինանսական միավորման հետ կապված հարցերը[367]:

Այսպիսով, հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո, 1917 թ. նոյեմբեր – 1918 թ. հունվար ժամանակահատվածում հակախորհրդային այլ պետական կազմավորումների շարքում, Հարավ-արևելյան միությունը հանդես եկավ միասնական հակաբոլշևիկյան դաշինքի ձևավորման նախաձեռնությամբ և համապատասխան առաջարկով դիմեց Անդրկովկասյան կոմիսարիատին:

Այդ համագործակցության գործընթացը դարձավ «միացյալ, անբաժան Ռուսաստան» կարգախոսի և նրա հետևորդների հավատարմության ու հետևողականության ստուգման կարևորագույն փորձաքարը: Սկզբից ևեթ ի հայտ եկավ վրացական մենշևիզմի և ՀՅԴ միջև ընթացող առայժմ ոչ բացահայտ անհամաձայնությունը:

Թեև ընդհանուր հակառակորդի՝ բոլշևիզմի դեմ պայքարում վրացական դիրքորոշումը ենթադրում էր հակախորհրդային հզոր խմբավորման հետ համաձայնության կայացում, սակայն ազգային-տարածքային տարանջատման առաջնային խնդիրը բևեռային հակասություն էր առաջացնում միավորման հարցում, այն էլ հակառուսական տրամադրությունների պարագայում: Ռուսական, պետականամետ ռազմա-քաղաքական ուժերի հետ կայուն դաշինքի ստեղծումը առավելապես բխում էր հայ իրականության շահերից, քանի որ, նախ՝ բացահայտ չէր բարձրացվում ազգային ինքնիշխանության մերժման խնդիրը, ապա և Արևմտյան Հայաստանում դեռ կանգնած Կովկասյան բանակի զորամասերի ներկայությունը երաշխավորվում էր նաև ռուսաստանյան կենտրոնամետ ուժերի միջոցով Հայկական հարցի բարենպաստ լուծումը: Այլ կերպ ասած, հայությանը ձեռնտու էր ռուսական ներկայությունը Անդրկովկասում և գրավյալ Արևմտյան Հայաստանում՝ անգամ բոլշևիզմի տեսքով, իսկ վրաց-թաթարական դաշինքի համար այդ ներկայությունը գլխավոր խո-

[363] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 116, л. 59:
[364] А.И. Деникин, նշված աշխ., էջ 86:

[365] Տե՛ս ЦГИА Грузии, նույն տեղում:
[366] Տե՛ս Республика, 1917, 2 ноября, N 96:
[367] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 30, II մաս, թթ.154-158:

չընդոտն էր Ռուսաստանից հեռանալու և նոր դաշնակիցների աջակցությամբ՝ անկախության ու այդպես նաև տարածքային ձեռքբերումների ճանապարհին: Այս մարտավարությունը ՀՀՌ կողմից դրսևորվեց երկու անգամ 1918 թ. մարտին և սեպտեմբերին, երբ ուշացած փորձ արվեց Ստ. Շահումյանի և հայանպաստ Բաքվի կոմունայի ուժերով իրականացնելու հեռահար ազգային ծրագիրը:

Այժմ սակայն, Դաշնակցության գերակշիռ և ազդեցիկ զանգվածը ենթարկվում էր վրացական մենշևիկների որդեգրած քաղաքական ուղուն:

* * *

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի կյանքի բոլոր բնագավառները պտտվում էին Կովկասյան ռազմաճակատի տարաբնույթ հիմնահարցերի շուրջ: Սկիզբ էր դրվում բարդ, իրադարձություններով հագեցած մի գործընթացի, որն ընդգրկում էր Երզնկայի զինադադարից մինչև Բաթումի հաշտության պայմանագրի փուլը:

Ռուսաստանից անջատ գործելու առաջին գործնական քայլը տեղի ունեցավ Կոմիսարիատի ձևավորումից և հայտարարության հրապարակումից երկու օր անց: Կովկասյան ռազմաճակատի թուրքական հրամանատարությունը նոյեմբերի 17-ին (30) հանդես էր եկել զինադադարի առաջարկությամբ՝ «հանուն մարդասիրության եղբայրասպան պատերազմին վերջ տալու նպատակով»[368]:

Զինադադարը Թուրքիային անհրաժեշտ էր՝ Իրանում, Միջագետքում և Պաղեստինում վերջինիս բանակների ծանր դրության պատճառով: Բացի այդ, Կովկասյան ռազմաճակատի ուղղությամբ թուրքական բանակը չուներ բավարար ուժեր՝ դեպի Կովկաս արշավանք կազմակերպելու համար, ուստի և ուժերի կենտրոնացման համար կենսական ժամանակ էր շահում:

Զինադադարի մասին հայտարարությամբ Անդրկովկասյան կոմիսարիատի նոյեմբերի 21-ի (դեկտեմբերի 4) նիստում հանդես եկավ ռազմաճակատի գլխավոր հրամանատար, գեներալ Մ. Պրժեվալսկին, հայտնելով, որ կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի հրամանատար Ֆերիք – Վեհիբ Մահմեդ փաշայից ստացվել է զինադադարի կնքման վերաբերյալ նամակ-առաջարկություն: Նիստը նախագահում էին Ե. Գեգեչկորին և Ա. Չխենկելին, ներկա էին Շ. Ալեքսեև-Մեսխիևը, Մ. Զաֆարովը, Դ. Դոնսկոյը, Խ. Կարճիկյանը, Խ. Բ. Մելիք-Ասլանովը,

[368] Տե՛ս С. Т. Аркомед, Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, 1923, с. 13.

Հ. Օհանջանյանը, Գ. Տեր-Ղազարյանը և ռազմաճակատի շտաբի պետ, գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկին[369]:

Ավելի վաղ՝ նոյեմբերի 10-ին (23), գեներալ Ե. Լեբեդինսկին Կովկասյան բանակի հրամանատարներին՝ Դուխոնինի հեռագրի հիման վրա, փոխանցում էր համաձայնության երկրների ռազմական առաքելությունների* բողոքը՝ Ռուսաստանի կողմից անջատ հաշտություն կնքելու դեմ: «Պատիվ ունենք հայտնելու,- հայտարարում էին նրանք,- որ խախտվում է 1914 թ. սեպտեմբերի 23 (5)-ի պայմանագիրը, որով համաձայնության տերությունները, այդ թվում և Ռուսաստանը, հանդիսավոր կերպով հայտարարել էին՝ չկնքել միմյանցից անջատ զինադադար, չդադարացնել ռազմական գործողությունները»[370]:

Որոշվեց՝ 1) նկատի ունենալով Ռուսաստանում միասնական, կենտրոնական և բոլորի կողմից ճանաչված կառավարության բացակայությունը և այն, որ Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբը վերացված է քաղաքացիական պատերազմի հետևանքով, ինչպես նաև հաշվի առնելով Ռուսաստանի ընդհանուր քաղաքական իրադրությունը՝ Կոմիսարիատն ընդունում է, որ պետք է ընդառաջ գնալ թուրքական հրամանատարության առաջարկին և առաջարկել նրան անհապաղ դադարեցնել ռազմական գործողություններն ամբողջ Կովկասյան ռազմաճակատում՝ պայման ընդունելով, որ թուրքական կողմը չիրականացնի ոչ մի ռազմավարական վերախմբավորում, որոնք կվտանգեն Միջագետքի Անգլիական բանակին, 2) Գեներալ Մ. Պրժևալսկիի միջոցով այդ մասին տեղյակ պահել թուրքական բանակի և անգլիացիների Միջագետքի բանակի հրամանատարներին, 3) կոչով դիմել բանակին և Կովկասի բնակչությանը՝ բացատրելով կատարվող իրադարձությունների իմաստը և ցուցաբերել դրանց նկատմամբ հանգիստ և գիտակից վերաբերմունք, 4) ընդունված որոշման մասին տեղեկացնել Թիֆլիսում գտնվող դաշնակից և բարեկամական չեզոք տերությունների հյուպատոսներին[371]:

Նույն օրը, Կոմիսարիատի վճիռը քննարկում է բ.զ.գ. պատգամավորների խորհրդի երկրամասային կենտրոնի արտակարգ նիստը, որը Ն. Ժորդանիայի նախագահությամբ հավանություն է տալիս զինադադարի որոշմանը: Ե. Գեգեչկորին տեղեկացնում էր, որ Կոմիսարիատը միաձայն քվեարկել է այդ առաջարկի օգտին և զգուշորեն հարցնում էր կենտրոնի կարծիքը՝ այն առումով, որ եթե վերջինս հավանություն չտա,

[369] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 30.

* Ստորագրել էին՝ Բրիտանիայի, Ռումինիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի, Սերբիայի, ԱՄՆ-ի ռազմական առաքելությունների ղեկավարները:

[370] Տե՛ս Революция 1917 г. в исторических документах, сс. 185-186, 193-194.

[371] Տե՛ս նույն տեղում:

ապա Կոմիսարիատը վայր կդնի իր լիազորությունները[372]: Ցուցադրվող ժողովրդավարական խաբկանքի ենթատեքստում, շեշտելով նաև ազգերի ներկայացուցիչների ակտիվ մասնակցության հանգամանքը՝ պարզապես անցկացվում էր հաղթած որոշումը և երկրամասային իշխանության մի մարմնի ղեկավար վրաց մենշևիկ Ե. Գեգեչկորին ստանում էր մյուսի՝ Ն. Ժորդանիայի հավանությունը: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 22-ին (դեկտեմբերի 5) Կովկասյան բանակի հրամանատարությունը երգրում՝ թուրքական բանակի հրամանատարին է ուղարկում զինադադարի վերաբերյալ պատասխանը: Այստեղ ավելացվում էր միայն այն, որպեսզի թուրքական և ռուսական բանակների ներկայացուցիչներից ձևավորվի հանձնաժողով, որը կմշակի զինադադարի ընդունելի պայմանները[373]: Նույն օրը, գեներալ Մ. Պրժևալսկին և Ե. Լեբեդինսկին ստորագրեցին ևս երկու փաստաթղթեր: Առաջինում՝ Անգլիական Միջագետքի բանակի Բաղդադում գտնվող հրամանատարին ուղղված հեռագրում մեր ուշադրությունը գրավեց այն, որ Մ. Պրժևալսկին որպես զինվորական գործիչ, իր գործընկերոջը՝ Անդրկովկասյան կոմիսարիատը ներկայացնում էր որպես «Անդրկովկասի ժամանակավոր կառավարություն», դրանով հուսադրելով նրան ռազմաճակատում ռուսական կովկասյան դեռևս դաշնակից բանակի ներկայության հարցում[374]:

Երկրորդ փաստաթղթի մեջ՝ «Անդրկովկասյան կոմիսարիատի ուղերձը բանակին և Կովկասի ազգաբնակչությանը»[375], առկա են բացահայտ հակասական հիմնադրույթներ: Ելակետ ընդունելով այն սկզբունքը, որ զինադադարի ընթացքում կհրավիրվի Համառուսաստանյան Սահմանադիր ժողովը, որը և կմշակի հաշտության պայմանները, Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարությունը ընդգծում էր այն հանգամանքը, որ, վերցնելով իշխանությունն իր ձեռքը, նա խոստացել էր, թե «կովկասյան բանակը ոչ մի ավելորդ օր չի կռվի և կպահպանի Ռուսաստանյան ռազմաճակատի հետ միասնությունը»: «Պատերազմն է ծնել հեղափոխությունը,- ասվում էր կոչում,- մեծ հեղափոխությունն էլ կվերացնի պատերազմը»[376]: Հակասությունը նախ նրանում է, որ երկրամասի «դեմոկրատական» կառավարությունը տվյալ դեպքում հանդես էր գալիս բոլշևիկյան կարգախոսով, այլապես ի՞նչ է նշանակում «չկռվել ոչ մի օր», երբ Ռուսաստանյան դեմոկրատական ժամանակավոր կառավարության կարգախոսն էր. «Պատերազմ մինչև հաղթական ավարտը», որն

[372] Տե՛ս Документы и материалы..., с. 12-13.
[373] Տե՛ս նույն տեղում, էջ 13:
[374] Տե՛ս նույն տեղում, էջ 14:
[375] Տե՛ս Республика, 1917, 23 ноября, N 113:
[376] ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 31.

ինքնին նաև Կոմիսարիատի կողմից բոլշևիզմի դեմ պայքարի գլխավոր միջոց ու երաշխիք էր դիտարկվում: Թիֆլիսի կադետների առաջնորդ Ի. Սեմյոնովը և կուսակցության «Народная свобода» թերթը գտնում էին, որ Անդրկովկասի կոմիսարիատն իրագործում էր «Լենինի և Տրոցկու ծրագիրը»: Հաշտությունը համարելով դավաճանություն, թերթը գրում էր. «Ինչո՞ւ բոլշևիկներն իրենք կատարեն այդ սև գործը, քանի դեռ Ռուսաստանի հանձնարարությամբ նրանց փոխարեն այդ դավաճանությունը կարող են անել մենշևիկները, էսեռներն ու դաշնակցականները»[377]:

Այս տեսակետը կիսում էր նաև «Հայաստան» թերթը: «Կովկասեան կոմիսարիատը,- գրում էր թերթը,- որ ամեն կերպ կաշխատի առաջն առնել պոլշևիկական շարժումի մը և կամ բոլորովին չենթարկուիլ Լենինի կառավարութեան, այսու ամենայնիւ իր յայտարարութիններով, և մասնաւորապէս վերջերս զինադադար և հաշտութեան խնդիրներու վերաբերմամբ կարծես ոչ մէկ տարբերութիւն ունի պոլշևիկներու տեսակէտներէն: Զինադադարի խնդրին մէջ Կովկասեան կոմիսարիաթը, Բեթրոկրատի ժող. կոմիսարներու կառավարութենէն աւելի փութկոտութիւն մը ցոյց տուաւ Կովկասեան ֆրոնտի վրայ»[378]: «Կովկասեան Քոմիսարիաթը թէպէտև չենթարկուեցաւ պոլշևիկներուն,- գրում էր թերթը 1918 թ.,- բայց բաժնեց անոնց շատ մը գաղափարներն ու գործունէութիւնը»[379]:

Երկրորդ, Կոմիսարիատի ղեկավարությունը չէր ուզում ընդունել, որ Կովկասյան բանակի զորամասերի գերակշիռ մասը 1917 թ. դեկտեմբերին արդեն բոլշևիկացել և սկսել էր դասալքել ռազմաճակատը: Հարց է առաջանում, խաղաղություն և հող ստացող զինվորը ինչպես պետք է վերջ տար պատերազմին, եթե ոչ՝ անջատ բոլշևիկյան հաշտությամբ: Երրորդ, թերևս անբացատրելի է Կոմիսարիատի հարցադրումն այն մասին, որ Կովկասյան բանակը համառուսաստանյան ռազմաճակատի հետ միշտ կպահպանի միասնություն: Քաղաքացիական պատերազմի պայմաններում, այդ ո՞ր ռազմաճակատի կամ ո՞ր բանակի մասին էր խոսքը գնում, մի՞թե դարձյալ Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի, որոնք վերադառնում էին Ռուսաստան՝ համալրելու Կարմիր բանակի շարքերը:

Եվ վերջապես, ինչո՞վ է հիմնավորված Կոմիսարիատի ղեկավարության կազմում դաշնակցական կոմիսարների անվերապահ համաձայնությունն այս հարցում: Ռազմաճակատը, որտեղ այլևս «ոչ մի կռիվ չէր լինելու», ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի մեծ մասը, իսկ սկսված

[377] Տե՛ս Народная свобода, Тифлис, 1917, 23 ноября.
[378] Տե՛ս Հայաստան, 1917, 12 դեկտեմբերի, թիվ 173:
[379] Նույն տեղում, 1918, 1 հունվարի, թիվ 1:

Բրեստ-Լիտովսկի բանակցությունները ոչ մի հայանպաստ որոշում հեռանկարում չէին ուրվագծում:

Դաշնակցական Ար. Զամալյանը պարտվողական դիրքերից պատասխանում և հիմնավորում էր ասվածը. «Թուրքերի առաջարկը լուրջ քաղաքական մտավախություն էր պատճառում հայ ժողովրդին, որը զգում էր թշնամու հետ առանձին հարաբերությունների մեջ մտնելու վտանգը: Սակայն Անդրկովկասի կոմիսարիատը որոշեց զինադադար կնքել և մենք համակերպվեցինք նրան, այն միտումով, թե անհրաժեշտ է հարևան ժողովուրդների հետ ընթանալ»[380]: «Հարևան ժողովուրդների հետ ընթանալը» վրացական ազգային գործիչները յուրովի էին մեկնաբանում:

Նոյեմբերի 28-ին (դեկտեմբերի 10) «Սաքարթվելո» լրագիրը երկյուղ էր հայտնում, թե չլինի թե Թուրքիայի հետ վերջնական հաշտութիւն կնքելիս «անտեսի Թուրքիայի հետ դարերից ի վեր մնացած հին Վրաստանի մի մասի հարցը. Վրաստանի այդ մասը գտնուում է այժմեան Տրապիզոնի վիլայեթում»: Կարևորելով հոդվածի բոլոր հարցադրումները, հարկ ենք համարում այն ամբողջությամբ ներկայացնել. «Միջազգային իրաւունքի տեսակետից Անդրկովկասում միմիայն Վրաստանն ունի իրաւունք Թուրքիայի հետ հաշտութեան բանակցութիւններ սկսելու, քանի որ Ռուսաստանի կառաւարութեան լուծուելուց հետոյ՝ 1783 թվի դաշնագրութեան համաձայն, Վրաստանը նորից ձեռք է բերում իր անկախ, սուուերէն գոյութիւնը»: Գուցէ այսօրուա արտաքին ոյժերի դրութիւնը մեզ պարտաւորեցնում է դարձեալ հին օրիենտացիայի կողմը մնալու, բայց *մենք պէտք է աշխատենք, որ Վրաստանի հարցն էլ Հայաստանի ու Բելգիայի հարցի նման միջազգային դառնայ:*

Պատերազմող պետութիւններն ինչպես հեղափոխութիւնից առաջ, այնպես էլ նրանից հետոյ իրենց բանակցութիւնների ընթացքում ոչ մի կերպ չէին արտասանում Վրաստանի անունը: Նույնիսկ Ստոկհոլմի անպատասխանատու սոցիալիստական մանիֆեստում Կովկասեան ազգերից միայն հայերն էին հիշուում: Եթե սոցիալիստներին հարցնենք, մեր անունը նրա համար չի հիշուում, որ իբր թե Վրաստանը պատերազմի ասպարէզ չի եղել՝ դա ճիշտ չէ: Մի՞թե ռուսական Վրաստանի մահմեդականներով բնակեցված մասը պատերազմի ասպարէզ չդարձավ, մի՞թե նա չավերվեց ռուսական կազակների և թուրք բոլշևիկների ձեռքով: Սակայն Վրաստանը միայն Ռուսաստանի հողի վրա չի գտնուում, որ հաշտութեան ժամանակ մոռանան նրան որպես պատերազմի ասպարէզից դուրս գտնուողի: Թուրքիայի հետ հաշտութիւն կապելիս պէտք է վճռի նաեւ

[380] Հայրենիք, Բոստոն, 1923, թիվ 3, էջ 124:

նրա ռուսական զորքերի բախտը և այդ մասում բացի Հայաստանից, գտնուում է նաեւ Վրաստանը, այսինքն՝ Տրապիզոնի վիլայեթի արեվմտեան սանջակները՝ Ճանէթը, Թորթումն ու Սպէրը: Այդ բանը հասկացել էին նույնիսկ Միլյուկօուն ու Տերեշչենկոն, որի պատճառով նրանք նվաճուած Թուրքիայի համար երկու տեսակ վարչութիւն հիմնեցին, Տրապիզոնի վիլայեթը Հայաստանից բաժանեցին»[381]: Հենց միջազգային իրավունքի տեսանկյունից նման անհիմն և թույլ հարցապնդումները կարելի է հերքել նրանով, որ Փարիզի վեհաժողովում և Սևրի պայմանագրով Տրապիզոնի վիլայեթի տարածքի մեծ մասը ներառվեց անկախ Հայաստանի կազմի մեջ: Այստեղ, իհարկե, մեկ անգամ ևս անհարկի դրսևորվում է վրաց ազգայնականների հակահայկական, իսկ Ստոկհոլմի պարագայում՝ Դաշնակցության դեմ ունեցած խանդն ու անթաքույց ատելությունը: Բացի այդ, ավելի պարզ է դառնում, որ վրացի գործիչները Թուրքիայի հետ զինադադարի ու հաշտության միջոցով որդեգրում էին նոր ռազմաքաղաքական կողմնորոշում, որն անպայման ուղղվելու էր Ռուսաստանի ու դեռևս նրա ռազմական դաշնակցի՝ հայության դեմ:

Զինադադարի առաջարկության ընդունման մասին լուրը կոմիսար Խ. Կարճիկյանը հայտնում է Երևանի նահանգային գործադիր կոմիտեի նախագահ Ս. Թորոսյանին. «շուտով կը որոշեն զինադադարի պայմանները. կարող է որոշել երկրի բախտը. անհրաժեշտ է շուտափոթ, բայց և պատասխանատու որոշումներ ընդունել. անհրաժեշտ է ներկայութիւնը բիւրոյի բոլոր անդամների, բոլոր պատասխանատու ընկերների և կենտրոնականի ներկայացուցիչների՝ արտակարգ կոնֆերանսի համար»: Ուղիղ հեռագրակապով նրան պատասխանում են Դրոն, Արամը, Ս. Թորոսյանը, վստահեցնելով, որ «սահմանները յամենայն դէպս ի վնաս մեզ չեն փոփոխվի»[382]:

«Զանգ» թերթի նույն համարի խմբագրականը մերժում էր այս լավատեսական հեռանկարը. «Այժմ որտե՞ղ պէտք է մնայ խելագար բոլշևիկների «ազգերի ինքնորոշման» սկզբունքը... ի՞նչ հայրենիքի վերականգնում, երբ ինքը՝ հսկայ Ռուսաստանը գերի է գնում Գերմանիա»[383]:

Փաստորեն Անդրկովկասի կոմիսարիատը ռազմաճակատի հրամանատարության հետ միասին իրականացնում էր բոլշևիկների նախաձեռնությամբ՝ գերմանական խմբավորման հետ զինադադարի և անջատ բանակցությունների գործընթացը, այն պարզապես տարածելով Կովկասյան ռազմաճակատի վրա և հարմարեցնելով երկրամասի ռազմա-

[381] Հորիզոն, 1917, 28 նոյեմբերի, թիվ 254:
[382] Տե՛ս Զանգ, 1917, 26 նոյեմբերի, թիվ 6:
[383] Տե՛ս նույն տեղում:

քաղաքական իրադրությանը «Պարտված Ռուսաստանը Պետրոգրադի ժողկոմխորհի և Անդրկովկասեան կոմիսարիատի անուններով դիմեց պատերազմող պետութիւններին,- գրում էր «Վան - Տոսպը»,- եռամսեայ զինադադարի առաջարկով»[384]:

Այս առումով, մեր պատմագրության կողմից անտեսվել է մի շատ կարևոր հանգամանք, ինչը որոշակիորեն պարզաբանում է մտցնում Կոմիսարիատի և նրա մենշևիկյան ղեկավարության ինքնակամ և անհեռատես ռազմավարության ընտրության հարցում:

Խնդիրը այն է, որ նոյեմբերի 23-ին (դեկտեմբերի 6) Կոմիսարիատի նիստը քննում է դաշնակից պետությունների հյուպատոսների հրատարակած բողոքը: Այնտեղ զայրույթ էր հայտնվում այն մասին, որ առանց դաշնակից կառավարությունների իրազեկության, Կովկասյան ռազմաճակատում Թուրքական բանակի հետ զինադադարի պայմաններ են մշակվում: Զավեշտալի է, բայց Կոմիսարիատի նիստը որոշում է այդ բողոքն «ընդունել ի գիտություն»[385]:

Ազդեցիկ հայկական քաղաքական կուսակցություններն ու հոսանքները զինադադարի և հաշտության առաջարկի վերաբերյալ անմիջապես հայտնեցին իրենց ոչ միանշանակ վերաբերմունքը:

Թիֆլիսում գումարվում է ՀՅԴ արտակարգ խորհրդակցություն: «Այդ առթիւ Տփղիս են մեկնել,- գրում էր «Հորիզոն»-ը, Բյուրոյի բոլոր անդամները՝ Արամ, Դրօ, Ռուբեն, Վահան, նաև Մարտ. Հարությունյանը իբրև Երեւանի ԿԿ-ի ներկայացուցիչ»[386]: Քննարկումների նյութերը մեզ չի հաջողվել հայտնաբերել, սակայն Դաշնակցության մամուլի բազմաթիվ հրապարակումները վկայում են, որ կուսակցությունը, նրա ղեկավարությունը հիմնականում տարաձայնություններ չունեին Կոմիսարիատի և նրա դաշնակցական կոմիսարների որոշումների հետ, լիովին համակերպվել էին անջատ հաշտության մասին բոլշևիկյան մարտավարությանը:

«Բոլշևիկների ապստամբութիւնը ակներև դարձրեց միանգամայն,– գրում էր «Աշխատանքի դրոշակ»-ը,- որ երկիրը այլեւս կուել չի կարող, որ հաշտութիւնը, ոչ միայն պետութեան ստիպողական պահանջն է, այլ և նրա գոյութեան իսկ պայմանը»[387]: Միաժամանակ, զինադադարի ստորագրումից հետո, առկա է նաև ՀՅԴ մի վճռական հատվածի, տվյալ դեպքում «Հորիզոնի» մոտեցումը, որը կատարվածից հետո միայն ահազանգում էր, թե *«Վերին աստիճանի խանգարուած մտքի տէր պէտք է լինել այս*

[384] Վան-Տոսպ, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 43:
[385] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 32.
[386] Նույն տեղում:
[387] Տե՛ս Զանգ, 1917, 26 նոյեմբերի, թիվ 6:

բանը չնկատելու համար և, դժբախտաբար, մենք այդ չէնք նկատում, կամ աւելի ճիշտ թուլամորթորեն փակում ենք մեր աչքերը գալիք ահաւոր վտանգի առջեւ: Մեր հեղափոխական կազմակերպութիւնները կլանուած են ներքին ցաւերով: Մեր ազգային հաստատութիւնները անծնատուր են եղած համեմատաբար երկրորդ հերթին լուծելիք հարցերով»[388] (ընդգծումը մերն է - Վ. Մ.):

«Գալիք ահավոր վտանգ» ասելով ՀՅԴ գործիչները նկատի ունեին թուրքական անխուսափելի արշավանքը:

Բրեստ-Լիտովսկի բանակցություններից նրանց հայտնի էր դարձել, որ թուրքերը, որպես հաշտության պայման պահանջելու են նաև Կարսը, Ալեքսանդրապոլը, Արդահանը: Ցավալի է, բայց Դաշնակցությունը դեռ վստահ էր այն հարցում, որ Ռուսաստանը չի համաձայնվի. «Անհաւանական չէ, որ Էնվէր-թալեաթեան կառաւարութիւնը առաջ քաշի այսպիսի պայման և որովհետեւ պարզ է, որ Ռուսաստանը չի կարող համաձայնուել, ուստի կռուի առիթը պատրաստ կը լինի»[389]: Ստացվում է, որ Բրեստի բոլշևիկյան քաղաքականությունը դաշնակցության համար դեռևս լիովին պարզ չէր, չնայած զուգահեռ և շատ նպատակամղված տարվում էր հայկական զորքի զորակոչի աշխատանքը:

Այս առումով հարկ ենք համարում կանգ առնել մի փաստաթղթի վրա, որը որոշակի լույս է սփռում ստեղծված կացությանը:

1917 թ. դեկտեմբերի 23-ին (1918 թ. հունվարի 5) Կովկասյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար, ինֆանտերիայի (հետևակազոր) գեներալ Մ. Պրժևալսկիի և շտաբի պետ, գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկիի ստորագրություններով, Կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորին ստանում է գրություն, որտեղ, մասնավորապես ասվում էր հետևյալը: Տեղեկացվում էր, որ իրեն ենթակա բանակային կառույցներում վերջին ժամանակները ռազմական կոմիսարից, երկրամասային խորհրդից, այլ խորհրդներից, կոմիտեներից և անձանցից ստացվող հրամաններն ու կարգադրությունները հակասում են միմյանց և ավելի են կազմալուծում բանակը: Խնդիրը չկարգավորելու դեպքում, գլխավոր հրամանատարը հայտնում էր, որ կհրաժարվի իր պատասխանատու պաշտոնից[390]: Դեկտեմբերի 3-ին (15) կոչով հանդես է գալիս Մ. Պրժևալսկին. «Մի՞թե չեք հասկանում, որ ճակատը թողնելով և դիրքերը դատարկելով Ռուսաստանը մատնում եք նրա թշնամիներին և արյունալի սոսկումների եք դատապարտում գրաւած վայրերի քրիստոնեայ ազգաբնակչութեանը, որ հոյսու ու երախտագիտութեամբ էր նայում ռուս զորքերին, որոնք հաղթական արշաւում էին նրանց դարաւոր ստրկութիւ-

[388] Հորիզոն, 1917, 12 դեկտեմբերի, թիվ 260:
[389] Նույն տեղում:
[390] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 84, л. 26:

նից ազատագրելու համար: *Դուք, որ քարոզում եք ժողովուրդների ազատ ինքնորոշման նշանաբանը, մի՞թե ինքներդ ցեխի մեջ պիտի կոխարտեք այդ նշանաբանը և փոխանակ ապահովելու այդ ազգաբնակչության իսկապես ազատ ինքնորոշումը՝ նորից նրան պիտի դատապարտեք սարսափելի ստրկության»* (ընդգծումը մերն է - Վ. Մ.):

Կովկասյան ռազմաճակատի կազակային զորաջոկատների վաղությունը՝ նախագահ Դրոբիշևի ղեկավարությամբ, 1918 թ. հունվարի 3-ին (16) քննարկելով Անդրկովկասյան կոմիսարիատին արված հաշտության մասին Թուրքիայի առաջարկությունը, ընդունեց բանաձև: Վերջինս հենվում էր բ. զ. գ. և կազակային պատգամավորների համառուսաստանյան համագումարի որոշման վրա: Այն հաստատում և հավանություն էր տալիս Խորհրդային իշխանության բոլոր քայլերին ու հայտարարություններին, որոնք ուղղված էին «ընդհանուր դեմոկրատական հաշտություն» ձեռք բերելուն[391]: Բանաձևում ասվում էր՝ 1) նկատի ունենալով, որ հաշտություն կնքելու իրավունքը պատկանում էր Սահմանադիր ժողովին և, որ այն պետք է կնքվի համառուսաստանյան մասշտաբով, Կովկասյան ռազմաճակատի կազակային վարչությունը բողոքում է Անդրկովկասի կողմից անջատ հաշտություն կնքելու դեմ, 2) եթե որևէ պատճառով Սահմանադիր ժողովը չբացվի և անջատ հաշտության հարցը իրականություն դառնա, վարչությունը հայտնում է, որ առանց կազակների մասնակցության այդ հաշտությունը չի կարող ստորագրվել, քանի որ կազակները «այս պատերազմի ամբողջ ընթացքում թափում էին իրենց արյունը Կովկասեան ճակատում և լինելով Կովկասի բնակիչներ, Կովկասեան ֆրոնտում հաշտութիւն կնքելու գործում ու պայմաններում պակաս չափով չեն շահագրգռուած նոյն ճակատում կռտղ ուրիշ ժողովուրդներից»[392]: Բանաձևի մասին տեղեկացվելու էր երկրամասի և բանակի ղեկավար մարմիններին, Կուբանի և Թերեքի կազակական զորքերին:

Անդրկովկասյան կոմիսարիատի անջատ հաշտության կնքման նկատմամբ արմատական ընդդիմադիր կեցվածք որդեգրեց Հայ ժողովրդական կուսակցությունը: Դա բացատրվում է ոչ միայն և ոչ այնքան երկրամասային իշխանության կազմում կուսակցությունը չընդգրկելու և Դաշնակցության հանդեպ ունեցած փոխադարձ անհանդուրժողականության մեկնակետով, որքան տվյալ պահին առավել կշռադատված, սթափ և համազգային շահով մտահոգվելու հանգամանքով: Նոյեմբերի վերջից «Մշակ»-ը հեղեղվում է բախտորոշ վճիռը քննարկող և վերլուծող հոդվածներով: Այդ շարքում առանձնանում է թերթի խմբագիր և ՀԺԿ գաղափարախոս Հ. Առաքելյանի «Ինչ է լինելու Հայաստանի ապագան»

[391] Տե՛ս Հորիզոն, 1918, 7 փետրվարի, թիվ 28:
[392] Տե՛ս Աշխատավոր, 1918, 14 հունվարի, թիվ 6:

հոդվածաշարը[393]: Ի դեմս հեղինակի ՀԺԿ հարցադրումները հանգում էին հետևյալին:

Հայ ժողովրդական կուսակցությունը լիովին նույնացնում էր բոլշևիկյան կառավարության և Կոմիսարիատի անջատ հաշտության վերաբերյալ մարտավարությունը, իսկապես չհասկանալով և չհավատալով քաղաքական հակադիր բևեռներում կանգնած կառավարությունների և կուսակցությունների գործելակերպի նմանությունը: «Երևի դա ևս որոշ տակտիկա է,- գրում էր նա,- չը ճանաչել պաշտօնապէս, de jure, բոլշեվիկների իշխանութիւնը, բայց իրողապէս, de facto, իրագործել նրանց ծրագիրները»[394]: Հայ ժողովրդի երկու հատվածների համար անջատ հաշտությունը միանշանակ դիտվում էր որպես հայ ազգի, Հայաստան հասկացության և Հայկական հարցի կործանում:

Որպես հավանական մոտակա հետևանքներ էին դիտարկվում Կովկասյան ռազմաճակատի մերկացման գործընթացի վերջնական ավարտը՝ դրա հետևանքով թուրքական անխուսափելի արշավանքը, 40 հազար զինված քրդերի աջակցությունն այդ հարցում, այն, որ «հաշտություն առանց անեքսիայի և ռազմատուգանքների» կարգախոսը ենթադրելու էր Արևմտյան Հայաստանի վերադարձ Թուրքիային և որ «ազգերի ինքնորոշման իրավունքի» բոլշևիկյան պայմանը օգտակար է լինելու ոչ թե հայաթափված Արևմտյան Հայաստանի հայ բնակչության, այլ այնտեղ մնացած թուրքերի և քրդերի համար, որ ցեղասպանության արդյունքում մեծամասնություն են կազմել[395]:

Այնուհետև, չունենալով բավարար քանակությամբ ազգային զորամասեր, հայությունը ի վիճակի չէր լինելու նաև կազմակերպել ու իրականացնել շուրջ 400 հազար արևմտահայ գաղթականների տուն վերադարձի խնդիրը[396]:

ՀԺԿ առանձնահատուկ կերպով կարևորում էր այն հանգամանքը, որ անջատ հաշտությամբ, որին փաստորեն Կոմիսարիատի կազմում մասնակցում էին նաև հայերը՝ հայկական տարրը դեմ էր գնում դաշնակիցների ռազմավարությանը: Թեև դեռ չէր հրապարակվել «Թուրքահայաստանի մասին» բոլշևիկյան հրովարտակը, սակայն միանգամայն պարզ է դառնում, որ ՀԺԿ Հայկական հարցի լուծումը կապում էր միմիայն դաշնակիցների աջակցության հետ, ուստի և այս քայլը հիմնավորապես որակում էր դավաճանություն: Նկատի ունենալով, որ հողագրավումների փոխարեն արևմտահայությանը տրվելու է ինքնորոշման իրա-

[393] Տե՛ս Մշակ, 1917, 25, 26, նոյեմբերի, թիվ 252, 253:
[394] Նույն տեղում, 2 դեկտեմբերի, թիվ 257:
[395] Տե՛ս նույն տեղում, 25 նոյեմբերի, թիվ 252:
[396] Տե՛ս նույն տեղում:

վունք, «Զինադադարը» հոդվածում Հ. Առաքելյանը համոզված պնդում էր, որ «Թուրքիան միշտ հնարատրութիւն կը գտնի խուսափել դրա իրագործումից»[397]: Կուսակցությունն իրավացի էր նաև այն հարցում, որ Կոմիսարիատի կազմում անջատ հաշտությանը հավանություն տվող երեք հայազգի անդամները, որոնք դաշնակիցների աչքում ընկալվում են որպես հայ և ոչ կուսակցական, լիազորված չէին հայ ժողովրդի կողմից, երեք կոմիսարները (2 դաշնակցական և մեկ ս.-դ.) չէին արտահայտում հայ ժողովրդի շահերը: Հ. Առաքելյանը նորից հիշեցնում էր ՀԺԿ-ի առաջարկած «35-ի ժողովի», այսինքն՝ Ազգային ժողովի հրավիրման անհրաժեշտությունը[398]: «Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի Բելգիայի, Ամերիկայի աչքում մենք հայերս նկատվում ենք նոյնպիսի դաւաճաններ, որպիսին նրանք այսուհետև համարելու են ռուսներին, որոնք միջազգային դաշնագիրը ձգեցին «աղբի զամբիւղը»,- գրում էր Հ. Առաքելյանը»[399]:

Այս վերլուծական եզրահանգումներում, որոնց մեծ մասը ցավոք, իրականություն դարձան, բյուրեղանում և վեր է հառնում ողջ հետհոկտեմբերյան քաղաքական զարգացումների, այժմ էլ՝ հաշտության հիմնահարցի շուրջ ձևավորվող գլխավոր հակասությունը: Դա այն էր, որ Անդրկովկասյան կոմիսարիատի՝ որպես իրեն երկրամասային միացյալ կառավարություն հռչակած մարմնի քաղաքականությունը չէր կարող բխել այն ներկայացնող չորս ազգի շահերից: Այժմ միանգամայն ակնհայտ էր դառնում, որ վրաց-թաթարական ամրապնդվող դաշինքը բացահայտ պայքար էր հայտարարում ռուս-հայկական շարունակվող համագործակցությանը, Կոմիսարիատի գերակշռող և ազդեցիկ վրաց-թաթարական մեծամասնությունը Թուրքիայի հետ մերձենալով՝ անկախ կուսակցական պատկանելիությունից հակառուսական պայքարի սկիզբ էր հռչակում, մինչդեռ դաշնակցական կոմիսարներին իրենց գործընկերների հետ կապում էր առավելապես մերկապարանոց հակաբոլշևիզմը և ոչ ավելին: Կոմիսարիատի հռչակած առաջին հայացքից նույն հակաբոլշևիզմը միևնույն ձևով ու բովանդակությամբ չէր ծառայելու վրացիներին, հայերին, մահմեդականներին: Այս նրբությունն էին որսացել երկուատեք՝ թուրքական ռազմա-քաղաքական գործիչներն ու Կոմիսարիատում տոն տվող վրացական մենշևիզմը: Բացահայտ էր, որ վրացիներն ու թաթարները Թուրքիայի միջոցով փորձում էին լուծել տարածքային և ազգային ինքնիշխանության խնդիրներ և այդ ասպարեզում, ի տարբերություն հայերի, կորցնելու մեծ բան չունեին, «մի հարվածով Բեռլինի դաշնագիր չէին ոչնչացնում», Արևմտյան Հայաստան չէին կորցնում, հակառակը՝ հայության հաշվին և Թուրքիայի հետ նոր ձեռքբերումներ էին ակնկալում:

Այս իմաստով, ՀԺԿ գլխավոր եզրահանգումն ուղղվում էր ի դեմս Կոմիսարիատի հայ անդամների, մասնավորապես, Դաշնակցության դեմ: Կուսակցությունը ներողամտություն էր ցուցաբերում ս.-դ. մենշևիկ Գ. Տեր-Դազարյանի նկատմամբ, արդարացնում էր նրա վարքագիծը, որը բխում էր Հայկական հարցի հանդեպ մենշևիկյան կուսակցության որդեգրած հայեցակարգի ծրագրային մեկնակետից: Հայկական ցեղասպանության իրողության շրջանակներում Դաշնակցության վարքագիծը որակվում էր որպես դավաճանություն[400]: Հ. Առաքելյանը գիտակցում էր, իհարկե, որ երբ Խորհրդային կառավարությունը և ռուսական հրամանատարությունը կամենում են անջատ հաշտություն կնքել, «հայերը ոչինչ անել չէին կարող և ոչ ոք հայության կարծիքը կամ հավանությունը չէր հարցնում»: «Բայց թող սեպարատ հաշտութիւն կնքեն առանց մեզ,– գրում էր հեղինակը,– մեր մասնակցութիւնը այդտեղ չը պէտք է լինի»[401]: Հ. Առաքելյանն իր կուսակցության տեսանկյունց ընթերցողին էր ներկայացնում պատերազմի փուլում ՀՅԴ որդեգրած քաղաքականության և այժմ տարվող միանգամայն հակադիր վարքագծի հակասությունը: «Չունենալով երաշխիքներ և ապահովութիւն,– Դաշնակցությանը կշտամբում էր Հ. Առաքելյանը,- Կոմիսարիատի դաշնակցական հայ անդամները չը պէտք է ստորագրէին: Նրանք արդէն մի անգամ խաբվեցին Վորոնցով-Դաշկովից, երբ առանց ունենալու դրական երաշխիք՝ հավատացին նրա խոստումներին, թե Հայաստանին կը տրվի ինքնավարութիւն, և կազմելով կամաւորական խմբեր՝ ենթարկեցին Թուրքիայի հայութիւնը պատմութեան մէջ անօրինակ աղէտների, գոնէ այս անգամ պէտք է խրատվէին և յախտուն քայլ չանէին: Երբ Ռուսաստանը այնպիսի դրութեան մէջ է գտնվում, որ անկարող է այլևս օգնել մեզ, գոնէ մենք չը պէտք է թշնամացնէինք Անգլիան, Ֆրանսիան մեզ հետ, որոնք դեռ ապագայում շատ պէտք կարող են գալ մեզ»[402]:

Նա պահանջում էր նաև այն հարցում, որ եթե Կոմիսարիատի անդամների ստորագրությունը անհատական բնույթ է կրում, ապա այդ մասին ՀՅԴ պետք է հանդես գար հայտարարությամբ[403]: Ի պաշտպանություն ասվածի, ՀԺԿ ղեկավարներից մեկը՝ Հ. Առաքելյանը, վկայակոչում էր օրերին բացված Հայկական Զինվորական միության համագումարի (կանդրադառնանք առանձին բաժնում – Վ. Մ.) ընդունած գլխավոր որո-

[397] Տե՛ս նույն տեղում, 2 դեկտեմբերի, թիվ 257:
[398] Տե՛ս նույն տեղում:
[399] Նույն տեղում:

[400] Տե՛ս Մշակ, 1917, 26 նոյեմբերի, թիվ 253:
[401] Նույն տեղում:
[402] Նույն տեղում:
[403] Տե՛ս նույն տեղում:

շումը, ըստ որի Կոմիսարիատից պահանջվում էր, որպեսզի հաշտության պայմաններից մեկը լինի Արևմտյան Հայաստանի լիակատար ինքնորոշումը, թուրքական լծից նրա լիակատար ազատագրումը[404]:

«Զինադադարը եւ մեր երկիւղը» հոդվածում այդ գլխավոր տագնապով էր մտահոգված նաև «Վան-Տոսպ»-ը: «Վերջապէս կատարուեց այն, որից մենք սարսափում էինք,– գրում էր շաբաթաթերթը,– մեր քննութեան նիւթը այն է թե ինչպէս պիտի անդրադառնայ Ռուսաստանի անջատ հաշտութեան փաստը մեր հայրենիքի՝ Հայաստանի ճակատագրի վրայ... թիւրքական մի փաշայի առաջարկին հաւանութիւն էր տրւում եւ որի տակ ստորագրել էին նաև Կոմիսարիատի դաշնակցական անդամները: Անհասկանալի է մեզ Դաշնակցութեան ներկայացուցիչների ստորագրութիւնը յիշեալ թուղթի վրայ»[405]:

Այս ամենը պատմական զուգահեռների տեղիք է տալիս: Ինչպես 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այնպես էլ մեր օրերում Հայաստանի և հայության առջև դրվում է նույն խնդիրը, իհարկե, ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկություններով հանդերձ: Խոսքը հայ-թուրքական հարաբերությունների և որ ավելի կարևոր է՝ մեծ ընտրության հիմնահարցին է առնչվում: 1917 թ. իրականության մեջ, անհամեմատ բարդ և բախտորոշ պատմական իրադրության պայմաններում, հայ իրականության ազդեցիկ քաղաքական կուսակցությունը՝ Դաշնակցությունը, իհարկե երկյուղելով ու տագնապելով, բայց և հակաբոլշևիկյան ալիքի վրա վճռականորեն ընտրեց Թուրքիայի հետ մերձեցման ճանապարհով և հարևանների աճող ոչ բարեհաճ վերաբերմունքի միջավայրում՝ ազգային գլխավոր խնդիրները լուծելու ճանապարհը, նաև անկախության հիմնահարցը: Շարունակվող պատերազմի պայմաններում անորոշ մի տարածքի վրա պետություն վերագտնելու գաղափարը, փաստորեն գերակայեց բազմաթիվ ոչ պակաս համազգային կենսական նշանակություն ունեցող հիմնահարցերի վրա, մանավանդ, որ այդ մեծ գործընթացի նախաձեռնությունն ամենևին հայ ազգային-դեմոկրատական կուսակցությանը չէր պատկանում: Մեկ դար անց, ՀՅԴ դեմ է իր ընտրած ուղենիշին, որն ի դեպ, սկիզբ էր առել 1907 թվականին, ի դեմս ՀՅԴ - երիտթուրքեր համագործակցությանը:

Զինադադարի բանակցությունները սկսվեցին 1917 թ. դեկտեմբերի 2-ին (15) Երզնկայում: Ձևավորվում է զինադադարի պայմանների մշակման հանձնաժողով, որը ռուսական բանակի կողմից նախագահում էր Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետ, գեներալ-մայոր Ե. Վիշինսկին:

[404] Տե՛ս նույն տեղում:
[405] Տե՛ս Վան-Տոսպ, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 43:

Վերջինիս նախապես տրամադրվում են գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Ե. Լեբեդինսկիի և Անդրկովկասյան կոմիսարիատի հավանությանն արժանացած համապատասխան հրահանգները, որոնք էլ կազմում են զինադադարի պայմանագրի հիմքը: Տասներեք կետերից բաղկացած ցուցումների ռազմական և ռազմավարական նախապայմանների շարքում, մեզ հետաքրքրեց 4-րդ կետը. այնտեղ նշվում էր, որ պատերազմի իրավունքով զբաղեցրած տարածքում պետք է պահպանվեին ռուսական քաղաքացիական վարչակարգը ներկայացնող անձանց իրավունքները, այնպես ինչպես դա իրականացվում էր մինչև զինադադարի ստորագրումը[406]: Դա նշանակում էր, որ առայժմ, ինչպես համառուսաստանյան, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարությունը՝ գնալով Թուրքիայի և Գերմանիայի հետ զինադադարի քայլին, լիահույս էր, որ ռուսական բանակի կողմից գրավված տարածքները, այդ թվում և Արևմտյան Հայաստանը կմնան Ռուսաստանի կազմում:

1917 թ. նոյեմբերին ՀՅԴ-ը շարունակում էր Սահմանադիր ժողովին ներկայացնել Փետրվարյան հեղափոխությամբ իր որդեգրած սկզբունքը՝ «Դաշնակցութիւնը պահանջում է հաշտութիւն առանց անէքսիայի և կոնտրիբուցիայի»[407]: Դարձյալ ժամանակի սուր հարցն է բարձրանում, թե այդ ո՞ր պետության մասին էր խոսք գնում: Եթե Խորհրդային Ռուսաստանի՝ ուրեմն կուսակցության մոտեցումը հաստատվում է: Պարզ էր նաև այն, որ Կովկասյան բանակի բարձր հրամանատարությունը անվերապահորեն ենթարկվում էր Պետրոգրադի և Ն. Կռիլենկոյի հրամաններին, ինչը անհասկանալի խառնաշփոթ էր առաջացնում ոչ միայն կուսակցությունների, այլև իրենց՝ բանակի ղեկավարության միջավայրում: Բացառություն էր Երևանի ՀՅԴ «Աշխատանք» թերթի վերաբերմունքը: Արամ Մանուկյանի շուրջ համախմբված գործիչները, մեծամասամբ ՀՅԴ անդամներ լինելով, այնուամենայնիվ վերկուսակցական, համազգային դիրքորոշում էին որդեգրել և իրենց հայացքներում ու մարտավարության մեջ կայուն ու հետևողական էին մինչև վերջ:

«Աշխատանքին» զայրացրել էր հատկապես «Возраждение» թերթում թաքար Ախլիևի հոդվածը, որտեղ, մասնավորապես, ասվում էր, թե «շարունակել պատերազմն անկարող ենք, քանի որ այլևս չունինք ո՛չ դրամ, ո՛չ զօրաբանակ, ո՛չ կարգապահութիւն, ո՛չ ոգևորութիւն, ո՛չ ևս պատերազմի նպատակ: Որոշ նպատակ ունին միայն հայեր՝ որոնք կուզեն խլել Թուրքիայէն անոր Հայաստան կոչուած երկիրը, որու համար հազիւ թէ միւս ազգերը ջերմօրեն պաշտպանեն այդ պահանջը՝ ինչպէս

[406] Տե՛ս Документы и материалы..., с. 16-18:
[407] Տե՛ս Հորիզոն , 1917, 12 նոյեմբերի, թիվ 242:

հայերը այդ իսկ պատճառով, վրացիները չեն երթար թուրքերու դեմ պատերազմելու, քանի որ Թուրքիան անմիջապես չի սպառնար Վրաստանին. ռուսները իրենք կը հեռանան ռազմաճակատէն, իսկ մուսուլմանները չեն պատերազմեր թուրքերու դեմ, իրենց համար խորթ գաղափարի և նպատակի, այսինքն Հայաստանի ազատութեան համար»[408]:

«Աշխատանքը» ընդվզում էր միաժամանակ մի քանի հիմնահարցերի դեմ, որոնք իր ժամանակին արդեն՝ Հայոց պատմության և Ցեղասպանության կեղծարարության հիմքերն էին կառուցում: Խմբագրականի հեղինակին հունից հանել էր Ախլիևի խորհուրդը հայերին՝ լինել շրջահայաց, սուր չճոճել թուրքերի դեմ, որոհետև դա աղետավոր հետևանքներ կունենա, ինչպես եղավ հազարավոր հայերի համար, որոնք «այդ նպատակով պատերազմեցան և գտան յաւիտենական գերեզման»[409]:

Արվում էր եզրակացություն, որ Անդրկովկասյան կոմիսարիատի վրացի և թաթար անդամները նման մարտավարությամբ էլ պետք է բանակցեն թուրքերի հետ և այն էլ այնպիսի մի փուլում, երբ «ultra - կոսմոպոլիտ» բոլշևիկները դեկրետ են հռչակում Արևմտյան Հայաստանի մասին: Թեկուզ և հոդվածով, բայց հարված էր հասցվում Կոմիսարիատի քաղաքականությանը՝ հակահայկական կեցվածքին: «Թուրքիայէն գրաւած այդ վայրերը՝ ռուս և հայ զինուորի արիւնով ձեռք բերուած են,- գրում էր թերթը,- իսկ հաշտութիւն կնքելը՝ ամենևին Կովկասին վերաբերեալ խնդիր մը չէ, այլ ամբողջ պետութեան. ատկէ զատ, Հայկական հարցը ոչ միայն ռուս պետութեան կարգադրութենէն կըսպասէ իր լուծումը, այլ բովանդակ եւրոպական պետութիւններէն»[410]: «Աշխատանքի» համախոհները վճռականապես դեմ էին անջատ հաշտությանը, մասնավորապես, երբ այն կնքվելու էր «հայաստանցիների հաշվին»:

Հասկանալի է, որ «Աշխատանքը» ինչ-որ տեղ խնայում էր Կոմիսարիատի հայ անդամներին, իր կուսակիցներին, որոնք այս հարցում անօգնական և անհասկանալի վիճակում էին հայտնվել, բայց և աջակցություն էին ստանում Ազգային խորհրդի և ՀՅԴ ղեկավար մարմինների կողմից:

Ցավոք, Թիֆլիսից հրահանգներ ստանալու միտումը շարունակվեց մինչև անկախությունների հռչակումը՝ թե՛ Էրզրումի անկման պահին, թե՛ Տրապիզոնի բանակցություններում, թե՛ Կարսի հանձնման ժամանակ և անգամ անկախություն հայտարարելիս: Ցավալի էր նաև այն, որ Դաշնակցություն կուսակցության այս թևը չէր տոն տալիս և ուղորդում երկրամասի քաղաքաան զարգացումներին, պատերազմի և հաշտության

[408] Աշխատանք, 1918, 3 փետրվարի, թիվ 75:
[409] Նույն տեղում:
[410] Նույն տեղում:

կենսական հիմնահարցերի առթիվ լուծումների և որոշումների կայացմանը:

Զինադադարը ստորագրվեց դեկտեմբերի 5-ին (18): Նրա լրիվ անվանումն է «Պայմանագիր զինադադարի մասին՝ ռազմական գործողությունների թուրք-կովկասյան թատերաբեմում գործող ռուսական և թուրքական բանակների միջև՝ դեմարկացիոն գծերի և դրանց սխեմաների հաստատման վերաբերյալ»[411]: Դեկտեմբերի 7-ին (20) գեներալ-մայոր Ե. Վիշինսկին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարին է ներկայացնում զինադադարի պայմանագրի բնօրինակ փաստաթղթերը այդ թվում՝ պայմանագրի ռուսերեն և թուրքերեն տեքստերը, դեմարկացիոն գծերի մասին ակտը և սխեման[412]: Ավելացնենք, որ գեներալ Օդիշելիձեն ցանկալի էր համարում դեմարկացիոն գծերի փոխարեն չեզոք գոտի հաստատել[413]:

Երզնկայի զինադադարի պայմանագիրը բաղկացած էր երկու բաժիններից, որոնցից առաջինը՝ 14 կետից: Ռուսական Կովկասյան բանակի կողմից այն ստորագրեցին Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Ե. Վիշինսկին, Ելիզավետպոլյան 158-րդ գնդի հրամանատարը, զինվոր Ալ. Սմիրնովը (ս.-դ.), դաշնակցական Արշ. Զամալյանը և պրիվատ-դոցենտ Վ. Թևզայան (ս.-դ.), թուրքական բանակի կողմից՝ 3-րդ բանակի շտաբի պետ գնդապետ Մ. Յումեր Լյութֆի Բեյը և շտաբի կապիտան Ֆեյզի պետը: Ներկայացուցչական նման անհամամասնությունը վկայում էր, որ ռուսական կողմը, այդ թվում և Անդրկովկասյան կոմիսարիատը ավելի շահագրգռված էին զինադադարի ստորագրմամբ, մի հանգամանք, որն օբյեկտիվորեն բխում էր և թելադրվում խորհրդային կառավարության կողմից:

Չմանրամասնելով զինադադարի բոլոր պայմանները, առանձնացնենք դրանցից մի քանիսը, որոնք ուղղակիորեն առնչվում են ոչ միայն ռազմական, այլև ապագա քաղաքական իրադարձությունների զարգացման հետ:

Այն ստորագրվում էր երկու կողմերի համար պատվավոր դաշինքի հասնելու նպատակով: Պայմանագիրը երկկողմանիորեն պարտադիր էր, խախտող կողմը 14 օր առաջ պետք է տեղեկացներ ռազմական գործողությունների վերսկսման մասին: Հայտնի է, որ այս կետը կոպտորեն խախտվեց թուրքական կողմից: Մարտական գործողությունները դադա-

[411] ЦГИА Грузии, ф. 1876, оп. 1, д. 1, л. 1.
[412] Տե՛ս նույն տեղում, թ. նաև՝ ֆ. 34/с. д. 1, лл. 7-9:
[413] Տե՛ս РГВИА, ф. 2100, оп. 1, д. 32, թ. 5:

ռեցվում էին Սև ծովից մինչև Վանա լճի հարավային ափն ընկած թատերաբեմում տեղակայված զորքերի միջև, ինչպես նաև Կովկասյան – Պարսկական ճակատում և Սև ծովի վրա[414]: Դեկտեմբերի 13-ին (26) գեներալ-գլխավոր հրամանատար Ն. Կոհլենկոն Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկիին հեռագրում էր Պարսկաստանից զորքերի դուրս բերման մանրամասների մասին[415]: Կողմերը պարտավորվում էին չիրականացնել օպերատիվ ռազմավարական բնույթի ոչ մի տեղաշարժ, վերախմբավորում, հատկապես պահեստազորի առաքում Միջագետք-Սիրիական ռազմաճակատ: Առանձին. 11-րդ կետով «թուրքական հրամանատարությունը պարտավորվում էր ձեռնարկել ամեն ջանք, որպեսզի ստիպի քրդերին ճշտորեն կատարել պայմանագրի կետերը: Քրդերի թշնամական գործողությունների դեպքում ռուսական զորքերն իրենց դեմարկացիոն գոտում նրանց հետ կվարվեն ինչպես իշխանությունը չճանաչող ավազակների»[416]: Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել երկու կարևոր մանրամասների վրա, որոնք մեկ անգամ ևս բացահայտում են Կոմիսարիատի վրացական ղեկավարության և վրաց-թաթարական հակահայկական դաշինքի գործնական վերաբերմունքը հայկական խնդիրների նկատմամբ:

Դեռ նոյեմբերի 26-ին (դեկտեմբերի 9) Կոմիսարիատի նիստում Ե. Գեգեչկորին զինադադարի հանձնաժողովի անդամներին ներկայացնում էր ռուսական հրամանատարության կողմից արված պարտադիր առաջարկների նախագիծը: Վիճահարույց 13-րդ՝ քրդերի մասին հոդվածը լրացվում է Խ. Կարճիկյանի առաջարկությամբ՝ այն մասին, որ «ռուսական զորքերի վրա քրդական զինված խոշոր ջոկատների հարձակման դեպքում զինադադարը համարվում է խախտված և ռազմական գործողությունները վերսկսվում են»[417]: Այստեղ կարևորն այն է, որ Կոմիսարիատի վրացի նախագահը, համոզված լինելով, որ հանձնաժողովի անդամները կպնդեն Խ. Կարճիկյանի առաջարկի վրա, ծախողում է այն և, չարաշահելով նախագահի դիրքը, անցկացնում է բանաձև, ըստ որի այդ կետին չի տրվում պարտադիր բնույթ[418]:

Առավել կարևոր է նույն նիստում մերժված երկրորդ կետը. լսվում է Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարի հաղորդումն այն մասին, որպեսզի գեներալ-կոմիսարիատի ներկայացուցիչ կապիտան Անֆիլովը խորհրդակցական ձայնի իրավունքով ընդգրկվի զինադադարի կնքման

[414] Տե՛ս Документы и материалы..., с. 19-21:
[415] Տե՛ս РГВИА, ф. 2100, оп. 1, д. 32, л. 5:
[416] Документы и материалы..., էջ 21.
[417] ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 42:
[418] Տե՛ս նույն տեղում:

հանձնաժողովի կազմում: Երկարատև վիճաբանություններից հետո, մեծամասնությունը՝ 5 հոգի, քվեարկում է 4-ի դեմ, և հարցը մերժվում է: Դրա փոխարեն հանձնաժողովում ընդգրկվում է ռազմապատմական բաժնի գնդապետ Էսաձեն[419]:

Եզրակացությունը միանշանակ է, Երզնկայի զինադադարի կնքման գործընթացի ժամանակ արդեն պարզ էր, որ վրաց-թաթարական դաշինքը ամեն գնով Թուրքիային է նվիրելու Արևմտյան Հայաստանը, ինչը հիմնավորվում է նաև Կովկասյան բանակի հանդեպ ցուցաբերած հետևողական, թշնամական դիրքորոշմամբ: Մեզ համար առավելապես կարևորվում է այն միտումը, որ ի դեմս Կոմիսարիատի հայ անդամների, նախ՝ դրսևորվում էր բացահայտ հակահայկական քաղաքականություն և որ ավելի կարևոր է, այդ քաղաքականության դեմ ոչ մի գործնական քայլ չէր ձեռնարկվում, դասեր չէին քաղվում և շարունակվում էր նույն պարտվողական մարտավարությունը՝ այն էլ ներքին քաղաքական անհաշտ հակասությունների պայմաններում:

Չգիտես ինչու, հայ ս.-դ. մենշևիկների գաղափարախոս-առաջնորդներից Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդ) համոզված էր, որ Թուրքիայի յուրաքանչյուր ռազմավարական քայլ, որը թելադրվում էր Գերմանիայի կողմից, չհասկացվեց «վրացական սոցիալ-դեմոկրատ կարճատես, գերմանոֆիլ, չխենկելիատիպ գործիչների»[420] կողմից: Իրականում, ամեն ինչ այլ կերպ էր ընթանում. հայ մենշևիկները չէին հասկացել և յուրացրել այն, ինչը վաղուց իր քաղաքական սպառազինության օրակարգն էր ընդգրկել վրացական մենշևիզմը, որն առաջնորդվում էր ոչ թե սոցիալ-դեմոկրատիայի, այլ զուտ վրաց ազգի կենսական շահերով:

Զինադադարի պայմանագրի երկրորդ բաժինը նվիրված էր սահմանվող դեմարկացիոն գծին, որը մեր կարծիքով՝ անհրաժեշտ և օգտակար սկզբնաղբյուր է հանդիսանում հիմնահարցի մասնագետների, հատկապես քարտեզագիրների համար: Բոլոր նշված աշխարհագրական տեղանուններն ու անվանումները, սահմանագծի կետերը համարվում էին պայմանավորվող կողմերի կողմից գբաղեցված, բացառությամբ Սուլուխի կամրջից, որը երկու կողմին էր բաժանում:

Երզնկայի զինադադարը մեծ հիմնահարցի նախերգանքն էր միայն: Դրան անմիջապես հետևում է Թուրքիայի և Անդրկովկասյան կոմիսարիատի ու ռազմաճակատի հրամանատարության միջև բանակցությունների գործընթացը: 1918 թ. հունվարի առաջին կեսին երկուստեք շարունակվող հաղորդագրություններն ու քննարկումները վկայում

[419] Տե՛ս նույն տեղում:
[420] Տե՛ս С. Т. Аркомед, նշված աշխատությունը, էջ 13:

են, որ պատերազմում հակառակորդներ, իսկ այժմ՝ Կոմիսարիատի անկախության հռչակումից ու դրանով իսկ՝ Խորհրդային Ռուսաստանը չճանաչող երկրամասի իշխանությունների և հարևան Թուրքիայի միջև սկսվում են բոլորովին նոր որակի հարաբերություններ:

1918 թ. հունվարի 1-ին (13), Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար Ֆերիկ-Վեհիբ-Մեհմեդ փաշայի կողմից Կովկասյան բանակի նորանշանակ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Օդիշելիձեին* հասցեագրված նամակում առաջին անգամ թուրքական հրամանատարությունը բարձրացնում է Անդրկովկասի քաղաքական կարգավիճակի ճշգրտման խնդիրը[421]: Միջնորդավորված հարցումներով, գեներալ Վեհիբ Մեհմեդը գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Էնվեր փաշայի համար նրբորեն փորձում էր պարզել, թե ի՞նչ է նշանակում *Երզնկայի զինադադարի ստորագրման ժամանակ* կիրառված «Անդրկովկասյան անկախ կառավարություն» հասկացությունը, քանի որ ի դեմս գեներալ Ե. Վիշինսկիի, Կովկասյան բանակի հրամանատարությունն այդ կառավարության անունից էր սկսել բանակցությունների գործընթացը և ի՞նչ ճանապարհով էր հնարավոր վերականգնել հարաբերություններն այդ կառավարության հետ: Էնվեր փաշայի առաջարկով «Կովկասյան անկախ կառավարության» մայրաքաղաք՝ Թիֆլիս է գործուղվում պատգամավորական հանձնաժողով՝ երկու կողմերի միջև խաղաղ հարաբերություններ հաստատելու և այդ ուղղությամբ առաջարկներ մշակելու նպատակով[422]:

Հունվարի 4-ին (17) բ. զ. գ. երկրամասային կենտրոնի նիստը Ն. Ժորդանիայի նախագահությամբ լսում է Ե. Գեգեչկորիի հաղորդումն այդ հարցի կապակցությամբ և ընդունում է նախնական որոշում:

Լրամշակված տարբերակը հաստատվում է հաջորդ օրը՝ Անդրկովկասյան կոմիսարիատի նիստում: Ուշագրավ է, որ այդ նիստը զուգադիպում է Սահմանադիր ժողովի բացմանը՝ հունվարի 5-ին (18), ինչը որոշակի ազդեցություն է թողնում նաև ընդունված բանաձևի վրա: Ակնարկվում էր նաև ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի կողմից հունվարի 8-ին (21) արտասանված ճառը՝ համընդհանուր հաշտության հաստատման մասին: Կոմիսարիատի նիստը (նախագահ Ա. Չխենկելի) լսում է թուրքական գլխավոր հրամանատարության և կառավարության կողմից արված հաշտության առաջարկի հարցը և ընդունում պատասխանի նախագիծ[423]: Երկրամասային կենտրոնի բանաձևում ասվում էր՝ «1) ցանկանալով հաշտություն կնքել Ռուսաստանյան դեմոկրատիայի համար ընդունելի հիմքի վրա, անհրաժեշտ ենք համարում Ձեզ տեղեկացնել, որ մենք հանդիսանում ենք ռուսաստանյան հանրապետության բաղկացուցիչ մասը, հաշտության մասին բանակցություններին կարող ենք մասնակցել՝ ստանալով միայն նոր բացված Սահմանադիր ժողովի համապատասխան լիազորությունները: Մեր պատգամավորները, որոնք մեկնում են մասնակցելու Սահմանադիր ժողովին, մեր կողմից լիազորվում են առաջին հերթին բարձրացնել Ձեր կողմից արված հաշտության առաջարկը, որի պատասխանը դուք անհապաղ կստանաք»: 2) Միաժամանակ, երկրամասային կենտրոնն առաջարկում է Անդրկովկասյան կոմիսարիատին՝ բանակցություններ վարել Ռուսաստանի բոլոր կառավարությունների՝ ընդհուպ մինչև ժողովրդական կոմիսարների հետ: Որոշվում է հարցը հանել օրակարգից. հրավիրել Կոմիսարիատին կից խորհրդակցություն, որտեղ հրավիրել՝ 1) ազգային խորհուրդների ներկայացուցիչներին (մեկական մարդ), 2) երկրամասային կենտրոնի նախագահությանը, 3) ազգամիջյան զինվորական խորհրդի ներկայացուցչին, 4) ռազմաճակատի գլխավոր հրամանատարին, 5) բանակի *շտաբի* պետին: Նիստի օր նշանակել հունվարի 9-ը (22)»[424]:

1918 թ. հունվարի 5-ին (18) բոլշևիկները Պետրոգրադում ցրեցին Սահմանադիր ժողովը՝ իրականացնելով կրկնակի հեղաշրջում և բացահայտելով կուսակցության ու ժողկոմխորհի իրական *ռազմավարությունը*:

Նույն օրը, Անդրկովկասյան կոմիսարիատի նիստը քննեց այդ բեկումնային իրադարձության հարցը: Դ. Դոնսկոյը բոլշևիկների քայլը հիմնավորում էր նրանով, որ «նրանց ամեն գնով անհրաժեշտ էր հաշտություն, որը ձեռնտու է գերմանական իմպերիալիզմին»[425]: Եթե անգամ Դ. Դոնսկոյի, որպես զինվորական *գործչի* եզրահանգումը կիսատ էր հնչում, միևնույն է, նրա դիտարկումը տեղին է, քանի որ քաղաքական տեսանկյունից բոլշևիկների *գործարքը գերմանացիների հետ լիովին* արդարացվում էր՝ իշխանությունն ամեն գնով պահելու համատեքստում: Դեպքերը ոչ լիարժեք կերպով գնահատելը բխում էր նրանից, որ ըստ էության Դ. Դոնսկոյի «Սահմանադիր ժողովը չէր կարող Գերմանիայի պահանջով անհապաղ հաշտություն կնքել, ուստի և ցրվեց»[426], այսինքն՝

* 1918 թ. հունվարի 15-ին (28) նիստում Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար է հիշատակվում Ե. Լեբեդինսկին:

[421] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 3.

[422] Տե՛ս Документы и материалы..., с. 24-25:

[423] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 9:

[424] Документы и материалы..., с. 26-27:

[425] ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 141, л. 11.

[426] Նույն տեղում, л. 11 об.

պատասխանատվությունը դրվում էր երկրի գլխավոր ներկայացուցչական մարմնի վրա: Դ. Դոնսկոյը առաջարկում էր բողոքել բոլշևիկների գործողությունների դեմ, բացահայտել նրանց իրական դեմքը, Սահմանադիր ժողովի կազմն ուժեղացնելու նպատակով անգամ՝ Պետրոգրադ ուղարկել Անդրկովկասից և այլ շրջաններից ընտրված պատգամավորներին: Եթե այդ դեպքում էլ Սահմանադիր ժողովը ցրվի, ապա նրա կարծիքով անհրաժեշտ էր այն հավաքել մեկ այլ, ավելի անվտանգ վայրում:

Քննարկումների արդյունքում արվեց սպասվող հետևությունը – երկրամասն ամրապնդելու նպատակով անհրաժեշտ է հրավիրել տեղական Սեյմ՝ բաղկացած Սահմանադիր ժողովի անդամներից[427]: Ի հայտ եկան երկու մոտեցումներ. մի մասը գտնում էր, որ ծայրագավառներն ամրապնդելով միայն կարելի է թուլացնել, մեկուսացնել բոլշևիկներին և հրավիրել Սահմանադիր ժողովը, իսկ մյուսները նշում էին այն հանգամանքը, որ մինչև ազգային ծայրագավառները կամրանան, բոլշևիկներն իրենց ոճով հաշվերահարդար կտեսնեն թե՛ կենտրոնի, թե՛ շրջանների հետ, իսկ տեղական սեյմերի հրավիրումը կնպաստի նրան, որ Սահմանադիր ժողովը երբեք չի հրավիրվի[428]: Երկրորդ մոտեցումն անվիճելիորեն ճիշտ էր և ելնում էր նախ և առաջ բոլշևիզմի դեմ միասնական պայքարի ելակետից, ինչը լիովին անտեսվում էր վրացական մենշևիկների կողմից:

Կոմիսարիատի նիստը բավարարվում է նրանով, որ որոշում է կոչով դիմել Անդրկովկասի բնակչությանը և Կովկասյան բանակի զինվորներին՝ բոլշևիկների բռնի ակտը դատապարտելու բովանդակությամբ: Առերես զայրույթի տակ թաքնված էր բաղձալի նպատակը և Սահմանադիր ժողովի ցրումը՝ գոնե վրացական քաղաքական վերնախավի համար դարձավ այն սպասված վերջնակետը, որը կարդարացներ Ռուսաստանից անջատվելու ռազմավարությունը:

1918 թ. հունվարի 12-ին (25) բ. զ. գ. պ. երկրամասային կենտրոնը Սահմանադիր ժողովը ցրելու վերաբերյալ ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես ասվում էր. «Սահմանադիր ժողովի ցրումը կտրեց այն վերջին թելը, որը կարող էր միավորել ամբողջ Ռուսաստանը և համառուսաստանյան հեղափոխական դեմոկրատիան: Սահմանադիր ժողովի համար պայքարը-պայքար է Ռուսաստանի միասնության և հեղափոխության հաղթանակի համար: Սահմանադիր ժողովի ցրումը Անդրկովկասը կրկին տրամադրեց իր սեփական ուժերին: Երկրամասի կենսական շահերը պահանջում են մոտակայում հրավիրել Անդրկովկասից Սահմանադիր ժողովի համար ընտրված պատգամավորների ժողով, որն էլ կստեղծի ուժեղ և հեղինակավոր իշխանություն»[429]:

Անդրկովկասի անկախացման ճանապարհին երզնկայի զինադադարը դարձավ առաջին գլխավոր ջրբաժանը, երբ Կոմիսարիատն իր որդեգրած անկախացման և այդպիսով նաև՝ Թուրքիայի հետ մերձենալու նախաշեմին իրեն ավելի բաց դրսևորեց, սկսեց գործել առավել համարձակ: Պաշտոնական փաստաթղթերի մեջ միանգամից մուտք գործեց «Կովկասի անկախ կառավարություն» ձևակերպումը, որը նախ՝ շեշտում էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու առաջնահերթ հարցադրումը, ապա և Անդրկովկասը Կովկաս կոչելով հետապնդվում էր պանթուրքիզմի դեռևս չիրականացված ծրագիրը՝ հակառուսական դաշինքի մեջ ներառնելով նաև Հյուսիսային Կովկասի մահմեդականներին: Միայն Վեհիբ փաշայի նամակում այդ նոր ձևակերպումը կրկնվում էր հինգ անգամ: Ժամանակին դա նկատել էր նաև Ալ. Խատիսյանը, նա գրում էր. «*Տաճիկների համար անկախ Կուկաս մը բաղձալի պատնէշ մըն էր Թուրքիոյ և Ռուսիոյ միջև: Թիֆլիսի մէջ այդ բանը զգացին, բայց դեռ ոչ ոք չէր ուզէր բացահայտորէն խոսել Ռասիայէն անջատելու մասին: Համենայն դեպս, ուշադրութեան արժանի է, որ անկախութեան գաղափարը և այդ գաղափարի հրահրումը եկավ Թուրքիայէն*»[430]: Ալ. Խատիսյանի եզրահանգումը մեկ անգամ ևս հիմնավորում է Կոմիսարիատի կազմում հայազգի *կոմիսարիների կայացրած լուռ համաձայնությունը՝ Ռուսաստանից* անջատվելու և Թուրքիայի հետ մերձենալու վերաբերյալ: Նախորդ շարադրանքում մեր կողմից բերված փաստարկները հիմնավորում են սակայն այն մոտեցումը, *որ վերոհիշյալ գործընթացը սկսվել է ոչ թե Թուրքիայի, այլ վրացական մենշևիզմի նախաձեռնությամբ՝ բոլշևիկյան հեղաշրջման արդյունքում:*

Թուրքական առաջարկին զուգահեռ Սահմանադիր ժողովի ցրումն արագացրեց միայն և վճռականություն հաղորդեց ռազմա-քաղաքական նոր դաշնակցի ընտրության գործընթացին, ինչը վրացական մենշևիզմի համար սպասված, անգամ փորձարկված գաղափար էր (նկատի ունենք վրաց-թուրքական 1914 թ. գաղտնի համաձայնագիրը, որը պատերազմի նախօրեին ուղղվում էր Ռուսաստանի դեմ – Վ. Մ.):

Միաժամանակ, Բրեստ-լիտովսկի բանակցությունների ուղղվածության համատեքստում, Թուրքիան ուժեղացնում էր ճնշումը Անդրկովկասյան կոմիսարիատի վրա, պահանջելով կնքել հաշտության անջատ պայմանագիր:

---

[427] Տե՛ս նույն տեղում:
[428] Տե՛ս նույն տեղում:

[429] Документы и материалы..., էջ 27-28:
[430] Ա. Խատիսեան, Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968 էջ 30:

Անդրկովկասյան կոմիսարիատի հունվարի 14-ի (27) և 15-ի (28) նիստերն ամբողջապես նվիրվեցին Թուրքիայի հետ հաշտության խնդրին և արտացոլում էին Սահմանադիր ժողովի ցրումից հետո այդ գործընթացի արագացման տրամադրությունները: Հունվարի 14-ին (27) նախագահ Ե. Գեգեչկորին մեղավոր զգալով «Կոմիսարիատի երկար լռելու համար», որը կարող էր թուրքերի կողմից որպես մերժում ընկալվել, առաջարկում էր պատասխանն այնպես ձևակերպել, որտեղ երևա, որ անդրկովկասյան կառավարությունը թուրքական առաջարկի շուրջ բանակցում է հարևան ժողովուրդների, Ռուսաստանյան հանրապետության ինքնավար կառավարությունների հետ, ուստի մինչև դրանց ավարտը որոշակի պատասխան չի կարող տալ: Առավել համարձակ Ա. Չխենկելին առաջարկում էր կոնկրետացնել պատասխանը և նշել, որ «ա) Անդրկովկասը հանդիսանում է հաշտության կողմնակից, բ) բանակցել հարևանների հետ, որոնք նույնպես մեծապես շահագրգռված են հաշտությամբ և գ) հաստատել վերջնական որոշակի պատասխանի երեքօրյա ժամկետ»[431]: Որոշվում է Թուրքիային պատասխանել այս երկու առաջարկների ոգով և հունվարի 29-ին այդ նպատակով Թիֆլիս հրավիրել Հարավ-Արևելյան միության և Ուկրաինայի պատգամավորներին[432]: Սակայն շտապողականությունն այնքան գերիշխող էր, որ հաջորդ օրը Կոմիսարիատի նիստ հրավիրվեց՝ քննելու թուրքական առաջարկի և հաշտության հարցը:

Հունվարի 15-ի (28) նիստին մասնակցում էին ազգային խորհուրդների և երկրամասային կենտրոնի ներկայացուցիչները, Կոմիսարիատի ընդլայնված կազմը: Եթե նախորդ օրը Կովկասյան բանակը ներկայացնում էր գեներալ Մդիվանին, ապա այժմ՝ գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկին, Ռուսական ազգային խորհուրդը ներկայացնում էր Ս. Զավալիշինը, հայկականը՝ Մ. Պապաջանյանն ու Տ. Բեկզադյանը, վրացականը՝ Գ. Վեշապելին, երկրամասային կենտրոնը՝ Ն. Ժորդանիան: Բացի այդ, հայ գործիչներից ներկա էին Ար. Երզնկյանը, Կ. Ղազարյանը, Կ. Տեր-Հարությունյանը, ինչպես նաև կոմիսարներ Խ. Կարճիկյանն ու Գ. Տեր-Ղազարյանը, Հ. Օհանջանյանի բացակայության պատճառը չենք կարողացել պարզել: Ե. Գեգեչկորիի բացման խոսքը պարզում է, որ հրավիրվող ինքնավար հակախորհրդային կառավարությունների որոշակիացման հարցում, Կոմիսարիատի ներսում ձևավորվել են երկու հակադիր թևեր: Մի կողմը գտնում էր, որ բանակցություններին որպես մերձակա հարևաններ կարող են մասնակցել միայն Կուբանի և Թերեք-Դաղստանյան կառավարությունները, մյուս խումբը կարծում էր, որ պետք է հրավիրել նաև Ուկրաինայի կենտրոնական Ռադայի և Հարավ-արևելյան միության ներկայացուցիչներին: Առաջինը ելնում էր նրանից, որ պետք է հաշվի առնել իրական ուժերը, այսինքն, եթե Թուրքիայի հետ նոր ընդհարում տեղի ունենա, ապա պատերազմին կմասնակցեն հարևանները՝ Կուբանը, Թերեքը և Դաղստանը: Այս տեսակետի հակառակորդներն էլ ելնում էին նրանից, որ Հյուսիսային Կովկասը Հարավ-արևելյան միության ընդամենը մի մասն է կազմում և հաշտության խնդրի նման լուրջ հարցի կապակցությամբ անջատ գործել չի կարող՝ ուստի և, պետք է համաձայնվել ամբողջ Հարավ-արևելյան միության հետ[433]:

Ըստ ելույթների հաջորդականության, որը մեր կարծիքով այս հարցում ևս որոշակի դեր ունի, Ուկրաինայի և Հարավ-արևելյան միության հետ համաձայնության կողմնակիցներ են հանդես գալիս Ն. Ժորդանիան, Գ. Տեր-Ղազարյանը, Մ. Պապաջանյանը, Ս. Զավալիշինը, Տ. Բեկզադյանը, Խ.-բ. Մելիք-Ասլանովը, Ե. Լեբեդինսկին, Շ. Ալեքսև-Մեսխիևը, Խ. Կարճիկյանը:

Միջանկյալ դիրք է գրավում միայն ռազմական նախարարության գծով կոմիսար Դ. Դոնսկոյին փոխարինած Վ. Գոբեչիան, որը գտնում էր, որ կոմիսարատն ի վիճակի չէ համաձայնության գալ բոլոր համառուսաստանյան կառավարությունների հետ, ուստի և Թուրքիայի հետ հաշտությունն ինքնուրույն պետք է կնքի[434]:

Խ. Կարճիկյանի և Ս. Զավալիշինի վեճի առարկան վերաբերում էր նրան, որ պատասխանի հարցում պետք էր հենվել Սահմանադիր ժողովի՝ որպես ամբողջ Ռուսաստանի լիիրավ պահանջատիրոջ վրա: Խ. Կարճիկյանը տարակուսանք էր հայտնում ընդհանրապես Սահմանադիր ժողովի գոյության ու նրա հետագա գործունեության հարցում: Գ. Տեր-Ղազարյանը համոզված էր, որ Ուկրաինայի հետ համաձայնվելով, հաշտությունը կընդունի և ամբողջ Ռուսաստանը: Ելնելով այն հանգամանքից, որ Սահմանադիր Ժողովը ակտ էր հրապարակել Դաշնային հանրապետության ստեղծման մասին, Մ. Պապաջանյանն առաջարկում էր շեշտել, որ Անդրկովկասն անկախ չէ, այլ ինքնավար: Դաշնակիցների ընտրության հարցում հաղթում է Մ. Պապաջանյանի հարցադրումը, որին միանում են նաև Ս. Զավալիշինը և Տ. Բեկզադյանը: Նրանք Մ. Պապաջանյանին պաշտպանում էին այն հարցում, որ թե՛ կայուն հաշտության և թե՛ պատերազմի դեպքում անհրաժեշտ է միաժամանակ ինչպես Ուկրաինայի, այնպես էլ Հարավ-արևելյան միության, և նույնիսկ Խորհրդային կառավա-

[431] ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 33, նաև՝ Кавказское Слово, 1918, 17 января, N 12:
[432] Տե՛ս նույն տեղում:

[433] ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 18, лл. 37-40:
[434] Документы и материалы..., էջ 33:

ության ներգրավումը: Ի դեմս Շ. Ալեքսեև-Մեսխիևի, բոլշևիկների հետ համագործակցությանը դեմ էին արտահայտվում դարձյալ վրացական գործիչները[435]:

Եվ վերջապես, միայն Հյուսիսային Կովկասի հետ համատեղ գործողությունների մասին՝ որպես հակադիր մեկնակետի նախաձեռնող հանդես է գալիս Ա. Չխենկելին: Նա իր տեսակետը հիմնավորում էր հետևյալ կերպ. «Ուկրաինային չարժէ հրավիրել, քանի որ վերջինս ինքնուրույն բանակցում է Գերմանիայի և Թուրքիայի հետ: Մեզ համար կարևոր է ծանրության կենտրոնը թողնել Անդրկովկասում: Բացի այդ, Հարավ-արևելյան միությունը ֆիկցիա է. այսպես՝ Թերեքի կառավարությունը, ելնելով մարտավարական նկատառումներից, իրեն բոլշևիկյան է հռչակել: Լեռնցիների կառավարությունը աջակցություն է ստանում Դոնից: Կուբանում իրավիճակն անորոշ է: Կովկասյան ռազմաճակատում պատասխանատու են մեր՝ կովկասյան ժողովուրդները և եթե տեղական ազգերը միավորվեին, գործն այսքան վատ չէր լինի: Դժբախտությունն այն է, որ մենք միավորված չենք»[436]: Ա. Չխենկելիի տեսակետը երերուն էր հենց միայն այն պատճառով, որ առաջարկում էր ելնել իրական դրությունից, բայց ցավ էր հայտնում, որ երկրամասի ժողովուրդները միավորված չեն: Նա շատ լավ գիտեր, որ միավորում, այն էլ Թուրքիայի դեմ, չի լինի: Մեր կարծիքով, Ա. Չխենկելին վրացական մենշևիզմի ազգային ուղղվածության արմատական դիրքորոշումն էր ներկայացնում, առավել վճռական էր Ռուսաստանից անջատվելու և Թուրքիայի հետ անջատ հաշտություն կնքելու հարցում:

Այս առումով անհրաժեշտ ենք համարում ներկայացնել, դեռ նոյեմբերի 30-ին (դեկտեմբերի 12) Կոմիսարիատում Թերեքի միացյալ կառավարության ներկայացուցիչ Վ. Աբրամովի հայտնած տեսակետը՝ զինադադարի պայմանների վերաբերյալ: Նա գտնում էր, որ Կոմիսարիատի կողմից հավանության արժանացած զինադադարի 13 կետերի դեմ Թերեքի կառավարությունը չի առարկի, սակայն ակտիվ կբողոքի անջատ հաշտության կնքման դեմ[437]: Այստեղ կարևոր է առավելապես ոչ թե Ա. Չխենկելիի ճշտումը Թերեքի կառավարության բոլշևիկյան դիրքորոշման հարցում, այլ այն, որ այդ պետական կազմավորումը ռուսական պետականության, միացյալ պետության կողմանկիցն էր և չէր հանդուրժի երբեք Կովկասի անջատումը Ռուսաստանից՝ լիներ այն բոլշևիկյան, թե ոչ: Այս հանգամանքն էր մտահոգում Ա. Չխենկելիին, ինչը, իհարկե, *խանգարելու էր Թուրքիայի հետ անջատ հաշտության մարտավարությանը*: Ի դեպ, հունվարի 6-ին (19) Կոմիսարիատի նիստը լսում է Ա. Կան-

[435] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л. 37-39.
[436] Նույն տեղում, թ. 39.
[437] Տե՛ս նույն տեղում, д. 116, л. 59.

տեմիրովին ուղղված Վլադիկավկազում տեղի ունեցած իրադարձությունների մասին Թերեք-դաղստանյան կառավարության անդամ Կապլանովի զեկույցը: Խոսքը վերաբերում էր քաղաքացիական պատերազմի դրսևորումներին և Կոմիսարիատը որոշում է աջակցել նրանց դրամով, զենքով և փամփուշտներով[438]:

Ա. Չխենկելիին բավական հիմնավոր հակահարված է տալիս Խ. Կարճիկյանը: Ըստ նրա՝ քանի դեռ չէր պարզվել, որ Կովկասյան ռազմաճակատում անդրկովկասյան իշխանությունները զինադադար կնքում են այդ մասին ընդհանուր պայմանագրի հիման վրա, ուստի այն չէր կարող ստորագրվել հենց միայն Սևծովյան հիմնահարցի պատճառով: Նա իրավացի էր, որ «թուրքերին պատասխանել ուկրաինացիների փոխարեն մենք չենք կարող և գործել առանց նրանց անիմաստ է»[439]: Ա. Չխենկելիի առաջարկը միաձայն մերժվում է և որոշվում է Թիֆլիս խորհրդակցությանը հրավիրել Ուկրաինայի և Հարավ-արևելյան միության ներկայացուցիչներին[440]:

Հիմնականում այս ոգով կազմված պատասխանն էլ ուղարկվում է Վեհիբ փաշային: «Անդրկովկասյան իշխանությունը,– ասվում էր այնտեղ, խնդրում է Ձեզ ընդունել Օտոմանյան բանակի գլխավոր հրամանատարի հետ մեր ունեցած լիակատար համերաշխության հավաստիքը՝ նրա հումանիստական ձգտումներում առ այն, որ շուտափույթ վերականգնվեն փոխադարձ խաղաղ երանելի հարաբերությունները երկու կողմերի միջև»[441]: Անդրկովկասյան կոմիսարիատի պատասխանի, ինչպես նաև փետրվարի 1-ին (13) Թիֆլիսում հրավիրվող խորհրդակցության մասին Ե. Գեգեչկորին նույն օրը հեռագրում է նաև Ուկրաինական կենտրոնական Ռադայի և Հարավ-արևելյան միության նախագահներին[442], իսկ հունվարի 17-ին (30) նաև՝ Կովկասում արտասահմանյան տերությունների հյուպատոսական ներկայացուցչության ավագ՝ իտալացի հյուպատոս Լորենցո Վալերիին[443]:

Հունվարի 18-ին (31) Եկատերինոդարից ստացվում է Հարավ-արևելյան միության փոխնախագահ Մակարենկոյի հեռագիրը, որտեղ հայտնվում էր, որ հիմնահարցի մասին տեղյակ է պահվել Դոնի, Կուբանի, Թերեքի, Դաղստանյան, Աստրախանի, Ուրալի և Օրենբուրգի կառավարություններին, որ Կուբանն արդեն իսկ դրական է արտահայտվել: Արտահայտելով իր կարծիքը, Մակարենկոն գտնում էր, որ հաղորդակցութ-

[438] Տե՛ս նույն տեղում, ф. 1, оп. 2, д. 12, л. 11:
[439] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1818, g. 2, գ. 12, թ. 39:
[440] Տե՛ս նույն տեղում, թ. 40:
[441] Документы и материалы..., с. 36.
[442] Տե՛ս նույն տեղում, էջ 36-37:
[443] Տե՛ս նույն տեղում, էջ 37-40:

յան ուղիներում տիրող անարխիայի պատճառով, փետրվարի 1–ի (13) ժամկետը անիրականանալի է[444]:

Այսպիսով, Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասային կենտրոնի և Կովկասյան բանակի հրամանատարության հետ համատեղ, հավանություն տալով Էնվեր և Վեհիբ փաշաների կողմից բարձրացված հաշտության առաջարկին, եզրափակեցին հետհոկտեմբերյան վայրիվերումների փուլը, Թուրքիայի հետ մերձենալով՝ գործով ապացուցեցին, որ երկրամասը Ռուսաստանի մաս չէ այլևս, իսկ Սահմանադիր ժողովի ցրումից հետո օբյեկտիվորեն վերածվեցին դաշնակիցների:

«Ռուսներին չեն սիրում վրացիք, թուրքերը, դաղստանցիք, լեհերը,– 1917 թ. գրում էր Ավ. Իսահակյանը,– միայն մենք, և դա մեր թշվառության պատճառը եղավ, մեր դժբախտության պատճառը: Մեր սիրո համար սկսեցին մեզ ատել և վնասել ռուսատյացները, մեր քաղաքականությունը հակառակ եղավ նրանց քաղաքականությանը»[445]:

Ժամանակի օրհասական վտանգի տագնապն ենք կարդում Բաքվից՝ Զապել Եսայանի կողմից (դեկտեմբերի 8-ին) Արշակ Չոպանյանին ուղղված նամակում. «Թերեւս մինչև իմ նամակի տեղ հասնելը, դաշնակիցները պաշտոնապես խզած ըլլան Ռուսիայի հետ և մենք անգամ մը ևս գտնվինք թշնամի երկրի մէջ: Հաղորդակցութիւնը Կովկասի և Ռուսաստանի հետ խզված է արդեն: Կովկասը մինչև այժմ աւելի հանդարտ է և ապահով մեկ օրէն մյուսը ամեն ինչ կարող է փոխուել. ուղղակի հրաբուխի վրա ենք. այսպիսի դրութեան մէջ մեր հայ ժողովրդի, մասնավորապես, թրքահայ ժողովրդի վիճակը այնքան ճգնաժամային է, որ մարդ կկորսնցնէ իր անհատական անապահուութեան զգացումը: Թերեւս այդ է պատճառը, որ ես շատ պաղարյուն եմ և հակառակ մեր հավաքական անել դրութեան հույսս չեմ կորսնցուցած, որ որեւէ անսպասելի բանով մը պիտի փրկվենք»[446]:

Ռազմա-քաղաքական սրընթաց գործընթացների զավեշտը և հակասությունն այն է, որ Թուրքիայի հետ մերձեցումը ընթանում էր Գերմանիայի հետ ժողկոմխորհի սկսած անջատ բանակցությունների համատեքստում: Փաստորեն, Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասում և Կովկասյան ռազմաճակատում որդեգրելով բոլշևիկյան կառավարության ռազմավարությունը, ևս մի անջատ դաշինքի էր գնում այդ նույն Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հետ, բայց ոչ թե Գերմանիայի նման

[444] Տե՛ս նույն տեղում էջ 40:
[445] Ավետիք Իսահակյան, Հայկական հարց, Երևան, 2005, էջ 76:
[446] Տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), 1-ին բաժին, Ար. Չոպանյանի, ֆ., թղթ. 1777:

բոլշևիկներին երաշխիքներ տալու, այլ վերջինիս իշխանությունը չճանաչելու ճանապարհով:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի կառավարության գործունեության առանձին ոլորտ է ընդգրկում նրա ռազմա-քաղաքական և դիվանագիտական բնագավառը:

Կոմիսարիատի արտաքին հարաբերությունների նախարարության գծով կոմիսարության գործունեությունը սևեռվել էր երկու գերակա ուղղությունների՝ Իրանի և հակախորհրդային պետական կազմավորումների վրա, որոնց հետ ձևավորվող հարաբերությունների տրամաբանությունը մեկ գլխավոր նպատակ էր հետապնդում՝ դրանց աջակցությամբ ամրապնդել հակաբոլշևիկյան ճամբարը, այդպիսով ամրացնել նաև Կոմիսարիատի իշխանությունը:

1917 թ. նոյեմբերից Կոմիսարիատը ներգրավվեց Հարավ-Արևելյան միության հետ բանակցությունների ասպարեզը:

2.5. ՎՐԱՑ – ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ (1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1918 Թ. ՄԱՐՏ)

1917 թ. նոյեմբերի վերջից Կովկասյան ռազմաճակատի ռուսական զորամասերի զանգվածային նահանջի պայմաններում՝ այդ զորամասերը հանդիպեցին հետևողական ու նպատակային խոչընդոտների, մի կողմից՝ Անդրկովկասյան կոմիսարիատի վրաց-թաթարական ղեկավար մեծամասնության, զ. բ. պատգամավորների խորհրդի երկրամասային հակաբոլշևիկյան կենտրոնի, իսկ մյուս կողմից՝ Մուսավաթի գլխավորությամբ ղեկավարվող Մահմեդական ազգային կոմիտեի հակառուսական գործողությունների հետևանքով: Այդ զորամասերը փոխադրող էշելոնները կանգնեցվում էին Անդրկովկասյան երկաթուղու Բաքու-Թիֆլիս տեղամասի գլխավոր հանգույցներում, արձանագրվում էին զենքի բռնագրավման և զինվորների զանգվածային կոտորածների փաստեր:

Եթե թուրքական հրամանատարության գործակալները, մահմեդական խռովությունների սանձազերծմամբ հետապնդում էին ռուսական, նաև թիկունքային ու նահանջող զորամասերի լիակատար կազմալուծման միջոցով՝ նոր լայնամասշտաբ արշավանքի կազմակերպումը, ապա Կոմիսարիատն ու երկրամասային հեղափոխական կազմակերպությունը այդ ճանապարհով աշխատում էին կանխել Բաքվի խորհրդի ու բոլշևի-

կացած զորամասերի համաձայնեցված գործողություններով իրականացվող իշխանության գրավման ծրագիրը:

Կովկասի թաթար-մահմեդականների ազգային ինքնագիտակցության առաջացման վճռական շրջադարձը սկսվել էր Փետրվարյան հեղափոխությամբ: «Բալթիկի ափերից մինչև Արաքս և Դրիմից մինչև հեռաւոր Սիբիր տարածուող մոտ 20 միլիոնանոց մահմեդականութիւնը սկսում է շարժել»,- գրում էր 1918 թ. առաջին համարում «Հորիզոնը»[447]: Ստեղծվում է կուսակցությունների ու կազմակերպությունների համակարգող՝ Մահմեդական հասարակական կազմակերպությունների խորհուրդը՝ Ա. Թոփչիբաշևի և Մ. Հաջինսկիի գլխավորությամբ[448]: Թաթարական ազգայնականության տակ սկզբնական փուլում հասկացվում էր թյուրքիզմը, պանիսլամիզմը: Գաղափարական այդ հենքն էին կրում Մուսավաթը (Հավասարություն), Ապակենտրոնացման թյուրքական կուսակցությունը՝ ֆեդերալիստներ և Անկախ դեմոկրատների խումբը (Ա. Թոփչիբաշև, Ֆ. Խան-Խոյսկի):

Սոցիալիստական-բոլշևիկամետ հոսանքը ներկայացնում էին Ն. Նարիմանովի գլխավորած «Հումմեթը» (Եռանդ) և Պարսկաստանից ներգաղթած գործիչների (Ա. Դաֆարզադե, Բ. Աղազադե) հիմնած «Ադալաթ» կուսակցությունները: Հոգևորական-կալվածատիրական խավերը ներկայացնում էր 1917 թ. սեպտեմբերին Բաքվի «Մահմեդականները Ռուսաստանում» և Ելիզավետպոլի «Իսլամի միություն» կազմակերպությունների միաձուլմամբ ստեղծված՝ Ռուսաստանի մահմեդականների «Իթթիհադ» (Միություն) կուսակցությունը, որը մերժում էր թյուրքիզմը, չէր ընդունում ադրբեջանականության գաղափարը: Կովկասի թաթարների ազգային շարժման՝ այլ խոսքով երկրամասի պանթյուրքիզմի կետրոնն իրավամբ պետք է համարել Ելիզավետպոլը (Գանձակ), որտեղ իշխանությունն ամբողջությամբ գտնվում էր մահմեդական կազմակերպությունների ձեռքին: Այստեղ Փետրվարյան հեղափոխությունից հետո կազմակերպվեց ֆեդերալիստների կուսակցությունը՝ Ն.-բ. Ուսուբբեկովի ղեկավարությամբ: Նրանք առաջինն էին թերևս, որ կուսակցության ծրագրում հիշատակում էին «Ադրբեջան» բառը[449]: Այդ իմաստով ամենապաստավոր օջախը դիտվում էր Ելիզավետպոլի նահանգը և նրա թաթարական բնակչության դժգոհությունը, որտեղից լայնորեն տարածվեց այդ շարժման ալիքը: Նախ՝ Ելիզավետպոլի ողջ նահանգը տարվեց զինվելու

[447] Տե՛ս Հորիզոն, 1918, 3 հունվարի, թիվ 1:
[448] Տե՛ս А. Балаев, Азербайджанское национально-демократическое движеие в 1917-1920 гг., Баку, 1980, с. 5:
[449] Տե՛ս Դ. Կնյազյան, Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008, էջ 7-9:

տենդով, ինչը սկսվել էր դեռ 1917 թ. ամռանից: Ազգային զորամասերի ձևավորման առաջնային փուլում արդեն տեղ էին գտնում բազմաթիվ զինված ընդհարումներ՝ մի կողմից՝ մահմեդականների, մյուս կողմից՝ ռուսական և հայկական զորամասերի միջև: Ավազակությունները, տարաբնույթ հարձակումները, թալանն ու բռնությունները Ելիզավետպոլի նահանգում սկզբում բացահայտ ազգային նկարագիր չէին կրում և խորացող ազգամիջյան հարաբերությունները դեռևս զարգանում էին փոխադարձ անվստահության և օտարացման մթնոլորտում: Առանձնանում էր Նուխիի շրջանը, որտեղ սկզբում հակառուսական, ապա և հակահայկական շարժումները, բռնությունները 1917 թ. աշնանը վերածվեցին ջարդերի: Արդյունքում ռուսական բնակչությունն ամբողջությամբ հեռացավ Հյուսիսային Կովկաս:

1917 թ. նոյեմբերի 18-ին (դեկտեմբերի 1) Ելիզավետպոլում առաջին անգամ բռնկվեցին խոշոր անկարգություններ: Մինչ այդ ևս, նկատվել էին առանձին խժդժություններ և բռնության փաստեր, որոնք բացատրվում էին Թիֆլիսի ազգամիջյան ռազմական խորհրդի որոշումներով, ըստ որի երկաթուղային կայարաններում տեղակայված ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը պետք է անցներ մահմեդական զորամասերի ձեռքը[450]:

Նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 10) Կոմիսարիատը հատուկ քննարկման առարկա է դարձնում երկրամասային նոր իշխանության և Անդրկովկասի կենտրոնական մահմեդական կոմիտեի միջև փոխհարաբերությունների հաստատման հարցը: Զեկուցումով հանդես եկող կոմիտեի նախագահ Ա.-բ. Թոփչիբաշևը պահանջում էր՝ մահմեդականներին հնարավորություն տալ ձևավորելու ազգային զորամասեր: Այս նիստում է որոշվում նաև ազգայնացնել 219-րդ հետևակային, պահեստային գունդը, այն չարաբաստիկ գունդը, որի գործողություններն ավելի ուշ հրամցվում էր որպես Ելիզավետպոլի իրադարձությունների պատճառ:

Թաթար գործիչների ելույթներից հետո, որոնք բոլորն էլ ընդգծում էին մահմեդականների կյանքում Իսլամի վճռորոշ դերը, Ե. Գեգեչկորին հավաստիացնում էր, որ երկրամասի բնակչության սոցիալական բնույթի հարցերի քննարկումները միշտ կանցնեն Մահմեդական կոմիտեի հետ միասին ու համաձայնեցված[451]: Ավելի ուշ, դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11) Ա. Չխենկելին Կոմիսարիատի նիստում շահագրգռված կերպով հայտնում էր, որ մահմեդական կազմակերպությունները բողոքում են, որ հայկական զորամասերը մտել են Կարսի ամրոցը, բացա-

[450] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 21:
[451] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 44.

դժգոհ են այդ փաստից և ամեն գնով պայքարելու են, որպեսզի հայերը չամրանան Կարսում[452]:

Սկզբում մահմեդական մտավորականները կարողանում են կանխել և տեղայնացնել Ելիզավետպոլի մեծ աղետը, սակայն հետագայում, երբ դրանք հետևողական ու համակարգված բնույթ են ստանում, բռնությունների ալիքը այլևս հնարավոր չի լինում կանգնեցնել: «Ավազակային բանդաները թալանել են Ելիզավետպոլի հարևան բնակավայրերը,- գրում էր «Каспий» թերթը,- Ելիզավետպոլից մինչև Եվլախ բոլոր կայարանները թալանված են: Ելիզավետպոլում ջախջախված են զորանոցները, պարենային խանութները, պահեստները: «Վայրենի դիվիզիան», որը տեղակայված է Ելիզավետպոլում, ոչ մի միջոց չի ձեռնարկել թալանն ու ավազակությունները կանխելու ուղղությամբ»[453]: Դեկտեմբերի 19-ին (հունվարի) Գանձակից հեռախոսով Թիֆլիս էին հայտնում. «Ժամը 13[00]-ին կայարանը շրջապատեց 10.000 թուրքերից կազմված մի բանակ. երկաթուղային 7-րդ վաշտը ցրվել է, կան շատ սպանվածներ ու վիրավորներ, զինվորներ, երկաթուղու ծառայողներ, թալանված է պարենավորման պահեստը: Գանձակի և Շամխորի միջև երկաթուղագիծը քանդված է: Թիվ 22 գնացքի բոլոր արժեքավոր ապրանքները հափշտակված են, շուկայի խանութներն ու մասնավոր բնակարանները թալանված և այժմ այրվում են՝ սպառնալով պետական շենքերին: *Հաջորդ օրն եկավ վրացական գնդի մի էշելոն, 93 հոգի, որոնցից միայն 35-ը հրացան ունեին.* Գանձակում սկսվել է սով, որին հետևելու են ջարդեր և խռովություններ»[454]:

«Սա արդէն աւազակութիւն չէ,- գրում էր «Յորիզոնի» խմբագրականը,- ոչ էլ աւերիչ բնազդներով օժտուած ու սանձարձակ խուժանի տարերային մի շարժում: Այստեղ երեւում է կազմակերպած մի ծրագիր: Գերմանիայի միլիտարիստական իմպերալիզմի իդէոլոգ Բերհարդն իր հանրածանոթ գրքի մէջ ասում է, որ թշնամուն հաղթելու համար անհրաժեշտ է նախ և առաջ կազմալուծել նրա թիկունքը՝ առաջ բերել ժողովրդական հուզումներ, քանդել կամուրջներ, երկաթուղիներ: Բնաւ տարօրինակ չէ, ուրէմն և այն ենթադրութիւնը, որ տաճիկ գործակալները աշխատում են պղտորել դյուրավառ մասսայի մտքերը եւ խրախուսելով աւազակային շարժումները՝ դրանք ծառայեցնել իրենց օգտին»[455]: Հաջորդ օրը, Բաքվի բ. զ. պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի և ռազմա-հեղափոխական կոմիտեի համատեղ խորհրդակցությունը, կուսակցությունների ներկայացուցիչները քննարկում են Ելիզավետպոլի դեպքերը: Չնայած, որ Թիֆլիսից հաղորդվում էր, թե դրանք թալանի

[452] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 141, л. 304.
[453] Տե՛ս С. Беленький и А. Манвелов, նշված աշխատությունը, էջ 234:
[454] Տե՛ս Յորիզոն, 1917, 22 դեկտեմբերի, թիվ 269:
[455] Տե՛ս նույն տեղում, 24 դեկտեմբերի, թիվ 271:

նպատակով կազմակերպված ավազակային հարձակումներ են, սակայն խորհրդակցությունը փաստում է վերջինիս ազգամիջյան բախման բնույթը[456]: Իր հերթին, Բաքվի ռազմա-հեղափոխական կոմիտեն, լսելով երկրամասային կենտրոնի հաղորդագրությունը՝ մինչև Ելիզավետպոլ կայարանը երկաթուղու պաշտպանության վերաբերյալ, ինչպես նաև զինվորների հաղորդումները դեկտեմբերի 19-ի (հունվարի 2) իրողությունների մասին, որոշում է ուժեղացնել Բալաջարի կայարանի պաշտպանությունը, զենք հատկացնել ռազմա-ժողովրդական պահակազորին, ինչպես նաև կազմակերպել պատգամավորական գնացք՝ կազմված կուսակցությունների ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, որը զինված ջոկատի հսկողությամբ կվերահսկեր Բաքվից-Ելիզավետպոլ ճանապարհը: Դեկտեմբերի 21-ին (հունվարի 3) Բաքվում ձևավորվում է Կարմիր գվարդիան, վերակազմավորվում է միլիցիան, ուժեղացվում է կայազորը, պատճառը՝ Ելիզավետպոլի ընդհարումներն էին[457]:

Դեկտեմբերի 22-ին (հունվարի 4) Անդրկովկասյան կոմիսարիատի նիստում Ե. Գեգեչկորին առաջարկում է կազմակերպել Կոմիսարիատի հատուկ պատվիրակություն, որի կազմում բացի մահմեդական-թաթար անդամներից առաջարկվում էր ներգրավել «չեզոք» դեմք: Այդ մասին Ելիզավետպոլից հեռագրով հայտնում էին նահանգային կոմիսար Ա. Զիաթխանովը, փոխքաղաքագլուխը և երկրամասային պատվիրակության նախագահը: Որոշվում է չեզոք ներկայացուցիչ հաստատել Ա. Չխենկելիին[458]: Դա չէր բխում վերջինիս զբաղեցրած ներքին գործերի կոմիսարի պաշտոնից, թեև այդ քայլով ևս մեկ անգամ ընդգծվում էր իրադարձությունների քրեական և ոչ թե ազգամիջյան բախումների վտանգավոր իրողությունը: Ամենևին պատահական չէր, որ մի քանի օր անց ռազմա-ծովային կոմիսարի պաշտոնում Դ. Դոնսկոյին փոխարինում է ևս մի վրացի՝ Վ. Գոբեչիան: Մահմեդական-թաթարական, բեկական վերնախավը, ինչպես և Կոմիսարիատի թաթար պաշտոնյաները գործնականում այսպես փորձում էին իրականացնել նախ հայկական տարրի թուլացման, ոչնչացման, ապա նաև Բաքվի խորհրդային իշխանության դեմ ակտիվացող վրաց-թաթարական համագործակցությունը: Որոշվում է, որ Անդրկովկասի կոմիսարիատի բոլոր իրավունքները կրող պատվիրակության կազմում պետք է ներգրավվեին հիմնականում մամեդական կոմիսարներ՝ Մ. Զաֆարովը, Խ.-բ. Խաս-Մամեդովը, Ֆ.-խ. Խան-Խոյսկին, վրացիներից՝ Վ. Գոբեչիան և Ա. Չխենկելին: Պատվիրակության հետ Ելիզավետպոլ պետք է ուղարկվեր գեներալ Շիխլինսկին, որին տրամաղրը-

[456] Տե՛ս С. Беленький и А. Манвелов, նշված աշխատությունը, էջ 235:
[457] Տե՛ս նույն տեղում, էջ 236-237:
[458] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 141, л. 292.

վում էր 1000 հրացան, և որի հատկացման համար Դ. Դոնսկոյից պահանջվում էր իրականացնել բոլոր հնարավոր միջոցները: Քաղաքական զարգացումների և դրանց հակահայկական ուղղվածության առումով խորհրդանշական է նաև այն փաստը, որ նույն նիստում՝ Դ. Դոնսկոյի զեկուցման հիման վրա, ընդունվում է դեկրետ՝ «Մահմեդական կորպուսի ստեղծման մասին»: Կորպուսի հրամանատար է նշանակվում նույն Շիխլինսկին[459]: Հատկանշական է, որ ժամանակավոր կառավարության կողմից հետևողականորեն ձգձգվող գործընթացը, երբ հայկական և վրացական ազգային զորամասերին զուգահեռ՝ չէր խրախուսվում մահմեդական գնդերի ձևավորումը, իրականություն դարձավ բոլշևիկյան հեղաշրջումից հետո, չնայած այն հանգամանքին, որ մահմեդական ազգային զորամասերի գլխավոր թիրախը հենց բոլշևիկյան Բաքուն էր և Կովկասյան բանակի նահանջող բոլշևիկացած զորամասերը:

Կոմիսարիատը Ելիզավետպոլում տեղակայված բոլոր զորամասերին հրամայում էր մինչև պատվիրակության ժամանումը մնալ տեղում[460]: Ելիզավետպոլում պատվիրակությունը հանդիպեց թաթարական «վայրենի դիվիզիայի» պետ, ազգությամբ վրացի գնդապետ իշխան Լևան Մաղալովին և մահմեդականների այլ ներկայացուցիչների, որոնք համատեղ ժողով անցկացրին: Լ. Մաղալովը հայտարարեց, որ եթե «մահմեդականները համոզված լինեին բանակի խաղաղ անցման հարցում, ապա նրանց կթողնեին զինված շարունակել ճանապարհը»[461]: Ա.-բ. Սաֆիքյուրդսկին ավելի անկեղծ էր իր արտահայտություններում: Նա ներկաներին հիշեցնում էր, որ պատերազմի ողջ ընթացքում ռուսական բանակը ծաղրում էր մահմեդականներին՝ «հաճախ կրակելով մահմեդականների փափախներին»[462]: Սպանդը և զենքի հափշտակումը թաթար ղեկավարները հիմնավորում էին հետևյալ կերպ. քանի որ մահմեդականներն իրավունք են ստացել ունենալ իրենց բանակը՝ Մահմեդական կորպուսը, ուստի և, նրանք պետք է և զենք ունենան: «Մահմեդականները մեղավոր չեն,- ասում էր Ա.-բ. Սաֆիքյուրդսկին,- որ ստիպված բռնի կերպով են հայթայթում զենքը, քանի որ Կոմիսարիատը չի իրականացնում իր պարտականությունները: Այն ժամանակ, երբ մեր փոքր եղբայրները՝ հայերն ու վրացիները զինված են, ավագ եղբայրը՝ անդրկովկասյան մահմեդականները զենք չունեն»[463]: Ավանդական, փորձված թուրքական շանտաժը՝ ի դեմս Ա.-բ. Սաֆիքյուրդսկիի, տվյալ դեպքում լիովին բացահայտում

[459] Տե՛ս նույն տեղում:
[460] Տե՛ս նույն տեղում:
[461] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 28, թ. 9:
[462] Նույն տեղում:
[463] Նույն տեղում:

էր Անդրկովկասյան կոմիսարիատի ուղղակի մեղսակցությունը և որ ավելի կարևոր է՝ երկդիմի ու վտանգավոր քաղաքականությունը: Վերջինս հոխորտում էր, թե թաթարները լիովին իրավունք ունեն զինաթափել էշելոնները, քանի որ ունեն Ն. Ժորդանիայի ստորագրությունը կրող երկրամասային կենտրոնի հեռագիրը, որն «առաջարկում էր Մահմեդական կորպուսի սպառազինման նպատակով օգտվել անցնող և զինաթափվող էշելոնների զենքից»[464]: Նորահայտ փաստաթուղթը մանրամասնում է մինչև այսօր անհայտ դրվագներ և պարզում ոչ միայն Կոմիսարիատի, այլև վերակազմավորված բ.զ.պ. խորհրդի երկրամասային կենտրոնի հանցավոր վարքագիծը, որին տեղյակ չէր անգամ Ելիզավետպոլի պատվիրակության անդամ, կապիտան Ստրելկովսկին: Արդարացի համարելով Մահմեդական կորպուսի սպառազինման երևույթը, նա, որպես զենքի բաշխման հանձնաժողովի նախագահ, իր պատրաստակամությունն էր հայտնում, որպեսզի կորպուսը զենք ստանա: Միաժամանակ չէր համաձայնվում էշելոնների զինաթափման փաստի հետ, քանի որ Կոմիսարիատի կողմից Ելիզավետպոլ էր ուղարկվել՝ դրանց ազատ անցումն ապահովելու նպատակով: «Եթե կա այդպիսի հեռագիր,- զայրանում էր Ստրելկովսկին,- ապա ես Կոմիսարիատի գործողությունները կանվանեմ ստորություն», քանի որ իրեն տալով հանձնարարականներ, Կոմիսարիատը պարտավոր էր իր պաշտոնային տեղյակ պահել այդ որոշման մասին: Ինչևէ, նա մահմեդականների կորպուսին խոստանում էր հրետանային մարտկոց և եթե Կոմիսարիատը չհամաձայնվեր, ապա նա նույնիսկ պատրաստ էր հրաժարականի: Ոգևորված Մ.-բ. Ռուստամբեկովն* էլ, օգտվելով նման վերաբերմունքից, ավելացնում էր, թե մահմեդականները պատրաստ են զիջումների գնալ, ռուս զինվորներին թողնելով հրացանների կեսը, վերցնելով մյուս կեսը, ինչպես նաև ողջ հրետանին և գնդացիրները[465]: Զինվոր – ներկայացուցիչները, ի պատասխան զինաթափման պահանջի, բացառեցին դա, քանի որ վստահ չէին իրենց անվտանգության հարցում: Ընդգծվեց նաև, որ երեքօրյա մարտերը զայրացրել էին էշելոնների զինվորներին և նրանք առանց կռվի չեն հանձնվի և զենք չեն տա[466]:

1918 թ. հունվարի 19-ին (փետրվարի 1) բ.զ.պ. խորհուրդների երկրամասային կենտրոնի միացյալ նիստում էշելոնների զինաթափման հե-

[464] Նույն տեղում:
* Մուստաֆա-բեկ-Ռուստամբեկով – Նուխիի, Արեշի և այլ հայաբնակ շրջանների 1918-1920 թթ. հայկական կոտորածների գլխավոր կազմակերպիչներից մեկը:
[465] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 28, թ. 9:
[466] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. Երևան, 2003, էջ 15:

ռագրի վերաբերյալ բացատրություններ տվեց Ն. Ժորդանիան: Նա նշում էր, որ «էշելոնների կողմից զենքը թողնելու վերաբերյալ» երկրամասային կենտրոնի որոշումը հաղորդվել էր սովորական հասցեով՝ բոլոր բ. և զ. խորհուրդներին: Ելիզավետպոլը նոր ցուցակում չէր հիշատակվում, քանի որ դեկտեմբերից այնտեղ չէր գործում խորհուրդը, բայց սխալմամբ, ըստ հին ցուցակի, շրջաբերական հեռագիրը հասել էր նաև այնտեղ: Տեղի մահմեդական կոմիտեն, որը ոչ մի շփում չուներ երկրամասային կենտրոնի հետ, «հանկարծ ստանալով վերջինիս հեռագիրը այնքան զարմացավ, որ անհապաղ, դեռ մինչև էշելոնների հետ կապված պատմությունը՝ հարցում արեց Հաղորդակցության ուղիների կոմիսար Խ.-բ. Մելիք-Ասլանովին և ստանալով պատասխան, որ հեռագիրը հավանաբար սխալմամբ է հայտնվել մահմեդական ազգային կոմիտեում, այդ բացատրությունը հաղորդեց Ելիզավետպոլ: Օգտվելով հեռագրից, մահմեդական կոմիտեն իրականացրեց հանցագործություն, որի համար պատասխան կտա: Մինչ հեռագրական կապի ընդհատումը երկրամասային կենտրոնի նախագահությունը անընդմեջ բանակցություններ էր վարում Աբխազավայի, մահմեդական կորպուսի պետ Մաղալովի, Բաքվի խորհրդի և էշելոնների ղեկավարության հետ՝ տալով զինաթափում չիրականացնելու հրամաններ: Մաղալովն ու Աբխազավան գործել են ինքնակամ»[467]: Եթե անգամ փորձենք հավատալ Ն. Ժորդանիային, ապա հարց է առաջանում, թե հետագա՝ Շամխորի, Հաջիկաբուլի և մյուս կայարաններում իրականացված արյունոտ ոճիրը ինչո՞ւ չկանխվեց, մի՞թե դարձյալ սխալ հեռագիր էր ուղարկվել:

«Кавказское Слово» թերթն այս առթիվ նշում էր. «հեղինակավոր աղբյուրները մեզ հայտնել են, որ էշելոնների զինաթափման որոշումը կայացվել է երկրամասային կենտրոնի կողմից, որը ռազմածովային նախարարության գծով կոմիսար Վ. Գոբեչիային հանձնարարել էր այն ի կատար ածել: Այդ նպատակով կոմիսարը հրավիրել էր ազգամիջյան զինվորական խորհուրդ, որի նիստին ներկա են եղել Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարը և ռազմական օկրուգի պետը»[468]: Թերթը Աբխազավայի գործողությունները ևս որակում էր ինքնակամ և բացահայտում, որ Շամխոր ժամանած 4 էշելոնների զինվորները հանրահավաք են կազմակերպել և որոշել չենթարկվել զինաթափման հրամանին, վնասազերծել երկրամասային կենտրոնի զրահագնացքը, իսկ Աբխազավային՝ գնդակահարել: Տեղեկանալով որոշման մասին, շտաբ ռոտմիստր Աբխազավան իրականացնում է երկաթգծի մի հատվածի

[467] Н.Н. Жордания, За два года, նույն տեղում, էջ 61-62:
[468] Кавказское Слово, 1918, 19 ноября, N 14.

կազմաքանդումը և անհետանում: Դրանից հետո նա դիմում է թաթարական գնդի հրամանատար Լ. Մաղալովի օգնությանը: Անհասկանալի է թերթի հաղորդագրության այն հատվածքը, ըստ որի, երբ Թիֆլիսում ստացվում է էշելոնների զինաթափման մասին լուրը, կոմիսար Վ. Գոբեչիան և ռազմական օկրուգի պետը շտապ հրաման են ուղարկում ադեն սպանված Աբխազավային, հետո էլ Մաղալովին՝ գործընթացը դադարեցնելու վերաբերյալ: Այլ խոսքով, թերթը փորձում էր ամեն գնով պաշտպանել ազգամիջյան զինվորական խորհրդին, նրա վրացական ղեկավարությանը և ամփոփում էր. թե «ահա այսպիսին է իրադարձությունների իրական ընթացքը»[469]:

Դեկտեմբերի 29-ին (հունվարի 11) Կոմիսարիատը լսում է արտակարգ լիազորություններով օժտված Ա. Չխենկելիի զեկուցումը ելիզավետպոլյան իրադարձությունների մասին: Նա «անկարգությունների» պատճառ և սկիզբ համարում էր 219-րդ պահեստային գնդի զինաթափումը: Պարզվում է, որ այդ զինաթափումն իսկապես իրականացվել էր Թիֆլիսից ստացված «հակասական հրամանների» պարագայում, երբ չգիտես ինչու այդ զինաթափումը սկսում են իրականացնել հարևան գյուղերից կայարան ներխուժած զինված թաթարական ջոկատները: Ա. Չխենկելին, ինչպես և սպասվում էր, հերթական անգամ ժխտում էր իրադարձությունների ազգային ենթաշերտը, չնայած որ միանգամայն ակնհայտ էր վայրագությունների առայժմ հակառուսական ուղղվածությունը: «Չեզոք» նախագահ Ա. Չխենկելին զայրույթ էր հայտնում, որ «թաթարների նկատմամբ մի քանի ինքնադատաստան է իրականացվել» և դա այն դեպքում, երբ նահանգի գյուղերում բնաջնջվում էր ռուսական բնակչությունը: Նա եզրակացնում էր նաև, որ այդ իրադարձությունների մեջ պատվիրակությունը համակարգում չի նկատել և որ գլխավոր պատճառը «վայրագություններ իրականացնող էշելոնների» դեմ առաջացած վրեժն էր[470]: Ամբողջ հարցը նրանում էր, որ նահանջող զինվորների զայրույթը և անգամ անարխիկ ելույթները պատասխան էին Կոմիսարիատի վրացի և թաթար կոմիսարների իրականացրած առայժմ ոչ բացահայտ գործողություններին, որոնք իրենց գագաթնակետին հասան Շամխորի դեպքերի առթիվ: Մի կողմից, պատվիրակությունը հերքում էր ջարդերի ազգային բնույթը, մյուս կողմից, փաստում, որ ելիզավետպոլի քաղաքային դուման դիտողի դերում էր հայտնվել և քաղաքում իշխանությունն ամբողջովին անցել էր մահմեդական մասում՝ 3 հոգուց բաղկացած հեղափոխական կոմիտեին, իսկ հայկական մասում՝ 5 հոգուց կազմված քաղաքացիական կոմիտեին: Ա. Չխենկելին առաջարկում էր հետևանքները վերացնելու նպատակով ստեղծել Արտակարգ քննիչ հանձնաժողով, ամուր հեղափոխական իշխանություն, հասարակական անվտան-

[469] Նույն տեղում:
[470] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 141, л.л. 304-305.

գության կոմիտե և այլ միջոցառումների համակարգ: Կարծես իմիջայլոց, ձևավորվում է 300 թաթարներից բաղկացած «հատուկ միլիցիայի» զորաջոկատ՝ գեներալ Շիխլինսկիի վերահսկողության տակ[471]: Այլ խոսքով, հեղափոխական-դեմոկրատական կարգի ֆրազեոլոգիայի և ամբոխավարության քողի տակ հմտորեն թաքցվում էր բուն նպատակը, իրականությունը և ավելին՝ զուգահեռ իրականացվում էր Թիֆլիսից եկող Ն. Ժորդանիայի, Ն. Ռամիշվիլիի, Ե. Գեգեչկորիի և թաթար կոմիսարների հրահանգը՝ ամեն գնով զինաթափել ռուսական զորամասերը, հափշտակել զենքն ու զինամթերքը, որը ոչ միայն լրացնելու էր վրացական ու թաթարական ազգային զորամասերի պահանջները, այլև գլխավորապես կանխելու էր Բաքվի աջակցության գործընթացը, ինչը առավելապես հայանպաստ մարտավարություն էր դիտվում: Այդ զինվորները բոլշևիկ էին թե ոչ, միևնույն է՝ նրանք վրացական և թաթարական գործիչների կողմից ընկալվում էին որպես Արևմտյան Հայաստանից նահանջող, թուրքերին հաղթած հայերի դաշնակիցներ, ուստի և նրանք չէին թաքցնում իրենց ոչ միայն քաղաքական, հակառուսական, այլև, առավելապես ազգային ատելությունը:

Ալ. Ստավրովսկին, «Անդրկովկասը հոկտեմբերից հետո» աշխատության մեջ, Կովկասի մահմեդականության շահերի արտահայտիչ «Մուսավաթ» կուսակցությունը որակում էր որպես խոշոր հողատերերի (խաներ, բեկեր, աղալարներ) ներկայացուցիչների կուսակցություն: Նրանց գլխավոր նպատակը ողջ Կովկասի մահմեդական գյուղացիության և բանվորության նկատմամբ գերիշխանության հաստատումն էր՝ պանթուրքիզմի գաղափարախոսության ներքո, խալիֆ-սուլթանի գլխավորությամբ[472]:

Անվանի գեներալ Ա. Կուլեբյակինը լրացնում էր, որ «Մուսավաթը» իր քաղաքական դրոշի վրա սոցիալիստական կարգախոսներ էր զետեղում այնքանով, որքանով դրանք կարող էին նպաստել Կովկասի այլ ազգերի միջավայրում հեղափոխության (Փետրվարյան – Վ. Մ.) բոլոր նվաճումները մահմեդականների համար կիրառելի դարձնելու գործին. Մուսավաթը հետևողականորեն ձգտում էր տարանջատել մահմեդականներին քրիստոնյաներից: Շամխորի դեպքերից հետո մասնավորապես, երբ թուրքերը հունվարի 30-ին, խախտելով զինադադարը, վերսկսեցին հարձակումը, թաթարները դադարեցին թաքցնել նախկին զգուշավոր մարտավարությունը և իրենց ուժերը լարեցին մեկ նպատակի հասնելու համար, այն է՝ զինել անդրկովկասյան բոլոր մահմեդականներին և պայքար հայտարարել քրիստոնյաների դեմ[473]:

Խնդիրն ամբողջության մեջ պատկերացնելու, առավել ևս Շամխորի սպանդի պատճառները լուսաբանելու նպատակով, անհրաժեշտ է ներկայացնել երկրամասում, մասնավորապես Կովկասյան բանակի հետ առնչվող նոր զարգացումները:

Կովկասյան բանակի երկրամասային երկրորդ համագումարից հետո (Թիֆլիս, 1917 դեկտեմբերի 10-23) նորընտիր երկրամասային խորհուրդը, Ստ. Շահումյանի հեղինակությամբ, ընդունեց կոչ, որը վերաբերում էր ճակատից բանակի զորամասերի կազմակերպված ետ քաշվելու գործընթացին, այն հեռանկարով, որ կանխվի ռազմաճակատի լիակատար մերկացումը[474]: «Համադանի խումբը»՝ պարսկական ռազմաբեմի զորամասերը էնզելիով, Կասպից ծովով պետք է շարժվեր դեպի Պետրովսկ նավահանգիստը, իսկ ծովային տրանսպորտը չբավարարելու դեպքում՝ նաև Բաքվի վրայով: Ռազմաճակատի մնացած հատվածներից անցումը պետք է իրականացվեր Սարիղամիշի, Շահթախտի, Ջուլֆայի վրայով դեպի հյուսիս: Բանակի արժեքավոր տեխնիկան, գույքը պետք է պահպանվեր, հասցվեր Բաքում, Սարիղամիշ, Երևան և Բաքու: Պահպանելով իրենց անմիջական զենքը, զորամասերը պետք է տանեին նաև պահեստի զենքը, որպեսզի Նովոռոսիյսկում և Բաքվում հանձնեին բոլշևիկյան կենտրոններին: Այդ նպատակով խորհուրդ էր տրվում գրավել ողջ կովկասյան եկաթուղին և շարժվել իրարից ոչ մեծ տարածությունների վրա: Սպասվում էին, իհարկե, նաև էշելոնների վրա հարձակման դեպքեր: Պարտություն կրելով բանակային երկրորդ համագումարում, էսեռներն ու մենշևիկները ձեռնամուխ եղան չեղյալ հայտարարելու համագումարի բոլշևիկյան որոշումները և երկրամասային խորհրդում մեծամասնությունը վերականգնելու գործին: Նրանց ջանքերով, օրինակ, ո՛չ Ստ. Շահումյանի վերոհիշյալ կոչում, ո՛չ էլ որևէ այլ փաստաթղթում չէր հիշատակվում ժողկոմխորհին պաշտպանելու մասին: Գլխավոր մտահոգությունն իշխանության հարցն էր:

Ասվածը լիարժեք կերպով հիմնավորում էր Ե. Գեգեչկորիի խոսքը՝ արտասանված երկրամասային կենտրոնի միացյալ նիստում, 1918 թ. հունվարի վերջին. «Եթե դուք, բոլշևիկներ, զինված ոյժ եք բերում Սարիղամիշից, որ մեր դեմ պատերազմ մղեք, այն ժամանակ մենք չենք կարող ընդհանուր լեզու ունենալ»[475]: Հասկանալի է, որ նույն դիրքորոշումն

[471] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 141, л. 304-305:
[472] Տե՛ս Ал. Ставровский, Закавказье после октября, Москва-Ленинград,1925, с. 7:

[473] Տե՛ս Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 16:
[474] Տե՛ս Ստ. Շահումյան, ԵԼԺ, էջ 77-81:
[475] Հորիզոն, 1918, 24 հունվարի, թիվ 16:

ունեին նաև նիստի մասնակից մյուս վրացի մենշևիկները, մասնավորապես Ն. Ժորդանիան, Վ. Ջուղելին և այլոք: «Բանակի համագումարը մեծ ոճիր գործեց, որ որոշեց զենքը թողնել զօրքի ձեռքին,- գտնում էր Ջուղելին,- պէտք է փրկել դրութիւնը, քանի ուշ չէ»[476]:

Բավական արդիական ու մտահոգիչ էին հնչում Մուսավաթի ներկայացուցչի խոսքերը. «Ամենքդ էլ ինտերնացիոնալի անունից եք խօսում, այն ինչ Ռուսաստանում չկայ և չի լինի ինտերնացիոնալիզմ»: Հեռացող դաշնակից՝ այժմ բոլշևիկ ռուս զինվորներին՝ ազգային զորամասերը զինելու նպատակով զինաթափելու և դրա դեմ խորհրդանշական վիճաբանությամբ հանդես են գալիս նաև հայազգի զեկուցողներ՝ բոլշևիկ Ջարգարյանը և դաշնակցական Մ. Արզումանյանը[477]:

Այլ կերպ ասած, քաղաքական պայքարի, իսկ հայերի պարագայում՝ Հայրենիքի պաշտպանության համար զենք էր հարկավոր և Կռիլովի հայտնի առակի հերոսների նման, յուրաքանչյուր ազգային, քաղաքական ուժ իր կողմն էր ձգում սայլը՝ իր շահն առաջ տանում: Մահմեդական-թաթարներին ձեռնտու էր Գանձակի մոտ՝ գյուղացիական խռովությունների կենտրոնում զինաթափել ռուս զինվորներին՝ կալվածատեր-բեկերի դեմ ուղղված տարերային ընդվզումը ճնշելու, Բաքվի օտար խորհրդային իշխանության և հայ բնակչության դեմ պայքարելու համար, վրաց մենշևիկներին այդ նույն զենքն անհրաժեշտ էր առավելապես Թիֆլիսը խորհրդայնացման իրական հեռանկարից զերծ պահելու համար, Դաշնակցությունն էլ առաջնությունը տալով ստեղծված կացության անմիջական, երևացող կողմին, ռազմաճակատը պաշտպանելու նպատակով նպատակահարմար էր համարում զենքը առգրավել և դրանով զինել ազգային զորամասերը և այս արդարացված հարցում հակադրվում էր Ստ. Շահումյանի բոլշևիզմին: Ինչ վերաբերում է ռուս զինվորներին, ապա նրանք շտապում էին տուն, արդեն բոլշևիկյան Ռուսաստան: Ռուսաստանից անջատվելը, նոր իշխանությունը չճանաչելու հանգամանքը, Կոմիսարիատի փաստացի հակառուսական գործողությունները, Ելիզավետպոլի ու Շամխորի սպանդը պատասխան համարժեք արձագանք էին ստանում, ինչն էլ փորձում էր օգտագործել Ստ. Շահումյանը և բոլշևիկացած զորամասերի աջակցությամբ տապալել Կոմիսարիատի վրաց – մենշևիկյան իշխանությունը:

Դեկտեմբերի 27-ին (հունվարի 9) մենշևիկների նիստում լսվեց աջ էսեռ Դ. Մերխելովի զեկուցումը բանակի երկրամասային կենտրոնի պառակտման մասին և հավանություն տրվեց ամբողջ ապարատի և միջոցների բռնագրավմանը: Նշվեց, որ «իրենք թույլ չեն տա իշխանության բռնագրավում, որ երկրամասի քաղաքական կյանքի ընդհանուր ղեկավարությունը պետք է գտնվի երկրամասային կենտրոնի ձեռքում, իսկ բանակի խորհուրդը պետք է զբաղվի բացառապես նեղ - պրոֆեսիոնալ հարցերով»[478]: Հովանավորվելով մենշևիկյան կենտրոնի կողմից, դրանով կարծես թե ապահովելով օրինականությունը, բանակի երկրամասային խորհրդի փոքրամասնությունը, փաստորեն բոլշևիկյան մեթոդներով զավթեց խորհրդի կենտրոնական ապարատը և իրեն հռչակեց բանակային խորհուրդ՝ մենշևիկ Սմիռնովի նախագահությամբ: Այդ ուժերը համարձակ էին գործում, որովհետև բոլշևիկյան զորամասերը Թիֆլիսից նախապես հեռացվել էին: Նոր խորհրդի առաջնահերթ գործը դարձավ ռուսական զորամասերի զինաթափումը: Թեև դա հաղթանակ էր բոլշևիզմի նկատմամբ, սակայն տվյալ հիմնահարցի շուրջ և ստեղծված իրավիճակում ամենևին չէր բխում հայկական բնակչության և ազգային ուժերի շահերից, քանի որ հափշտակվող զենքն ու զինամթերքը բաժին էր հասնում գլխավորապես մահմեդական ու, ապա նաև վրացական զորամասերին: Զինաթափումն իրականացվում էր ազգային գնդերի մասնակցությամբ, մի բան, ինչը առանց այն էլ լարված ազգամիջյան հարաբերությունների պայմաններում, սադրիչ քաղաքականություն էր:

Ինչ վերաբերում է ռազմաճակատից հեռացող զորամասերը Թիֆլիսից հեռու պահելու մարտավարությանը, ապա դա ուղղակիորեն նպատակ ուներ կանխել Ստ. Շահումյանի ծրագրի իրականացումը, այն է՝ գրավել Թիֆլիսը, տապալել Կոմիսարիատի իշխանությունը և Դաշնակցության աջակցությամբ ամրապնդել հայկական տարրի ապահովությունն ու նաև Կովկասի խորհրդայնացման ճանապարհով՝ Հայկական հարցի լուծումը: Այս առանցքային հիմնահարցին մենք կանդրադառնանք առանձն, ավելի հանգամանալի:

Ազգամիջյան զինվորական խորհուրդը, որի իրավասության մեջ էր մտնում ազգային զորամասերի կազմակերպման և մատակարարման գործը, Ելիզավետպոլ ուղարկեց զրահապատ գնացք՝ ռազմաճակատից վերադարձող զինվորների զենքը բռնագրավելու և այն վրացական կորպուսին հանձնելու նպատակով: Քանի որ զինվորները հրաժարվեցին զինաթափվել, զրահագնացքի պարտիզանական ջոկատի վրացի հրամանատար, շտաբի կոմիսար Աբխազավան, հենվելով Թիֆլիսից ստացված հայտնի հեռագրի բովանդակության վրա, դիմեց մահմեդականների գնդին և մահմեդական բնակչությանը՝ աջակցություն ստանալու ակնկալիքով: Դա դարձավ էշելոնների վրա հարձակվելու ազդանշանը: Ձավեշ-

[476] Նույն տեղում:
[477] Տե՛ս նույն տեղում:

[478] Հ.Ա. Սեֆ, նշված աշխատությունը, էջ 359:

տալի է, բայց այդ վրացի հրամանատարը առաջիններից մեկը սպանվեց, երբ ուշացած փորձում էր կանխել հարձակումը[479]:

1918 թ. հունվարի 8-12-ին Ելիզավետպոլի և Շամխորի մոտ տեղի ունեցավ ռուս զինվորների զարհուրելի սպանդ, որին զոհ դարձան ու վիրավորվեցին մոտ 2000 անզեն զինվորներ: Գրավվեց 15.000 հրացան, 20 հրանոթ և 70 գնդացիր: Ողջ մնացած զինվորները փախան Բաքու: Հարձակումներ տեղի ունեցան նաև Աղստաֆա, Դոլլար, Ջուլֆա, Եվլախ, Խաչմաս, Ալաբաշլի և այլ կայարաններում: Ջարդերի անմիջական ղեկավարները մահմեդական ազգային կոմիտեի անդամներն էին՝ Ա. Ջիաթխանովը, Ա.-բ. Սաֆիքյուրդսկին, իշխան Լ. Մաղալովը, Մ.-բ. Ռուստամբեկովը (Խ.-բ. Խաս-Մամեդովի տեղակալը) և այլոք, որոնք (Խ.-բ. Ռաֆիբեկովը, Ն.-բ. Ուսուբբեկովը, Ա.-բ. Խաս-Մամեդովը (կոմիսարի եղբայրը – Վ.Մ.), գնդապետ էֆենդիևը, ռոտմիստր Ուլուբիևը) 1905-1907 թթ. հայկական կոտորածների ակտիվ մասնակիցներ էին նաև[480]:

Էշելոնի ներկայացուցիչ Չելովը վկայում էր. «Մենք ցանկանում էինք անցնել Բաթումով, քանի որ այնտեղ մեզ ոչ մի վտանգ չէր սպառնում, բայց Թիֆլիսում մեզ հավատացրին, որ մենք բարեհաջող կերպով կանցնենք նաև Ելիզավետպոլով, ուղեկցելու համար մեզ տալով զրահամեքենա, բայց մենք այդ զրահամեքանային չէինք վստահում (խոսքը Աբխազավայի զրահագնացքի մասին է - Վ. Մ.): Մեզ կարող էին ուղարկել այլ ճանապարհով, բայց չգիտես ինչու ուղարկեցին Ելիզավետպոլով: Ելիզավետպոլում ամեն բան նախապես կազմակերպված էր եղել: Այնտեղ վաղուց էին խոսակցություններ գնում էշելոնները զինաթափելու մասին: Հարկավոր է պատասխանատվության ենթարկել Անդրկովկասի կոմիսարիատին»[481]:

Կոմիսարիատի հունվարի 9-ի (22) նիստում նախագահ Ա. Չխենկելին առաջարկում էր փոխել օրակարգը և անհապաղ քննակել Ելիզավետպոլի, Աղստաֆայի դեպքերը: Տեղի է ունենում հիմնահարցի պատճառների և էության՝ նոր բովանդակության որոնումների ուղղությամբ կտրուկ շրջադարձ: Այդ համատեքստում, որքան էլ որ տարօրինակ է, սկսում է քննարկվել անդրկովկասյան իշխանության և դրա անկատարության խնդիրը:

Բանավեճը սկսում է Ե. Գեգեչկորին, հայտարարելով, որ «գործի (նկատի ունի Ելիզավետպոլի և մյուս կայարանների մահմեդական խռովությունները) – Վ.Մ.) անբավարար կազմակերպման գլխավոր պատճառը բազմիշխանությունն է»: Նրա կարծիքով, Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորումից հետո, երկրամասային իշխանության և այլ կազմակերպությունների միջև եղած հարաբերությունները մնացել են նույն վիճակում, ինչպես Օզակոմի ժամանակ էր: «Մեզ պաշտպանում էին ինչպես կպահեն կախվածի պարանը»,- գտնում էր Կոմիսարիատի նախագահը[482]:

Ռազմա-ծովային նախարարության գծով կոմիսար Վ. Գոբեչիան բացելով խաղաքարտերը նշում էր, որ մինչ Ազգամիջյան ռազմական խորհուրդը մրցում է երկրամասային խորհրդի հետ, միևնույն է իրադրության տերը Թիֆլիսի գործադիր կոմիտեն է[483]: «Իշխանությունների հավասարակշռություն չկա,- գտնում էր Ն. Ժորդանիան,- ստացվում է անարխիա և անիշխանություն: Պետք է վերանայել իշխանության կառուցվածքը: Ազգամիջյան ռազմական խորհուրդը վերածվում է երկրորդ կառավարության»[484]:

Հենց Շամխորի ջարդերի օրը վրացական մենշևիկների քառյակը խաղարկում էր կատարյալ ֆարս: Ն. Ժորդանիան քննադատում ու մեղադրում էր իրենց իսկ կողմից ստեղծված կառույցը, որն այդ պահին իրականացնում էր ռուս զինվորների զինաթափումն ու կոտորածը և որի նախագահն էր քառյակի երրորդ դեմքը՝ Ն. Ռամիշվիլին: Այս պարագայում առավել անկեղծ և իրական են հնչում Մ. Ջաֆարովի խոսքերը, որը պահանջում էր «расхлебовать кашу», որպեսզի իրենց իսկ ստեղծած իրավիճակից դուրս գան հանձնաժողովի երեք անդամները՝ Ն. Ռամիշվիլին, Վ. Գոբեչիան և Ա. Չխենկելին: Անգամ այն բանից հետո, երբ Ա. Չխենկելին փորձում է պաշտպանել հանցակից Ն. Ռամիշվիլիին, միևնույն է, ընդունվում է Մ. Ջաֆարովի և Խ.-բ. Մելիք-Ասլանովի առաջարկը[485]: Դա ուղղակի վկայությունն ու ապացույցն է այն բանի, որ նախ՝ թաթար կոմիսարները ընդունում էին, թե ինչպիսի ծուղակի մեջ են իրենք հայտնվել, ապա և այն, որ հնչում է ուղիղ և բացահայտ մեղադրանք Ելիզավետպոլի և Շամխորի դեպքերի մեղսակիցների՝ մենշևիկ առաջնորդների հասցեին: Ավելացնենք, որ նիստի սկզբում Ն. Ռամիշվիլին առաջարկում էր զինաթափել Ցարսկի Կալոդեցից շարժվող զորամասը և զենքը տրամադրել վրացական կորպուսին[486]:

---

[479] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 21:
[480] Տե՛ս Ստ. Շահումյան, նույն տեղում, էջ 113-114, նաև՝ Հորիզոն, 1918, 22 հունվարի, թիվ 15:
[481] Տե՛ս Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 4, էջ 148-149:

[482] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 22.
[483] Տե՛ս նույն տեղում:
[484] Տե՛ս նույն տեղում:
[485] Տե՛ս Նույն տեղում:
[486] Տե՛ս նույն տեղում:

Փաստորեն ստացվում էր, որ Ելիզավետպոլի, Շամխորի արյունոտ նախճիրը հունվարի 9-ին իշխանության հարցի հետ կապելը՝ նիստի մասնակիցներին բերում էր այն հետևությանը, որ անկատար, թույլ իշխանության պատճառով է, որ լիարժեք ու նպատակային չի իրականացվել ռուսական էշելոնների զինաթափումը, և ընդհանրապես, անարխիայի լիկվիդացիան:

Հունվարի 14-ին (27) Ելիզավետպոլի գավառային կոմիսար Մալխազովը, հենվելով Ղազախի երկաթուղային կոմիսար Շիխլինսկիի հեռագրի վրա, հաղորդում էր, որ Աղստաֆա կայարանը, Ղազախ քաղաքը և Ելիզավետինո գյուղը վտանգված են: «Երեկ, էշելոնների հեռանալուց հետո,- հայտնում էր նա,- հազարի հասնող զինված ամբոխը ներխուժեց կայարան և ավան, սկսեց թալանել: Երբ Աղստաֆայում սկսվեցին անկարգություններ, Ղազախում զինված հրոսակները ազատեցին բոլոր բանտարկյալներին, ավերեցին միլիցիոներական ուղեկալը, թալանեցին տարածքը: Ղազախի քաղաքացիներից կազմակերպվել է պահակազոր, բայց քաղաքի անվտանգության երաշխիքներ չկան: Անհրաժեշտ է Ղազախ ուղարկել 3-4 հարյուր հեծյալների զորաջոկատ, 4 հրանոթ. տեղական իշխանությունները միանգամայն անօգնական վիճակում են»[487]:

Ելիզավետպոլի և Շամխորի իրադարձությունների վրա նոր լույս է սփռում և մի շարք էական մանրամասներ պարզում Կոմիսարիատի հունվարի 14-ի (27) նիստը[488]: Անդրկովկասյան կառավարությունը լսում էր օդաչու, պորուչիկ Տեր-Մարտիրոսյանի զեկույցը, որը Կոմիսարիատի հանձնարարությամբ թռիչք էր իրականացրել Ելիզավետպոլի և շրջակայքի վրա և այժմ ներկայացնում էր իր անմիջական տպավորությունները ու դիտարկումները: Քանի որ փաստաթուղթն առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ, հարկ ենք համարում հանգամանորեն կանգ առնել այդ նիստի քննարկումների վրա: Նախ նշենք, որ Կոմիսարիատի թաթար նախարարները հիմնականում բացակայում էին (ներկա էին Խ.-Բ. Մելիք-Ասլանովը և Մ.-Բ. Հաջինսկին), Ֆ. Խան-Խոյսկին, Խ.-Բ. Խաս-Մամեդովը, Մ. Ջաֆարովը այդ օրերին իրադարձությունների կիզակետում էին:

Տեր-Մարտիրոսյանը նկարագրում էր, որ Աղստաֆայի մոտ կանգնած էին 3 էշելոններ, իսկ մինչև Շամխոր կայարանն ընկած երկաթուղուն կից բնակավայրերը բռնկված էին հրդեհով, բոլոր կայարաններում երևում էին վագոնների բեկորներ[489]: Նա փաստում էր նաև, որ աէրոպլանի վրա կրակելու հետևանքով ինքը հարկադրաբար վայրէջք է կատարել

[487] Տե՛ս Кавказское Слово, 1918, 17 января, N 12.
[488] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л.л. 30-32:
[489] Տե՛ս նույն տեղում, թ. 30:

ոչ թե Ելիզավետպոլի մահմեդական թաղամասում, ինչպես նախատեսված էր, այլ Գանջինկա գետի ափին: Սպանված շտաբ-ռոտմիստր Աբխազավայի ջոկատի պրապորշչիկից նա տեղեկանում է, որ ինչպես կոմիսար Մալխազովը, այնպես էլ թաթարական գնդի գնդապետ Լ. Մաղալովը ստացել էին էշելոնները զինաթափելու վերաբերյալ Ազգամիջյան խորհրդի հրամանները: Այստեղից է պարզվում նաև, որ հայկական ազգային զորամասերին այդպիսի կարգադրություն չի էլ արվել: Երբ լարվածությունը հասնում է իր գագաթնակետին, թեժ վեճ է առաջանում՝ մի կողմից Մաղալովի, Էֆենդիևի և մյուս կողմից՝ Աբխազավայի միջև: Վերջինս հրաժարվում էր առանց Կոմիսարիատի հրահանգի միջոցներ ձեռնարկել՝ զինաթափելու ուղղությամբ: Վերջապես բոլորը գնում են միջադեպը հարթելու: Սակայն «վայրի դիվիզիայի» սպաներից մեկը լեռնային հրանոթից կրակ է բացում զրահագնացքի վրա և մարտը սկսվում է: Սպիտակ դրոշով վագոնից ելած Աբխազավան տեղում գնդակահարվում է: Սպանվում են 1050 զինվորներ, կային և մեծ քանակությամբ անհետ կորածներ[490]:

Չափազանց ուշագրավ է Տեր-Մարտիրոսյանի տեղեկատվությունն այն մասին, որ այդ օրերին Ելիզավետպոլում էին գտնվում Կովկասի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը և Բաքվի բ. և զ. խորհրդի պատվիրակությունը, որոնք իրենց վրա էին վերցրել երկաթուղու երկայնքով ընդհարումների վերացումն ու խաղաղության վերահաստատման գործը: Հունվարի 12-ին* նրանք ժամանում են Ելիզավետպոլի կայարան, սակայն գազազած և զինված մահմեդական ամբոխը առևանգված շոգեքարշի օգնությամբ պատվիրակության անդամներին վայր է գցում գնացքից: Հետագա մոտակա տեղեկություններ՝ ըստ Տեր-Մարտիրոսյանի, Ստ. Շահումյանի մասին հայտնի չեն այլևս[491]:

Մինչ Կոմիսարիատի հունվարի 14-ի նիստին վերադառնալը, անդրադառնանք Բաքվի պատգամավորության խնդրին:

ՀՀԴ Բաքվի «Արև» թերթը շարունակաբար իր երկու համարներում ավելի չեզոք դիրքերից էր փորձում լուսաբանել այդ պատգամավորության առաքելությունը: Պարզվում է, որ պատգամավորությունը նպատակ ուներ այցելել ոչ միայն Գանձակ, այլև Թիֆլիս, ինչը մտնում էր Ստ. Շահումյանի հեռահար ծրագրերի մեջ[492]: Խումբը Հաջի-Կաբուլում, Քյուրդամիրում, Եվլախում, Զազալի քանդված կայարաններում հանդիպումներ, ժողովներ է անցկացնում թաթար բնակչության հետ, փորձում պարզել գավառի կարիքները, բացատրել երկաթուղու կարևորությունը: Մահ-

[490] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 141, л. 305 об.
* Ըստ «Արև» թերթի նրանք Բաքվից դուրս են եկել հունվարի 16-ին, Գանձակ են հասել հունվարի 18-ին:
[491] Տե՛ս նույն տեղում, թ. 31:
[492] Տե՛ս Արև, 1918, 30 հունվարի, թիվ 22:

մեղական ազգային կոմիտեի նախագահ Ն.-բ. Ուսուբբեկովն իր հերթին փաստում էր, որ հայկական ազգային խորհուրդը մերժել էր էշելոնների զինաթափման որոշումը և որ 12 հազար հրացաններից և ոչ մեկը չի անցել թաթարական կոմիտեի ձեռքը, իբր այն ամբողջությամբ առևանգել է ամբոխը, որին «հիմա ինքը՝ կոմիտեն չի կարողանում սանձահարել»: «Շամխորի և Դոլլարի միջև այդ ուժերը յարձակվեցին զինվորների վրայ և ստեղծեցին արեան բաղնիք»,- վկայում էր թաթար առաջնորդը[493]: Թիֆլիսում պատգամավորությունը հանդիպում է Անդրկովկասյան կոմիսարիատի անդամների հետ: «Արև»-ի վկայությամբ, նախ պարզվում է, որ «Կոմիսարիատն իր ամբողջ կազմով դեռ գոյություն ունի և որ Կոմիսարիատը մասնակցություն չի ունեցել և հրաման չի տվել զինաթափել էշելոնները Գանձակում»[494]: Հունվարի 20-ի երեկոյան երկրամասային կենտրոնի նիստը քննում է նաև Ելիզավետպոլի դեպքերը, լսում Վ. Գոբեչիայի «թեթևամիտ զեկուցումը»: Նման որակման պատճառն այն էր, որ այդքանից հետո ռազմա-ծովային կոմիսարը վրացական մենշևիզմի քաղաքականության պատճառ էր համարում այն, որ «մի զինվոր քաշեց թնդանոթի բանալին և արձակած ռումբը փշրեց զրահապատ գնացքը. այդ պատահական դեպքն էր, որ պատճառ դարձավ արիւնահեղութեան»[495]:

Ի դեպ, առանձնապես չէր տարբերվում նաև Ե. Գեգեչկորիի արձագանքը, որը Կոմիսարիատի կարգադրությամբ կազմակերպել էր «Գերագույն քննիչ հանձնաժողով», որը պետք է գտներ հեղինակներին ու հանձներ նրանց ռազմա-հեղափոխական դատարանին: Ինչպես հայտնի է, արված գործից հետո կարելի էր ստեղծել նաև հանձնաժողով, որը «գտնելու էր» հայտնի հեռագրի հեղինակ Ն. Ժորդանիային: Ն. Ժորդանիան, իհարկե, զայրանում է, նեղացած դիրք բռնում, թե «ես երկու գիշեր հերթապահ եմ եղել հեռախօսի մոտ, շարունակ ցուցումներ տալով թուրքաց ազգային կոմիտէին: Գանձակի հետ հեռագրական կապը կտրելուց յետոյ, ես օդանաւ ուղարկեցի՝ նախատեսելով արիւնահեղութիւնը, բայց դժբախտաբար, ուշ էր արդէն»[496]: Պատգամավորների հարցին, թե ինչո՞ւ Ն. Ժորդանիան չի օգտվել բ. և զ. խորհրդի հեռագրական հասցեից (Совдеп) և չէ՞ր իմանում արդյոք, որ Գանձակի բ. և զ. խորհուրդը դադարել է գոյություն ունենալ դեռ դեկտեմբերի 19-ից, նա պատասխանեց, որ իրենք առհասարակ հեռագրեր ուղարկել են «ճակատի և թիկունքի բոլոր խորհուրդներին» հասցեով և, որովհետև «ճակատում մենք խորհուրդներ

[493] Տե՛ս նույն տեղում:
[494] Տե՛ս նույն տեղում, 31 հունվարի, թիվ 23:
[495] Նույն տեղում:
[496] Արև, 1918, 31 հունվարի, թիվ 23:

չունենք, ես այդ երկու խօսքը (ճակատ և թիկունք) փոխեցի Անդրկովկաս բառով»[497]: Դրանով Ն. Ժորդանիան մեկ անգամ ևս փորձում էր արդարանալ, կարծես թե տվյալ պահին, կարևորն այն էր, թե ով էր հեռագրերի հեղինակը՝ Ն. Ժորդանիան կամ Վ. Գոբեչիան:

Ժողովը փակվում է, որովհետև որոշվում է Ելիզավետպոլի դեպքերի շուրջ վիճաբանություն չսկսել, սպասել գերագույն քննիչ հանձնաժողովի որոշմանը: Բաքվի պատգամավորությունը այդպիսով զրկվում է իր կարծիքը հայտնելու հնարավորությունից, իր առաքելությունը սպառված է համարում և գրավոր դիմում է երկրամասային կենտրոնին՝ առաջարկելով. 1) ժամանակավորապես դադարեցնել էշելոնների փոխադրությունը, 2) հրաժարվել բռնի զինաթափումից, 3) միջոցներ ձեռնարկել կարգավորելու երկաթուղային հաղորդակցությունը և այլն: Հունվարի 22-ին (փետրվարի 4) պատգամավորությունը վերադարձավ Բաքու: Տարօրինակ էր նաև Դաշնակցության թերթի եզրահանգումը. «Ստացած ընդհանուր տպաւորութիւնն այն է, որ շնորհիւ ձեռք առած միջոցների, թէ՛ Կոմիսարիատի, թէ՛ թուրք ազգային կոմիտէների և թէ՛ մեր պատգամաւորութեան կողմից, ստեղծուած դրութիւնը կը հարթի և կը կանոնաւորի երթեւեկութիւնը Թիֆլիս-Բագու»[498]:

Վերադառնանք Կոմիսարիատի նիստին:

Չնայած իր զեկուցման մեջ Տեր-Մարտիրոսյանը հայտնել էր, որ հայ և թաթար բնակչության միջավայրում նկատվում են թշնամական հարաբերություններ, միևնույն է Խ.-բ. Մելիք-Ասլանովը հարցնում էր, թե տեղի ունեցել են արդյո՞ք ազգամիջյան ընդհարումներ: Նպատակը պարզ էր, հիմնավորել, որ Ելիզավետպոլի ու Շամխորի դեպքերը մասնավորապես ուղղված են եղել բոլշևիզմի դեմ: Պորուչիկը պատասխանում է, որ «անվիճելիորեն սրվել են հարաբերությունները, ամեն օր կան սպանվածներ և վիրավորներ»[499]: Բոլշևիկների գործոնը ակտիվացնելուն էր ուղղված նաև Վ. Գոբեչիայի հարցը՝ արդյո՞ք կային լուրեր այն մասին, թե ատրոպլանը բռնությունների համար է ուղարկված: Ա. Չխեիդզեն զգուշորեն և ներքին տագնապով հետաքրքրվում էր, թե Շամխորի սպանդի կապակցությամբ ինչ լուրեր են տարածվել բնակչությանը հրահրողների մասին: Հնչում է պատասխան, որ դրանք են գնդապետ Մաղալովը, էֆենդիևը, երեք հոգի մահմեդական ազգային կոմիտեից, շատերը մեղադրում են Աբխազավային:

Ե. Գեգեչկորին ընթերցում է Կոմիսարիատի պատվիրակության անդամ վերոհիշյալ կապիտան Ստրելկովսկիի հարցապնդումները. «Պահանջում եմ հետաքննություն, պահանջում եմ զինաթափման դադարե-

[497] Նույն տեղում
[498] Արև, 1918, նույն տեղում:
[499] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л. 31.

ցում, պահանջում եմ կատարել պարտավորությունները և մահմեդական-ների կորպուսին տրամադրել լեռնային հրետանային մարտկոցը և խնդրում եմ հնարավորության դեպքում 3-4 օր էշելոնները չուղարկել Բաքու»[500]:

Նիստին ներկա գեներալ Մդիվանին հրապարակում է բ. զ. պ. խորհրդի պատվիրակության (հավանաբար Բաքվի – Վ. Մ.) անդամ, պորուչիկ Կրուպենկոյի հունվարի 13-ի գրությունը, որտեղ նշվում էր, որ պատվիրակությունը մարտերով է հասել Ելիզավետպոլի, բաց են թողնվել 7 էշելոններ, ինչպես նաև քաղաքի կայազորի պետի հաղորդագրությունից հայտնի է դառնում, որ քաղաքում տիրում է անարխիա, հայերի և թաթարների միջև առկա է փոխհրաձգություն: Հիշատակվում է փաստ, երբ 50 հոգուց բաղկացած հայ զինվորների ջոկատը, որը թաթար պատվիրակների ուղեկցությամբ շարժվում էր կայարանից, հրաձգության է ենթարկվել և կրել զոհեր[501]:

Խ.-բ. Մելիք-Ասլանովի զեկուցից պարզ է դառնում, որ նիստի օրը, հունվարի 14-ին երկաթուղու գործունեությունը վերականգնվել էր, որ Ելիզավետպոլ է ժամանել Ն. Ռամիշվիլիի և Մ. Ջաֆարովի գլխավորած պատվիրակությունը և որ Ղազախում կայացել էր Անդրկովկասյան երկաթուղիների կոմիտեների և երկրամասային խորհրդի ներկայացուցիչների խորհրդակցություն: Ե. Գեգեչկորիի վկայությամբ՝ հարաբերական խաղաղության հաստատման մասին էր փաստում նաև Ար. Երզնկյանի և Ելիզավետպոլի նահանգային կոմիսարներից՝ Մալխազովի միջև կայացած ուղիղ հեռախոսազրույցը[502]:

Որոշվում է կազմել զեկուցագիր և այդ գործը հանձնարարել ռազմածովային նախարարության գծով կոմիսար Վ. Գոբեչիային և գեներալ Մդիվանիին: Խ.-բ. Մելիք-Ասլանովը խնդրում էր, որպեսզի որոշում կայացվի այն մասին, որ Ելիզավետպոլի կոմիսարիատի պատվիրակությունն ուժեղացվի հայկական ազգային կոմիտեի անդամներով:

Կոմիսարիատի նիստը որոշում է կոմիսարներ Մ. Ջաֆարովին և Խ.-բ. Խաս-Մամեդովին նշանակել որպես հատուկ լիազորներ՝ Ելիզավետպոլում և նահանգում ընդհարումները դադարեցնելու, խաղաղություն հաստատելու նպատակով, ինչպես նաև նրանց պատվիրակությունը ևս համալրել այս՝ անգամ Հայոց ազգային խորհրդի անդամներով[503]:

Այդ հարցի կապակցությամբ Կոմիսարիատի նախագահի վերջին զեկույցը լսվեց 1918 թ. փետրվարի 5-ին (18), երբ հայտնի դարձավ, որ

[500] Նույն տեղում, թ. 31 շրջ.:
[501] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л. 31-32:
[502] Տե՛ս նույն տեղում:
[503] Տե՛ս նույն տեղում:

16 էշելոններ անցել են Եվլախը: Ե. Գեգեչկորիի արտահայտությամբ «միջադեպը հարթված էր»: Նախագահի վրա էր դրվում նաև հավաքական ջոկատի և նոր հաշտարար պատվիրակության (Մ. Պապաջանյան, Խ.-բ. Խաս-Մամեդով, Ար. Ջամալյան) անվտանգ մեկնումը և գործունեության ապահովության երաշխիքները[504]: Վստահաբար կարող ենք հիմնավորել, որ սպառնացող վտանգը շուտափույթ կանխված տեսնելու Ե. Գեգեչկորիի և մյուս առաջին դեմքերի կանխատեսումը վաղաժամ էր: Փետրվարի 18-ին անգամ, Ելիզավետպոլից Կոմիսարիատին հեռագրում էին, որ «առավոտյան ժամը 10-ից մինչև երեկոյան 18-ը էշելոնները մարտերով են անցնում Ելիզավետպոլ կայարանով, ծառայողները թաքնվել են կայարանի քարե շենքի ետևում, սպանվել են մեքենավարի օգնական Պերեգրուդովը, ծանր վիրավորված է տոմսավաճառ Էրիստովը, ուղևորների սրահն ու հարևան կառույցները այրվում են: Խուճապն ու լարվածությունը հասել է գագաթնակետին»[505]: Նույն օրը, Հասարակական անվտանգության կոմիտեի նախագահ Խ.-բ. Խաս-Մամեդովը խնդրում էր Կոմիսարիատից, այլևս էշելոններ բաց չթողնել և Թիֆլիս վերադարձող զրահապատ մեքենան շտապ ետ ուղարկել. «դրա հետ միասին ուղարկեք պահակազոր, փամփուշտներ, հրացաններ և շաքար, ինձ համար մեքենա և խոստացված գումարը»[506]:

Համընդհանուր տագնապի և իշխանությանը սպառնացող վտանգի մասին էր վկայում Կոմիսարիատի հունվարի 31-ի (փետրվարի 13) որոշումը, որով նախագահ Ե. Գեգեչկորիին տրվում էին Թիֆլիսի, Անդրկովկասի, ինչպես նաև երկրամասում գտնվող բոլոր զինված ուժերի վրա վերահսկելու լիազորություններ՝ փաստորեն դիկտատորի պարտականություններ[507]:

Եվս մեկ մասնավոր փաստ խոսում է այն մասին, որ Թիֆլիսի կառավարությունը սարսափով էր սպասում էշելոններին, որոնց անձնակազմը, բացի բոլշևիկներին հարելուց, արդեն վրեժով էր լցվել իշխանությունների հանդեպ: Հունվարի 31-ին (փետրվարի 13) Թիֆլիսի քաղաքային դումայի նախագահ Ա. Լոմտատիձեն ընդառաջ է գնում քաղաքին մոտեցող էշելոններին՝ 300 վերստի վրա՝ (300 կմ-ից ավել – Վ. Մ.), զինվորների հետ զրուցելու նպատակով: Հանրահավաքում նա փոխշահավետ առաջարկ է անում, այն է՝ քաղաքային ինքնավարությունը զինվորների տեղաբաշխման և պարենային կարիքները կլուծի, դրա փոխարեն խնդրելով քաղաքում հեղափոխական կարգի պահպանում և բնա-

[504] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 78:
[505] Տե՛ս Кавказское Слово, 1918, 21 февраля, N 41:
[506] Տե՛ս նույն տեղում:
[507] Տե՛ս նույն տեղում, 2 февраля, N 26:

կիչների հանդեպ խաղաղ վերաբերմունք: Զինվորական կոմիտեն Ա. Լոմտատիձեին հայտարարում է, որ «զինվորները խաղաղ բնակչության հանդեպ ոչինչ չունեն, բայց անհրաժեշտ են համարում Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանության տապալումը»[508]:

Լսելով Թիֆլիս-Բաքու երկաթուղու իրավիճակի մասին, Կոմիսարիատի նիստը որոշեց նաև խստորեն արգելել ոչ միայն էշելոնների, այլև առանձին զինվորների զինաթափումը երկաթուղու ամբողջ երկայնքով: Միաժամանակ շեշտվում էր, որ հեռացող զորամասերն ու զինվորները կարող են կամավոր հանձնել զենքը նոր ձևավորվող ազգային գնդերին[509]:

Ինչպես տեսնում ենք, երկամսյա իրադարձություններից հետո էլ, Կոմիսարիատի ղեկավարությունը շարունակում էր իր նախանշած քաղաքականությունը: Թեկուզ միայն այս որոշումը վկայում է և հաստատում, որ Կովկասյան բանակի զինվորների զինաթափումն ու արյունոտ ջարդերը հրահանգվել և ուղղորդվել են Կոմիսարիատի վրաց-մենշևիկյան ղեկավարության, մասնավորապես, Ն. Ժորդանիայի, Ե. Գեգեչկորիի, Ա. Չխեենկելիի, Վ. Գոբեչիայի, Շ. Ալեքսեև-Մեսխիևի կողմից, թաթար և հայ անդամների լուռ համաձայնությամբ:

Ելիզավետպոլի իրադարձությունները լուսաբանելիս, մեր կարծիքով անպայման պետք է հաշվի առնել նահանգում տիրող սոցիալ-տնտեսական անմխիթար իրավիճակը, ինչը բոլշևիկյան հեղաշրջման ու անիշխանության խորացման պայմաններում մահմեդական բնակչությանը ոտքի հանեց միաժամանակ ռուսների ու նրանց հետ նույնացվող բոլշևիկ զինվորների դեմ:

Վերոհիշյալ պորուչիկ Տեր-Մարտիրոսյանի, օրինակ, անվստահությունը փարատելուց հետո մոտենում էին տեղի թաթարական պատվիրակությունները և հայտնում նահանգում իշխանության, հացի, կերոսինի բացակայության, կայարանից քաղաքի կտրվածության մասին[510]: 1918 թ. հունվարին, երկրամասային կենտրոնի միացյալ նիստում Ստրելկովսկին Գանձակի դեպքերը ուղղակիորեն կապում էր թաթար գյուղացիության ագրարային շարժումների հետ, որոնց գլխավոր հարվածը սկզբում ուղղված էր ռուս ազգաբնակչության դեմ: Նախ՝ մահմեդականները պահանջում են, որ ռուսները հեռանան իրենց բնակավայրերից. սկզբում այդպես էլ ընթանում էր վերաբնակեցումը, ռուսները վաճառում էին իրեց կայքն ու գույքը և խաղաղ հեռանում: «Բայց յետոյ արդէն թուրքերը նրանց քշում էին, թալանում ունեցուածքը, գրաւում հողերը,- վկայում է զեկուցողը,- շարժումն իր հետեւանքներով տարածուեց աստիճանաբար նաև թուրք հողատէրերի-բէգերի վրայ, աւելի անիշխանական բնոյթ ստացաւ, ալան-թալանի փոխուելով: Վրայ են հասնում էշելոնների հետ կապւած դէպքերը»[511]:

Այդ օրերին Բաքվում ստացվում է Ստ. Շահումյանի խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող «Տեղեկատուն» (ժողովրդական կոմիսարների կովկասյան պաշտոնական լրագիր – Վ. Մ.) ըստ որի՝ հունվարի 1-ից Ղազախի գավառից սկսվել էր ագրարային շարժում և տարածվել Գանձակի նահանգի մյուս շրջաններում[512]: Չի կարելի անտեսել այն էական հանգամանքը, որ 1917 թ. վերջին և 1918 թ. սկզբին Ելիզավետպոլի նահանգում, այդ նույն խորհրդային իշխանության հռչակած հողի դեկրետի ազդեցությամբ՝ թաթարական միջավայրում բռնկվում էին զանգվածային գյուղացիական շարժումներ, արձանագրվում էին խաների ու բեկերի, նրանց ընտանիքների բազմաթիվ կոտորածների, հողի բռնագրավումների փաստեր[513]: 1918 թ. հունվարի 4-6-ի ընթացքում, Ելիզավետպոլի նահանգի, Ղազախի գավառի տասնյակ թաթարաբնակ գյուղերի զինված գյուղացիներ անխնա հաշվեհարդար տեսան 4-րդ տեղամասի շուրջ 30 կալվածատերերի, մասնավորապես, Զյուլգադարովների, Կարաբեկովների, Շամխորսկիների հետ: Նրանցից շատերը սպանվեցին, կալվածքները հրկիզվեցին, թալանվեցին: Ելիզավետպոլի կոմիսարի հունվարի 21-ի հաղորդագրությունը հայտնում էր, որ Կարաբեկովների ընտանիքից սպանվել է 21 մարդ: Զյուլգադարովների հետ հաշվեհարդարին մասնակցում էին 500 զինված գյուղացիներ: «Բարձրացել է ագրարային շարժումը,- Անդրկովկասյան կոմիսարիատին տագնապով հայտնում էր Թաուզի կալվածատեր Իսկենդերբեկովը,- մորթվել են Զյուլգադարովների, Կարաբեկովների ընտանիքերը, մնացածը շրջապատված են, պաշտպանություն ենք խնդրում»[514]: Ու քանի որ նահանգի խոշոր կալվածատերերից շատերը նաև անդրկովկասյան կառավարության անդամներ էին՝ «սոցիալիստական» բեկեր ու խաներ, ուստի և հեռացող ռուսական զորամասերի նկատմամբ հրահրվող բռնությունները և ազգային գնդերի ստեղծման գործընթացը ինչ-որ չափով շեղում էին գյուղացիությանը՝ սոցիալ-տնտեսական կենսական խնդիրների բարձրացու-

[508] Տե՛ս նույն տեղում:
[509] Տե՛ս ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л. 34:
[510] Տե՛ս ЦГИА Грузии, նույն տեղում, թ. 30:

[511] Հորիզոն, 1918, 24 հունվարի, թիվ 16:
[512] Տե՛ս Արև, 1918, 4 փետրվարի, թիվ 27:
[513] Տե՛ս Я. Ратгаузер, Революция и гражданская война в Баку, ч. I, 1917-1918 гг., Баку 1927, էջ 124-125:
[514] Տե՛ս М.С. Искендеров, նշված աշխատությունը, էջ 184-186:

մից: Նպատակներից մեկն էլ ադրբեջանական խանություն հռչակելն էր: Որքան էլ Կոմիսարիատը և Թիֆլիսի երկրամասային կենտրոնը թաքցնեին իրականությունը, հատկապես, ազգամիջյան ընդհարումների և բացահայտ հակահայկական քաղաքականության դրսևորումները, միևնույն է, փաստերը վկայում են անհերքելին: Միայն 1917 թ. դեկտեմբերի վերջին լիովին ավերվեցին Նուխիի գավառի 11 հայկական գյուղեր: «Հունվարի 9-12 դեպքերի օրերին,- գրում էր ականատես Ստ. Շահումյանը,- Ելիզավետպոլի ամբողջ հայ բնակչությունը, Շուշիի, Ղազախի և այլ գավառների հայ գյուղացիությունն ապրում էին կոտորածի սպասումի մղձավանջային օրեր: Հունվարի 10-ին Ելիզավետպոլում մուսուլմանները հանձնել են սպանված հայերի 13 դիակ: 12-ին նորից հարձակումներ են եղել հայերի վրա, որի հետևանքով մի քանի տասնյակ սպանվածներ են եղել»[515]: Մահմեդական բնակչության ագրեսիվ վարքագիծը հարկադրեց հայ բնակչության մի մասին (ոչ բանակին – Վ.Մ.) ներքաշվել այդ ընդհարումների մեջ: Բոլշևիկների կողմից ղեկավարվող ռազմական գործողություններում մահմեդականները տվեցին 3000, հայերն ու ռուսները՝ 1200 զոհ: Չեզոք կողմի վկայությամբ, գիտակից հայերն ամեն կերպ խուսափելով ընդհարումները ազգամիջյան ջարդերի ոլորտ ներքաշելու հեռանկարից՝ փորձում էին կանխել աղետը:

Եղել են դեպքեր, երբ հայը դատաստան էր տեսնում հայրենակցի հետ՝ թաթար սպանելու համար, գերի թաթարներին ռուս զինվորների վիրավորանքներից պաշտպանում էին հայ զինվորները: Նշանավոր թաթար գործիչ Թաղիևի վկայությամբ, այդ օրերին հայերն իրենց տներում պատսպարելով փրկել էին շուրջ 14.000 թաթար-մահմեդականների, «որոնք ավելի ուշ, թուրքերի և թաթարների կողմից Բաքուն գրավելու ժամանակ, (1918 թ. սեպտեմբեր – Վ. Մ.) չհիշեցին պարտքը իրենց փրկիչների հանդեպ, չուզեցին պաշտպանել նրանց»[516]:

1917 թ. դեկտեմբերի կեսերից մահմեդական խռովությունների, ավազակային հարձակումների ալիքը հասնում է Ախալցխա՝ ևս մի երկաթուղային կարևոր հանգույցի ու հայ-թաթարական համատեղ բնակչության շրջանի: Թալանից մինչև ազգամիջյան բախումների վերածված շարժման առիթ է հանդիսանում Կովկասյան բանակի 116-րդ զորագնդի հեռանալու՝ արդեն հիշատակված հանգամանքը, որի բոլշևիկացած զորամասերը՝ Կովկասում տեղակայված այլ զորամասերի նման, նպատակ ունեին տապալել Անդրկովկասյան կոմիսարիատը: Որպես պատճառ հանդես է գալիս նաև Ախալցխայի կայազորի սեփականության խնդիրը,

[515] Ստ. Շահումյան, նույն տեղում, էջ 116-117:
[516] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ.թ. 22-23:

որը կռվախնձոր էր դարձել գավառի թաթարական բնակչության և վրացական զորամասերի միջև: Այդ ամենին ավելանում էր նաև Կոմիսարիատի անվճռականությունը, ինչը ավելի էր բարդացնում իրավիճակը և փաստորեն չկանխելով դրանք, նպաստում էր, որպեսզի անարխիկ ելույթները վերածվեն ազգամիջյան բախումների:

«Ահա երկու ամիս է մեր կեանքը աննօրմալ կերպարանք է ընդունել,- գրում էր ՀՅԴ Ախալցխայի մարմին «Շարժում» թերթը,- և այդ խուլ կռիւը քաղաքի ու գիւղի մէջ քանի գնում աւելի ու աւելի սպառնալի է դառնում: Գրեթէ օր չի անցնում, որ այս կամ այն գիւղից թալանի, խուզարկութեան, ձերբակալութեան լուրեր չը գան: Թուրք ազգաբնակութիւնը որպէս թէ իր արդար պահանջներին բաւարարութիւն չստանալու պատճառով, հայ կամ վրացի գիւղերից է վրէժխնդիր լինում... Ախալցխայի լարուածութիւնը անհանգստացնում է նաև հարևան գաւառները: Ախալքալակից հայ և թուրք պատգամաւորներ են եկել մեր հարաբերութիւններում միջամտելու, որպեսզի գալիք փորձանքի առաջն առնեն»[517]:

Հունվարի 12-ին (25) Ախալցխայում կայանում է միջկուսակցական ժողով, որին մասնակցում էին նաև բ. զ. և գ. պ. խորհուրդների ներկայացուցիչները: Ժողովի նախագահ է ընտրվում քաղաքագլուխ Զ. Զորյանը: Նա իր գոհունակությունն էր հայտնում քաղաքի և գավառի թաթարական պատվիրակության խաղաղասիրական առաջարկների առթիվ և կոչ անում՝ ընդառաջ գնալ դրանց: Զինվոր Ալվարյանը գտնում էր, որ նման գեղեցիկ խոստումներ բազմիցս են հնչել, բայց միշտ շարունակվել են թալանն ու սպանությունները, ուստի առաջարկում էր վերջնագիր ներկայացնել: Լ. Փիրալյանի կարծիքով վերջին խռովության պատճառը հողային հարցն է եղել, որտեղ վճռորոշ բացասական դեր են խաղացել կալվածատեր-բեկերը[518]: «Բէգերը թուրք մասայի ազգայնական բնազդները գրգռելով յօգուտ իրենց, նրանց ոտքի են կանգնեցրել և աշխատում են իրենց վաղեմի երազներն իրականացնել և մեր շրջանները միացնել Օսմանեան պետութեանը»[519]: Ամփոփելով արված առաջարկները, Զ. Զորյանը եզրակացնում էր, որ թեև Բորժոմից, Քութաիսիից, Ախալքալակից ու Ալեքսանդրապոլից սպասվում են օժանդակ ռազմական ուժեր, սակայն խնդիրը պահանջում է խաղաղ լուծում, ինչի մասին վերջինս ստացել էր նաև Ա. Չխենկելիի ցուցումը:

Ժողովը որոշեց նաև ընտրել ազգամիջյան մարմին, նրան լիազորելով լայն իրավունքներով[520]:

[517] Շարժում, 1918, 18 փետրվարի, թիվ 13:
[518] Տե՛ս նույն տեղում, 14 հունվարի, թիվ 3:
[519] Նույն տեղում:
[520] Տե՛ս նույն տեղում:

Անդրկովկասյան երկաթուղու խոշոր հանգույցների, Ելիզավետպոլի, Շամխորի իրադարձություններին անդրադարձան կուսակցությունները:

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության «Լույս» թերթը «Շամխոր» հոդվածում գրում էր. «Դառնության ու անարգանքի անուն է այս անունը. անհեռատեսությո՞ւնը, սխա՞լը, թե պրովոկացիան կարողացավ սարքել Շամխորի սպանդանոցը»: Թիֆլիսի էսեռական կուսակցության «Знамя труда» թերթը հաստատում էր վրացական մենշևիկների կողմից «գործը կոծկելու» փորձերը և պահանջում հրապարակային քննության ենթարկել երկրամասային կենտրոնի պատասխանատվության հարցը[521]: Էսեռների շրջանային կոմիտեի պահանջը պաշտպանում էր նաև Դաշնակցության մեծ մասը: Ելնելով ռուս զինվորների որպես ռազմավարական դաշնակցի ելակետից, «չորս տարի հյուսիսի մեր ընկերների» սպանդը կուսակցությունը որակում էր «Անդրկովկասյան կոմիսարիատի հանցանք»[522]:

Միանգամայն հիմնավոր ենք համարում էսեռների դիրքորոշումը, երբ Շամխորի դեպքերը դիտարկվում էին որպես «Կովկասյան բանակի դեմ ուղղված քաղաքական միջոց»[523]: Բացի այն, որ եզրահանգումը հենվում էր Կոմիսարիատի և երկրամասային կենտրոնի վրացական մենշևիկների մեծամասնության վարած հետևողական հակառուսական քաղաքականության երկամսյա վերլուծության վրա, էսեռական ռուսամետ կողմնորոշումը հիմնավորվում է առավելապես նրանով, որ կազմակերպված սպանդը ուղղված էր այժմ բոլշևիկյան զորամասերի դեմ: Փաստորեն այս արմատական հարցում էսեռների և Կովկասի բոլշևիկների, մասնավորապես, Ստ. Շահումյանի մոտեցումները համընկնում էին և միմյանց փոխլրացնում: Էսեռները ևս Շամխորի դեպքերը կապում էին երկրամասում իշխանության հարցի հետ, ավելի կոնկրետ՝ Սարիղամիշի բոլշևիկյան զինվորական-հեղափոխական կոմիտեի կողմից Անդրկովկասյան կոմիսարիատին ներկայացված վերջնագրի հետ: Հայտնի է, որ Կոմիսարիատի տապալման և Անդրկովկասը խորհրդայնացնելու ծրագիրը պաշտպանում էր հենց Ստ. Շահումյանը: Միաժամանակ Կովկասի էսեռներն էլ մոռանում էին, թե անտեսում, որ իրենց կուսակիցները՝ Դ. Դոնսկոյը, Վ. Գոբեչիան եթե ոչ նախաձեռնող, սակայն զինաթափման հարցում նախապատրաստված համերաշխ աշխատանք էին տարել մենշևիկների հետ:

[521] Տե՛ս Ս. Հ. Մելիքյան, նշված աշխատությունը, էջ 116:
[522] Տե՛ս Արև, 1918, 21 հունվարի, թիվ 15:
[523] Տե՛ս Աշխատավոր, 1918, 2 փետրվարի, թիվ 14:

Չնայած բևեռային տարածայնություններին, Դաշնակցությունը ևս, ռուսական զորամասերը զինաթափելու հարցում համերաշխ էր Ստ. Շահումյանի հետ, սակայն ոչ երբեք բոլշևիկյան կուսակցության քաղաքականության հարցում, որի հետևանքն էր ռազմաճակատի քայքայումն ու Կովկասյան բանակի բոլշևիկացումն ու դասալքումը:

1918 թ. փետրվարի 8-ի (21) համարում Բաքվի ՀՀԴ մարմին «Արև» թերթն անգամ հրապարակում է Ստ. Շահումյանի կոչը, որտեղ քննադատության էին ենթարկվում ազգային խորհուրդները, ազգային զորամասերը և կոչ էր արվում Կովկասում ստեղծել խորհրդային իշխանություն[524]: Մի կողմ դնելով կուսակցական տարաձայնությունները, տվյալ քաղաքական փուլում դրսևորվող անեզր անհանդուրժողականությունը, հայկական ազգային կոսակցությունը, փաստորեն, լուռ ընդունում էր Կոմիսարիատի հանցանքը, Ստ. Շահումյանի մերկացումները Շամխորի և Ելիզավետպոլի կապակցությամբ: Արևմտյան Հայաստանը պաշտպանող ռուս զինվորի հարցում ռազմաճակատը դրսևորում էր ցավոք ոչ հարատև ու կայուն համերաշխություն: Դաշնակցությունը չէր կարող չընդունել Ստ. Շահումյանի հարցադրումը, թե «Անդրկովկասն իրավունք ունի ստանալու այդ զենքի մի մասը ճակատը պաշտպանելու համար, բայց այդ զենքը կարող է տրվել միմիայն կենտրոնական կառավարության համաձայնությամբ և պիտի ընկնի ոչ թե ազգային խորհուրդների ձեռքը, ինչպես է օրինակ, Գանձակի բէկական մուսուլման ազգային կոմիտէն, կամ նրանց ղեկավարութեան տակ գտնուող ավազակային հրոսակախմբերի ձեռքը»[525]:

Կովկասյան բանակի զորամասերը զինաթափելու կարևորագույն քաղաքականացված հարցում Դաշնակցությունը նույնիսկ 1918 թ. ապրիլին միասնական մոտեցում չէր ձևավորվել: Եթե 1917 թ. վերջին և 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին՝ Կովկասյան ռազմաճակատի կազմալուծման և «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ասպարեզ գալու հակասական, սպասեցնող պայմաններում, Դաշնակցությունը չէր կարողանում կողմնորոշվել, խուսափում էր վճռական գործողություններից, հատկապես Կոմիսարիատի հարցում, ապա 1918 թ. գարնանը, երբ թուրքերը գրավելով Արևմտյան Հայաստանը մտան Կարս, կուսակցության ղեկավարության մի մասը, մարտին, բոլշևիկների հետ նախ՝ փորձեց պաշտպանել Բաքուն, ապա և Ալեքսանդրապոլի խորհրդակցության ժամանակ փորձ արեց ետ բերել կորցրածի գոնե մի չնչին մասը:

[524] Տե՛ս Արև, 1918, 8 փետրվարի, թիվ 30:
[525] Տե՛ս նույն տեղում:

Այսպես, Պարսկաստանում գտնվող ռուսական էքսպեդիցիոն կորպուսի զինվորների վերջին ջոկատները 1918 թ. ապրիլի սկզբներին պետք է անցնեին Դավալու (Արարատ) - Ալեքսանդրապոլ գծով: Սեյմի ՀՅԴ անդամները Ալեքսանդրապոլի խորհրդակցության ժամանակ բարձրացնում են ռուս զինվորների զինաթափ անելու պահանջը: Որոշվում է Ալեքսանդրապոլից դեպի Անի երկաթգծի մի հատվածում ռելսերը հանել և փակել էշելոնների առաջընթացի հնարավորությունը: Այդ մասին Ալ. Խատիսյանը խորհրդակցության մասնակիցների ներկայությամբ տեղեկացնում է Անդրանիկին, խնդրելով, որ վերջինս հայտնի իր կարծիքը: Անդրանիկը հավատարիմ իր հետևողական ռուսական կողմնորոշմանը, զայրույթով դեմ է արտահայտվում, նշելով, որ «հոն է մեր դարաւոր թշնամին (նկատի ունի Թուրքիան – Վ. Մ.), զայն զինաթափ ըրեք: Թաթարները Գանձակի առաջ տուն դարձող ռուս զինուորները կոտորէցին, մնացածն էլ դուք կուզեք լրացնել, քանի մը հրացաններու փոխարեն: Ռուսիան մեզ հսկա ռազմամթերք թողուց, մենք պէտք չունինք քանի մը հատ հրացաններու ... (նկատի ունի Էրզրումի անկումը – Վ. Մ.) երանի թե հոս եկած չըլլայի և չլսեի այս տխուր որոշումը»[526]:

Նույն իրադարձությունների մեջ այլ ենթատեքստ էր փորձում տեսնել «Մշակը», ի դեմս խմբագիր Հ. Առաքելյանի: «Պէտք է փարենք պետական քաղաքականութեան» հոդվածում ռուսական էշելոնների զինաթափումը և զինվորների սպանդը նա նույնացնում էր Անդրկովկասում «ազգային կառավարությունների» ստեղծման ծրագրի հետ: Ազգային խորհուրդներին, որոնց նա միմիայն ներքին կառավարական իրավասություն էր թողնում, Հ. Առաքելյանը հակադրում էր «համապետական ուժեղ կառավարության» գաղափարը: Հայ ժողովրդին սպառնացող վտանգի պայմաններում «տեղին չէ մտածել ազգային կառավարութեան մասին»,- նշում էր հեղինակը[527]:

Հայ ժողովրդական կուսակցության ղեկավար անդամը ևս համոզված էր, որ «Թիֆլիս-Գանձակ-Եվլախ գծի վրա, երբ թուրքերի և վրացիների ձեռքով զինաթափ արվեցին ռուս էշելոնները պէտք է այլևս համոզեն մեզ, որ ազգային կառավարութիւնների ծրագիրը գոնէ այժմ անտեղի է ... ռուս էշելոնները զինաթափ անելու ծրագիրը արտադրեց աղէտալի հետևանք. հիմն դրեց մի սոսկալի կատաստրոֆայի: Այդ անօգուտ զոհերը վրէժխնդրութիւն են գոռալու սպանվածների մերձաւորների կողմից, և մենք գտնվում ենք աւելի արիւնահեղ դէպքերի տէրրօրի ներքոյ»[528]: Ինչպես տեսնում ենք, Դաշնակցության հանդեպ անզիջում կուսակցությունը, այս հարցում չգիտես ինչու չէր մեղադրում դաշնակցական գործիչներին: Կռահելով այդ դեպքերի հակահայկական ուղղվածությունը, Հ. Առաքելյանը միաժամանակ հակասության մեջ էր հայտնվում, երբ առաջարկում էր Անդրկովկասում ստեղծել «ընդհանուր, համապետական, ոյժեղ կառավարութիւն» ինչն էլ՝ հարկադրում էր «փարվել պետական քաղաքականության»:

Նույն «Մշակը», փետրվարի 1-ի (14) «Ազգային խորհրդի ուշադրությունը» հոդվածում, գրում էր բոլորովին հակառակը՝ այժմ էլ սոցիալիստներից պաշտպանելով „ազգային խորհուրդները, մասնավորապես ազգամիջյան զինվորական խորհրդին, որի կազմի մեջ էր ներառվել նաև ՀԺԿ անդամ Մ. Պապաջանյանը (նաև՝ Մ. Արզումանյան (ՀՅԴ) և Ս. Փիրումյան (Ս.-դ. - մենշևիկ): Դաշնակցական Մ. Արզումանյանը Մ. Պապաջանյանի փաստն ուռճացնելով, երկրամասային կենտրոնում հայտարարել էր, թե «իշխանութիւնը պէտք է պատկանի միայն յեղափոխական կենտրոններին, ազգաին խորհուրդները հակայեղափոխական են և նրանց պէտք է ցրել»: «Մշակն» արդարացիորեն վրդովվում էր, թե ինչո՞ւ է Մ. Արզումանյանն այդպես արտահայտվում, երբ Հայոց ազգային խորհրդի մեծամասնությունը կազմում էր Դաշնակցություն կուսակցությունը, ուստի և Ազգային խորհրդից բացատրություն էր պահանջում[529]:

Շամխորի դեպքերը, մահմեդական շարունակվող խռովությունները ոչ միայն Արևելյան Անդրկովկասում, այլև Երևանի նահանգում ահագնացող անիշխանությունը, հայության այս հատվածին մղում էին համախմբվածության, կազմակերպման նոր աստիճանի:

Այս նպատակն էր հետապնդում նաև փետրվարի 18-ին Բաքվում կայացած Գանձակի նահանգի և Բաքվի նահանգի երկու գավառների՝ Շամախիի և Գյոքչայի բաքվաբնակ հայերի գավառական կոմիտեների ընդհանուր ժողովը[530]: Հավաքի նպատակների մասին պարզաբանումներ էր տալիս Գանձակի նահանգի բաքվաբնակ հայերի նախկին գործադիր կոմիտեի նախագահ Սարգիս Արարատյանը: Փետրվարյան հեղափոխությամբ առաջադրված ժողովրդավարական ազգային մարմինը, հայության առջև ծառացած դժվարին մարտահրավերների առկայության պայմաններում, վերակազմության կարիք էր զգում: Բաքվի ազգային խորհրդի առաջարկով՝ Գանձակի նահանգի գավառական ներկայացուցիչների փետրվարի 4-ի առաջին կազմակերպչական ժողովում որոշվել էր վերակազմել նախկին խորհրդի կազմը և նրա մեջ մտցնել Բաքվի երկու այլ գավառների՝ Շամախիի և Գյոքչայի հայության ներկայացուցիչ-

[526] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, թթ. 26-27:
[527] Մշակ, 1918, 21 հունվարի, թիվ 14:

[528] Նույն տեղում:
[529] Տե՛ս Մշակ, 1918, 1 փետրվարի, թիվ 23:
[530] Տե՛ս Արև, 1918, 22 փետրվարի, թիվ 41:

ներին: Այդ նպատակով կատարվել էին ընտրություններ և ներկա ժողովում արդեն մասնակցում էին տաս գավառների պատգամավորները: Եվ քանի որ նոր խորհուրդը սահմանափակվում էր ոչ միայն Գանձակի նահանգով, ներառում էր այլ առհասարակ, Արևելյան Անդրկովկասի հայաբնակ վայրերը, ուստի և Ս. Արարատյանն առաջարկում էր նոր խորհուրդն անվանել «Արևելյան Անդրկովկասի բաքվաբնակ հայերի խորհուրդ»[531]: Նա լուծարված էր համարում նախկին կազմակերպության գործադիր կոմիտեն և կոչ անում ձևավորել նորը: Կազմակերպության շարժառիթների մասին զեկուցում է նաև նախկին խորհրդի նախագահ, անվանի հասարակական-քաղաքական գործիչ, էսեռ Լևոն Աթաբեկյանը[532]:

Այնուհետև, ժողովի նախագահ է ընտրվում Դավիթ Տեր-Դանիելյանը (Դ. Անանուն), առաջադրելով մի շարք կազմակերպական խնդիրներ: Մինչ այդ խնդիրների քննարկումը, ժողովը ցանկություն է հայտնում լսել գավառից ժամանած ներկայացուցիչների զեկուցումները: Խոսք է վերցնում Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք – Շահնազարյանը և նշում, որ Ղարաբաղի հայերի և թուրքերի բարիդրացիական հարաբերությունները «ոչ մի կերպ չեն խախտել»: Նա ընդգծում էր, որ «Շուշի-Եվլախ խճուղու խժդժութիւնները մի շարք չարագործ բանդաների գործն են և երբէք ժողովրդական բնոյթ չեն կրում», Շուշիի վրայով տուն վերադարձող ռուս զինվորներին անհրաժեշտ դրամական օգնություն էր ցույց տրվել, սակայն նրանց զինաթափ են արել Բարդա կայարանում[533]: Վերակազմված գործադիր կոմիտեի կազմը հաջորդ նիստերին համալրվում է տեղակալներով և գանձապահով: Երկու փոխնախագահներ են ընտրվում Ալ. Պարոնյանը և Ար. Առաքելյանը, գանձապահ՝ Հ. Տեր-Առաքելյանը: Ձևավորվում են նաև աշխատանքային խմբեր, (ֆինանսական, ներքին կազմակերպչական), ինչպես նաև հինգ հոգուց բաղկացած ազգամիջյան հարաբերությունների սեկցիան: Նրա անմիջական պարտականությունն էր՝ սերտ հարաբերությունների պահպանումը տեղում գործող մահմեդական կազմակերպության հետ: Չէր բացառվում նաև պարենային հարցում վերջինիս կողմից ակնկալվող աջակցությունը: Քանի որ Արևելյան Անդրկովկասի բաքվաբնակ հայերի կազմակերպության Գործադիր կոմիտեի նախագահը սպեցիֆիկ Դ. Անանունն էր, ապա, նրա մարտավարությունից ելնելով, կայացվում է որոշում, ըստ որի՝ բանվորությանը կոչ էր արվում մեծապես աջակցել գավառական ազգային հայրենակցական կոմիտեներին՝ նրանց ֆինանսական միջոցները «լայն հայրենակցական հիմքի վրա դնելու» նպատակով: Ծախսերի և տուրքի չափը որոշելու

[531] Տե՛ս նույն տեղում:
[532] Տե՛ս Արև, 1918, 22 փետրվարի, թիվ 41:
[533] Տե՛ս նույն տեղում:

հարցում, գավառային կոմիտեներին տրվում էին ազատ գործելու հնարավորություններ[534]:

Ամփոփելով, եզրակացնում ենք, որ Ելիզավետպոլի մահմեդական գյուղացիական խռովությունները, ապա և Բաքվից մինչև Թիֆլիս երկաթուղային հանգույցների մոտ կատարված ոճրագործությունները առավել մեծ ու համապարփակ հիմնահարցի՝ երկրամասում իշխանության խնդրի բաղկացուցիչներից են:

Կովկասյան ռազմաճակատից հեռացող ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը Անդրկովկասյան կոմիսարիատին և զ. ու բ. պատգամավորական խորհրդի երկրամասային՝ էսեռա-մենշևիկյան հակաբոլշևիկյան կենտրոնին նախ և առաջ անհրաժեշտ էին Բաքվի խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար: Թեև վրացական մենշևիզմը և Ն. Ժորդանիան զորամասերի զինաթափումը հիմնավորում էին ելնելով գարնանը սպասվող թուրքական արշավանքին դիմագրավելու և այդ նպատակով՝ ազգային զորամասերը զինելու նկատառումներից, սակայն առաջնայինը մնում էր Կոմիսարիատի իշխանության պահպանման ու այդպիսով նաև բոլշևիզմի դեմ պայքարը: Անցնելով առաջ նշենք, որ 1918 թ. գարնանը վրացական զորքը դիմադրություն գրեթե ցույց չտվեց այդ թուրքական արշավանքին, իսկ հայկական զորամասերը, որոնք Շամխորի մոտ չէին գնդակահարում ռուս զինվորներին ու առևանգում զենքը, միայնակ իրականացրին ռազմաճակատի պաշտպանության գործը:

Ելիզավետպոլն ու Շամխորը, փաստորեն դարձավ 1917 թ. նոյեմբերից սկսված իշխանության համար մղվող լարված, առայժմ ժողովրդավարական պայքարի վայրագ հանգուցալուծումներից մեկը, երբ զենքի համար պայքարը վերաճեց քաղաքական և ազգամիջյան բացահայտ առճակատման: Սկիզբ դրվեց մի գործընթացի, որն ավարտվեց միայն 1918 թ. սեպտեմբերին՝ թուրքերի կողմից Բաքուն գրավելուց հետո: Շամխորի սպանդից հետո է, որ Ստ. Շահումյանը գաղտնի անցնում է Թիֆլիս և առաջին անգամ փորձում Դաշնակցության զորամասերի աջակցությամբ համատեղ իրականացնել իր ծրագիրը՝ Կոմիսարիատի տապալումը:

Վերը շարադրված իրադարձությունների զարգացումը անհերքելիորեն ապացուցում է, որ Ելիզավետպոլի և Շամխորի արյունոտ դեպքերի գլխավոր մեղսակիցները վրացական մենշևիզմի առաջնորդներն էին և մահմեդական ազգային կոմիտեն, այսինքն՝ Անդրկովկասի կոմիսա-

[534] Տե՛ս Արև, 1918, 6 մարտի, թիվ 48:

ռիատում իշխանությունը զավթած վրաց-մահմեդական ազնվականական–խանական մեծամասնությունը: Այդ իբր «արդարացված», բայց հանցավոր գործն իրականացնում էին ոչ թե «ավազակները», այլ մահմեդական բնակչության հսկայական զինված ամբոխը, որոնց ղեկավարում էր մահմեդական ազգային կոմիտեն և որոնք վստահ էին, որ այդ ամենը կատարվում է անդրկովկասյան իշխանությունների հրամանով: Այս առումով տեղին է Ստ. Շահումյանի հարցադրումը. «այդ ի՞նչ «բռնի» զինաթափում էր, ինչո՞ւ էր այն կատարվում ոչ թե Թիֆլիսում, այլ Աղստաֆայում ու Ելիզավետպոլի նահանգում, և ինչո՞ւ էր «բռնի» զինաթափության համար Թիֆլիսից զրահապատ գնացք գնում»[535]:

Այսօր, Ստ. Շահումյանին կարող ենք պատասխանել. որպեսզի մահմեդական-թաթարների ձեռքով և աջակցությամբ իրականացվեր այն դժվարին գործը, ինչը վրացիները չէին կարող իրագործել՝ Թիֆլիսից հեռու պահեին և շեղեին բոլշևիկացած Կովկասյան բանակի զորամասերի նահանջի ուղին, որպեսզի թույլ չտային Կոմիսարիատի տապալում և վերջապես՝ պահպանեին ձեռք բերած հեգեմոնիան երկրամասում: Եվ եթե Ստ. Շահումյանը տարակուսանք էր հայտնում Դաշնակցության կապակցությամբ, որի կոմիսարներն այդ նույն իշխանության անդամներն էին, ապա մեզ համար գոնե պարզ է այն հանգամանքը, որ միասնական, «սոցիալիստական» կոչվող կառավարության կազմում հայ ազգային-դեմոկրատական կուսակցությունը և գոնե նրա ղեկավար մեծամասնությունը հակաբոլշևիկյան անթաքույց անհանդուրժողականության ալիքի վրա՝ օբյեկտիվորեն աջակցում էր վրաց-մահմեդական խմբավորմանը, էապես թուլացնելով ազգային շահի պաշտպանության գործը:

2.6. ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՎՄԱՆ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱԳԻՐԸ ԵՎ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1917-1921 թթ. Անդրկովկասի քաղաքական պատմության, Արևմտյան Հայաստանի հիմնահարցի, ազգամիջյան հարաբերությունների, անկախ ազգային պետությունների տարածքային բազմաշերտ խնդիրների հանգույցն ուղղակիորեն կապվում է 1917-1918 թթ. ընթացքում երկրամասում ծավալվող իշխանության համար պայքարի հիմնահարցի հետ:

Այդ խնդրի կիզակետում են Խորհրդային իշխանության այլընտրանքային մարտահրավերի և այդ գաղափարն ու ռազմավարությունը

[535] Ստ. Շահումյան, նույն տեղում, էջ 111:

կրող Ստ. Շահումյանի, Ռոստոմի, Արամի, Անդրանիկի, Հ. Ջավրիյանի, Հ. Բագրատունու և այլոց համաձայնեցված գործունեությունը:

Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծման պահից բոլշևիկների կողմից իշխանության գրավման հարցը Թիֆլիսում դարձավ, ինչպես կովկասյան երկրամասային կենտրոնի, այնպես էլ Բաքվի խորհրդի առաջնահերթ խնդրիը: Այդ գործընթացի առաջին փուլում՝ 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հիմնահարցն առավելապես բարձրացվում էր «հակահեղափոխության դեմ» բոլշևիկների հաղթանակի համատեքստում: 1918 թ. հունվար-մարտ ժամանակահատվածում, երբ որոշակի դարձավ երկրամասային իշխանության վրաց-թաթարական մեծամասնության կողմից հայությանն ու ՀՅԴ-ը մեկուսացնելու միտումը, ի դեմս Ստ. Շահումյանի՝ Բաքվի իշխանության մյուս հայ գործիչների և նրանց տրամադրության տակ եղած ռազմական ուժի հետ համագործակցությունը ձեռք բերեց թեև ժամանակավոր, բայց ազգային նկարագիր:

Սկզբում Կոմիսարիատի գործողությունները արդարացված էին. ամեն ինչ արվում էր, որպեսզի Թիֆլիսում չեզոքացվի բոլշևիկների ազդեցությունը: Դրան կարելի էր հասնել, եթե քաղաքից հեռացվեին բոլշևիկյան զորամասերը, վերահսկողություն հաստատվեր Արսենալի (Զինապահեստ) վրա և վերացվեր բոլշևիկների կազմակերպությունը: Առաջին հարցի կապակցությամբ հետևյալ իրավիճակն էր ստեղծվել: Երբ Թիֆլիս ժամանեց Կարսյան գունդը, այն անմիջապես բոլշևիկյան ագիտացիան հասցրեց Կոմիսարիատի տապալմանն ուղղված կոչերի մակարդակի: Գունդը մնաց քաղաքում, իր ներկայացուցիչներին հիմնականում, ուղարկեց ազգային զորամասեր՝ նրանց աջակցությունը ստանալու կամ գոնե չխոչընդոտելու հանձնարարականներով[536]: Թիֆլիսի բ. և զ. պ. խորհրդի դեկտեմբերի 4-ի (17) նիստում Ն. Ժորդանիան հայտարարում էր, թե նոյեմբերի 23-ին (դեկտեմբերի 6) երկրամասային կոմիտեի բոլշևիկ լիազորներից մեկի կողմից հեռագիր է ուղարկվել Պետրոգրադ՝ իշխանության գրավման բովանդակությամբ: Խոսքը Վ. Լենինին ուղղված Ստ. Շահումյանի երկու՝ նոյեմբերի 23-ի և 25-ի հեռագրերի մասին էր: Նախ՝ Ստ. Շահումյանը Թիֆլիսի կոմիտեի անդամ-լիազոր չէր, ապա և, ոչ անհայտ մարդ Կովկասում, որպեսզի նրա անունը չտրվեր խորհրդի նիստում: Աղավաղվում էր նաև հեռագրի օրը ու դրա հետ կապված՝ բովանդակությունը: «Մենք կարող ենք բանակի օգնությամբ ստիպել կոմիսարիատին՝ ճանաչել ժողովրդական կոմիսարների իշխանությունը: Խնդրում ենք անհապաղ հայտնել, թե ինչպես վարվել»,– հայտնում էր Ստ. Շահումյանը առաջին հեռագրում: Երկրորդում նա ընդգծում էր այն հանգամանքը, որ Կովկասյան բանակի զորամասերը Կոմիսարիատի գործողությունը դիտում են որպես անջատում Ռուսաստանից, ուստի և

[536] Տե՛ս Н.Н. Жордания, За два года, стр. 58.

կրկնում էր գլխավոր հարցադրումը. «Զորքերի և Բաքվի սովետի վրա հենվելով կարելի է տեղական իշխանությանը հարկադրել ճանաչելու ձեր իշխանությունը»[537]: Ստ. Շահումյանն այդպես էլ Վ. Լենինից հստակ պատասխան և աջակցություն չստացավ: Այս հարցի պարզաբանման հարցում մեզ ինչ-որ չափով օգնում է հենց Ն. Ժորդանիան, որը Թիֆլիսի խորհրդի վերոհիշյալ նիստում հավելում էր. «երկրորդ հեռագրում ասվում էր, թե ապարատի մոտ սպասում ենք պատասխանի»[538]: Ավելացնենք, որ պատասխան, և կենսական աջակցության Ստ. Շահումյանը չստացավ նաև 1918 թ. օգոստոս-սեպտեմբեր շրջանում, որի հետևանքով տապալվեց Բաքվի կոմունան:

Չհավատալով բոլշևիկների երկրամասային կոմիտեի մեծամասնության հավաստիացումներին, թե վերջիններս զինված ելույթի մտադրություն չունեն, որ նախընտրությունը տրվում էր ինչպես Բաքվում՝ խաղաղ ճանապարհով իշխանության գրավմանը, Կոմիսարիատը Ն. Ժորդանիայի և մյուս մենշևիկ առաջնորդների գլխավորությամբ, միևնույն է, տագնապ էր ահազանգում: «Երբ մենք իմացանք այդ հեռագրերի մասին, ասում էր Ն. Ժորդանիան,- պարզ դարձավ, որ Թիֆլիսում պատրաստվում է զինված ելույթ»[539]:

Նոյեմբերի 26-ին (դեկտեմբերի 9) մենշևիների երկրամասային և Թիֆլիսի Գործադիր կոմիտեի բյուրոն կանխարգելիչ միջոցներ ձեռնարկեց, կազմակերպվեց կարմիր գվարդիան: Նոյեմբերի 25-ին (դեկտեմբերի 8) հրավիրվեց մենշևիկյան երկրամասային և Թիֆլիսի կոմիտեի արտահերթ նիստ, որտեղ քննարկվեց բոլշևիկյան ագիտացիայի հետ կապված արտակարգ իրավիճակի ստեղծման հարցը և որոշվեց ներդնել բոլոր միջոցները՝ քաղաքացիական պատերազմից խուսափելու նպատակով: Հաջորդ օրը հրավիրվեց բ. զ. և գ. պագամավորների խորհրդի, երկրամասային կենտրոնի և Թիֆլիսի բ. զ. պատգամավորների խորհրդի միացյալ արտակարգ նիստ. նոյեմբերի 28-ին (դեկտեմբերի 12) Թիֆլիսը հայտարարվեց ռազմական դրության մեջ[540]:

Սա իշխանությունը պահելուն ուղղված առաջին քայլն էր:

Նույն երեկոյան Կարսյան գնդին հայտարարվեց, որ նա պետք է *անհապաղ հեռանա Հյուսիսային Կովկաս, որն էլ իրականացվեց նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, քանի որ բոլշևիկյան գունդը զգաց Գործադիր կոմիտեի վճռականությունը*[541]: Դա մենշևիկների առաջին հաղթանակն էր և իշխանությունը պահելուն միտված երկրորդ ձեռնարկը: Հաջորդը՝ Թիֆլիսի Արսենալի գրավման հարցն էր: Անդրկովկասյան կոմիսարիատին և Թիֆլիսի քաղաքային դումային լրջորեն անհանգստացնում էր երկրամասի քաղաքական կենտրոնի գլխավոր զինապահեստի խնդիրը, որի բոլշևիկյան ղեկավարությունը չէր ենթարկվում իշխանություններին և զենք չէր տրամադրում Կոմիսարիատին: Վտանգն առավել իրական է դառնում, երբ ռազմաճակատից սկսում են վերադառնալ բոլշևիկացած զորամասերը: Իշխանությանը ենթակա զորամասերը զինելու նպատակով՝ Գործադիր կոմիտեն զենք է պահանջում և այդ առթիվ գրավոր հրահանգ ուղարկում Արսենալի հրետանային պահեստին: Գործադիր կոմիտեն, իհարկե, գիտեր, որ Արսենալը հսկում են բոլշևիկ-զինվորները, որոնք չեն համաձայնվի հրամանի հետ. դա առիթ էր՝ արդարացնելու հետագա գործողությունները:

Ինչպես և սպասվում էր, Արսենալի պաշտպանները հրաժարվում են հանձնել զենքը: Մենշևիկյան գվարդիան գիշերը հարձակվում և գրավում է հրետանային պահեստը: Դեկտեմբերի 4-ի (17) հայտնի նիստում Ն. Ժորդանիան հայտնում էր, որ նոյեմբերի 28-ին Գործադիր կոմիտեն Արսենալից պահանջել էր 2000 հրացան և ստացել էր մերժում[542]: Արսենալը գրավելու նպատակով մենշևիկյան կենտրոնը շտապ կարգով ձևավորում է հավաքական ջոկատ՝ կազմված «Կարմիր գվարդիայից», վրացական, հայկական և 218-րդ գնդերի զինվորներից: Նոյեմբերի 30-ին (դեկտեմբերի 13) բոլշևիկյան 218-րդ գնդի 4-րդ գումարտակի շուրջ 150 զինվորներ հակահարձակում են իրականացնում, սակայն չստանալով լուրջ աջակցություն՝ վերադառնում են իրենց զորանոցները: Իրադարձությունների նախաձեռնող Ն. Ժորդանիան այդ ամենից եզրակացնում էր, որ «Գործադիր կոմիտեի ջոկատը այդպիսով գնում էր խորհրդային իշխանության դեմ, որ հռչակվել էր Թիֆլիսում»[543]: Բոլշևիկյան երկրամասային կենտրոնը հերթական պարտությունը կրեց: Նույն օրը մենշևիկները Թիֆլիսում ավերեցին «Кавказский рабочий», «Бердзола» և «Банвори крив» թերթերի խմբագրությունները, ծերբակալեցին աշխատակիցներին[544]: 218-րդ գունդը հեռացվեց քաղաքից՝ Տրապիզոն-Էրզրում ուղղությամբ:

Մեկ անգամ ևս վերադառնալով դեկտեմբերի 4-ի նիստին, նշենք, որ Ն. Ժորդանիան այդտեղ մտադրվել էր վերջնականապես վարկաբեկել Ստ. Շահումյանին: Իր ձեռքում թափահարելով Վ. Լենինին ուղղված

---

[537] Ստ. Շահումյան, հ. 4, էջ 45, 47:
[538] Н.Н. Жордания, За два года, стр. 59.
[539] Նույն տեղում:
[540] Տե՛ս Известия совета рабочих и солдатских депутатов гор. Тифлиса, Тифлис, 1917, N 198.
[541] Տե՛ս Н.Н. Жордания, За два года, стр. 59.

[542] Տե՛ս նույն տեղում, էջ 59-60:
[543] Նույն տեղում:
[544] Տե՛ս А.Н. Сургуладзе, Закавказье в борьбе за победу социалистической революции, Тбилиси, 1971, стр. 82:

հայտնի հեռագրերը, նա Մ. Պրժևալսկիի, ամերիկյան հյուպատոս Սմիթի, ազգային զորամասերի ղեկավարների և այլոց ներկայությամբ՝ բոլշևիկներին, մասնավորապես, Ստ. Շահումյանին մեղադրում էր «դավադրության», «բոնապարտիզմի» մեջ: Նիստում հանդես եկած Ստ. Շահումյանը չժխտելով, որ, իրոք, հիշյալ հեռագրերի հեղինակը ինքն է. միաժամանակ, այն արժեքավոր բացահայտումն է անում, որ Թիֆլիսում գտնված «խոշոր» և «լավ զինված» զորական միավորումների ներկայացուցիչները այդ օրերին բոլշևիկյան երկրամասային կոմիտեին առաջարկում էին «երկու օրում ցրել ամբողջ Կոմիսարիատը»[545]:

Բոշևիկների մտադրությունը պարզ էր, սակայն միայն Արսենալի դեպքերը վկայում են, որ նախահարձակ են եղել հակաբոլշևիկյան ուժերը, հատկապես վրացական մենշևիկները, որոնք համակարգված և նպատակային գործողություններով փաստորեն, կարողացան կանխել Թիֆլիսի գրավման առաջին փորձը:

Ինչ վերաբերում էր բոլշևիկներին, ապա Արսենալի գրավման կամ հանձնման խնդրում առկա են երկու մոտեցումներ՝ ա) այն, որ բոլշևիկների երկրամասային և Թիֆլիսի կոմիտեները սխալ են թույլ տվել, ըստ որի իշխանության գրավումն Անդրկովկասում, մասնավորապես Թիֆլիսում, հնարավոր էր իրագործել խաղաղ ճանապարհով, ինչպես Բաքվում և բ) ելնելով նրանից, որ Անդրկովկասում իշխանության գրավման առաջին փուլը շարունակվում էր մինչև դեկտեմբեր՝ մինչև Արսենալի գրավումը և 1918 թ. փետրվարին՝ բոլշևիկյան ցույցի գնդակոծումը Ալեքսանդրյան այգում, հետևաբար՝ Արսենալը համեմատաբար հեշտ հանձնելու փաստը պետք է բացատրել ոչ թե բոլշևիկների ղեկավար խմբի մի մասի մարտավարական սխալներով, այլ այդ ժամանակ երկրամասում առկա մի շարք օբյեկտիվ հանգամանքներով[546]: Կարևորում ենք նաև Ստ. Շահումյանի նոյեմբերի 23-ի և 25-ի հարցումները՝ Թիֆլիսում զինված ելույթի անհրաժեշտության մասին: Ինչո՞ւմ են Կովկասի թիվ 1 բոլշևիկի հարցման պատճառները: Խնդիրն այն տարաձայնությունների մեջ է, որը խորանում էր երկրամասային ու Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեներում, երբ հնարավոր չէր տեղում լուծել զինված ելույթի հարցը, ուստի և Շահումյանը դիմում էր Վ. Լենինի միջամտությանը: Թիֆլիսում չստանալով ղեկավար բոլշևիկների մեծամասնության աջակցությունը, Ստ. Շահումյանը, որը հենց նոյեմբերի 23-ին էր ելիզավետպոլից հասել Թիֆլիս, աշխատում էր իրագործել զինված ապստամբության իր ծրագիրը: Հիմնահարցի գիտակ Հ. Մելիքյանի կարծիքով, Ստ. Շահումյանի հարցումները

[545] Տե՛ս И. Дубинский – Мухадзе, Шаумян, Москва, 1965, стр. 277:
[546] Տե՛ս С.Е. Сеф, նշված աշխատությունը, էջ 337:

չէին լինի, եթե Թիֆլիսում բոլշևիկների ղեկավար խմբի մեծամասնությունը պաշտպաներ զինված ելույթի անհրաժեշտությունը: Եթե դա մարտավարական քայլ լիներ, ապա վճռական պահին պետք է ոտքի հանվեին կայազորն ու բոլշևիկամետ բանվորները և թույլ չտրվեր գրավելու Արսենալը[547]:

Թիֆլիսի բոլշևիկների «սխալները» այլ հիմնավորում էլ ունեն. այստեղ մեկ անգամ ևս դրսևորվում է ազգային գործոնի դերը: Բոլշևիկյան կուսակցության նման միակուռ կառույցն անգամ ճեղքեր էր տալիս Անդրկովկասում: Ոչ միայն վրացի մենշևիկներն էին ազգայնական, այլև վրացի բոլշևիկները: Ստ. Շահումյանի գլխավորությամբ և Կովկասյան բանակի, հիմնականում ռուս զինվորների աջակցությամբ Թիֆլիսի գրավումը դիտվում էր որպես հակավրացական քայլ, առավելապես ոչ այնքան բոլշևիկների, այլ նախ և առաջ հայկական գործոնի հաղթանակ: Թիֆլիսն ուներ Բաքվի փորձը և ճիշտ ժամանակին կարողացավ կանխել պարտությունը: Փաստորեն, Ստ. Շահումյանի դեմ պայքարում և իշխանության գրավման առաջին փուլում վրացական մենշևիկներն ու բոլշևիկները հանդես եկան համատեղ: Ստացվում է, որ վրացական ազգայնականությունն այս պատմական փուլում հաղթեց հայկական ազգայնականությանը: Միտումնավոր կերպով, իհարկե, չօգտագործվեց նաև Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի վճռական դերակատարությունը և նվիրվածությունը Անդրկովկասում իշխանության գրավման գործին:

Թիֆլիսի Արսենալի գրավումը մենշևիկների կողմից գնահատվեց որպես էական ձեռքբերում, քաղաքական հաղթանակ: Ա. Չխենկելին ուրախ լուրը տարածեց երկրամասում. այն ստացավ նաև Երևանի պարետ Ա. Շախաթունին. «Տփխիսում խաղաղ է, եռանդուն միջոցներ են ձեռք առնված, Երկրային Կենտրոնը Կոմիսարիատի համաձայնութեամբ իշխանութիւնը իր ձեռքն է վերցրել: Զինուորական դրութիւն է յայտարարուած: Քաղաքը դատարկում ենք կասկածելի և անհանգիստ տարրերից: Բոլշևիկների դուրս գալը (ելույթը – Վ.Մ.) այս անգամ կարելի է համարել վիժած»[548]:

1917 թ. նոյեմբերի վերջից Թիֆլիսի իշխանության դեմ պայքարի կենտրոն դարձավ նաև Սարիղամիշը, որտեղ ի հաշիվ Կովկասյան ռազմաճակատից թիկունք վերադարձող զորամասերի, գնալով ավելի ու ավելի մեծ թվով բոլշևիկացած զորքեր էին կենտրոնանում:

Սկիզբը դրվեց նոյեմբերի 24-ին (դեկտեմբերի 7), երբ Սարիղամիշի շրջանի գյուղացիական (զինվորների) պատգամավորների խորհրդի

[547] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 428:
[548] Զանգ, 1917, 1 դեկտեմբերի, թիվ 7:

ընդհանուր ժողովում քննարկման դրված Կոմիսարիատի նկատմամբ խորհրդի վերաբերմունքի հարցում՝ հավանության արժանացավ ժողկոմխորհի իշխանությունը ճանաչող բոլշևիկյան բանաձևը[549]:

Սարիղամիշի զինվորների պահանջների մեջ առանձնանում էր այն կետը, ըստ որի մինչև իշխանության վերջնական ամրապնդումը անընդունելի էր համարվում բանակի ցրումը: Այդ բանաձևի հայամետ ուղղվածությունը նրանում էր, որ այդպիսով հնարավոր էր դառնում թեկուզ և բոլշևիկացած բանակի մի մասը պահել Անդրկովկասում, նախ՝ ռազմաճակատը չդատարկելու, թուրքական արշավանքին դիմակայելու և, երկրորդ, Կոմիսարիատի դեմ պայքարելու նպատակով: Բացի Սարիղամիշից, Անդրկովկասյան կառավարության դեմ էին արտահայտվում նաև Ալեքսանդրապոլի, Կարսի, Կաղզվանի և այլ շրջանների զինվորները: Թիֆլիսի իրադարձություններին զուգահեռ, դրանց նախօրեին, Էրզրումում ևս կանխվեց բոլշևիկների հաղթանակը: Նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 2) տեղի ունեցավ Էրզրումի կայազորի զորամասերի ներկայացուցիչների, կուսակցությունների, բանակային կոմիտեի ներկայացուցիչների արտակարգ նիստ, որն ընդունեց հակաբոլշևիկյան որոշում. խորհրդակցությունը անթույլատրելի համարեց զինված ելույթը[550]:

Ուժերի հարաբերակցության տեսակետից Էրզրումից ավելի նպաստավոր վիճակ հօգուտ բոլշևիկների չէր կարելի ենթադրել, սակայն չունենալով դարձյալ կենտրոնից եկող վճռական գործողությունների վերաբերյալ ցուցում, տեղական բոլշևիկները վարանեցին, Պետրոգրադի, Մոսկվայի համեմատ անվճռականություն, առավել ևս, որ արդյունքում Թիֆլիսում մի քանի օր հետո դրության փաստական տերը դարձան մենշևիկները:

Ռազմաճակատում այդ «անվճռականությունը» կարելի է բացատրել նրանով, որ թեկուզ զանգվածային բոլշևիկացման պայմաններում, այնուամենայնիվ առկա էր համապետական շահի, տվյալ դեպքում՝ հսկայական տարածքներ գրաված Կովկասյան բանակի պահպանման ու ռազմաճակատի պաշտպանության գործոնը: Ռուսական բարձր հրահամատարության համար գոնե՝ դա առայժմ հասկանալի, առաջնային և մոտակա խնդիր էր և գերակայում էր՝ երկրամասում իշխանության գրավման հարցի նկատմամբ: Այլ խոսքով, ռազմաճակատային գործոնն ազդում էր անգամ զինվորական զանգվածների վրա, որոշակի կարգապահություն էր պահպանում:

[549] Տե՛ս Кавказский рабочий, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 215:
[550] Տե՛ս РГВИА, ф. 2168, g. 1, q. 485, p. 112:

Ասվածի լավագույն վկայություններից պետք է համարել Կովկասյան գործող բանակի 1-ին՝ Էրզրումի համագումարը[551]: Այն ընթացավ նոյեմբերի 27- դեկտեմբերի 2-ը՝ բանակի երկրամասային խորհրդի և բանակային կոմիտեի նախաձեռնությամբ: Այդ մարմիններում գերակշռում էին էսեռները: Դեռ նոյեմբերի կեսերին, երբ երկրամասային խորհրդում քննարկվում էր Կովկասյան բանակի 2-րդ և ճակատային բանակի 1-ին համագումարների հրավիրման հարցը՝ խորհրդի էսեռա-մենշևիկյան մեծամասնությունը հիմնավորում էր համագումարը շտապ հրավիրելու անհրաժեշտությունը: Նրանց գլխավոր փաստարկն այն էր, որ համագումարի հրավիրումը ձգձգելը կհասցնի նրան, որ բանակն ավելի ու ավելի «կվարակվի բոլշևիզմով»[552]: Վճռական դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ հակառակ ճակատային բանակի կամքի, էսեռներն ու մենշևիկները մեծամասնություն էին կազմում ոչ միայն երկրամասային խորհրդում ու բանակային կոմիտեում, այլև տեղական խորհուրդների ու կոմիտեների մեծ մասում: Համագումարի պատգամավորների մեծամասնությունն ընտրվել էր ոչ թե անմիջականորեն զինվորների, այլ այդ խորհուրդների ու կոմիտեների կողմից: Միաժամանակ, ուշագրավ է, որ էսեռա-մենշևիկյան մեծամասնությունը չկարողացավ մերժել բոլշևիկների կողմից Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը ու դրանով Ռուսաստանից անջատվելը դատապարտող բանաձևը, ինչը ասվածի ուղղակի հիմնավորումն է: Համագումարը պետք է քննարկեր բազմաթիվ հարցեր, ընտրեր նոր բանակային կոմիտե, սակայն Թիֆլիսում դեկտեմբերի 10-ին Կովկասյան բանակի 2-րդ համագումարի բացման պատճառով Էրզրումի համագումարը հասցրեց միայն լսել ընթացիկ քաղաքական իրադրության խնդիրը: Համագումարում էսեռներն ու մենշևիկները ստիպված համաձայնվեցին՝ բոլշևիկացած զորամասերին անհապաղ թույլատրել շարժվելու թիկունք, մինչև Ալեքսանդրապոլի ռազմական շրջանը: Օբյեկտիվորեն ստացվում էր, որ առավել «հեղափոխականորեն» տրամադրված զինվորներին այլևս ոչինչ չէր մնում անել, բացի խորհրդայնացված Ռուսաստանի ռազմա-քաղաքական ուժերին միանալու կոնկրետ գործողություններից:

Իրադարձություններն առավել արմատական բնույթ կրեցին Սարիղամիշում: Այստեղ դեկտեմբերի 5-ին (18) կայացավ կայազորի պատգամավորական ժողովը, որտեղ պետք է ընտրվեին Կովկասյան բանակի 2-րդ համագումարի պատգամավորները: Ըստ Սարիղամիշի կայազորի

[551] Տե՛ս հանգամանորեն, Հ. Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 468-486:
[552] Տե՛ս С.Е. Сеф, Революция 1917 г. в Закавказье, стр. 345-347:

անձնակազմի քանակի, պետք է ընտրվեին 5 պատգամավորներ: Դրանք ընտրվում են ընդունված ուղերձի ոգով, այն է՝ պատգամավորական ժողովը 11 կետից բաղկացած ուղերձում աջակցում էր ժողկոմխորհի իշխանությանը, պահանջում էր Թիֆլիսում ձևավորել Համառուսաստանյան ժողկոմխորհի ներկայացուցչություն, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի ենթարկում գերագույն ժողովրդական գլխավոր հրամանատարին և ըստ այդմ էլ ընտրում բոլշևիկ ու ձախ էսեռ պատգամավորներ[553]:

Անդրկովկասում իշխանության խնդիրը արմատական լուծում պետք է ստանար Կովկասյան բանակի 2-րդ համագումարում:

ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրամասային կոմիտեն նոյեմբերի 30-ին (դեկտեմբերի 13) ռազմաճակատի և թիկունքի զինվորների առջև դնում էր գլխավոր՝ իշխանության հիմնահարցը[554]: Պատահական չէր նաև համագումարի հրավիրումը դեկտեմբերի 10-ին նշանակելու հանգամանքը: Կովկասյան ազգային իշխանությունը հստակ գիտակցելով բանակի տրամադրությունները, ընտրում էր ժամկետ, երբ իշխանության կայացման, բանակի ժողովրդավարական բարեփոխումների միջոցով հնարավոր կդառնար իշխանությանը լիակատար տիրապետելը և երբ համագումարն «անցանկալի» հետևանքներ կունենար՝ նրան հակադրեր կազմակերպված պետական ապարատ և իշխանություն:

Կովկասյան բանակի 2-րդ համագումարը տեղի ունեցավ Թիֆլիսում, 1917 թ. դեկտեմբերի 10-23-ին*: «Այն հրավիրվեց և աշխատեց արտակարգ ծանր իրավիճակում,- գրում էր «Молот» թերթը,- երբ ամբողջ բանակը շարժման և ցնցումների մեջ էր»[555]:

Համագումարի 350 պատգամավորներից 160-ը բոլշևիկ էին, 100-ը՝ էսեռ, 30-ը՝ մենշևիկ, 15-ը՝ ձախ էսեռ, այնուհետև, ըստ ձայների մեծամասնության հաջորդում էին ուկրաինացիները, կազակական խումբը, Դաշնակցությունը և անկուսակցականների մի փոքր խումբ[556]: Համագումարին մենք կանդրադառնանք իշխանության հարցի քննարկումների և ընդունած բանաձևի կապակցությամբ: Անդրկովկասի կառավարությունը չափազանց կարևորում էր բանակային համագումարը, որպես երկրամասում իշխանության խնդրի ջրբաժան: Պատահական չէր, որ բոլշևիզմին վճռական հարված հասցնելու նպատակով, «Կովկասի «պրեմիերը»՝ Գեգեչկորին, մոռացել էր Անդրկովկասի կառավարական իր շա՛տ դժվար պարտականությունները և առավոտից մինչև երեկո, 13 օրվա ընթացքում, առանց բացակայելու նստում էր համագումարում»[557]: Ստ. Շահումյանի վկայությամբ, երբ ինքը համագումարում քննադատում էր «մենշևիկների վրացական նացիոնալիզմը, Գեգեչկորին սկսեց բղավել «պրովոկացիայի» մասին, ռուս զինվորներին վրաց ժողովրդի դեմ գրգռելու և այլնի մասին»[558]: Պարզ է, որ Կոմիսարիատը պետք է պայքարեր բոլշևիզմի դեմ և մեր խնդիրն այստեղ հակառակը հիմնավորելը չէ, բայց միայն այս մասնավոր կշտամբանքն անգամ վկայում է Ստ. Շահումյանի կողմից վրացական մենշևիզմի, որպես երկրամասում գերակշռող ազգային ուժի դեմ անզիջում պայքարի մասին:

Ուշագրավ է, որ քննադատելով Կոմիսարիատը և պահանջելով նրա վերացումը, բոլշևիկ Ստ. Շահումյանը խոսքը չէր ուղղում ոչ հայ և ոչ էլ մահմեդական կոմիսարների դեմ: Կովկասում որպես բոլշևիզմին ընդիմադիր լուրջ քաղաքական ուժ նա տեսնում էր վրացական մենշևիզմը: Դեկտեմբերի 23-ին, համագումարին նվիրված հաղորդման մեջ, Ե. Գեգեչկորիի միջոցով Ստ. Շահումյանի քննադատությամբ հանդես եկավ «Հորիզոնը»: Ե. Գեգեչկորին Ստ. Շահումյանին մեղադրում էր ռուս-վրացական թշնամանք սանձազերծելու մեջ: «Շահումեանի կոչը,– ասում էր նա,– պոգրոմային է և կարելի է համեմատել 1905 թվի կոչի հետ, երբ զինվորներին գրգռում էին վրացիների դեմ, ասելով, թե ուզում են անջատել Ռուսաստանից: Շահումեանի նպատակն է գրգռել ռուս զինվորներին վրաց ժողովրդի դեմ և նրա անամոթությունը չափ չունի, երբ ասում է, թե Վրաստանը ուզում է անջատվել»[559]: Ավելացնենք, որ բանակային 2-րդ համագումարում Ստ. Շահումյանի քննադատությամբ հանդես էր եկել դաշնակցական Մ. Արզումանյանը:

Ե. Գեգեչկորիի վերաբերմունքը պարզ էր, ակնհայտ էր նաև վերջինիս սարսափը Վրաստանի անկախացման ծրագրի մերկացումից: Տարօրինակ էր այն, որ «Հորիզոնը» շուրջ երկու ամիս հետևողականորեն հրապարակում էր վրացական թերթերի հոդվածները, գրում էր Վրաստանի անջատման մասին, և վերջապես վարչական սահմանաբաժանումների ու զեմստվոների հարցի քննարկումների ժամանակ իր մաշկի վրա էր զգացել վրացական դիրքորոշման արմատականությունը: Սակայն

---

[553] Տե՛ս Борьба за победу советской власти в Грузии, Документы и материалы, (1917-1921 гг.), Тбилиси, 1958, стр. 163-166.

[554] Տե՛ս Военно-революционные комитеты действующей армии, Москва, 1977, стр. 566-568:

* Տե՛ս հանգամանորեն, Հ. Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 486-542:

[555] Молот, 1917, 31 декабря, N 64.

[556] Տե՛ս Ստ. Շահումյան, հ. 4, էջ 67:

[557] Տե՛ս նույն տեղում, էջ 67-68:

[558] Տե՛ս նույն տեղում, էջ 68:

[559] Հորիզոն, 1917, 23 դեկտեմբերի, թիվ 270:

բոլշևիզմի դեմ պայքարի սովորական դարձած ալիքի վրա, ցավոք Մ. Արզումանյանի ելույթը դրվում էր Ե. Գեգեչկորիի բացահայտ հակահայկական ճառի նույն հարթության վրա և այդ տեսանկյունից էր քննադատվում Ստ. Շահումյանի դիրքորոշումը: Փաստորեն, անտեսվում էր վրացական մենշևիզմի բացահայտ հակահայկական ազգային քաղաքականությունը, միայն թե «համերաշխ» Կոմիսարիատի կազմում դատապարտվեր բոլշևիզմը, որի վտանգը տվյալ պահին միգուցե շոշափելի չէր և կարելի համեմատել վրաց-թաթարական դաշինքի վտանգի հետ:

«Հորիզոնի» նույն համարում զետեղված էր «Վրաստանի արմատական-դեմոկրատական գյուղացիական կուսակցության» օրգան «Չվենի Ռեսպուբլիկա» (Մեր հանրապետությունը) լրագրի նյութը: Նշվում էր, որ «Վրաստանը շրջապատված է մահմեդական երկրներով, դրանք են՝ Պարսկաստանը, Թուրքիան, Ղրիմը, չեչենների, չերքեզների և լեզգիների երկրները» և այդ հանգամանքից դրդված եզրակացվում էր, որ «Վրաստանը պետք է մերժի ռուսական օրիենտացիան և ամուր կապ հաստատի Կովկասի մահմեդականների ու իր դրացիների հետ: Այժմեան մահմեդականները հների նման չեն, որովհետև ժամանակը մեղմացրել է դրանց բարքերը»[560]:

Առանձնացնելով Կովկասի թաթար-մահմեդականներին, վրացական այս կուսակցությունը ևս, Կովկասի մահմեդականների հետ դաշնակցելու նպատակ էր առաջադրում, նախ՝ անջատվել Ռուսաստանից, քանի որ «Վրաստանի ձեռքը այնքան երկար չէ, որ այդ երկրների վրայով հասնի մինչև ռուսները»[561], ապա և «դրացի» կոչվող, բայց անունը չտրվող հայերի դեմ հանդես գա թաթարների հետ համատեղ: Ստ. Շահումյանի մոտ լրջագույն տագնապ էր առաջացնում այն հանգամանքը, որ հեղափոխական – սոցիալիստական կուսակցություններից ձևավորված Կոմիսարիաը «փքվում էր նրանով, թե նա «սովետական» իշխանություն է հանդիսանում»[562]: Նա նկատի ուներ խորհուրդներում էսեռների և մենշևիկների մեծամասնության գործոնը, ինչը բանակային, ինչպես և երկրամասի բանվորական պատգամավորական խորհրդի համագումարների ընդունած բանաձևերում արմատապես փոխվեց՝ հօգուտ ձախ էսեռների ու բոլշևիկների: Ստ. Շահումյանի կուսակցական մոտեցումը միանշանակ էր. «Կոմիսարիատը տեղին կը լինէր, եթե նա ճանաչեր ժողովրդական կոմիսարների խորհուրդը»[563]: Նման վստահությունը բխում էր համագումարում ձախ էսեռների ու բոլշևիկների ազդեցությունից: Ընթացիկ քաղաքական իրադրության հարցի մասին ընդունվեց նրանց բանաձևը, որը մերժում էր Կոմիսարիատի իշխանությունը և ճանաչում ժողկոմխորհի իշխանությունը: Դեկտեմբերի 21-ին (1918 թ. հունվարի 3) այդ բանաձևի ընդունումով փաստորեն, համագումարը երկրամասում հռչակեց խորհրդային իշխանություն: Ընտրվեց 100 հոգուց բաղկացած երկրամասային նոր խորհուրդ՝ հայազգի բոլշևիկ Գ. Ղորղանյանի (Կորգանով) նախագահությամբ: Իշխանության համար մղվող խաղաղ, բայց անզիջում պայքարի մասին է վկայում ձայների հարաբերակցությունը. Խորհուրդը ներկայացնում էին 52 բոլշևիկներ ու ձախ էսեռներ և 48 հակաբոլշևիկյան ներկայացուցիչներ: Դեկտեմբերի 28-ին (հունվարի 10) Բանակային խորհուրդն ընտրեց Գործադիր մարմին՝ Ռազմա-հեղափոխական կոմիտե, դարձյալ Գ. Ղորղանյանի գլխավորությամբ: Քաղաքական հենարան ունենալու նպատակով ՌՅԿ-ն գործելու էր Բաքվում[564]: Միաժամանակ, հայտնի է, որ Կոմիսարիատը ձեռնամուխ էր եղել նախահարձակ գործողությունների, և, մասնավորապես, Թիֆլիսում: Ինչպես այժմ, այնպես էլ 1918 թ. հունվար-փետրվարին, հատկապես Սարիղամիշի զորամասերի ակտիվացման շրջանում, վրացի մենշևիկներին նկատելիորեն անհանգստացնում էր Թիֆլիսում Ստ. Շահումյանի ներկայությունը: Երբ համագումարում քննարկվեց Հյուսիսային Կովկասում տիրող դրության հարցը և բոլշևիկների առաջարկով որոշվեց այնտեղ ուղարկել արտակարգ լիազորություններով օժտված պատվիրակություն, ուշագրավ է, որ մենշևիկներն ու էսեռները պնդեցին, որ այդ պատվիրակությունը գլխավորի Ստ. Շահումյանը: Դրանով նրանք ձգտում էին ազատվել հեղինակավոր բոլշևիկ ղեկավարից և Հյուսիսային Կովկասում իրապես վտանգել նրա կյանքը: Կռահելով Ե. Գեգեչկորիի մեքենայությունը, համագումարը մերժեց այդ առաջարկը[565]:

Բոլշևիկների առաջարկով որոշվում է նաև հեռագիր ուղարկել Բաքվի խորհրդին՝ հայտնաբերելու և բռնագրավելու 7 վագոն զենքն ու զինամթերքը, որը Կոմիսարիատն ուղարկում էր Հյուսիսային Կովկաս: Այս փաստը ևս վկայում է, որ Անդրկովկասում իշխանության համար պայքարը բացահայտ կերպարանք էր ձեռք բերում և հասնում իր գագաթնակետին նաև այն, որ Կովկասյան ռազմաճակատի ու այդպես՝ Արևմտյան Հայաստանի պաշտպանության համար «հատկացված» զենքն ու զինամթերքը Կովկասյան երկաթուղու հայտնի դեպքերի արդյունքում՝ ուղղվելու էր բոլշևիզմի դեմ պայքարին: Այս հիմնահարցի շուրջն էր բախվում հայության շահը, ձևավորվում մեծ հակասությունը՝ այն, որ բոլշևիկացած զորամասերի ներկայությունը երկրամասում ու Արևմտյան Հայաստանում թեկուզ և ուղղված էին ժողկոմխորհը չճանաչող Կոմիսարիատի իշխանության դեմ, սակայն հենց իշխանության համար պայքա-

[560] Տե՛ս նույն տեղում:
[561] Նույն տեղում:
[562] Տե՛ս Ստ. Շահումյան, հ. 4, էջ 70:
[563] Տե՛ս Հորիզոն, 1917, 24 դեկտեմբերի, թիվ 271:

[564] Տե՛ս М.В. Церцвадзе, նշվ. աշխ.,стр. 297:
[565] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 504:

րի համատեքստում՝ բխում էին հայ ժողովրդի շահերից: Այսպես, իր առջև դրված խնդիրներն իրագործելու նպատակով ՌՀԿ-ն ռազմաճակատի առանձին հատվածներում ստեղծում է տեղական մասնաճյուղեր: Դրանք էին՝ 1. արևելա-պարսկական շրջանը, որի կենտրոնն էր լինելու Էնզելին, 2. Ուրմիայի շրջանը՝ Ջուլֆա կենտրոնով, 3. Վանի շրջանը՝ Շահթախտի կենտրոնով, 4. Էրզրում-Երզնկայի շրջանը՝ Սարիղամիշ կենտրոնով և 5. Տրապիզոնի շրջանը՝ Տրապիզոն կենտրոնով[566]:

Այսպիսով, Կովկասյան բանակի երկրամասային խորհուրդը և նրա նախագահությունը հռչակեց իրեն գերագույն իշխանություն՝ ռազմական կառավարման բնագավառում և բանակի լիազոր մարմին[567]: Հաջորդ օրը խորհուրդը հանդես եկավ Կովկասյան բանակի բոլոր խորհուրդներին, կոմիտեներին ու զինվորներին ուղղված կոչով[568]:

Սակայն, բոլշևիկների «հաղթանակը» թվացյալ էր. խորհրդի հակաբոլշևիկյան խմբավորումը չենթարկվելով մեծամասնությանը, պառակտեց բանակային խորհուրդը, ապա և կարողացավ Թիֆլիսից հեռացնել խորհրդի բոլշևիկյան մեծամասնությանն ու գրավելով բանակային իշխանությունը, իրեն հռչակեց Կովկասյան բանակի խորհուրդ: Այս անգամ ևս, ինչպես և Թիֆլիսի զինապահեստի պարագայում, բոլշևիկյան ղեկավարությունն ուժ չգործադրեց: Չէր բացառվում, որ կենտրոնի բոլշևիկների մարտավարության ոգով հենց համագումարի դահլիճում ձերբակալվեին Ե. Գեգեչկորին, Դ. Դոնսկոյը, Մ. Պրժևալսկին, Վ. Գոբեչիան և այլոք, սակայն ինչպես Թիֆլիսի բոլշևիկյան երկրամասային կենտրոնը, այնպես էլ բանակային համագումարի բոլշևիկյան մեծամասնությունը, տվյալ դեպքում Ստ. Շահումյանը՝ չարեցին դա:

Կարելի է ենթադրել, որ Ստ. Շահումյանը, Գ. Ղորղանյանը և մյուս բոլշևիկ գործիչները դեռ լիովին չէին հրաժարվել իշխանությունը Թիֆլիսում խաղաղ ճանապարհով գրավելու ծրագրից, խուսափում էին երկրամասում քաղաքացիական պատերազմի հնարավոր սանձազերծումից, ապա և՝ չունեին ուժերի բացահայտ առավելություն:

Այդ մասին է վկայում նաև մենշևիկների ու էսեռների նախաձեռնությամբ դեկտեմբերի 19-ին (1918 թ. հունվարի 1) Թիֆլիսում հրավիրված բանվորական պատգամավորների խորհրդի 2-րդ համագումարը: Այն նպատակ ուներ բանակային 2-րդ համագումարին զուգահեռ և այնտեղ կրած պարտությունից հետո՝ բոլշևիկներին հակադրել երկրամասի խորհուրդների էսեռա-մենշևիկյան մեծամասնությունը: Հաշվի էր առնվում հաղորդակցության ուղիների քայքայված վիճակը, ինչպես նաև դրամական միջոցների բացակայության հանգամանքը, երբ Հյուսիսային Կովկասից, Բաքվից և այլ բանվորական կենտրոններից բոլշևիկյան մեծամասնություն ունեցող խորհուրդների ներկայացուցիչները չէին կարող Թիֆլիս հասնել: Հայտարարվեց ներկայացուցչական նորմ՝ 500 բանվորին մեկ պատգամավոր: Երկրամասային կենտրոնի մենշևիկյան ղեկավարության հաշվարկները լիովին արդարացան. ոչ մի շրջանից, բացի վրացական խորհուրդներից, չստացվեց լիարժեք ներկայացուցչություն: Արդյունքում, էսեռներն ու մենշևիկները համագումարում՝ Վրաստանի իրենց համախոհների շնորհիվ ապահովեցին բացարձակ մեծամասնություն: Բավական է ասել, որ միայն Թիֆլիսի նահանգ ուղարկեց 90 պատգամավոր, այսինքն՝ 53 պատգամավորով ավել, քան ուղարկել էր Կովկասի բանվորական կենտրոն Բաքուն[569] (Բաքվի խորհուրդը ըստ ներկայացուցչական նորմի կարող էր գործուղել 160 պատգամավոր, որի համար հարկավոր էր ծախսել 24 հազար ռուբլի[570]): Համագումարի բացման օրը Բաքվի խորհուրդը պահանջեց յուրաքանչյուր պատգամավորին տալ 4 ձայն կամ էլ՝ հաստատել ներկայացուցչական նորմ – 2000 բանվորին 1 պատգամավոր: Մեծամասնությունը մերժեց երկու առաջարկները և այդ պատճառով Եկատերինոդարի, Նովոռոսիյսկի, Սոչիի, Տուապսեի, Վլադիկավկազի, Արմավիրի, Մայկոպի, Բաքվի, Սուխումի, Պետրովսկի, Գրոզնիի, Ելիզավետպոլի նահանգի Գետաբեկի գործարանի, Տիխորեցկի պատգամավորները լքեցին համագումարը: Մնացին Թիֆլիսի ու Քութաիսի նահանգների վրացի պատգամավորները, որոնք արդեն առանց խոչընդոտների անցկացրին բոլոր բանաձևերը[571]: Համագումարից հեռացան նաև Դաշնակցության և Մուսավաթի պատգամավորները[572]:

Ստեղծված քաղաքական իրավիճակը բոլշևիկներին մղում էր վճռական գործողությունների: Դրանով է բացատրվում նաև Սարիղամիշի զորամասերի գրոհի անհրաժեշտությունը 1918 թ. հունվարին:

1917 թ. վերջերին Սարիղամիշը դարձել էր Կովկասյան ռազմաճակատի կարևորագույն հանգույցը: Այնտեղից էին անցնում ռազմաճակատի Բիթլիս-Մուշ-Խնուս-Երզնկա-Էրզրում շրջանների զինվորները, ինչը հատկապես սրում էր Սարիղամիշի վրա բոլշևիկների ուշադրությունը կենտրոնացնելու հարցը: Այստեղ հավաքվել էր 30.000 զինվոր:

---

[566] Տե՛ս Борьба за победу советской власти в Грузии, էջ 178-179:
[567] Տե՛ս Кавказски рабочий, 1917, 28 декабря, N 230:
[568] Տե՛ս Борьба за победу советской власти в Грузии, էջ 176-178:

[569] Տե՛ս М.В. Церцвадзе, նույն տեղում, էջ 313-314:
[570] Տե՛ս Ստ. Շահումյան, հ. 4, էջ 71:
[571] Տե՛ս М.В. Церцвадзе, նույն տեղում, էջ 314-315:
[572] Տե՛ս Ստ. Շահումյան, նույն տեղում, էջ 74:

Հունվարի 6-ին (19) Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Օդիշելիձեն ռազմաճակատի Հատուկ բաժնին հայտնում էր, որ նախորդ օրը Էրզրումի բերդ ամրոցի հրետանային գունդը ինքնակամ հեռացել է քաղաքից, Սարիղամիշում հարկադրել է հրետանային պահեստի հսկիչին բացել այն և հեղկոմի թողտվությամբ բռնագրավել 8 լեռնային հրանոթ, 540 արկ, խլել է հրացաններն ու փամփուշտները: «Իմ կողմից հաստատվել է, որ Սարիղամիշում չկատարվի ՌՀԿ-ի ոչ մի հրահանգ,– հայտնում էր գեներալը,– սակայն Հեղափոխական կոմիտեն հենվելով բոլշևիկյան տրամադրություններ ունեցող զորամասերի վրա, արդեն գրավել է իշխանությունը: Կան լուրեր, որ բոլշևիկները մտադրություն ունեն այդ զորամասերն ուղղել Թիֆլիսի վրա և տապալել Անդրկովկասյան կոմիսարիատը»[573]: Հաջորդ օրը նա Օդիշելիձեն կրկնում է հաղորդագրության լրացված տարբերակը, հավելելով, որ դեռ Էրզրումում տարվում էր իշխանությունը գրավելու ագիտացիան: «Ուժը բոլշևիկների կողմն է»,– անհանգստանում էր գլխավոր հրամանատարը[574]: «Հորիզոնը» փաստում էր, որ ամբոխը հունվարի 6-ի հանրահավաքում կուսակցություններից ոչ մեկին թույլ չտվեց առարկելու բոլշևիկ հռետորներին[575]:

Սկզբում Սարիղամիշում գործում էին երկու կազմակերպություններ՝ զ. և բ. պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեն և ռազմահեղափոխական կոմիտեն, «որոնք չէին հաղորդակցվում և, փաստորեն, առկա էր երկիշխանություն, ավելի ճիշտ լիակատար անիշխանություն»[576]: Թիֆլիսից, պաշտոնական «Кавказское Слово» թերթն անգամ անթաքույց ցանկություն էր փայփայում, որ Սարիղամիշում իշխանությունն անցնի մենշևիկյան խորհրդի գործադիր կոմիտեին: Իրադրությունը միանգամայն պարզ ու անվիճելի էր՝ Փետրվարյան հեղափոխության տրամաբանությամբ և բոլշևիկյան հեղաշրջմանը հակադրվելու արդարացված մոտեցմամբ: Գործադիր կոմիտեն Սարիղամիշում իշխանություն ձևավորելու նպատակով առաջադրում է հանրային կոմիտեի ձևավորման նախագիծ, որի մեջ հավասարապես պետք է մտնեին գործադիր կոմիտեի, սոցիալիստական կուսակցությունների, ազգային խորհուրդների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: «Այդ կոմիտեին պետք է անցնի իշխանությունը Սարիղամիշում,– տագնապով փաստում էր պաշտոնաթերթը[577]: Հունվարի 15-ին (28) նշանակվում է Հանրային կոմիտեի առաջին նիստը, սակայն 42 անդամներից ներկայանում են 14-ը, ինչը մեկ անգամ ևս չեզոք կողմի վկայությամբ հաստատում է այն փաստը, որ իշխանությունն իրոք բոլշևիկների ձեռքում էր:

Սարիղամիշի ՌՀԿ-ն իր առաջնահերթ խնդիրն էր համարում զորամասերի վերադարձի կանոնավորումը, հնարավոր անարխիայի կանխումը: Այդ նպատակով ներկայացուցիչներ են ուղարկվում տարբեր ուղղություններով՝ Էրզրում, Կարս, Ալեքսանդրապոլ և այլուր, կապ է հաստատվում այդ քաղաքների և ՌՀԿ-ների հետ:

1918 թ. հունվարի առաջին շաբաթվա ընթացքում ՌՀԿ-ն ձեռնամուխ եղավ Հյուսիսային Կովկասին միանալու նպատակով 8 էշելոն զինվորներ ուղարկել: Դրանք Աղստաֆա կայարանի մոտ ստիպված մարտի են բռնվում մահմեդական ավազակախմբերի հետ, որոնք (12.000) գերազանցում էին Սարիղամիշից շարժվող զորամասերին: Այդ բանդաները գլխովին ջախջախում են նաև Ելիզավետպոլի մոտ[578]:

Հասկանալի է, որ Սարիղամիշի բոլշևիկյան զորամասերի առաջնահերթ խնդիրը Ռուսաստան վերադառնալն էր: Քանի որ Ռուսաստանը բոլշևիկացել էր, ապա այդ զորամասերն էլ տունդարձի ճանապարհին պետք է հաղթահարեին հակախորհրդային բոլոր ուժերին, իսկ անդրկովկասյան երկաթուղու հակառուսական խռովությունների ու ջարդերի համատեքստում՝ տապալեին Անդրկովկասյան կոմիսարիատը: Պարզ է նաև, որ այդ ամբողջ զորաշարժը հատուկ հայկական քաղաքականություն չուներ: Սակայն հայամետ էր վերջինիս վրաց-թաթարական հակառուսական դաշինքի ջլատման ու չեզոքացման ուղղվածությունը: Եթե մենշևիկներն ու էսեռները ամեն կերպ աշխատում էին այդ զորամասերն ուղղել արևելք, դրանք հեռացնել Թիֆլիսից, Սարիղամիշից, ՌՀԿ-ն, ընդհակառակը՝ կրճատելով Հյուսիսային Կովկաս մեկնող էշելոնների թիվը և կանոնավերելով դրանց երթը, ստեղծեց վստահելի հարվածային ուժ, որը պետք է մտներ Թիֆլիս: Սարիղամիշում զինվորների կողմից գրավվում է նաև փոստային-մարդատար գնացքը[579] և 1918 թ. հունվարի վերջին Սարիղամիշ Թիֆլիս երկաթուղին փաստորեն, անցնում է բոլշևիկների ձեռքը:

Թիֆլիսի իշխանությունները գիտակցում էին, որ Ստ. Շահումյանի և Սարիղամիշի ՌՀԿ-ի վճիռը արկածախնդրություն չէր: 1918 թ. հունվարի 18-ին (31) Թիֆլիսի նահանգային կոմիսար Զափարիձեն Անդրկովկասյան կոմիսարիատին հայտնում էր, որ նահանգում ռազմական դրութ-

---

[573] Борьба за победу советской власти в Грузии, стр. 179.
[574] Տե՛ս նույն տեղում, էջ 180:
[575] Տե՛ս Հորիզոն, 1918, 18 հունվարի, թիվ 11:
[576] Տե՛ս Кавказское Слово, 1918, 26 января, N 20:
[577] Նույն տեղում:

[578] Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 566:
[579] Տե՛ս Հորիզոն, 1918, 1 փետրվարի, թիվ 23:

յուն է հայտարարվել[580]: Նույն օրը, երկրամասի կառավարությունը Ե. Գեգեչկորիին օժտում է արտակարգ լիազորություններով՝ նրա տրամադրության տակ դնելով Անդրկովկասի բոլոր զինված ուժերը[581]: Ներքին գործերի նախարարության գծով կոմիսար Ա. Չխենկելիին Կոմիսարիատը հատկացնում է 60 հազար ռուբլի՝ վրացական ազգային գնդերի մարտունակությունն ուժեղացնելու նպատակով[582]:

Կոմիսարիատին առանձնապես անհանգստացնում էր Ստ. Շահումյանի Թիֆլիս տեղափոխվելու և արտակարգ լիազորություններ ստանձնելու հանգամանքը: Դրանք իշխանության գրավման ուղղակի ազդանշաններ էին:

Խորհրդահայ պատմագրությունն այդ իրադարձությանն ու բոլշևիկների կողմից իշխանության գրավման հիմնահարցին, հասկանալի պատճառներով, միակողմանի գնահատական է տվել: Միայն այն հանգամանքը, որ չեն օգտագործվել Կոմիսարիատի նիստերի արձանագրությունները, արդեն իսկ վկայում է այն մասին, որ խնդիրն ամբողջական լուսաբանում չի ստացել, մանավանդ որ բացակայում էր հայազգի կոմիսարների վերաբերմունքն այդ կապակցությամբ: Իրադարձությունների զարգացումը հետևյալ ընթացքն է ունեցել: «Հունվարի 22-ին,– գրում էր Ստ. Շահումյանը,– գալով Թիֆլիս, ես ստացա ժողովրդական կոմիսարների խորհրդի 1917 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետը, ինձ Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակելու մասին»[583]: Նշանակումը տեղի էր ունեցել դեկտեմբերի 16-ին (29)՝ Ի. Ստալինի կողմից Կովկասի դրության վերաբերյալ զեկուցման հիման վրա, մինչև Կովկասում երկրամասային Խորհրդային իշխանության կազմվելը: Կովկասի Արտակարգ կոմիսարի կարիքների համար ժողկոմխորհը ուղարկում էր 500.000 ռուբլի[584]:

Արտակարգ միջոցներ ձեռնարկելու նպատակով Անդրկովկասյան կոմիսարիատը հունվարի 24-ին (փետրվարի 6) հրավիրվեց հատուկ նիստ, որի քննարկումները լույս են սփռում ոչ միայն երկրամասի իշխանության մարտավարության, այլև Թիֆլիսի բոլշևիկյան երկրամասային կենտրոնի տարաձայնությունների խնդրին: Հարկ ենք համարում կանգ առնել սկզբունքային բոլոր հացադրումների վրա:

Անմիջապես արձագանքելու առաջարկությամբ են հանդես գալիս նախագահ Ե. Գեգեչկորին և Վ. Գոբեչիան: Վերջինս Ստ. Շահումյանի

[580] Տե՛ս Борьба за победу..., стр. 186:
[581] Տե՛ս Кавказское Слово, 1918, 2 февраля, N 26:
[582] Տե՛ս նույն տեղում:
[583] ՀԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 218, թ. 1, նաև՝ Ստ. Շահումյան, հ. 4, էջ 91:
[584] Տե՛ս Խ.Հ. Բարսեղյան, Ստ. Շահումյան, Երևան, 1968, էջ 451, 454, 455:

նշանակումը որակում էր «հանցագործություն, որին օրենքով նախատեսած պատասխան պետք է տրվեր»[585]: Սկզբում անսովոր հանգստություն է ցուցաբերում Ն. Ժորդանիան՝ չտեսնելով անհանգստանալու առիթ: Նա անհանգստացնող էր համարում այն հանգամանքը, որ «վաղուց հրապարակված բոլշևիկյան դեկրետը հայտնվում է այսօր և ակնհայտ է, որ բոլշևիկները հույս են կապում ինչ-որ օգնության հետ. հնարավոր է, որ դա էրզրումի հրետանին է (այն, որ Սարիղամիշի զորամասերն ուղղում էին Թիֆլիսի վրա - Վ.Մ.): Ն. Ժորդանիայի հանգիստ տոնին հաջորդում է թաքնված և ամենաարմատական հարցադրումը՝ «Ի՞նչն է լավ – ծերբակալել Շահումյանին, թե՞ չբարկացնել հրետանային զորամասերը և նրանց ուղեկցել Թիֆլիսից դուրս»[586]: Ինքն էլ եզրակացնում էր, թե «ելնելով բոլշևիկյան երկրամասային կենտրոնի առաջացած պառակտումից և դա խորացնելու անհրաժեշտությունից՝ պետք է առայժմ խուսափել ծերբակալությունից: Մեր կտրուկ միջոցառումները կարող են միավորել նրանց, ինչը վտանգ կներկայացնի Թիֆլիսին»[587]: Ն. Ռամիշվիլիի ելույթը խարսխվում էր բոլշևիկների կողմից իրական սպառնալիքի թեզի վրա, նա գտնում էր, որ Թիֆլիսի վրա հարձակում է նախապատրաստվում: Ն. Ռամիշվիլին առաջարկում էր փաստորեն, բոլշևիկյան կարգախոս. «Հարձակումը շահավետ է, պաշտպանությունը – կործանարար»: Նրանց պետք է զինաթափել՝ թերթերի փակումով, առաջնորդների ծերբակալություններով և այլն: Մեր ուժն ազգային զորամասերն են. չլինեին նրանք՝ այս պալատում կնստեն ժողովրդական կոմիսարների ներկայացուցիչները»[588]: Ուշագրավ է Ն. Ռամիշվիլիի խոստովանությունն այն հարցում, թե «վրացական զորամասերը տատանվում են»: Նա համոզված էր, որ պետք է կիրառել աշխույժ գործողություններ, քանի որ «եթե Շահումյանը որոշել է, ապա նա ոչ մի բանի առջև կանգ չի առնի, մենք նրան գիտենք 16 տարի, նա ֆանատիկ է և կգնա ամեն կարգի սադրանքի»[589]: Ամբողջ հարցը նրանում էր, որ այդ «սադրանք» կոչեցյալը եթե կործանարար էր վրացական մենշևիկների համար, ապա մեր կարծիքով բարենպաստ էր Կովկասի հայության համար:

Հատկապես տագնապ էր առաջացնում այն կանխատեսումը, որ բոլշևիկյան զորամասերը, եթե շարժվեին Ալեքսանդրապոլ, ապա իրավիճակն, անշուշտ, կբարդանար: Ն. Ռամիշվիլիին մի կողմից ոգևորում էր այն փաստը, որ բոլշևիկների ու մենշևիկների միջև անդունդը վերջնա-

[585] ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л. 51.
[586] Նույն տեղում:
[587] Նույն տեղում:
[588] Նույն տեղում, с. 51 об.
[589] Նույն տեղում:

կանապես կուրվագծվի, իսկ մյուս կողմից՝ նրան սարսափեցնում էր բոլշևիկների հաղթանակի դեպքում սպասվող հաշվեհարդարը[590]: Նա ևս համոզված էր, որ զորամասերի «հայտնի մասը» կշարժվի Թիֆլիսի վրա: Ե. Գեգեչկորին գտնում էր, որ եթե Կոմիսարիատի կողքին նոր իշխանություն հռչակվի, ապա բոլշևիկներն իրենց կարգախոսներով կպառակտեն նաև իշխանության ճամբարը, ոտքի կհանեն տատանվող զորամասերին, նա առաջարկում էր՝ ա) փակել թերթերը, բ) ճնշում գործադրել բոլշևիկյան ղեկավարների վրա: «Եթե Անդրկովկասյան կոմիսարիատը զրկվի ուժով պատասխանելու հնարավորությունից,– ասում էր նա,– ապա նա ոչ մի դրպե չպետք է մնա իշխանության ղեկին»[591]:

Կարծիքների հաջորդ խումբը վերաբերում էր Կոմիսարիատին հավատարիմ հակաբոլշևիկյան ռազմական ուժերի միավորման ու մեկտեղման հիմնահարցին:

Պարենավորման նախարարության գծով կոմիսար, մենշևիկ Գ. Տեր-Ղազարյանի արմատական հարցադրումը, թե «մենք կամ Շահումյանը. մի քանի օրից Թիֆլիսը, Բաքուն, Կարսը կդառնան բոլշևիկյան քաղաքներ», ավելի է սրում առանց այն էլ տաք քննարկումը: Ըստ նրա, ինչպես հայկական, այնպես էլ վրացական ազգային զորամասերում առկա են քայքայման տարրեր: Նա համոզված էր, որ բոլշևիկները պլան ունեն, ուստի անհրաժեշտ է փակել Թիֆլիսի մուտքը և պատրաստվել մարտի: Երկրամասային էսեռա-մենշևիկյան բանակային խորհրդի նախագահ Ա. Մալխազովը ևս հույսեր չէր կապում Թիֆլիսի կայազորի հետ, հատկապես, վրացական զորամասերի ապակազմավորման գործընթացի հետ կապված: «Մենք կարող է մնանք առանց բանակի,– ասում էր նա,– պարտիզանական ջոկատները մեզ չեն ենթարկվում, մենք չէինք կանխատեսել էշելոնների շարժը. կռիվը վճռական կլինի, վախենում եմ, որ մենք կպարտվենք, ուստի դեմ եմ վճռական գործողություններին»[592]: Հակասական էին այս առումով Ա. Մալխազովի ու գեներալ Մդիվանիի տվյալները: Եթե առաջինը մեծ վտանգ էր տեսնում 66-րդ դիվիզիայի գործողությունների մեջ, ապա Մդիվանին, հակառակը՝ գտնում էր, որ այդ նույն զորամիավորումը լիովին քայքայված է, նրա կազմի մեջ մտնող Ախուլգինյան գունդը ոչ մի վտանգ չէր ներկայացնում, իսկ Էրզրումի գնդի կազմում էլ մնացել էին ընդամենը 600 զինվորներ ու 56 հրանոթ: Նա հանգստացնում էր ներկաներին, որ Շահումյանը դրսից սպասվող իրական ուժեր չունի և միգուցե հույսը դրել է Կոմիսարիատի զինուժի վրա:

[590] Տե՛ս նույն տեղում:
[591] Նույն տեղում, թ. 52:
[592] Նույն տեղում, *ll.* 52 об — 53:

Այդպիսիք էին համարվում 1 հայկական, 2 վրացական վաշտերը, 2 վրացական հրետանային մարտկոցները, 2 հեծյալ գնդերը: Միաժամանակ նա տարակուսանք էր հայտնում, որ երբ «մոտ օրերս անհրաժեշտ եղավ ի մի բերել բոլոր ուժերը, պարզվեց, որ ունենք 800 զինվոր, 1,5 էսկադրոն և 6 լեռնային հրանոթ»[593]: Այնուհետև նա հավելում էր, որ միջոցներ արդեն իսկ ձեռնարկվել են և այդ 800 զինվորներն ու մարտկոցը դիրքեր են գրավել Սողանլուղ երկաթուղային կայարանի մոտ, որ ճանապարհը ականապատված է: Առանձնահատուկ ագրեսիվությամբ էր առանձնանում Լ.-բ. Բեհբութովի խոսքը, որն իր ամբողջության մեջ Շամխորի դեպքերի բացահայտումն էր կրում: «Մեր վրա բանակ է գալիս, իսկ մենք անգործության ենք մատնված,– ասում էր թաթար ներկայացուցիչը,– *Շահումյանի բոլոր ուժերը անխնա կերպով պետք է բռնագրավվեն. պետք է կիրառել բոլոր միջոցները. այդպիսի տասնյակ էշելոններ ենք ջարդել Շամխորի մոտ – չենք վախենում*»[594] (ընդգծումը մերն է - Վ. Մ.): Հիացմունքի արժանի դիվանագիտություն է ցուցաբերում Ն. Ժորդանիան, երբ տվյալ դեպքում եսասիրական անհրաժեշտությունից դրդված շողոքորթում էր հայերին, դաշնակցական կոմիսարներին, հայտարարելով որ հայկական գնդերը պատրաստ են գործողությունների, որ նրանք առավել կարգապահ ու քայքայման չենթարկվող զորամասերն են:

Գովեստի խոսքերը հավասարազոր էին կշտամբանքի, այն իմաստով, որ այդ «կարգապահ հայկական զորամասերը» Կոմիսարիատի իրական նախագահ Ն. Ժորդանիան Շահումյանով ու բոլշևիզմով վախեցնելով՝ պատանդ էր պահում Թիֆլիսում: Հայկական գնդերի մեծ մասը, որոնք այդ պահին ավելի պահանջված էին Երզնկայի ու Էրզրումի պաշտպանության գործում, փաստորեն, իրականում պաշտպանում էին վրացական մենշևիկների իշխանությունը Թիֆլիսում: Ցավալի էր, որ հայ կոմիսարների կողմից Ստ. Շահումյանի հանդեպ դրսևորվող կուսակցական ատելությունը ոչնչով չէր տարբերվում առայժմ, վրացական ու թաթարական գործիչների խոսքից ու գործից:

Վստահաբար կարող ենք ասել, որ հենց այս պահին էր որոշվում հայկական ազգային-քաղաքական շահի հիմնահարցի ճակատագիրը: Այս քննարկումներում էր վրացական մենշևիզմը հետևողական հաղթանակ շահում: Իրապես սարսափելով ու ատելով Ստ. Շահումյանին և՛ որպես հայ, և՛ որպես առավել հեղինակավոր քաղաքական գործիչ և վերջում միայն՝ որպես բոլշևիկ ու Բաքվի խորհրդի նախագահ (տվյալ դեպ-

[593] Նույն տեղում, թ. 53:
[594] Նույն տեղում, *л.* 52 об.

քում այլընտրանքային իշխանության դեկավար Կովկասում – Վ. Մ.), Ն. Ժորդանիան քամահրանքով էր վերաբերվում Ստ. Շահումյանի նկատմամբ, ծաղրում էր նրան: Տվյալ դեպքում անհիմն էին նրա եզրահանգումները, թե «բոլշևիկների հրետանին կարող է քանդել Թիֆլիսը, բայց չի կարող իշխանություն հաստատել. ինքներս մեզ չվախեցնենք. Շահումյանը պարզապես արկածախնդիր է. Խլեստակովին իրական ռեվիզորի տեղ չպետք է ընդունել» և այլն[595]:

Միաժամանակ, բազմաթիվ ելույթներից, ինչպես օրինակ, արդարադատության նախարարության գծով կոմիսար Շ. Ալեքսեև-Մեսխիևի, Ե. Գեգեչկորիի, Ն. Ռամիշվիլիի և այլոց, պարզվում է, որ իրենք իսկ՝ Կոմիսարիատի կոմիսարները վստահ չէին անդրկովկասյան իշխանության թմբկահարված ուժի վրա, մի բոլշևիկ – Շահումյանի Թիֆլիս մտնելու հետ էին կապում կառավարության կործանման իրական փաստը: Դրանում է կայանում և այս քննարկումների գլխավոր քաղաքական հետևությունը, այն որ Անդրկովկասյան կոմիսարիատն իր մեծամասնությամբ իրոք պատրաստ էր զիջել իշխանությունը և միայն մի քանի վրացի գործիչների վճռական ու բոլշևիկյան կենտրոնի անվճռական դիրքորոշումն էր, որ կանխեց այդ գործընթացը: Շ. Ալեքսեև-Մեսխիևը գտնում էր, օրինակ, որ «այնպիսի պահ ենք ապրում, երբ ամենափոքր հավաքական ուժը կարող է չարիք պատճառել», այսինքն՝ տապալել Կոմիսարիատի իշխանությունը[596]: Այդ առումով առավել սթափ մոտեցում էր ցուցաբերում Ն. Ռամիշվիլին, որը Բաքվում Ստ. Շահումյանի հետ տևական շփումների արդյունքում, ավելի լավ էր ճանաչել այդ գործչին և մերկապարանոց ատելությամբ չէր լցված, ինչպես Ն. Ժորդանիան: «Շահումյանի արկածախնդրությունից Ն. Ժորդանիան բոլոր հետևությունները չէ, որ անում է,– նշում էր նա,– պետք է հաշվի առնել բնակչության սրված ատելությունը: Կարող է օգտագործվել երկաթուղային, փոստային ծառայողների դժգոհությունը, ռուս քաղքենիների չարությունը, պարենային կրպակների, Քաղաքային Դումայի, վրդովված դուքանչիների և այլոց կուտակված ատելությունը: Շահումյանը հիմար չէ, նա կարող է պարենային հարցի վերաբերյալ դեկրետ հրապարակել, հայտարարել բանակի զորացրում էլ չենք ասում մասսաների վրա ազդեցություն թողնելու նրա կարողության մասին»[597]: Ակնհայտ էր բոլշևիզմի իրական վտանգի հանդեպ ունեցած մենշևիկ առաջնորդի վախը, բոլշևիկյան վարակիչ կարգախոսների ազդեցության ուժը: Միաժամանակ սարսուռ է առաջացնում և

[595] ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л. 52 об. .
[596] Տե՛ս նույն տեղում:
[597] Նույն տեղում, թ. 53:

մերկացնում նրան ու ի դեմս Ն. Ռամիշվիլիի՝ վրացական մենշևիզմի բացահայտ հակահայկական ռեպլիկը, թե հնարավոր «այս կամ այն տեսքով կազմակերպված ջարդը (погромчик) չի ստացվի[598]: Եվս մի մերկացում ոչ վաղ անցյալի՝ 1905-1907 թթ. հայ-թաթարական ընդհարումների պատմությունից: Ն. Ռամիշվիլին առաջարկում էր գործել անհապաղ, այլապես ուշ կլինի. «անգործությունը կխարխլի Անդրկովկասյան կոմիսարիատի առանց այն էլ ընկած վարկը»[599]: Ա. Մալխազովն ավելացնում էր, որ «Թիֆլիսի իշխանությունը ոչ մի հեղինակություն չունի և մեր դեմ զորամասեր հանելը դժվար է»[600]:

Նիստի ավարտական մասում արվում են առավել արմատական առաջարկներ: Վճռական գործողությունների երկրորդ փուլի սկիզբը դնում է Ե. Գեգեչկորին: Նա նախ՝ կշտամբում էր Ն. Ժորդանիային, վերջինիս վստահությանն ու սարկազմին հակադրելով գործողություններ, այլապես «ծիծաղելի վիճակում կհայտնվենք մենք և ոչ թե Շահումյանը»: Նա պնդում էր երեք հարցում՝ ա) ապահովել Թիֆլիսի մուտքի (Սողանլուղի կայարանի) անվտանգությունը, բ) Շահումյանին իր գրասենյակի հետ միասին ձերբակալել և դատի տալ, գ) թերթի փակման հարցում սպասել:

Ի. Կարցիվաձեն իրական համարելով Շահումյանի պլանի սոցիալական ու ռազմական հիմքը, առաջարկում էր վերջինիս հեռացնել Թիֆլիսից ու Անդրկովկասի սահմաններից: Կանտեմիրովը միանալով Ե. Գեգեչկորիի և Ն. Ռամիշվիլիի տեսակետներին, գտնում էր, որ «այսօր իսկ պետք է խնդիրը արմատապես լուծվի. անհրաժեշտ է 1) Շահումյանին, Ն. Կուզնեցովին (Ստ. Շահումյանի քարտուղարը – Վ.Մ.) և մյուսներին ձերբակալել, 2) թերթը փակել, 3) բոլոր հոսանքների միահամուռ ուժերով հակահարված տալ»[601]:

Վերջում լսվում են Ն. Ժորդանիայի և Թիֆլիսի բ. և գ. պատգ. խորհրդի Գործադիր կոմիտեի նախագահ Մախարաձեի հանգստացնող առաջարկները: Ն. Ժորդանիայի ելույթում մի կողմից առկա էր արկածախնդրության տարրը՝ բոլշևիզմի իրական ուժը, այդ թվում և Բաքվում անտեսելու իմաստով, մյուս կողմից իրադարձությունների զարգացման արդյունքի համատեքստում՝ նաև սթափ և կշռադատված մոտեցումը: Նա Անդրկովկասում չէր տեսնում Կոմիսարիատին հակադիր այլ իշխանություն: «Մեկ մարդը,– նշում էր նա,– առանց ապարատի, առանց մարմինների – իշխանություն չէ: Իշխանությունն ինստիտուտ է, իսկ Շահումյանը՝

[598] Տե՛ս նույն տեղում:
[599] Նույն տեղում:
[600] Նույն տեղում:
[601] Նույն տեղում, թ. 53 об.-54:

ժողովրդական կոմիսարների խորհրդի ագենտ է: Վախենամ, որ մենք ծիծաղելի վիճակի մեջ ընկնենք ու հրանոթներից կրակենք ճնճղուկների վրա»[602]: Դարձյալ հակասական էր նրա համոզվածությանն այն հարցում, թե այդ էշելոնների մեջ ոչ մեկը, չունենալով բնակչության մեջ հենարան, հանուն Շահումյանի կվտանգի իրեն: Միանգամայն անհիմն էր նաև Ն. Ժորդանիայի համոզվածությունը, թե Բաքվում ևս բոլշևիկները ոչ մի հենարան չունեն[603]:

Մախարաձեն գտնում էր, որ եթե երկրամասում առկա է բոլշևիզմի ուժեղացում, ապա մեխանիկական միջոցներով ոչինչ անել հնարավոր չէ, նրանց վերջին ելույթը անհույս մարտավարություն էր: Որպես ասվածի ապացույց նա վկայակոչում էր բանակային կոմիտեի պառակտման գործոնը և չէր սխալվում: «Դա հոգեվարք է,– ընդգծում էր նա,– մեր վիճակը շատ բարենպաստ է. բոլշևիզմը չի ուժեղանում, քաղքենու դժգոհությունը դեռ բոլշևիզմ չէ»[604]:

Այնուհետև ի մի են բերվում քննարկումներից բխող երեք առաջարկներ՝ 1) Ն. Ժորդանիայի – չշտապել ռեպրեսիվ միջոցների հարցում, կազմակերպել պատասխան և համարժեք գործողություններ, 2) Ե. Գեգեչկորիի – ձերբակալել Ստ. Շահումյանին և 3) Ի. Կարձիվածեի - աքսորել նրանց:

Ֆ. Խան-Խոյսկին, որը լռել էր քննարկման ժամանակ, առաջարկում է մինչև առավոտ հարցը հետաձգել և հրավիրել Անդրկովկասյան կոմիսարիատի բոլոր անդամներին: Հատուկ փաստվում է այն հանգամանքը, որ «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչները բացակայում են:

Որքան էլ որ տարօրինակ է՝ ձայների 5 կողմ և 2 դեմ հարաբերակցությամբ, ընդունվում է Ֆ. Խան-Խոյսկիի առաջարկը, որոշում չի կայացվում և հարցը հետաձգվում է հաջորդ օրվան[605]:

Կոմիսարիատի հաջորդ նիստը, հունվարի 25-ին (փետրվարի 7), անցավ դռնփակ և գրեթե ամբողջությամբ նվիրվեց Ստ. Շահումյանի ձերբակալության խնդրին[606]:

Վիճաբանությունը սկսվում է Խ. Կարձիկյանի ելույթից. նա գտնում էր, որ քանի դեռ Սարիղամիշից դուրս եկած էշելոնները չեն շարժվել Թիֆլիսի վրա, ցանկալի չէ դիմել բռնի միջոցների և կարելի է բավարարվել նրանով, որ Ստ. Շահումյանի ծրագիրը որակվի որպես ուղուրպացիա: Նրա ձերբակալումը Խ. Կարձիկյանը համարում էր մարտավարական սխալ: Ընդգծելով Կոմիսարիատի ուժի բացակայության գործոնը, Տ. Գեորբեկյանը ևս մերժում էր ձերբակալությունը, հատկապես դրա իրականացման և նոր բարդությունների առաջացման տեսանկյունից: Մենշևիկ Գ. Տեր-Ղազարյանը կրկին պահանջում էր Ստ. Շահումյանի նկատմամբ ռեպրեսիվ միջոցներ ձեռնարկել և այս հարցում լիովին համերաշխ էր իր վրացի գործընկերների հետ: Ձերբակալման օգտին էին խոսում նաև Շ. Ալեքսեև-Մեսխիևը, Ն. Ռամիշվիլին, Ե. Գեգեչկորին, Մ. Արզումանյանը, Ա. Չխենկելին: Ուշագրավ է, որ մահմեդական կոմիսարներն այդ նիստում խուսափում էին գլխավոր հարցադրումից, չէին խոսում Ստ. Շահումյանի մասին և առավելապես բարձրացնում էին Կոմիսարիատի հրաժարականի խնդիրը: Աջ էսեռ Ա. Ներուչևը տարակուսանք էր հայտնում Ստ. Շահումյանի գործողությունների վճռականության հարցում և նույնիսկ Թիֆլիսի Արսենալի գործում մեղադրում էր՝ որքան էլ տարօրինակ է, ոչ թե բոլշևիկներին, այլ մենշևիկներին: Քաղաքական շանտաժով, միաժամանակ, իրականության գիտակցությամբ էր հագեցած Ե. Գեգեչկորիի եզրակացությունը, այն է՝ «եթե մենք ուժ չունենք ձերբակալելու Շահումյանին, ապա մեր քաղաքական պարտքն է հեռանալ»[607]:

Անհրաժեշտ է նշել, որ զուգահեռաբար լուծվում էր Անդրկովկասի նոր կառավարության՝ Սեյմի ձևավորման հարցը, ինչը ավելի էր սրում երկրամասում իշխանության հարցը: Հունվարի 28-ին (փետրվարի 10), Սեյմի բացման օրը, բոլշևիկները փորձեցին հակադրել խորհրդային իշխանության այլընտրանքը: Թիֆլիսի գ. և բ. պատգամավորների խորհրդի բոլշևիկյան խմբավորումը բանաձև ընդունեց՝ Կովկասում խորհրդային իշխանության կազմակերպման մասին: Դրան հասնելու ճանապարհը համարվում էր Սեյմի փոխարեն գ.բ.գ. պատգամավորների խորհրդի արտակարգ համագումար հրավիրելը[608]: Հունվարի 31-ին (փետրվարի 13) Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս տեսավ «Ժողովրդական կոմիսարների խորհրդի Կովկասյան տեղեկագրի» առաջին և միակ համարը: Ստ. Շահումյանը դիմում էր Անդրկովկասի ժողովուրդներին՝ անհապաղ խորհրդային կարգեր հաստատելու կոչով[609]: Կոչը ստանում է իրական արձագանքներ. Անդրկովկասյան կոմիսարիատի տապալման վերաբերյալ բանաձևեր են ընդունվում երկրամասի բազմաթիվ ձեռնարկություններում, սկիզբ են առնում հակակառավարական բանվորական, զինվո-

---

[602] Նույն տեղում, թ. 54:
[603] Տե՛ս նույն տեղում:
[604] Նույն տեղում, թ. 54 շրջ.:
[605] Նույն տեղում:
[606] Տե՛ս նույն տեղում, թթ. 101-104:

[607] Տե՛ս նույն տեղում, թթ. 101-102:
[608] Տե՛ս Кавказский рабочий, 1918, 31 января, N 23:
[609] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 224, թ. 1-6:

ական, գյուղացիական ելույթներ, մասնավորապես Անդրկովկասի վրացական ու թաթարական շրջաններում՝ Թիֆլիսում, Գորիում, Թելավիվում, Ձիրուլիում, Փոթիում և այլուր[610]: Հետևում են նաև Ստ. Շահումյանի ձերբակալման դեմ բողոքներ: Կոմիսարիատի այդ քայլը դատապարտում էր նաև Թիֆլիսի հայ բոլշևիկների բազմամարդ հանրահավաքը՝ հունվարի 26-ին (փետրվարի 8): Ընդունված որոշման մեջ արձանագրվում էր, որ դրանով «սկիզբ է դրվում քաղաքացիական պատերազմին»[611]:

Մեկուսացնելով Ստ. Շահումյանին, Կոմիսարիատը ձեռամուխ է լինում վճռական և արմատական քայլերի. փետրվարի 8-9-ի ընթացքում ձերբակալվում են բոլշևիկյան կուսակցության Կովկասյան երկրամասային կոմիտեի անդամները, փակվում են «Кавказский рабочий», «Брдзола», «Банвори крив» թերթերը: Թիֆլիսում բոլշևիկների նկատմամբ վերջնական հաղթանակն արձանագրվում է Ալեքսանդրյան այգու խաղաղ ցույցը գնդակահարելու և ցրելու հանգամանքով[612]:

Սեյմի բացման օրը, լսելով նույն օրը տեղի ունեցած «Ալեքսանդրյան այգու ողբերգության» մասին Ն. Ժորդանիայի ելույթը, բ. և գ. պատգամավորների Թիֆլիսի խորհրդի Գործադիր կոմիտեն փաստորեն, գործն ավարտելուց հետո որոշում է «սկսել մանրազնին հետաքննություն, ընտրել հանձնաժողով և դատել մեղավորներին»[613]: Բացարձակ սուտ էին Ն. Ժորդանիայի արդարացումները՝ Գործադիր կոմիտեի անտեղյակության վերաբերյալ: Ակնհայտ էր, որ բոլշևիկյան ցույցի գնդակոծությունն ուղղված էր հենց Ստ. Շահումյանի կողմից Թիֆլիսի գրավման ու Կոմիսարիատի տապալման ծրագրի դեմ: Վրացական մենշևիկների նախահարձակ մարտավարությունը, որը մշակվեց Կոմիսարիատի հունվարի 24-ի և 25-ի նիստերում, փաստորեն հաղթեց: Դա վկայում էր նաև, որ Ն. Ժորդանիայի և մյուսների կողմից առաջարկվող «ոչ ռեպրեսիվ» մեթոդների կիրառման շեշտումը պարզապես հմուտ դիվանագիտություն էր: Բոլշևիկյան կուսակցությունը հայտարարվեց օրենքից դուրս, անցավ ընդհատակ ու տեղափոխվեց Բաքու[614]: Մինչ վրացական մենշևիկները գործում էին և նվաճումներ ձեռք բերում, փետրվարի 14-ին (27) Վ. Լենինը Ստ. Շահումյանին հեռագրում էր, թե «մենք հիացած ենք Ձեր ամուր և վճռական քաղաքականությունից» և խորհուրդ էր տալիս «դրան միացնել զգուշավոր դիվանագիտություն, օգտագործել կոնֆլիկտները, սովորել դիվանագիտություն»[615]: Հետաքրքիր է, թե ինչո՞ւ այդ խորհուրդները չէին տրվում 1917 թ. նոյեմբերին, 1918 թ. հունվար-փետրվարին և հատկապես Թիֆլիսի վրացի բոլշևիկներին, որոնց «տատանումները», հիմնականում, ձախողեցին այդ ծրագիրը:

Որոշակի հակասություն էր պարունակում նաև Դաշնակցության պահվածքը Թիֆլիսում: Մի կողմից բավական որոշակի է հայ ազգային կուսակցության պահվածքը Կոմիսարիատի նիստում, որտեղ քվեարկության էր դրվել Ստ. Շահումյանի ձերբակալման հարցը և դաշնակցական կոմիսարները հեռացել էին դահլիճից: Մյուս կողմից, կուսակցությունը փետրվարի 1-ին (14) Թիֆլիսում կազմակերպում է հայկական ազգային գնդերի շքերթ, որոնք իրենց հավատարմությունն են հայտնում Անդրկովկասյան կոմիսարիատին: «Փետրվարի 1-ին հայկական գնդերի զորատեսակատարվեց պալատի մոտ: Առաջնորդությամբ շտաբ - ռոտմիստր Փիրումյանի, զորքը լավ զինված, օրինակելի կարգապահությամբ եւ հայկական քայլերգով հասավ պալատ, որտեղից դուրս եկան Անդրկովկասեան կոմիսարիատի նախագահ Գեգեչկորին, ֆինանսների մինիստրութեան կոմիսար ընկ. Խ. Կարճիկյանը և ուրիշներ»: Ե. Գեգեչկորին հայկական գնդերի հետ էր կապում նվաճված ազատության ապահովումը[616]:

Միաժամանակ, Կոմիսարիատի հունվարի 31-ի (փետրվարի 13) նիստում, Ե. Գեգեչկորին անդրադառնալով անդրկովկասյան իշխանության հասցեին տրվող քննադատության խնդիրն, Դաշնակցության «Молот» թերթի մի հրապարակման միջոցով հանդիմանում էր նաև հայ ազգային գործիչներին, Դաշնակցությանը: Խ. Կարճիկյանի պատասխան հատարարությունը մեզ այստեղ հետաքրքրում է այնքանով, որքանով դա առնչվում էր իշխանություն-Շահումյան հիմնահարցին: «Հայ դեմոկրատիան բազմաթիվ առիթներ ունի դժգոհելու Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունից, բայց քանի դեռ Դաշնակցության ներկայացուցիչները գտնվում են Կոմիսարիատի շարքերում, կուսակցությունն ամեն կերպ կաջակցի նրան»[617]:

Եթե նկատի ունենանք, որ «Молот» թերթի՝ Կոմիսարիատի քաղաքականության դեմ ուղղված հրապարակումը թվագրված էր հունվարի 27-ով (փետրվարի 9), այսինքն՝ Սեյմի բացման ու Ալեքսանդրյան այգու իրադարձությունների նախօրեին, ապա որոշակի է դառնում այն կարևորագույն հանգամանքը, որ Կոմիսարիատի վրաց-թաթարական ղեկավա-

---

[610] Տե՛ս նույն տեղում, էջ 200, 201, 223, 224, 232:
[611] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 220, թ. 1:
[612] Տե՛ս Борьба за победу..., стр. 212-213, 214:
[613] Տե՛ս Н.Н. Жордания, За два года, стр. 62-63:
[614] Տե՛ս А. Ставровский, Закавказье после Октября, М.-Л., 1925, стр. 11:

[615] Տե՛ս Борьба за победу..., стр. 223:
[616] Տե՛ս Հորիզոն, 1918, փետրվարի, թիվ 25:
[617] ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, л. 70.

ությունը՝ հայազգի Ստ. Շահումյանի դեմ վճռական գործողությունների նախաշեմին, փորձում էր իր համար վերջնականապես պարզել Դաշնակցության դիրքորոշումը:

Ե. Գեգեչկորիի հարցադրման ուղղվածությունն այն էր, որ ստեղծված ճգնաժամային քաղաքական պահին, երբ Կոմիսարիատում ընդգրկված կուսակցությունները պետք է ամեն կերպ աջակցեին կառավարությանը, որոշ կուսակցական օրգաններ (նկատի ուներ ՀՀԴ Թիֆլիսի գլխավոր մարմին «Молот» թերթը – Վ.Մ.) «զբաղված են Անդրկովկասյան կոմիսարիատի կտրուկ և անարդար քննադատությամբ, ինչպով վերջնականապես վարկաբեկում են իշխանությունը և դրանով ձեռք են տալիս անպատասխանատու բոլշևիկյան շրջանակներին»[618]: Ե. Գեգեչկորիի դիվանագիտական ձևակերպումների տակ թաքնված էր որոշակի մեղադրանք՝ Դաշնակցություն-Շահումյան կապի վերաբերյալ: Կորյուն Դազազյանն արդարանում էր նույնիսկ, որ «Молот» թերթի հոդվածում քննադատվում էր սոսկ Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը, առանց երկրամասային իշխանության դեմ կոչերի և հավաստիացնում էր, որ Դաշնակցություն կուսակցությունը երբեք չի ունեցել և նպատակ էլ չունի այս կամ այն կերպ աջակցել բոլշևիզմին»[619]:

Այնուհետև, երբ քննարկումներին միանում են նաև թաթար կոմիսարները, մենք կրկին անգամ ականատես ենք լինում համաձայնեցված հակահայկական արշավին: Ավելին, պարզ է դառնում, որ վրացի և թաթար գործիչները վստահ էին Դաշնակցություն – Շահումյան համագործակցության հարցում:

Ֆ. Խան-Խոյսկին արձանագրում էր, որ «Молот» թերթի խմբագրությունը համամիտ է հիշյալ հոդվածի հետ և գտնում էր, որ Կոմիսարիատի 4 մահմեդական ներկայացուցիչների «ռեակցիոն քաղաքականության մեջ մեղադրելը անարդար է, մերկապարանոց, ուստի և սպասում է հերքման: Մ. Ջաֆարովն ավելի պարզ էր արտահայտվում և նշում, որ «Անդրկովկասի կոմիսարիատի գործունեության քննադատությունը Դաշնակցության և բոլշևիկների կողմից շատ նման է, իսկ որոշ դեպքերում Դաշնակցությունն ավելի հեռու է գնում բոլշևիկներից»[620]: Նկատի ունենալով Ելիզավետպոլի, Շամխորի և մյուս վայրագությունները ու դրանց նկատմամբ Դաշնակցության և Ստ. Շահումյանի դիրքորոշումը, Մ. Ջաֆարովը փաստորեն, սպառնում էր հայությանը, նշելով, որ «դաշնակցականները ստիպված պետք է հաշտվեն մահմեդական ներկայացուցիչների անձնակազմի հետ, քանի որ մահմեդական ժողովուրդը այլ ներկայացուցիչներ տալ չի կարող և չի էլ տա»[621]: Շեշտվում էր Շամխորի ողջ քաղաքականության ոչ միայն հակառուսական, այլև դրա հետ սերտորեն կապված հակահայկական ուղղվածությունը: Բաքվի խորհուրդը Ստ. Շահումյանի գլխավորությամբ, Կովկասի բոլշևիզմը՝ այն էլ բանակի զորամասերի միջոցով, իրապես դիտվում է հայամետ հոսանք, համենայն դեպս, առայժմ որպես բացահայտ հակամահմեդական ու հակավրացական ուղղություն:

Հատկապես հետաքրքիր է այն հանգամանքը, որ փաստորեն «Молот» թերթի և ՀՀԴ միջոցով հայության դեմ իրականացրած պարսավանքի արդյունքում, Ա. Չխենկելին նիստի վերջում առաջարկում է Կոմիսարիատի անդամներից մեկին օժտել արտակարգ լիազորություններով, հատկացնելով վերջինիս դիկտատորի իրավունքներ կամ էլ ամբողջ Անդրկովկասն ու, հատկապես Թիֆլիսը հայտարարել պաշարված վիճակում: Այս նիստում է որոշվում այդ լիազորություններով օժտել Անդրկովկայան Կոմիսարիատի նախագահ, վրացի Ե. Գեգեչկորիին՝ նրան հատկացնելով նաև Անդրկովկասի ռազմական ուժերի ղեկավարման գործը[622]:

Միանգամայն որոշակի էր դառնում, որ Կոմիսարիատի վրաց-թաթարական ղեկավարությունն այս պահից որդեգրում էր Դաշնակցության հանդեպ անվստահություն, ու այդպիսով նաև քաղաքական ասպարեզում նրա մեկուսացման քաղաքականությունը: Մանավանդ, որ Կոմիսարիատի այս նիստի սկզբում նրանք ականատես էին եղել Խ. Կարճիկյանի սկզբունքային և դիպուկ հարցապնդումներին: Վերջինս կշտամբում էր երկրամասի իշխանություններին, հատկապես այն հարցերում, որոնք անմիջապես հայկական ենթաշերտ ունեին, ինչպես օրինակ, զորակոչի մասին դեկրետը, մինչ այժմ վարչական սահմանաբաժանումների մասին դեկրետի բացակայությունը և այլն[623]:

Եվ միայն Խ.-բ. Խաս Մամեդովի «հիմնավորումից» հետո, հարցը մտավ եզրափակիչ փուլ: Նա գտնում էր, որ անվիճելիորեն պետք է դիմել վճռական գործողությունների և ըստ օրենքի՝ 1416 հոդվածի, ամենափոքր ծավալի շարժման դեպքում, ինքնակոչ իշխանությունը պետք է վերացվի: Նրա կարծիքով այդպիսի գործողությունների նախադեպերը առկա էին՝ գրասենյակ, հայտարարություն, հանրահավաք:

[618] Նույն տեղում:
[619] Նույն տեղում, 70 օճ.:
[620] Նույն տեղում:

[621] Նույն տեղում:
[622] Տե՛ս նույն տեղում, թ. 71:
[623] Տե՛ս նույն տեղում, թ. 70:

Ե. Գեգեչկորիի կողմից առաջարկված հակազդեցության միջոցներ կիրառելու մասին բանաձևին կողմ են քվեարկում 9 հոգի, դեմ՝ 2 (Խ. Կարճիկյան, Կ. Ղազազյան), ձեռնպահ՝ 1 (Ա. Ներուչև):

Ստ. Շահումյանին և Ն. Կուզնեցովին առաջարկվում էր 24 ժամվա ընթացքում լքել Անդրկովկասը, հակառակ դեպքում՝ ձերբակալել: Այս առաջարկն անցնում է միաձայն[624]: Ստ. Շահումյան անցավ անլեգալ կարգավիճակի: Փետրվարի 20-ին նա ռազմական էշելոնով վերադարձավ Բաքու[625]: Արտակարգ, ռազմական իրադրության պայմաններում Թիֆլիս կանչվեց նաև «վայրի դիվիզիան»:

Այն առանցքային հիմնահարցը, որ ի դեմս Ստ. Շահումյանի, երկրամասային, այդ թվում և Կովկասյան բանակի բոլշևիզմը նույնացվում էր հայկականության հետ, որոշակի արտացոլում է ստացել նաև ժամանակի մամուլի օրգաններում, մասնավորապես, վրացական ազգային թերթերում: «Սաքարթվելոն» գրում էր. *«կարող է պատահել, որ փախչող զորամասերի հետ միանալով, հայերը Շահումյանին ազգի առաջնորդ հռչակեն: Համենայն դեպս մենք պետք է զգույշ լինենք, որ ինտերնացիոնալիզմի դրոշի տակ գլուխ բարձրացնեն մեր հարևան ժողովրդի այն ծայրահեղ շովինիստները, որոնք Շահումյանի հետ միասին, երևի, երազում են «Մեծ Հայաստանը» ստեղծելուն»*[626] (ընդգծումը մերն է - Վ. Մ.):

Վրաց ազգայնականներին հատկապես սարսափեցրել էր Ստ. Շահումյանին Կովկասի արտակարգ կոմիսար նշանակելու հանգամանքը: «Էրթոբան» այն կարծիքն է վերատպում,- հայտնում էր «Հորիզոնը»,- թէ Լենինն ու Տրոցկին Կովկասում իրենց իշխանութեան տարածումը յաջողեցնելու նպատակով աշխատում են հայերի սիրտը շահել»[627]: Այստեղ, իհարկե, կա ճշմարտության հատիկ, երբ խնդիրը դիտարկում ենք «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի համատեքստում, սակայն խնդիրը նրանում է, որ վրացական ազգային շրջանակներն, իրոք, այդ որոշման, այսինքն՝ բոլշևիկ ղեկավարների ու հայ ազգային-դեմոկրատական գործիչների համագործակցության մեջ իրական վտանգ էին տեսնում: Ստ. Շահումյանի ծրագրերը որակվում էին որպես «նեղ ազգայնական իղձ»[628]: Այդ խնդրին էին անդրադառնում նաև «Սախալխո Սաքմեն», «Չվենի Ռեսպուբլիկան»: Մեզ համար կարևոր է այն վրացական դիտարկումը, թե «Հայկական շրջաններում ասելիս են եղել, որ եթէ Շահումեանը Հայաստանում երևայ, անպատճառ կը ձերբակալեն նրան: Նա

[624] Տե՛ս նույն տեղում թ. 104:
[625] Տե՛ս Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 474:
[626] Հորիզոն, 1918, 4 փետրվարի, թիվ 26:
[627] Նույն տեղում, 28 հունվարի, թիվ 20:
[628] Նույն տեղում:

Հայաստանում երեւաց էլ, այնտեղից վերադարձաւ էլ, սակայն նրան ոչ ոք չձերբակալեց: Երևակայեցէք, ասում են հայերը, որ Շահումեանը լաւ հայ դուրս եկաւ»[629]:

Ստ. Շահումյանի նշանակմանը, որպես Կովկասի արտակարգ կոմիսար ցավագին էր մոտենում հատկապես հայկական մենշևիզմը. «եթէ Լենինից կամ Զուղաշվիլուց կարելի էր սպասել մի նման վարմունք, Շահումեանից մենք չէինք սպասում»,- գնահատում էր Արկոմեդը[630]: Հայ մենշևիկները Ստ. Շահումյանի ծրագիրը մեկնաբանում էին սոսկ որպես «դեմոկրատիայի շարքում քաղաքացիական կռիւ բորբոքելու տենչ»[631]:

Ինչ վերաբերում է Ստ. Շահումյանի նոր պաշտոնին, ապա կարելի է նկատել, որ դա նորույթ չէր Կովկասի կյանքում: Ցարական վարչակարգի ժամանակ այդ գործառույթն իրականացնում էր Կովկասի փոխարքան, ժամանակավոր կառավարության պայմաններում՝ «Պետրոգրադում Կովկասի գործերի կոմիսարը»: Արտակարգ կոմիսարի պաշտոնը այժմ երկրամասում խորհրդային իշխանության հաստատելու միջոց էր և այդ գործը վստահվել էր հայազգի գործչի, ինչը մեր խորին համոզմամբ պետք էր միայն օգտագործել:

Դաշնակցության մի խումբ գործիչների և Ստ. Շահումյանի համագործակցության կարճատև դրվագը արտացոլվել է Ռ. Տեր-Մինասյանի, ինչպես նաև Ա. Մռավյանի և Վ. Մռավյանի հուշերում:

«26 կոմիսարների հիշատակին» ժողովածուի մեջ Ասքանազ Մռավյանը նշում էր, որ Ստ. Շահումյանը հունվարի 13-21-ի ընթացքում շրջանցիկ ճանապարհով, Գանձակի և Ղազախի գավառների, Շամշադինի, Իջևանի, Դիլիջանի, Փամբակի, Մեծ Ղարաքիլիսայի վրայով հասնում է Թիֆլիս: Հունվարի սկզբին Ստ. Շահումյանը պատրաստվում էր Բաքվից մեկնել Պետրոգրադ՝ Սահմանադիր ժողովին մասնակցելու նպատակով, սակայն հունվարի 7-ին նրա գնացքը Գանձակում կանգ է առնում[632]: «Գանձակի հայկական մասը,- գրում էր Ռուբենը,- արդէն ինքնիշխան մի կառավարութիւն էր, որի համար «Թիֆլիսի իշխանութիւն» չկար. նա կը սպասէր հայկական իշխանութեան՝ նրան միանալու համար: Շահումեանին պաշտպանում էր Գանձակի շրջանի ղեկավար բժիշկ Հայկ Մելքումեանը, որ հայկական գիւղերով, լեռների վրայով փոխադրում է Շահու-

[629] Նույն տեղում, 7 փետրվարի, թիվ 28:
[630] Պայքար, 1918, 27 հունվարի, թիվ 20:
[631] Նույն տեղում:
[632] Տե՛ս Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 461:

մեանին Թիֆլիս, Դաշնակցութեան «մաուզերիստների» պաշտպանութեան ներքեւ»[633]:

Թիֆլիսում, երկու անգամ, Դանուշ Շահվերդյանի բնակարանում (ներկա են եղել Ս. Արարատյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Հ. Ջավրիյանը, Ստ. Շահումյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Կասյանը, Նազարեթյանը, Խանոյանը, Ցինցաձեն) մշակվում է բոլշևիկ-դաշնակցական համագործակցության ծրագիր: «Այն նույն օրը, երբ Անդրկովկասեան վարչութիւնը հրաման կը հանէր գտնել Շահումեանին և զայն ձերբակալել (Կոմիսարիատի ուղարկած միլիցիան նրան չէր գտել Կոչուբեևսկայա թիվ 24 տանը[634] – Վ.Մ.), երբ Երզնկեան և Ղազարեան՝ Շահումեանի գլուխը կը պահանջվէին Ազգային Խորհուրդից՝ Ազգային Խորհուրդի գնտրական ուժերի վարիչ Ռուբէն Տէր-Մինասեանը և Ջաւրիեւը Շահումեանի հետ գործունեութեան նախագիծ կը կազմէին, Երեւանից ունենալով եւ Արամի կարծիքները»[635]:

Ծրագրի բովանդակությունը կայանում էր հետևյալում՝ 1. Թուրքերի դեմ դիմադրության ճանապարհով հասնել Արևմտյան Հայաստանի անկախությանը. Ստ. Շահումյանը պետք է նպաստեր ռուսական զորքերի ճակատում մնալու հարցում: 2. Անդրկովկասում ստեղծվելու էր հայկական կանտոն՝ ըստ Ավ. Շահխաթունյանի սահմանաբաժանումների ծրագրի: 3. Թիֆլիսն ու Բաքուն հռչակվելու էին ազատ քաղաքներ: 4. Սարիղամիշ-Կարս-հասած 39-րդ զորամասը պետք է պահվեր Հայաստանում: 5. Պարսկաստանից նահանջող գեներալ Բարաթովի զորամասերից մի զորաբաժին պետք է կանգնեցվեր Ջուլֆա-Նախիջևան հատվածում: 6. Ալեքսանդրապոլի զինապահեստներից ռազմամթերք ուղարկելու միջոցով պետք է ուժեղացվեր Գանձակի հայկական մասը: 7. Թիֆլիսում ձևավորված դարաբաղցիների գունդը պետք է ուղարկվեր Շուշի: 8. Թիֆլիսի մոտ կուտակված զորքերը Ղազախի վրայով պետք է հասնեին Գանձակ: 9. Բաքվից, Գանձակից, Շուշիից պետք է տեղափոխվեին ռազմական ուժերը և դրանց միջոցով բացվեին Բաքու – Թիֆլիս, Բաքու-Երևան ճանապարհները: 10. Մինչև այդ գործողությունների իրականացումը բոլշևիկները չպետք է բարձրացնեին իշխանության գրավման խնդիրը: 11. Ջեմլյակի ջոկատը, երրորդ հայկական գունդը, Օսիկ (Պողոս) Փիրումյանի հեծելազորը Գ. Տեր-Մովսիսյանի հրետանին պետք է մնային Թիֆլիսում: Երբ բացվի Շուշի-Բաքու գիծը, այդ ուժերը պետք է բռունցքվեին և բոլշևիկների հետ միասին գրավեին իշխանությունը: Այդ ընթացքում Երևանի և Թիֆլիսի հայկական շրջանակները ձևականորեն պետք է ընդդիմանային բոլշևիկյան շարժմանը և պետք է պաշտպանեին

[633] Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, է. հատոր, Թեհրան, 1982, էջ 141:
[634] Տե՛ս Հորիզոն, 1918, 27 հունվարի, թիվ 19:
[635] Ռուբէն, նույն տեղում, էջ 141-142:

իշխանություններին[636]: Այս ծրագիրը չիրագործվեց: Բացի Ստ. Շահումյանի հետ բանակցություններից, Երևանում ևս արձանագրվել են այդ համագործակցության դրսևորումներ: Արամը Թիֆլիսի վրայով Մոսկվա է գործուղում «դաշնակցականասէր» դարձած Պ. Մակինցյանին. «Ապահով անցկացրէք: Անհրաժեշտ է: Պէտք է մենք ամէն կերպ միանանք Ռուսաստանին (Բագուին): Մեր մէջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը»[637]: Ավելացնենք, որ հետևելով Ռուբենի հուշերին, խորհրդահայ մի շարք պատմաբաններ անդրադարձել են այդ խնդրին:

Այսպիսով, Անդրկովկասում 1917 թ. նոյեմբերին, ապա և 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին ստեղծվեց իշխանության գրավման իրական այլընտրանք: Առաջին անգամ բոլշևիկների կողմից իշխանությունը հնարավոր էր գրավել մինչև վրացական մենշևիկների կողմից, Թիֆլիսի Զինապահեստի զավթումը երկրորդ անգամ՝ Սարիղամիշից Կովկասյան բանակի զորամասերի առաջխաղացմամբ: Սակայն Բաքվի բոլշևիկների և անձամբ Ստ. Շահումյանի ծրագիրը չիրականացավ մի շարք պատճառների հետևանքով.

1. Բոլշևիկների երկրամասային և Թիֆլիսի կոմիտեներում այդպես էլ չստեղծվեց միասնական կարծիք իշխանության գրավման հարցում: Մեծամասնությունը հակված էր մտածելու, որ հնարավոր էր՝ Բաքվի նման հաստատելու խորհրդային իշխանություն, այսինքն՝ խաղաղ ճանապարհով: Մեր կարծիքով, վճռական էր ազգությամբ վրացի բոլշևիկների, մասնավորապես Ֆ. Մախարաձեի էական հակազդեցությունը հայազգի բոլշևիկ Ստ. Շահումյանին և հատկապես այն ելակետային մոտեցումը, որ Բաքվի բոլշևիզմն ի դեմս Ստ. Շահումյանի, առավելապես հայկական երևույթ էր դիտվում և առաջին հերթին ուղղվում է վրացական ազգայնականության՝ մենշևիզմի դեմ: Այդ հակազդեցության առաջին և վճռական գործողությունները տեղ գտան Բաքու – Թիֆլիս երկաթուղու կայարաններում իրականացված հակառուսական գործնական քայլերում, զինվորների սպանդով, ինչը ուղղակիորեն առնչվում էր Թիֆլիսի գրավման հիմնահարցի հետ: Վրացական մեծամասնություն ունեցող բոլշևիկների երկրամասային կոմիտեն մերժեց նաև Սարիղամիշից Թիֆլիս շարժվող բոլշևիկյան զորամասերի ու նրանց հետ նաև բոլշևիկ ղեկավար գործիչների աջակցության գործը:

[636] Տե՛ս նույն տեղում, էջ 142-143:
[637] Տե՛ս նույն տեղում, էջ 143:
* Տե՛ս Հ. Գ. Թութչյան Սարդարապատի հերոսամարտը, Ե., 1965, Հ.Ս. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և կովկասյան բանակը, Ե., 1970, Մ.Վ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, Լ.Խ. Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Ե., 1977:

Թիֆլիսին մոտեցած զնվորական գնացքները մի շաբաթից ավել սպասելով երկրամասային կոմիտեի կարգադրությանը, ստիպված հեռացան Հյուսիսային Կովկաս: Փետրվարի 6-ին (19) էսեռներն արդեն Անդրկովկասում չէին[638]:

2. Ելիզավետպոլի, Շամխորի դեպքերից հետո ակնհայտ է դառնում և, հատկապես Դաշնակցության համար, որ փոխադարձ համաձայնությամբ և ընդհանուր թշնամու՝ բոլշևիզմի դեմ ստեղծված կառավարության մեջ առկա են բևեռային տարաձայնություններ, ազգային հիմնահարցերի լուծմանը հասնելու իրարամերժ ուղիներ: «Մենշեւիկ սոցալ - դեմոկրատիայի լուծը օրէցօր անտանելի է դառնում»,– արձանագրում էր «Աշխատավոր»-ը[639]: «Յեղափոխութեան հենց առաջին օրերից՝ մենշևիզմը կարողացաւ ճարպկօրեն յարմարուել մեր միջավայրին – նախ՝ զարդարուել «միջազգայնականութեան» գոյնզգոյն փետուրներով, ապա՝ ամէն միջոցներով չեզոքացնել Անդրկովկասի քաղաքական կեանքից բոլոր ոչ մենշևիկներին և երրորդ՝ յայտնի և գաղտնի բլոկի մէջ մտնել կալուածպտէրերի հետ: Նա կարողացաւ՝ յենուելով կալուածատէրերի վրայ՝ մեկուսացնել կամ անվտանգ հեռաւորութեան վրայ պահել սոցիալիստ-յեղափոխականներին, բոլշևիկներին ու դաշնակցականներին և այդպիսով իր քաղաքական հեգեմոնիան հաստատել»[640]: Արժեքավոր է այն, որ այս սթափ վերլուծությունն անում էր հենց Դաշնակցությունը և, հատկապես, Ստ. Շահումյանի կողմից Թիֆլիսի գրավման ձախողումից հետո: Գոնե խոսքով Դաշնակցությունը համոզվեց, որ տվյալ քաղաքական զարգացումների հորձանուտում հայկականության ու նաև Դաշնակցության գլխավոր հակառակորդը վրացական մենշևիզմն է: Պետք է ընդգծել, իհարկե, որ Կովկասի բոլշևիկների հետ համագործակցության փաստը դրսևորվում էր այնքանով, որքանով դրա անվիճելի ղեկավար-հեղինակություն էին համարվում Ստ. Շահումյանը, Գ. Ղորղանյանը, այլ խոսքով, առավելապես ազգային գործիչները:

Գործնականում զգալով մենշևիզմի ուժը և կրելով առաջին պարտությունը 1918 թ. փետրվարի սկզբին՝ Դաշնակցությունն անգամ կոչեր էր անում, որ «փրկութեան միակ ճանապարհը բոլոր սոցիալիստական տարրերի անվերապահ ու անյապաղ միացումն է»[641]: Անհավատալի է, բայց սոցիալիստների շարքում Դաշնակցությունն այժմ տեսնում էր նաև բոլշևիկներին: «Մենշևիկները շատ լաւ են զգում՝ թե որչափ վտանգաւոր է իրենց դիկտատուրայի համար բոլշևիկների, սոց.-յեղափոխականների,

[638] Տե՛ս Հորիզոն, 1918, 6 փետրվարի, թիվ 27:
[639] Տե՛ս Աշխատավոր, 1918, 4 փետրվարի, թիվ 15:
[640] Նույն տեղում:
[641] Նույն տեղում:

դաշնակցականների և թիւրք սոցիալիստների միութիւնը, ակտիւ մասնակցութիւնը Անդրկովկասի քաղաքական կեանքին»,– գրում էր Թիֆլիսի Դաշնակցության մարմին «Աշխատավոր» թերթը[642]:

Միաժամանակ, հայ ազգային-դեմոկրատական կուսակցությունը կրկին հայտնվում էր հակասության մեջ. մի կողմից՝ գտնում էր, որ «հեղափոխութեան ու Կովկասեան ժողովուրդների ազատութիւնը փրկելուն կարելի է հասնել Անդրկովկասեան սոցիալիստական ինտերնացիոնալիստական միութիւն» ստեղծելու միջոցով, մյուս կողմից՝ մի շաբաթ հետո կուսակցությունը միացավ այդ նույն վրացական – բեկական դաշինքին՝ արդեն Սեյմի կազմում: Այդ քաղաքական վճռի կայացման գործում, մեր կարծիքով, որոշիչ դեր խաղաց նաև Ստ. Շահումյանի ռազմավարության ձախողումը: Պատահական չէ, որ մեկ ամիս անց, Դաշնակցությունն առանց վարանումի նվիրվեց Բաքվի և խորհրդային իշխանության պաշտպանությանը:

3. Անկախ քաղաքական կեցվածքից, ռուսական Կովկասյան բանակի հեռացումն Անդրկովկասից ու Թիֆլիսից նախ և առաջ բխում էր վրացական գործիչների հակառուսական տրամադրություններից, և «Մեծ Հայաստանի» հնարավոր ստեղծման տագնապից, ինչը գոնե հռչակագրի տեսքով հայտարարում էր Պետրոգրադի իշխանությունը: 1917 թ. նոյեմբերից Անդրկովկասում մենշևիկների և բոլշևիկների հակամարտությունը դրսևորվեց ոչ թե սոցիալ-դեմոկրատիայի երկու թևերի մարտավարությունների պայքարի, այլ երկու մեծ ու կարևորագույն ազգային-քաղաքական ուժերի՝ հայ-վրացի, Դաշնակցություն-մենշևիզմ, Շահումյան-Ժորդանիա առճակատման տեսքով: Բոլշևիկյան Ռուսաստանի հեռանալն Անդրկովկասից իրական հնարավորություն էր ստեղծում երկրամասում վրացական տարրի գերիշխանության հաստատման համար: Թիֆլիսի գրավումը կնպաստեր Բաքվում և Արևելյան Անդրկովկասում հայության դիրքերի կայունացմանը, կգսպեր մահմեդական խռովությունների ալիքը, միգուցե, և կանխեր թուրքական արշավանքը:

Սակայն, կար մի հիմնավոր պատճառ, որը անհնար էր դարձնում այդ ծրագրի իրականացումը, ինչը հասկանալի, օբյեկտիվ պատճառների առկայության պայմաններում չի քննարկվել նաև խորհրդահայ պատմագրության կողմից: Խնդիրը հենց Ռուսաստանում բոլշևիկյան իշխանության պահպանման հարցն է: Բրեստ–Լիտովսկի ողջ գործընթացը մի գլխավոր նպատակի էր ծառայում՝ տարածքային կորուստների գնով պահպանել իշխանությունը: Այդ մեծ քաղաքականության բաղկացուցիչներից էր նաև Վ. Լենինի և Լ. Տրոցկիի հրամանով Կովկասյան բանակի

[642] Նույն տեղում:

զորամասերի շտապ ետ կանչը դեպի Հյուսիսային Կովկաս, ապա և Ռուսաստան: Ստացվում էր, որ բոլշևիկյան կենտրոնական կառավարությունը հատուկ և ծանրակշիռ կերպով առայժմ չէր մտահոգված Անդրկովկասի խորհրդայնացման ծրագրով: Ստ. Շահումյանին օժտելով արտակարգ լիազորություններով, Լենինն ու Ստալինը, միաժամանակ, ոչ մի կարգադրությամբ, ոչ մի գործուն միջոցներով չեն ազդում երկրամասային ու Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեների վրա: Ստ. Շահումյանն իր հեղինակությամբ և Սահդամիշի մեկ-երկու զորամասերի միջոցով պետք է իրականացներ մի բան, ինչն անգամ սեփական ուժերով չէին արել բոլշևիկները Պետրոգրադում:

Որպես երկրորդ կարևորագույն խոչընդոտ հանդես է գալիս վրացթաթարական ամրապնդվող դաշինքը, որի հակառուսական ուղղվածությունը՝ երկրամասի ռազմա-քաղաքական զարգացումների տրամաբանության մեջ փոխակերպվում էր հակահայկական քաղաքականության: Ելիզավետպոլ-Շամխորի դեպքերը դարձան այն գլխավոր ջրբաժանը, երբ տուն վերադարձող ռուսական զորամասերը Անդրկովկասյան կոմիսարիատի վրաց-թաթարական վայրագ գործելակերպի արդյունքում ատելությամբ էին թողնում երկրամասի սահմանները, օր առաջ փորձում էին փախչել թշնամական միջավայրից:

Եվ վերջապես, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ միայն բոլշևիկյան Բաքվի և մի քանի զորամասերի միջոցով հնարավոր չէր նույն հեշտությամբ հաջողության հասնել Անդրկովկասի քաղաքական կենտրոնում՝ Թիֆլիսում, որի ազգային միջավայրում բոլշևիզմն իրոք դիտվում էր որպես օտար, անլուրջ և զազրելի մի երևույթ:

ԱՄՓՈՓՈՒՄ

1917 թ. հոկտեմբերի 25-ին բոլշևիկյան կուսակցությունը Պետրոգրադում զինված հեղաշրջման ճանապարհով գրավեց իշխանությունը:

Հեղաշրջումն Անդրկովկասում ընկալվեց որպես դավաճանություն Փետրվարյան հեղափոխության և ժամանակավոր կառավարության հռչակած ժողովրդավարության զարգացման հեռանկարին: Երկրամասի բոլոր կուսակցությունները, և հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, բացի բոլշևիկներից, դատապարտեցին իշխանության զավթումը, համերաշխ էին իրենց գնահատականներում: Քաղաքական կայունության հաստատման միակ ուղի և երաշխիք համարվեց Սահմանադիր ժողովի հրավիրումը: Փետրվարյան հեղափոխության դասերը լավագույնս ընկալեցին վրացական մենշևիկները, ովքեր Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքում շատ արագ գերիշխող դիրք գրավեցին: Կովկասյան մենշևիկների մարտավարությունը գլխավորապես հետապնդում էր բոլշևիզմը մեկուսացնելու նպատակ: Նրանք ձգտում էին դրան հասնել Սահմանադիր ժողովի հրավիրման ճանապարհով, որտեղ հույս ունեին՝ էսեռների հետ միասին մեծամասնություն նվաճել, այդպիսով քաղաքական պայքարից հեռացնել նաև ՀՅԴ-ը և օրինական պետականության համատեքստում ոչնչի հավասարեցնել բոլշևիկների ծրագրի իրագործման հնարավորությունները:

Հայկական հասարակական-քաղաքական դաշտը՝ Փետրվարյան հեղափոխության ընծեռած աննախադեպ քաղաքական ակտիվության փորձով հանդերձ, հայտնվեց բարդ իրավիճակում: Հաղթահարելով առաջին օրերի համընդհանուր անորոշությունը, հայկական կուսակցությունները՝ Հայ ժողովրդական կուսակցությունը,Հայ հեղափոխական դաշնակցությունը, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայկական կազմակերպությունները, ս.-դ. հայկական բանվորական կազմակերպությունը (սպեցիֆիկներ), արևմտահայության շահերի արտահայտիչ «Հայաստան» թերթը դատապարտեցին բոլշևիկյան հեղաշրջումը:

Հոկտեմբերյան հեղաշրջման նկատմամբ հատուկ վերաբերմունք դրսևորեցին Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում տեղակայված բանակային հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, մարմինները, հրամանատարական կազմը: Արձագանքների և գնահատականների առանձնահատկությունն այն էր, որ այդ հարցում չկար միատարրություն: Այս հանգամանքը թե՛ ռազմաճակատի պաշտպանության և թե՛ Անդրկովկասի հասարակական-քաղաքական հիմնահարցերի

և, հատկապես, իշխանության խնդրի համատեքստում բանակի դերին հաղորդում էր առանցքային քաղաքական նշանակություն:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի հեղափոխական-դեմոկրատական կենտրոնների, հեղափոխական-սոցիալիստական և ազգային-դեմոկրատական կուսակցությունների, Կովկասյան բանակի հրամանատարության մոտ բարձրացավ տեղական նոր՝ Պետրոգրադի բոլշևիկյան կառավարությունը չճանաչող իշխանության կազմակերպման հիմնահարցը, որը գերնպատակ ուներ՝ Անդրկովկասը զերծ պահել բոլշևիզմից:

Պայքարը միատարր չէր, երկրամասի երկու քաղաքական կենտրոնները՝ Թիֆլիսն ու Բաքուն դարձան իշխանությունը գրավելու այլընտրանքային բևեռներն Անդրկովկասում:

Իշխանության համար անզիջում առճակատման սկզբնական փուլում պայքարն ընթացավ Թիֆլիսում՝ վրացական մենշևիկների գլխավորությամբ՝ Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի ներուժը փոշիացնելու, բոլշևիկներին պառակտելու և հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների հակաբոլշևիկյան ճակատ ստեղծելու ճանապարհով: Իսկ Բաքվում ընդհակառակը՝ ազդեցիկ բոլշևիկ գործիչների ու ձախ էսեռների միջև կայացած դաշինքի ձևավորման, Ստ. Շահումյանի հեղինակության շնորհիվ նաև՝ այդ նույն զորամասերը Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում պահելու միջոցով՝ իշխանությունը գրավելու եղանակով:

Բաքվում իշխանությունն անցավ պատգամավորական խորհրդին, Թիֆլիսում՝ Անդրկովկասյան կոմիսարիատին, ինչը հիմնականում մենշևիկների և բոլշևիկների պայքարի արդյունք էր: Ինչպես հայկական, այնպես էլ մահմեդական ազգային-դեմոկրատական կուսակցություններն ու կազմակերպությունները ընթանում էին դեպքերի զարգացման ետևից, առայժմ վճռորոշ դեր չունեին իշխանությունն Անդրկովկասում գրավելու համար մղվող պայքարում:

Անդրկովկասի կոմիսարիատի կազմում կադետների՝ Հայ ժողովրդական կուսակցության և վրացական ազգային-դեմոկրատական կուսակցության չընդգրկելը, բուրժուազիայի քաղաքական ուժի մեկուսացումը՝ նոր երկրամասային իշխանության հանդեպ բոլշևիկներից հետո թերևս ձևավորեց երկրորդ լուրջ ընդդիմադիր ուժը, որը մեծ առճակատման սկիզբն էր միայն Անդրկովկասում, հատկապես հայ իրականության մեջ:

1917 թ. նոյեմբերի 11-ին Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորմամբ, ապա և նոյեմբերի 19-23-ը կայացած վրացական ազգային համագումարի ընդունած որոշումներով և վրացական ս.-դ. մենշևիկների ծանրակշիռ գաղափարական և կազմակերպական ճնշմամբ՝ կայացվեց հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած քաղաքական փուլի գլխավոր որոշումը, այն է՝ Անդրկովկասի անջատումը խորհրդայնացված Ռուսաստանից և ազգային հասարակական-քաղաքական, ինչպես նաև զինվորական կյանքի ինքնուրույն տնօրինումը:

Կառավարական, կուսակցական, հանրային մակարդակներում, թեև առաջադրվում էր ապագա Ռուսաստանյան ժողովրդավարական դաշնային հանրապետության կազմում ազգային լայն ինքնավարության պահանջը, սակայն ներքին խոհանոցում, հատկապես վրացական մենշևիզմի շրջանակներում՝ հետևողականորեն հունցվում էին անկախ ազգային պետականության գաղափարներ:

Հենվելով Անդրկովկասի ժողովուրդներին ուղղված հռչակագրի դրույթների վրա, Կոմիսարիատը ձեռնամուխ եղավ անկախ երկրամասի սոցիալ-տնտեսական վերափոխումներին:

Հաշվետու ժամանակահատվածում՝ 1917 թ. նոյեմբերի 15-1918 թ. հունվարի 15-ը, անդրկովկասյան կառավարությունն իրականացրեց մի շարք ծրագրեր, ընդունեց որոշումներ բոլոր կոմիսարությունների ուղղություններով: Որոշակի նպատակային աշխատանք իրականացրեց նաև Կոմիսարիատին կից ստեղծված Փոքր խորհուրդը, որը լիազորված էր զբաղվել զուտ տնտեսական, կենցաղային առօրյա խնդիրներով:

Թեև ժամանակի քաղաքական զարգացումներին զուգահեռ, Անդրկովկասյան կառավարության գործունեությունը սոցիալ-տնտեսական, ֆինանսական, կրթական-լուսավորական և մյուս բնագավառներում նկատելիորեն զիջում էր, սակայն երկրամասի քաղաքականապես անանախադեպ ակտիվ ու հագեցած երկու ամիսների համայնապատկերի վրա՝ այն քաղաքական, առօրեական պատմության որոշակի տպավորություն է ձևավորում:

Որպես Անդրկովկասի հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների դաշինք, Կոմիսարիատը փորձեց լուծում տալ ռուսաստանյան պետության ամենաբարդ՝ հողային խնդրին: Սահմանադիր ժողովի նախաշեմին և ժողկոմխորհի հռչակագրից հետո, երկրամասի կառավարությունը ցանկացավ ճիշտ լուծում տալ հողային հարցին և այն հակադրել խորհրդային իշխանության մոտեցմանը:

Անդրկովկասյան կոմիսարիատն ընդունելով Հողային օրենքը՝ հողի աշխարհականացման, պետականացման, բռնագրավման եղանակները, փաստորեն կանգնեց փակուղու առջև: Դա սպասվում էր, քանի որ կառավարություն ձևավորելիս, ընտրելով ազգային, բայց միաժամանակ հեղափոխական-սոցիալիստական գերակշռություն ունեցող կուսակցական մոտեցումը, այդպիսով և հողային հարցում ձևավորվեց ընդգծված

տարանջատում՝ բեկական – մահմեդական ղեկավարների և սոցիալիստ հայ և վրացի գործիչների միջև: Հողի սեփականության ցավոտ և վտանգավոր խնդրում ազգային, կրոնական տարբերություններին ավելացավ նաև առկա և սրացող սոցիալ-դասակարգային հակամարտությունը, որը, եթե ազնվական ծագում ունեցող կալվածատերեր Ն. Ժորդանիայի, Ն. Ռամիշվիլիի և այլոց հետ հնարավոր էր լուծել, ապա սոցիալիստական և բացահայտ ազգային դիմագիծ ու գործելակերպ ունեցող Դաշնակցության պարագայում ոչ միայն չհանգեցրեց փոխզիջումների, այլ ընդհակառակը, կանգնեցրեց ազգամիջյան մեծ հակամարտության առաջ:

Եթե վրացական մենշևիկների համար սոցիալիստների երազանք Սահմանադիր ժողովի բռնի դադարեցումը սպասված և հերթական առիթ էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու, անկախանալու նախատեսված ճանապարհի վրա ամուր կանգնելու համար, ապա հայությանը և Դաշնակցությանը սպասվում էր փորձությունների հինգ ամիս, որն ի հայտ բերեց հայկական քաղաքական, հասարակական ուժերի ամբողջության իրական պատկերը, վճռորոշ և անսպասելի զարգացումների հանդեպ պատրաստվածության աստիճանը:

Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից ընդունված հռչակագիրն ու «Անդրկովկասյան զեմստվոյական հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը» առաջընթաց էր երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառների դեմոկրատացման գործընթացում: Այն էական ձեռքբերում կարելի է համարել նաև այն առումով, որ եվրոպական Ռուսաստանի ներքին նահանգների համեմատ, որտեղ զեմստվային հաստատությունները, չնայած ոչ լիարժեք, բայց գործել էին վերջին հիսուն տարիների ընթացքում, վերջապես մուտք գործեցին նաև Անդրկովկաս:

Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ Ռուսաստանում 19-րդ դարի կեսերից սկիզբ առած զեմստվային շարժումը փաստորեն Անդրկովկասում լուծում էր ստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո: Այլ խոսքով կայսրության փլուզման և դաշնային դեմոկրատական հանրապետության կայացման միջև ընկած անցումային ժամանակահատվածում, երբ նախկին կայսրության ազգային շրջաններն օբյեկտիվորեն անջրպետվելով բոլշևիզմից, դրանով, մի կողմից, արագացնում էին անջատողական, ազգային անկախությունների ձեռքբերման գործընթացը, մյուս կողմից, իհարկե զեմստվոյական շարժումը որպես ժողովրդավարական գործընթաց, ինչպես, օրինակ, համապատասխան հռչակագիր ընդունումն Անդրկովկասում, համարում էին խորհրդային իշխանության դեմ պայքարի պասիվ ձև, հակադրվում էին ժողկոմխորհի կառավարությանը:

Եթե զեմստվոյական հաստատությունների ներդրումը Ռուսաստանի նահանգներում զուտ սոցիալ-տնտեսական, հասարակական խնդիրներ էր հետապնդում, ապա Անդրկովկասի ազգային բազմաշերտ միջավայրում, զեմստվոյական քաղաքականությունն՝ ի դեմս Կոմիսարիատի դիրքորոշման, առավելապես վերածվում էր երկրամասի վարչական սահմանաբաժանումների, այլ խոսքով՝ ազգային տարանջատման հիմնահարցի և երկրամասի իշխանության վրաց-թաթարական ղեկավարության բացահայտ հակահայկական քաղաքականության պատճառով, սկիզբ էր դնում ազգամիջյան գործնական հակամարտությանը:

Հայկական քաղաքական կուսակցությունները, մասնավորապես վարչական սահմանաբաժանումներ նախաձեռնող ՀՅԴ-ը, ցավոք, հավատացած էին, որ խնդիրը վերջապես լուծում կստանա Անդրկովկասի հայության համար, բայց բոլշևիկյան հեղաշրջումից հետո, փաստորեն առաջին անգամ հայկական հասարակական-քաղաքական ուժերը, տվյալ դեպքում Կոմիսարիատի հայ պաշտոնյաները գործնականում ականատես եղան վրաց-մահմեդական հարձակողական մարտավարությանը: Արդյունքում, անկախ իրադարձությունների զարգացումից, երկրամասի վրացական և թաթարական շրջաններում մտցվեց զեմստվո, իսկ հայկական տարածքները դարձան վիճելի, զեմստվո չմտցվեց: Հայկական և հայաբնակ շրջանները «վիճելի» հորջորջելն ավելի սրեց Անդրկովկասի ազգամիջյան հակամարտությունները, միջազգային դիվանագիտության ասպարեզում և Հայկական հարցի քննարկումներում շրջանառության մեջ մտավ արատավոր «վիճելի տարածքներ» հասկացությունը, ունեցավ ծանր և ճակատագրական հետևանքներ հայ ժողովրդի համար 1918-1921 թվականներին և ի դեմս Արցախյան, հիմնահարցի շարունակվում է առ այսօր:

Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասային կենտրոնի և Կովկասյան բանակի հրամանատարության հետ համատեղ, հավանություն տալով Էնվեր և Վեհիբ փաշաների կողմից բարձրացված հաշտության առաջարկին, եզրափակեցին հետհոկտեմբերյան վայրիվերումների փուլը, Թուրքիայի հետ մերձենալով՝ գործով ապացուցեցին, որ երկրամասը Ռուսաստանի մաս չէ այլևս, իսկ Սահմանադիր ժողովի ցրումից հետո օբյեկտիվորեն վերածվեցին դաշնակիցների:

«Ռուսներին չեն սիրում վրացիք, թուրքերը, դաղստանցիք, լեհերը,- 1917 թ. գրում էր Ավ. Իսահակյանը,- միայն մենք, և դա մեր թշվառության պատճառը եղավ, մեր դժբախտության պատճառը: Մեր սիրո

համար սկսեցին մեզ ատել և վնասել ռուսատյացները, մեր քաղաքականությունը հակառակ եղավ նրանց քաղաքականությանը»[643]:

Ռազմա-քաղաքական սրընթաց գործընթացների զավեշտը և հակասությունը այն է, որ Թուրքիայի հետ մերձեցումը ընթանում էր Գերմանիայի հետ ժողկոմխորհի սկսած անջատ բանակցությունների համատեքստում: Փաստորեն, Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասում և Կովկասյան ռազմաճակատում, որդեգրելով բոլշևիկյան կառավարության ռազմավարությունը, ևս մի անջատ դաշինքի էր գնում այդ նույն Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հետ, բայց ոչ թե Գերմանիայի նման բոլշևիկներին երաշխիքներ տալու, այլ վերջինիս իշխանությունը չճանաչելու ճանապարհով:

Ելիզավետպոլի մահմեդական գյուղացիական խռովությունները, ապա և Բաքվից մինչև Թիֆլիս երկաթուղային հանգույցների մոտ կատարված ոճրագործությունները առավել մեծ ու համապարփակ հիմնահարցի՝ երկրամասում իշխանության խնդրի բաղկացուցիչներից էին:

Կովկասյան ռազմաճակատից հեռացող ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը Անդրկովկասյան կոմիսարիատին և զ. ու բ. պատգամավորական խորհրդի երկրամասային՝ էսեռա-մենշևիկյան հակաբոլշևիկյան կենտրոնին՝ նախ և առաջ անհրաժեշտ էին մասնավորապես Բաքվի խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար: Թեև վրացական մենշևիզմը և Ն. Ժորդանիան զորամասերի զինաթափումը հիմնավորում էին ելնելով գարնանը սպասվող թուրքական արշավանքին դիմագրավելու և այդ նպատակով ազգային զորամասերը զինելու նկատառումներից, սակայն առաջնայինը մնում էր Կոմիսարիատի իշխանության պահպանումը ու այդպիսով նաև բոլշևիզմի դեմ պայքարը: Նշենք, որ 1918 թ. գարնանը վրացական զորքը դիմադրություն գրեթե ցույց չտվեց այդ թուրքական արշավանքին, իսկ հայկական զորամասերը, որոնք Շամխորի մոտ չէին գնդակահարում ռուս զինվորներին ու առնանգում զենքը՝ միայնակ իրականացրին ռազմաճակատի պաշտպանության գործը:

Ելիզավետպոլն ու Շամխորը փաստորեն, դարձան 1917 թ. նոյեմբերից սկսված իշխանության համար մղվող լարված, առայժմ ժողովրդավարական պայքարի վայրագ հանգուցալուծումներից մեկը, երբ զենքի համար պայքարը վերածեց քաղաքական և ազգամիջյան բացահայտ առճակատման: Սկիզբ դրվեց մի գործընթացի, որն ավարտվեց միայն 1918 թ. սեպտեմբերին՝ թուրքերի կողմից Բաքուն գրավելուց հետո: Շամ-

[643] Ավետիք Իսահակյան, Հայկական հարց, Երևան, 2005, էջ 76:

խորհի սպանդից հետո է, որ Ստ. Շահումյանը գաղտնի անցնում է Թիֆլիս և առաջին անգամ փորձում իրականացնել իր ծրագիրը՝ Կոմիսարիատի տապալումը:

Անդրկովկասում 1917 թ. նոյեմբերին, ապա և 1918 թ. հունվարփետրվար ամիսներին ստեղծվեց իշխանության գրավման իրական այլընտրանք: Առաջին անգամ բոլշևիկների կողմից իշխանությունը հնարավոր էր գրավել մինչև վրացական մենշևիկների կողմից Թիֆլիսի զինապահեստի գրավումը, երկրորդ անգամ՝ Սարիղամիշից Կովկասյան բանակի զորամասերի՝ դեպի Թիֆլիս առաջխաղացմամբ: Սակայն Բաքվի բոլշևիկների և անձամբ Ստ. Շահումյանի ծրագիրը չիրականացավ մի շարք պատճառների հետևանքով:

Ելիզավետպոլի և Շամխորի արյունոտ դեպքերի գլխավոր մեղսակիցները վրացական մենշևիզմի առաջնորդներն էին և մահմեդական ազգային կոմիտեն, այսինքն՝ Անդրկովկասի կոմիսարիատում իշխանությունը զավթած վրաց-մահմեդական ազնվականական–խանական մեծամասնությունը: Այդ իբր «արդարացված», բայց հանցավոր գործն իրականացնում էին ոչ թե «ավազակները», այլ մահմեդական բնակչության հսկայական զինված ամբոխը, որոնց ղեկավարում էր մահմեդական ազգային կոմիտեն և որոնք վստահ էին, որ այդ ամենը կատարվում է անդրկովկասյան իշխանությունների հրամանով: Այս առումով տեղին է Ստ. Շահումյանի հարցադրումը. «այդ ինչ «բռնի» զինաթափում էր, ինչո՞ւ էր այն կատարվում ոչ թե Թիֆլիսում, այլ Աղստաֆայում, ու Ելիզավետպոլի նահանգում, և ինչո՞ւ էր «բռնի» զինաթափության համար Թիֆլիսից զրահապատ գնացք գնում»[644]:

Այսօր, Ստ. Շահումյանին կարող ենք պատասխանել. որպեսզի մահմեդական-թաթարների ձեռքով և աջակցությամբ իրականացվեր այն դժվարին գործը, ինչը վրացիները չէին կարող իրագործել, որ Թիֆլիսից հեռու պահեին և շեղեին բոլշևիկացած Կովկասյան բանակի զորամասերի նահանջի ուղին, որպեսզի թույլ չտային Կոմիսարիատի տապալում և վերջապես՝ պահպանեին ձեռք բերած հեգեմոնիան երկրամասում: Եվ եթե Ստ. Շահումյանը տարակուսանք էր հայտնում Դաշնակցության կապակցությամբ, որի կոմիսարներն այդ նույն իշխանության անդամներ էին, ապա մեզ համար գոնե պարզ է այն հանգամանքը, որ միասնական, «սոցիալիստական» կոչվող կառավարության կազմում հայ ազգային-դեմոկրատական կուսակցությունը և գոնե նրա ղեկավար մեծամասնությունը հակաբոլշևիկյան անթաքույց անհանդուրժողականության ալիքի վրա օբյեկտիվորեն աջակցում էր վրաց-մահմեդական խմբավորմանը, էապես թուլացնելով ազգային շահի պաշտպանության գործը:

[644] Ստ. Շահումյան, նույն տեղում, էջ 111:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՐԽԻՎՆԵՐ

ՀԱԱ - Հայաստանի Ազգային Արխիվ

1. ֆ. 103, g. 1, գ. 77, 87, 88
2. ֆ. 105, g. 1, գ. 2588
3. ֆ. 113, g. 3, գ. 88
4. ֆ. 119, g. 1, գ. 6
5. ֆ. 121, g. 1, գ. 26, 28
6. ֆ. 201, g. 1, գ. 84, 126
7. ֆ. 203, g. 1, գ. 24
8. ֆ. 220, g. 1, գ. 1
9. ֆ. 222, g. 1, գ. 30, II մաս
10. ֆ. 404, g. 1, գ. 44
11. ֆ. 1022, g. 3, գ. 232, 233, 236, 239, 1300
12. ֆ. 4047, g. 1, գ. 213, 218
13. ֆ. 4007, g. 1, գ. 220, 224

Центральный Государственный Исторический Архив Грузии - ЦГИА Грузии

1. ф. 1, оп. 2, д. 2, 7, 12, 13, 15, 84, 116, 274
2. ф. 28, оп. 1, д. 75
3. ф. 34/с, д. 1
4. ф. 1818, оп. 2, д. 12, 18, 116, 141
5. ф. 1831, оп. 1, д. 6
6. ф. 1838, оп. 1, д. 33
7. ф. 1876, оп. 1, д. 1

Российский Государственный Военно-исторический Архив - РГВИА

1. ф. 1300, оп. 1, д. 60
2. ф. 2100, оп. 1, д. 2, 32
3. ф. 2168, оп. 1, д. 485

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ուսումնասիրման ինստիտուտ, Մատենադարան

1. Կաթողիկոսական դիվանի արխիվ, ֆ. 1:

2. Գարեգին Հովսեփյանի ֆոնդ:
Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), 1-ին բաժին, Ար. Չօպանյանի ֆ., թղթ. 1777:

ՀՀ Պատմության թանգարան, Նոր պատմության բաժին, թղթ. 839/195 դ, Ա-ԴՈ, (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) Հայության երկունքը, ձեռագիր:

Բ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Պաշտոնական

1. Республика, Тифлис, 1917
2. Кавказское слово, Тифлис, 1917, 1918

Կուսակցական

ՀՅԴ

1. Հորիզոն, Թիֆլիս, 1917, 1918
2. Արև, Բաքու, 1917
3. Ազատամարտ, Թիֆլիս, 1917
4. Ձանգ, Երևան, 1917
5. Աշխատանք, Երևան, 1918
6. Շարժում, Ախալցխա, 1917
7. Աշխատավոր, Թիֆլիս, 1918
8. Գործ, Բաքու, 1917
9. Հայրենիք, Բոստոն, 1923
10. Молот, Тифлис, 1917

ՀԺԿ

1. Մշակ, Թիֆլիս, 1917
2. Народная Свобода, Тифлис, 1917

Սոցիալ-դեմոկրատական

1. Պայքար, Թիֆլիս, 1917, 1918
2. Известия Бакинского Совета, Баку, 1917
3. Известия Совета рабочих и солдатских депутатов гор. Тифлиса, Тифлис, 1917
4. Бакинский Рабочий, Баку, 1917
5. Кавказский Рабочий, Тифлис, 1917, 1918

Սոցիալիստ - հեղափոխական

1. Աշխատանքի դրոշակ, Բաքու, 1917

Անկուսակցական

1. Հայաստան, Թիֆլիս, 1917, 1918
2. Վան – Տոսպ, Թիֆլիս, 1917

Գ. ՏՊԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայոց ազգային համախորհրդակցությունը, Փաստաթղթեր և նյութեր, ԲՀԱ, թիվ 1-2, Երևան, 1992:
2. Армянно-грузинский вооруженный конфликт, Баку, 1919.
3. Борьба за победу советской власти в Грузии, Документы и материалы (1917-1921 гг.), Тбилиси, 1958.
4. Великая Октябрская социалистическая ревлюция, Энциклопедия, Москва, 1987.
5. Военно-революционные комитеты действующей армии, Москва, 1977.
6. Временное положение о земских учреждениях в Закавказье, Тифлис, 1918.
7. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919.
8. Земельные законы Закавказского праительства, Тифлис, 1918.
9. История классовой борьбы в Закавказье, Сборник статей, книга первая, Тифлис, 1930, Введение С. Сефа.
10. Политические деятели России, 1917, Биографический словарь, Москва, 1993.
11. Протоколы Закавказских революционных советских организаций, том I, Тифлис, 1920.
12. Революция 1917 г. в исторических документах, Тбилиси, 1930.
13. Сборник законов, инструкций и разъяснений по Министерству земледелия, Тифлис, 1918.

Դ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, (1901-1918), Վենետիկ, 1926:
2. Բարսեղյան Խ.Հ., Ստ. Շահումյան, Երևան, 1968:

3. Իսահակյան Ավետիք, Հայկական հարց, Երևան, 2005:
4. Լեո, Անցյալից, Երևան, 2009:
5. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
6. Կնյազյան Դ., Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008:
7. Ղազախեցյան Վ., Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար, ՀՍՍՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 1987, թիվ 11:
8. Ղարաջեան Գէորգ (Ս.Տ. Արկոմէդ), Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թւին, Թիֆլիս, 1919:
9. Մելիքյան Հ. Ս., Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970:
10. Մելիքյան Ս. Հ., Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920 թվականներին, Երևան, 1997:
11. Մելիքյան Վ. Հ., 1917, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997:
12. Մելիքյան Վ. Հ., Էջմիածնի եկեղեցական համագումարը, Բազմավէպ, թիվ 1-4, Վենետիկ, 2003:
13. Շահումյան Ստ., Երկեր, հ. 4, Երևան, 1978:
14. Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, է հատոր, Թեհրան, 1982:
15. Аркомед С. Т., Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, 1923.
16. Балаев А., Азербайджанское национально-демократическое движеие в 1917-1920 гг., Баку, 1980.
17. Беленький С. и А. Манвелов, Революция 1917 г. в Азербайджане. (хроника событий), Баку, 1927.
18. Дубинский И., Мухадзе, Шаумян, Москва, 1965.
19. Искендеров М. С., Из истории борьбы коммунистической партии Азербайджана за победу советской власти, Баку, 1958.
20. Жордания Н. Н., За два года, Доклады и речи, Тифлис, 1919.
21. Сеф С.Е., Революция 1917 г. в Закавказье (Документы и материалы), Тифлис, 1927.
22. Ставровский А., Программы партий и их отношение к важнейшим вопросам, Тифлис, 1917,
23. Закавказье после Октября, Москва-Ленинград, 1925.
24. Сургуладзе А. Н., Закавказье в борьбе за победу социалистической революции, Тбилиси, 1971.
25. Ратгаузер Я., Революция и гражданская война в Баку, Баку 1927.

26. Туманов Г. М., Организация земства в Закавказье, Тифлис, 1918.
27. Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918.
28. Церцвадзе М. В., Революционное движение в Грузии в 1914-1917 гг., часть II (1917 г.), Тбилиси, 1960.
29. Хачапуридзе Г. В., Большевики Грузии в боях за победу советской власти, Москва, 1951.
30. Борьба за пролетарскую революцию в Грузии, очерки,1917-1921, Тбилиси, 1936.
31. Черчиль У., Мировой кризис, Москва-Ленинград, 1932.
32. Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918.
33. Церцвадзе М.В., Революционное движение в Грузии в 1914-1917 гг., часть II (1917 г.), Тбилиси, 1960.
34. Хачапуридзе Г.В., Большевики Грузии в боях за победу советской власти, Москва, 1951.
35. Борьба за пролетарскую революцию в Грузии, очерки, 1917-1921, Тбилиси, 1936.
36. Черчиль У., Мировой кризис, Москва-Ленинград, 1932.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաշիձե Մ.-բ. – 76
Աթաբեկյան Լ. – 22, 210
Աթաբեկով Ն. – 28
Աղազադե Բ. – 182
Անանուն Դ. – 68, 70, 129, 135, 210
Ապակիձե իշխան – 138
Առաքելյան Ա. – 210
Առաքելյան Հ. – 54-56, 71, 133, 134, 162, 164, 165
Արամ (Մանուկյան Ա.) – 159, 160, 167, 213, 242, 243
Արարատյան Գ. – 93
Արարատյան Ս. – 93, 121, 209, 210, 242,
Աբխազավա – 188, 189, 193, 194, 197, 199
Աբխազի Կ. – 76
Աբրամով Վ. – 178
Ալեքսեև-Մեսխիև Շ. – 48, 51, 91, 92, 97, 139, 154, 178, 202, 232, 235
Ալիև Ա. – 93
Ալվարյան – 205
Ախլիև – 167, 168
Ամիրյան Գ. – 93
Ամիրյան Ի. – 73
Անդրանիկ (Օզանյան Ա.) – 208, 213
Արզումանյան Մ. – 192, 209, 221, 222, 235

Բագրատունի Հ. – 15
Բարաթով Ն. – 242
Բարաչ Գ. – 76
Բեկզադյան Տ. – 53, 76, 176, 177
Բերբերյան Մ. – 76
Բրավին – 147

Գաբրիելյան Հ. – 93
Գարեգին եպիսկոպոս –107
Գեգեչկորի Ե. – 10, 41, 47, 48, 50-53, 55, 76, 77, 87, 92, 99, 102, 118, 132, 145-147, 151, 154-156, 161, 170, 172, 176, 179, 183, 185, 190, 191, 194, 198, 199, 200, 201, 202, 221-224, 228, 230, 232-235, 237-240
Գելեյշվիլի Պ. – 100
Գեորբեկյան Գ. – 235
Գոբեչիա Վլ. – 25, 47, 77, 177, 185, 188, 189, 195, 198, 199, 200, 202, 206, 224, 228
Գորկի Մ. – 19
Գյուլխանդանյան Ա. - 121
Գյուլխանդարյան Հ. – 114
Գյուլումյան Ա. – 124
Գրուզենբերգ Օ. – 76
Գևորգ Ե – 106

Դայլիդա – 76
Դեմիրճյան Գ. – 120
Դեմիրճյան Դ.– 120
Դենիկին Ա. – 95, 148, 152
Դոնսկոյ Դ. – 23, 25, 42, 43, 45, 47, 48, 50, 90, 134, 148, 154, 173, 174, 177, 185, 186, 206, 224
Դոստոևսկի Ֆ. – 8
Դովբոր – Մուանիցկի Յու. – 150
Դրո (Կանայան Դ.) – 159, 160
Դրոբիշև – 162
Դուխոնին Ն. – 23, 24, 155

Եսայան Զ. – 180
Եվանգուլով Լ. - 33
Երզնկյան Ա. – 52, 131, 132, 176, 200

Զավալիշին Ս. – 176, 177
Զավրիյան Հ. – 121, 213, 242
Զարգարյան – 192

Զիաթխանով Ա. – 185, 194
Զինովև Գ. – 11
Զորյան Զ. – 205
Զուտաբյան Ա. – 37

Էնգելս Ֆ. – 123
Էնվեր փաշա – 172, 180, 251
Էֆենդիև – 194, 197, 199

Թորոսյան Ս. – 37, 159
Թոփչիբաշև Ա.-բ. – 111, 118, 182, 183
Թումանյան Հովհ. – 78, 84
Թումանով Գ. – 126, 142
Թումանով Մ. – 145, 147
Թևզայա Վ. – 169

Ժորդանիա Ն. – 10-14, 35, 37, 38, 40, 41, 43, 44, 47, 48, 75-77, 80-83, 87, 110, 112, 132, 155, 156, 172, 176, 177, 187, 188, 190, 192, 195, 198, 199, 202, 211, 213-215, 229, 231-234, 236, 245, 250, 252

Իսահակյան Ավ. – 180, 251
Իրազեկ (Տեր-Հակոբյան Հ.) – 120

Լանսինգ - 46
Լեբեդինսկի Ե. – 23, 41, 155, 156, 161, 167, 170, 176, 177
Լենին Վլ. – 11, 15, 16, 18, 22, 45, 58, 65, 122, 157, 213-216, 236, 240, 241, 245, 246
Լեո (Բաբախանյան Ա.) – 14, 84
Լյուֆի բեյ Օ. – 169
Լոմտատիձե – 118, 201, 202
Լվով Գ. – 138
Լունկևիչ Վ. – 45
Լևանդովսկի Վ. – 41
Խան-Խոյսկի Ֆ. – 56, 97, 111, 134, 182, 185, 196, 234, 238
Խաչապուրիձե Գ. – 69

Խառլամով Վ. – 8, 34, 148, 149
Խատիսյան Ալ. – 57, 118, 130, 175, 208
Խատիսյան Գ. – 57, 121, 126, 131, 133, 139
Խոնդկարյան Ա. – 131
Խոշտարիա – 138

Ծերեթելի Ի. – 10, 58

Կալեդին Ա. – 121, 151
Կախիանի Ա. – 93
Կամենև Լ. – 11
Կամսարական Ս. – 67, 126, 131
Կանտեմիրով Ա. – 179, 233
Կասիմով Ա. – 76
Կարցիվաձե Ի. – 36, 76, 233, 234
Կելարև Ն. – 138, 139
Կերենսկի Ա. – 14, 23-25, 33, 34, 138
Կիրիոն 2-րդ – 76
Կոկոշկին Ֆ. – 116
Կռիլենկո Ն. – 24, 167, 170
Կռիլով Ն. – 192
Կուլեբյակին Ա. – 26, 190
Կուզնեցով Ն. – 233, 240
Կուցյակ – 76

Հակոբյան Հ. – 73
Համբարձումյան Կ. – 121
Հայդաթով – 111
Հաջինսկի Մ. – 111, 182, 196
Հարությունյան Մ. – 160
Հարությունյան Ս. – 55, 74, 107

Ղազազյան Կ. –121, 176, 177, 238, 240
Ղազարյան Ա. – 37
Ղարաջյան Գ. (Արկոմեդ) -171
Ղաֆարզադե Ա. – 182
Ղորղանյան Գ. – 223, 224, 244

Ճավճավաձե – 96

Մախարաձե Ֆ. – 45, 55, 76, 233, 234, 243
Մալխասյան Ս. – 74
Մալխազով Ա.– 196, 197, 200, 230, 233
Մակարենկո – 179
Մաղալով Լ. – 186, 188, 189, 194, 197, 199
Մամիկոնյան Ս. – 107, 131
Մարքս Կ. – 123
Մդիվանի Բ. – 176, 200, 230
Մելիք-Ասլանով Խ.-բ. – 89, 90, 95, 134, 154, 177, 188, 195, 196, 199, 200
Մելիք-Շահնազարյան Գ. – 210
Մելիքյան Հեն. – 216
Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ – 125
Մերխելով Դ. – 55, 192
Մենդելեև Գ. – 138
Միլյուկով Պ. – 159
Մինորսկի Դ. – 146
Մռավյան Ա. – 241
Մռավյան Վ. – 241
Մուշեղյան Լ. – 109, 124
Մուշեղյան Տ. – 124

Յաղջյան – 76, 78

Նաբոկով Վ. – 33
Նազարյան Լ. – 121
Նալչաջյան Ա. – 121
Նավասարդյան Վ. – 121
Նատաձե Գ. – 76
Նարիմանով Ն. – 86, 182
Նժդեհ (Տեր-Հարությունյան Գ.) – 100, 120
Նիկոլայ II – 4
Ներուչև Ա. – 51, 52, 103, 105, 235
Նոզդրովսկի – 24

Շահխաթունյան Ա. – 20, 21, 52, 107, 121, 122, 126, 130, 131-133, 242
Շահվերդյան Դ. – 242
Շահումյան Ս. – 11, 28-31, 36, 58, 60, 69, 122, 139, 154, 191-193, 197, 203, 204, 206, 207, 211-217, 221-224, 227-246, 248, 253
Շեյխ-Ուլ-Իսլամով Ա. – 67, 76, 79
Շերիպով Ա. – 76, 82, 83
Շերիֆ էդ-Դուլե – 146
Շիխլինսկի – 185, 186, 190, 196
Շրամչենկո – 138

Չեկալին Ս. – 124
Չեռնով Վ. – 20
Չերչիլ Ու. – 7
Չիլինգարյան Ա. – 17-19, 62-65, 121
Չխեիձե Ն. – 10, 58, 83
Չխենկելի Ա. – 8, 10, 50, 69, 75-77, 80, 83, 91, 94, 95, 98, 99, 102, 118, 132, 133, 137,139, 151, 152, 154, 172, 176, 178, 179, 183, 185, 189, 194, 195, 199, 202, 205, 217, 228, 235, 239
Չոպանյան Ա. – 180

Պապաջանյան Մ. – 8, 34, 50, 52, 53, 73, 74, 118, 126, 131, 176, 177, 201, 209
Պարոնյան Ա. – 210
Պետրոսյան – 36
Պիճիկյան – 24
Պիպինով Ա.-բ. – 76, 79
Պրժևալսկի Մ. – 23, 24, 41, 58, 155, 156, 161, 216, 224
Պրոտոպոպով Ա. – 138

Ջամալյան Ա. – 158, 169, 201
Ջափարիձե – 227

Ջափարիձե Ա. – 28, 227
Ջափարիձե Կ. – 138
Ջաֆարով Մ. – 8,47, 50, 51, 118, 134, 139, 154, 185, 195, 196, 200, 238
Ջուղելի Վ. – 44, 105, 192

Ռամիշվիլի Ն. – 10, 48, 55, 84, 112, 114, 190, 195, 200, 229, 232, 233, 235, 250
Ռաֆիբեկով Ն.-բ. – 194
Ռոստոմ (Ջորյան Ս.) – 121, 213
Ռցխիլաձե Գ. – 76, 99
Ռուբեն (Տեր-Մինասյան Ռ.)– 160, 241, 243, 242
Ռուստամբեկով Մ.-բ. – 187, 194

Սալախով Ա. – 93
Սահակյան Ս. – 22, 28, 29
Սամարցյան – 26
Սարգսյան Ա. – 93
Սարգսյան Հ. (Յապոն) – 121
Սաֆիքյուրդսկի Ա.-բ. – 186, 194
Սեֆ Ս. – 26
Սեմյոնով Ի. – 55, 157
Սմիթ Ֆ. – 41, 46, 149, 216
Սմիրնով Ա. – 169
Սոկոլով Վ. – 138
Սպենդիարյան Հ. – 107
Ստալին Ի. – 228, 246
Ստանկևիչ – 48
Ստավրովսկի Ա. – 190
Ստրելկովսկի – 187, 199, 202
Սուլթանով Խ.-բ. – 76

Վալերի Լ. – 179
Վարանդյան Մ. (Հովհաննիսյան Մ.) – 121
Վեշապելի Գ. – 40, 133, 134, 176
Վեսելովսկի Բ. – 138
Վերեշչակ Ս. – 36
Վերմիշյան Ք. – 131, 132
Վիլդենբրանդտ – 146
Վիլսոն Վ. – 172
Վիշինսկի Ե. – 166, 169, 172
Վորոնցով-Դաշկով Ի. – 125
Վրացյան Ս. (Սիմեոն Գրուզինյան) – 37, 48, 85, 108, 121

Տեր-Առաքելյան Հ. – 210
Տեր-Ավետիսյան Ե. – 93
Տեր-Հարությունյան Կ. – 176
Տեր-Հարությունյան Գ. – 100, 176
Տեր-Ղազարյան Գ. – 51, 52, 90, 94-96, 131, 133, 155, 165, 176, 230, 235, 240
Տեր-Մարտիրոսյան – 196, 197, 199, 202
Տեր-Մովսիսյան Գ. – 242
Տերեշչենկո Մ. – 159
Տիգրանյան Ս. – 107, 121
Տիրայր եպիսկոպոս – 106
Տրոցկի Լ. – 15, 16, 18, 240, 245

Ցեկարսկի Լ. –76
Ցխակայա Մ. – 45

Ուլուբիև – 194
Ուսուբբեկով Ն.-բ. – 182, 194, 198
Ուրիցկի Մ. – 116

Փարցխալաշվիլի Ի. – 100
Փափազյան Հ. – 126
Փափազյան Վ. – 160
Փիրումյան Պ. – 242
Փիրումյան Ս. – 209, 237
Քալանթարյան Պ. – 107
Քաջազնունի Հ. (Տեր-Հովհաննիսյան Հ.) – 121

Օդիշելիձե – 24, 169, 172, 226
Օհանջանյան Հ. – 45, 46, 48, 51, 93, 121, 134, 152, 155, 176

Ֆերիք-Վեհիբ Մ. – 154
Ֆիլատիև Մ. – 93

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ալաբաշլի – 194
Ալեքսանդրապոլ – 24, 36, 67, 93, 97, 101, 109, 115, 120, 130, 131, 136, 143, 161, 205, 207, 208, 218, 219, 227, 229, 242
Ախալցխա – 100, 101, 115, 122, 136, 137, 204, 205
Ախալքալակ – 205
Աղստաֆա – 95, 194, 196, 212, 227, 253
Արդվին – 115
Արմավիր – 225

Բաբերդ – 25
Բաղդադ – 156
Բայազետ – 24, 67
Բաքու – 3, 28, 59, 119, 132, 141, 181, 186, 191, 194, 199, 200, 202, 204, 207, 211, 225, 230, 236, 240, 242, 243, 248, 252
Բորժոմ – 205
Բիթլիս – 25, 225
Բորժոմ – 205

Գատչինո – 25
Գորի – 115, 136, 137, 236
Գորիս – 115
Գրոզնի – 225

Դավալու (Արարատ) – 208
Դերբենդ – 96
Դիլիջան – 143, 241
Դուլար – 194, 198

Ելիզավետպոլ (Գանձակ) – 36, 67, 79, 102, 107, 115, 130, 131, 133, 136, 137, 142, 169, 182-189, 192-204, 206-212, 216, 225, 227, 238, 241, 242, 244, 246, 252, 253
Եկատերինոդար – 94, 148, 152, 153, 179, 225
Եվլախ – 184, 194, 197, 201, 208, 210
Երզնկա – 25, 154, 166, 169, 171, 172, 175, 224, 225, 231
Երևան – 3, 7, 8, 16, 24, 36-38, 67, 68, 79, 92, 93, 96, 99, 102, 109, 115, 121, 124, 130, 131, 136, 137, 142, 143, 159, 167, 191, 209, 217, 242, 243

Զազալի – 197

Էնզելի – 191, 224
Էջմիածին – 67, 106, 143
Էրզրում – 25, 156, 168, 208, 215, 218, 219, 224-227, 229, 230, 231

Թավրիզ – 69
Թելավ – 115, 137, 236
Թեհրան – 69, 146, 147
Թիֆլիս – 3, 9-14, 24, 28, 32, 34-38, 40, 41, 47, 49, 53, 55-57, 59, 60, 62, 63, 69, 70, 72, 74-76, 79, 86, 91, 96-98, 100, 102, 109, 110, 113, 115, 118-120, 124, 130, 132, 136, 137, 141, 142, 146, 149, 152, 155, 157, 160, 168, 172, 175, 176, 179, 181, 183, 184, 189, 190-195, 197-199, 201-204, 206, 208, 211-220, 223-246, 248, 252, 253

Իգդիր – 91, 115
Իջևան – 67, 241

Խաչմաս – 194
Խնուս – 24, 25, 225,

Կարս – 36, 115, 130, 131, 136, 137, 161, 168, 183, 184, 207, 213, 214, 218, 227, 230, 242
Կիև – 152

Հաջիկաբուլ – 188

Մամախաթուն – 25
Մայկոպ – 225
Մեծ Ղարաքիլիսա – 120, 241
Մուշ – 25, 225

Նախիջևան – 67, 97, 242
Նովոչերկասկ – 152
Նովոռոսիյսկ – 191, 225
Նոր Բայազետ – 67, 115
Նովխի – 67, 97, 137, 142, 183, 204

Շահթախտ – 191, 224
Շամխոր – 95, 184, 188-192, 194-196, 198, 199, 206, 207, 209, 211, 231, 238, 239, 244, 246, 252, 253
Շամշադին – 241
Շարուր – 67
Շուշի – 67, 115, 136, 137, 204, 210, 242

Պետրոգրադ – 4, 7, 12, 13, 15, 16, 21, 24, 26, 28, 30, 31, 33-36, 42, 44, 49, 56, 58, 59, 69, 84, 94, 104, 124, 126, 130, 131, 135, 136, 160, 167, 173, 174, 213, 218, 241, 245-248
Պետրովսկ – 191, 225

Ջուլֆա – 191, 194, 224, 242

Սարիղամիշ – 36, 191, 206, 217-219, 223-227, 229, 234, 242, 243, 253
Սոչի – 225
Սոփսում – 225
Սուրմալու – 67, 91, 143

Վլադիկավկազ – 179, 225

Տրապիզոն – 25, 158, 159, 168, 215, 224
Տուապսե – 225

Ցարսկի կոլոդեց – 195

Փամբակ – 241
Փոթի – 95, 96, 236

Քարվանսարա – 67
Քյուրդամիր – 197
Քութահիա – 36, 137, 205, 225

Օգնոտ (Օղնուտ) – 25

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....3

1. ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ....4 – 86
1.1. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՀԱՆԴԵՊ....4
1.2. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ....28
1.3. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ....60

2. ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ....87– 246
2.1. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ....87
2.2. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ....113
2.3. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՋԵՄՍՏՎՈՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ....125
2.4. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶՈՒԵՑԻԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ....145
2.5. ՎՐԱՑ – ԹԱԹԱՐԱԿԱՆ ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ (1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1918 Թ. ՄԱՐՏ)....181
2.6. ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՎՄԱՆ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐԱԳԻՐԸ ԵՎ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ....212
ԱՄՓՈՓՈՒՄ....247
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....254
ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ....259
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ....260
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ....260

ВААН МЕЛИКЯН

ПРОБЛЕМА ВЛАСТИ В ЗАКАВКАЗЬЕ

ДЕЯТЕЛЬНОСТЬ ЗАКАВКАЗСКОГО КОМИССАРИАТА И АРМЯНСКАЯ ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ (НОЯБРЬ 1917г. – ФЕВРАЛЬ 1918г.)

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1918 Թ. ՓԵՏՐՎԱՐ)

Տպաքանակը՝ 200 օրինակ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՊԱԳՐԻՉ՝
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔԸ

ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
ԼԵՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԱԻԴԱ ՏՈՆՈՅԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24գ